265
P 2491



2004

1635
Printed in Turkey

# ԳՈՐԾՔ
## ԱՌԱՔԵԼՈՑ

Ընդ որս և չորեքտասան թուղթք
Երանելւոյն Պօղոսի Առաքե-
լոյն և թուղթք կաթուղիկեայց
և Տեսիլք Յօհաննու.

Ի հայրապետութեան Սբյ Գահին
Էջմիածնի, Տեառն Դանիէլի
Սրբոյ երջանիկ Արբազան Կա-
թուղիկոսին ամ Հայոց.

Եւ ի Պատրիարգութեան Սրբոյ
Եմի, Տեառն Թէոդորոսի
Արհի եպիսկոպոսին.

Իսկ և ի Պատրիարգութեան Ար-
քայանիստ Մայրաքաղաքիս
Կոստանդնուպօլսոյ, Տեառն Գրի-
գորի Արանաշնորհ և Ածաբան
Արհի Եպիսկոպոսին.
Ի Թուին Հայոց՝ ՌՄԾԱ.
Յունիսի ԺԱ.

Ի Տպարանի Յօհաննիսեան Պօղոսի.

1802

225



Printed in Turkey

# Գ Ո Ր Ծ Ք
## Ա Ռ Ա Ք Ե Լ Ո Ց
### Գ Լ. Ա.

1 ԶԲԱՆՆ ԱՌԱՋԻՆ
զոր արարի վասն ամենայնի
ո՛ Թէոփիլէ. զոր սկսաւ
յս̃ առնել և ուսուցանել,
2 * մինչև յօրն պատուիրելոյ առաքելոցն
'ի ձեռն հոգւոյն սրբ̃յ. զորս ընտրեաց,
3 և վերացաւ: * Որոց յանդիման կացոյց
զինքն կենդանի յետ չարչարանացն իւ-
րոց 'ի բազում արուեստս՝ յաւուրս քա-
ռասուն երևել նց̃ և ասել վասն արքայ-
4 ութե̃ն այ̃: * Եւ 'ի հաղորդել ընդ նս̃
հացի, պատուէր տայր նց̃՝ յե̃մէ մի՛
մեկնել, այլ սպասել աւետեացն հօր՝
5 զոր լուարուքն յինէն: * Զի յովհան-
նէս

նէս մկրտեաց 'ի ջուր . այլ դուք մկր-
տիցիք 'ի հոգին սբ , ոչ յետ բազում
ինչ աւուրցս այսոցիկ։ * Իսկ նոքա մա- 6
տուցեալ հարցանէին զնա՝ և ասէին .
տր՝ եթէ 'ի ժմկի աստ յայսմիկ հաստու-
ցանելոց իցես զարքայութի իէլի։ * Ասէ 7
ցնս . ոչ է ձեր գիտել զժամս և զժա-
մանակս , զոր հայր եդ յիւրում իշխա-
նութն . * այլ առջիք զօրութի 'ի հա- 8
սանել հոգւոյն սբյ 'ի վր ձեր . և եղի-
ջիք ինձ վկայք յեմ և յամ հրէաստա-
նի և 'ի սամարիա , մինչև 'ի ծագս երկ-
րի։ * Իսկ զայս իբրև ասաց , մինչ դեռ 9
հայէին նոքա՝ վերացաւ . և ամպն կա-
լաւ զնա յաչաց նոցա։ * Իսկ մինչ դեռ 10
պշուցեալ էին ՚ը երկինս երթալոյ նր ,
և ահաւասիկ արք երկու երևեցան նց 'ի
հանդերձս սպիտակս , * որք և ասացին . 11
արք գալիլեացիք՝ զի՞ կայք հայեցեալ ՚ը
երկինս . Այս յս՝ որ վերացաւ 'ի ձէնջ
յերկինս , սոյնպէս եկեսցէ՝ զորօրինակ
տեսիք զնա երթալ յերկինս . * Ապա 12
դարձան յեմ յանուանեալ լեռնէն ձի-
թենեաց . որ է մերձ յեմ շաբա-
թու ճանապարհ։ * Իսկ իբրև մտին , 13
ելին 'ի վերնատունն՝ ուր վանքն իսկ էին .
պետրոս և յակոբոս՝ յովհաննէս և անդ-
րէաս՝ փիլիպպոս և թովմաս՝ բարթո-
ղոմէոս և մատթէոս՝ յակոբոս ա-
լփեան և շմաւոն նախանձայոյզ՝ և յու-
դա

14 դա յակովբեան։ * Սոքա ամենեքեան
էին հանապազորդեալ միաբան յաղօթս
հանդերձ կանամբք, և մարեմաւ մաւրբն
յի՛ի՝ և եղբարբք նորա։
15 * Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ ԱՌ
պետրոս ՚ի մէջ եղբարցն՝ ասէ. և էր
անդ բազմութի անուանց իբրև հարիւր
16 և քսանից։ * Արք եղբարք՝ պարտ էր
կատարել գրոյն, զոր յառաջագոյն ա-
սաց հոգին սբ ՚ի բերանոյ դաւթի, վս
յուդայի՝ որ եղև առաջնորդ ունելեացն
17 յի՛ի. * զի ՚ի թիւս մեր էր ընդ մեզ. և
հասեալ էր նմ վիճակ պաշտամանս այ-
18 սորիկ. * Սա ստացաւ գեօղ ՚ի վարձուց
անիրաւութե. և ուռուցեալ հերձաւ ընդ
19 մէջ՝ և հեղաւ ամ փոր նր. * Եւ յայտ-
նի եղև ամենեցուն որ բնակեալ են յե-
րուսաղէմ. մինչև կոչել գեղջն այնմիկ
բարբառովն իւրեանց ակեղդամայ. այս-
20 ինքն է՝ գեօղ արեան։ * Զի գրեալ է
՚ի գիրս սաղմոսաց. եղիցի բնակութի նր
աւերակ, և մի՛ ոք իցէ՝ որ բնակիցէ ՚ի
21 նմ. և զկարգ նորա առցէ այլ։ * Արդ
պարտ է յարանցս յայսցանէ՝ եկելոցս ընդ
մեզ յամ ժամանակի, յորում մուտ և
22 ել առ մեզ տր յս. * սկսեալ ՚ի մկրտ-
ութենէն յովհաննու մինչև յօրն՝ յորում
վերացաւ ՚ի մէնջ. վկայ յարութե նր ընդ
23 մեզ լինել միում ՚ի սոցանէ։ * Եւ կա-
ցուցին երկուս. զյովսէփ՝ որում բար-
սա

սաբայն կոչէին, որ անուանեցաւ Յուս_
տոս. և զՄատաթիա։ * Եւ կացեալ յա_ 24
ղօթս՝ ասեն. դու Տէր սրտագէտ ամե՛
յայտնեա՛ զմի ոք՝ զոր ընտրեցեր 'ի սո_
ցանէ յերկոցունց. * առնուլ զվիճակ 25
պաշտամանս այսորիկ՝ և զառաքելութե,
յորմէ անկաւ Յուդաս գնալ 'ի տեղի իւր։
* Եւ ետուն վիճակս նց, և ելանէր վի_ 26
ճակն Մատաթեայ. և համարեցաւ ընդ
Վ.Զ. մետասան առաքելսն։

## ԳԼ. Բ.

Եւ 'ի կատարել աւուրցն պենտեկոս_ 1
տէից՝ էին ամենեքեան միաբան 'ի
միասին։ * Եւ եղև յանկարծակի հըն_ 2
չիւն յերկնից՝ եկեալ իբրև սաստիկ հող_
մոյ. և ելից զամ տունն յորում նստէին։
* Եւ երևեցան նց բաժանեալ լեզուք 3
իբրև 'ի հրոյ. և նստաւ իւրաքանչիւր
'ի վր նց։ * Եւ լցան ամենեքեան հոգ_ 4
ւովն սրբով, և սկսան խօսել յայլ և յայլ
լեզուս՝ ոպ և հոգին տայր բարբառել
նց։ * Եւ էին յԵմ բնակեալ հրէայք 5
արք երկիւղածք՝ յամ ազգաց որ 'ի ներ_
քոյ երկնից։ * Եւ իբրև եղև բարբառս 6
այս՝ եկն միաբան բազմութիւն և խռնե_
ցաւ. զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօ
սել նց։ * Սքանչանային ամենեքեան, 7
և զարմանային՝ և ասէին ընդ միմեանս.
ոչ աւասիկ ամենեքին սոքա որ խօսինս՝

 գա_

8 գալիլեացիք են ։ * Եւ զիա՞րդ լսեմք մեք
յիւրաքանչիւր բարբառս մեր յորում
9 ծնեալ եմք ։ * Պարթեւք, եւ Մարք, եւ
Ելամացիք, եւ որ բնակեալ են ՚ի Միջա-
գետս, ՚ի Հրէաստանի եւ ՚ի Գամիրս ՚ի
10 Պոնտոս եւ յԱսիա ։ * ՚ի Փռիւգիա եւ ՚ի
Պամփիլիա՝ յԵգիպտոս եւ ՚ի կողմանս Լի-
բեացւոց, որ ընդ Կիւրենացին, եւ որ եկք
11 Հռովմայեցիք ։ * Հրեայք՝ եւ եկք նոցուն,
Կրետացիք եւ Արաբացիք՝ լսեմք խօսից
նոցա ՚ի մեր լեզուս զմեծամեծս ա՟յ ։
12 * Սքանչանային ամենեքեան զարմա-
ցեալք, եւ ասէին ցմիմեանս ։ զի՞նչ կա-
13 միցի այս լինել ։ * Եւ կէսքն ընդ ծաղր
արկեալ ասէին, թէ քաղցուալից իցեն ։
14 * Յարուցեալ Պետրոս հանդերձ մետա-
սանիւքն՝ ամբարձ զձայն իւր՝ եւ խօսե-
ցաւ ընդ ն՟ս ։ Արք Հրէաստանեայք՝ եւ որ
բնակեալ էք յԵ՟մ ամենեքին, այս ձեզ
յայտնի՛ լիցի՝ եւ ունկնդիք բանից իմոց ։
15 * Ո՛չ ո՟պ դուքդ կարծէք՝ թէ սոքա ար-
բեալ իցեն ։ զի դեռ երեք ժամք են ա-
16 ւուրս ։ * Այլ այս է՝ որ ասացաւ ՚ի ձեռն
17 մարգարէին Յովելեայ ։ * Եւ եղիցի յետ
այսորիկ յաւուրս յետինս՝ ասէ տ՟ր, հե-
ղից յոգւոյ իմմէ ՚ի վ՟ր ա՟մ մարմնոյ ։ եւ
մարգարէասցին ուստերք ձեր, եւ դըս-
տերք ձեր ։ եւ երիտասարդք ձեր տեսիլս
տեսցեն, եւ ծերք ձեր երազովք երազե-
18 ցին ։ * Եւ ՚ի վ՟ր ծառայից իմոց՝ եւ ՚ի վ՟ր

աղախնայց իմոց՝ յաւուրս յայնոսիկ հե-
ղից յոգւոյ իմմէ, եւ մարգարէասցին։
* Եւ տաց նշանս յերկինս ՚ի վեր՝ եւ նը- 19
շանս յերկիր ՚ի խոնարհ, արիւն եւ հուր
եւ մրրիկ ծխոյ։ * Արեգակն դարձցի ՚ի 20
խաւար, եւ լուսին յարիւն՝ մինչեւ ե-
կեալ իցէ օր տն մեծ եւ երեւելի։ * Եւ 21
եղիցի ամենայն որ կարդասցէ զանուն
տն, կեցցէ։
ԼԲ * Արք իսրայելացիք. լուարուք զբանս զայ- 22
սոսիկ. զյս նազովրեցի, զայր ցուցեալ
յայ ՚ի ձեզ՝ զօրութբ եւ նշանօք եւ արուես-
տիւք, զոր արար նովաւ ած ՚ի միջի ձե-
րում. որպ եւ դուք իսկ գիտէք։ * Զնա 23
նկատեալ խորհրդովն եւ կանխագիտու-
թբն այ՝ մատնեալ ՚ի ձեռս անօրինաց՝
բեւեռեալ ՚ի փայտի սպանէք։ * զոր ած 24
յարոյց՝ լուծեալ զերկունս մահու. քանզի
ոչ էր հնար ըմբռնել նմա ՚ի նմանէ։
* Դաւիթ իսկ ասէ զնմանէ. յառաջա- 25
գոյն տեսանէի զտր առաջի իմ յամե-
նայն ժամ, զի ընդ աջմէ իմմէ է, զի մի
սասանեցայց. * Վս այսորիկ ուրախ եղեւ 26
սիրտ իմ, եւ ցնծացաւ լեզու իմ. եւս եւ
մարմին իմ բնակեսցէ յուսով։ * Զի 27
ոչ թողցես զանձն իմ ՚ի դժոխս, եւ ոչ
տացես սրբոյ քում տեսանել զապակա-
նութիւն։ * Ծանուցեր ինձ զճանապարհս 28
կենաց. լցուցեր զիս ուրախութբ երե-
սաց քոց ՚ի քաղցրութե։ * Արք եղբարք՝ 29
 մարթ

պարտ է համարձակութեամբ ասել վն նա֊
հապետին դաւթի. զի մեռաւ՝ և թա֊
ղեցաւ. և գերեզման նորա կայ ՚ի միջի
30 մերում մինչև ցայսօր։ * Ուրեմն մարգարէ
էր, և գիտէր՝ եթէ երդմամբ երդուաւ
նմա ած ՚ի պտղոյ յորովայնի նր նստու֊
31 ցանել յաթոռ նր։ * յառաջագոյն տե֊
սեալ խօսեցաւ վն յարութեան քսի՝ զի
ոչ թողաւ ոգի նր ՚ի դժոխս, և ոչ մար֊
32 մին նր ետես զապականութիւն։ * Զայս
յսն յարոյց ած՝ որում ամենեքին մեք
33 վկայեմք։ * Արդ աջովն այ բարձրացեալ,
զաւետիս հոգւոյն սրբոյ ընկալեալ ՚ի հօ
րէ՝ սփռեաց զայս, զոր դուք իսկ տեսա֊
34 նէք՝ և լուէք։ * Զի ոչ եթէ դաւիթ ել
յերկինս. ասէ իսկ ինքն՝ ասաց տր ցտր
35 իմ, նիստ ընդ աջմէ իմմէ՝ * մինչև եդից
զթշնամիս քո պատուանդան ոտից քոց։
36 * Արդ՝ ճշմարտիւ գիտասցէ ամ տունն
իսրլի, զի և տր զնա և օծեալ ած արար.
37 զայն յսն՝ զոր դուքն խաչեցէք։ * Իբրև
լուան զայս՝ զղջացան ՚ի սիրտս իւրեանց.
և ասեն ցպետրոս՝ և ցայլ առաքեալսն.
38 զի՞նչ գործեսցուք արք եղբարք։ * Ասէ
ցնս պետրոս. ապաշխարեցէք՝ և մկրտես֊
ցի իւրաքանչիւրոք ՚ի ձէնջ յանուն տն
յսի քսի ՚ի թողութի մեղաց, և ընկալ֊
39 ջիք զաւետիս հոգւոյն սրբոյ։ * Զի ձեզ
են աւետիքս՝ և որդւոց ձերոց, և ամե֊
նայն հեռաւորաց՝ զորս կոչեսցէ տր ած
մեր։

մեր ։ * Եւ այլովք բանիւք բազմօք 40
վկայութիւն դնէր, եւ մխիթարէր զնս՝ եւ
ասէր. ապրեցարո՛ւք յազգէ աստի խո_
տորելոյ յայսմանէ ։ * Ոմանց յօժա_ 41
րութբ ընկալեալ զբան նր մկրտեցան.
եւ յաւելան յաւուր յայնմիկ ոգիք իբ_
րև երեք հազարք ։

ԱԳ

* Եւ էին հանապազորդեալք վարդա_ 42
պետութե առաքելոցն, եւ հաղորդութե՝
եւ բեկանելոյ հացին, եւ աղօթից ։ * Եւ 43
լինէր ամ անձին՝ ահ եւ երկիւղ. բազում
նշանք եւ արուեստք ՚ի ձեռս առաքելոցն
գործէին ։ * Ամենայն հաւատացեալքն 44
էին ՚ի միասին, եւ ունէին զամ ինչ հա_
սարակաց ։ * Եւ զստացուածս եւ զինչս 45
վաճառէին, եւ բաշխէին զայն ամենե_
ցուն՝ ում զիարդ պիտոյ ինչ լինէր ։
* Հանապազօր կանխեալ միաբանութբ 46
՚ի տաճարին, եւ առտնին՝ բեկանէին ըղ_
հացն, եւ առնուին կերակուր ուրախութբ
եւ միամտութբ սրտիւ ։ * օրհնէին զած՝ 47
եւ ունէին շնորհս առ ամ ժողովուրդն.
եւ տր յաւելոյր ՚ի փրկեալսն հանապա_
զօր ՚ի նոյն ։

## ԳԼ. Գ.

Պետրոս եւ Յովհաննէս ելանէին ՚ի տա_ 1
ճար ընդ յիններորդ ժամու աղօ_
թիցն ։ * Եւ էր այր մի կաղ յորովայնէ 2
մօր իւրոյ՝ զոր բարձեալ դնէին հանա_

 պազ

պազ առ դրան տաճարին, որ կոչէր գե-
ղեցիկ. խնդրել ողորմութիւն յայնցանէ՝
3 որ մտանէին 'ի տաճարն: * Որ տե-
սեալ զպետրոս և զյովհաննէս՝ զի մտա-
նէին 'ի տաճարն, աղաչէր ողորմութի
4 առնուլ: * Հայեցաւ 'ի նա պետրոս յով-
հաննու հանդերձ, և ասէ. հայեաց 'ի
5 մեզ: * Նա դարձաւ 'ի նս̅, և ակն ու-
6 նէր առնուլ ինչ 'ի նոցանէ: * Եւ ասէ
պետրոս. արծաթ և ոսկի ոչ ունիմ.
բայց զոր ունիմս՝ զայս տաց քեզ. յա-
նուն յս̅ի ք̅սի նազովրեցւոյ արի՝ և գնա:
7 * Եւ կալեալ զաջոյ ձեռանէ նր̅՝ յարոյց
զնա. և անդէն հաստատեցան բարձք
8 նր̅՝ և սրունքն. * 'Ի վեր վազեաց և սկ-
սաւ գնալ, և եմուտ ը̅ նս̅ 'ի տաճարն.
գնայր և վազվազէր՝ և օրհնէր զա̅ծ.
9 * Եւ ետես ա̅մ ժողովուրդն զնա՝ զի
10 գնայր և օրհնէր զա̅ծ. * և գիտէին
զնա՝ զի սա էր, որ նստէր վս̅ ողորմութե̅
առ գեղեցիկ դրան տաճարին, և լցան
զարմանալեօք 'ի վր̅ նշանին՝ որ եղև:
11 * Եւ մինչ նա ունէր զպետրոս և զյով-
հաննէս, ընթացաւ ա̅մ ժողովուրդն առ
նս̅ 'ի սրահն՝ որ կոչէր սողոմոնի՝ զար-
12 մացեալք: * Իբրև ետես պետրոս, պա-
տասխանի ետ ժողովրդեանն. արք իս-
րայելացիք՝ զի՞ զարմացեալ էք 'ի վերայ
այսորիկ՝ կամ ը̅ մեզ՝ զի՞ էք պշուցեալ,
իբրու թէ անձին զօրութե̅ ինչ՝ կամ քա-

ջութե̅

ծութ̃ արարեալ իցէ գնալդ դմա։ * Ա̃Ծ 13
աբրահամու՝ եւ ա̃ծ սահակայ՝ եւ ա̃ծ յա-
կովբայ, ա̃ծ հարցն մերոց փառաւորեաց
զորդի իւր զյ̃ս · զոր դուքն մատնեցէք՝
եւ ուրացայք առաջի պիղատոսի , 'ի դա-
տել ն̃ր արձակել։ * Այլ դուք զսբ̃ն եւ 14
զարդարն ուրացայք , եւ խնդրեցէք այր
մի մարդասպան շնորհել ձեզ։ * Այլ զա- 15
ռաջնորդ կենացն սպանէք , զոր ա̃ծ յա-
րոյց 'ի մեռելոց · որում մեք իսկ վկայ
եմք ։ * Այլ հաւատովք անուան նորա 16
զսա՝ զոր տեսանէքդ եւ գիտէք , հաստա-
տեաց անունն ն̃ր · եւ հաւատքն որք նո-
վաւ , ետուն դմա զառողջութիւս զայս՝
յանդիման ձեր ամենեցուն ։ * Այլ արդ 17
եղբարք՝ գիտեմ զի անգիտութ̃ արարէք՝
ոպ̃ եւ իշխանքն ձեր ։ * Բայց ա̃ծ՝ որպէս 18
յառաջագոյն պատմեաց 'ի բերանոյ ա-
մենայն մարգարէից զչարչարելն ք̃ի իւ-
րոյ՝ նոյնպէս եւ կատարեաց ։ * Արդ՝ ա- 19
պաշխարեցէ́ք եւ դարձարուք 'ի ջնջել բղ-
մեղս ձեր · * որպէս զի եկեսցեն ժամա- 20
նակք հանգստեան յերեսաց տ̃ն · եւ ա-
ռաքեսցէ զյառաջագոյն նկատեալն ձեզ՝
զյ̃ս ք̃ս ։ * Զոր պարտ է երկնից ընդ- 21
ունել մինչեւ 'ի ժամանակս ամենեցուն
հաստատելոյ · զորոց խօսեցաւ ա̃ծ 'ի բե-
րանոյ ս̃բց իւրոց մարգարէից ։
ԱԻ * Մովսէս ասաց ցհարսն մեր , թէ մար- 22
գարէ յարուսցէ ձեզ տ̃ր ա̃ծ ձեր յեղ-


բարց

բարց ձերոց իբրեւ զիս, նմա լուիջիք ը՟
23 ա՟մի՝ որ զինչ և խօսեսցի առ ձեզ։ * Եւ
եղիցի ա՟մ անձն՝ որ ոչ լուիցէ մարգա-
րէին այնմիկ, սատակեսցի ՚ի ժողովրդե-
24 նէն։ * Եւ ա՟մ մարգարէք՝ որ ՚ի Սամուէ-
լէ և այսր՝ խօսեցան, և պատմեցին զա-
25 ւուրս զայսոսիկ։ * Դուք էք որդիք մար-
գարէիցն՝ և ուխտին, զոր ուխտեաց ա՟ծ
ը՟ հարս ձեր, և ասէ ցաբրահամ. ՚ի զա-
ւակի քում օրհնեսցին ա՟մ ազգք երկրի։
26 * Ձեզ նախ յարոյց ա՟ծ զորդի իւր, և
առաքեաց զնա օրհնել զձեզ՝ ՚ի դառնալ
ձեզ իւրաքանչիւր ՚ի չարեաց ձերոց։

## ԳԼ. Դ.

1 Եւ մինչդեռ խօսէին նոքա ը՟ ժողովր-
դեանն, հասին ՚ի վ՟ր ն՟ց քահանայա-
պետքն և իշխանք տաճարին՝ և սադու-
2 կեցիքն, * զայրագնեալք՝ վ՟ս ուսուցա-
նելոյ ն՟ց զժողովուրդն՝ և պատմելոյ յ՟ի
3 զյարութ՟ մեռելոց։ * Ա՚խեցին ՚ի ն՟ս ըղ-
ձեռս իւրեանց. և եդին զն՟ս ՚ի բանտի՝
4 մինչև ՚ի վաղիւն, զի էր ը՟ երեկս։ * Իսկ
բազումք ՚ի լսողաց բանին՝ հաւատացին.
և եղև թիւ մարդկան իբրև հազարաց
5 հ՟գից։ * Եւ եղև ՚ի վաղիւն անդր՝ ժո-
ղովել ն՟ց զիշխանսն և զերիցունս և ըզ-
6 դպիրսն յԵ՟մ։ * և զաննա քահանայա-
պետ՝ և զկայիափա, և զյովհաննէս և
զաղէքսանդրոս, և որք միանգամ էին


յազ

յազգէ քահանայութեան ։ * Նոքա կացու- 7
ցեալ զնս ՚ի մէջ՝ հարցանէին ։ որով զօ-
րութեամբ կամ որով անուամբ արարէք դուք
զայս ։ * Յայնժամ պետրոս լցեալ հոգ- 8
ւով սրբով՝ ասէ ցնս ։ իշխանք ժողովր-
դեան՝ և երիցունք իսրլի ։ * եթէ այժմ 9
մեզ իցէ դատել զմեզ այսօր վս երախ-
տեաց առն միոյ տկարի , որով սա բժշկե-
ցաւ ։ * Յայտնի լիցի ամենեցն ձեզ՝ և ամ 10
ժողովրդեանդ իսրլի ։ զի յանուն յի քսի
նազովրեցւոյ՝ զոր դուքն խաչեցէք՝ զոր
ած յարոյց ՚ի մեռելոց , նովաւ սա կայ
առաջիկ առաջի ձեր ողջացեալ ։ * Սա է 11
վէմն անարգեալ ՚ի ձէնջ շինողաց , որ ե-
ղև գլուխ անկեան ։ * և չի՛ք այլով իւիք 12
փրկութի ։ զի և ոչ անուն այլ գոյ ՚ի ներ-
քոյ երկնից տուեալ ՚ի մարդիկ՝ որով ար-
ժան իցէ կեալ մեզ ։
* Հայեցեալ ՚ի համարձակութիւն պետ- 13
ԱԵ րոսի և յովհաննու , և ՚ի վր հասեալ՝ թէ
արք տգետք՝ և առանց դպրութեան են ,
զարմանային ։ զի ծանօթէին զնս՝ թէ ը
յի էին ։ * և զայրն ևս տեսանէին զբժշ 14
կեալն՝ զի կայր ը նս ։ և ոչինչ կարէին
առնել պատասխանի ։ * Նոքա հրամայեալ 15
նց արտաքս քան զատեանն ելանել , խոր-
հէին ընդ միմեանս , * և ասէին ։ զինչ 16
արասցուք արանցս այսոցիկ՝ զի երևելի
նշան եղև ՚ի ձեռն նոցա ։ ամ իսկ բնակ-
չաց երէմի յայտ է , և ոչ կարեմք ուրա-
նալ ։

17 նալ: * Այլ զի մի՛ առաւել համբաւեսցի
՚ի ժողովուրդն, սպառնասցուք նց՝ մի՛ եւս
խօսել յանունն յայն՝ մի՛ ումեք ՚ի մարդ-
18 կանէ: * Եւ կոչեցեալ զնս պատուիրե-
ցին ամենեւին մի՛ խօսել՝ եւ մի՛ ուսուցա
19 նել յանուն յի: * Իսկ պետրոս եւ յով-
հաննէս պատասխանի տուեալ՝ եւ ասեն ցնս,
եթէ արժա՞ն իցէ առաջի այ՝ ձեզ լսել
20 առաւել քան այ, ընտրեցէք: * Այլ
մեք ոչ կարեմք՝ զոր տեսաքն եւ լուաք՝
21 չխօսել: * Իսկ սպառնացեալ արձակեցին
զնս՝ եւ ոչինչ գտեալ թէ որպ պատուհա
սեսցեն զնս՝ վս ժողովրդեանն. զի ամե-
նեքեան փառաւոր առնէին զած՝ վս ե-
22 ղելոյն: * Զի ամաց էր այրն՝ աւե
լի քան զքառասուն, յորոյ վր եղեւ նշանս
23 այս բժշկութե: * Եւ նոքա արձակեալ՝
եկին առ իւրեանսն, եւ պատմեցին՝ որ-
չափ ինչ ասացին ցնս քահանայապետքն
24 եւ երիցունքն: * Եւ նց լուեալ միաբան-
ձին զձայնս իւրեանց առ ած՝ եւ ասեն:
Տէր ած՝ որ արարեր զերկինս եւ զեր-
25 կիր՝ զծով եւ զամ որ ՚ի նս. * որ ՚ի բե-
րանոյ Հօր մերոյ դաւթի ծառայի քո՝ ՚ի
ձեռն հոգւոյն սբյ ասացեր. զմէ՞ խռո-
վեցան հեթանոսք՝ եւ ժողովուրդք խոր-
26 հեցան ՚ի նոսին. * յանդիման եղեն
թագաւորք երկրի, եւ իշխանք ժողովե-
ցան ՚ի միասին վս տն եւ վս օծելոյ նր:
27 * Ժողովեցան արդարեւ ՚ի քաղաքիս յայս


միկ

վկ՛ի վր սբյ որդւոյ քո յսի՝ զոր օծեր,
հերովդէս եւ պոնտոս պիղատոս՝ ազ_
գօք եւ ժողովրդովքն իսրլի, * առնել որչափ 28
ձեռն քո եւ կամք յառաջագոյն սահմանե
ցին լինել։ * Եւ արդ տր՝ հայեաց ի 29
սպառնալիս նց, եւ տուր ծառայից քոց
ամ համարձակութբ խօսել զբանն քո.
* ի ձգել զձեռն քո ի բժշկութի, եւ նշ_ 30
նանս եւ արուեստս՝ լինել անուամբ սբյ
որդւոյ քո յսի։ * Եւ մինչ կային նոքա 31
յաղօթս՝ շարժեցաւ տեղին՝ յորում էին
ժողովեալ, եւ լցան ամենքին հոգւովն սբվ.
եւ խօսէին զբանն այ համարձակութբ.
ԱԶ * Եւ բազմութե հաւատացելոցն էր սիրտ 32
եւ անձն մի. եւ ոչ ոք ի նոցանէ ասէր զըն
չից իւրոց թէ իւր իցէ. այլ էր նց ամ
ինչ հասարակաց. * Եւ զօրութբ բազ 33
մաւ տային վկայութի առաքեալքն զյա
րութենէ տն յսի քսի. եւ շնորհք մեծամեծք
էին ի վր ամենեցուն նց. * Եւ ոչ ոք կա_ 34
րօտէր ի նս. զի որ միանգամ տեարքն
էին գեղջ կամ ագարակաց՝ վաճառէին
եւ բերէին զգինս վաճառելոցն, * դնէին 35
առ ոտս առաքելոցն. եւ բաշխէին իւրա_
քանչիւր՝ ըստ որում պիտոյ ինչ լինէր.
* Յովսէփ՝ որ կոչեցաւն բառնաբաս յա 36
ռաքելոց անտի, որ թարգմանի՝ որդի
մխիթարութե, ղեւտացի, յազգէ՝ կիպրա
ցի. * էր նր գիւղ, վաճառեաց՝ եւ եբեր 37
զգինն՝ եւ եդ առ ոտս առաքելոցն.

## ԳԼ. Ե.

1 Իսկ այր ոմն անանիա անուն, հանդերձ
կնաւ իւրով սափիրաւ՝ վաճառեաց
2 ագարակ. * և խորեաց 'ի գնոց անտի՝
գիտելով և կնոջն. և եբեր մասն ինչ՝ եդ
3 առ ոտս առաքելոցն: * Եւ ասէ պետրոս.
անանիա՝ ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ
քո՝ ստել քեզ հոգւոյն սրբոյ, և խորել 'ի
4 գնոց գեղջն. * ոչ ապաքէն մինչ կային՝
քո էր, և 'ի վաճառելն՝ ընդ քո իշխանութե
էր. զի՞ է՝ զի եդիր 'ի սրտի քում զիրս
զայս. ոչ ստեցեր մարդկան, այլ այ:
5 * Եւ լուեալ անանիա զբանս զայսոսիկ՝
անկաւ՝ և եհան զոգին. և եղև ահ մեծ
'ի վերայ ամենեցուն՝ որ լուանն զայն:
6 * Յոտն կացին երիտասարդքն՝ և ամփո-
7 փեցին զնա, և տարան թաղեցին: * Եւ
եղև իբրև ժամք երեք անցին, և կին նր
ոչ գիտէր զինչ եղեալն էր, եմուտ 'ի
8 ներքս: * Պատասխանի ետ նմա պետրոս՝
և ասէ. ասա դու ինձ՝ թէ այնչափ գնոց
զգեօղն վաճառեցիք: և նա ասէ. այո
9 այնչափ: * Եւ ասէ ցնա պետրոս. զի՞ է՝
զի միաբանեցայք դուք փորձել զհոգին
տն. ահա ոտքն՝ որ թաղեցին զայրն քո
10 'ի դրան, հանցեն և զքեզ: * Եւ անկաւ
անդէն առ ոտս նր՝ և եհան զոգին. մտին
երիտասարդքն՝ գտին զնա մեռեալ, և
11 հանին թաղեցին առ առն իւրում: * Եւ



1635 9467-5Կ

եղեւ երկիւղ մեծ ՚ի վր ամ եկեղեցւոյն,
եւ ՚ի վր ամենեցուն՝ որ լսէին զայս.
ԱԵ * Եւ ՚ի ձեռս առաքելոցն լինէին նշանք 12
եւ արուեստք բազումք ՚ի ժողովրդեանն.
եւ էին միաբան ամենեքեան ՚ի սրահին
Սողոմոնի. * Եւ յայլոց անտի ոչ ոք իշխէր 13
մերձենալ առ նս. այլ յարգէր զնս ժո_
ղովուրդն. * Եւ առաւել եւս յաւելուին 14
հաւատացեալքն ՚ի Տէր, բազմութիւն
արանց եւ կանանց. * մինչեւ ՚ի հրապարակ 15
սըն հանել զհիւանդս եւ դնել պատգա_
րակօք եւ մահճօք իւրեանց. զի ընդ անցա_
նել Պետրոսի՝ գոնէ հովանի նր հասցէ
ումեք ՚ի նոցանէ. * Եւ ժողովէր բազ_ 16
մութի շուրջ ՚ի քաղաքաց անտի յէմ,
բերէին զհիւանդս եւ զնեղեալս յայսոց
պղծոց. որք եւ բժշկէին ամենեքեան.
* Յարուցեալ քահանայապետն, եւ ամե_ 17
նեքին որ ընդ նմա՝ եւ աղանդ սադուկեց_
ւոց՝ լցան նախանձու. * Եւ արկին ըզ 18
ձեռս յառաքեալսն, եւ եդին զնս հրապա_
րակս ՚ի բանտի. * Եւ հրեշտակ Տն 19
գիշերի եբաց զդրունս բանտին, եւ հան_
եալ զնս՝ ասէ. * Գնացէք՝ կացէք ՚ի տա 20
ճարին, եւ խօսեցարուք ընդ ժողովրդեանն
զամ պատգամս կենացս այսոցիկ. * Եւ 21
իբրեւ լուան, մտին ընդ առաւօտն ՚ի տա
ճարն՝ եւ ուսուցանէին. Եկն քահանայա
պետն՝ եւ որ ընդ նմա, կոչեցին միաբան
զատեանն՝ եւ զամ ծերակոյտ որդւոցն

իէլի, և առաքեցին 'ի բանտն ածել զնս:
22 * Եւ իբրև եկին սպասաւորքն՝ ոչ գտին
զնս 'ի բանտին. դարձեալ անդրէն պատ
23 մեցին, * և ասեն. Թէ զբանտն գտաք
փակեալ ամ զգուշութ, և զպահապան
սն զի կային առ դրանն. բացաք՝ և 'ի
24 ներքս զոք ոչ գտաք: * Իբրև լուան
զբանս զայս իշխանք տաճարին և քահա
նայապետքն՝ հիանային վն նց, թէ զի՞նչ
25 արդեօք լինիցի այն: * Եւ եկն ոմն պատ
մեաց նոցա՝ թէ ահա արքն զորս եդէք 'ի
բանտի՝ կան 'ի տաճարին, և ուսուցանեն
26 զժողովուրդն: * Յայնժամ երթեալ
իշխանն սպասաւորօքն հանդերձ՝ ած զնս
ոչ բռնութ. քանզի երկնչէին 'ի ժողովր
27 դենէն՝ զի մի' քարկոծեսցին: * Եւ ած
եալ զնս՝ կացուցին յատենի. եհարց զնս
28 քահանայապետն, * և ասէ. ոչ պատ
ուիրելով պատուիրեցաք ձեզ՝ մի' ուսու
ցանել յանունն յայն, և արդ՝ ահաւա
սիկ լցէք զԵրուսաղէմ ուսմամբ ձերով, և կա
միք ածել 'ի վր մեր զարիւն զառն զայ
29 նորիկ: * Պատասխանի ետ պետրոս և
այլ առաքեալքն և ասեն. հնազանդել
30 պարտ է այ առաւել քան մարդկան: * Ած
հարցն մերոց յարոյց զյս՝ զոր դուք սպա
31 նէք կախեալ զփայտէ: * Զնա ած ա
ռաջնորդ և փրկիչ բարձրացոյց աջովն
իւրով տալ ապաշխարութի իէլի՝ և թո
32 ղութի մեղաց: * Եւ մեք եմք վկայք բա
նիցս

նիցս այսոցիկ, և հոգին ս՟բ՝ զոր ետ ա՟ծ-
հնազանդելոց իւրոց։ * Եւ նոքա իբրև 33
լուան, առատանային և խորհէին սպա-
նանել զնոսա ։
ԲԿ * Յարուցեալ ոմն ՚ի մէջ ատենին փարի 34
սեցի՝ որում անուն էր գամաղիէլ, օրէնս
ուսոյց՝ պատուական ամենայն ժողովր
դեանն. հրամայեաց սակաւիկ մի զառան
արտաքս տանել։ * Եւ ասէ ցն՟ո. արք 35
իէ՟լացիք՝ հայեցարո՛ւք ՚ի ձեզ վ՟ն առանցս
այսոցիկ՝ զի՛նչ արժան իցէ գործել։ * Յա 36
ռաջ քան զաւուրս զայսոսիկ յարեաւ
թևդաս՝ ասել զանձնէ, թէ իցէ ոմն.
յոր անկան արք թուով իբրև չորեք հա-
րիւր. որ սպանաւ՝ և ամենեքեան որ միա
բանեալ էին ը՟ն նմա, քակտեցան՝ և եղեն
յոչինչ։ * Յետ ն՟ր յարեաւ յուդա գալի 37
լեացի՝ յաւուրս աշխարհագրին. և ապ-
ստամբեցոյց ժողովուրդ բազում զկնի
իւր. և նա կորեաւ՝ և ամենեքեան որ
նմայն հաւանեալ էին, ցրուեցան։ * Եւ 38
զարդ իս ասեմ ձեզ. ՚ի բա՛ց կացէք յա-
րանցդ յայդցանէ՝ և թո՛յլ տուք դոցա.
զի թէ ՚ի մարդկանէ իցէ խորհուրդդ-
այդ կամ գործդ, քակտեսցի. * Ապա թէ 39
յա՟յ է՝ ոչ կարէք քակտել զդոսա. գու-
ցէ և աստուածամարտք գտանիցիք. * Հաւա 40
նեցան նմա. և կոչեցեալ զառաքեալսն՝
գան հարին, և պատուիրեցին՝ մի՛ ևս խօ-
սել յանուն յ՟սի. և արձակեցին զն՟ո։

41 * Եւ նոքա գնացին խնդալով յերեսաց
ատենին, զի վն անուան նն արժանի ե-
42 ղեն անարգելոյ։ * Եւ զամ օր ՚ի տա
ճարին եւ ատանին ոչ դադարէին ուսու-
ցանել՝ եւ աւետարանել զյն քն։

## Գլ. Զ.

1 Եւ յաւուրսն յայնոսիկ ՚ի բազմանալ
աշակերտացն, եղեւ տրտունջ յու-
նաց առ Եբրայեցիսն. զի արհամար
հեալ լինէին ՚ի պաշտաման հանապա
2 զորդ այրիք նց։ * Կոչեցին երկոտասան
քն զբազմութիւն աշակերտացն՝ եւ ասեն.
ոչ է հաճոյ մեզ թողուլ զբանն այ՝ եւ
3 պաշտել զսեղանս։ * Ընտրեցէք եղբարք՝
վկայեալս ՚ի ձէնջ արս եօթն, (լի հոգ-
ւով սրբով եւ իմաստութբ.) զորս կա-
4 ցուցուք ՚ի վր պիտոյից այսոցիկ. * Եւ
մեք աղօթից եւ պաշտաման եւ բանին
5 հպատակ լիցուք։ * Եւ հաճոյ թուեցաւ
բանն առաջի ամ բազմութեանն. եւ ըն
տրեցին զստեփաննոս՝ այր լի հաւատով
եւ հոգւով սրբով, եւ զփիլիպպոս եւ զպ
րոքորոն եւ զնիկանովրա եւ զտիմոնն եւ
զպարմենա՝ եւ զնիկողայոս զեկն անտի
6 քացի։ * Զորս կացուցին առաջի առա
քելոցն. եւ աղօթս արարեալ եդին ՚ի
7 վերայ նոցա զձեռս։ * Եւ բանն այ ա-
ճէր. եւ բազմանայր թիւ աշակերտացն
յոյժ յերուսաղէմ։ եւ բազում ժողովք
՚ի քա

'ի քահանայիցն անսային հաւատոցն ։
ԲԲ * Ստեփաննոս՝ այր լի շնորհօք եւ զօրու- 8
թեամբ , առնէր արուեստս եւ նշանս մեծա-
մեծս 'ի ժողովրդեանն ։ * Յարեան ոմանք 9
'ի ժողովրդենէն , որ կոչէր լիբեացւոց՝
եւ կիւրենացւոց՝ եւ աղեքսանդրացւոց՝ եւ
որ 'ի կիւլիկեցւոց՝ եւ յասիոյ , վիճել ընդ
Ստեփաննոսի . * եւ ոչ կարէին զդէմ ու- 10
նել իմաստութեանն եւ Հոգւոյն , որով
խօսէր ։ * Յայնժամ հրապուրեցին արս 11
ոմանս ասել . թէ լուաք դորա խօսել
բանս հայհոյութեան 'ի Մովսէս եւ յԱստուած ։
* Եւ խռովեցին զժողովուրդն եւ զծեր- 12
ցեանս եւ զդպիրսն . եւ հասեալ 'ի վերայ յափշ-
տակեցին զնա՝ եւ ածին յատեան ։ * Եւ 13
կացուցին վկայս սուտս՝ որ ասէին , այրս
այս ոչ դադարէ խօսել բանս հայհոյու-
թեան զտեղւոյս սրբոյ՝ եւ զօրինացն ։ * Լու- 14
աք 'ի դմանէ զի ասէր՝ թէ Յիսուս Նազովրե-
ցի՝ նա քակեսցէ զտեղիս զայս , եւ փո-
խեսցէ զօրէնս՝ զոր ետ մեզ Մովսէս ։ * Եւ 15
հայեցեալ 'ի նա ամենեցուն՝ որ նստէին
յատենին , տեսին զերեսս նորա իբրեւ զե-
րեսս հրեշտակի ։

## ԳԼ. Է.

Ասէ քահանայապետն՝ թէ արդարեւ 1
այդ այդպէ՞ս իցէ ։ * Եւ նա ասէ . 2
արք եղբարք եւ հարք՝ լուարուք ինձ ։ Աստուած
փառաց երեւեցաւ հօր մերում աբրահա-
մու

մու մինչդեռ 'ի Միջագետս էր, մինչչե-
բնակեցուցեալ էր զնա 'ի Խառան. եւ ասէ
3 ցնա. * Ել յերկրէ քումմէ եւ յազգէ
քումմէ, եւ եկ յերկիր՝ զոր ցուցից քեզ։
4 * Յայնժամ ելեալ յերկրէն Քաղդեացւոց
բնակեցաւ 'ի Խառան. եւ անտի յետ մե-
ռանելոյ հօր նր՝ փոխեաց, եւ պանդխ-
տեցոյց զնա յերկրիս յայսմիկ, յորում
5 դուք այժմ բնակեալ էք. * Եւ ոչ ետ
նմա ժառանգութի 'ի սմա, եւ ոչ քայլ մի
ոտին. եւ խոստացաւ տալ նմա զսա 'ի բնա-
կութի, եւ զաւակին նր յետ նր, մինչ ոչ
6 գոյր նր որդի. * Խօսեցաւ ա̅ծ այսպէս,
թէ եղիցի զաւակ նր պանդուխտ յօտար
երկրի. եւ ծառայեցուսցեն զնա՝ եւ չար
7 չարեսցեն ամս չորեքհարիւր. * Եւ զազ-
գըն՝ որում ծառայեսցեն՝ դատեցայց ես,
ասէ ա̅ծ. եւ յետ այսորիկ ելցեն՝ եւ պաշ-
8 տեսցեն զիս 'ի տեղւոջս յայսմիկ. * Եւ
ետ նմա ուխտ թլփատութե. եւ այսպ ծնաւ
զԻսահակ, եւ թլփատեաց զնա յաւուր
ութերորդի. եւ Իսահակ զՅակոբ. եւ
9 Յակոբ զերկոտասան նահապետսն. * Եւ
նահապետքն նախանձեալ ը̅ն Յովսէփայ՝
վաճառեցին յԵգիպտոս. եւ էր ա̅ծ ը̅ն նմա։
10 * Եւ փրկեաց զնա յա̅մ նեղութեանց նր.
եւ ետ նմա շնորհս եւ իմաստութի առաջի
Փարաւոնի արքային Եգիպտացւոց. եւ
կացոյց զնա իշխան Եգիպտացւոցն՝ եւ ա̅մ
11 տան նորա. * Եւ եկն սով յա̅մ երկիրն
Եգիպ

եգիպտոսի, և 'ի քանան նեղութի̃ մեծ.
և ոչ գտանէին կերակուր հարքն մեր.
* Իբրև լուաւ յակովբայ թէ գտանի կե- 12
րակուր յեգիպտոս, առաքեաց զհարսն
մեր յառաջագոյն. * Իբրև յերկրորդումն 13
եւս ծանօթս յովսէփ եղբարց իւրոց. և
յայտնի եղև ազգն նորա փարաւոնի.
* Առաքեաց յովսէփ՝ և կոչեաց զյա- 14
կովբ զհայր իւր, և զա̃մ ազգատոհմն՝
ոգիս եօթանասուն և հինգ. * Իբրև էջ 15
յակովբ յեգիպտոս՝ և վախճանեցաւ ին-
քըն և հարքն մեր. * Իբրև փոխեցան 'ի սիւ- 16
քեմ, և եդան յայրին, զոր ստացաւ աբ-
րահամ գնոց արծաթոյ յորդւոցն եմով-
րայ՝ 'ի սիւքեմ. * Իբրև մերձեցաւ ժա- 17
մանակ աւետեացն՝ զոր խոստացաւ ա̃ծ
աբրահամու, աճեաց ժողովուրդն՝ և բազ-
մացաւ յեգիպտոս. * մինչև յարեաւ այլ 18
թագաւոր յեգիպտոս՝ որ ոչ ճանաչէր զյ-
յովսէփ. * Նա խորամանկեցաւ ազգին մե- 19
րում, և չարչարեաց զհարսն մեր՝ առնել
ընկեցիկ զմանկունս նոցա՝ զի մի՛ ապրես-
ցին. * Յորում ժամանակի ծնաւ և մով- 20
սէս, և էր հաճոյ աստուծոյ. որ և սը-
նաւ 'ի տան հօր իւրոյ ամիսս երիս. * Իբրև 21
յընկեցիկն առնել զնա՝ եբարձ զնա դուստ
րըն փարաւոնի, և սնոյց զնա իւր յոր-
դեգիրս. * Իբրև վարժեցաւ մովսէս ա̃մ 22
իմաստութե̃ եգիպտացւոցն. և էր զօրա-
ւոր բանիւք և գործովք իւրովք. * Իբրև



լցաւ

լցաւ նր քառասնամեայ ժամանակ, ան
կաւ ՚ի սիրտ նր շրջել զեղբարբքն իւ_
24 րովք՝ զորդւովքն իէլի։ * Եւ տեսեալ
զոմն զրկեալ՝ զչարեցաւ, և խնդրեաց ըզ
վրէժ զրկելոյն՝ սպանեալ զեգիպտացին։
25 * Ի մտաւ ածէր թէ իմասցին եղբարք
նր, զի ած ՚ի ձեռն նր տալոց էր զփրկու
26 թի նոցա. և նոքա ոչ իմացան։ * Եւ ՚ի
վաղիւն անդր երևեցաւ նց մինչդեռ մար
տնչէին՝ և վարեաց զնս ՚ի խաղաղութի,
սաէ. արք՝ եղբարք էք, ընդէր զրկէք
27 զմիմեանս։ * Իսկ որ զրկէր զընկերն,
մերժեաց զնա՝ և ասէ. ո՞ կացոյց զքեզ
28 իշխան և դատաւոր ՚ի վր մեր։ * Մի թէ
սպանանել կամիցիս զիս՝ զորօրինակ ըս_
29 պաներ երէկ զեգիպտացին։ * Եւ փախ
եաւ Մովսէս ՚ի բանիցս յայսցանէ, և եղև
պանդուխտ յերկրին Մադիամու. ուր
ծնաւ երկուս որդիս։

30 * Եւ ՚ի կատարել ամացն քառասնից, ԲԳ
երևեցաւ նմա յանապատի լերինն սի_
նայ հրեշտակ տն ՚ի բոց հրոյ մորենւոյն։
31 * Եւ Մովսէսի տեսեալ՝ զարմացաւ ընդ_
տեսիլն, և՚ի մատչելն նր նշմարել՝ եղև
32 ձայն տն։ * Ես եմ ած հարց քոց, ած
աբրահամու՝ և սահակայ՝ և յակովբայ.
և զահի հարեալ Մովսէս՝ ոչ իշխէր հայ
33 էլ։ * Եւ ասէ ցնա տր. լոյծ զկօշիկս ո_
տից քոց, զի տեղիդ՝ յորում դուդ կա_
34 ցեր՝ երկիր սբ է։ * Տեսանելով տեսի


զչար_

զհառաչանս ժողովրդեան իմոյ՝ որ յԵ-
գիպտոս, եւ լուայ հեծութեն նց̄, եւ իջի
փրկել զն̄ս. եւ արդ՝ ե՛կ առաքեցից զքեզ
յԵգիպտոս։ * Զայն Մովսէս՝ զոր ուրա 35
ցանն եւ ասէն. ո՞ կացոյց զքեզ իշխան եւ
դատաւոր ’ի վ̄ր մեր, զնա ա̄ծ իշխան եւ
փրկիչ առաքեաց ’ի ձեռն հրեշտակին,
որ երեւեցաւ նմա ’ի մորենւոջն։ * Նա 36
եհան զն̄ս՝ արարեալ նշանս եւ արուես-
տս յերկրին Եգիպտացւոց՝ եւ ’ի Կարմիր
ծովուն, եւ յանապատին՝ ամս քառա-
սուն։ * Նա է Մովսէս, որ ասաց ցոր- 37
դիսն ի̄ղի. մարգարէ յարուսցէ ձեզ տ̄ր
ա̄ծ ձեր յեղբարց ձերոց իբրեւ զիս, նմա
լուիջիք։ * Սա է՝ որ եղեւ յեկեղեցւոջն 38
յանապատին ընդ հրեշտակին, որ խօսե-
ցաւ ընդ նմա ’ի լերինն Սինայ՝ եւ ը̄ն հարսն
մեր. որ ընկալաւ պատգամս կենդա-
նիս՝ տալ մեզ։ * Որում ոչ կամեցան 39
հնազանդ լինել հարքն մեր. այլ մեր-
ժեցին՝ եւ դարձան սրտիւք իւրեանց յԵ-
գիպտոս։ * Եւ ասեն ցԱհարոն. արա 40
մեզ աստուածս, որ երթիցեն առաջի
մեր. զի Մովսէսն այն՝ որ եհան զմեզ
յերկրէն Եգիպտացւոց, ոչ գիտեմք զի
եղեւ նմա։ * Եւ արարին յաւուրսն յայ 41
նոսիկ որթ, եւ մատուցին զոհս կռոց, եւ
ուրախ լինէին ’ի գործս ձեռաց իւրեանց։
* Դարձոյց ա̄ծ՝ եւ մատնեաց զնոսա ’ի 42
պաշտօն զօրուն երկնից. ո̄պ եւ գրեալ է


’ի

'ի գիրս մարգարէից. միթէ զո՞հս և պա_
տարագս մատուցէ՞ք ինձ զամս քառասուն
43 յանապատին՝ տո՛ւն իսրայէլի. * և
առէք զխորանն մողոքայ, և զաստղն աս_
տուծոյն հռեմփայ, զպատկերսն՝ զոր ա_
րարէք երկիրպագանել նոցա. և փոխեցից
44 զձեզ յայն կողմն բաբելացւոց: * Խո_
րանն վկայութեան էր ընդ հարսն մեր յանա_
պատին. որպէս հրամանն ետ որ խօսէրն ընդ
մովսիսի, առնել զայն ըստ օրինակին զոր
45 եսես: * Զոր և ընկալեալ բերէին հարքն
մեր հանդերձ յեսուաւ 'ի վիճակ ազ_
գացն, զորս մերժեաց ած յերեսաց հար
46 ցըն մերոց. մինչև յաւուրս դաւթի, * որ
եգիտ շնորհս առաջի այ, և խնդրեաց
47 գտանել զյարկս այ յակովբայ: * Նա
48 և սողոմոն շինեաց նմա տուն: * Այլ
ոչ եթէ բարձրեալն 'ի ձեռագործ տա_
ճարս բնակէ. այլ որպէս մարգարէն ասէ.
49 * երկինք աթոռ իմ են, և երկիրս պա_
տուանդան ոտից իմոց. ո՞րպիսի տուն շի_
նեցէք ինձ ասէ տէր. կամ զի՞նչ տեղի
50 հանգստեան իմոյ. * ո՞չ ձեռն իմ արար
51 զայս ամ: * Խստապարանոցք և անթլ_
փատք սրտիւք և ականջօք. դուք հա_
նապազ հոգւոյն սրբոյ հակառակ կայք.
52 որպէս հարքն ձեր և դուք: * Զո՞ 'ի մար_
գարէիցն ոչ հալածեցին հարքն ձեր. և
սպանին զայնոսիկ որ յառաջագոյն պատ
մեցին վասն գալստեան արդարոյն, որոյ

դուք այժմ մատնիչք և սպանօղք եղէք.
* Որք առէք զօրէնս ’ի հրամանս հրեշ- 53
տակաց, և ոչ պահեցէք: * Իբրև լուեալ 54
զայս զայրանային ’ի սիրտս իւրեանց, և
կրճտէին զատամունս ’ի վ՟ր ն՟ր: * Իսկ 55
նա էր լի Հոգւովն սրբով. հայեցաւ յեր-
կինս՝ և ետես զփառս ա՟յ, և զյ՟ս զի
կայր ընդ աջմէ ա՟յ. և ասէ՝ ահա տեսա-
նեմ զերկինս բացեալ՝ և զորդի մարդոյ
զի կայ ընդ աջմէ ա՟յ: * Աղաղակեալ ’ի 56
ձայն մեծ՝ խցէին զականջս իւրեանց, և
դիմեցին առ հասարակ ’ի վ՟ր ն՟ր: * Իբրև 57
հանեալ արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին.
և վկայքն դնէին զհանդերձս իւրեանց առ
ոտս երիտասարդի միոջ՝ որ կոչէր սա-
ւուղ: * Եւ քարկոծ առնէին զստեփան- 58
նոս, որ կարդայր և ասէր. տ՟ր յ՟ս՝ ըն-
կալ զհոգի իմ: * Եդ ծունր՝ և աղաղա- 59
կեաց ’ի ձայն բարձր. տ՟ր՝ մի՛ համարիր
դոցա զայս մեղս. և զայս իբրև ասաց՝
ննջեաց. և սօղոս էր կամակից սպան-
ման նորա:

## ԳԼ. Ը.

Եւ եղև յաւուր յայնմիկ հալածումն 1
մեծ ’ի վ՟ր եկեղեցւոյն յեհ՟մ. և ա-
մենեքեան ցրուեցան ’ի գեօղս հրէաս-
տանի և ’ի սամարիա՝ բաց յառաքելոցն.
* Եւ բարձին զստեփաննոս արք երկիւ- 2
ղածք՝ և արարին կոծ մեծ ’ի վ՟ր ն՟ր:

3 * Բայց սօղոս վնասակար էր եկեղեց-
ւոյն. 'ի տունս տունս մտանէր քարշէր
զարս և զկանայս՝ մատնէր 'ի բանտ։
4 * Իսկ սփռեալքն՝ շրջէին աւետարանէին
5 զբանն։ * Իսկ փիլիպպոս իջեալ 'ի քա-
ղաքն սամարացւոց՝ քարոզէր նց զքս։
6 * Ունկն դնէին ժողովուրդքն բանիցն
փիլիպպոսի միաբան՝ 'ի լսել նց և'ի տե-
7 սանել զնշանսն զոր առնէր։ * Քանզի
բազումք որ ունէին զայսս պիղծս՝ աղա-
8 ղակէին 'ի ձայն մեծ և ելանէին։ * և բա-
զում անդամալոյծք և կաղք բժշկէին։
9 * Եւ եղև ուրախութի մեծ 'ի քաղաքին
յայնմիկ։ Այր ոմն անուն սիմոն՝ յա-
ռաջագոյն էր 'ի քաղաքին. մոգ էր, և
ապշեցուցանէր զազգն սամարացւոց. ա-
10 սել զանձնէ թէ իցէ մեծ ոմն։ * Յոր
հայէին ամենեքին 'ի փոքուէ մինչև 'ի
մեծամեծս. և ասէին, սա է զօրութի
11 այ՝ որ կոչի մեծ։ * Հայէին 'ի նա վն
բազում ժամանակաց մոգութբքն ապ-
12 շեցուցանելոյ զնս։ * Բայց յորժամ հա-
ւատացին փիլիպպոսի, որ աւետարանէր
վն արքայութեն այ, և անուանն յսի քսի,
մկրտէին ամենեքեան արք և կանայք։
13 * Այլ և ինքն սիմոն հաւատաց, և մկր-
տեալ կանխէր առ փիլիպպոս։ տեսեալ
զնշանսն և զմեծամեծ զօրութիսն որք
14 լինէին՝ զարմանայր։ * Իբրև լուան՝ որ
յԵրմ առաքեալքն էին, թէ և'ի սամա-


րիա

րիա ընկալաւ զբանն այ , առաքեցին առ
նս զպետրոս եւ զյովհաննէս ։ * Որք է- 15
ջեալ կացին յաղօթս ՚ի վր նց , որպ զի
առցեն զՀոգին Սբ ։ * զի ցայնժամ չե- 16
ւս էր եւ ոչ ՚ի վր միոյ նց հասեալ ։ բայց
միայն մկրտեալք էին յանուն տն յնի ։
* Յայնժամ եդին զձեռս ՚ի վր նց՝ եւ 17
առնուին Հոգի Սբ ։ * Տեսեալ սիմոնի՝ 18
թէ ձեռն ՚ի վր դնելով առաքելոցն տր
ուեալ լինի Հոգին Սբ , մատոյց նց ինչս՝
եւ ասէ ։ * տուք եւ ինձ զիշխանութիւնս զայս , 19
զի յոր վր դնիցեմ զձեռս՝ առցէ Հոգի
Սբ ։ Եւ պետրոս ասէ զնա ։ * արծաթ 20
քո ընդ քեզ լիցի ՚ի կորուստ , զի զպար
գեւն այ համարեցար ընչիւք ստանալ ։
* Ոչ գոյ քեզ մասն եւ վիճակ ՚ի բանիդ- 21
յայդմիկ ։ քանզի սիրտ քո ոչ է ուղիղ
առաջի այ ։ * ապաշխարեա դու ՚ի չար 22
եացդ քոց յայդցանէ , եւ աղաչեա զՏր ։
թերեւս թողութիւն լիցի քեզ ՚ի միտս
խորհրդոց սրտի քո ։ * Քանզի ՚ի դառ- 23
նութեան մաղձի , եւ ՚ի կնճիռն անիրաւու
թեան տեսանեմ զքեզ ։ * Պատասխանի 24
ետ սիմոն եւ ասէ ։ աղաչեցէք դուք վն
իմ զՏր , զի մի՛ ինչ եկեսցէ ՚ի վր իմ՝ յո-
րոց դուքդ ասացիք ։ * Եւ նոքա եդեալ 25
զվկայութիւն՝ խօսեցան զբանն այ , եւ դար
ձան յեմ ։ եւ ՚ի բազում գեօղս սամա-
րացւոց աւետարանէին ։
ԲԵ * Հրեշտակ տն խօսեցաւ առ փիլիպպոս՝ 26


Կ

և ասէ · արի՛ և գնա՛ դու ՚ի կողմն հա-
րաւոյ՝ ընդ ճանապարհ որ իջանէ յեմ̃է ՚ի
27 գազայ · զի այս է անապատ ։ * Եւ յա-
րեաւ գնաց ։ Եւ ահաւասիկ այր մի ե-
թեովպացի ներքինի հզօր՝ կանդակայ
տիկնոջ եթեովպացւոյ · որ էր ՚ի վր̃ ամ̃
գանձուց նր̃ · որ եկեալ էր երկիրպագա
28 նել յեմ̃ · * և էր անդրէն դարձեալ ,
և նստեալ ՚ի կառս իւրում , ընթեռնոյր
29 զմարգարէն զեսայի ։ * Ասէ հոգին ցփի-
լիպպոս · մատի՛ր՝ և յարեա՛ց ՚ի կառսդ
30 յայդոսիկ ։ * Եւ ընթացեալ փիլիպպոս՝
լսէր զի ընթեռնոյր զեսայի մարգարէ ,
և ասէ · գիտիցե՞ս արդեօք՝ զոր ընթեռ-
31 նուցուս ։ * Եւ նա ասէ՝ զիա՞րդ կարի-
ցեմ , թէ ոք ոչ առաջնորդեսցէ ինձ ։ և
աղաչեաց զփիլիպպոս ելանել նստել ընդ
32 նմ̃ ։ * Եւ գլուխ գրոյն զոր ընթեռնոյր՝
էր այս · իբրև զոչխար ՚ի սպանդ վարե
ցաւ , և իբրև զորոջ առաջի կտրչի իւրոյ
անմռունչ , այնպէս ոչ բանայ զբերան
33 իւր ։ * Ի խոնարհու թե̃ նր̃ դատաստան
նր̃ բարձաւ , և զազգատոհմն նր̃ ո՞ պատ-
մեսցէ · զի բառնին յերկրէ կեանք նր̃ ·
34 * Պատասխանի ետ ներքինին փիլիպպո-
սի , և ասէ · աղաչեմ զքեզ՝ վն̃ ո՞յր ասէ
մարգարէն զայս · վասն ի՞ւր՝ եթէ վն̃ այ
35 լոյ ուրուք ։ * Եբաց փիլիպպոս զբերան
իւր , և սկսեալ ՚ի գրոցս յայսցանէ՝ աւե
39 տարանեաց նմ̃ զյս̃ ։ * Իբրև երթային


զճա-

զճանապարհայն՝ եկին ՚ի ջուր ինչ. և
ասէ ներքինին, ահաւասիկ ջուր՝ զի՞նչ
արգելու զիս ՚ի մկրտելոյ. * Եւ ասէ 37
ցնա. եթէ հաւատաս բոլորով սրտիւ
քով՝ մարթ է։ Պատասխանի ետ և ասէ.
հաւատամ՝ եթէ յս քս է որդի այ։ * Եւ 38
հրամայեաց կացուցանել զկառսն. և է-
ջին երկոքեան ՚ի ջուրն՝ փիլիպպոս և ներ
քինին. և մկրտեաց զնա։ * Եւ իբրև ե- 39
լին ՚ի ջրոյ անտի՝ հոգին սր եկն ՚ի վր
ներքինւոյն. և հրեշտակ տն յափշտա-
կեաց զփիլիպպոս՝ և ոչ ևս ետես զնա ներ
քինին. և գնայր զճանապարհ իւր ուրա-
խութբ. * Բայց փիլիպպոս գտաւ յա- 40
զովտոս. և շրջեալ աւետարանէր ամ
քաղաքացն մինչև ՚ի գալ նր ՚ի կեսարիա։

## ԳԼ. Թ.

ԲՋ Եւ սօղոս տակաւին լցեալ սպառնա- 1
լեօք և սպանմամբ աշակերտացն տն,
մատուցեալ առ քահանայապետն. * խնդ- 2
րեաց ՚ի նմանէ թուղթս ՚ի դամասկոս
առ ժողովուրդսն. որպէս թէ զոք գտցէ
զայնր ճանապարհի՝ արս կամ կանայս,
կապեալս ածցէ յերճմ. * Եւ ՚ի երթալ 3
նր՝ եղև մերձենալ ՚ի դամասկոս. յան-
կարծակի շուրջ զնովաւ փայլատակեաց
լոյս յերկնից. * Եւ անկեալ յերկիր, 4
լուաւ բարբառ՝ որ ասէր ցնա. սաւուղ
սաւուղ՝ զի՞ հալածես զիս. * Եւ ասէ՝ 5

ո՞վ ես Տէր։ Եւ նա ասէ ես եմ Յիսուս զոր
դու հալածես․ (խիստ է քեզ ընդդէմ
6 խթանի աքացել։ * Եւ զարհուրեալ՝
և անշշունջ լեալ ասաց․ Տէ՛ր՝ զի՞նչ զի՛նչ
7 կամիս առնել։ * Եւ ասէ ցնա Տէր։) Այլ
յոտն կաց՝ և մուտ ՚ի քաղաքդ, և պատ-
մեսցի քեզ՝ զի՛նչ պարտ իցէ առնել։ Իսկ
արքն՝ որ էին ընդ նմայն երթայն, կային անշշ-
շունջ․ զձայնն միայն լսէին՝ բայց տեսա-
8 նէին և ոչ զի՛նչ։ * Յարեաւ Սօղոս յերկրէ
անտի, և աչօք բացօք ոչ զոք տեսանէր։
զձեռանէ առեալ նր՝ մուծին ՚ի Դամաս-
9 կոս։ * Եւ էր անդ աւուրս երիս՝ և ո՛չ
10 տեսանէր, և ո՛չ ուտէր և ո՛չ ըմպէր։ * Եւ
էր ոմն աշակերտ ՚ի Դամասկոս՝ Անանիա
անուն․ ասէ ցնա Տէր ՚ի տեսլեան, Ա-
նանիա։ և նա ասէ, Աւասիկ եմ Տէր։
11 * Եւ ասէ ցնա Տէր․ յոտն կաց՝ և գնա՛ ՚ի
փողոցն՝ որ կոչի Ուղիղ, և խնդրեսցես
յապարանին Յուդայ՝ Սօղոս անուն զոմն
12 Տարսոնացի՝ զի կայ դեռ յաղօթս։ * Եւ ե-
տես ՚ի տեսլեան այր մի Անանիա անուն՝
մտեալ և եդեալ ՚ի վերայ նորա ձեռն, որպէս զի
13 տեսցէ։ * Պատասխանի ետ Անանիա․
Տէ՛ր՝ լուայ ՚ի բազմաց վասն առնն այսորիկ՝
14 որչափ չարիս արար սրբոց քոց յԵմ․ * Եւ
աստ ունի իշխանութիւն ՚ի քահանայապե-
տաց կապել զամենեսեան որ կարդան
15 զանուն քո։ * Ասէ ցնա Տէր․ Երթ դու՝
զի անօթ ընտրութեան է ինձ նա, կրել

զանուն իմ՛ առաջի հեթանոսաց՝ և թա-
գաւորաց՝ և որդւոցն իսրայէլի։ * Զան 16
զի ես իսկ ցուցից նմա՝ որչափ պարտ իցէ
նմա չարչարիլ վն անուան իմոյ։ * Եւ 17
գնաց անանիա՝ և եմուտ յապարանսն.
և եդեալ ՚ի վր նր ձեռս, ասէ. սաւուղ
եղբայր՝ ՚ի վեր հայեաց, Տր առաքեաց
զիս՝ յս որ երևեցաւ քեզ ՚ի ճանապար-
հին՝ յորում գայիր, ոպս զի տեսցես՝ և
լցցիս հոգւով սրբով։ * Եւ վաղվաղակի 18
անկան յաչաց նր իբրև կեղևանք. ետես՝
և յարեաւ մկրտեցաւ. * և առեալ կե- 19
րակուր՝ զօրացաւ. և եղև ՚ի դամասկոս
ընդ աշակերտսն աւուրս ինչ։ * Եւ վաղ- 20
վաղակի ՚ի ժողովուրդսն քարոզեաց զյս,
թէ սա է որդին այ։ * Զարմացեալ 21
էին ամենեքեան որ լսէին, և ասէին.
ոչ սա էր՝ որ աւեր հարկանէր յեմ զայս
նուսիկ, որ կարդային զանունն յն. և
այսր նմին իրի եկեալ է, զի կապեալ ըզ-
նոսա տարցի առ քհնյպետսն. * Սաւ 22
ուղոս առաւել ևս զօրանայր՝ և յաղթա-
հարէր զհրեայսն, որ բնակեալ էին ՚ի
դամասկոս. և խելամտեցուցանէր թէ
սա է քն։ * Իբրև կատարէին աւուրք 23
բազումք. խորհեցան հրեայքն սպանա-
նել զնա։ * Յայտնեցաւ սօղոսի նենգու- 24
թի նց. քզի պահէին զդրունսն ՚ի տուէ
և ՚ի գիշերի՝ ոպս զի սպանցեն զնա։ * Եւ 25
առեալ զնա աշակերտացն ՚ի գիշերի՝ ընդ
պա-

պարիսպն կախեալ իջուցին վանդակաւ։
26 * Իբրեւ եկն Սօղոս յԵրուսաղէմ, ընդ ե-
լանէր յարել յաշակերտսն. եւ ամենե-
քեան երկնչէին ի նմանէ, չհաւատային
27 թէ իցէ աշակերտ։ * Բայց Բառնաբաս
առեալ զնա՝ ած առ առաքեալսն. եւ
պատմեաց նոցա՝ զիարդ ի ճանապարհին ետես
զՏէր, եւ զի խօսեցաւ ընդ նմա. եւ զի ի Դա-
մասկոս համարձակեցաւ յանուն Յիսուսի։
28 * Եւ էր ընդ նոսա ի մտանել եւ ելանել յԵրուսաղէմ,
29 համարձակեալ յանուն Տեառն։ * Խօսէր՝
եւ վիճէր ընդ յոյնս. եւ նոքա խորհէին
30 սպանանել զնա։ * Եւ իմացեալ եղբարցն՝
իջուցին զնա ի Կեսարիա, եւ առաքեցին
31 զնա ի Տարսոն։ * Բայց եկեղեցին ընդ
ամենայն Հրէաստան՝ եւ ի Սամարիա եւ ի Գա-
լիլեա ունէր խաղաղութիւն, շինեալ եւ եր-
թեալ զհետ երկիւղին Տեառն. եւ մխիթա-
րութեամբ Հոգւոյն սրբոյ բազմանայր։
32 * Եւ եղեւ ի շրջելն Պետրոսի առ ամե- ԲԷ
նեքումբք, իջանել նմա եւ առ սուրբսն՝ որ
33 բնակեալ էին ի Լիւդիա։ * Եւ եգիտ
անդ այր մի, որում անուն էր Ենեա,
ութամեան դնէր ի մահճի անդամա-
34 լոյծ։ * Եւ ասէ ցնա Պետրոս. Ենեա՝
բժշկէ զքեզ Տէր Յիսուս Քրիստոս, արի՛ եւ քեզէն
թօթափեա զանկողինս քո։ եւ փութա-
35 պէս յարեաւ։ * Եւ տեսին զնա ամե-
նեքեան, որ բնակեալ էին ի Լիւդիա եւ
ի Սարոնիա, որք եւ դարձան իսկ ի Տէր։

* Իսկ 'ի Յոպպէ էր կին մի աշակերտեալ՝ 36
անուն Տաբիթայ, որ թարգմանեալ կոչի
այծեմնիկ. սա էր լի գործովք բարեօք
և ողորմութեամբք զոր առնէր: * Իսկ եղև 37
յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ նմա և
մեռանել. լուացին զնա՝ և եդին 'ի դըս-
տիկոնի անդ: * Իսկ մերձ էր Լիւդիա 'ի 38
Յոպպէ. աշակերտացն լուեալ եթէ Պետ-
րոս անդ է, առաքեցին երկուս արս առ
նա՝ աղաչել, զի մի՛ դանդաղեսցի գալ առ
նոսա: * Իսկ յարուցեալ Պետրոս՝ եկն ընդ 39
նոսա. զոր՝ իբրև եկն՝ հանին 'ի վերնա-
տունն, և կացին շուրջ զնովաւ այրիքն
ամենայն. լային և ցուցանէին զձորձս և ըզ-
հանդերձս՝ որչափ առնէր նոցա այծեմնիկն:
* Իսկ հանեալ արտաքս զամենեսեան 40
Պետրոսի, եդ ծունր՝ եկաց յաղօթս. և
դարձաւ 'ի մարմինն և ասէ. Տաբիթա՝
արի կաց յանուն տեառն Յիսուսի Քրիստոսի: և նա եբաց
զաչս իւր, և տեսեալ զՊետրոս՝ նստաւ
կանգուն: * Ձեռն ետ նմա՝ և յարոյց 41
զնա. կոչեաց զսուրբսն և զայրիս, առաջի
կացոյց զնա կենդանի: * Իսկ յայտնի ե- 42
ղև ընդ ամենայն Յոպպէ, և հաւատացին բազ-
մունք 'ի տէր: * Իսկ եղև աւուրս բազ-
մումս լինել նմա 'ի Յոպպէ՝ առ ումեմն
Սիմոնի խաղախորդի:

## ԳԼ. Ժ.

1 Այր մի էր 'ի Կեսարիա անուն Կոռնե-
լիոս՝ հարիւրապետ, 'ի գնդէ որ
2 կոչէր Իտալացի. * բարեպաշտօն և եր-
կիւղած յԱյ ամ տամբ իւրով. առնէր ո-
ղորմութիւն բազում 'ի ժողովրդեանն, և յա-
3 ղօթս կայր առ Ած յամ ժամ. * Սա ետես
'ի տեսլեան յայտնապէս զինններորդ ժա-
մու աւուրն՝ զհրեշտակ Այ, զի մտանէր
4 առ նա՝ և ասէր ցնա. Կոռնելիէ. * Եւ
նա հայեցեալ ընդ նա՝ զարհուրեցաւ, և
ասէ. զի՞նչ է Տր: և ասէ ցնա. աղօթք քո՝
և ողորմութիւնք քո ելին յիշատակաւ առա-
5 ջի Այ. * և արդ՝ յղեա արս 'ի Յոպպէ՝ և
կոչեա զսիմոն զոմն՝ որ կոչի Պետրոս.
6 * նա մտեալ է առ սիմոնի ուրումն խա-
ղախորդի, որոյ է տունն մերձ 'ի ծով.
7 * Եւ իբրև գնաց հրեշտակն՝ որ խօսէր
ընդ նմ, կոչեաց երկուս 'ի ծառայից իւրոց՝
և զինուոր մի բարեպաշտօն 'ի սպասաւո-
8 րացն իւրոց, * և պատմեալ նոցա զամ՝
9 առաքեաց զնս 'ի Յոպպէ. * Եւ 'ի վա-
ղիւն անդր 'ի ճանապարհ անկանել նց՝ և
մօտ 'ի քաղաքն լինել, ել Պետրոս 'ի տա-
նիսն կալ յաղօթս զվեցերորդ ժամուն.
10 * Քաղցեաւ՝ և կամէր ճաշակել. և 'ի
պատրաստելն նց՝ եղև 'ի վր նր զարմա-
11 ցումն. * Եւ տեսանէր զերկինս բացեալ.
և զչորեցունց տըտնոց կապեալ անօթ
ինչ

ինչ իբրև զկտաւս մեծ, իջեալ նստել ՚ի
վ̅ր երկրի. * յորում էին ա̅մ չորքոտա- 12
նիք և սողունք երկրի՝ և թռչունք երկ-
նից. * Եւ եղև ձայն առ նա. արի՛ պետ- 13
րոս, զե՛ն և կե՛ր ։ * Եւ պետրոս ասէ. 14
քա՛ւ լիցի տ̅ր, զի ոչ երբէք կերայ խառ-
նակ ինչ և անսուրբ ։ * Զայն եղև կըր- 15
կին անգամ առ նա. զոր ա̅ծ սրբեաց՝
դու մի՛ պղծեր ։ * Այս եղև երիցս և 16
վերացաւ անօթն յերկինս ։ * Եւ մինչդեռ 17
զարմացեալ էր ընդ միտս պետրոս՝ թէ
զի՞նչ իցէ տեսիլն՝ զոր ետես. ահա՛ արքն
առաքեալք ՚ի կոռնելեայ՝ հարցին զտա-
պարանիցն սիմոնի, կացին առ դրանն.
* կոչեցին՝ և հարցանէին, եթէ սիմոն՝ 18
որ կոչի պետրոս՝ աստ մտեալ իցէ ։ * Եւ 19
մինչդեռ պետրոս զմտաւ ածէր վ̅ս տես-
լեանն, ասէ հոգին ցնա. ահաւասիկ արք
ոմանք խնդրեն զքեզ ։ * Այլ արի՛ էջ՝ 20
և երթ ընդ ն̅ս առանց իրիք խղճելոյ, զի
ես առաքեցի զն̅ս ։ * Եւ իբրև էջ պետ- 21
րոս առ նոսա, ասէ. ահաւասիկ ես եմ
զոր խնդրէքն. զի՞նչ իրք են՝ վ̅ս որոյ ե-
կիք ։ * Եւ նոքա ասեն, կոռնելիոս 22
հարիւրապետ՝ այր արդար և երկիւղած
յա̅յ, վկայեալ յա̅մ ազգէն հրէից. հրա-
ման առ ՚ի հրեշտակէ սրբոյ՝ կոչել զքեզ
՚ի տուն իւր՝ և լսել բանս ՚ի քէն ։ * Կո- 23
չեաց զն̅ս ՚ի ներքս՝ և առ իւր ագոյց. և
՚ի վաղիւն անդր յարուցեալ պետրոս գնաց

ը̃ նս̃ · եւ ոմանք յեղբարց անտի որ ՚ի յոպ-
24 պէ էին՝ եկին ընդ նմա ։ * Եւ ՚ի վաղի-
ւնդր մտին ՚ի կեսարիա · եւ կոռնելիոս
մնայր նց̃՝ կոչեցեալ զազգատոհմն իւր՝
եւ զհարկաւոր բարեկամսն ։
25 * Եւ եղեւ ՚ի մտանելն պետրոսի՝ ը̃ ա- ԳԲ
ռաջ եղեւ նմա կոռնելիոս, անկեալ առ
26 ոտսն՝ երկիր պագանէր ։ * Եւ պետրոս
կանգնեաց զնա՝ եւ ասէ · յոտն կաց՝ եւ
27 ես ինքն մարդ եմ ։ * Եւ խօսելով ը̃ նմա
եմուտ ՚ի ներքս · եւ գտանէր անդ ժողո-
28 վեալ բազումս ։ * Եւ ասէ ցն̃ս · դուք ինք-
նին գիտէք՝ որպէս անմարթ է առն հրէի
հպել կամ մերձենալ առ այլազգի · եւ
ինձ ա̃ծ եցոյց մի՛ զոք խառնակ կամ ան-
29 սուրբ ասել ՚ի մարդկանէ ։ * Վասն այ-
սորիկ եւ առանց ընդ բանս ինչ ածելոյ եկի
կոչեցեալ · բայց արդ հարցանեմ, յի՞նչ
30 պէտս կոչեցիք զիս ։ * Եւ կոռնելիոս
ասէ · յառաջ քան զչորս աւուրս մինչ ցայս
ժամ կայի յաղօթս յինն ժամն ՚ի տան ի-
մում, եւ ահա այր մի եկն եկաց առաջի
իմ ՚ի հանդերձս սպիտակս, եւ ասէ ·
31 * Կոռնելիէ՝ լսելի եղեն աղօթք քո · եւ
32 ողորմութիւնք քո յիշեցան առաջի ա̃յ ։ * Եւ
արդ՝ յղեա՛ ՚ի յոպպէ՝ եւ կոչեա՛ զսիմովն,
որ կոչեցեալն է պետրոս · սա մտեալ է ՚ի
տուն սիմոնի ուրումն խաղախորդի մերձ
՚ի ծովն · որ եկեսցէ, եւ խօսեսցի բանս ը̃
33 քեզ ։ * Եւ ես իսկ եւ իսկ յղեցի առ քեզ·

դու բարւոք արարեր՝ զի եկիր․ արդ՝ ա-
մենեքին մեք առաջի այ՟ կամք լսել զամ՟
զոր հրամայեալ է քեզ ՚ի տ՟նէ։ * Եբաց 34
պետրոս զբերան իւր՝ և ասէ․ Ճշմարտու-
թեամբ հասկացեալ եմ, զի ոչ գոյ ակնառութի՟
առ ՚ի յայ՟․ * այլ յամ՟ ազգս՝ որ երկնչին 35
՚ի նմանէ՝ և գործէ զարդարութի՟, ընդ-
ունելի է նմա։ * Զբանն առաքեաց որդ- 36
ւոցն իէ՟լի՝ աւետարանել զխաղաղութի՟
՚ի ձեռն յ՟սի ք՟սի․ սա է ա՟մի տ՟ր։ * Դուք 37
ինքնին գիտէք զբանն, որ եղև ընդ ամ՟
հրէաստան սկսեալ ՚ի գալիլեէ յետ մկր-
տութեան՝ զոր քարոզեաց յովհաննէս։
* Զյ՟ս որ ՚ի նազարեթէ՝ զոր օծ ած՟ 38
հոգւովն սրբով և զօրութեամբ․ որ շրջեցաւ
բարի առնել՝ և բժշկել զամ՟ ըմբռնեալս
՚ի սատանայէ․ զի ած՟ էր ընդ նմա։ * Եւ 39
մեք վկայ եմք ամ՟ի զոր արար յերկրին
հրէաստանի՝ և յեմ՟․ զոր և սպանին կա-
խեալ զփայտէ։ * Զնա ած՟ յարոյց յեր 40
րորդ աւուր․ և ետ նմա յայտնի լինել․
* ոչ ամ՟ ժողովրդեանն, այլ մեզ վկայիցս 41
յառաջագոյն ընտրելոցս յայ՟․ որ և կե-
րաք՝ և արբաք ընդ նմա յետ յարութեան նր՟
՚ի մեռելոց։ * Եւ պատուիրեաց մեզ 42
քարոզել ժողովրդեանն՝ և վկայութի՟ դնել
թէ նա է սահմանեալն յայ՟՝ դատաւոր
կենդանեաց և մեռելոց։ * Սմա ամ՟ մար- 43
գարէք վկայեն, թողութի՟ մեղաց առ-
նուլ անուամբ նր՟՝ ամ՟ հաւատացելոց ՚ի
նա։

44 Նա։ * Եւ մինչդեռ խօսէր պետրոս զբ_
բանս զայս, հանգեաւ հոգին սր ՚ի վր
45 ամենեցուն՝ որ լսէին զբանն։ * Զար_
մացան՝ որք ՚ի թլփատութենէ անտի հա_
ւատացեալք եկեալ էին ը պետրոսի. զի
և ՚ի հեթանոսս պարգևք հոգւոյն սրբ
46 զեղուին։ * Քանզի լսէին ՚ի նոցանէ խօ
սել լեզուս՝ և մեծացուցանել զած։
47 * Յայնժամ պատասխանի ետ պետրոս.
միթէ զջուր ոք արգելուլ կարէ առ ՚ի
չմկրտելոյ զսոսա, որք և զհոգին սր ըն_
48 կալան՝ որպէս և մեք։ * Եւ հրամայ_
եաց նց մկրտել յանուն յսի քսի։ յայն_
ժամ աղաչեցին զնա լինել անդ աւուրս
ինչ։

## ԳԼ. ԺԱ.

1 Լուան առաքեալքն և եղբարքն՝ որ էին Գ.Գ.
՚ի կողմանս հրէաստանի, զի և ՚ի
2 հեթանոսս ընկալան զբանն այ։ * Եւ յայց
յորժամ ել պետրոս յեմ, խղճէին ՚ի
նմանէ որ ՚ի թլփատութենէ անտի հաւա_
3 տացեալքն. * և ասէին, թէ եմուտ առ
4 արս անթլփատս՝ և եկեր ը նս։ * Եւ
սկսաւ պետրոս պատմել նց կարգաւ՝ և
5 ասէ։ * Ես էի ՚ի քաղաքին ՚ի յոպպէ
յաղօթս՝ և տեսանէի ՚ի զարմանս մտաց
տեսիլ. իջանել անօթ ինչ իբրև կտա_
ւոյ մեծի չորեցունց տրանոց կախեալ
6 յերկնից՝ և եհաս մինչև առ իս։ * Յոր



պշու_

պշուցեալ հայէի · և տեսի զչորքոտանիս
երկրի , և զգազանս՝ և սողունս , և
զթռչունս երկնից · * և լուայ բարբառ՝ 7
որ ասէր ցիս · արի՛ պետրոս՝ զե՛ն և կե՛ր ·
* Եւ ասեմ · քա՛ւ լիցի տէր , զի խառնակ 8
ինչ և անսուրբ ոչ երբէք եմուտ 'ի բե_
րան իմ : * Պատասխանի ետ ինձ երկիցս 9
անգամ բարբառն յերկնից · զոր ա̄ծ
սրբեաց՝ դու մի՛ խառնակ համարիր :
* Այս եղև երիցս , և վերացաւ ամե_ 10
նայն դարձեալ յերկինս : * Եւ ահա 11
անդրէն երեք արք եկին կացին առ ա_
պարանիցն՝ ուր եմ էի , առաքեալք 'ի
կեսարիայ առ իս : * Եւ ասէ ցիս հո_ 12
գի՛ն՝ երթալ ընդ ն̄ս՝ և մի՛ ինչ խղճել : Ե_
կին ընդ իս և այս վեցեքին եղբարքս , և
մտաք 'ի տուն առնն այնորիկ : * Եւ 13
պատմեաց մեզ՝ ո̄պ եսես զհրեշտակն 'ի
տան իւրում , զի կայր և ասէր ցնա · ա_
ռաքեա՛ 'ի յոպպէ , և կոչեա՛ զսիմոն ըզ_
կոչեցեալն պետրոս · * որ խօսեսցի բանս 14
ընդ քեզ , որովք կեցցես դու՝ և ա̄մ տուն
քո : * Եւ իբրև սկսայ խօսել՝ եկն հո_ 15
գին ս̄բ 'ի վ̄ր ն̄ց · ո̄պ և 'ի վերայ մեր 'ի
սկզբանն : * Յիշեցի զբանն տ̄ն զոր ա_ 16
սէրն · յովհաննէս մկրտեաց 'ի ջուր ·
բայց դուք մկրտիցիք 'ի հոգին ս̄բ : * Իսկ 17
արդ՝ եթէ զհաւասարակաց պարգևն ետ
ա̄ծ և նոցա՝ ո̄պ և մեզ՝ 'ի հաւատալն 'ի
տ̄ր յ̄ս ք̄ս · ես զի՞նչ կարող էի արգելուլ

18 զա՟ծ։ * Եւ լուծեալ զայս՝ լռեցին և փա-
ռաւոր առնէին զա՟ծ՝ և ասէին. ուրեմն
և ՚ի հեթանոսս ետ ա՟ծ զապաշխարութի՟ն
կենաց։
19 * Եւ ցրուեալքն ՚ի նեղութենէն որ եղև Գ·Դ·
՚ի վերայ ստեփաննոսի՝ հասին մինչև ՚ի
փիւնիկէ և ՚ի կիպրոս և յանտիոքիայ.
ոչ ումեք խօսէին զբանն, բայց միայն
20 հրէից։ * Եւ էին ոմանք ՚ի նոցանէ արք
կիպրացիք և կիւրենացիք՝ որք մտեալ
յանտիոք՝ խօսէին ընդ յոյնս աւետարա
21 նեալ զտ՟ր յ՟ս։ * Եւ էր ձեռն տ՟ն ը՟ն ն՟ս.
և բազմութի՟ն հաւատացելոց դարձաւ ՚ի
22 տ՟ր։ * Յու եղև բանս այս յականջս
եկեղեցւոյն՝ որ էր յե՟մ, վ՟ն ն՟ց. և ա-
ռաքեցին զբառնաբաս մինչև յանտիոք.
23 * որ իբրև եկն՝ և ետես զշնորհսն ա՟յ՝
ուրախ եղև, և մխիթարէր զամենեսին՝
24 յօժարութե՟բ սրտի կալ ն՟ց ՚ի տ՟ր։ * Զի
էր այր զուարթամիտ՝ և լի հոգւով ս՟բով
հաւատովք. և յաւելաւ ժողովուրդ
25 բազում տ՟ն։ * Եւ ել ՚ի տարսոն խնդրել
զսօղոս, և գտեալ զնա՝ ած յանտիոք։
26 * Եւ եղև ն՟ց զամ՟ն ողջոյն ժողովել յե-
կեղեցւջն՝ և ուսուցանել ժողովուրդ բա-
զում, և անուանել նախ յանտիոք զա-
27 շակերտսն Քրիստոնեայս։ * Ընդ ա-
ւուրսն ընդ այնոսիկ իջին յե՟մէ մարգա
28 րէք՝ յանտիոք։ * Յարուցեալ մի ոմն ՚ի
նոցանէ անուն ագաբոս՝ նշանակեաց

հոգւովն սով մեծ լինել ընդ ամենայն աշխարհ՝
որ եղև առ Կղօդեաւ. * Բայց յաշա- 29
կերտացն անտի որպէս զիարդ կարող ոք էր՝
իւրաքանչիւրոք 'ի նոցանէ որոշեցին ա-
ռաքել 'ի պէտս եղբարցն որ բնակեալ
էին 'ի Հրէաստանի . * զոր և արարին 30
իսկ՝ առաքեալ առ երիցունսն 'ի ձեռն
Բառնաբայ և Սօղոսի:

## ԳԼ. ԺԲ.

ԳԷ Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արկ Հե- 1
րովդէս արքայ ձեռն՝ չարչարել զո-
մանս յեկեղեցւոյն, * և սպան զՅակով- 2
բոս զեղբայրն Յովհաննու սրով: * Եւ տես 3
եթէ հաճոյ է Հրէիցն, յաւել ևս ունել
զպետրոս . և էին աւուրքն բաղարջակե-
րաց: * Զոր իբրև կալաւ՝ եդ 'ի բանտի, 4
և մատնեաց չորից չորրորդաց զինուորաց
պահել զնա . և կամէր յետ զատկին ա-
ծել զնա ժողովրդեանն: * Եւ պետրոս 5
'ի պահեստի էր 'ի բանտին . և աղօթք
սաստիկ լինէին յեկեղեցւոյն վասն նորա առ
Աստուած. * Իբրև կամեցաւ զնա ածել Հե- 6
րովդէս . 'ի գիշերին յայնմիկ էր պետրոս
'ի քուն 'ի մէջ երկուց զինուորաց՝ կա-
պեալ կրկին շղթայիւք . և պահապանքն
առաջի դրանն պահէին զբանտն . * Եւ ա- 7
հա Հրեշտակ Տեառն եկն եկաց 'ի վերայ՝ և
լոյս ծագեաց 'ի տանն, և խթեաց ըզ-
կողն պետրոսի՝ յարոյց զնա՝ և ասէ .



արի

արի՛ վաղվաղակի . և անկան շղթայքն 'ի
8 ձեռաց նր . * Եւ ասէ հրեշտակն ցնա .
ա՛ծ զգօտի քո, և արկ զհողաթափս յոտս
քո . և արար այնպէս . և ասէ ցնա, արկ
9 զձորձս քո՝ և եկ զկնի իմ . * Եւ ելեալ
երթայր զհետ, և ոչ գիտէր՝ թէ ճշմա-
րիտ իցէ որ ինչ եղեւն 'ի հրեշտակէն .
10 զի համարէր երազ տեսանել . * Եւ իբ-
րև անցին նոքա զմի պահ և զերկուս,
եկին մինչև 'ի դուռն երկաթի որ հա-
նէր 'ի քաղաքն . որ ինքնին բացաւ նց .
և մտեալ անցին ընդ փողոց մի . և վաղ-
վաղակի 'ի բաց եկաց 'ի նմանէ հրեշ-
11 տակն . * Եւ պետրոս իբրև 'ի միտս ե-
ղև, ասէ . արդ գիտեմ ճշմարիտ եթէ
առաքեաց տր զհրեշտակ իւր, և փրկ-
եաց զիս 'ի ձեռաց հերովդի, և յամ
12 ակնկալութե ժողովրդեանն հրէից . * Եւ
լեալ 'ի միտս՝ եկն 'ի տուն մարեմու մօր
յովհաննու, որ կոչեցաւն մարկոս . ուր
էին բազումք ժողովեալ՝ և աղօթս առնէին .
13 * Եւ 'ի բաղխել զդուրս դրանն, մա-
տեաւ աղախին մի ունկն դնել, որում
14 անուն էր հռովդէ . * Եւ ծանուցեալ
զձայնն պետրոսի՝ 'ի խնդալոյն ոչ եբաց
զդուռն . 'ի ներքս ընթացեալ պատմեաց,
15 թէ պետրոս առ դրանն կայ . * Նոքա
ասեն ցնա՝ մոլիս . և նա եւս պնդէր՝ թէ
այսպէս է . և նոքա ասէին՝ հրեշտակ նր
16 իցէ . * Եւ պետրոս տևէր բաղխէր .

իբ-

իբրև բացին, տեսին զնա և զարմացան։
* Եւ նա ձեռամբ ցուցանէր նոցա լռել. և 17
պատմեաց՝ որպէս Տէր եհան զնա 'ի բան_
տէն. և ասէ՝ պատմեցէք Յակոբայ և
եղբարցդ զայս. և ել գնաց յայլ տեղի։
* Եւ իբրև այգ եղև՝ էր խռովութիւն մեծ 18
'ի մէջ զինուորացն, զի՞ արդեօք Պետ_
րոսն եղև։ * Իսկ Հերովդէս իբրև խնդ_ 19
րեաց զնա՝ և ոչ եգիտ, հարցեալ զպա_
հապանսն՝ հրամայեաց սպանանել։ և
իջեալ 'ի Հրէաստանէ 'ի Կեսարիա՝ և
անդ լինէր։ * Եւ էր Հերովդէս ցաս_ 20
մամբ ընդ Տիւրացիս և ընդ Սիդոնացիս. և
նոքա առ հասարակ եկին առ նա. և 'ի
բանի արարեալ զԲղաստոս սենեկապետ
արքայի, խնդրէին զխաղաղութիւն, վասն կե_
րակրելոյ երկրին նոցա յարքունուստ։
* Յաւուր միում յերևելում Հերովդէս 21
զգեցեալ էր զհանդերձ թագաւորութեան՝
և նստէր յատենի, և խօսէր ընդ նոսա հրա_
պարակաւ։ * և ամբոխն աղաղակէր՝ 22
թէ Այ բարբառ է, և ոչ մարդոյ։ * Եւ 23
անդէն եհար զնա հրեշտակ Տն, փոխա_
նակ զի ոչ ետ փառս Այ. և եղեալ որդ_
նալից՝ սատակեցաւ։ * Եւ բանն Այ ա_ 24
ճէր և բազմանայր։
Գ.Ջ * Բառնաբաս և Սօղոս դարձան յԵմէ՝ 25
իբրև կատարեցին զպաշտօնն. առեալ
էր ընդ իւրեանս և զՅովհաննէս՝ որ կոչե_
ցեալն էր Մարկոս։

## ԳԼ. ԺԳ·

1 Էին անդ յԱնտիոք ըստ եկեղեցւոյն,
մարգարէք և վարդապետք, Բառ-
նաբաս՝ և Շմաւոն կոչեցեալն Նիգեր,
և Ղուկիոս Կիւրենացի, և Մանայէն դա-
եակորդի Հերովդի չորրորդապետի, և
2 Սօղոս: * Մինչդեռ 'ի պաշտաման Տն
կային՝ և պահէին, ասէ Հոգին Սբ. ո-
րոշեցէք ինձ զԲառնաբաս և զՍօղոս 'ի
գործ՝ յոր կոչեցեալ է իմ զդոսա:
3 * Յայնժամ պահեալ՝ և աղօթս արա-
րեալ՝ եդին ձեռն 'ի վր նց՝ և արձակե-
4 ցին: * Եւ նոքա առաքեալք 'ի Հոգւոյն
Սբյ՝ իջին 'ի Սելեւկիա, և անտի նաւե-
5 ցին 'ի Կիպրոս: * Եւ հասեալ 'ի Սաղա-
մինա՝ պատմէին զբանն այ 'ի ժողովուրդս
Հրէիցն. ունէին և զՅովհաննէս պաշ-
6 տօնեայ: * Շրջեալ ընդ Տմ կղզին մին-
չև 'ի Պափոս, գտին անդ զայր ոմն մոգ
սուտ մարգարէ՝ Հրէայ՝ որում անուն
7 էր Բարեշիսու: * Որ էր ընդ փոխանորդի
բդեշխին Սերգեայ Պօղոսի՝ առն իմաստ-
նոյ: Նա աղաչեալ զԲառնաբաս և զՍօ-
8 ղոս՝ խնդրէր լսել զբանն այ: * Եւ ընդդէմ
եկաց նց Եղիմաս մոգ, քանզի այսպէս
թարգմանի անուն նր. խնդրէր շրջել
9 զփոխանորդ բդեշխին 'ի հաւատոց: * Իսկ
Սօղոս, որ և Պօղոսն՝ լցեալ Հոգւով Սր-
10 բով հայեցաւ 'ի նա, * և ասէ. Ով լի
ամ

ամ նենգութբ և խորամանկութբ՝ որդի
սատանայի՝ թշնամի ամ արդարութե, ոչ
դադարես 'ի թիւրելոյ զճանապարհս տն զու-
ղիղս։ * Եւ արդ՝ ահա ձեռն տն 'ի վր 11
քո, և եղիցիս կոյր՝ չտեսանել զարև մին-
չև 'ի ժամանակ մի։ և անդէն անկաւ
'ի վր նր մէգ և խաւար, շրջէր խնդ-
րէր առաջնորդս։ * Յայնժամ տեսեալ 12
փոխանակն բդեշխին զիրսն որ եղեն՝ հա-
ւատաց, զարմացեալ ընդ վարդապե-
տութիւնն տն։

ԳԵ * Եւ ամբարձեալ 'ի պափեայ պօղո- 13
սեանց՝ եկին 'ի պերգէ պամփիւլեայ.
յովհաննէս մեկնեալ 'ի նոցանէ՝ դար-
ձաւ յեմ։ * Եւ նոքա գնացեալ 'ի պեր- 14
գեայ՝ եկին յանտիոք պիսիդեայ, և մը-
տեալ 'ի ժողովուրդն յաւուր շաբաթուց՝
նստան։ * Եւ յետ ընթեռնլոյ զօրէնսն 15
և զմարգարէս, առաքեցին առ նս ժո-
ղովրդապետքն և ասեն. արք եղբարք՝
եթէ իցէ 'ի ձեզ բանք մխիթարութե
առ ժողովուրդդ՝ խօսեցարուք։ * Յոտն 16
եկաց պօղոս՝ շարժեաց զձեռն և ասէ.
արք իսրայելացիք՝ և որք երկնչիք յայ՝ լուա-
րուք։ * Ած ժողովրդեանս այսորիկ իս- 17
րայէլի ընտրեաց զհարսն մեր. և զժո-
ղովուրդն բարձրացոյց 'ի պանդխտութե
յերկրին եգիպտացւոց. և 'ի բազուկ
բարձր եհան զնս անտի։ * Եւ իբրև քա- 18
ռասնամեայ ժամանակ կերակրեաց զնս

19 յանապատի ։ * Եւ քակեալ ազգս եօթն
յերկրին Քանանու՝ ժառանգեցոյց նոցա
20 զերկիր նց՟ * Իբրև ամս չորեքհարիւր և
յիսուն ։ և յետ այսորիկ ետ նց՟ դատա-
21 ւորս մինչև 'ի Սամուէլ մարգարէ ։ * Եւ
անտի յառաջ խնդրեցին թագաւոր ։ և
ետ նց՟ ած՟ զՍաւուղ որդի Կիսեայ՝ այր
յազգէ Բենիամենի , ամս քառասուն ։
22 * Եւ իբրև փոխեաց զնա , յարոյց նոցա
զԴաւիթ թագաւոր , որում և ասաց
վկայութբ՟ · Գտի զԴաւիթ որդի Յեսսեայ
այր ըստ սրտի իմում · որ արասցէ զամ՟
23 զկամս իմ ։ * 'Ի սր՟ զաւակէ ած՟ ըստ աւե-
24 տեացն յարոյց իէլի զփրկիչն յս՟ · * ը՟ յա-
ռաջագոյն քարոզութեն՟ Յովհաննու · ա-
ռաջի երեսաց մտիցն նր՟ մկրտութի՟ ապաշ-
25 խարութե՟՝ ամ՟ ժողովրդեանն իէլի ։ * Եւ
իբրև լնոյր Յովհաննէս զընթացսն , ա-
սէր · զո՞ ոք կարծէք զինէն թէ իցեմ ·
չեմ ես այն · այլ ահա գայ զկնի իմ ,
որում չեմ արժանի զկօշիկս ոտիցն լու-
26 ծանել ։ * Արք եղբարք՝ որդիք աբրա-
համեան տոհմին , և որ 'ի ձեզ երկիւ-
ղածք իցեն յայ՟ · ձեզ բանս այս փրկու-
27 թե՟ առաքեցաւ ։ * Բայց որ բնակեալ
են յեմ՟ , և իշխանք նց՟՝ անծանօթ ե-
ղեն 'ի նմանէ · և ըստ բարբառոյ մարգա-
րէիցն , որ զամ՟ շաբաթն ընթեռնուին՝
28 դատեալ՝ կատարեցին · * և ոչ մի ինչ
պատճառս մահու գտեալ՝ խնդրեցին 'ի պի-

ղատոսէ սպանանել զնա ։ * Իսկ իբրև 29
կատարեցին զա՟մ՝ որ վ՟ն ն՟ր գրեալ էր,
իջուցեալ 'ի փայտէն՝ եդին 'ի գերեզ-
մանի ։ * Այլ ա՟ծ յարոյց զնա 'ի մեռե- 30
լոց ։ որ երևեցաւ աւուրս բազումս այ-
նոցիկ, * որ ելեալ էին ընդ նմա 'ի գալի- 31
լեէ յե՟ղմ ։ որք և արդ իսկ վկայք են ն՟ր
առ ժողովուրդն ։ * Եւ մեք ձեզ աւե- 32
տարանեմք զխոստումն՝ որ առ հարսն ե-
ղեալ էր ։ * Զի զնոյն ա՟ծ կատարեաց 33
առ մեզ որդիս ն՟ց՝ յարուցեալ զյ՟ս ։ ո՟պ
և 'ի սաղմոսին գրեալ է յերկրորդում ։
որդի իմ ես դու ։ և ես այսօր ծնայ ըզ-
քեզ ։ * Իսկ զի յարոյց զնա 'ի մեռելոց, 34
և ոչ ևս դառնալոց է յապականութի ։
այսպէս ասէ, եթէ տաց ձեզ զսրբու-
թիւն դաւթի զհաւատարիմս ։ * Վ՟ն 35
զի և 'ի միւսումն ասէ ։ ոչ տացես սրբոյ
քում տեսանել զապականութի ։ * Այլ 36
դաւիթ յազգի անդ իւրում պաշտեաց ։
և 'ի կամս ա՟յ ննջեաց, և յաւելաւ առ
հարս իւր՝ և ետես զապականութիւն ։
* Բայց զոր ա՟ծն յարոյց՝ ոչ ետես զա- 37
պականութի ։ * Յայտնի լիցի ձեզ արք 38
եղբարք, զի սովաւ ձեզ թողութի մեղաց
աւետարանի ։ և յա՟մէ՝ յորմէ ոչ կարա-
ցէք օրինօքն մովսեսի արդարանալ ։ * սո- 39
վաւ ա՟մ որ հաւատայ՝ արդարանայ ։
* Զգոյշ կացէք՝ գուցէ եկեսցէ 'ի վ՟ր 40
ձեր ասացեալն 'ի մարգարէս ։ * Տեսէք 41


առ-

արհամարհոտք՝ և զարմացարուք և եղ_
ծարուք . զի գործ մի գործեմ ես յաւու_
րս ձեր, գործ՝ որում ոչ հաւատայցէք՝
42 եթէ ոք պատմեսցէ ձեզ ։ * Եւ իբրև ե_
լին անտի , աղաչէին 'ի միւսում շաբա_
43 թու խօսել նոցա զնոյն բանս ։ * Իբրև
արձակեցաւ ժողովուրդն , զհետ եր_
թային բազումք 'ի հրէից անտի և 'ի պաշտօ
նէից եկամտից՝ զպօղոսի և զբառնաբայ .
որք խօսէին ընդ նս, և հաւանեցուցանէին
զնս կալ մնալ 'ի շնորհսն այ ։
44 * Եւ 'ի գալ միւսոյ շաբաթուն, գրեթէ ԴԿ
ամ քաղաքն ժողովեցաւ լսել զբանն այ ։
45 * Իբրև տեսին հրեայքն զամբոխն՝ լցան
նախանձու . և ընդդէմ դարձեալ ասա_
46 ցելոցն 'ի պօղոսէ՝ հայհոյէին ։ * Համ_
արձակեալ պօղոսի և բառնաբայ՝ ա_
սէին . առ ձեզ նախ պարտ էր խօսել ըզ_
բանն այ . և քանզի դուք մերժեցէք զնա , և
ոչ արժանի համարիք զձեզ կենացն յա_
ւիտենականաց , ահաւասիկ դառնամք
47 'ի հեթանոսս ։ * Զի այսպէս պատ_
ուիրեաց մեզ տր . եդի զքեզ 'ի լոյս
հեթանոսաց՝ լինել քեզ 'ի փրկութի մին
48 չև 'ի ծագս երկրի ։ * Զայս լուեալ հե_
թանոսացն՝ ուրախ լինէին , և փառաւոր
առնէին զբանն տն . և հաւատացին՝ որք
էին կարգեալ 'ի կեանսն յաւիտենականս ։
49 * Եւ շրջէր բանն այ ընդ ամ գաւառն ։
50 * Բայց հրեայքն գրգռեցին զպաշտօ_



նեայ

նեայ կանայս զպատուաւ՝ եւ զգլխաւորս
քաղաքին, եւ յարուցեալ հալածանս 'ի
վր պօղոսի եւ բառնաբայ՝ հանին զնս 'ի
սահմանացն իւրեանց։ * Եւ նք թօթա- 51
փեալ զփոշին յոտից 'ի վր նց, եկին յԻ-
կոնիոն։ * Եւ աշակերտքն լնուին խնդ- 52
ութբ՝ եւ հոգւովն սրբով։

## ԳԼ. ԺԴ.

Եւ եղեւ յԻկոնիոն 'ի միասին մտանել 1
նց 'ի ժողովուրդ հրէիցն, եւ խօսել
նոյնպէս. մինչեւ հաւատալ հրէից՝ եւ
յունաց բազմաց յոյժ։ * Բայց անհաւ- 2
ան հրէայքն յարուցին եւ չարացուցին
զանձինս հեթանոսացն 'ի վր եղբարց։
* Բազում ժամանակս շրջէին համար- 3
ձակեալք տն վկայութբ, բանիւ շնորհաց
իւրոց. եւ տալ նշանս եւ արուեստս լինե-
լոյ 'ի ձեռս նց։ * Եւ եղեն հերձուածք 4
'ի բազմութեն քաղաքին. ոմանք էին 'ի
հրէայսն, եւ ոմանք յառաքեալսն։ * Իբ- 5
րեւ եղեւ դիմել հեթանոսացն եւ հրէից
իշխանօքն իւրեանց՝ 'ի թշնամանել եւ
'ի քարկոծել զնս, * ազդ եղեալ նոցա՝ 6
փախեան 'ի քաղաքս լիկայոնացւոց 'ի
լիւստրա եւ 'ի դերբէ՝ եւ շուրջ զգաւա-
ռաւն, եւ անդ աւետարանէին։
ԴԲ * Եւ այր մի լիւստրացի ակար յոտից 7
նստէր՝ կաղ յորովայնէ մօր իւրոյ, որոյ
երբէք չէր գնացեալ։ * Սա լուաւ զխօսսն 8

պօղոսի · որոյ հայեցեալ 'ի նա , և տե_
9 սեալ՝ թէ ունի հաւատս փրկուել , * ա_
սէ մեծաձայն · քե՛զ ասեմ յանուն տն
մերոյ յսի քսի՝ յոտն կաց 'ի վր ոտից քոց
10 ուղիղ ։ և վազվազեր՝ և գնայր ։ * Եւ
ժողովրդոցն տեսեալ՝ զոր արարն պօղոս,
բարձին զձայնս իւրեանց լիկայոնարէն,
և ասեն · աստուածք նմանեալք մարդ_
11 կան իջին առ մեզ ։ * Եւ կոչէին զբառ_
նաբաս դիոս , և զպօղոս հերմէս , քան
12 զի նա էր առաջնորդ բանին ։ * Իսկ
քուրմն դիոսի որ կայր առաջի քաղաքին,
ցուլս և պսակս հասուցեալ 'ի դուռնն՝
հանդերձ բազմութբքն՝ կամէր զոհել ։
13 * Եւ լուեալ առաքելոցն բառնաբայ և
պօղոսի , պատառեալ զհանդերձս իւ_
րեանց՝ արտաքս վազեցին յամբոխն ·
14 աղաղակէին՝ * և ասէին · արք՝ զի՞նչ
գործէք զայդ · մեք ձեզ նմանօղք կա_
րեօք մարդիկ եմք , աւետարանել ձեզ
յայդպիսի ունայնութեց դառնալ յած
կենդանի · որ արար զերկինս և զերկիր
15 և զծով՝ և զամ որ 'ի նոսա ։ * Որ յան
ցեալ ազգսն՝ թոյլ ետ ամ հեթանոսաց
16 գնալ 'ի ճանապարհս իւրեանց ։ * և սա_
կայն ոչ եթէ առանց վկայութե զինքն
եթող՝ բարերարութբն տալ յերկնից
ձեզ անձրևս՝ և ժամանակս պտղաբերս,
լնուլ կերակրովք և ուրախութբ զսիրտս
17 ձեր ։ * Եւ զայս ասացեալ՝ հազիւ լռե_



ցու

ցուցանէին զժողովուրդն ՚ի չզոհելոյ
նց· այլ գնալ յիւրաքանչիւր տեղիս·
ԺԴ * Եւ ՚ի շրջելն նց և յուսուցանել՝ եկին 18
հասին յանտիոքէ և յիկոնիէ հրէայք·
և ՚ի վիճել նց համարձակութեամբ՝ պատրե
ցին զժողովուրդն ՚ի բաց կալ ՚ի նոցա
նէ, և ասէին՝ թէ ոչինչ ճշմարտութի ա-
սեն, այլ զամ սուտ· և քարկոծեալ
զպօղոս՝ քարշեցին արտաքս քան զքա-
ղաքն, և համարեցին զնա մեռեալ· * Եւ 19
՚ի պատել զնովաւ աշակերտացն՝ յա-
րեաւ եմուտ ՚ի քաղաքն· և ՚ի վաղիւ-
անդր ել բառնաբաւ հանդերձ ՚ի դեր-
բէ· * Աւետարանեալ ՚ի քաղաքին յայն 20
միկ՝ և աշակերտել զբազումս, դարձան ՚ի
լիւստրայ՝ և յիկոնիոն՝ և յանտիոքիայ,
* հաստատել զանձինս աշակերտելոցն՝ 21
և մխիթարել կալ հաստատուն ՚ի հա-
ւատսն· և թէ բազում նեղութեամբ պարտ է
մեզ մտանել յարքայութիւն այ· * Ձեռ- 22
նադրեցին նց ըստ եկեղեցւոյ՝ երիցունս·
աղօթս արարեալ հանդերձ պահօք,
յանձն արարին զնոսա տն՝ յոր հաւատա
ցեալ էին· * Եւ շրջեալ ընդ պիսիդեայ՝ 23
եկին ՚ի պամփիւլիայ· * և խօսեցեալ 24
՚ի պերգէ զբանն տն, իջին յատալիայ·
* Եւ անտի նաւարկեալ՝ գնացին յան- 25
տիոք, ուստի էին յանձն արարեալ շնոր-
հացն այ՝ ՚ի գործն զոր կատարեցին·
* Եկեալ և ժողովեալ զեկեղեցին՝ պատ 26

մե

մեցին որչափ արար ած ընդ նոսա. և զի
եբաց հեթանոսաց դուռն հաւատոյ։
27 * Շրջէին ժամանակս ոչ սակաւ ընդ
աշակերտսն։

## ԳԼ. ԺԵ.

1 Եւ ոմանք իջեալ 'ի Հրէաստանէ՝ ու- ԴԻ
սուցանէին զեղբարսն. եթէ ոչ թլ-
փատիք ըստ օրինացն մովսիսի՝ ոչ կարէք
2 ապրել։ * Եւ 'ի լինել ոչ սակաւ հա-
կառակութե և խնդրոյ՝ պօղոսի և բառ-
նաբայ ընդ նս, եդին ելանել պօղոսի և
բառնաբայ և ոմանց 'ի նոցանէ՝ առ ա-
ռաքեալսն և երիցունս յեմ վս խնդ-
3 րոյն այնորիկ։ * Նոքա յուղարկեալք
յեկեղեցւոյն, շրջեցան ընդ փիւնիկէ. և
ընդ սամարիայ պատմէին զդարձն հեթա-
նոսաց, և առնէին ուրախութի մեծ ամ
4 եղբարցն։ * Եւ հասեալք յեմ, ընկա-
լեալք յեկեղեցւոյն և յառաքելոցն և
յերիցանց՝ պատմեցին որչափ ինչ արար
5 ընդ նս ած։ * Յարեան ոմանք 'ի հերձ-
ուածոյն փարիսեցւոց հաւատացեալք,
և ասեն՝ թէ պարտ է թլփատել զդոսա,
և պատուիրել պահել զօրէնսն մովսեսի։
6 * Եւ ժողովեցան առաքեալքն և երի-
ցունք տեսանել վս բանիս այսորիկ։
7 * Եւ յետ բազում խնդիր լինելոյ՝ յոտն
եկաց պետրոս՝ և ասէ ցնս. արք եղբարք՝
դուք ինքնին գիտէք, զի յաւուրցն ա-
ռա

առաջնոց ՚ի մէջ ձեր ընտրեաց ած բե-
րանով իմով լսել հեթանոսաց բանին
աւետարանի, և հաւատալ։ * Եւ սըր- 8
տագէտն ած վկայեաց նց, տալով նոցա
զհոգին սբ որպէս և մեզ․ * և ոչ՚ինչ ընտ- 9
րութիւն արար ՚ի մէջ նց և մեր, հաւա-
տովք սրբեալ զսիրտս նց։ * Արդ՝ ընդէ՞ր 10
փորձէք զած, դնել լուծ ՚ի վր պարա-
նոցի աշակերտացն, զոր ոչ հարքն մեր՝
և ոչ մեք կարացաք բառնալ։ * Այլ 11
շնորհօքն տն յսի քսի հաւատամք ապ-
րել, զօրօրինակ և նոքա։ * Լռեաց ամ 12
ժողովուրդն, և լսէին բառնաբայ և պօ-
ղոսի պատմելոյն․ որչափ արար ած նշ-
նանս և արուեստս ՚ի հեթանոսս ՚ի ձեռս
նոցա․

ԳԵ

* Եւ յետ լռելոյն նց՝ պատասխանի ետ 13
յակոբոս և ասէ․ արք եղբարք՝ լուա-
րուք ինձ։ * Շմաւոն պատմեաց՝ որպէս 14
յառաջագոյն ած այց արար առնուլ ժո-
ղովուրդ ՚ի հեթանոսաց անուան իւրոյ։
* Եւ այնմ միաբանին բանք մարգարէիցն․ 15
որպէս և գրեալ է։ * յետ այսորիկ դար 16
ձայց և շինեցից․ զխորան դաւթի զան-
կեալն, և զկործանեալսն նր վերստին
շինեցից՝ և կանգնեցից զնա․ * որպէս զի 17
խնդրեսցեն մնացորդք մարդկան զտր․
և ամ հեթանոսք յորս վր կոչեցեալ է
անուն իմ, ասէ տր․ որ առնէ զայս ամ
* յայտնի է ՚ի յաւիտենից, (ած գործ 18
իւր։)

19 իւր։) * Վասն որոյ և ես իրաւունս հա-
մարիմ, մի՛ նեղել զայնոսիկ՝ որք 'ի հե-
20 թանոսացն դառնան առ ա՟ծ։ * Այլ
տալ թուղթ առ նո՟, խորշել 'ի կերակ-
րոց կռոց՝ և 'ի պոռնկութէ և 'ի մեռե-
21 լոտւոյ՝ և յարենէ։ * Զի մովսէս յազ-
գացն առաջնոց ը՟ք քաղաքաց զքարոզիչսն
իւր ունի 'ի ժողովսն ըստ ա՟մ շաբաթուց
22 ընթերցեալ։ * Յայնժամ հաճոյ թուե-
ցաւ առաքելոցն և երիցանցն ա՟մ եկե-
ղեցեաւն, արս ընտրեալս 'ի նոցանէ առա-
քել յանտիոք ընդ պօղոսի և ընդ բառ-
նաբայ, զյուդա՝ զկոչեցեալն բարսաբա,
23 և զշիղա՝ արս գլխաւորս. * գրեալ առ
եղբարս 'ի ձեռն նոցա զայս ինչ։ Առա-
քեալք և երիցունք և եղբարք, յանտիոք
և 'ի սիւրիա և 'ի կիւլիկիա եղբարցդ՝
24 որ 'ի հեթանոսացդ էք, ողջոյն։ * Իբրև
զի լուաք՝ թէ ոմանք իբրև 'ի մէնջ
խռովեցուցին զձեզ բանիւք, խախտել
զանձինս ձեր. ասեն թլփատել և պա-
հել զօրէնսն՝ որոց ոչ հրամայեցաք։
25 * Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողո-
վելոցս, արս ընտրեալս յղել առ ձեզ ընդ
սիրելիս մեր՝ ընդ բառնաբայ և ը՟ պօղո-
26 սի. * արք՝ որք մատնեցին զանձինս ի-
րեանց վ՟ անուան տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի։
27 * Արդ՝ առաքեցաք զյուդա և զշիղա.
28 և նո՟ 'ի բանից զնոյն պատմել։ * Զի
հաճոյ թուեցաւ հոգւոյն ս՟բյ և մեզ,
մի՛

մի՛ ինչ աւելի բեռն դնել ձեզ • բայց
միայն 'ի կարեւորացս յայսցիկ * 'ի բաց 29
կալ, 'ի զոհելոյ կռոց՝ և յարենէ՝ և 'ի
հեղձուցելոյ՝ և 'ի պոռնկութենէ • յորոց
պահեալ զանձինս բարւոք գործէք: ողջ
լերուք: * Նոքա արձակեալք՝ իջին 30
յանտիոք, և ժողովեալ զժողովուրդն՝
ետուն զթուղթն: * Եւ ընթերցեալ ու- 31
րախ եղեն 'ի վ͞ր մխիթարութեանն: * Յու- 32
դա և շիղա, զի և նոքա մարգարէք էին՝
բանիւք բազմօք մխիթարեցին զեղբարս՝
և հաստատեցին: * Եւ եղեալ անդ ժա- 33
մանակս՝ արձակեցան խաղաղու͞թ յեղ-
բարց առ առաքեալսն: * Եւ հաճոյ 34
թուեցաւ շիղայի մնալ անդէն: * Բայց 35
պօղոս և բառնաբաս շրջէին յանտիոք,
ուսուցանել և աւետարանել՝ և այլովք
բազմօք՝ զբանն տ͞ն:

ԻԶ * Իսկ յետ աւուրց ինչ ասէ պօղոս ցբառ- 36
նաբաս • դարձցուք և շրջեսցուք զեղ-
բարբք՝ ըստ ա͞մ քաղաքաց յորս քարոզե-
ցաք զբանն տ͞ն՝ թէ ո͞պ ունիցին: * Բառ- 37
նաբաս կամէր առնուլ և զյովհաննէս
զկոչեցեալն մարկոս • * բայց պօղոս աղա- 38
չէր՝ թէ զմեկնեալն 'ի նոցանէ 'ի պամ-
փիւլիայ, և զչեկեալն ընդ նոս 'ի գործն,
մի՛ առնուլ ընդ ինքեանս • * Եւ եղև գըժ- 39
տութիւն՝ մինչև մեկնել ն͞ց 'ի միմեանց,
բառնաբայ առնուլ զմարկոս՝ նաւել 'ի
կիպրոս • * Եւ պօղոսի ընտրեալ զշիղա՝ 40


ել,

եւ, յանձն արարեալ շնորհացն այ՝ յեղ-
41 բարց անտի. * Իսկ շրջէր 'ի կողմանս Ա-
սորւոց և Կիւլիկեցւոց, և հաստատէր
զեկեղեցիսն.

## ԳԼ. ԺԶ.

1 Եհաս 'ի Դերբէ և 'ի Լիւստրա. և
ահա աշակերտ մի էր անդ՝ անուն
Տիմոթէոս, որդի կնոջ հրէի հաւատա-
2 ցելոյ՝ և հօր հեթանոսի. * Որ վկայեալ
էր 'ի Լիւստրացւոց և յԻկոնացւոց եղ-
3 բարց. * Զսա կամեցաւ Պօղոս ընդ իւր
տանել. և առեալ թլփատեաց զնա վն
հրէիցն, որ էին 'ի տեղիսն յայնոսիկ.
քանզի գիտէին ամենեքին զհայր նր՝ թէ
4 հեթանոս էր. * Իբրև անցանէին ընդ
քաղաքսն՝ աւանդէին նց պահել զհրա-
մանսն պատուիրեալս յառաքելոցն և
5 յերիցանցն՝ որ յԵղմ. * Իսկ եկեղեցիքն
հաստատէին 'ի հաւատս, և յաւելուին
'ի թիւն հանապազօր.
6 * Իսկ շրջեցան ընդ Փռիւգիա և ընդ կող- ԴԷ
մանս Գաղատացւոց, արգելեալք 'ի Հոգ-
7 ւոյն սբյ խօսել զբանն յԱսիա. * Իսկ
եկեալ առ Միւսեաւ՝ թևակոխէին եր-
թալ 'ի Բիւթանիա, և ոչ համարձա-
8 կեաց նց Հոգին յսի. * Իսկ անցեալ ըդ
9 Միւսիա՝ իջին 'ի Տրովադա. * Իսկ տե-
սիլ երևեցաւ 'ի գիշերին Պօղոսի. այր
մի Մակեդոնացի կայր, աղաչէր զնա՝
և

եւ ասէր. անցեալ 'ի Մակեդոնիա՝ օգ-
նեացես մեզ։ Եւ իբրեւ զտեսիլն ետես, 10
վաղվաղակի խնդրեցաք ելանել 'ի Մա-
կեդոնիա. տեղեկացեալք՝ թէ հրա-
ւիրեաց զմեզ Տր աւետարանել նոցա։
* Եւ ելեալ 'ի Տրովադայ՝ դէպ ուղիղ 11
գնացաք 'ի Սամոթրակէ, եւ 'ի վաղիւ-
անդր 'ի Նոր քաղաք. * եւ անտի 'ի Փի- 12
լիպպուս, որ է առաջին վիճակի՝ Մակե-
դոնացւոց քաղաք՝ կողոնիա։ եւ անդ
'ի քաղաքին դադարեալ մեր աւուրս ինչ,
* յաւուրն շաբաթու ելաք արտաքոյ քա- 13
ղաքին առ գետափն՝ ուր համարէր աղօ-
թս մատուցանել. եւ նստեալ խօսէաք
ընդ ժողովեալ կանայսն։ * Եւ կին մի 14
անուն Լիդիա ծիրանավաճառ՝ 'ի Թիւա-
տիր քաղաքէ՝ երկիւղած յԱյ՝ լսէր.
զորոյ Տր խել եբաց զմիտս անսալ խօ-
սիցն Պօղոսի։ * Եւ իբրեւ մկրտեցաւ 15
ինքն եւ տուն իւր, աղաչէր եւ ասէր. ե-
թէ համարիցիք զիս հաւատացեալ Տն,
մտեալ 'ի տուն իմ ագերուք. եւ բռ-
նադատեաց տարաւ զմեզ։ * Եւ եղեւ 16
մինչ երթայաք մեք յաղօթս, պատահ-
եաց մեզ աղախին ոմն՝ զոր ունէր այս
հարցուկ. որ շահս բզմս տայր տերանց
իւրոց՝ մոլեկանն։ * Նա զհետ եղեալ Պօ 17
ղոսի եւ մեր՝ աղաղակէր եւ ասէր. արքս
այս՝ ծառայք Այ բարձրելոյ են, որ պատ
մեն ձեզ զճանապարհս փրկութե։ * Եւ 18

զայս առնէր ՚ի բազում աւուրս ։ Զայրա-
ցեալ պօղոս՝ դարձաւ և ասէ ցայսն ։
պատուիրեմ քեզ յանուն յ̅ի ք̅ի, ել
19 ՚ի դմանէ ։ և ել ՚ի նմին ժամու ։ * Իբ-
րև տեսին տեարքն ն̅ր՝ եթէ հատաւ յոյս
շահի ն̅ց, առեալ զպօղոս և զշիղա՝ ձգե-
20 ցին ՚ի հրապարակ առ իշխանսն ։ * Եւ
ածեալ զն̅ս առ զօրագլուխսն՝ ասէին ։
արքս այս խռովեցուցանեն զքաղաքս
21 մեր ։ Հրեայք են , * և պատմեն
մեզ օրէնս՝ զոր ոչ է՛ արժան մեզ ը̅ունել,
և ո՛չ առնել ։ զի հռովմայեցիք եմք ։
22 * Եւ կուտեցաւ ամբոխն ՚ի վ̅ր ն̅ց ։ և
զօրագլուխքն պատառեցին զհանդերձս
իւրեանց ։ հրամայեցին գան հարկանել ։
23 * և բազում վէրս եդեալ ՚ի վ̅ր ն̅ց՝ արկին
՚ի բանտ , պատուիրեցին բանտապետին
24 զգուշու̅թ պահել զն̅ս ։ * Որոյ առեալ
զայսպիսի պատուէր՝ արկ զն̅ս ՚ի ներքին
բանտն ։ և զոտս ն̅ց պնդեաց ՚ի կոճեղս ։
25 * Եւ ՚ի մէջ գիշերոյն պօղոս և շիղա
կային յաղօթս՝ և օրհնէին զա̅ծ ։ և ուն-
26 կըն դնէին ն̅ց կալանաւորքն ։ * Եւ ե-
ղև յանկարծակի շարժումն մե̅ծ՝ մինչև
՚ի շարժել հիմանց բանտին ։ և բացան
անդրէն դրունքն ա̅մ, և ամ̅ցն կապանք
27 լուծան ։ * Իբրև զարթեաւ բանտապե-
տըն՝ և ետես բացեալ զդուրս բանտին,
ձգեաց զսուսեր՝ և կամէր երթալ զիւ-
րովին ։ կարծէր փախուցեալ զկապեալսն ։


* Եւ

* Եւ գոչեաց 'ի ձայն մեծ պօղոս՝ եւ ա- 28
սէ. մի ինչ գործեր ընդ անձն քո չար,
քանզի ամենեքին աստ եմք: * Խնդրեաց 29
լոյս՝ եւ դիմեաց 'ի ներքս. եւ զահի հա-
րեալ անկաւ առաջի պօղոսի եւ շիղայի.
* Եւ ածեալ զնս արտաքս՝ ասէ. տեարք՝ 30
զինչ պարտ է ինձ առնել՝ զի ապրեցայց:
* Եւ նոքա ասեն. հաւատա 'ի տր յս 31
քս, եւ ապրեսցիս դու՝ եւ ամ տուն քո:
* Եւ խօսեցան նմա զբանն տն՝ եւ ամե- 32
նեցուն որ էին 'ի տան նր. * Եւ առեալ 33
զնս 'ի նմին ժամու գիշերուն՝ լուաց 'ի
վիրաց անտի. եւ մկրտեցաւ ինքն եւ իւր-
քն ամենեքեան անդէն վաղվաղակի.
* Եւ ածեալ զնս 'ի տուն իւր, եդ առա- 34
ջի նց սեղան. եւ ուրախ եղեւ ամ տամբն
հաւատացեալ յած: * Եւ իբրեւ այգ 35
եղեւ՝ առաքեցին զօրագլուխքն զնուի-
րակսն, եւ ասեն. արձակեա զայրսդ զայ-
դոսիկ: * Եւ պատմեաց բանտապետն 36
զբանսն՝ պօղոսի, եթէ առաքեցին զօ-
րագլուխքն զի արձակիցիք. արդ ելէք՝
եւ երթայք խաղաղութբ. * Իսկ պօղոս 37
ասէ ցնս. գան հարեալ զմեզ հրապա-
րակաւ՝ արս անմեղս հռովմայեցիս ար-
կին 'ի բանտ, եւ արդ լռելեայն հանեն
զմեզ. ոչ այդպէս, այլ եկեսցեն ին-
քեանք իսկ հանցեն զմեզ: * Եւ պատ- 38
մեցին զօրագլխացն նուիրակքն զբանսն.
զահի հարան իբրեւ լուան՝ թէ հռովմայե-
ցիք

39 ցիք են. և եկեալ աղաչեցին զնս: * Եւ
իբրև հանին, աղաչէին գնալ 'ի քաղա-
40 քէն: * Եւ ելեալ 'ի բանտէն՝ մտին առ
Լիւդիա. և տեսեալ զեղբարս՝ մխիթա-
րեցին զնս, և գնացին:

## ԳԼ. ԺԷ.

1 Եւ շրջեալ ընդ ամփիպօղիս և ընդ ապո- ԵԿ
ղոնիա, եկին 'ի Թեսաղոնիկէ, ուր
2 էր ժողովուրդ հրէից: * Եւ ըստ սովո-
րութեն պօղոս եմուտ առ նս, և 'ի շա-
բաթս երիս խօսեցաւ ընդ նոսա 'ի գրոց:
3 * բանայր՝ և դնէր առաջի, եթէ պարտ
էր քսի չարչարիլ և յառնել 'ի մեռելոց.
և թէ նա է քսն յս՝ զոր ես պատմեմ
4 ձեզ: * Եւ ոմանք 'ի նոցանէ հաւանե-
ցան, և վիճակեցան պօղոսի և շիղայի.
բայց պաշտօնէիցն հեթանոսաց էր բազ-
մութիւն յոյժ, և 'ի կանանց գլխաւորաց
5 ոչ սակաւք: * Եւ նախանձեցան հրէայքն,
և առեալ արս ոմանս գռեհիկս անօրէնս՝
ամբոխ արարեալ խռովեցին զքաղաքն.
և կուտեալ առ ապարանսն յասոնի,
խնդրեցին զնոսա ածել 'ի հրապարակ.
6 * Եւ իբրև ոչ գտին զնս, քարշէին զյա-
սոն և զոմանս եղբարս առ քաղաքա-
պետսն. բողոք բարձեալ՝ թէ որք զաշ-
խարհս խռովեցին՝ սոքա և այսր հասին.
7 * զորս ընկալեալ է յասոնի. և սոքա
ամենքեան հակառակ հրամանացն կայսեր.

գործեն. թագաւոր զոմն ասեն զյս։
* Եւ խռովեցուցին զժողովուրդսն եւ 8
զքաղաքապետսն, որ լսէին զայս։ * Եւ 9
առեալ երաշխաւորութիւն առ 'ի յասո-
նայ եւ յայլոցն՝ արձակեցին զնս։ * Իսկ 10
եղբարքն վաղվաղակի գիշերայն յուղար
կեցին զպօղոս եւ զշիղայ 'ի բերիա. որք
իբրեւ հասին անդր՝ 'ի ժողովուրդն հրէից
գնացին։ * Սոքա էին առաւել ազնուականա 11
գոյնք՝ քան որ 'ի թեսաղոնիկէն էին. որք
ընկալան զբանն ամ յօժարութբ. հա-
նապազ քննէին զգիրս, եթէ իցէ այս
այսպէս։ * Եւ բազումք 'ի նոցանէ հաւա 12
տացին. եւ 'ի յունաց կանանց զգաստից՝
եւ յարանց՝ ոչ սակաւք։ * Իսկ իբրեւ 13
գիտացին՝ որ 'ի թեսաղոնիկէ հրէայքն
էին, եթէ եւ 'ի բերիայ պատմեցաւ 'ի
պօղոսէ բանն այ, եկին եւ անդր՝ շար-
ժել եւ խռովեցուցանել զժողովուրդսն։
* Յայնժամ վաղվաղակի զպօղոս առա 14
քեցին եղբարքն գնալ մինչեւ 'ի ծովեզր.
եւ մնացին շիղա եւ տիմոթէոս անդէն։
ԵԲ * Եւ որք տանէին զպօղոս, ածին զնա 15
մինչեւ յաթէնս. եւ առեալ պատուէր 'ի
նմանէ առ շիղա եւ տիմոթէոս, զի վաղ
վաղակի եկեսցեն առ նա. եւ գնացին։
* Եւ յաթէնս 'ի մնալ նց պօղոսի, զայ 16
րանայր հոգի նր 'ի նմա. զի տեսանէր 'ի
կռապաշտութե զքաղաքն։ * Եւ խօսէր 17
'ի ժողովրդեանն ը հրէայս եւ ը պաշտօ

Նեայսն՝ և 'ի հրապարակին զա՟մ օր՝ ը
18 րոց և պատահէին։ * Ամանք յեպիկուր
եանցն, և 'ի ստոյիկեանց փիլիսոփայից
հակառակէին ը՟ նմա. և ոմանք ասէին,
զի՞նչ կամիցի սերմանաքաղս այս խօսել.
իսկ այլք, թէ օտարոտի ի՟մն դից թուի
պատմիչ լինելոյ. քանզի զյ՟ս և զյարու
19 թիւն աւետարանէր։ * Առ առեալ զնա
ածին յարիսպագոսն, և ասէին. կարաս
ցուք իմանալ՝ թէ զի՞նչ է նոր վարդա
20 պետութիդ՝ որ 'ի քէն պատմի։ * օտա
րացուցիչս ի՟մն բերես 'ի լսելիս մեր. կա
միմք գիտել՝ թէ զի՞նչ կամիցի այս լի
21 նել։ * Ոի աթենացիք ամենեքին՝ և
եկքն օտարք ոչ յայլ ինչ պարապէին,
բայց ասել ինչ կամ լսել նորագոյնս։
22 * Եկաց պօղոս 'ի մէջ արիսպագին՝ և
ասէ. արք աթենացիք, ըստ ա՟մի իրիք
23 պաշտօնասէրս տեսանեմ զձեզ։ * Քան
զի շրջեալ և տեսեալ զպաշտամունս ձեր,
գտի բագին մի՝ յորում գրեալ էր, ան
ծանօթի ա՟յ. զոր դուք յանծանօթս
24 պաշտէք, ես զնոյն պատմեմ ձեզ։ * Ա՟ծ
որ արար զաշխարհս և զա՟մ որ 'ի նմա,
նա երկնից և երկրի է տ՟ր. ոչ 'ի ձեռա
25 գործ տաճարս բնակէ, * և ոչ 'ի ձե
ռաց մարդկան պաշտի իբրև կարօտ ի
միք. նա տայ ա՟մի կեանս և շունչ՝ և զա
26 մենայն ինչ։ * Արար 'ի միոջէ արենէ
զա՟մ ազգս մարդկան՝ բնակել 'ի վերայ

ամ երեսաց երկրի · հաստատեաց կար-
գեալ ժամանակս և սահմանադրութիս
բնակութե նց՝ խնդրել զած · *զի թերևս 27
զննիցեն զնա՝ և գտանիցեն · նա և ոչ
հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ ՚ի
մէնջ : * Ի նմին կեամք և շարժիմք 28
և եմք , ոպ և ոմանք ՚ի ձերոց ճարտարաց
ասացին , թէ նր և ազգ իսկ եմք : * Արդ 29
արդ՝ որովհետև ազգ եմք այ , ոչ պարտ
եմք համարել ոսկւոյ՝ կամ արծաթոյ՝
կամ քարի , որ ՚ի ճարտարութե և ՚ի մտաց
մարդոյ քանդակեալ իցէ՝ զածականն
լինել նմանօղ : * Բայց զժամանակս ան 30
գիտութեն անտես արարեալ այ , արդ
զայս պատուիրէ մարդկան՝ ամ ումեք
ապաշխարել : * Քանզի հաստատեաց 31
օր , յորում պարտ է դատել զաշխարհս
արդարութբ , ՚ի ձեռն առն որով սահ
մանեաց տալ հաւատս ամենեցուն՝ յա
րուցեալ զնա ՚ի մեռելոց : * Իբրև լուան 32
զյարութի մեռելոց , ոմանք ծաղր առ
նէին · կեսքն ասէին լուիցուք ՚ի քէն վս
այդորիկ միւսանգամ : * Եւ այսպէս Պօ 33
ղոս ել գնաց ՚ի միջոյ նց : * Եւ ոմանք 34
արք անկեալ ՚ի նա , հաւատացին · ընդ
որս էր և Դիոնեսիոս արիսպագացի , և
կին մի անուն Դամարիս՝ և այլք ընդ
նոսա :

## ԳԼ. ԺԸ.

1 Յետ այսորիկ մեկնեալ պօղոսի յաթե ԷԳ
2 նացւոց անտի՝ եկն ՚ի կորնթոս. * Եւ
եգիտ հրէայ զոմն անուն ակիւղաս՝ յազ
գէ պոնտացի, այն ինչ եկեալ յիտա
լիայ. եւ զպրիսկիղա կին նր, վասն հրա
մանին կղօդեայ՝ որոշել զամ հրէայս ՚ի
3 հռովմայ. եւ յարեցաւ ՚ի նա. * Եւ վս
զի համարուեստ էր, եղեւ առ նոսա՝ եւ
գործէր. քանզի էին խորանակարք ար
4 ուեստիւ. * Եւ խօսէր ՚ի ժողովրդեանն
յմ շաբաթուց, եւ հաւանեցուցանէր
5 զհրէայս եւ զհեթանոսս. * Իբրեւ իջին
՚ի մակեդոնիայ՝ շիղա եւ տիմոթէոս,
տագնապէր հոգւովն պօղոս դնել վկայութ
6 հրէիցն՝ թէ յս է քս. * Եւ ընդդէմ
դառնալ նոցա՝ եւ ՚ի հայհոյել, թօթա
փեաց զձորձսն՝ եւ ասէ ցնս. արիւն ձեր ՚ի
գլուխս ձեր, քաւեալ եմ ես. յայսմ
7 հետէ ՚ի հեթանոսս երթամ. * Եւ գը
նացեալ անտի եմուտ ՚ի տուն ուրուք,
որում անուն էր տիտոս յուստոս՝ պաշ
տօնեայ այ. որոյ ապարանքն էին մերձ
8 ՚ի ժողովրդեանն. * Կրիսպոս ժողովրդա
պետ հաւատաց ՚ի տր ամ տամբ իւրով.
եւ բազմաց ՚ի կորնթացւոց լուեալ՝ հա
9 ւատացին եւ մկրտեցան. * Եւ ասէ տր
՚ի գիշերին տեսլեամբ ցպօղոս. մի՛ երկն
10 չիր՝ այլ խօսեաց՝ եւ մի՛ լռեր. * քանզի
ես

ես ընդ քեզ եմ, և ոչոք ընդդէմ դարձցի
քո՝ ՚ի չարչարել զքեզ. զի ժողովուրդ
է իմ բազում ՚ի քաղաքիս յայսմիկ: * Եւ 11
նստաւ անդ տարի մի և ամիսս վեց՝ ու-
սուցանել նոցա զբանն այ:
* Առ գաղլիոնաւ փոխանակաւ բդեշ 12
խին աքայեցւոց, յարեան միաբան հրէ-
այքն ՚ի վերայ պօղոսի, և ածին զնա յա-
տեան. * և ասէին, եթէ արտաքոյ օրի- 13
նաց պատրէ սա զմարդիկ պաշտել զած:
* Եւ իբրև մերձ էր պօղոս բանալ զբե- 14
րան իւր, ասէ գաղլիոնն ցհրէայսն. ե-
թէ էր ինչ անիրաւութի կամ խարդա-
խութի չարեաց՝ ով հրէայք, ՚ի դէպ էր
ինձ անսալ ձեզ: * Ապա եթէ խնդիրք 15
ինչ են վասն բանի և անուանց և օրինաց
ձերոց, տեսջիք ձեզէն. քանզի դատաւոր
այդպիսի իրաց չկամիմ լինել: * Եւ 16
մերժեաց զնոսա յատենէ անտի: * Եւ ա- 17
ռեալ ամենեցուն յունացն զսոսթենէս
ժողովրդապետն՝ հարկանէին առաջի ա-
տենին. և ոչինչ զայնմանէ գաղլիոնի
փոյթ լինէր: * Բայց պօղոսի տակաւին 18
մնացել աւուրս բազումս, յեղբարց հրա-
ժարեալ՝ նաւէր յասորիս. և ընդ նմ պրիս
կիղա և ակիւղա, փոքրել զգլուխ ՚ի կեն-
քրայ, քանզի ուխտաւորի էր: * Եւ հա- 19
սեալ յեփեսոս՝ զնս եթող անդ, և ինքն
մտեալ ՚ի ժողովուրդն խօսէր ընդ հրէայսն:
* Եւ աղաչէին զնա՝ բազում ժամանակս 20

21 լինել անդ · և ոչ առ յանձն · * այլ
հրաժարեաց ՚ի նոցանէ, և ասէ · դար
ձեալ շրջեցայց առ ձեզ Աստուծոյ կամօք · ամ
22 բարձաւ յեփեսեայ, * և իջեալ ՚ի կե
սարիա՝ ել և ետ ողջոյն եկեղեցւոյն։
23 Իջ յանտիոք, * և եղեալ անդ ժամա
նակ ինչ, ել շրջել կարգաւ ընդ գա
ղատացւոց աշխարհն և ընդ փռիւգիայ,
հաստատել զամենայն աշակերտեալսն։
24 * Հրեայ ոմն ապողոս անուն՝ աղեքսանդ
րացի յազգէ, այր ճարտարաբան, եկն
եհաս յեփեսոս · զօրաւոր էր գրովք ·
25 * Սա էր տեղեկացեալ ճանապարհին
Տեառն, և եռայր հոգւով · խօսէր՝ և ուսու
ցանէր ճշմարտութեամբ վասն Յիսուսի · գիտէր միայն
26 զմկրտութիւնն յովհաննու։ * Սա սկսաւ
համարձակել ՚ի ժողովրդեանն ։ և լուե
ալ ՚ի նմանէ ակիւղայ և պրիսկիղայ,
առին զնա առ ինքեանս, և ճշմարտա
գոյնս պատմեցին նմա զճանապարհն Աստուծոյ։
27 * Իբրև կամեցաւ նա գնալ յաքայիա,
յօժարեալ եղբարքն՝ գրեցին առ աշա
կերտսն ընդունել զնա ։ որ իբրև եհաս
անդր՝ բազում նպաստ լինէր հաւատա
28 ցելոցն ՚ի ձեռն շնորհացն ։ * Քանզի պըն
դագոյն զհրէայսն յանդիմանէր հրա
պարակաւ · ցուցանել գրովք՝ եթէ Քրիստոս
է Յիսուս։

## Գլ. ԺԹ.

ԵԵ Եւ եղեւ մինչ դեռ ապողոսն 'ի կորըն 1
թոս էր, պօղոսի շրջեալ զվերին
կողմամբքն՝ և իջեալ յեփեսոս, և գը
տեալ զոմանս զաշակերտս, * ասէ ցն̃ա. 2
եթէ հոգի սուրբ ընկալարո՞ւք 'ի հաւա
տալն: Նոքա ասեն ցնա. այլ և ոչ թէ
հոգի ս̃բ գո՞ւցէ՝ լուեալ է մեր: * Եւ 3
ասէ, իսկ յի՞նչ մկրտեցարուք: Նոքա ա
սեն. 'ի յովհաննու մկրտութիւն: * Եւ 4
ասէ պօղոս. յովհաննէս մկրտեց մկըր
տութի ապաշխարութեան ա̃մ ժողովրդեանն.
և ասէր, զի որ գալոցն է յետ նր̃՝ 'ի նա
հաւատասցեն. այսինքն է՝ 'ի յս̃ քս̃:
* Եւ իբրև լուան, մկրտեցան յանուն
տն̃ յս̃ի. * և 'ի դնել 'ի վր̃ նց̃ պօղոսի 6
զձեռն, եկն հոգին ս̃բ 'ի վր̃ նց̃. խօսէին
լեզուս՝ և մարգարէանային: * Եւ էին 7
ամենեքեան արք իբրև երկոտասան.
* Եւ մտեալ 'ի ժողովուրդն՝ համարձա 8
կէր ամիս երիս. խօսէր և հաւանեցու
ցանէր վս̃ արքայութեն̃ ա̃յ: * Իբրև ո 9
մանք խստանային՝ և ը̃դ դէմ դառնային
բամբասել զճանապարհն առաջի բազ
մութեն̃, մեկնեալ 'ի նոցանէ որոշեաց
զաշակերտսն. հանապազօր խօսէր 'ի դպ
րանին տիւրաննեայ ուրումն: * Եւ այս 10
եղեւ զերկեամ մի, մինչև ա̃մ բնակչացն
ասիայու լսել զբանն տն̃՝ հրէից և հե

11 թանոսաց։ * Իսկ զօրութ̅իս ոչ սակաւս
12 առնէր ա̅ծ ՚ի ձեռն պօղոսի · * մինչ զի
և ՚ի հիւանդս տանել ՚ի քրտանէ նորա
թաշկինակս կամ վարշամակս , և մեր_
ժել ՚ի նոցանէ ախտիցն , և այսոց չա_
13 րաց ելանել · * Յանդգնեցան ոմանք և
՚ի շրջող հրէիցն՝ որ երդմնեցուցիչքն
էին , անուանել ՚ի վ̅ր այնոցիկ որ ու_
նէին այսս չարս , զանուն տ̅ն յ̅սի , և աս_
էին · երդմնեցուցանեմ զձեզ ՚ի յ̅ս՝ զոր
14 պօղոսն քարոզէ ։ * Էին ուրումն սկեւայ
հրէի քահանայապետի եօթն որդիք , որ
15 զայս առնէին ։ * Պատասխանի ետ այսն
չար՝ և ասէ ցն̅ս · զյ̅ս գիտեմ և զպօղոս
16 ճանաչեմ , բայց դուք ո՞վ էք ։ * Իսկ վա_
զեաց այրն յորում էր այսն չար , ըմբըռ_
նեալ զերկոսեան յաղթահարեաց զն̅ս ,
մինչև մերկս և վիրաւորս փախչել ՚ի տա_
17 նէ անտի · * Իսկ այս յայտնի եղև ա̅մ
հրէից և հեթանոսաց՝ որ բնակեալ էին
յեփեսոս · և անկաւ երկիւղ յամենե_
սեան ՚ի ն̅ս · և մեծանայր անուն տ̅ն յ̅սի ։
18 * Իսկ այլ բազումք ՚ի հաւատացելոցն
գային և խոստովան լինէին՝ և պատմէին
19 զգործս իւրեանց ։ * Իսկ բազումք ՚ի կա
խարդասարացն բերէին զգիրսն , այրէին
առաջի ամենեցուն · և համարեցան ըզ_
գինս ն̅ց՝ և գտանէին արծաթոյ բիւրս
20 հինգ · * Իսկ այսպէս բանն տ̅ն աճէր՝ և
զօրանայր ։

*Եւ իբրեւ կատարեցաւ այս, եդ պօղոս 21
'ի միտ շրջել ընդ մակեդոնիա եւ ընդ ա-
քայիա՝ եւ գալ յե̃մ. ասէ, եթէ յետ
երթալոյն իմ անդր, պարտ է ինձ եւ զհռ-
ովմ տեսանել: *Առաքեաց 'ի մակե- 22
դոնիա երկուս 'ի պաշտօնէիցն իւրոց ըզ
տիմոթէոս եւ զերաստոս, եւ ինքն մնաց
ժամանակ ինչ յասիայ: *Եւ եղեւ 'ի 23
ժամանակին յայնմիկ խռովութի̃ ոչ սա-
կաւ վա̃ ճանապարհին: *Իսկ դեմետ- 24
րիոս ոմն անուն՝ արծաթագործ, գոր-
ծէր մեհեանս արծաթիս արտեմի դից.
եւ տայր ճարտարացն լինել ոչ սակաւ
շահ. *որ ժողովեաց իսկ զձեռագէտս 25
արուեստին, եւ ասէ. արք՝ դուք ձեզէն
իսկ գիտէք, զի յայսմ գործոյ է շահ
մեր: *Եւ տեսանէք եւ լսէք՝ եթէ՝ ոչ 26
միայն զեփեսացւոց, այլ գրեթէ զա̃մ
իսկ ասիացւոց՝ պօղոսս այս հաւանեցու-
ցեալ շրջեաց բազում ժողովս՝ ասել թէ
ոչ են աստուածք՝ ձեռագործք: *Եւ 27
ոչ միայն այս ճգնէ զմեր կողմն գալ 'ի
յանդիմանութի̃, այլ եւ զմեծին ա̃յ ար-
տեմեայ զմեհեանն յոչինչ համարել.
նաեւ քակելոց եւս իցէ մեծութի̃ նր̃, զոր
ա̃մ ասիա՝ եւ տիեզերք պաշտեն. *Եւ 28
զայս իբրեւ լուան, լի եղեն բարկութ̃.
աղաղակէին եւ ասէին, մեծ է արտեմիս
եփեսացւոց: *Եւ լցաւ քաղաքն խռո- 29
վութ̃. դիմեցին առ հասարակ 'ի թէատրոնն,

յափշտակէին զգայիոս և զարիստար_
քոս մակեդոնացի՝ ուղեկիցսն պօղոսի։
30 * Բայց պօղոս իբրև կամեցաւ մտանել
յամբոխն, ոչ թողին զնա աշակերտքն։
31 * Ոմանք և յասիապետացն՝ որ էին նորա
բարեկամք, յղէին առ նա՝ և աղաչէին,
32 մի՛ տալ զանձն ՚ի թէատրոնն։ * Այլք
այլ ինչ աղաղակէին. զի էր ժողովն նոցա
խռովեալ. և բազումք ՚ի նոցանէ ոչ գիտէին
33 թէ վասն էր ժողովեալ իցեն։ * Իսկ յամ_
բոխէն բազմութենէ յառաջ կալան զաղեք_
սանդրոս. և իբրև ածին զնա հրէայքն
յառաջ, աղեքսանդրոս շարժեաց զձեռն՝
և կամէր պատասխանի առնել ամբոխին։
34 * Իբրև գիտացին՝ եթէ այրն հրէայ է,
միաբարբառ եղեալ յամենեցունց՝ իբ_
րև ժամս երկուս աղաղակէր, եթէ մեծ
35 է արտեմիս եփեսացւոց։ * Լռեցոյց
դպրապետն զամբոխն՝ և ասէ. արք ե_
փեսացիք՝ իսկ ո՞ է ՚ի մարդկանէ՝ որ ոչ
գիտէ զեփեսացւոց քաղաքս մեհենա_
զարդ՝ մեծին արտեմեայ դիցն, և դիո_
36 պետայ. * և զի այդ այդպէս է անշուշտ՝
ձեզ պարտ է հանդարտել, և մի՛ ինչ
37 յանդգնութեամբ գործել։ * Ածիք զարս
զայդոսիկ այսր, ոչ մեհենակապուտս՝
38 և ոչ հայհոյիչս աստուծոյ մերոյ։ * Ապա եթէ
դեմետրիոս և որք ընդ նմա ճարտարքն՝ ու_
նիցին ինչ ընդ ումեք բանս, յատեան եր_
թիցեն, և դատաւորք գոն, և ամբաստա_
տան

տան լիցին զմիմեանց ։ * Ապա եթէ վ͞ն 39
այլ իրիք խնդիր իցէ՝ յօրինաւոր ժո-
ղովն վճարեսցին ։ * Զի և մեզ վիշտ վ- 40
տանգի է ընդ կռուոյս այսր աւուր՝ ա-
ռանց իրիք յանցանաց լինելոյ ։ զորմէ
ոչ կարասցուք պատասխանի տալ վասն
ժողովոյս այսորիկ ։ Եւ զայս ասացեալ՝
արձակեաց զժողովն ։

## ԳԼ. Ի.

ԵԵ Եւ յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց 1
պօղոս զաշակերտսն և մխիթարեաց ։
ողջոյն ետ , և ել գնաց 'ի մակեդոնիա ։
* Եւ շրջեալ ընդ կողմանսն ընդ այնոսիկ՝ 2
և մխիթարեալ զն͞ս բանիւք բազմօք , եկն
յելլադայ ։ * Իբրև արար անդ ամիսս ե- 3
րիս , եղև նմա դաւ 'ի հրէիցն , մինչ դեռ
կամէր ելանել յասորիս ։ խորհուրդ կա-
լաւ դառնալ ընդ մակեդոնիա ։ * Եւ 4
երթայր ընդ նմա մինչև յասիայ՝ սոփատ
րոս պիւռա բերիացի , և 'ի թեսաղոնիկե
ցւոց՝ արիստարքոս և սեկունդոս՝ և գայ
իոս դերբեացի , և տիմոթէոս , և ասիա-
ցիք՝ տիւքիկոս և տրոփիմոս ։ * Սոքա յա 5
ռաջ երթեալ մնային մեզ 'ի տրովադայ ։
* Եւ մեք նաւեցաք յետ աւուրցն բա- 6
ղարջակերաց 'ի փիլիպպեայ՝ և եկաք առ
նոսա 'ի տրովադա՝ մինչև յաւուրս հինգ ։
անդ դադարեցաք աւուրս եօթն ։ * Եւ 7
յաւուրն շաբաթուց մինչ դեռ ժողովեալ

 էաք

եաք բեկանել զհացն, պօղոս խօսէր ընդ-
նոսա՝ զի գնալոց էր 'ի վաղիւն անդր · և եր-
կայնեաց զբանն մինչև 'ի մէջ գիշերոյն։
8 * և էին լապտերք բազումք 'ի վերնա-
9 տանն, ուր էաքն ժողովեալ · * Եւ նըս-
տէր ոմն երիտասարդ՝ անուն Եւտիքոս՝
'ի վերայ պատուհանին, նիրհէր 'ի քուն
թանձրութե՝ 'ի խօսելն պօղոսի յաճախ,
ընկղմեալ 'ի քնոյ անտի՝ անկաւ յերրորդ-
դ յարկոնէն 'ի վայր, և բարձաւ մեռեալ ·
10 * Եւ իջեալ պօղոսի՝ անկանէր զնովաւ ·
առնոյր զնա ը գիրկս՝ և ասէր · մի՛ խռո-
11 վիք, քանզի հոգի սորա 'ի սմին է։ * Եւ
ել եբեկ զհացն՝ և ճաշակեաց · և բազում
ևս խօսեցաւ մինչև յառաւօտ, և ապա
12 ել գնաց ։ * Եւ ածին զպատանին կեն-
13 դանի, և մխիթարեցան ոչ սակաւ ։ * Եւ
մեք մտեալ 'ի նաւն՝ ամբարձաք յա-
սոն · անտի ակն ունէաք միւսանգամ
առնուլ զպօղոս · զի այնպէս պատուի-
րեալ էր՝ մինչ ինքն զցամաքաւն երթա-
14 լոց էր։ * Եւ իբրև դիպեցաւ մեզ 'ի յա-
սոն, առեալ զնա եկաք 'ի միտիլինէ ·
15 * և անտի նաւեալ՝ 'ի վաղիւն անդր հա-
սաք հանդէպ քիայ · և 'ի միւս օրն հա-
սաք 'ի սամոս · և 'ի վաղիւն անդր եկաք
16 'ի միլիտոն ։ * Զի 'ի միտի եդեալ էր պօ-
ղոսի նաւել առ եփեսեաւ, որպ զի մի՛ լի-
ցի նմա ժամանակ ինչ յամել յասիա ·
քանզի փութայր եթէ հնար ինչ իցէ նմ՝

զօրն պէնտէկոստէից երթալ յէմ՟։
ԶԿ *Եւ ՚ի Միլիտեայ յղեալ յԵփեսոս՝ կո- 17
չեաց զերիցունս եկեղեցւոյն։ *Եւ իբ- 18
րեւ եկին առ նա, ասէ ցն՟ս. դուք ձեզէն
գիտէք յօրէ յառաջնմէ յորմէ եկի յա-
սիայ. որպէս ընդ ձեզ զա՟մ ժամանակն
եղէ. *Ծառայել տ՟ն ա՟մ խոնարհութ՟բ 19
եւ բազում արտասուօք եւ փորձութ՟բք՝ որ
դիպեցան ինձ ՚ի նենգութենէ Հրէից.
*Որպէս ոչինչ զանգիտեցի յօգտակա- 20
րացն չպատմել ձեզ, եւ ուսուցանել զձեզ
հրապարակաւ եւ ՚ի տունս. *Տալ վկայ- 21
ութի Հրէից եւ հեթանոսաց զապաշխա-
րութիւնն՝ որ առ ա՟ծ, եւ զհաւատոյն որ
՚ի տ՟ր մեր յ՟ս ք՟ս։ *Եւ արդ՝ ահաւասիկ 22
ես կապեալ հոգւով երթամ յէմ՟. եւ
եւ որ ինչ անդ ընդ իս անցանելոց իցէ՝ չգի-
տեմ։ *Բայց զի հոգին ս՟բ ը՟ս քաղաքաց 23
վկայէ ինձ՝ եւ ասէ, եթէ կապանք եւ նե-
ղութիւնք մնան քեզ. *Այլ ոչ ինչ իւիք հա- 24
մարիմ զանձն իմ պատուական՝ ո՟պ կա-
տարել զընթացս իմ ուրախութ՟բ, եւ զպաշ-
տօնն զոր առի ՚ի տ՟նէ յ՟սէ՝ վկայել զա-
ւետարանն շնորհացն ա՟յ։ *Եւ արդ՝ 25
ահաւասիկ գիտեմ ես, թէ ոչ եւս տե-
սանելոց էք զերեսս իմ դուք ամենե-
քեան, յորս շրջեցայ քարոզել զարքայու-
թիւն ա՟յ. *Վասն որոյ վկայութի դնեմ 26
ձեզ յաւուր յայսմիկ՝ զի սուրբ եմ յա-
րենէ ամենեցուն. *Քանզի ոչ խորշեցայ 27

՚ի

'ի պատմելոյ ձեզ զամենայն կամս այ՟։
28 * Զգոյշ կացէք անձանց և ամ՟ հօտին,
յորում եդ զձեզ Հոգին սր՟ տեսուչս՝ հո-
վուել զժողովուրդ տն՟, զոր ապրեցոյց
29 արեամբ իւրով։ * Քանզի գիտեմ ես՝
եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք
յափշտակօղք 'ի ձեզ, որ ոչ խնայես-
30 ցեն հօտին։ * Եւ 'ի ձէնջ յարիցեն արք
որք խօսիցեն թիւրս, ձգել զաշակերտսն
31 զհետ իւրեանց։ * Վասն այսորիկ ար-
թուն կացէք. և յիշեցէք՝ զի զերկեամս
զցայգ և զցերեկ՝ ոչ դադարեցի արտա-
սուօք խրատել զմի մի իւրաքանչիւր։
32 * Եւ արդ՝ յանձն առնեմ զձեզ այ՟՝ և
բանի շնորհաց նր՟, որ կարօղն է շինել՝
և տալ ձեզ ժառանգութիւն ը՟ սրբսն ամ՟։
33 * Արծաթոյ՝ կմ՟ ոսկւոյ կմ՟ հանդերձից՝
34 ոչ ուրուք 'ի ձէնջ ցանկացայ. * Դուք ինք-
նին գիտէք՝ զի զպէտսն իմ և որոց ը՟ իսն
35 էին՝ պաշտեցին ձեռքս այս։ * Եւ զամ՟
ինչ ցուցի ձեզ. զի այսպէս պարտ է վաստա-
կել, և դարմանել զհիւանդս. և յիշել
զբանն տն՟ Յի՟, զոր ինքն իսկ ասաց. Ե-
րանելի է մանաւանդ տալ՝ քան առնուլ։
36 * Եւ զայս իբրև ասաց, եդեալ ծունր
37 ամենեքումբք՝ եկաց յաղօթս։ * Բա-
զում լալիւն եղև ամենեցուն։ և ան-
կեալ զպարանոցաւն պօղոսի՝ համբու-
38 րէին զնա։ * Մորմոքէին մանաւանդ 'ի
վերայ բանին զոր ասէր, թէ ոչ ևս տե-

սանելոյ են զերեսս նր. եւ յուղարկեցին
զնա ՚ի նաւ անդր:

## ԳԼ. ԻԱ.

ՁԲ Եւ իբրեւ եղեւ ելանել մեզ եւ մեկնել ՚ի 1
նոցանէ, հանդէպ գնացեալ եկաք ՚ի
կով. եւ ՚ի վաղիւն անդր ՚ի հռոդոն, եւ
անտի ՚ի պատարայ: * Եւ գտեալ նաւ 2
մի՝ զի երթայր ՚ի փիւնիկէ, եւ ելեալ ՚ի
նա գնացաք: * Եւ յայտ եղեալ կիւպ 3
րեայ՝ թողաք զնա ՚ի ձախակողմն, նա
ւեցաք յասորիս, եւ իջաք ՚ի տիւրոս.
քզի անդ էր նաւն թափելոյ զբեռինսն:
* Եւ գտեալ զաշակերտսն՝ կացաք անդ 4
աւուրս եօթն. որք ասէին ցպօղոս ՚ի
ձեռն հոգւոյն՝ մի՛ ելանել յեմ: * Եւ 5
իբրեւ եղեւ մեզ կատարել զաւուրսն՝ ե
լեալ գնայաք, յուղարկէին զմեզ ամենե
ցուն հանդերձ կանամբք եւ որդւովք մին
չեւ արտաքոյ քաղաքին. եւ եդեալ ծունր
առ ծովեզերբն՝ կացաք յաղօթս: * Եւ 6
հրաժարեցաք ՚ի միմեանց՝ եւ ելաք ՚ի
նաւն. եւ նոքա դարձան յիւրեանց տե
ղիս: * Եւ մեր զնաւն ախեթեալ ՚ի 7
տիւրոսէ՝ հասաք ՚ի պտղեմայիդա. եւ
ողջոյն տուեալ եղբարց՝ եղաք օր մի առ
նոսա: * Եւ ՚ի վաղիւն անդր ելեալ անտի՝ 8
եկաք ՚ի կեսարիա. եւ մտեալ յապա
րանսն փիլիպպոսի աւետարանչի, որ էր
յեօթանց անտի, ագաք առ նմա: * Նո 9

 րա

րա էին դստերք չորք կոյսք՝ մարգարէք։
10 Եւ 'ի լինելն մեր անդ աւուրս բազումս,
էջ ոմն 'ի Հրէաստանէ մարգարէ՝ անուն
11 Ագաբոս։ Եւ եկեալ առ մեզ, առեալ
զգօտին Պօղոսի՝ կապեաց զոտս և զձեռս
իւր, և ասէ. այսպէս ասէ Հոգին Սբ.
զայրն որոյ գօտիս այս է՝ այսպէս կապես
ցեն յԵմ Հրէայք, և մատնեսցեն 'ի
12 ձեռս հեթանոսաց։ Եւ իբրև լուաք
զայն՝ աղաչէաք մեք, և որ 'ի տեղւոջն
13 էին՝ չելանել նմա յԵմ։ Յայնժամ
պատասխանի ետ Պօղոս. զի՞նչ գործէք,
զի՞ լայք և ճմլեցուցանէք զսիրտ իմ.
քանզի ես ոչ միայն կապել՝ այլ և մե֊
ռանել յԵմ պատրաստ եմ վասն ան֊
14 ուանն Տն յի քի։ Եւ 'ի չհաւանելն
նր՝ լռեցաք, ասեմք. Տն կամք լիցին։
15 Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ հանդեր֊
16 ձեալ ելանէաք յԵմ։ Եկին ընդ մեզ և
յաշակերտաց անտի կեսարացւոց, և տա֊
նէին զմեզ առ որում վանս ունելոց էաք՝
Մնասոնի ումեմն կիպրացւոյ՝ առաջին ա֊
17 շակերտի։ Եւ 'ի մտանելն մեր յԵմ,
18 խնդութբ ընկալան զմեզ եղբարք։ 'Ի վա֊
ղիւն անդր եմուտ Պօղոս ընդ մեզ առ Յակով֊
19 բոս. և եկին ամ երիցունքն։ Եւ ողջոյն
տուեալ նց՝ պատմէր մի ըստ միոջէ զոր ա֊
րար Ած 'ի հեթանոսս 'ի ձեռն պաշտա
20 մանն նր։ Եւ նք լուեալ՝ փառաւոր առ֊
նէին զԱծ, և ասեն ցնա. տեսանես եղ֊


բայց

բայր՝ քանի բիւրք են հաւատացելոցն
Հրէից, և ամենեքեան նախանձաւոր օրի
նացն են։ * Բայց իրազեկ եղեն վն քո՝ 21
թէ ապստամբութիւն ուսուցանես 'ի Մով
սեսէ՝ որոց 'ի հեթանոսս ամ Հրէայք են.
ասես՝ մի՛ թլփատել զորդիս նց, և մի՛ ըստ
կրօնիցն գնալ։ * Արդ՝ զի՞նչ լինիցի՝ ա 22
պաքէն լսեն, եթէ եկեալ ես. * Արդ 23
զայս արա զոր ասեմք քեզ. են 'ի մեզ արք
չորք ուխտաւորք յանձինս իւրեանց.
* զնս առեալ սրբեսցիս ընդ նս. և ծախեա 24
ինչ 'ի նս զի գերծցեն զգլուխս. և գի
տասցեն ամենեքին, թէ զորոց իրազեկն
եղեն զքէն՝ ոչինչ է. այլ միաբանիս և
դու պահել զօրէնս։ * Բայց վն հաւա 25
տացելոցն հեթանոսաց, մեք առաքե
ցաք՝ ոչ լինորեցաք, մի՛ ինչ այնպիսի պա
հել նց. բայց միայն զգուշանալ 'ի կռոց
զոհելոյ, և յարենէ, և 'ի հեղձուցելոյ,
և 'ի պոռնկութենէ։ * Յայնժամ պօղոսի 26
առեալ զարսն՝ 'ի վաղիւ անդր ընդ նս սր
բեալ եմուտ 'ի տաճարն. յայտ առնել
զկատարումն աւուրցն սրբութեան, մինչև
մատեաւ 'ի մի իւրաքանչիւր ուրուք 'ի
նոցանէ պատարագ։

ՀԴ

* Իսկ իբրև մերձ էին եօթն աւուրքն 'ի 27
կատարել, տեսեալ զնա 'ի տաճարին ա
սիացւոց Հրէիցն՝ զեղուին զնովաւ զամ
ժողովն. և արկեալ 'ի նա ձեռս՝ աղա
ղակէին. * արք իսրայելացիք՝ օգնեցէք. այս 28

այր է՝ որ հակառակ ժողովրդեանն և
օրինաց և տեղւոյս այսորիկ՝ ամենեցուն
ա͞մ ուրեք ուսուցանէ · մինչև հեթա_
նոսս ևս եմոյծ 'ի տաճարն՝ և պղծեաց
29 զս͞բ տեղին ։ * Քանզի էր յառաջագոյն
տեսեալ զտրոփիմոս զեփեսացի 'ի քա_
ղաքին ը͞ նմա · զոր կարծէին եթէ 'ի տա
30 ճար անդր եմոյծ պօղոս ։ * Շարժեցաւ
քաղաքն ա͞մ, և կուտեցաւ ժողովուրդն ·
և առեալ զպօղոս ձգէին արտաքոյ տա_
ճարին · և վաղվաղակի փակեցան դը_
31 ռունքն · * և խնդրէին զնա սպանանել ։
եհաս զրոյց 'ի հազարապետ գնդին, ե_
32 թէ խռովեալ է ա͞մ ե͞էմ ։ * Որոյ անդէն
առեալ զօրականս և հարիւրապետս՝ դի
մեաց 'ի վ͞ր ն͞ց · և ն͞ց տեսեալ զհազա_
րապետն և զզօրականսն, դադարեցին
33 'ի հարկանելոյ զպօղոս ։ * Յայնժամ
մատուցեալ հազարապետն կալաւ զնա,
և հրամայեաց կապել կրկին շղթայիւք՝
և հարցանէր թէ ո՞ իցէ, և զի՞նչ իցէ ա_
34 րարեալ ։ * Այլք այլ ինչ աղաղակէին
զնմանէ յամբոխին · իբրև ոչ կարաց գի_
տել զստոյգն վ͞ս ամբոխին, հրամայեաց
35 ածել զնա 'ի բանակն ։ * Իսկ իբրև ե_
հաս յաստիճանսն, դէպ եղև բառնալ
բերել զնա 'ի զօրականացն՝ վասն բռնու_
36 թեան ամբոխին · * քանզի զհետ եր_
թայր բազմութի͞ն ժողովրդեանն, և ա_
37 սէին՝ բա՛րձ զդա ։ * Մինչ դեռ մտանէ_

լոց էր պօղոս 'ի բանակն , ասէ ցհազա_
րապետն՝ եթէ արժան իցէ ինձ խօսել
ընդ քեզ ։ և նա ասէ · յունարէն գիտես·
* մի՞ արդեօք դու իցես եգիպտացին, որ 38
յառաջ քան զայս աւուրս ապստամբե
ցուցեր և հաներ յանապատ չորս հազարս
արս սիկարեանս ։ * Եւ ասէ պօղոս , ես 39
եմ այր հրեայ 'ի տարսոնէ կիլիկեցւոց,
ոչ աննշան քաղաքի քաղաքացի · աղաչեմ
զքեզ հրամայեա ինձ խօսել առ ժողո
վուրդդ ։ * Եւ 'ի հրամայելն նորա , պօղոս 40
կացեալ 'ի վերայ աստիճանացն՝ շարժեաց
զձեռն ժողովրդեանն · իբրև բազում
լռութիւն լինէր , սկսաւ բարբառել հեբ_
րայեցւոց բարբառովն՝ և ասէ ։

## ԳԼ · ԻԲ ։

Արք եղբարք և հարք՝ լուարուք ինձ 1
այժմ առ ձեզ պատասխանատուու
թեանս ։ * Իբրև լուան՝ եթէ հեբրայեց_ 2
ւոց լեզուաւն բարբառեցաւ նոցա՝ առա
ւել ևս դադարեցին 'ի լռութիւն ։ * Եւ 3
ասէ · ես եմ այր հրեայ ծնեալ 'ի տար_
սոնի կիլիկեցւոց՝ սնեալ 'ի քաղաքիս
յայսմիկ առ ոտս գամաղիելի՝ խրատեալ
ըստ ճշմարտութեան հայրենի օրինաց · նա_
խանձայոյզ էի աստուծոյ՝ որպէս ամենեքին դուք
այսօր · * Որ զայն ճանապարհ վարեցի 4
մինչև 'ի մահ , կապել և մատնել 'ի
բանտս արս և կանայս · * որպէս և քահա 5


Նա

նայապետդ վկայէ ինձ՝ և ամենայն ծե-
րակոյտդ. յորոց և թուղթս առեալ առ
եղբարս 'ի Դամասկոս երթայի, ածել և
անտի կապեալս յԷմ, զի պատժեսցին։
6 * Եւ եղև ինձ 'ի գնալն և 'ի մերձենալ
'ի Դամասկոս, զմիջաւուրբն յանկար-
ծակի յերկնից փայլատակեաց լոյս սաս-
7 տիկ զինև. * և անկայ յերկիր, և լուայ
բարբառ որ ասէր ցիս. Սաւուղ Սաւուղ՝
8 զի՞ հալածես զիս: * Եւ ես ետու պա-
տասխանի՝ թէ ո՞վ ես Տր. և ասէ ցիս,
ես եմ Յս Նազովրեցի՝ զոր դու հալա-
9 ծես։ * Նոքա որ ընդ իմն էին՝ զլոյսն տե-
սանէին. այլ զձայնն ոչ լսէին՝ որ խօսէր
10 ընդ իս։ * Եւ ասեմ, զի՞նչ արարից Տր։ և
ասէ ցիս Տր. յարուցեալ երթիցես 'ի Դա-
մասկոս, և անդ պատմեսցի քեզ վն ամի
11 որ հրամանն է քեզ առնել. * Իբրև ոչ
տեսանէի 'ի փառաց լուսոյն այնորիկ,
զձեռանէ ձգել 'ի նոցանէ որ ընդ իմն էին,
12 մտի 'ի Դամասկոս։ * Անանիա ոմն այր
երկիւղած ըստ օրինաց, վկայեալ յամ
բնակչաց որ 'ի Դամասկոս հրեայքն էին.
13 * եկն եկաց առ իս՝ և ասէ. Սաւուղ եղ-
14 բայր՝ 'ի վեր հայեաց։ * Եւ ես նոյնժա-
մայն 'ի վեր հայեցայ 'ի նա։ և նա ասէ ցիս։
Այ հարցն մերոց յառաջագոյն ընտրեաց
զքեզ ճանաչել զկամս նր, և տեսանել
զարդարն, և լսել բարբառ 'ի բերանոյ
15 նր. * զի եղիցիս վկայ նր առ ամ մար-

գիկ՝

ղին՝ որոց տեսերն և լուար. * Եւ արդ՝ 16
զի՞ հեղգաս, արի՛ մկրտեա՛ց և լուա՛ ըզ
մեղս քո 'ի կարդալ զանուն նր. * Եւ 17
եղև ինձ 'ի դառնալն յեմ՝ և կալ յա
ղօթս 'ի տաճարին, լինել 'ի զարմաց-
ման. * և տեսանել զնա զի ասէր ցիս. 18
փութա՛ ել յեմ վաղվաղակի, քանզի
չեն ընդունելոց զքո վկայութիւն վն իմ.
* Եւ ես ասեմ. Տր՝ ինքեանք իսկ գի- 19
տեն՝ զի ես էի որ 'ի բանտս տայի, և գան
հարկանէի ըստ ժողովրդոցն զհաւատա
ցեալս 'ի քեզ. * Եւ յորժամ հեղոյր ա- 20
րիւնն ստեփաննոսի վկայի քո, ես ինքն
էի՝ որ 'ի վերայ կայի, և կամակից լինէի
սպանման նորա, և պահէի զհանդերձս
սպանողացն նր. * Եւ ասէ ցիս. գնա՛, 21
զի ես 'ի հեթանոսս հեռաւորս առաքե-
ցից զքեզ. * Եւ ունկն դնէին նմա մինչև 22
ցայս բան. ապա բարձին զձայնս իւր-
եանց՝ և ասեն. բա՛րձ յերկրէ զայդպի
սիդ, զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ.
* Եւ յաղաղակելն նոցա՝ և ընկենուլ 23
զհանդերձս՝ և զփոշին ցանել յօդս,
* հրամայեաց հազարապետն մուծանել 24
զնա 'ի բանակն. ասէր՝ գանի՛ւ հարցա-
նել զնա, զի գիտասցէ վն որոյ յանցման
այնպէս աղաղակէին զնմանէ. * Եւ իբ- 25
րև պրկեցին զնա փոկովք, ասէ պօղոս
ցհարիւրապետն որ 'ի վր կայր. եթէ
զայր հռովմայեցի և անպարտ պա՛րտ է-

26 ցէ ձեզ զան հարկանել։ * Իբրեւ լուաւ
հարիւրապետն, մատուցեալ առ հազա-
րապետն պատմեաց եւ ասէ. զի՞նչ կամիս
առնել՝ քանզի այրս այս հռովմայեցի է։
27 * Եւ մատուցեալ հազարապետն, ասէ
ցնա. ասա՛ դու ցիս՝ հռովմայեցի՞ ես. եւ
28 նա ասէ, այո՛։ * Պատասխանի ետ հազա-
րապետն. ես բզմ՟ գնոց զզինուորութիւնս
զայս ստացայ. ասէ պօղոս. ես ծնեալ
29 իսկ ՚ի դմին եմ։ * Եւ վաղվաղակի ՚ի
բաց կացին ՚ի նմանէ՝ որ հարկանելոցն
էին զնա. եւ հազարապետն իսկ երկեաւ,
իբրեւ գիտաց եթէ հռովմայեցի է. եւ զի
կապեալն եւս էր զնա։
30 * Եւ ՚ի վաղիւն անդր կամէր գիտել ըզ ՁՁ
ճշմարիտն, թէ զի՞նչ չարախօսութիւն իցէ
հրէիցն. արձակեաց զնա՝ եւ հրամայեաց
կոչել զքահանայապետսն եւ զամենայն
ատեանն. եւ իջուցեալ զպօղոս կացոյց ՚ի
մէջ նոցա։

## ԳԼ. ԻԳ.

1 Եւ հայեցեալ պօղոսի յատեանն՝ ասէ.
արք եղբարք՝ ես ամ՟ ուղիղ մտօք
գնացեալ եմ առաջի այ՟ մինչեւ ցայսօր։
2 * Եւ քահանայապետն անանիա հրա-
մայեաց սպասաւորացն հարկանել զբե-
3 րան նր՟. * Յայնժամ պօղոս ասէ ցնա.
հարկանելոց է զքեզ ած՟՝ որմ բռեալ. եւ
դու նստիս դատել զիս ըս՟ օրինաց. եւ ա-
ռանց

ռանց օրինաց հրամայես զիս հարկանել։
* Եւ որ շուրջն կային՝ ասեն. զքահա- 4
նայապետն այ հայհոյես։ * Եւ ասէ պօ- 5
ղոս. ո՛չ գիտէի եղբարք՝ եթէ իցէ քա-
հանայապետ. գրեալ իսկ է՝ զիշխան ժո-
ղովրդեան քո ո՛չ հայհոյեսցես ։ * Իբրեւ 6
գիտաց պօղոս՝ եթէ մի կողմն սադուկեց-
ւոց է՝ եւ միւսն փարիսեցւոց, աղաղակէր
՚ի մէջ ատենին. ա՛րք եղբարք՝ ես փարի-
սեցի եմ, որդի փարիսեցւոյ. վն յուսոյ
եւ յարութե մեռելոց՝ ես աւասիկ դատիմ։
* Եւ զայս իբրեւ ասաց՝ եղեն հերձուա- 7
ծք փարիսեցւոցն եւ սադուկեցւոց. եւ
պատառեցաւ բազմութիւն ։ * Քանզի 8
սադուկեցիքն ասեն, չի՛ք յարութիւն, ոչ
հրեշտակ՝ եւ ո՛չ հոգի. բայց փարիսե-
ցիքն խոստովանին զերկոսեան ։ * Եւ 9
եղեւ աղաղակ մեծ. յոտն կացին ոմանք
՚ի դպրաց անտի ՚ի կողմանէ փարիսեց-
ւոց, հակառակէին եւ ասէին. ոչի՛նչ չա-
րութիւն գտանեմք յառնս յայսմիկ, բայց
թէ հոգի խօսեցաւ ՚ի դմա՝ կամ հրեշ-
տակ։ * Եւ ՚ի բազմանալ ամբոխին՝ եր- 10
կուցեալ հազարապետն թէ գուցէ ձեղ-
քեսցի պօղոս ՚ի նոցանէ, հրամայեաց զօ-
րականին իջանել յափշտակել զնա ՚ի
միջոյ նց, եւ ածել ՚ի բանակն ։ * Եւ ՚ի 11
վաղուեան գիշերին եկաց առ նմա տր, եւ
ասէ. քաջալերեա՛ց պօղէ, զի որպ վկայե-
ցեր վն իմ յերուսաղէմ, նոյնպս պարտ

է

է քեզ և 'ի Հռոմ վկայել։
12 * Եւ իբրեւ այգ եղեւ՝ արարեալ ժողով ԻԳ
հրէիցն՝ նզովեցին զանձինս. ոչ ուտել և
13 ոչ ըմպել՝ մինչեւ սպանցեն զպօղոս։ * Եւ
էին աւելի քան զքառասուն՝ որոց զայս
ընդ միմեանս երդմունս արարեալ էր։
14 * Սոքա մատեան առ քահանայապետսն և
երիցունս՝ և ասեն. նզովիւք նզովեցաք
զանձինս՝ ոչի'նչ ճաշակել մինչեւ սպան-
15 ցուք զպօղոս. * Բայց դուք զգացուցէք
հազարապետին հանդերձ ատենիւն, զի
իջուսցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիք
ճշմարտագոյնս ինչ գիտել զնմանէ. և
մեք յառաջ քան զմօտել նր՝ պատրաստ
16 եմք 'ի սպանանել զնա։ * Եւ լուեալ քեռ
որդւոյն պօղոսի զդաւաճանութիւն, եկն
եմուտ 'ի բանակ անդր՝ պատմեաց պօ-
17 ղոսի. * Եւ կոչեցեալ պօղոսի առ ինքն
զմի 'ի հարիւրապետաց անտի՝ ասէ. ըզ
պատանիս զայս տար առ հազարապետն,
18 զի ունի ինչ պատմել նմա։ * Եւ նորա
առեալ զնա տարաւ առ հազարապետն՝
և ասէ. կապեալն պօղոս կոչեաց զիս,
և աղաչեաց զպատանիս զայս ածել առ
19 քեզ, ունի ինչ խօսել ընդ քեզ։ * Բու-
եալ զձեռանէ նր հազարապետին՝ գնաց
մեկուսի, հարցանէր՝ թէ զի՞նչ ունիս
20 խօսել ընդ իս։ * Եւ նա ասէ. հրէայք
միաբանեցին աղաչել զքեզ, զի 'ի վա-
ղիւն զպօղոս իջուսցես յատեան, իբրեւ


թէ

Թէ կամիցին ինչ ճշմարտագոյնս հարցա-
նել վասն նորա ․ * Արդ՝ դու մի՛ անսայցես 21
նոցա ․ քանզի դարան գործեալ է նմա ՚ի նո
ցանէ՝ արանց աւելի քան զքառասուն,
որ նզովեցին զանձինս՝ ոչ ուտել և ոչ ըմ
պել՝ մինչև սպանցեն զնա ․ արդ պատ-
րաստ են՝ և սպասեն քում հրամանի ։
* Նա հազարապետն արձակեաց զպա- 22
տանին, պատուիրեալ մի՛ ումեք ասել
թէ զայս ազդեցուցեր ինձ ։ * Եւ կոչեաց 23
երկուս ՚ի հարիւրապետացն՝ և ասէ ․
պատրաստեցէք զօրականս երկերիւր,
որպէս զի երթիցեն մինչև ՚ի Կեսարիա ․ և
հեծեալս եօթանասուն՝ և տիգաւորս եր
կերիւր, ՚ի յերից ժամու գիշերոյն ։ * և 24
գրաստ պատրաստական՝ որպէս զի հեծուցեն
զՊօղոս ապրեցուսցեն ․ և առ Փելիքս դա
տաւոր գրեալ թուղթ, * որ ունէր օրի 25
նակ զայս ։ * Կղօդիոս Լիւսիաս առ քաջ 26
դատաւորդ Փելիքս՝ ողջոյն ։ * Զայրս 27
զայս կալեալ ՚ի հրէից՝ և մերձ ՚ի սպա-
նանել ՚ի նոցանէ ․ հասեալ ՚ի վերայ զօրա
կանաւ ապրեցուցի, իմացեալ թէ հռով
մայեցի է ։ * Կամեցայ գիտել զպատճառն՝ 28
վասն որոյ ամբաստանէին զդա մանէ, իջու-
ցի զդա յատեան նոցա ։ * Զոր գտի ամ 29
բաստանեալ վասն խնդրոյ իրիք իւր-
եանց օրինաց ․ և ոչ ինչ արժանի մահու
կամ կապանաց ունէր յանցանս ։ * Իբրև 30
ազդ եղև ինձ նենգութեն յայրդ լինելոյ


՚ի

'ի նոցանէ՝ յղեցի առ քեզ. հրամանս տ-
ուեալ և չարախօսացն խօսել զդմանէ ա-
31 ռաջի քո. ողջ լեր։ * Եւ զօրականացն
ըստ հրամանին նորա տուեալ զՊաւղոս՝ ածին
32 գիշերայն յԱնտիպատրիս։ * Եւ 'ի վա-
ղիւն անդր արձակեալ զհեծեալսն ընդ նմա
33 երթեալ՝ դարձան 'ի բանակն։ * Որքա
մտին 'ի Կեսարիա. և տուեալ զդատա-
ւորն զթուղթն, առաջի կացուցին նորա և
34 զՊաւղոս։ * Իբրև ընթերցաւ՝ եհարց թէ
յորմէ նահանգէ իցէ. և ստուգեալ է-
35 թէ 'ի Կիւլիկեայ է. * Լուայց քեզ ասէ՝
յորժամ և չարախօսքն քո եկեսցեն. և
հրամայեաց յապարանսն Հերովդի պա-
հել զնա։

## ԳԼ. ԻԴ.

1 Եւ յետ հինգ աւուր էջ քահանայա- ԵԿ
պետն Անանիա հանդերձ ծերովք
ոմամբք, և ճարտասանաւ Տերտիւ-
ղեաւ ոմամբ. որք և զգացուցին դատա-
2 ւորին վասն Պաւղոսի։ * Եւ 'ի կոչելն զնա՝
սկսաւ Տերտիւղոսն ամբաստան լինել
և ասել. Բազում խաղաղութեան գտեալ
է 'ի քէն, և իրաց ուղղութիւն ազգիս այսո-
3 րիկ քով խնամով. * Ամենայն և ամենուրեք
շնորհակալ եմք՝ քաջդ Փելիքս՝ ամենայն գո-
4 հութեամբ։ * Բայց զի մի' աւելի ևս աշխատ
արարից զքեզ, աղաչեմ լսել մեզ կարճ
5 'ի կարճոյ՝ քոյին հեզութեամբդ։ * Գտանի



գտաք

գտաք զայրս զայս ապականիչ և խռո-
վիչ ա̃մ Հրէից՝ որք են ընդ տիեզերս, և
առաջնորդ Նազովրացւոց հերձուածոյն.
* որ և զտաճարն իսկ կամեցաւ պղծել. 6
զոր և կալաք, և ըստ մերոց օրինաց դա-
տել կամեցաք: * Եկեալ Լիւսիաս հազա- 7
րապետ՝ մեծաւ բռնութ̃բ 'ի ձեռաց մե-
րոց եհան: * Հրամայեաց և չարախօ- 8
սացն նր̃ գալ առ քեզ. յորմէ դու իսկ
բաւական լինիցիս վերստին դատել,
ա̃մի հասու լինել՝ զորոց մեքս ամբաս-
տանեմք զդմանէ: * Միաբանեցին և 9
Հրեայքն՝ ասեն՝ այդ այդպէս է: * Պա- 10
տասխանի ետ պօղոս, յակնարկել նմա
դատաւորին խօսել. 'Ի բազում ամաց լի-
նել քեզ դատաւոր ազգիս այսորիկ գի-
տեմ. յօժարութ̃բ վ̃ս իմոց իրաց պատաս
խանի տանեմ: * Քանզի կարող ես գի- 11
տել, զի ոչինչ աւելի է իմ քան զաւուրս
երկոտասան՝ յորմէ հետէ ելի երկիրպա-
գանել յե̃մ: * Եւ ոչ 'ի տաճարի ան- 12
գտին զիս ընդ ումեք խօսեցեալ, և կամ
ժողովս արարեալ բազմաց, ոչ 'ի ժողո-
վուրդս՝ * և ոչ 'ի քաղաքի. և ոչ յան- 13
դիման առնել կարեն քեզ՝ վասն որոյ
այժմդ չարախօսեն զինէն: * Բայց զայս 14
խոստանամ քեզ, եթէ ը̃ս (ճշմ) ճանապարհին
զոր ասեն հերձուած, այնպէս պաշտեմ
զհայրենի ա̃ծն. հաւատացեալ ա̃մի՝ որ
ինչ յօրէնս և 'ի մարգարէս գրեալ է.

15 *Ունիմ յոյս առ Ած. որում և դոքա
իսկ ակնունին՝ եթէ յարութի լինելոց է
16 արդարոց և մեղաւորաց: *Յորում և ես
իսկ ձգնիմ, անխիղճ միտս ունել առ Ած
17 և առ մարդիկ յամ ժամ: *'Ի բազում
ամաց ողորմութիւնս եկի առնել յազգ-
18 իմ. և եառ պատարագս. *որովք գտին
զիս սրբեալ 'ի տաճարին՝ ոչ բազմօք և
19 ոչ ամբոխիւ: *Սմանք յասիացւոց ան-
տի Հրէայք՝ որոց պարտ էր գալ առաջի
քո՝ և ամբաստան լինել, եթէ ունիցին
20 ինչ զինէն. *և կամ նոքեանք սոքա ա-
սասցեն, զինչ գտին յիս անիրաւութի՝
21 մինչդեռ կայի յատենին: *Բայց միայն
վն միոյ բարբառոյս այսորիկ՝ զոր աղա-
ղակեցի մինչ կայի 'ի մէջ նց. եթէ վն
յարութեն մեռելոց դատիմ ես այսօր 'ի
22 ձէնջ: *Յայն յապաղեաց զնս փելիքս,
զի ստուգագոյնս գիտէր վն ճանապար
հին, ասէ. յորժամ լիւսիաս հազարա-
պետ իջցէ այսր, տեղեկացայց վն ձեր:
23 *Հրամայեաց հարիւրապետին պահել
զնա. և ունել յընդարձակի, և մի՛ զոք
յիւրոց անտի արգելուլ 'ի պաշտելոյ
զնա:
24 *Յայն յետ աւուրց ինչ եկն փելիքս հան- ԽԲ
դերձ դրուսեղաւ կնաւ իւրով, որ էր
Հրէայ. կոչեաց զպօղոս՝ և լուաւ 'ի նմա
25 նէ վն որ 'ի յն քն հաւատոցն: *Յայն 'ի
խօսելն նր վն արդարութեն և ժուժկա-
լու

լուծէ և հանդերձեալ դատաստանէն,
զահի հարեալ Փելիքս, ետ պատասխա-
նի. դու առ այժմ երթ՝ և յորժամ ժամ
լինիցի, կոչեցից զքեզ։ * Մանաւանդ 26
և ակն ունէր՝ թէ տացի ինչ նմա ՚ի Պօ-
ղոսէ. վս̃ որոյ և ստէպ կոչեցեալ զնա՝
խօսէր ընդ նմա։ * Իսկ ՚ի կատարել եր- 27
կուց ամաց եկն փոխանակ Փելիքսի՝ Փես
տոս Պորկիոս։ Իբրև կամեցաւ շնորհս
առնել հրէիցն Փելիքս, եթող զՊօղոս
կապեալ։

## ԳԼ. ԻԵ.

Փեստոս իբրև եհաս յիշխանութիւնն, 1
յետ երից աւուրց ել յե̃մ ՚ի Կե-
սարիայ։ * Եւ զգացուցին նմա քահա- 2
նայապետքն և գլխաւորք հրէիցն զՊօ-
ղոսէ, * և աղաչէին խնդրել շնորհս ՚ի 3
նմանէ. զի կոչեսցէ զնա յե̃մ. դարան
գործեալ սպանանել զնա ՚ի ճանապար-
հի։ * Իսկ Փեստոս արար պատասխանի՝ 4
պահել զնա ՚ի Կեսարիայ. թէ ինքն իսկ
ը̅ հուպ անդր երթալոց է։ * Եւ որ ՚ի 5
ձէնջ կարողք իցեն՝ ասէ, ընդ իս իջցեն,
և եթէ իցէ ինչ յառնն վ̃աս՝ ամբաս-
տան լիցին զնմանէ։ * Եւ լեալ անդ 6
աւուրս՝ ոչ աւելի քան զութ կմ̃ զտասն,
էջ ՚ի Կեսարիա. և ՚ի վաղիւն անդր
նստեալ յատենի, հրամայեաց ածել
զՊօղոս։ * Եւ իբրև եկն, կային շուրջ 7
զնո

զնովաւ՝ որ յեմէ իջեալ էին Հրեայք.
բազում և ծանր վնաս-դնէին՝ զոր ոչ
8 կարէին ցուցանել։ * Ընդդէմ առնէր պա-
տասխանի պօղոս, եթէ ոչ յօրէնս Հրէից՝
և ոչ 'ի տաճարն՝ և ոչ 'ի կայսր ինչ վնա-
9 սակար եմ։ * Իսկ փեստոս կամեցեալ
Հրէիցն շնորհս առնել, պատասխանի ետ
պօղոսի՝ և ասէ. կամիս յեմ ելանել՝
և անդ վասն դոցին իրաց դատել առաջի
10 իմ։ * Եւ ասէ պօղոս. յատենի կայսեր
հասեալ կամ, ուր պարտ է ինձ դատել.
Հրէից ինչ չեմ վնասակար, որպէս և դու
11 իսկ քաջ գիտես։ * Ապա թէ վնասա-
կար իցեմ՝ և արժանի մահու ինչ գոր-
ծեցի, ոչ զանգիտեմ 'ի մեռանելոյ. իսկ
եթէ ոչինչ իցէ՝ զորոց սոքա ամբաստան
լինին զինէն, ոչոք կարէ զիս դոցա շնոր-
12 հել. 'ի կայսր բողոքեմ։ * Յայնժամ
փեստոս խօսեցեալ ընդ խորհրդականսն՝ ա-
րար պատասխանի, 'ի կայսր բողոքեցեր՝
առ կայսր երթիջիր։
13 * Իբրև անցին աւուրք ինչ՝ ագրիպպաս ԵԳ
արքայ և բերենիկէ եկին 'ի կեսարիա՝
14 յողջոյն փեստոսի։ * Եւ իբրև աւուրս
բազումս հանէին անդր, փեստոս զե-
կոյց արքայի զպօղոսէ՝ և ասէ. այր մի է
15 աստ թողեալ կապեալ 'ի փելիքսէ։ * Վն
որոյ իբրև չոգայ յեմ, զգացուցին ինձ
քահանայապետքն և գլխաւորք Հրէիցն.
խնդրէին յինէն առնել նմա պատուհաս


* որոց

*որոց ետու պատասխանի, եթէ չէ օրէն 16
հռովմայեցւոց շնորհել ումեք զոք, մինչ
չև ամբաստանեալն յանդիման ունիցի
զդատախազսն, և տեղի պատասխանւոյ
առնուցու վասն ամբաստանութեանն: *Իսկ 17
իբրև եկին այսր՝ ոչինչ յապաղեցի, այլ
'ի վաղիւն նստեալ յատենի՝ հրամայե_
ցի ածել զայրն: *Վասն որոյ մատու_ 18
ցեալ ամբաստանօղքն և ոչ մի ինչ վնաս
չարութե 'ի մէջ բերէին՝ զորոց ես կար
ծէի. *բայց խնդիրս ինչ՝ որ վասն իւրեանց 19
պաշտաման ունէին ըն նմա. և վասն յիսի ու
րումն մեռելոյ, զորմէ ասէր պօղոս թէ
կենդանի է: *Իբրև յանձնարս մինի վասն 20
այնպիսի իրաց քննութե, ասեմ եթէ կա_
միցի՞ երթալ յէմ, և անդ դատել վասն
նոցին իրաց: *Բայց 'ի պօղոսի բողո_ 21
քելն՝ զի պահեսցի 'ի քաջի արանցն յան_
դիմանութիւն, հրամայեցի պահել զնա՝
մինչև տաց տանել առ կայսր: *Ագրիպ_ 22
պաս ցփեստոս ասէ. կամէի և ես լսել
առնն. և նա ասէ՝ 'ի վաղիւ լուիցես:
Եդ *Եւ 'ի վաղիւ անդր իբրև եկն ագրիպ_ 23
պաս և բերենիկէ՝ բազում և երևելի պա
տուք, և մտին յատեանն հանդերձ հա_
զարապետօքն և արամբք պատուաւորօք
քաղաքին. և հրամայեալ փեստոսի՝ ա_
ծին զպօղոս: *Եւ ասէ փեստոս, ար_ 24
քայ ագրիպպա՝ և ամ արք որք ընդ մեզ
էք. տեսանէ՞ք զսա, վասն որոյ ամ ժողովք

հրէից ամբաստան եղեն ինձ յեհ̃մ, և
աստ աղաղակէին՝ թէ չէ՛ պարտ դմա
25 կեալ։ * Բայց ես ՚ի վր̃ հասի թէ ոչի՛նչ
է դորա արժանի մահու գործեալ. և
դորա ինքնին բողոք կալեալ առ քաջ ա-
26 րանցն, խորհեցայ յղել։ * Վասն որոյ
ստուգութի̃ ինչ գրել տեառն իմում ո՛չ
ունիմ. վասն այնորիկ ածի զդա առաջի
ձեր՝ և մանաւանդ առաջի քո արքայ Ագ-
րիպպա. որպ̃ վերստին քննեալ՝ մարթա-
27 ցից ինչ գրել։ * Քանզի անպատեհ իմն
թուի ինձ՝ տալ տանել կապեալ մի, և
ոչի՛նչ վնաս զնմանէ նշանակել։

## ԳԼ. ԻԶ.

1 Ասէ Ագրիպպաս ցՊօղոս. հրամայ-
եալ է քեզ՝ վս̃ քո խօսել։ յայնժամ
Պօղոս ձգեալ զձեռն՝ տայր պատաս
2 խանի։ * Վասն ամ̃ ամբաստանութեանց
հրէիցդ զինէն՝ արքայ Ագրիպպա՝ հա-
մարիմ զանձն երանելի. զի քո առաջի
3 այսօր տալոց եմ պատասխանի։ * Մա-
նաւանդ զի գիտակ ես իսկ ամ̃ կրօնից
և խնդրոց հրէից. վս̃ որոյ աղաչեմ եր-
4 կայնմտութբ̃ լսել ինձ։ * Քանզի զկե-
նաց իմոց՝ որ ՚ի մանկութէ, ՚ի սկզբանէ
լեալ յազգի իմում յեհ̃մ, տեղեակ են
5 ամ̃ հրէայք։ * Յառաջագոյն գիտեն ՚ի
վաղուց հետէ, եթէ կամիցին վկայել.
զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրինացն մե-



րոց

րոց կեցեալ եմ փարիսեցի ։ * Եւ արդ 6
վն յուսոյն առ հարսն եղելոյ աւետեացն
յայ՝ դատեալ կամ յատենի ․ * յոր եր_ 7
կոտասան ազգատոհմիս մերոյ անպա_
կաս զցայգ եւ զցերեկ պաշտեալ ակն ու_
նին հասանել ․ վն որոյ յուսոյ ամբաս
տանիմ արքայ՝ 'ի հրէիցդ ։ * Ո՞չ ինչ ան_ 8
հաւատ թուի ձեզ՝ եթէ ած զմեռեալս
յարուցանէ ։ * Ես իսկ ինքնին պատշաճ 9
համարէի՝ զբազում ինչ հակառակ ան_
ուանն յսի Նազովրեցւոյ գործել ։ * Որ 10
եւ արարի իսկ յԵրուսաղէմ․ եւ զբազումս 'ի սըր_
բոցն ես բանտարգել առնէի ,'ի քահա
նայապետիցն առեալ իշխանութի ․ եւ զսպ_
անելոցն նցա բերէի համար ։ * Եւ ըստ 11
ամ ժողովրդոցն՝ բազում անգամ պատժել
զնոսա բռնադատէի հայհոյել․ առաւել
եւս մոլեալ 'ի վերայ նցա՝ հալածէի մինչեւ
յարտաքին քաղաքսն ։ * Որովք գնացեալ 12
'ի դամասկոս՝ իշխանութբ եւ հրամանօք
քահանայապետիցն , * զմիջաւուրբն 'ի 13
ճանապարհի տեսի՝ արքայ՝ յերկնից ա_
ռաւել քան զլուսաւորութի արեգական
ծագեալ զինեւ լոյս , եւ զնովքօք որ ընդ իսն
երթային ։ * Եւ ամենեցուն մեր անկա_ 14
նել յերկիր , լուայ ձայն որ ասէր ցիս՝
հեբրայեցւոց բարբառովն ․ սաւուղ սա_
ւուղ՝ զի՞ հալածես զիս ․ խիստ է քեզ ընդ
դէմ խթանի աքացել ։ * Եւ ես ասեմ, 15
ո՞վ ես տր ։ եւ տր ասէ ․ ես եմ յս՝ զոր

16 դուն հալածես։ * Այլ արի՛ և կա՛ց ՚ի
ո՛տս քո. զի վա՛ս այսորիկ երևեցայ
քեզ՝ առնուլ զքեզ ՚ի ձեռն պաշտօնեայ
և վկայ որոց տեսերդ զիս, և որոց երևե-
17 ցայց քեզ. * փրկել զքեզ ՚ի ժողովրդե-
նէդ՝ և ՚ի հեթանոսաց, յորս ես առա-
18 քեցից զքեզ. * բանալ զաչս նո՛ցա, դար-
ձուցանել ՚ի խաւարէ ՚ի լոյս, և յիշխա-
նութենէ սատանայի՝ յա՛ծ. առնուլ նոցա
զթողութի մեղաց, և վիճակ ը՛ նոքօ՝ հա-
19 ւատովքն որ յիս։ * Սակաւի արքայ Ագ-
րիպպա՝ ո՛չ եղէ անհաւան երկնաւոր
20 տեսլեանն. * այլ նախ որոց ՚ի Դամաս-
կոս և յԵ՛մ էին, և ընդ ա՛մ գաւառս
Հրէաստանի և ՚ի հեթանոսս, պատմե-
ցի զղջանալ՝ և դառնալ յա՛ծ կենդա-
նի. արժանի ապաշխարութե՛ գործս գոր-
21 ծել։ * Վասն այսորիկ Հրէից կալեալ
զիս ՚ի տաճարին, կամէին սպանանել.
22 * օգնութի հասեալ առ յա՛յ՝ մինչև ցայ-
սօր կացի վկայեալ փոքու և մեծի. ո-
չի՛նչ արտաքոյ ասել՝ քան զոր մարգա-
րէքն և Մովսէս խօսեցան զհանդերձե-
23 լոցն լինելոյ. * եթէ չարչարելոց է քնն,
եթէ առաջին ՚ի յարութե մեռելոց՝ լոյս
պատմելոց է ժողովրդեանն՝ և հեթա-
24 նոսաց։ * Իբրև նորա զայս պատասխանի
տուեալ, Փեստոս ՚ի ձայն մեծ ասէ. մո-
լիս պօղէ, բա՛զմ դպրութիքդ զքեզ ՚ի մո-
25 լութի դարձուցանեն։ * Իսկ պօղոս ա-
սէ,

ռէ, ոչ մոլիմ՝ քա՛ջդ փեստոս, այլ ճշմա-
րտութեան և զգաստութեան բանս բարբառիմ։
*Գիտակ իսկ է այսոցիկ արքայ, ընդ ո- 26
րում և համարձակեալ խօսիմ. քանզի
ծածկել 'ի քէն ինչ 'ի սոցանէ՝ չհա-
ւանիմ յանձն. զի ոչ եթէ յանկեան ու-
րեք գործեալ իցէ այս։ *Հաւատա՞ս 27
արքա՛յ Ագրիպպա մարգարէից. գիտեմ զի
հաւատաս։ *Եւ ասէ Ագրիպպաս ցպօ- 28
ղոս, փոքու իմն հաւանեցուցանես զիս
լինել քրիստոնեայ։ *Եւ պօղոս ասէ. 29
խնդրեի յԱյ՝ և փոքու և մեծաւ, ոչ
միայն զքեզ՝ այլ զամենեսեան որ լսեն
ինձ այսօր՝ լինել այսպիսի որպէս և ես եմ,
բաց 'ի կապանաց աստի։ *Յոտն եկաց 30
արքայն և դատաւորն և բերնիկէ, և որ
ընդ նոսայն նստէին։ *Եւ իբրև գնացին, 31
խօսէին ընդ միմեանս և ասէին. թէ ո-
չի՛նչ արժանի մահու կամ կապանաց գոր-
ծէ այրս այս։ *Իսկ ագրիպպաս ցփես- 32
տոս ասէ. արձակել մարթ էր զայրս
զայս՝ եթէ ոչ էր բողոքեալ 'ի կայսր։

## ԳԼ. ԻԷ.

ԻԷ Իբրև հրամայեցաւ մեզ նաւել յիտա- 1
լիա, տային զպօղոս՝ և զայլս ոմանս
կապեալս ցհարիւրապետ մի, որում ա-
նուն էր յուլիոս սեբաստեան գնդին։
*Եւ ելեալ 'ի նաւ մի անդրամիտացի, 2
որ երթալոց էր 'ի կողմանս ասիացւոց՝



գնա

գնացաք. էր ընդ մեզ և արիստարքոս՝ մա_
կեդոն թեսաղոնիկեցի: *Եւ 'ի վաղիւն
3 անդր իջաք 'ի սիդոնի. և մարդասիրու
թի ցուցեալ յուլիոս առ պօղոս, հրա
մայեաց առ բարեկամսն երթալ՝ և դար_
4 ման գտանել: *Եւ անտի ելեալ լո_
նարհագոյն նաւեցաք 'ի կիպրոս՝ վասն
5 հողմոյն ընդդէմ լինելոյ: *Յայնժամ
ընդ մէջ ծովուն կիւլիկեայ և պամփիլեայ
6 նաւել՝ իջաք 'ի միւռայ լիկիացւոց: *Եւ
անդ գտեալ հարիւրապետին զնաւ մի
աղէքսանդրացի՝ որ երթայր յիտալիա,
7 եմուծ զմեզ անդր: *Եւ 'ի բազում
աւուրս ծանրանաւեալք՝ հազիւ հասաք
առ կնիդաւ. և 'ի չթողացուցանել մեզ
հողմոյն, նաւեցաք խոնարհագոյն 'ի
8 կրետէ առ սաղմոնեաւ: *Հազիւ ան_
ցեալ առ նովաւ՝ եկաք 'ի տեղի ինչ՝ որ
կոչէր գեղեցիկ նաւահանգիստ. յոր
9 հուպ էր քաղաքն ղասեայ: *Եւ իբրև
բազում ժամանակք անցանէին, և սկսաւ
ևս լինէր նաւելոյն. և վն այն ինչ ևս
պահոցն անցանելոյ, տայր խրատ պօղոս,
10 *և ասէ ցնսն. արք՝ տեսանեմ զի թըշ_
նամանօք և բազում վնասու՝ ոչ միայն
բեռինդ և նաւիդ, այլ և անձանց մե_
11 րոց լինելոց է նաւարկուիս: *Իսկ հա_
րիւրապետն նաւապետին և նաւավարին
առաւել անսայր՝ քան բանիցն պօղոսի:
12 *Իբրև դժպատեհ ինն թուէր նաւա_
հան_

հանգիստն առ ՚ի ձմերել, բ՟զմք խորհե
ցան գնալ անտի, թերեւս կարասցեն հա-
սանել ՚ի Փիւնիկէ՝ ձմերել ՚ի նաւա-
հանգստին Կրետացւոց, որ հայէր ը՟ հա-
րաւակողմն եւ ը՟ աշխարհն։ * Եւ ՚ի շըն 13
չել հարաւոյն, համարեցան ուր դիմեալն
էին հասանել. եւ արկեալ՝ մօտ անցա-
նէին զԿրետեաւ։ * Եւ ոչ յետ բազում 14
ժամուց՝ անկաւ զնովաւ հողմ ուռուցիկ,
որ կոչի Եւրակիկլոն։ * Ընդ յափշտա 15
կել նաւին՝ եւ ՚ի չհանդուրժել ընդդէմ
հողմոյն, թոյլ տուեալ երթայաք եւ գայ-
աք. * ՚Ի կղզի ինչ դիմեալ՝ որ կոչէր 16
Կղօդէա, հազիւ կարացաք ըմբռնել
զմակոյկն. * զոր առեալ՝ յօգնականու 17
թի կապէին ը՟ նաւն։ երկուցեալ թէ
գուցէ ՚ի յորձանուտն անկանիցին, ի-
ջուցեալ զառագաստն՝ այնպ՟ս երթային
եւ գային։ * Եւ ՚ի սաստկագոյն վշտա- 18
նալոյն մերոյ՝ ՚ի վաղիւն անդր զկարասին
ընկեցին առնէին. * եւ յերրորդ աւուր ը՟ 19
խուրեանց ձեռն՝ զգործին նաւին ընկե
ցին։ * Իբրեւ ոչ արեւ՝ եւ ոչ աստեղք ե- 20
րեւէին ՚ի բազում աւուրս, եւ ձմեռն ոչ
սակաւ կայր ՚ի վ՟ր, ապա բառնայր ա՟մ
յոյս փրկութե՟ մերոյ։ * Եւ զի բազում 21
աւուրս նօթի էին, յայնժամ պօղոս կա
ցեալ ՚ի մէջ ն՟ց՝ ասէ. պարտ էր ձեզ ո՛վ
արք՝ անսալ ինձ, եւ ոչ ելանել ՚ի Կրետեայ՝
եւ շահել զվիշտս զայս՝ եւ զխնաս։ * Եւ 22

 արդ.

արդ՝ խրատեմ զձեզ քաջալերել. զի
վնաս անձին՝ և ոչ միում՝ ի ձէնջ լինիցի,
23 բայց ի նաւէդ: * Քանզի երևեցաւ ինձ
յայսմ գիշերի հրեշտակ այ՟՝ որոյ եսն եմ
24 և պաշտեմ զնա, * և ասէ. մի երկնչիր
պօղէ, կայսեր ևս պարտ է քեզ յանդիման
լինել. և ահա շնորհեալ է քեզ այ՟ զամե
25 նեսեան, որ են ը՟ քեզ ի նաւիդ: * Վ՟ն
այսորիկ քաջալերեցարո՛ւք արք, զի հա_
ւատամ յա՟ծ՝ թէ այսպէս լինի՝ զորօրի
26 նակ խօսեցաւ ը՟ իս: * Բայց ի կղզի ինչ
հասանէ մեզ անկանել:

27 * Իբրև չորեքտասաներորդ գիշեր լի_
նէր՝ մինչ դեռ ծփէաք ի Հադրին ան_
դունդս, ի մէջ գիշերին կարծէին նա_
ւավարքն եթէ հասեալ իցեն յաշխարհ
28 ուրեք: * Իսկ ընկեցեալ զգունդն՝ գը_
տին գիրկս քսան. և սակաւ ինչ դադա
րեալ՝ դարձեալ ընկեցին՝ և գտին գիրկս
29 հնգետասան: * Զահի հարեալ թէ
գուցէ ի խիստ ինչ տեղիս անկանիցին,
յետուստ կողմանէ ընկեցին խարիսխս
30 չորս. ըղձանային այգուն լինելոյ: * Բայց
նաւավարքն խնդրէին փախչել ի նաւէ
անտի. և իջուցեալ զկուրն ի ծով անդր՝
պատճառանօք՝ որպ՟ թէ առաջոյ կողմա
31 նէ խարիսխս ձգելոց իցեն: * Ասէ պօ_
ղոս ցհարիւրապետն և ցզօրականսն. ե_
թէ ոչ դոքա մնան ի նաւիս՝ դուք ապ_
32 րել ոչ կարէք: * Յայնժամ զօրականքն

ԻԷ


հա_

հատին զլարս կրին՝ եւ 'ի բաց ընկեցին։
* Իսկ մինչ դեռ այգն կամէր լինել, ա- 33
ղաչէր պօղոս զամենեսեան առնուլ կե-
րակուր, ասէ. այս չորեքտասաներորդ-
օր է՝ որում ակն ունիք նօթիս կացա
րել, եւ չէ ինչ ճաշակեալ. * Վն որոյ ա- 34
ղաչեմ զձեզ՝ ճաշակել կերակուր, զի
այն իսկ վն ձերոյ փրկութե է. զի ոչ
ուրուք 'ի ձէնջ մազ մի 'ի գլխոյ կորի
ցէ։ * Իբրեւ ասաց զայս, առեալ 35
հաց՝ գոհացաւ զայ առաջի ամենեցուն.
եբեկ՝ եւ սկսաւ ուտել։ * Իսկ քաջալե 36
րեցան ամքին, եւ նոքա առին կերակուր։
* Եւ էաք ամ հոգիք 'ի նաւին՝ երկերիւր 37
եօթանասուն եւ վեց։ * Իբրեւ յագե 38
ցան կերակրովն, թեթեւացուցին զնաւն՝
թափեալ զցորեանն 'ի ծովն։ * Իսկ իբ- 39
րեւ այգ եղեւ՝ զերկիրն ոչ ճանաչէին,
բայց զգոգ մի նշմարէին՝ թէ ափն ծո-
վուն իցէ. յոր խորհէին թէ հնար ինչ
իցէ՝ զերծուցանել զնաւն։ * Իսկ զխա 40
րիսխսն հատեալ՝ ընկեցին 'ի ծովն, թո-
ղացուցին զխառնելիս թեւոցն, եւ 'ի բաց
առին զառագաստն. եւ ետուն հողմոյն
յափն կոյս ծովուն։ * Անկեալ 'ի տե- 41
ղի մի երկծով՝ թիւրեցին զնաւն. եւ ա-
ռաջին կողմն նաւին խրեալ անշարժ մը-
նայր, եւ յետին կողմն քակէր 'ի բռնու
թէն։ * Իսկ զօրականացն խորհուրդ ա- 42
րարեալ՝ զի զկապեալսն սպանցեն, եւ մի

43 զք լողիցէ և փախիցէ. * Այլ հարիւրա
պետն քանզի կամեցաւ ապրեցուցանել
զպօղոս՝ արգել զնս 'ի խորհրդոյն . հրա
մայեաց զի որ կարօղն իցեն լողել՝ ան
կանիցին նախ և 'ի ցամաք ելանիցեն.
44 * և զայլսն՝ զոմս 'ի տախտակս , և զոմս
յայլ ինչ կահ 'ի նաւէ անտի . և այս
պէս եղև ամենեցուն փրծանել յերկիր.

## ԳԼ. ԻԸ.

1 Այլ ապրեալք՝ յայնժամ գիտացաք թէ
մելիտինէ էր անուն կղզւոյն . բայց
բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ մար
2 դասիրութի մեզ. * Քանզի լուցին խա
րոյկ՝ և ընկալան զամենեսին զմեզ վս
անձրևին որ սաստկէր՝ և վասն ցրտոյն.
3 * Այլ 'ի ժողովել պօղոսի խռիւ ինչ բա
զում՝ և դնել 'ի վերայ խարոյկին , իժ
մի 'ի ջերմութէն ելեալ՝ կալաւ զձեռա
4 նէ նր. * Այլ իբրև տեսին բարբարոսքն
կախեալ զգազանն զձեռանէ նր , ասէին
ցմիմեանս . ուրեմն սպանօղ է այրս այս՝
որ թէպէտ և ապրեցաւ 'ի ծովէն , իրա
5 ւունքն չետուն կեալ. * Այլ նր թօթա
փեալ զգազանն 'ի հուրն , եղև նմա չար
6 և ոչինչ. * Այլ նոքա ակն ունէին նմա
այտնլոյ՝ կամ անկանելոյ՝ և յանկարծա
կի մեռանելոյ . իբրև շատ ակն կալեալ՝
և տեսանէին թէ ոչինչ չարս եղև նմա՝
դարձեալ դարձուցեալ զբանսն՝ ասէին
թէ

թէ աստուած իցէ։ * Եւ շուրջ զտե 7
ղեաւն զայնուիկ էին գիւղք գլխաւորի
կղզւոյն՝ որում անուն էր Պոպղիոս. որ
առ զմեզ յերաշխի զերիս աւուրս՝ եւ սի_
րով ընկալաւ։ * Եւ եղեւ հօրն Պոպղեայ 8
ի ջերմն եւ յախտ թանչից հիւանդանալ՝
դնել։ առ որ մտեալ Պօղոս՝ եւ կացեալ
յաղօթս՝ եդ զձեռն եւ բժշկեաց զնա։
* Եւ իբրեւ այս եղեւ, այլ հիւանդք՝ որ 9
էին ի կղզւոջն՝ գային եւ բժշկէին. * որք 10
եւ բազումպատուովք պատուեցին զմեզ.
եւ իբրեւ գնացաք, ետուն որինչ պէտք էին։
ԵԵ * Եւ յետ երից ամսոց ելաք ի նաւ մի 11
աղեքսանդրացի՝ որ ձմերեալ էր ի կղզ_
ւոջն նշանաւորաւ Դիոսկուրացւոց։ * Եւ 12
իջեալ ի Սիրակուսա՝ եղաք աւուրս երիս.
* ուստի գնացեալ հասաք ի Հռեգիոն։ 13
եւ յետ աւուր միոյ ի շնչել հարաւոյն,
երկօրեայք եկաք ի Պատիողոս։ * ուր 14
եւ գտաք եղբարս՝ աղաչեցեալք ի նոցա_
նէ լինել աւուրս եօթն։ եւ ապա ելաք ի
Հռովմ։ * Եւ անտի լուեալ եղբարց ըզ 15
մէնջ՝ եկին ը̅ առաջ մեր մինչեւ յորգոս_
տայն Ապփեայ՝ եւ Երիցն կրպակաց. զորս
տեսեալ Պօղոսի՝ գոհացաւ զԱյ՝ եւ քա_
ջալերեցաւ։ * Եւ իբրեւ մտաք ի Հռովմ, 16
հրամայեցաւ Պօղոսի լինել առանձինն
հանդերձ զինուորաւն՝ պահապանաւ իւ_
րով։ * Եւ եղեւ յետ երից աւուրց՝ կո_ 17
չել նմա զհրէիցն գլխաւորս. եւ իբրեւ ե_


կին,

կին, ասէ ցնս․ ես՝ արք եղբարք՝ ոչինչ
հակառակ գործեալ ժողովրդեանն՝ կամ
կրօնից հայրենեաց, կապեալ յԵրուսա
ղեմէ՝ մատնեցայ ՚ի ձեռս Հռովմայեց
18 ւոց։ * Որք իբրեւ գտեալ զիս՝ կամէ
ցան արձակել, վն եւ ոչ մի ինչ վնաս մա
19 հու գտանելոյ յիս։ * ՚Ի հակառակել
Հրէիցն, հարկ եղեւ բողոքել ՚ի կայսր․
իբր ոչ եթէ ազգէն իմմէ ունէի ինչ չա
20 րախօսել։ * Վասն այսր պատճառանաց
աղաչեցի զձեզ՝ տեսանել եւ խօսել․ քան
զի վն յուսոյն իսրայէլի կամ ՚ի շղթայս
21 յայսոսիկ։ * Եւ նոքա ասեն ցնա․ մեք
ոչ թուղթս ինչ վն քո ընկալաք ՚ի Հրէաս
տանէ, եւ ոչ եկեալ ոք յեղբարց պատմ
եաց՝ կամ խօսեցաւ ինչ վն քո չարութի։
22 * Բայց աղաչեմք ՚ի քէն լսել՝ թէ զինչ
խորհիցիս․ զի վն հերձուածոյդ այդո
րիկ յայտ իսկ է մեզ, զի ամենայն ուրեք
23 հակառակութիւն կրէ։ * Իսկ եդեալ
նմա օր մի, եկին ՚ի վանսն առ նա բազումք․
որոց պատմէր վկայութիւն արքայութեան
այ․ եւ հաւանեցուցանէր զնս վն յսի,
յօրինացն մովսէսի եւ ՚ի մարգարէից՝ յայ
24 գուէ մինչեւ ցերեկոյ։ * Եւ ոմանք հա
ւանէին բանիցն, եւ կէսքն չհաւատային։
25 * Եւ անմիաբանք լեալ միմեանց՝ արձա
կէին, յասելն պօղոսի բան մի․ թէ բար
ւոք խօսեցաւ հոգին սբ ՚ի ձեռն եսայ
26 եայ մարգարէի առ հարսն մեր․ * Եւ ա
սէ։

սէ. Երթ առ ժողովուրդն, եւ ասասջիր.
Լսելով լուիջի՛ք եւ մի՛ իմասջի՛ք, եւ տեսա
նելով տեսջի՛ք՝ եւ մի՛ տեսջի՛ք։ * Զի 27
թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնո-
րիկ, եւ ականջօք իւրեանց ծանր լուան.
եւ զաչս իւրեանց կափուցին, զի մի՛ եր-
բէք տեսցեն աչօք եւ ականջօքն լուիցեն
եւ սրտիւք իմասցին՝ եւ դարձցին, եւ բժ-
շկեցից զնս։ * Եւ արդ՝ յայտնի լի 28
ցի ձեզ, զի հեթանոսաց առաքեցաւ
փրկութի այ՝ նոքին եւ լուիցեն։ (* Եւ 29
իբրեւ զայս ասաց՝ արտաքս գնացին 'ի
նմանէ Հրէայքն. որք ունէին 'ի մէջ իւ-
րեանց զբազում խնդիրս։) * Եւ եկաց 30
զերկեամ մի՛ բովանդակ իւրով վարձու.
* Եւ ընդունէր զամենեսեան որ մտանէին 31
առ նա։ * Քարոզէր զարքայութին այ, 32
եւ ուսուցանէր վս տն յսի քսի, անխա-
փան՝ ամենայն համարձակութբ։

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ.
### ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ ԾԱՌԱՅ ԱԲ
յ՟սի ք՟սի , կոչեցեալ առա
քեալ, որոշեալ յաւետարանն
2 ա՟յ . * որ յառաջ խոստացաւ
՚ի ձեռն մարգարէից իւրոց գրովք սըր_
3 բովք, * վ՟ն որդւոյ իւրոյ եղելոյ ՚ի զա_
4 ւակէ դաւթի ը՟ս մարմնոյ . * սահմանե
լոյ որդւոյն ա՟յ զօրութ՟բ ը՟ս հոգւոյն սըր_
բութ՟ե . ՚ի յարութ՟է մեռելոց յ՟սի ք՟սի
5 տ՟ն մերոյ . * որով ընկալաք շնորհս և
առաքելութ՟ի՝ ՚ի հնազանդութ՟ի հաւա
տոց յամենայն հեթանոսս վ՟ն անուան
6 ն՟ր . * յորս և դուք էք կոչեցեալ յ՟սի ք՟սի.
7 * Ամենեցուն որոց էք ՚ի Հռովմ , սիրե
լեաց ա՟յ՝ կոչեցելոց սրբոց , շնորհք ընդ
ձեզ և խաղաղութ՟ի յա՟յ հօրէ մերմէ՝ և
8 ՚ի տ՟նէ յ՟սէ ք՟սէ. * Նախ գոհանամ զա՟յ
իմոյ

իմոյ ՚ի ձեռն յիի քիի վն ձեր ամենեցուն.
զի հաւատք ձեր պատմեալ են ըն ամ աշ-
խարհս: * Վկայ է ինձ ած, զոր պաշ- 9
տեմն հոգւով իմով՝ յաւետարանի որդւոյ
նր, * թէ ոպ զյիշատակս ձեր առնեմ 10
յամ ժամ յաղօթս իմ աղաչելով՝ զի թեր-
ևս երբեք յաջողեսցի ինձ կամօքն այ
գալ առ ձեզ: * Քանզի անձկացեալ եմ 11
տեսանել զձեզ, զի փոխեցից ՚ի ձեզ շը-
նորհս ինչ հոգևորս՝ առ ՚ի հաստատել
զձեզ. * այսինքն է, մխիթարակից լի- 12
նել ձեզ վն ըն միմեանց իմոյ և ձերոց հա-
ւատոց: * Ոչ կամիմ եթէ տգէտ իցէք 13
եղբարք. զի բազում անգամ յօժարեցի
գալ առ ձեզ, և արգելայ մինչև ցայժմ.
զի և ՚ի ձեզ գտից պտուղ ինչ ոպ և յայլ
հեթանոսս: * Քանզի յունաց և բար- 14
բարոսաց՝ իմաստնոց և անմտից պարտա-
պան եմ, * այնպէս՝ որչափ իմովսանն 15
յօժարութբ՝ և ձեզ որ ՚ի հռովմ էք՝
աւետարանել. * Ոչ եթէ ամօթ ինչ 16
համարիմ զաւետարանն. քանզի զօրութի
այ է ՚ի փրկութի ամ հաւատացելոց. նախ
հրէի՝ և ապա հեթանոսի: * Զի արդա- 17
րութին այ նովաւ յայտնի ՚ի հաւատոց
՚ի հաւատս. ոպ և գրեալ է, թէ ար-
դարն ՚ի հաւատոց կեցցէ:
ԸԴ * Քանզի յայտնելոց է բարկութին այ 18
յերկնից ՚ի վր ամ ամբարշտութե և ա-
նիրաւութե մարդկան. որք զճշմարտութին

անի-

19 անիրաւութեամբ ունին. * Վն զի գիտու
թիւն այ յայտնի է ՚ի նսա. քանզի ած իսկ
20 յայտնեաց նց. * Զի աներեւոյթք նր ՚ի
սկզբանէ աշխարհի, արարածովքս իմա
ցեալ տեսանին. այսինքն է՝ մշտնջենա
ւորութի և զօրութի և ածութի նր. զի
ոչ գտանիցին ամենեւին տալ պատասխա
21 նի: * Զի ծանեան զած, և ոչ իբրեւ
զած փառաւորեցին՝ կամ գոհացան.
այլ նանրացան ՚ի խորհուրդս իւրեանց,
և խաւարեցան անմտութբ սիրտք նց:
22 * Զանձինս առ իմաստունս ունէին՝ յի
23 մարեցան: * և փոխեցին զփառս անեղ
ծին այ՝ ՚ի նմանութի պատկերի եղծա
նելի մարդոյ և թռչնոց և չորքոտանեաց
24 և սողնոց: * Վասն որոյ մատնեաց զնս
ած ՚ի ցանկութի սրտից նց ՚ի պղծութի,
անարգել զմարմինս իւրեանց յանձինս
25 իւրեանց: * որք փոխանակեցին զճշմար
տութին այ ընդ ստութե. հնազանդեցան՝
և պաշտեցին զարարածս, և ոչ զարա
րիչն. որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն:
26 * Վասն այնորիկ մատնեաց զնս ած ՚ի կա
րիս անարգութե. զի էգք նց փոխանա
կեցին զպէտս բնականս ՚ի պէտս անբը
27 նականս: * Նոյնպէս և արուացն թո
ղեալ զբնական պէտս իգունն, բորբոքե
ցան ցանկութբք իւրեանց ՚ի միմեանս.
արուք ընդ արուս զխայտառակութի գոր
ծէին, և զդարձ փոխարինին՝ որ պարտ

էր մոլորութե՛ն նոցա՝ յանձինս իւրեանց
ընդունէին։ * Եւ որպէս զի ոչ ընտրեցին 28
զԱծ ունել 'ի գիտուե՛, մատնեաց զնս
Ած 'ի միտս անարգութե՛՝ գործել զա_
նարժանս. * զլցեալս ամ՛ անիրաւութբ՛, 29
պոռնկութբ՛ անզգամութբ՛ ագահութբ՛
չարութբ՛, լի նախանձու, սպանութբ՛
հերձ՝ նենգութբ՛ չարաբարութբ՛, շողոմողք
* չարախօսք Ածատեայք թշնամանօղք 30
ամբարտաւանք ամբարհաւաճք, գտիչք
չարեաց, զծնօղս անարգօղք. * անմիտք 31
ուխտադրուժք անագորոյնք աններողք
անողորմք։ * Որք հասեալ էին Այ իրա 32
ւանցն վրա, եթէ այք զայսպիսին գոր_
ծեն՝ արժանի են մահու. եւ ոչ միայն որ
զայն առնեն, այլ եւ որ կամակիցն լինին
գործելեացն։

## Գ Լ. Բ.

Վասն որոյ առանց պատասխանի ես_ 1
ո՛վ ես ով մարդ՝ որ դատիս։ զի ո_
րով դատիս զընկերն, զանձն քո դատա
պարտես, զի դու զնոյն գործես՝ որով
դատիս։

Լ.Դ. * Բայց գիտեմք՝ եթէ Այ դատաս 2
տանն ճշմարտութբ՛ է 'ի վր՛ այնոցիկ՝ որ
զայնպիսին գործեն։ * Իսկ արդ՝ խոր_ 3
հիցիս զայս ով մարդ, որ դատիս զայ_
նոսիկ որ զայնպիսին գործեն՝ եւ դու ըզ_
նոյն գործես, եթէ դու ապրեցիս



'ի

4 'ի դատաստանաց անտի ա͞յ։ * Եթէ ըզ-
մեծութե͞ քաղցրութե՛ն նր, և զներելոյն
և զերկայնմտութե͞ն արհամարհեցես ·
չգիտիցե՞ս՝ զի քաղցրութի՛ն ա͞յ դէպ քեզ յա-
5 պաշխարութի ածէ։ * Այլ ըստ խստու-
թե քում, և ըստ անզեղջ սրտի՝ գանձես
անձին քում բարկութի՝ յաւուր բար-
կութե և յայտնութե արդար դատաւո-
6 րութե͞ն ա͞յ։ * Որ հատուցանէ իւրաքան-
7 չիւր ը͞ս գործս իւրեանց։ * որ համբե-
րութե͞ն 'ի գործս բարութե՝ զփառս
և զպատիւ և զանեղծութի խնդրեն,
8 զկեանսն յաւիտենից։ * Իսկ որ 'ի հա-
կառակութե անտի են՝ և ապստամբք 'ի
ճշմարտութե͞ն՝ և զհետ երթեալ զանի-
րաւութե, բարկութի և սրտմտութի,
9 * Նեղութի և անձկութի 'ի վ͞ր ա͞մ մար-
դոյ՝ որ գործէ զչար․ նախ հրէի՝ և ապա
10 հեթանոսի։ * Փառք և պատիւ և խա-
ղաղութի ա͞մ՝ որ գործէ զբարի․ նախ
11 հրէի՝ և ապա հեթանոսի։ * Զի ոչ է
ակնառութի առաջի ա͞յ։
12 * Որք միանգամ արտաքոյ օրինացն մե-
ղան, արտաքոյ օրինացն և կորնչին․ և ԱԵ
որք ընդ օրինօքն մեղան, օրինօքն և դա-
13 տեսցին։ * Զի ոչ եթէ որ լսելք օրի-
նացն են՝ արդարացեալ են առաջի ա͞յ,
այլ առնելիք օրինացն արդարասցին։
14 * Այլ յորժամ հեթանոսք որ զօրէնս
ոչ ունին, բնութե͞ զօրինացն գործիցեն,

Նոքա որ զօրէնսն ոչ ունին՝ անձանց իւ-
րեանց իսկ են օրէնք. * որք ցուցանեն 15
զգործս օրինացն գրեալ ՚ի սիրտս իւր-
եանց՝ վկայութիւն միոց իւրեանց, և յան-
դիմանել զմիմեանս ՚ի խորհրդոց իւր-
եանց, կամ թէ պատասխանի իսկ տալ,
* յաւուրն յորում դատիցի ած զգաղտ 16
նիս մարդկան՝ ըստ աւետարանիս իմոյ, ՚ի
ձեռն յսի քսի. * Ապա եթէ դու հրեայ 17
անուանեալ ես, և յեցեալ ես յօրէնսն՝
և պարծիս յած, * և գիտես զկամս նր, 18
և ընտրես զլաւն, և խրատեալ ես յօրէ-
նացն. * վստահ ես յանձն քո առաջնորդ 19
լինել կուրաց՝ լոյս խաւարելոց՝ * խրատ 20
տիչ անզգամաց՝ վարդապետ տղայոց.
ունել զկերպարանս գիտութեան և ճշմար
տութեան օրինացն. * Իսկ արդ՝ որ ուսուցա 21
նես զընկերն, զանձն քո ոչ ուսուցանես.
որ քարոզես չգողանալ՝ գողանաս. * որ 22
ասես չշնալ՝ շնաս. որ գարշիս ՚ի մեհե
նաց՝ զսեղանս կողոպտես. * որ օրինօքն 23
պարծիս՝ յանցանել ըստ օրէնսն զած ա-
նարգես. * Զի անուն այ վս ձեր հայ- 24
հոյի ՚ի մէջ հեթանոսաց որպէս և գրեալ է.
* Թլփատութիւն օգնէ՝ եթէ զօրէնսն պա- 25
հիցես. ապա եթէ յանցաւոր օրինացն
լիցես, թլփատութիւն քո անթլփատութիւն
եղև. * Իսկ եթէ անթլփատութիւնն զի- 26
րաւունս օրինացն պահիցէ. ոչ ապա
քէն անթլփատութիւն նր ՚ի թլփատութիւն

27 համարեսցի։ * Եւ դատեսցի՝ որ ի բնէ
անթլփատութիւն է՝ զօրէնսն կատարելով՝
զքեզ, որ գրովն եւ թլփատութեամբն յանցա
28 ւոր օրինացն իցես։ * Զի ո՛չ եթէ որ
յայտնի հրեայն է, եւ ո՛չ որ յայտնի մարմ
29 նով թլփատութիւն։ * Այլ որ ի ծածուկ
հրեայն է, եւ թլփատութիւն սրտի հոգւով՝
եւ ո՛չ գրով։ որոյ գովութիւն ո՛չ ի մարդկա
նէ է, այլ յԱ͞յ։

## ԳԼ. Գ.

1 Իսկ արդ՝ զի՞նչ աւելի է հրէին, կամ
զի՞նչ օգուտ ի թլփատութենէ անտի։
2 * Բազում ինչ՝ ա͞մ իրօք. նախ այն իսկ՝
զի հաւատարիմ եղեն պատգամքն Ա͞յ։
3 * Իսկ արդ՝ եթէ չէ՛ր հաւատացեալ ո
մանց՝ մի թէ անհաւատութիւն նոցա զԱ͞յ հա
4 ւատսն խափանեսցէ՞ր. քա՛ւ լիցի։ * Արդ՝
եղիցի Ա͞ծ ճշմարիտ՝ եւ ա͞մ մարդ սուտ.
ո͞ց եւ գրեալ է. որպէս արդար եղիցիս ի
բանս քո, եւ յաղթեսցես ի դատել քեզ։
5 * Իսկ արդ՝ եթէ ապիրատութիւն մեր զԱ͞յ
արդարութիւն յանդիման կացուցանէ՝
զի՞նչ ասեմք. մի թէ անիրաւ ի՞նչ է Ա͞ծ՝
6 որ ածէ զբարկութիւն։ * ըստ մարդկութեան ա
սեմ. քա՛ւ լիցի։ ապա թէ ո՛չ՝ զիա՞րդ դա
7 տի Ա͞ծ զաշխարհ։ * Զի եթէ ճշմար
տութիւն Ա͞յ յիմում ստութեանն առաւելաւ ի
փառս նորա, զի՞ եւս ես իբրեւ զմեղաւոր
8 դատիմ։ * Եւ կամ թէ՝ ո՞չ հայհոյիմքն,

եւ որպ̃ ասեն զմենջ ոմանք ասել, թէ ա-
րասցուք զչարս՝ զի եկեսցէ բարի. որոց
դատաստանքն յիրաւի են։ * Իսկ արդ՝ 9
ի՞նչ իւ՞իք առաւել լիցեմք. ապաքէն եւ ոչ
իւիք. քանզի յառաջագոյն իսկ մեղադիր
եղեաք Հրէից եւ հեթանոսաց՝ ամենե
ցուն ը̃ մեղօք լինել։ * Որպէս եւ գրե̃լ 10
է. թէ ոչո՛ք է արդար՝ եւ ոչ մի. * եւ ոչ 11
գոյ՝ որ իմանայ, եւ ոչո՛ք է՝ որ խնդրէ զա̃ծ։
* Ամենեքեան խոտորեցան, ՚ի միասին 12
անպիտանացան. ոչո՛ք է որ առնէ զքաղց
րութ̃ի, եւ ոչո՛ք է մինչեւ ՚ի մի։ * Գերեզ 13
ման բաց է կոկորդ նց̃, լեզուօք իւրեանց
նենգաւորք եղեն։ Թոյնք իժից ՚ի ներ-
քոյ շրթանց նոցա։ * որոց բերանք անի 14
ծիւք եւ դառնութ̃ լի են։ * Երագ են 15
ոտք նց̃ հեղուլ զարիւն։ * Բեկումն եւ 16
թշուառութի ՚ի ճանապարհս նոցա. * եւ 17
զճանապարհս խաղաղութ̃ե ոչ ծանեան։
* Ո՛չ է երկիւղ այ̃ առաջի աչաց նոցա։ 18
* Բայց գիտեմք՝ որ ինչ միանգամ օ- 19
րէնքն ասեն, այնոցիկ որ ընդ օրինօքն են
ասեն. զի ամ̃ բերան խցցի, եւ դատա
պարտ լիցի ամ̃ աշխարհ այ̃։ * Զի ՚ի 20
գործոց օրինաց ոչ արդարասցի ամ̃ մար
մին առաջի նր̃. քանզի օրինօքն է գիտութ̃ի
մեղաց։ * Բայց արդ՝ առանց օրինացն 21
իսկ արդարութ̃ի այ̃ յայտնեալ է՝ վկայ
եալ յօրինաց անտի՝ եւ ՚ի մարգարէից։
* Բանզի արդարութ̃ի այ̃ ՚ի հաւատոց 22
ան-

ԲԴ

անտի յ՟ս՟ի ք՟ս՟ի յա՟մ հաւատացեալս . և
23 ոչի՛նչ է խտիր ։ * Քանզի ամենեքեան
մեղան . և նուաղեալ են 'ի փառաց ա՟ն_
24 տի ա՟յ ։ * Եւ արդարանան ձրի նորին
շնորհօք 'ի ձեռն փրկութե՟ն որ 'ի ք՟ս յ՟ս .
25 * զոր յառաջն եդ ա՟ծ 'ի քաւութի 'ի ձեռն
հաւատոց արեամբն ն՟ր , 'ի հանդէս ար_
դարութե՟ն ն՟ր վ՟ս թողութե՟ն յառաջագոյն
26 մեղացն գործելոց , * 'ի ներելն ա՟յ` 'ի
հանդէս արդարութե՟ն ն՟ր 'ի ժամանակի
յայսմիկ . զի եղիցի նա արդար , և ար_
դարացուցէ զայն` որ 'ի հաւատոցն յ՟ս՟ի ։
27 * Իսկ արդ` ո՞ւր են պարծանքն . արգե_
լան ։ յորո՞ց օրինաց , 'ի գործոց անտի՞ .
28 ո՛չ , այլ 'ի հաւատոցն օրինաց ։ * Քանզի հա
մարիմք հաւատովք արդարանալ մար_
29 դոյ` առանց գործոց օրինաց ։ * Եթէ
հրէի՞ց միայն իցէ ա՟ծ` և հեթանոսաց ո՛չ .
30 այո՛ և հեթանոսաց ։ * Զի եթէ մի է
ա՟ծ` որ արդարացուցանէ զթլփատութի՟ն
'ի հաւատոց , ապա և զանթլփատութի՟ն
31 նովին հաւատովք ։ * Արդ` զօրէնսն ինչ
խափանե՞մք հաւատովքս , քա՛ւ լիցի .
այլ զօրէնսն հաստատեմք ։

## ԳԼ. Դ ։

1 Իսկ արդ` զի՞նչ ասիցեմք գտանելն աբ_ ԲՁ
րահամու նահապետին մերոյ ըստ
2 մարմնոյ ։ * Զի եթէ աբրահամու գոր_
ծովք էր արդարացեալ` ունել ունէր պար_
ծանս`

ծանս՝ այլ ոչ առ ա͞ծ։ * Իսկ զինչ ա- 3
սիցէ գիր. հաւատաց աբրահամ յա͞ծ՝
և համարեցաւ նմա յարդարութի։ * Բայց 4
այնմ որ գործիցէն, ոչ համարին վարձքն
ը͞ս շնորհաց՝ այլ ը͞ս պարտեաց։ * Իսկ այնմ 5
որ ոչն գործիցէ՝ բայց հաւատայցէ յայն
որ արդարացուցանէ զամբարիշտն, հա-
մարին հաւատք նր յարդարութի։ * Որ- 6
պէս և դաւիթ ասէ զերանութի մարդոյ՝
որում ա͞ծ համարի արդարութի առանց
գործոց։ * Երանի՛ որոց թողան անօրէ- 7
նութիւնք, և որոց ծածկեցան մեղք իւ-
րեանց։ * Երանեալ է այր՝ որում ոչ 8
համարեսցի տ͞ր զմեղս նր։ * Արդ՝ ե- 9
րանութիւնս այս ՚ի վր թլփատութե՞ն է,
եթէ ՚ի վր անթլփատութե. քանզի ա-
սեմք՝ եթէ համարեցան աբրահամու
հաւատքն յարդարութի. * Արդ զիա՞րդ 10
համարեցան. մինչդեռ ՚ի թլփատութե՞
էր՝ եթէ յանթլփատութե. ոչ ՚ի թլ-
փատութեն, այլ յանթլփատութե։ * Եւ 11
նշանակ առ զթլփատութիւնն, կնիք արդա
րութե հաւատոցն՝ որ յանթլփատութե ան-
դր. * զի եղիցի նա հայր ա͞մ հաւատա 12
ցելոց, որ յանթլփատութե անդ իցեն.
առ ՚ի համարելոյ և նց արդարութի. և
հայր թլփատութե՝ որոց ոչ ՚ի թլփա
տութե անտի և եթ, այլ և որոց երթայ-
ցեն ըստ հետս անթլփատութե հաւատոց
հօր մերոյ աբրահամու։

 Գ.Դ.

13 * Զի ոչ եթէ օրինօքն են աւետիքն Ա-
բրահամու՝ եւ զաւակի նորա ժառանգ լի-
նել աշխարհի, այլ 'ի հաւատոցն ար-
14 դարութէ։ * Զի եթէ որք յօրինացն են,
ժառանգք իցեն. ապա ընդունայն են
15 հաւատքն՝ եւ դատարկ աւետիքն։ * Քան-
զի օրէնքն զբարկութի գործեն. բայց ուր
16 ոչ են օրէնք՝ եւ ոչ յանցանք ինչ։ * Վ̃
այնորիկ 'ի հաւատոց անտի, զի ըստ շնոր-
հացն իցէ. առ 'ի լինելոյ հաստատուն
աւետեացն ամ̃ զաւակին. ոչ այնմ
միայն՝ որ յօրինաց անտի, այլ եւ այնմ
որ 'ի հաւատոցն Աբրահամու, որ է հայր
17 մեր ամենեցուն. * որպ̃ եւ գրեալ է, թէ
հայր ազգաց բազմաց արարի զքեզ ա-
ռաջի այ̃. որում հաւատաց՝ եթէ կեն-
դանի առնէ զմեռեալս, եւ կոչէ զչգոյսն
18 իբրեւ զգոյս։ * Որ յանյոյսն յուսով հա-
ւատաց լինել նմա հայր ազգաց բազմաց.
որպ̃ եւ ասացաւն, թէ այնպէս եղիցի զա-
19 ւակ քո։ * Եւ նա ոչ երկմտեաց 'ի հա-
ւատոցն. թէպէտ եւ հայեցաւ 'ի մարմին
իւր այնուհետեւ իբրեւ 'ի մեռեալ. քանզի
զհարիւրամենիւք ուրեմն էր. եւ 'ի մե-
20 ռելութի յարգանդին Սառայի։ * Բայց
յաւետեացն այ̃ ոչ երկմտեաց անհաւա-
տութբ̃. այլ զօրացաւ հաւատովք, ետ
21 փառս այ̃. * Եւ հաստատեցաւ 'ի միտս
իւր, եթէ որ խոստացաւն՝ կարող է առ-
22 նել։ * Վասն որոյ համարեցաւ նմա յար-

դարութիւն։ * Արդ` զի գրեցաւ, ոչ եթէ 23
վասն նորա միայն` եթէ համարեցաւ նմա.
* այլ և վասն մեր` որոց համարելոց է. 24
որք հաւատամք յայն` որ յարոյց զՅիսուս
զՏէր մեր 'ի մեռելոց. * որ մատնեցաւ 25
վասն յանցանաց մերոց. և յարեաւ վասն
զմեզ արդարացուցանելոյ.

## ԳԼ. Ե.

Այսուհետև արդարացեալք 'ի հաւա 1
տոց անտի, խաղաղութիւն կալցուք առ
Աստուած 'ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. * որով 2
և զընծայութիւն ընկալաք հաւատովք 'ի
շնորհս յայսոսիկ` յորում կամք, և պար-
ծիմք յուսով փառացն Աստուծոյ. * Եւ ոչ 3
այսչափ միայն, այլ և պարծիմք ևս 'ի
նեղութիւնս մեր. քանզի գիտեմք, եթէ
նեղութիւնք զհամբերութիւն գործեն, * համ- 4
բերութիւն զհանդէս, հանդէս զյոյս.
* յոյս` ոչ երբէք ամաչեցուցանէ. զի 5
սէրն Աստուծոյ սփռեալ է 'ի սիրտս մեր` 'ի ձեռն
հոգւոյն սրբոյ` որ տուաւ մեզ։ * Զի մինչ 6
դեռ տկարքն էաք` Քրիստոս վասն մեր 'ի ժամա
նակի 'ի վերայ ամբարշտաց մեռաւ. * Զի 7
վասն արդարոյ հազիւ ոք մեռանիցի. այլ
վասն բարւոյ թերևս համարձակիցի ոք մե-
ռանել. * Յայտնեաց Աստուած զսէրն իւր 'ի 8
մեզ. զի մինչդեռ մեղաւորքն էաք,
* Քրիստոս վասն մեր մեռաւ. որչափ ևս առա- 9
ւել յարդարանալս մերում այժմիկ ա-

 րե

րեամբն նր՝ ապրեսցուք նովաւ ՚ի բար-
10 կութենէ անտի. * Զի եթէ մինչ թշնա
միքն էաք՝ հաշտեցաք ընդ այ մահուամբ
որդւոյ նր. որչափ եւս առաւել ՚ի հաշ
տելս մերում՝ ապրեսցուք կենօքն նր։
11 * Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք
եւս յած ՚ի ձեռն տն մերոյ յի քի. ո-
րով եւ զհաշտութին իսկ ընկալաք։
12 * Զի ոպ ՚ի միոջէ մարդոյ մեղք յաշ- Դ.Ջ
խարհ մտին՝ եւ ՚ի մեղաց անտի մահ. եւ
այնպ յամ մարդիկ տարածեցաւ մահ՝
13 որով ամենեքին մեղան։ * Քանզի մինչեւ
յօրէնսն մեղք էին յաշխարհի. բայց
մեղք ոչ համարին, ուր օրէնք ոչ իցեն։
14 * Այլ թագաւորեաց մահ յադամայ
մինչեւ ցմովսէս՝ եւ ՚ի վր չյանցուցելոցն,
ըստ նմանութե յանցուածոցն ադամայ.
15 որ է օրինակ հանդերձելոյն։ * Այլ
ոչ ոպ յանցանքն՝ նոյնպէս եւ շնորհքն.
զի եթէ միոյն յանցանօք բազումք մե-
ռան, որչափ եւս առաւել շնորհքն այ եւ
պարգեւքն՝ շնորհօք միոյն մարդոյ յի քի
16 ՚ի բազումս առաւելան։ * Եւ ոչ ոպ ՚ի միո
ջէ յանցուցելոյն պարգեւքս. զի դա
տաստանն ՚ի միոջէ յանցուածոյ անտի
՚ի դատապարտութի. այլ շնորհքն ՚ի բազ-
17 մաց յանցուածոցն յարդարութի։ * Զի
եթէ ՚ի միոյն յանցանաց մահ թագա
ւորեաց միովն, որչափ եւս առաւել՝ որք
զառաւելութի շնորհաց եւ զպարգեւաց

 ար

արդարութեն առնուցուն, կենօք թագա-
ւորեսցեն 'ի ձեռն միոյն յի քի ։ * Ա- 18
պա ուրեմն որպ միոյն յանցանօք յամ մար-
դիկ դատապարտութի, նոյնպէս և միոյն
արդարութբ՝ յամ մարդիկ արդարութի
կենաց ։ * Զի որպ անհնազանդութբ 19
միոյն մարդոյ՝ մեղաւորք բազումք եղեն ·
նոյնպէս և հնազանդութբ միոյն · ար-
դարք բազումք եղիցին ։ * Բայց օրէնքն 'ի 20
ներքս անկան, զի յանցանքն բազմաս-
ցին · զի ուր առաւել եղեն մեղքն, ա-
ռաւել ևս յաւելան շնորհքն ։ * Զի որպ 21
թագաւորեցին մեղքն 'ի մահու անդ ·
նոյնպս և շնորհքն թագաւորեսցեն ար-
դարութբ 'ի կեանս յաւիտենից 'ի ձեռն
Կ.Ջ. յի քի տն մերոյ ։

## ԳԼ. Զ.

Իսկ արդ՝ զի՞նչ ասիցեմք, յաճախես 1
ցո՞ւք 'ի մեղսն՝ զի շնորհքն բազմաս
ցին ։ * Քա՛ւ լիցի ։ որք մեռաք մեղացն, 2
զիա՞րդ տակաւին 'ի նմին կեցցեմք ։ * Ե- 3
թէ ո՞չ գիտէք՝ զի որ միանգամ մկրտե
ցաք 'ի քս յս՝ 'ի մահ նորա մկրտեցաք ·
* Թաղեցաք ընդ նմին մկրտութբն 'ի մահ ։ 4
զի որպէս յարեաւ քս 'ի մեռելոց փառօք
հօր · նոյնպէս և մեք 'ի նորոգութեն կե-
նաց շրջեսցուք ։ * Զի եթէ տնկակից 5
եղեաք նմանութե մահու նր · այլ և յա-
րութե նր լինիցիմք ։ * Զայս գիտասջի՛ք՝ 6

 զի

զի հին մարդն մեր խաչակից եղեւ նորա,
զի խափանեսցի մարմին մեղացն, մի՛ եւս
7 ծառայել մեզ մեղացն։ * Զի որ մեռա
նին՝ արդարացեալ է ՚ի մեղաց անտի։
8 * Իսկ եթէ մեռաք ընդ Քրիստոսի, հաւատամք՝
9 թէ եւ կեցցուք ընդ նմա։ * Գիտեմք եթէ
Քրիստոս յարուցեալ է ՚ի մեռելոց. այսուհե
տեւ ոչ մեռանի, եւ մահ նմա ոչ եւս տիրէ։
10 * Զի որ մեռաւն՝ մեղացն մեռաւ մի
անգամ, եւ որ կենդանին է՝ կենդանի
11 է Աստուծոյ։ * Այնպէս եւ դուք համարեսջի՛ք
զանձինս մեռեալս մեղացն, եւ կենդա
նիս Աստուծոյ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր։
12 * Մի՛ այսուհետեւ թագաւորեսցեն մեղք ԴԿ
՚ի մահկանացու մարմինս ձեր՝ հնազանդ
13 լինել ցանկութեանց նորա։ * Եւ մի՛ պատրաս
տէք զանդամս ձեր զէն անիրաւութեան
մեղացն. այլ պատրաստեցէ՛ք զանձինս
ձեր Աստուծոյ՝ որպէս ՚ի մեռելոց ՚ի կենդանիս. եւ
զանդամս ձեր զէն արդարութեան Աստուծոյ։
14 * Զի մեղք ձեզ ոչ տիրեսցեն. քանզի
15 ոչ էք ընդ օրինօք՝ այլ ընդ շնորհօք։ * Իսկ
արդ՝ զի՞նչ, մեղիցո՞ւք՝ զի չե՛մք ընդ օրի
16 նօք՝ այլ ընդ շնորհօք. քաւ լիցի։ * Ոչ գի
տէք՝ թէ որում պատրաստէք զանձինս
ձեր ծառայս ՚ի հնազանդութիւն, ծառայ
էք, որում հնազանդիքն, եթէ մեղաց՝
՚ի մահ, եւ եթէ ՚ի հնազանդութիւն արդա
17 րութեան՝ ՚ի կեանս։ * Այլ շնորհք Աստուծոյ.
զի էիք ծառայք մեղաց՝ հնազանդեցայք
՚ի

'ի սրտէ՝ որում աւանդեցայք յառակ
վարդապետութե՛ն։ * Արդ՝ ազատացեալք 18
'ի մեղաց՝ ծառայեցէք արդարութեա՛ն։
* Մարդկօրէն ասեմ վ͞ս տկարութե՛ն մար- 19
մնոյ ձերոյ. զի ո͞պ պատրաստեցիք զան-
դամս ձեր ծառայս պղծութե՛ն եւ անօրէ-
նութե՛ն յանօրէնութի՛ւն. նոյնպէս եւ այժմ
պատրաստեցէք զանդամս ձեր ծառայս
արդարութե՛ն 'ի սրբութի՛ւն։ * Զի մինչ 20
ծառայքն էիք մեղաց՝ ազատացեալ էիք
յարդարութենէն։ * Իսկ արդ՝ զի՞նչ պտուղ 21
ունէիք յայնժամ, որովք այժմդ զամօթի
հարեալ էք. զի վախճան նոցա մահ է։
* Բայց արդ ազատացեալք 'ի մեղացն՝ եւ 22
ծառայեալք ա͞յ՝ ունիք զպտուղ ձեր 'ի
սրբութի՛ւն, եւ վախճան նորա կեանք յաւի-
տենից։ * Զի թոշակն մեղաց մահ է. 23
այլ շնորհքն ա͞յ կեանք յաւիտենից 'ի ք͞ս
յ͞ս 'ի տ͞ր մեր։

## ԳԼ. Է։

Դ. Դ. Եթէ ո՞չ գիտէք եղբարք, զի ընդ գի- 1
տունս օրինաց խօսիմ. զի օրէնք տի-
րեն մարդոյ՝ որչափ ժամանակս կենդա-
նի իցէ։ * Քանզի կին առնակին 'ի կեն- 2
դանի այր իւր կապեալ կայ օրինօք։ իսկ
եթէ մեռցի այրն, արձակեալ է յօրինաց
առն։ * Ապա ուրեմն մինչ կենդանի է 3
այրն, շուն կոչի՝ եթէ լինիցի առն այ-
լում։ եւ եթէ մեռցի այրն՝ ազատ է յօ-

րինացն, չհամարեալ շուն՝ եթէ լինիցի
4 առն այլում։ * Այսուհետև և դուք եղ
բարք՝ մեռայք օրինացն մարմնովն քի,
լինել այլում որ 'ի մեռելոցն յարուցեալ
5 է, զի պտղաբեր լիցուք այ։ * Քանզի
մինչ էաքն մարմնով, կարիք մեղաց՝ որ օ
րինօքն էին՝ զօրանային յանդամս մեր,
առ 'ի պտղաբեր առնելոյ զմեզ մահու։
6 * Բայց այժմ դատարկացաք յօրինաց
անտի. քանզի մեռաք այնմիկ՝ որով ըմբռ
նեալն էաք, առ 'ի ծառայել մեզ նորո
գութբ հոգւոյն՝ և ոչ հնութբ գրոյն։
7 * Իսկ արդ զի՞նչ ասեմք. օրէնքն մեղք
իցեն. քաւ լիցի։ այլ զմեղս ոչ գիտէի,
եթէ ոչ օրինօք. և զցանկութիւն ոչ ճա
նաչէի, եթէ ոչ օրինացն էր ասացեալ՝
8 մի՛ ցանկանայցես։ * Պատճառս առին
մեղքն պատուիրանաւն, և գործեցին
յիս զամ ցանկութի. զի առանց օրինացն
9 մեղքն մեռեալ էին։ * Այլ ես առանց օրի
նացն երբեմն էի կենդանի. այլ իբրև
եհաս յիս պատուիրանն, մեղքն կենդա
10 նացան, * և ես մեռայ. և գտաւ ինձ
պատուիրանն՝ որ 'ի կեանս էր, նոյն 'ի
11 մահ։ * Զի մեղացն պատճառս առեալ
պատուիրանաւն՝ խաբեցին զիս, և նո
վին սպանին։
12 * Այսուհետև օրէնք սբ են՝ և պատուի Դ.Զ
13 րանն սբ և արդար և բարերար։ * Իսկ
արդ՝ ինձ բարին մահ եղև. քաւ լիցի.



այլ

այլ մեղքն · զի երեւեսցին մեղքն բար-
ւոյն գործել ինձ զմահ · զի եղիցին յոյժ
առաւելութեամբ մեղքն մեղաւոր ՚ի ձեռն
պատուիրանին։ * Գիտեմք զի օրէնքն 14
հոգեւոր են · այլ ես մարմնաւոր եմ, ընդ
մեղօք վաճառեալ։ * Զի զոր գործեմն 15
ոչ գիտեմ, ոչ եթէ զոր կամիմն՝ զայն առ-
նեմ, այլ զոր ատեամն՝ զայն գործեմ։
* Ապա թէ զոր ոչն կամիմ՝ զայն առ- 16
նեմ, վկայեմ օրինացն՝ եթէ բարւոք են։
* Այլ արդ ոչ եթէ ես գործեմ զայն, 17
այլ բնակեալ յիս մեղքն։ * Գիտեմ զի 18
ոչ բնակեալ է յիս, այսինքն ՚ի մարմնի
իմում, բարի ինչ · զի կամքն առաջի կան
ինձ · եւ առնել զբարին ոչ։ * Զի ոչ է 19
թէ՝ զոր կամիմ զբարին՝ առնեմ, այլ
զոր ոչն կամիմ զչարն, զայն գործեմ։
* Ապա եթէ զոր ոչն կամիմ՝ զայն առ- 20
նեմ, ոչ եւս ես առնեմ զայն՝ այլ բնա
կեալ յիս մեղքն։ * Եւ արդ՝ գտանեմ 21
զօրէնս այնորիկ՝ որ կամիցին առնել յիս
զբարին · եւ ինձ չարն առաջի կայ։ * Հա 22
ճեմ ընդ օրէնսն այ ըստ ներքին մարդոյն ·
* Բայց տեսանեմ այլ օրէնս յանդամս 23
իմ, զինեալ հակառակ օրինաց մտաց
իմոց · եւ գերեալ զիս օրինօքն մեղաց՝ որ
են յանդամս իմ։ * Այր մի տառապեալ 24
եմ ես՝ ո՞վ ապրեցուսցէ զիս ՚ի մարմնոյ
աստի մահու։ * այլ շնորհքն այ ՚ի ձեռն 25
յի քի տն մերոյ։

 Բայց

Ապա ուրեմն ես ինքնին մտօք խնամք ծառայեմ օրինացն ա͞յ · և մարմնով օրինացն մեղաց ։

## ԳԼ. Ը.

1 Ապա այսպէս իցէ՝ ոչինչ դատապար
2 տութիւն է այնոցիկ՝ որ 'ի ք͞ս յ͞ս · * Զի
օրէնք հոգւոյն կենաց 'ի ք͞ս յ͞ս ազատե
3 ցին զիս յօրինաց մեղացն և մահու ։ * Զի
որ անհնարին էր օրինացն՝ որով տկարա
նայր մարմնով · ա͞ծ զորդին իւր առա
քեաց 'ի նմանութիւն մարմնոյ մեղաց՝ և վ͞ս
մեղաց, և դատապարտեաց զմեղս 'ի
4 մարմնի անդ · * զի արդարութիւն օրինացն
կատարեսցի 'ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ
5 գնայցեմք՝ այլ ըստ հոգւոյն ։ * Զի որք
ըստ մարմնոյն են՝ զմարմնոյն խորհին, և
6 որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն ։ * Զի խոր
հուրդ մարմնոյ՝ մահ է · և խորհուրդ հոգ
7 ւոյն, կեանք և խաղաղութիւն ։ * Վասնզի
խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է յա͞ծ՝
զի օրինացն ա͞յ ոչ հնազանդի · նաև կա
8 րէ իսկ ոչ ։ * Զի որ մարմնովքն են, ա͞յ
9 հաճոյ լինել ոչ կարեն ։ * Բայց դուք
ոչ էք մարմնով՝ այլ հոգւով, եթէ իցէ
հոգին ա͞յ 'ի ձեզ բնակեալ · ապա եթէ
10 ոք զհոգի ք͞սի ոչ ունի, սա չէ՛ ն͞ր ։ * Իսկ
եթէ ք͞ս 'ի ձեզ է՝ ապա մարմին մեռեալ
է վ͞ս մեղաց · և հոգին կենդանի է վ͞ս
11 արդարութեան ։ * Եթէ հոգի այնորիկ՝


որ

որ յարոյցն զյ՟ս ՚ի մեռելոց, բնակեալ է
՚ի ձեզ. ապա եւ որ յարոյց զք՟ս ՚ի մե-
ռելոց՝ կենդանացուսցէ զմահկանացու
մարմինս ձեր բնակեալ հոգւովն իւրով
Կ.Զ. ՚ի ձեզ։
* Այսուհետեւ եղբարք՝ պարտապան 12
եմք ոչ մարմնով ըստ մարմնոյ կեալ. * զի 13
թէ ըստ մարմնոյ կեցէք՝ մեռանելոց էք.
իսկ եթէ հոգւով զգործս մարմնոյ սպա
նանիցէք՝ կեցջիք. * Զի որ հոգւովն այ՟ 14
վարին, նոքա են որդիք այ՟։ * Զի ոչ 15
առէք զհոգին ծառայութեան միւսանգամ
յերկիւղ, այլ առէք զհոգին որդեգրու-
թեան. որով աղաղակեմք աբբայ, հայր.
* Նոյն ինքն հոգին վկայէ հոգւոյս մե- 16
րում, եթէ եմք որդիք այ՟. * Իսկ եթէ 17
որդիք, ապա եւ ժառանգք. ժառանգք
այ՟՝ եւ ժառանգակիցք ք՟սի. եթէ չարչա
րանացն կցորդ լինիմք, եւ փառացն հա-
ղորդ լինելոց եմք։ * Ինձ այսպէս թուի՝ 18
եթէ ոչ են արժանի չարչարանք ժամա
նակիս հանդերձելոց փառացն՝ որ յայտ-
նելոց են ՚ի մեզ։ * Զի ակնկալութիւն ա- 19
րարածոց՝ յայտնութեան որդւոցն այ՟ սպասէ։
* Զի ընդունայնութեան արարածք հնազան 20
դեցան, ոչ իւրեանց կամաւ՝ այլ վ՟ն այ-
նորիկ՝ որ հնազանդեցոյցն յուսով. * զի եւ 21
ինքեանք իսկ արարածքն ազատեսցին ՚ի
ծառայութենէ ապականութեան՝ յազատու-
թիւն փառաց որդւոցն այ՟։ * Քանզի գի- 22

տեմք, եթէ ամ արարածք հեծեն և երկ-
23 նեն մինչև ցայժմ։ * Եւ ոչ այսչափ
միայն. այլև մեք իսկ՝ որ զպտուղ հոգ-
ւոյն ունիմք, անձամբ յանձինս մեր հե-
ծեմք՝ որդէգրութեան ակն կալեալ փրր-
24 կութեան մարմնոյ մերոյ։ * Զի յուսով ապ-
րեցաք. այլ յոյս տեսանելի՝ չէ յոյս. զի
25 զոր տեսանէ ոք՝ զի՞ եւս յուսայ։ * Ապա
թէ զոր ոչն տեսանեմք յուսամք, համ-
26 բերութեամբ ակն ունիմք։ * Նոյնպէս և
հոգին ՚ի թիկունս հասանէ տկարութեան
մերում. զի զոր կամքն յաղօթս՝ որպէս ար-
ժան իցէ՝ ոչ գիտեմք. այլ ինքնին հո-
գին բարեխօս լինի ՚ի հեծութիւնս անմռ-
27 ռունչս. * Բայց որ քննէն զսիրտս՝ գի-
տէ զի՛նչ խորհուրդ է հոգւոյն. զի ըստ այ
28 բարեխօսէ վս սրբոց։ * Բայց գիտեմք՝
եթէ որոց սիրեն զած՝ յամի գործակից
լինի ՚ի բարիս՝ որք հրաւիրանաւն կոչե-
29 ցան։ * Զի զորս յառաջն ճանաչէր՝ յա-
ռաջագոյն և հրաւիրեաց կերպարանա-
կից լինել պատկերի որդւոյն իւրոյ. զի
եղիցի նա անդրանիկ ՚ի մէջ եղբարց բազ-
30 մաց։ * Եւ զորս յառաջագոյնն հրաւի-
րեաց՝ զնոսին և կոչեաց. և զորս կոչ-
եացն, զնոսին և արդարացոյց. և զորս
արդարացոյցն, զնոսին և փառաւորս ա-
31 րար։ * Իսկ արդ զի՞նչ ասեմք առ այս.
եթէ ած ՚ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հա-
32 կառակ։ * որ յիւր որդին ոչ խնայեաց.

այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա.
զիա՞րդ ոչ նովաւ հանդերձ զամենայն շնորհեսցէ
մեզ։ *Ո՞վ իցէ որ մեղադիր լինիցի ընտ- 33
րելոց Աստուծոյ. Աստուած է որ արդարացուցանէ,
*իսկ արդ՝ ո՞վ է որ դատապարտ առնի- 34
ցէ։ Քրիստոս Յիսուս՝ որ մեռաւն, մանաւանդ թէ
յարուցեալ իսկ է. և է ընդ աջմէ Աստուծոյ, որ
և բարեխօս իսկ է վասն մեր։ *Արդ՝ ո՞վ 35
մեկնեսցէ զմեզ ՚ի սիրոյն Քրիստոսի, նեղութիւն՝
թէ անձկութիւն՝ թէ հալածանք՝ թէ սով՝
թէ մերկութիւն՝ թէ վիշտք՝ թէ սուր.
*որպէս և գրեալ է. վասն քո մեռանիմք զօր- 36
հանապազ, համարեցաք իբրև զոչխար
՚ի սպանդ։ *Այլ յայսմ ամենայնի առաւել 37
յաղթեմք նովաւ որ սիրեացն զմեզ։
*Բանզի հաստատեալ եմ, եթէ՝ ոչ 38
մահ և ոչ կեանք և ոչ հրեշտակք և ոչ իշ-
խանութիւնք, և ոչ որկանս և ոչ հանդեր-
ձեալքն, և ոչ զօրութիւնք, *և ոչ բարձրութիւն 39
և ոչ խորութիւն, և ոչ այլ ինչ արարած՝
կարէ մեկնել զմեզ ՚ի սիրոյ Աստուծոյ,
որ ՚ի Քրիստոս Յիսուս ՚ի Տէր մեր։

## ԳԼ. Թ.

Էդ Ճշմարտութիւն ասեմ ՚ի Քրիստոս և ոչ ստեմ, 1
վկայէ ինձ միտք իմ ՚ի Հոգի Սուրբ.
*զի տրտմութիւն է ինձ յոյժ՝ և անպակաս 2
ցաւք սրտի իմոյ։ *Զի ուխտիւք խնդ- 3
րէի ես իսկ ինքնին նզովել լինել ՚ի Քրիստոսէ,
վասն եղբարց իմոց և ազգականաց ըստ մար-

4 մոյ, * որ են իէ̃լացիք. որոց որդեգրու-
թիւն և փառքն և կտակարանքն և օրէնս
5 դրութիւնն և պաշտօնն և աւետիքն, * ո-
րոց հարքն, յորոց և քս̃ ըս̃ մարմնոյն, որ
է ՚ի վր̃ ամենեցուն ա̃ծ օրհնեալ յաւի
6 տեանս. ամէն։ * Ոչ ինչ է մարդ՝ եթէ
անկած լինիցի բանն ա̃յ. զի ոչ ամենե
քեան՝ որ յիսրայելէն են, նոքա իէ̃լեանք
7 իցեն. * և ոչ որ զաւակն աբրահամու
են՝ ամենեքեան որդիք իցեն. այլ իսա
8 հակաւ կոչեսցի քեզ զաւակ։ * Այսին
քն՝ ոչ եթէ որ որդիք մարմնոյն են, են
որդիք ա̃յ. այլ որդիք աւետեացն համա
9 րին ՚ի զաւակ։ * Վասն զի աւետեաց իսկ
է բանս այս, եթէ ՚ի ժամանակի յայս-
10 միկ եկից՝ և եղիցի որդի սառայի։ * Եւ
ոչ այնչափ միայն՝ այլ և ՚ի ռեբեկայ
՚ի միոջէ անկողնոյ սահակայ հօր մե-
11 րոյ։ * Զի մինչև ծնեալ էին, և մինչև
բարի ինչ՝ կամ չար գործեալ էին. զի ըստ
ընտրութեան առաջադրութիւն ա̃յ հաստա
12 տեսցի. * ոչ ՚ի գործոց՝ այլ յայնմանէ
13 որ կոչեացն՝ ասացաւ նմա. * Թէ երէցն
կրտսերոյն ծառայեսցէ. ո̃պ և գրեալ
է, Թէ զյակոբ սիրեցի, և զեսաւ ա-
14 տեցի։ * Իսկ արդ՝ զի՞նչ ասեմք. մի թէ
15 անիրաւութի՞ իցէ ա̃յ. քաւ լիցի։ * Զի
մովսէսի ասէ. ողորմեցայց՝ որում ողոր
մեցայցն, և գթացայց՝ յորս գթացայցն։
16 * Ապա ոչ ըստ այնմ ինչ է՝ որ կամիցին,

եւ ոչ ըստ այնմ՝ որ ընթանայցէ. այլ
ըստ ա՟յ՝ որ ողորմին։
ԵՁ * Քանզի ասէ գիր ցփարաւոն. թէ վ՟ն 17
այսորիկ զարթուցի զքեզ, զի 'ի քեզ ցու-
ցից զզօրութի՟ իմ, եւ պատմեսցի անուն
իմ ընդ ա՟մ երկիր։ * Ապա ուրեմն՝ ում 18
կամի ողորմի ,. եւ ում կամի՝ խստանայ։
* Իսկ արդ՝ ասիցես , թէ մեղ եւս զի՞ 19
դնէ՝ զի կամաց ն՟ր ոչ ոք կայ հակառակ։
* Իսկ արդ՝ դու ո՞վ ես մարդ՝ որ պատաս 20
խանի տաս ա՟յ. մի թէ ասիցէ՞ ստեղծ
ուածն ցստեղծիչն՝ թէ ընդէ՞ր այդպէս
արարեր զիս։ * Եթէ ոչ ունիցի իշխա 21
նութի՟ բրուտն կաւոյն, 'ի նմին զանգ-
ուածոյ առնել անօթ՝ զոմն 'ի պատիւ եւ
զոմն յանարգանս։ * Ապա եթէ կամէր 22
ա՟ծ ցուցանել զբարկութի՟, եւ յայտնի առ-
նել զզօրութի՟ իւր. որ համբերէին բազում
երկայնմտութ՟բ անօթոցն բարկութե՟՝
պատրաստելոցն 'ի կորուստ։ * Զի 23
յայտնի արասցէ զմեծութի՟ փառաց իւ-
րոց 'ի վ՟ր անօթոցն ողորմութե՟, զոր պատ-
րաստեաց 'ի փառս։ * Զորս եւ կոչեաց 24
զմեզ, ոչ միայն 'ի հրէից՝ այլ եւ 'ի հեթա
նոսաց. * որ՟պ եւ յովսէէ ասէ. կոչեցից՝ 25
զոր ոչ ժողովուրդն իմ, ժողովուրդ իմ.
եւ զչսիրեցեալն՝ սիրեցեալ, (եւ զչողոր
մեալն՝ ողորմեալ.) * Եւ եղիցի 'ի տեղւոջ 26
յորում ասացաւ ն՟ց՝ թէ ոչ ժողովուրդ
իմ դուք, անդ կոչեսցին նոքա որդիք ա՟յ


կեն

27 կենդանւոյ: * Եսայի աղաղակէ վ՟ն Ի՟էլի.
եթէ իցէ թիւ որդւոցն Ի՟էլի իբրեւ զաւազ
ծովու՝ սակաւ ինչ մնացորդք մնասցեն:
28 * Զի բան մի հակիրճ եւ համառօտ ար-
դարութ՟բ . զբանն հակիրճ արասցէ Տ՟ր
29 'ի վերայ երկրի. * Եւ որպէս ասէ Եսայի.
թէ ոչ Տ՟ն զօրութեանց թողեալ էր մեզ
զաւակ, իբրեւ զսոդոմ լինէաք՝ եւ զգո-
մորայ նմանէաք:
30 * Իսկ արդ զի՞նչ ասիցեմք . զի հեթա- ԶԿ
նոսք՝ որ ոչ երթային զհետ արդարութ՟ն՝
հասին արդարութեան, այնմ արդարութ՟ն՝
31 որ 'ի հաւատոց անտի: * Իսկ Իսրայէլ եր-
թայր զհետ օրինացն արդարութ՟ն՝ եւ յօ-
րէնս արդարութեանն ոչ ժամանեաց.
32 * Ընդէ՞ր. զի ոչ 'ի հաւատոց՝ այլ իբրեւ
'ի գործոց օրինաց. քանզի գթեցին նոքա
33 առ վիմին գայթագղութ՟ն . * որպէս
եւ գրեալ է . ահաւասիկ դնեմ 'ի Սիոն
քար գայթագղութեան եւ վէմ գլորման, եւ
ամ՟ որ հաւատասցէ 'ի նա՝ մի՛ ամաչեսցէ:

## ԳԼ. Ժ.

1 Եղբարք՝ խնդրանք սրտի եւ աղօթք առ
2 Ա՟ծ, վ՟ն նոցա են 'ի փրկութի. * քանզի
վկայեմ նոցա՝ թէ նախանձ Ա՟յ ունին,
3 այլ ոչ գիտութ՟բ. * Զի ոչ գիտեն զԱ՟յ
արդարութիւն, եւ զիւրեանցն խնդրեն
կացուցանել. զի արդարութեանն Ա՟յ ոչ
4 հնազանդեցան. * Քանզի կատարած

օրինացն քս̃ է՝ յարդարութիւն ամ̃ հաւա
տացելոց։
ՁԴ * Մովսէս գրէ զարդարութիւնն, որ յօ 5
րինաց անտի է. թէ արասցէ զայն մարդ՝
կեցցէ նովին։ * Իսկ զհաւատոցն արդա 6
րութենէ այսպէս ասէ. մի՛ ասիցես ՚ի սրտի
քում, ո՞վ ելանիցէ յերկինս, այսինքն է՝
զքս̃ իջուցանել. * կամ ո՞վ իջանիցէ յան 7
դունդս, այսինքն է՝ զքս̃ հանել ՚ի մե
ռելոց։ * Այլ զի՞նչ ասէ գիր. մերձ է 8
բանն ՚ի բերան քո՝ և ՚ի սրտի քում է.
այսինքն է՝ բանն հաւատոց զոր քարո
զեմք։ * Զի եթէ խոստովանեսցես բե 9
րանով քով տր̃ զյս̃. և հաւատասցես ՚ի
սրտի քում, թէ ած̃ յարոյց զնա ՚ի մե
ռելոց, կեցցես։ * Զի սրտիւ հաւատայք 10
յարդարութիւն, և բերանով խոստովա
նիք ՚ի փրկութիւն։ * Քանզի ասէ գիր. 11
ամ̃ որ հաւատասցէ ՚ի նա. մի՛ ամաչես
ցէ։ * Զի ոչ գոյ խտիր Հրէի և հեթա 12
նոսի. քանզի նոյն տր̃ է ամենեցուն, բա
ւական յամենեսին՝ որք կարդան առ նա։
* Զի ամ̃՝ որ կարդասցէ զանուն տն̃՝ 13
կեցցէ։ * Իսկ զիա՞րդ կարդասցեն՝ յոր 14
ոչն հաւատացին. կամ զիա՞րդ հաւատաս
ցեն՝ որում ոչ լուան. կամ զիա՞րդ լուի
ցեն առանց ուրուք քարոզելոյ. * կամ 15
զիա՞րդ քարոզեսցեն, եթէ ոչ առաքես
ցին. որպէս և գրեալ է. իբրև զի գեղե
ցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութե

16 և աւետարանչացն բարութ։ *Բայց ոչ
ամենեքեան հնազանդ եղեն աւետարա
նին. եսայի ասացեալ է. Տէր՝ ո հաւա
17 տաց լրոյ մերում։ *Ապա ուրեմն՝ հա
ւատք ՚ի լսելոյ են, և լուր ՚ի բանէն քի։ Վ.Զ
18 *Բայց ասեմ. մի թէ ոչ լուան. մանա
ւանդ՝ զի ընդ ամ երկիր ել բարբառ նց,
19 և ընդ ծագս աշխարհաց խօսք նց։ *Բայց
ասեմ, մի թէ իսրայէլ ո՞չ լուաւ. նախ
մովսէս ասէ, ես նախանձեցուցից զձեզ
ոչինչ ժողովրդեամբ, և ազգաւ անմի
20 տաւ զկծեցուցից զձեզ։ *Բայց եսայի
համարձակի իսկ՝ և ասէ. գտայ այնո
ցիկ՝ որ զիս ոչ խնդրէին. յայտնի ե
ղէ այնոցիկ՝ որ զինէն ոչ հարցանէին։
21 *Բայց առ իսրայէլ ասէ. զօր ամ ձր
գեցի զձեռս իմ առ ժողովուրդ անհա
ւան՝ և հակառակօղ։

## ԳԼ. ԺԱ.

1 Իսկ արդ՝ ասեմ, մի թէ մերժեաց ած ԶԶ
զժողովուրդ իւր. քաւ լիցի. քանզի և
ես իսրայէլացի եմ, ՚ի զաւակէ աբրա
2 համու յազգէ բենիամենի։ *Ոչ մեր
ժեաց ած զժողովուրդ իւր, զոր յառաջն
ծանեաւ. թէ ոչ գիտէք յեղիա զի՞նչ
ասէ գիր. որպ ամբաստան լինի այ զիս
3 րայէլէ։ *Տէ՛ր՝ զմարգարէս քո կոտո
րեցին, և զսեղանս քո կործանեցին. ես
մնացի միայն, և խնդրեն զանձն իմ։

Այլ զի՛նչ ասէ նմա պատասխանին. 4
Թողի ինձ ասէ՝ եօթն հազար այր, որ
ոչ կրկնեցին ծունր բահաղու։ Նոյն_ 5
պէս եւ յայսմ ժամանակի մնացորդք՝ ըստ
ընտրութեան շնորհացն եղեն։ Իսկ եթէ 6
շնորհօք՝ ոչ եւս ի գործոց. ապա թէ ոչ՝
շնորհքն՝ ոչ եւս շնորհք լինին։ Իսկ 7
արդ՝ զոր խնդրէրն Իէլ, այնմ ոչ եհաս.
բայց ընտրութիւնն եհաս. եւ այլքն կուրա
ցան. որպէս եւ գրեալ է. Ետ նոցա ած հոգի 8
յիմարութեան. աչս՝ որովք ոչ տեսանիցեն,
եւ ականջս՝ որովք ոչ լուիցեն, մինչեւ ցայ_
սօր ժամանակի։ Եւ դաւիթ ասէ. Ե_ 9
ղիցին սեղանք նոցա յորոգայթ եւ ի յորս եւ
ի գայթագղութիւն եւ ի հատուցումն նո_
ցին։ Խաւարեսցին աչք նոցա զի մի՛ տես_ 10
ցեն. եւ զթիկունս նոցա հանապազ կորա
ցո։ Իսկ արդ ասեմ, միթէ վն այնո 11
րիկ յանցեան՝ զի կործանեսցին. քաւ լի_
ցի։ Այլ նոցա յանցանօքն փրկութիւն հեթա
նոսաց. զի նախանձ արկցէ նոցա։ Իսկ 12
եթէ յանցանքն նոցա մեծութիւն աշխարհի,
եւ պարտութիւն նոցա մեծութիւն հեթանո
սաց. որչափ եւս առաւել լրումն նոցա։
ԽԿ Այլ ձեզ ասեմ հեթանոսացդ՝ ցորչափ 13
ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ,
զպաշտօնն իմ փառաւոր առնեմ. զի 14
թերեւս նախանձ արկից նոցա մարմնոյ իմոյ՝
եւ ապրեցուցից զոմանս ի նոցանէ։ Զի 15
եթէ մերժումն նոցա հաշտութիւն աշխարհի
է.

է. իսկ ընդունելութիւն զի՞նչ իցէ, եթէ
16 ոչ կենդանութիւն ՚ի մեռելոց: *Իսկ եթէ
սկիզբն սուրբ է՝ և զանգուածն. և եթէ
17 արմատն՝ ապա և ոստքն: *Եթէ յոս-
տոց անտի ոմանք փշրեցան, և դու որ
ձիթենիդ վայրենի էիր՝ պատուաստե-
ցար ՚ի նոսա, և բաժանորդ եղեր արմա-
18 տոյն՝ և պարարտութեան ձիթենւոյն, *մի՛
պարծիր առ ոստովքն. ապա եթէ պար-
ծիցիս՝ ոչ եթէ դու զարմատն ՚ի վեր ու-
19 նիս, այլ արմատն զքեզ: *Իսկ արդ՝ ա-
սիցես, ոստքն փշրեցան՝ զի ես պատուաս-
20 տեցայց: *Բարւոք է՝ անհաւատութեն
փշրեցան, և դու հաւատովք հաստա-
տեցար. մի՛ հպարտանար՝ այլ երկի՛ր:
21 *Զի եթէ ած ՚ի բուն ոստսն ոչ խնայ-
եաց, գուցէ երբեք և ՚ի քեզ ոչ խնայես-
22 ցէ: *Արդ՝ տես զքաղցրութիւն և զսաստ-
կութիւն այ. ՚ի վր կործանելոցն սաստ-
կութիւն, և ՚ի վր քո քաղցրութիւն այ, եթէ
կացցես ՚ի նմին քաղցրութեան. ապա թէ
23 ոչ՝ և դու կոտորեսցիս: *Եւ նոքա ե-
թէ ոչ ՚ի նմին անհաւատութեան կայցեն,
պատուաստեսցին. զի կարող է ած միւ-
24 սանգամ պատուաստել զնս: *Զի ե-
թէ դու ՚ի բուն ՚ի վայրենի ձիթենւոյ
անտի հատար՝ և յանբուն ՚ի բարի ձի-
թենւոյն պատուաստեցար, որչափ ևս
առաւել նոքա՝ որ բունքն իսկ են՝ պատ-
ուաստեսցին յիւրեանց ձիթենւոյն:

ԷԲ *Ո՛չ կամիմ եղբարք եթէ ագէտք իցէք 25
խորհրդոյս այսմիկ, զի մի՛ յանձինս ձեր
իցէք իմաստունք, զի կուրութի՟ փոքր 'ի
շատէ եղեւ իսրայէլի. մինչեւ լրումն հեթա
նոսաց մտցէ, *եւ ապա ա՟մ իէ՟լ կեցցէ. 26
ո՟պ եւ գրեալ է. Եկեսցէ 'ի Սիովնէ փրկ
կիչ՝ եւ դարձուսցէ զամբարշտութիւն 'ի
Յակովբայ։ *Եւ այս նոցա՝ որ յինէն 27
ուխտ, յորժամ բարձից զմեղս նոցա։
*Ըստ աւետարանին թշնամիք են վասն 28
ձեր, ըստ ընտրութե՟ն սիրելիք վ՟ն հարցն։
*քանզի անզեղջ են շնորհք՝ եւ կոչումն 29
ա՟յ։ *Զի ո՟պ եւ դուք երբեմն ապըս 30
տամբ էիք յա՟յ, եւ արդ ողորմութի՟ գտէք
առ նո՟ց ապստամբութբ՟ն, *Նոյնպէս եւ 31
նոքա այժմ ապստամբ եղեն առ ձերում
ողորմութբ՟դ. զի եւ նոքա ողորմութի՟ գըտ
ցեն։ *Քանզի արգել ա՟ծ զամենեսին 32
յանհաւանութե՟, զի ամենեցուն ողոր
մեսցի։ *Ո՜վ խորք մեծութե՟ եւ իմաս 33
տութե՟ եւ գիտութե՟ն ա՟յ. որպէ՛ս զի առանց
քննելոյ են դատաստանք նո՟ր, եւ առանց
զննելոյ են ճանապարհք նո՟ր։ *Զի ո՛վ 34
գիտաց զմիտս տ՟ն, կամ ո՛վ խորհրդակից
եղեւ նմա. *կամ ո՛վ ետ նմա փոխ, եւ առ 35
նուցու զփոխարէն 'ի նմանէ. *Զի 'ի 36
նմանէ՝ եւ նովաւ՝ եւ 'ի նոյն ա՟մ։ Նմա
Գ.Զ. փառք յաւիտեանս. ամէն։

## ԳԼ. ԺԲ.

1 Աղաչեմ զձեզ եղբարք գթութե̃քն ա̃յ՝
պատրաստել զմարմինս ձեր պատա
րագ կենդանի ս̃բ՝ հաճոյ ա̃յ՝ զխօսուն
2 պաշտօնդ ձեր. * Եւ մի՛ կերպարանիք կեր-
պարանօք աշխարհիս այսորիկ. այլ նո-
րոգեցարո՛ւք ՚ի նորոգութի̃ միտաց ձերոց,
առ ՚ի քննել ձեզ զլաւն, և եթէ զինչ
են կամքն ա̃յ, բարին և հաճոյն և կա-
3 տարեալն։ * Զայս ասեմ շնորհօքն ա̃յ
որ տուեալ են ինձ, ա̃մի որ է ՚ի ձեզ. մի՛
առաւել ինչ խորհել քան զարժանն խոր
հելոյ. այլ խորհել ՚ի զգաստանալ իւ-
րաքանչիւր՝ ո̃պ և բաժանեաց ա̃ծ չափ
4 հաւատոց։ * Որպէս ՚ի միում մարմնի
անդամս բազումս ունիմք. և անդամքն
5 ա̃մ ոչ զնոյն գործ ունին։ * Նոյնպէս
և բազումքս մի մարմին եմք ՚ի ք̃ս. այլ
իւրաքանչիւր միմեանց անդամք եմք։
6 * Բայց ունիմք մեք շնորհս ը̃ս շնորհացն,
որ տուեալ են մեզ ազգս ազգս. եթէ
մարգարէութի̃՝ ըստ չափուն հաւատոց,
7 * եթէ պաշտօն՝ ըստ պաշտամանն, եթէ
որ ուսուցանէն՝ ըստ վարդապետութե̃ն.
8 * եթէ որ մխիթարէն՝ ը̃ս մխիթարութե̃ն.
որ առատն է՝ զուարթութե̃բ, որ վերակա
ցուն՝ է փութով, որ ողորմին՝ լռջմտու
9 թե̃բ։ * Սէր առանց կեղծաւորութե̃, ա-
10 տել զչար, զհետ երթալ բարեաց. * Յեղ


բայ

բայրսիրութեն առ միմեանս գթածք. 'ի
պատիւ զմիմեամբք ելանել. * 'ի փոյթ՝ 11
մի՛ վեհերոտք. հոգւով եռացէ՛ք, Տն ծա-
ռայեցէ՛ք, * յուսով խնդացէ՛ք, նեղութե 12
համբերեցէ՛ք, աղօթից ստէպ կացէ՛ք.
* 'ի պէտս սրբոց հաղորդեցարո՛ւք. ըղ- 13
ջիւրասիրութեն զհետ երթա՛յք. * օրհ- 14
նեցէ՛ք զհալածիչս ձեր, օրհնեցէ՛ք և մի՛
անիծանէք. * Խնդալ ընդ խնդացողս, 15
լալ ընդ լացօղս. * զնոյն միմեանց խոր- 16
հիցի՛ք. մի՛ ամբարտաւանէք՝ այլ ը̄ խո-
նարհս զիջանիցի՛ք. մի՛ լինիք իմաստունք
յանձինս ձեր. * մի՛ ումեք չարի չար հա- 17
տուցանէք. խորհեցարո՛ւք զբարիս ա-
ռաջի ա̄մ մարդկան. * Եթէ հնար ինչ 18
իցէ ձեզ՝ ը̄ ա̄մ մարդկան զխաղաղութի
կալջի՛ք. * Մի՛ զանձանց վրէժ խնդրէք 19
սիրելիք, այլ տո՛ւք տեղի բարկութե.
քանզի գրեալ է. իմ է վրէժխնդրութի,
և ես հատուցից ասէ Տր. * Այլ եթէ 20
քաղցեալ իցէ թշնամին քո՝ հա՛ց տուր նմա,
և եթէ ծարաւի՝ ջո՛ւր տուր նմա. զայս
արարեալ՝ կայծակունս հրոյ կուտեսցես
'ի գլուխ նր. * Մի՛ յաղթիր 'ի չարէն. 21
այլ յաղթեա՛ բարեաւն չարին.

## ԳԼ. ԺԳ.

Ամենայն անձն որ ը̄ իշխանութը՝ իցէ՝ 1
'ի հնազանդութե կացցէ. քանզի ո՛չ
ուստեք է իշխանութի, եթէ ոչ յԱյ. և


որ

2 որ են, յԱյ կարգեալ են։ * Ապա-
հետեւ որ հակառակ կայ իշխանութեան,
Այ հրամանին հակառակ կայ. եւ որք
հակառակն կան, անձանց դատաստանս
3 ընդունին. * զի իշխանքն ոչ են յերկիւղ
բարեաց գործոց՝ այլ չարաց։ Կամի՞ս
չերկնչել յիշխանութենէ անտի, զբարիս
գործեա, եւ ընկալցիս գովութիւն ի նմա
4 նէ. * զի Այ պաշտօնեայ է քեզ ի բա-
րիս։ Ապա եթէ չար գործիցես, երկի՛ր.
զի ոչ եթէ վայրապար ածեալ է սուսեր
ընդ մէջ։ Այ սպասաւոր է՝ վրէժխնդիր ի
բարկութիւն, այնմ՝ որ զչարն գործիցէ։
5 * Վասն որոյ հարկ է հնազանդ լինել՝
ոչ միայն վն բարկութեանն, այլեւ վն մտացն
6 խղճի։ * Վն այնորիկ եւ հարկս հարկա-
նէք, զի Այ սպասաւորք են ի նոյն կան-
7 խեալք։ * Արդ՝ հատուցէք իւրաքան-
չիւր զպարտս. որում զհարկ՝ զհարկն,
որում զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝
զերկիւղն, որում զպատիւ՝ զպատիւն։
8 * Եւ մի՛ ումեք պարտապան գտանիցիք,
բայց զմիմեանս սիրելդ. զի որ սիրէ զըն-
9 կերն, զօրէնսն կատարէ, * զմի՛ շնայցես,
եւ մի՛ սպանանիցես, եւ մի՛ գողանայցես,
եւ մի՛ սուտ վկայիցես, եւ մի՛ ցանկանայ-
ցես. եւ եթէ այլ ինչ պատուիրան է՝ յայս
բան բովանդակի, եթէ սիրեսցես զըն-
10 կեր քո իբրեւ զանձն քո։ * Սէր ընկերի
իւրում չար ոչ առնէ. լրումն օրինացն
սէր

ներ է։ * Եւ զայս գիտասջի՛ք զի ժա- 11
մանակիս. զի արդ ժամ իսկ է մեզ ՚ի
քնոյ զարթնուլ. զի այժմ մերձ է մեզ
փրկութիւն քան յորժամ հաւատացաքն.
* Գիշերն մերժեցաւ՝ եւ տիւն մերձեցաւ. 12
՚ի բաց արասցուք այսուհետեւ զգործսն
խաւարի, եւ զգեցցուք զզէնսն լուսոյ։
* Իբրեւ ՚ի տուընջեան զգաստացեալք շրր 13
ջեսցուք. մի՛ անառակութեամբ՝ եւ արբեցու
թեամբ, եւ մի՛ խառն անկողնովք՝ եւ պղծու
թեամբ, եւ մի՛ նախանձու՝ եւ հակառակու
թեամբ. * այլ զգեցարուք զտ՟ր յ՟ս ք՟ս, եւ 14
մարմնոյ խնամ մի՛ տանիք ՚ի ցանկութիւնս։

## ԳԼ. ԺԴ.

ԱՅԼ զտկարացեալն ՚ի հաւատս ընկա 1
լարուք՝ մի՛ խղճիւ երկմտութեանց։
* Ոմն հաւատայ ուտել զա՟մ. եւ որ հի- 2
ւանդն է, բանջար կերիցէ։ * Որ ու- 3
տէն, զայն՝ որ ոչն ուտէ՝ մի՛ անգոսնես
ցէ. եւ որ ոչն ուտէ, զայն՝ որ ուտէն, մի՛
դատեսցի. քանզի ա՟ծ զնա ընկալաւ։
* Դու ո՞վ ես՝ որ դատիս զայլոյ ծառայ. 4
իւրում տ՟ն կայ՝ կամ անկանի. բայց կաց-
ցէ՝ զի կարող է տ՟ր հաստատել զնա։ * Ոմն 5
պահէ օր ըստ օրէ՝ եւ ոմն պահէ զօրհանա
պազ. իւրաքանչիւրոք զիւր միտս հաճես
ցէ։ * Որ խորհի զօրն, տ՟ն խորհի. եւ որ 6
ոչն խորհի զօրն, տ՟ն չխորհի. եւ որ ու-
տէ, տ՟ն ուտէ, եւ գոհանայ զա՟յ. եւ որ

ոչն ուտէ, տ̃ն չուտէ, և գոհանայ զա̃յ։
7 * Զի ոչ ոք ՚ի մէնջ անձամբ կեայ, և ոչ
8 անձամբ մեռանի։ * Եթէ կեամք՝ տ̃ն
կեամք, և եթէ մեռանիմք՝ տ̃ն մեռա
նիմք. և արդ՝ եթէ կեամք և եթէ մե_
9 ռանիմք՝ տ̃ն եմք։ * Վանզի ՚ի նոյն իսկ
և ք̃ս մեռաւ և եկեաց, զի մեռելոց և
կենդանեաց առ հասարակ տիրեսցէ։
10 * Դու զի՞ դատիս զեղբայր քո. կամ ընդէ՞ր
անգոսնես զեղբայր քո։ Քանզի ամենեքին
11 կալոց եմք առաջի ատենին ք̃սի։ * Զի
գրեալ է. կենդանի եմ ես ասէ տ̃ր. զի
ինձ կրկնեսցի ա̃մ ծունր, և ա̃մ լեզու
12 խոստովան լիցի ա̃յ։ * Ապա ուրեմն իւ_
րաքանչիւրոք ՚ի մէնջ ընդ անձին համարս
13 տացէ ա̃յ։ * Այսուհետև մի՛ զմիմեանս
դատեսցուք. այլ առաւել զայս դիք ՚ի
մտի՝ չդնել գայթագղութ̃ի եղբօրն։
14 * Զայս գիտեմ, և հաստատեալ եմ ՚ի
ք̃ս յ̃ս, զի ոչի՛նչ է պիղծ նովաւ. բայց
այնմ, որ համարիցի ոք ինչ պիղծ՝ նմա է
15 պիղծ։ * Զի եթէ վասն կերակրոյ եղ_
բայրն քո տրտմի, ոչ ևս սիրով գնացեր.
մի՛ կերակրովն քով զնա կորուսաներ. վ̃ս
16 որոյ ք̃սն մեռաւ։ * Մի՛ հայհոյեսցի բա_
17 րին ձեր. * Զի ոչ է արքայութ̃ին ա̃յ կերա
կուր և ըմպելի, այլ արդարութ̃ի և խնդութ̃ի
18 և խաղաղութ̃ի ՚ի հոգին ս̃բ։ * Զի որ
յայսմ ծառայէ ք̃սի, հաճոյ է ա̃յ՝ և ըն_
19 տիր մարդկան։ * Ապա այսուհետև զղ

հե՛տ

հետ երթիցուք զխաղաղութե՛, և զշի-
նութե՛ որ առ միմիանս։ * Մի՛ վս կե- 20
րակրոյ քակեր զգործ այ։ ամ ինչ սբ է.
այլ չար այնմ մարդոյ է՝ որ խղճիւն ու-
տիցէ. * Լաւ է ոչ ուտել միս, և ոչ ըմ- 21
պել գինի. և ոչ՝ որով եղբայրն քո գայ-
թագղի կամ գթէ կամ տկարանայ։ * Դու- 22
ապաքէն հաւատս ունիս, կա՛լ առանձինն
առաջի այ. երանի՛ որ ոչ դատիցի զանձն,
որով զընկերն փորձիցէ։ * Բայց որ խղճ- 23
ձէն, թէպէտ և ուտիցէ՝ դատապարտեալ
է՝ զի ոչ ըստ հաւատոց, զի ամ ինչ որ ոչ
՚ի հաւատոց է՝ մեղք են։ Այլ այնմ
որ կարողն է հաստատել զձեզ ըստ աւե-
տարանիս իմում և ըստ քարոզութեն յսի
քսի, ըս յայտնութե խորհրդոյն՝ ժամանա-
կօքն յաւիտենից լռեցելոյ, և յայտնելոյ
այժմիկ ՚ի ձեռն գրոց մարգարէականաց՝
ըստ հրամանի միշտնջենաւորին այ, ՚ի հնա-
զանդութի հաւատոց, յամ հեթանոս
ծանուցելոյ՝ միայնոյ իմաստնոյն այ, ՚ի
ձեռն յսի քսի, որում փառք յաւիտեանս.
ամէն։

## ԳԼ. ԺԵ.

ԷԳ Պարտ է մեզ որ կարօղս եմք՝ զտկարու- 1
թի տկարացն բառնալ. և մի՛ ան-
ձանց և եթ հաճոյ լինել։ * Այլ իւրա- 2
քանչիւրոք ՚ի մէնջ ընկերին հաճոյ լիցի
՚ի բարիս՝ վս շինութե։ * Քանզի և քս ոչ 3



եթէ

եթէ անձին հաճոյ եղև, այլ որպ և գրե-
ալ է. նախատինք նախատողաց քոց ան-
4 կան ՚ի վր իմ։ * Քանզի որ ինչ գրեցաւն՝
՚ի մեր վարդապետութիւն գրեցաւ. զի
համբերութեամբ և մխիթարութեամբ գրոց.
5 զյոյսն ունիցիմք։ * Այլ ած համբե
րութեան և մխիթարութեան, տացէ ձեզ
զնոյն խորհել ընդ միմեանս ըստ յի քի.
6 * զի միաբանութեամբ ՚ի մի բերան փառաւոր
առնիցէք զած, և զհայր տն մերոյ յի
7 քի։ * Վասն որոյ ընկալարուք զմիմ
եանս. որպ և քս ընկալաւ զձեզ ՚ի փառս
8 այ։ * Այլ ասեմ, թէ քսի սպասաւոր
թլփատութեան լինել վս ճշմարտութեան
այ էր, առ ՚ի հաստատութեան առնելոյ զա-
9 ւետիս հարցն. * Այլ հեթանոսք վս ո-
ղորմութեան փառաւոր առնեն զած. որպ և
գրեալ է. վս այսորիկ գոհացայց զքէն
՚ի հեթանոսս, և անուան քում սաղմոս
10 ասացից։ * Եւ դարձեալ ասէ. ուրախ
լերուք հեթանոսք ընդ ժողովրդեան նր։
11 * Եւ դարձեալ՝ թէ օրհնեցէք ամ հե-
թանոսք զտր, և գովեցէք զնա ամ ժո-
12 ղովուրդք։ * Եւ դարձեալ Եսայի ասէ.
եղիցի արմատն յեսսեայ. և որ կանգնե
լոցն է իշխան հեթանոսաց, ՚ի նա հեթա
13 նոսք յուսասցին։ * Այլ ած յուսոյ լց
ուսցէ զձեզ ամ խնդութեամբ և խաղաղու
թեամբ, առաւելուլ ձեզ յուսով զօրութեամբ
հոգւոյն սբյ։

ԵԴ * Հաստատեալ եմ և ես ինքնին եղ 14
բարք իմ՝ վ՟ն ձեր, զի դուք լի էք բա-
րութ՟բ. լի էք ա՟մ գիտութ՟բ, կարող էք
զմիմեանս խրատել։ * Այլ համարձա 15
կագոյնս գրեցի առ ձեզ եղբարք իմ՝
մասամբ ’ի շատէ, իբրև յիշեցուցանելով
ձեզ վասն շնորհացն որ տուեալ են ինձ
յա՟յ. * լինել ինձ սպասաւոր յ՟ի ք՟ի ’ի 16
հեթանոսս, ըղձակերտս առնել զաւե
տարանն ա՟յ, զի եղիցի պատարագն հե-
թանոսաց ընդունելի՝ սրբեալ հոգւովն
սրբով։ * Ունիմ այսուհետև պարծանս 17
’ի ք՟ս յ՟ս առ ա՟ծ. * քանզի ոչ իշխեմ խօ- 18
սել ինչ՝ զոր ոչ գործեաց ք՟ս ինև ’ի հնա
զանդութ՟ի հեթանոսաց՝ բանիւք և ար-
դեամբք, * զօրութ՟բ նշանաց և արուես 19
տից, զօրութ՟բ հոգւոյն ս՟բյ. որ՟պ ինձ յե-
րուսաղէմէ և շուրջ՝ մինչև ’ի կողմանս
իլիւրիկեցւոց լնուլ զաւետարանն ք՟ի։
* Այնպէս առաւատացեալ յաւետարա 20
նել, ոչ ուր անուանեցաւ ք՟ս, զի մի՛ ի բե-
րան յայլոյ հիման վ՟ր շինիցեմ. այլ որպէս
և գրեալ է, * թէ որոց ոչ պատմեցաւ 21
վ՟ն ն՟ր՝ տեսցեն. և որոց ոչ իցէ լուեալ՝
’ի միտ առցեն։ * Վասն որոյ շատ խա- 22
փանեցայ գալ առ ձեզ։ * Բայց արդ՝ 23
ոչ ևս գոյ ինձ տեղի ’ի կողմանս յայսո
սիկ. և անձուկ յոյժ ունիմ ’ի բազում
ամաց գալ առ ձեզ։ * Յորժամ անցա 24
նիցեմ ’ի սպանիա, ակն ունիմ յանցա

նելն առ նն՝ տեսանել զձեզ. և ՚ի ձէնջ
յուղարկիլ անդր, եթէ նախ իսկ փոքր
25 ՚ի շատէ ձեօք լցայց։ * Բայց այժմ եր-
26 թամ յեղմ պաշտել զսբսն։ * Քանզի
հաճոյ թուեցաւ մակեդոնացւոցն և ա-
քայեցւոցն հաղորդութիւն ինչ առնել ընդ
27 աղքատս սրբոցն՝ որ են յեղմ։ * Հա-
ճոյ թուեցաւ, քանզի և պարտապան իսկ
են նց. զի եթէ հոգևորացն նց հաղորդ
եղեն հեթանոսք, պարտին և մարմնա
28 ւորացն կցորդ լինել նց։ * Արդ՝ զայս
կատարեալ՝ և կնքեալ զպտուղ նց, ան-
29 ցից առ ձեօք ՚ի սպանիա։ * Զայս գի-
տեմ, զի ՚ի գալն առ ձեզ, լրութբ օրհ-
նութե աւետարանին քսի եկից։
30 * Աղաչեմ զձեզ եղբարք ՚ի ձեռն տն ԷԵ
մերոյ յսի քսի և սիրով հոգւոյն, պա-
տերազմակից լինել ինձ յաղօթս վս իմ
31 առ ած. * զի ապրեցայց յապստամբա
ցն, որ ՚ի հրէաստանի են. և պաշտօնն
իմ որ յեղմ, ընդունելի լիցի սրբոցն.
32 * զի խնդութբ եկեալ առ ձեզ ՚ի կամս
33 այ, հանգեայց ընդ ձեզ։ * Եւ ած խա-
ղաղութե եղիցի ընդ ձեզ ամենեսին.
ամէն։

## ԳԼ. ԺԶ.

1 Յանձն առնեմ ձեզ զփիբէ զքոյր մեր,
որ է սպասաւոր եկեղեցւոյն կենք-
2 րայցւոց* . զի զնա ընկալջիք ՚ի տր արժա

նի սրբոց, և վերակացու լինիջիք նմա՝
յոր պէտս իցէ և կոչեսցէ զձեզ. քանզի
և նա վերակացու եղև բազմաց, և ինձ
իսկ գլխովին։ * Ողջոյն տաջիք պրիսկ 3
եայ և ակուիղեայ՝ գործակցաց իմոց ՚ի
ք͞ս յ͞ս. * որք ընդ անձին իմոյ զիւրեանց 4
պարանոցս մատուցին. զորոց ոչ ես մի_
այն գոհանամ, այլ և ա͞մ եկեղեցիք հե_
թանոսաց։ * և առ տնին եկեղեցւոյն 5
ն͞ց։ Ողջոյն տաջիք եպենետեայ սիրելւոյ
իմոյ՝ որ է պտուղ ասիացւոց ՚ի ք͞ս։ * Ող_ 6
ջոյն տաջիք մարեայ՝ որ բազում վաստակս
վաստակեաց ՚ի ձեզ։ * Ողջոյն տաջիք 7
անդրոնիկեայ և յունեայ ազգականաց
իմոց՝ և գերեկցաց, որք երևելիքն իսկ
են յառաքեալս. որք և յառաջ իսկ քան
զիս եղեն ՚ի ք͞ս։ * Ողջոյն տաջիք ամպ_ 8
ղեայ սիրելւոյ իմոյ ՚ի տ͞ր։ * Ողջոյն տա_ 9
ջիք ուրբանեայ գործակցի իմոյ ՚ի տ͞ր, և
ստաքեայ սիրելւոյ իմոյ։ * Ողջոյն տա_ 10
ջիք ապեղեայ՝ որ ընտիրն է ՚ի տ͞ր։ * Ող_ 11
ջոյն տաջիք նոցա, որ յարիստաբուղեայ
տանէ անտի են. ողջոյն տաջիք հերով_
դիոնեայ ազգականի իմոյ։ ողջոյն տա_
ջիք այնոցիկ՝ որք ՚ի նարկիսեայ տանէն
իցեն ՚ի տ͞ր. * Ողջոյն տաջիք տրիփանեայ 12
և տրիփոսեայ վաստակաւորաց ՚ի տ͞ր։
ողջոյն տաջիք պերսիդեայ սիրելւոյ, որ
բազում վաստակս վաստակեաց ՚ի տ͞ր։
* Ողջոյն տաջիք ռուփեայ ընտրելոյ ՚ի 13


տ͞ր,

14 տ՟ր, և մօր նորա և իմոյ։ * Ողջոյն տա֊
ջիք ասինկրիտեայ՝ փղենգոնտեայ՝ եր֊
մեայ՝ պատրոբայ՝ երմեայ, և որ ընդ նոսա
15 եղբարք իցեն։ * Ողջոյն տաջիք փիղող֊
գեայ՝ յուղեայ՝ ներեայ՝ և քեռ նորա. և
ողիմպեայ, և որ ընդ նոսա սուրբք ամե֊
16 նեքին իցեն։ * Ողջոյն տաջիք միմեանց
'ի համբուրս սրբութե։ ողջոյն տան ձեզ
ամենայն եկեղեցիք ք՟սի։
17 * Աղաչեմ զձեզ եղբարք՝ գիտել զայն֊ ԻՋ
պիսիսն, որ հերձուածս և գայթագղու֊
թիս առնիցեն արտաքոյ վարդապետու֊
թեն՝ զոր դուք ուսայք. և խորշեցա֊
18 րուք 'ի նոցանէ։ * Զի այնպիսիքն տ՟ն
մերում ք՟սի ոչ ծառայեն, այլ իւրեանց
որովայնի. և քաղցրաբանութ՟բ և օրհ֊
19 նութ՟բ պատրեն զսիրտս անմեղաց։ * Զի
ձեր հնազանդութին առ ամենեսեան հա֊
սեալ է. և արդ՝ 'ի ձեզ ուրախ եմ. բայց
կամիմ զձեզ իմաստունս լինել 'ի բարիս
20 և անմեղս 'ի չարիս։ * Իսկ ա՟ծ խաղա֊
ղութ՟ե խորտակեսցէ զսատանայ ը՟ն ոտիւք
ձերովք մերձ ը՟ն մերձ։ շնորհք տ՟ն մերոյ
21 յ՟ի ք՟սի ը՟ն ձեզ։ * Ողջոյն տայ ձեզ տիմո֊
թէոս եղբայր և գործակից իմ, և ղու֊
կիոս, և յասոնի, և սոսիպատրոս՝ ազ֊
22 գականք իմ։ * Ողջոյն տամ ձեզ՝ և ես
տերտիոս, որ զթուղթս գրեցի 'ի տ՟ր։
23 * Ողջոյն տայ ձեզ գայիոս ասպնջական
իմ, և ամենայն եկեղեցւոյն։ Ողջոյն տայ
ձեզ

ձեզ Երաստոս շահապ քաղաքիս, եւ Կու֊
արտոս եղբայր։ * Շնորհք Տն մերոյ յնի 24
քնի ընդ ձեզ ընդ ամենեսին. ամէն։
* Այլ այնմ, որ կարօղն է հաստատել 25
զձեզ ըստ աւետարանիս իմում, եւ ըստ
քարոզութեն յնի քնի, ըստ յայտնութե
խորհրդոյս այսորիկ՝ ժամանակօք յաւի֊
տենից լռեցելոյ, * եւ յայտնելոյ այժ֊ 26
միկ 'ի ձեռն գրոց մարգարէականաց՝ ըստ
հրամանի մշտնջենաւորին այ, 'ի հնա֊
զանդութիւն հաւատոց. յամենայն հե֊
թանոսս ծանուցելոյ, * միայնոյ իմաստ 27
նոյն այ 'ի ձեռն յնի քնի. նմա պատիւ
եւ փառք յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

Առ Հռովմայեցիս գրեցաւ 'ի Կորնթոսէ 'ի
ձեռն Փեբեայ սպասաւորի։

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԱՌԱՋԻՆ.

### ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ ԿՈՉԵՑԵԱԼ ԱԺ
առաքեալ յս̃ի քս̃ի կամօքն
ա̃յ , և սոսթենէս եղբայր .
2 * եկեղեցւոյդ ա̃յ որ է 'ի
կորնթոս՝ նուիրելոց 'ի քս̃ յս̃ , կոչեցե
լոց սրբոց , ամենեքումբք հանդերձ ,
որք կարդան զանուն տ̃ն մերոյ յս̃ի քս̃ի
3 յա̃մ տեղիս նց՝ և մեր ։ * Շնորհք ընդ
ձեզ և խաղաղութի յա̃յ հօրէ մերմէ՝ և
4 'ի տ̃նէ յս̃է քս̃է ։ * Գոհանամ զա̃յ իմոյ
յա̃մ ժամ վ̃ս ձեր՝ 'ի վ̃ր շնորհացն ա̃յ
5 որ տուեալ են ձեզ 'ի քս̃ յս̃ . * զի յա̃մի
մեծացարուք դուք նովաւ՝ յա̃մ բանի և
6 յա̃մ գիտութե . * որպ̃ վկայութին իսկ ա̃յ
7 հաստատեցաւ 'ի ձեզ . * զի դուք մի'նչ
ուպաղիցիք՝ և մի' իւիք շնորհօք , ակնկա
8 լեալ յայտնութե տ̃ն մերոյ յս̃ի քս̃ի . * որ
և հաստատեսցէ զձեզ մինչև 'ի կատա_
րած՝ անարատս՝ յօրն տ̃ն մերոյ յս̃ի քս̃ի ։
9 * Հաւատարիմ է ա̃ծ , որով կոչեցարուք
'ի հա_

'ի հաղորդութե̃ն որդւոյ նորա յս̃ի քս̃ի
տ̃ն մերոյ։
* Աղաչեմ զձեզ եղբարք անուամբն տ̃ն 10
մերոյ յս̃ի քս̃ի. զի զնոյն բան ունիցիք
ամենեքեան, և մի՛ իցեն 'ի ձեզ հերձ-
ուածք. քանզի էիք հաստատեալք 'ի նոյն
միտս և 'ի նոյն հանճար։ * Ազդ եղև 11
ինձ վս̃ ձեր եղբարք՝ 'ի քղոէացւոց ան-
տի, թէ հակառակութիւնք են 'ի ձեզ։
* Այս արդ ասեմ խսկ, եթէ իւրաքան 12
չիւրոք 'ի ձէնջ ասէ. ես պօղոսեան եմ,
և միւսն՝ եթէ ես ապօղոսեան, և միւ-
սըն՝ եթէ ես կեփայեան. և միւսն՝ եթէ
ես քս̃եան։ * Իսկ արդ բաժանեա՞լ ինչ 13
իցէ քս̃. մի թէ պօղոս 'ի խաչ ելեալ իցէ
վս̃ ձեր, կամ յանուն պօղոսի՞ մկրտեցա
րուք։ * Գոհանամ զա̃յ իմոյ՝ զի ոչ զոք 14
'ի ձէնջ մկրտեցի, բայց միայն զկրիսպոս՝
և զգայիոս. զի մի՛ ոք ասիցէ, * թէ յիմ 15
անուն մկրտեցարուք։ * Տալ ետու կնիք 16
և տանն ստեփաննեայ. և զայլ ոք ոչ
գիտեմ ամենևին՝ թէ մկրտեցի։ * զի 17
ոչ առաքեաց զիս քս̃ մկրտել՝ այլ աւե
տարանել. ոչ ճարտարութե̃ բանից, զի
մի՛ ընդունայն լիցի խաչն քս̃ի։ * Զի 18
ճառ խաչին՝ կորուսելոցն յիմարութի̃ է.
այլ փրկելոցս մեզ՝ զօրութի̃ ա̃յ։ * զի 19
գրեալ է. կորուսից զիմաստութի̃ իմաստ
նոց. և զխորհուրդս խորհրդականաց
արհամարհեցից։ * Ո՛ւր իմաստուն, ո՛ւր 20

դպիր, ուր քննիչ աշխարհիս այսորիկ.
ոչ ապաքէն յիմարեցոյց ած զիմաստութի
21 աշխարհիս այսորիկ. * Քանզի իմաս
տութեն այ ոչ ծանեաւ աշխարհ իմաստու
թեն զած. հաճեցաւ ած յիմարութեք քա
րոզութեն ապրեցուցանել զհաւատացեալս.
22 * Իսկ որովհետեւ Հրեայք նշան հայցեն, ԲԿ
23 և Հեթանոսք զիմաստութի խնդրեն. * մեք
քարոզեմք զխաչեցեալն քս, Հրէից
գայթագղութի, և Հեթանոսաց յիմա
24 րութիւն. * բայց նոցին իսկ կոչեցելոցն
Հրէից և Հեթանոսաց, զքս՝ զայ զօրութի
25 և զայ իմաստութի. * Զի յիմարն այ ի
մաստնագոյն է քան զմարդիկ. և տկարն
26 այ զօրագոյն է քան զմարդիկ. * Աւէ
պէտ և զձեր իսկ կոչումն տեսէք եղ
բարք, զի ոչ բազում իմաստունք ըստ մարմ
նոյ, և ոչ բազում հզօրք, և ոչ բազում
27 ազնուականք. * այլ զյիմարս աշխար
հիս ընտրեաց ած, զի յամօթ արասցէ
զիմաստունս. և զտկարս աշխարհիս ընտ
րեաց ած, զի յամօթ արասցէ զհզօրս.
28 * և զանարգս աշխարհի և զարհամար
հեալս ընտրեաց ած՝ և զոչինչսն, զի զէ
29 սսն իմն խափանեսցէ. * ոպս զի մի՛ պար
30 ծեսցի ամ մարմին առաջի այ. * Զի ի
նմանէ դուք էք ի քս յս, որ եղև մեզ
իմաստութի յայ, արդարութի և սրբու
31 թի և փրկութի. * զի ոպս և գրեալ է.
որ պարծին՝ ի տր պարծեսցի.

## ԳԼ. Բ.

Այլ ես Թեպէտ և եկի առ ձեզ եղբարք՝ 1
ոչ ըստ առաւելութեան բանից իմաս
տութեան պատմել ձեզ զվկայութիւն այ։ * Զի 2
ոչ եթէ ՚ի միտ եդի գիտել ինչ ՚ի ձեզ՝
բայց միայն զյս քս, և զնոյն ՚ի խաչ ե-
լեալ։ * Եւ ես տկարութբ և երկիւղիւ և 3
դողութբ բազմաւ եղէ առ ձեզ. * և բանն 4
իմ և քարոզութիւն, ոչ պատիր բանիւք ի-
մաստութեան՝ այլ արդեամբք հոգւոյն և
զօրութեան. * զի հաւատք ձեր մի՛ իցեն ի- 5
Դ.Զ մաստութբ մարդկան, այլ զօրութբ այ։
* Զիմաստութիւն խօսիմք ընդ կատարեալս. 6
զիմաստութիւն՝ ոչ զաշխարհիս այսորիկ, և
ոչ զիշխանաց աշխարհիս այսորիկ զխա
փանելեացս. * այլ խօսիմք զայ իմաս 7
տութիւն ծածուկ խորհրդով, զոր յառաջ
քան զյաւիտեանս սահմանեաց այ ՚ի
փառս մեր. * զոր ոչ ոք յիշխանաց աշխար 8
հիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծա-
նուցեալ՝ ոչ արդեօք զտրն փառաց ՚ի խաչ
հանէին։ * Այլ որպէս և գրեալ է. զոր 9
ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ՚ի
սիրտ մարդոյ ոչ անկաւ, պատրաստեաց
այ սիրելեաց իւրոց։
Ե.Դ * Այլ մեզ յայտնեաց այ հոգւովն իւ- 10
րով. զի հոգին զամ քննէ՝ և զխորս այ։
* Զի ո՞ ոք ՚ի մարդկանէ գիտէ ինչ ըզ 11
մարդոյն, եթէ ոչ հոգի մարդոյն որ ՚ի
նմա.

նմա. նոյնպէս եւ ոչ զԱ͞յն ոք գիտէ՝ ե-
12 թէ ոչ Հոգին Ա͞յ։ * Այլ մեք ոչ եթէ
զհոգի աշխարհիս առաք՝ այլ զՀոգին որ
յԱ͞յ. զի ծանիցուք զայն՝ որ յԱ͞յն շնոր-
13 հեցաւ մեզ։ * Զոր եւ խօսիմքս՝ ոչ եթէ
մարդկեղէն ուսմամբ իմաստութե͞ բա-
նից, այլ վարդապետութե͞ Հոգւոյն Ս͞ր հո-
14 գեւորս հոգեւորաց համեմատեմք։ * Քանզի
շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Ա͞յ՝
զի յիմարութի͞ւ է նմա. եւ ոչ կարէ գի-
15 տել՝ եթէ հոգեպէս քննիցի։ * Իսկ հո-
գեւորն քննէ զա͞մ, եւ ինքն յումեքէ ոչ
16 քննի։ * Իսկ արդ՝ ո՞վ գիտաց զմիտս Տ͞ն,
որ եւ խրատտու լինիցի նմա։ այլ մեք
զմիտս Ք͞ի ունիմք։

## ԳԼ. Գ.

1 Եւ ես եղբարք՝ ոչ կարացի խօսել ընդ
ձեզ իբրեւ ը͞ հոգեւորս՝ այլ իբրեւ ը͞
2 մարմնաւորս։ * Իբրեւ տղայոց ՚ի Ք͞ս,
կաթն ջամբեցի ձեզ՝ եւ ոչ կերակուր,
զի ոչ եւս կարէիք. նա եւ արդ իսկ ոչ կա-
3 րէք. քանզի դեռ մարմնաւոր էք։ * Ուր եւ
արդ են իսկ ՚ի ձեզ հեռ եւ նախանձ. ո՞չ
ապաքէն մարմնաւոր էք՝ եւ ըստ մարդկան
4 գնայք։ * Յորժամ ասէ ոք ՚ի ձէնջ՝ ես
պօղոսեան եմ, եւ միւսն՝ թէ ես ապողո-
սեան, ո՞չ մարդիկ էք. իսկ արդ՝ ո՞վ է
5 պօղոս, կամ ո՞վ է ապողոս։ * Պաշտօ-
նեայք՝ որովք հաւատացէքն, եւ իւրա-



քան-

քանչիւր ո՟պ և տ՟ր ետ։ * Ես տնկեցի, Ա- 6
պողոս ջուր ետ, այլ ա՟ծ աճեցոյց։ * Այ- 7
սուհետև՝ ոչ այն ոք ինչ է՝ որ տնկեացն,
և ոչ այն՝ որ ջուրն ետ. այլ որ աճեցոյցն
ա՟ծ։ * Որ տնկեացն և որ զջուրն ետ՝ մի 8
են. բայց իւրաքանչիւրոք զիւր վարձս
առնուցու ը՟ս իւրում վաստակոց։ * Զի 9
ա՟յ գործակից եմք, ա՟յ արդիւն էք, ա՟յ
շինուած էք։ * Ըստ շնորհացն ա՟յ որ տու- 10
եալ են ինձ, իբրև իմաստուն ճարտա
րապետ հիմն եդի. բայց այլ է որ շինէն.
այլ իւրաքանչիւրոք զգոյշ լիցի՝ թէ ո՟պ
շինիցէ։ * Զի հիմն այլ ոք ոչ կարէ դը- 11
Ա.Զ. նել քան զեղեալն՝ որ է յ՟ս ք՟ս.
* Եթէ ոք շինէ ՚ի վ՟ր հիմանս այսորիկ՝ 12
ոսկի արծաթ՝ ականս պատուականս՝
փայտ խոտ եղէգն, * իւրաքանչիւր գոր- 13
ծըն յայտնելոց է. զի օրն ընտրեսցէ, զի
հրով յայտնելոց է. * և զիւրաքանչիւր 14
գործն զիարդ և իցէ՝ հուրն փորձեսցէ։
* Եթէ ուրուք գործն զոր շինեաց՝ կաց- 15
ցէ, վարձս առցէ. և եթէ ուրուք գործն
այրեսցի՝ տուժեսցի, բայց ինքն կեցցէ.
այլ այնպէս՝ ո՟պ թէ ՚ի հուր։ * Ո՞չ գի- 16
տէք՝ եթէ տաճար էք ա՟յ՝ և հոգի ա՟յ բը-
նակեալ է ՚ի ձեզ։ * Եթէ ոք զտաճար 17
ա՟յ ապականէ, ապականեսցէ զնա ա՟ծ.
զի տաճար ա՟յ սուրբ է, որ էք դուք։
* Մի ոք զանձն խաբեսցէ. եթէ ոք կա- 18
մեսցի ՚ի ձէնջ իմաստուն լինել յաշխար

 հիս

հես յայսմիկ, յիմար լիցի՝ զի եղիցի ի-
19 մաստուն։ * Զի իմաստութիւն աշխարհիս
այսորիկ՝ յիմարութիւն է առաջի այ. քանզի
գրեալ է՝ Թէ որ ըմբռնէ զիմաստունս
20 ի խորամանկութեան իւրեանց։ * Եւ դարձեալ՝
Թէ տր ծանուցէ զխորհուրդս իմաստնոց՝
21 զի են ընդունայն։ * Ապա ուրեմն մի՛ որ
22 պարծեսցի ի մարդկանէ. * Զի ամե-
նայն ինչ ձեր է. եթէ Պօղոս, եթէ Ա-
պողոս, եթէ Կեփաս, եթէ աշխարհ, ե-
թէ կեանք, եթէ մահ, եթէ որ կանս,
եթէ հանդերձեալքն. ամ ինչ ձեր է.
23 * Դուք քրի, քս այ։

## ԳԼ. Դ.

1 Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ,
իբրև զպաշտօնեայս քի՝ և հազա-
2 րապետս խորհրդոցն այ։ * Արդ՝ խըն-
դիր է ի մէջ հազարապետաց՝ եթէ ոք
3 հաւատարիմ գտցի։ * Այլ ինձ և այս
անարգանք են, եթէ ի ձէնջ դատեցայց՝
կամ բնաւ իսկ ի մարդկանէ. Նաև զանձն
4 իմ ոչ քննեմ։ * Զի ոչինչ գիտեմ զան-
ձին իմոյ. այլ ոչ եթէ այսու արդարա-
5 նամ, զի որ քննէ զիս՝ տր է։ * Ապա ու-
րեմն մի՛ յառաջ քան զժամանակն դատիք.
մինչև եկեսցէ տր, որ լուսաւոր առնիցէ
զգաղտնիս խաւարի, և յայտնիցէ զխոր-
հուրդս սրտից. և ապա իւրաքանչիւր
6 գովութիւն եղիցի յայ։ * Զայս եղբարք՝

առակեցի յանձն իմ և յապողոս վ՟ն ձեր ·
զի 'ի մէնջ ուսջիք՝ մի՛ ինչ առաւել քան
զգրեալսն իմանալ · զի մի՛ այր քան զըն
կեր հպարտանայցէք 'ի վերայ ընկերին ։
* Իսկ արդ ո՞վ է՝ որ քննիցէ զքեզ · զի՞նչ 7
ունիս՝ զոր ոչ իցէ առեալ · և եթէ ա֊
ռեր՝ զի՞ պարծիս իբրև զչառեալ ։ * Ար֊ 8
դէն իսկ յագեալ իցէք՝ և արդէն մեծա
ցարուք , առանց մեր թագաւորեցիք · և
երանի՛ թէ թագաւորէիք՝ զի և մեք ընդ
ձեզ թագաւորէաք ։ * Ինձ այսպ՟ս թուի՝ 9
եթէ զմեզ զառաքեալս յետնորդս արար
ա՟ծ՝ իբրև զմահապարտս · զի տեսիլ ե֊
ղեաք աշխարհի , և հրեշտակաց և մարդ֊
կան ։ * Մեք յիմարք վ՟ն ք՟նի , և դուք 10
իմաստունք 'ի ք՟ս · մեք տկարք՝ և դուք
հզօրք · դուք փառաւորեալք՝ և մեք ա֊
նարգք ։ * Մինչև ցայսօր ժամանակի՝ 11
և քաղցեաք և ծարաւեցաք և մերկ գնա
ցաք և կռփահարեցաք և անհանգիստ
եղեաք · * և աշխատեցաք ձեռօք մե֊ 12
րովք · բամբասէին զմեզ՝ օրհնէաք · հա֊
լածէին՝ յանձն առնուաք · * հայհոյէին՝ 13
աղաչէաք · իբրև առակ նշաւակի եղեաք
ա՟մ աշխարհի · ամենեցուն փարելի լի֊
նել մինչև ցայժմ ։ * Ոչ եթէ յամօթ 14
ինչ առնելով զձեզ՝ գրեմ զայս , այլ իբ֊
րև զորդիս սիրելիս խրատեմ ։ * Թէպէտ 15
և բիւր դաստիարակս ունիցիք 'ի ք՟ս՝ այլ
ոչ եթէ բազում հարս · զի 'ի ք՟ս յ՟ս ա֊


ւե

16 ւետարանաւն ես ծնայ զձեզ։ * Արդ՝
աղաչեմ զձեզ նմանօղք ինձ եղիջիք, (որպ՟
17 և ես քսի։) * Վ՟ն այնորիկ առաքեցի առ
ձեզ զտիմոթէոս, որ է իմ որդի սիրե
լի՝ և հաւատարիմ ՚ի տր՟ · որ յիշեցուս
ցէ ձեզ զճանապարհս իմ, որ ՚ի քս՟ յս՟ ·
որպ՟ և ամ՟ ուրեք՝ յամ՟ եկեղեցիս ուսու
18 ցանեմ։ * Որպէս թէ ես չիցեմ գալոց
19 առ ձեզ՝ ոմանք հպարտացան։ * Այլ
եկից հուպ ընդ հուպ՝ եթէ տր՟ կամեսցի ·
և ՚ի միտ առից ոչ զբանս հպարտացելոցն,
20 այլ զզօրութի։ * Զի ոչ եթէ բանիւք է
21 արքայութին այ՟, այլ զօրութբ՟։ * Արդ՝
զի՞նչ կամիք՝ գաւազանա՞ւ եկից առ ձեզ,
եթէ սիրով հոգւոյն՝ հեզութե՟ և ար
դարութե՟ և խոնարհութե՟։

## ԳԼ · Ե ·

1 Բնաւ և անուանի լսի ՚ի ձեզ ընդէ՞ր
պոռնկութի, և այնպիսի պոռնկութի՝
որ ոչ և ՚ի հեթանոսս, որպ՟ թէ զկին հօր
2 իւրոյ ունել։ * Եւ դուք հպարտացեալ
էք · և ոչ առաւել սգացարուք, զի բարձ
ցի ՚ի միջոյ ձերմէ՝ որ զգործն զայն գոր
3 ծեաց։ * Զի ես թէպէտ մարմնով մե
կուսի եմ, սակայն հոգւով մերձ եմ ·
բայց արդէն իսկ իբրև ՚ի մօտոյ ընտրե
4 ցի · զայն՝ որ այնպէսն գործեաց · * յա
նուն տն՟ մերոյ յսի՟ քսի՟՝ ժողովել ձեզ
՚ի միասին՝ և իմով հոգւոյս՝ զօրութբ՟ն


հան

հանդերձ Տն մերոյ յի քի, * մատնել 5
զայնպիսին սատանայի ’ի սատակումն
մարմնոյ. զի ոգին ապրեսցի յաւուրն Տն
մերոյ յի քի։ * Ոչ բարւոք են պար- 6
ծանք ձեր. ոչ գիտէք՝ եթէ փոքր մի
խմոր զամ զանգուածն խմորէ։ * Սրբե- 7
ցէք ’ի բաց զհին զխմորն՝ զի եղիջիք նոր
զանգուած, որպ էքդ անխմորք. քանզի
զատիկ մեր զենաւ քս։ * Յայսուհետեւ 8
տօնեսցուք տօնս. մի՛ ’ի խմորն հին, և մի՛
’ի խմորն չարութե և անզգամութե. այլ
յանխմորս սրբութե և ճշմարտութե։
ԲԶ * Գրեցի ձեզ ’ի թղթի այդր չխառնա 9
կել ընդ պոռնիկս։ * և ոչ եթէ ընդ պոռ- 10
նիկս աշխարհիս այսորիկ՝ կամ ընդ ագահս
և ընդ յափշտակօղս՝ կամ ընդ կռապաշտս.
ապա թէ ոչ՝ պարտ էիք և յաշխարհէ
իսկ ելանել։ * Բայց արդ՝ գրեցի ձեզ 11
չխառնակել. եթէ ոք եղբայր անուա-
նեալ, կմ պոռնիկ իցէ կամ կռապաշտ՝
կամ ագահ կմ բամբասօղ՝ կամ արբեցօղ՝
կամ յափշտակօղ, ընդ այնպիսումն և հաց
մի՛ ուտել։ * Զի՞ է իմ և զարտա 12
քինսն դատել. ոչ ապաքէն դուք զներ-
քինսդ դատիցիք. * և զարտաքինսն Այծ 13
դատեսցի. բարձէք զչարն ’ի միջոյ ձերմէ։

## ԳԼ. Զ.

Իշխէ՞ ոք ’ի ձէնջ՝ եթէ իրք ինչ իցեն ընդ 1
ընկերի իւրում, դատել առաջի անօ-

 րին

2 իրաւանց, և ոչ առաջի սրբոց։ * Եթէ
ոչ գիտէք՝ զի սուրբք զաշխարհ դատին.
և եթէ ձեօք՝ դատի աշխարհ՝ ապա ոչ էք
3 արժանի անարգ ատենից։ * Ոչ գիտէք
եթէ զհրեշտակս դատիմք, թող թէ
4 զերկրաւորս։ * Օ երկրաւոր ատեանս ե-
թէ յանձն առնուցուք, զանարգսն եկե
5 ղեցւոյ դատաւորս նստուցէք։ * Առ ամօ
թոյ ձերոյ ասեմ. այնչափ ոչ գոյ ոք ի-
մաստուն ՚ի ձեզ, որ կարիցէ իրաւունս
6 ընտրել ՚ի մէջ եղբօր իւրոյ։ * այլ եղ-
բայր ընդ եղբօր դատի և զայն՝ ՚ի մէջ
7 անհաւատից։ * Եւ արդ՝ ամենևին իսկ
վատթարութի̃ է ՚ի ձեզ, զի դատաս
տանք իսկ գոն ՚ի միջի ձերում. ընդէ՞ր
ոչ դուք զրկիք և ոչ դուք առաւել նե-
8 ղիք. * այլ դուք զրկէք և նեղէք, և
9 այդ՝ զեղբարս ևս։ * Եթէ ոչ գիտէք՝
զի անիրաւք զարքայութի̃ այ̃ ոչ ժառան
գեն. մի՛ խաբիք՝ ոչ պոռնիկք, ոչ կռա
10 պաշտք, ոչ շունք, * ոչ իգացեալք, ոչ
արուագէտք, ոչ գողք, ոչ ագահք՝ ոչ ար-
բեցողք, ոչ բամբասողք՝ և ոչ յափշտա
կողք զարքայութի̃ այ̃ ոչ ժառանգեն։
11 * Եւ դուք այնպիսիք ոմանք էիք. այլ
լուացարուք՝ այլ սրբեցարուք՝ այլ ար-
դարացարուք յանուն տն̃ մերոյ յս̃ի քս̃ի,
և ՚ի հոգին այ̃ մերոյ։
12 * Ամենայն ինչ ինձ մարթ է՝ այլ ոչ ա̃մ Գ.Կ
ինչ օգուտ է. ա̃մ ինչ ինձ մարթ է, այլ

ոչ եթէ ես ը՟ իշխանութ՟ ուրուք լինիցիմ։
* Կերակուր որովայնի, և որովայն կե- 13
րակրոց, այլ ա՟ծ զսա և զնա խափանես-
ցէ. բայց մարմին ոչ պոռնկութ՟ե՝ այլ
տ՟ն, և տ՟ր մարմնոյ։ * Եւ ա՟ծ՝ որ և 14
զտ՟րն յարոյց, և զմեզ յարուսցէ զօրութ՟
իւրով։ * Ոչ գիտէք՝ եթէ մարմինք ձեր 15
անդամք են ք՟սի. արդ՝ առեալ զանդամս
ք՟սի, առնիցեմ անդամս պոռնկի. քաւ
լիցի։ * Եթէ ոչ գիտէք՝ զի որ մերձե- 16
նայ ի պոռնիկ՝ մի մարմին է. եղիցին,
ասէ, երկոքին ի մարմին մի։ * և որ մեր- 17
ձենայ ի տ՟ր՝ մի հոգի է։ * Փախերո՛ւք 18
ի պոռնկութենէ։ Ամ՟ մեղս՝ զոր և գոր-
ծէ մարդ՝ արտաքոյ մարմնոյ իւրոյ է. իսկ
որ պոռնկի՝ յիւր մարմին մեղանչէ։
* Եթէ ոչ գիտէք՝ զի մարմինք ձեր տա- 19
ճար են հոգւոյն ս՟րբ՝ որ է ի ձեզ՝ զոր ու-
նիք յա՟յ. և չէք անձանց տէր, * քանզի 20
գնոց գնեցայք. փառաւո՛ր արարէք զա՟ծ
ի մարմինս ձեր և յոգիս, որ է յա՟յ։

## Գլ. Է։

ԱՅԼ վ՟ որոյ գրեցէք առ իս, բարւոք 1
է մարդոյ ի կին մարդ չմերձենալ։
* Բայց վասն պոռնկութ՟ե իւրաքանչիւ- 2
րոք զիւր կին կալցի. և իւրաքանչիւրոք
կին զիւր այր կալցի։ * Կնոջ՝ այր իւր 3
զպարտսն հատուսցէ. նոյնպէս և կին՝
առն իւրում։ * Ոչ է կին մարմնոյ իւրում 4

ոչ իշխէ՝ այլ այրն. Նոյնպէս եւ այրն իւ-
5 րում մարմնոյ ոչ իշխէ՝ այլ կինն։ * Մի՛
զրկէք զմիմեանս. բայց եթէ ինչ ՚ի միա-
բանութէ առ ժամանակ մի, զի ուխտիցն
պարապիցէք, եւ դարձեալ ՚ի նոյն դարձ-
ջի՛ք, զի մի՛ փորձեսցէ զձեզ սատանայ
6 վն անխառնութէ ձերոյ։ * Զայս ասեմ
7 ներելով եւ ոչ հրաման տալով. * քանզի
կամիմ եթէ ամ մարդ լինէր իբրեւ զիս.
այլ իւրաքանչիւրոք զիւր շնորհս ունի յայ,
8 ոմն այսպէս եւ ոմն այնպէս։ * Բայց ամու-
րեացն եւ այրեացն ասեմ, լաւ է նոցա ե-
9 թէ կայցեն իբրեւ զիս. * ապա թէ ոչ ու-
նիցին ժուժ՝ ամուսնասցին. զի լաւ է ա-
10 մուսնանալ՝ քան զջեռնուլ։ * Այլ կանամ-
բեացն պատուիրեմ, ոչ ես՝ այլ տր. կնոջ
11 յառնէ մի՛ մեկնել։ * Ապա եթէ մեկ-
նեսցի, անայր մնասցէ՝ կամ անդրէն ընդ
առն իւրում հաշտեսցի. եւ առն՝ զկին
իւր մի՛ թողուլ։ Վ.Ջ.
12 * Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ
տր. եթէ ոք եղբայր՝ կին ունիցի անհա-
ւատ, եւ նմ հաճոյ իցէ բնակել ընդ նմ՝ մի՛
13 թողցէ զնա։ * Եւ կին, որ ունիցի զայր
անհաւատ՝ եւ նմ կամ իցէ բնակել ընդ նմ՝
14 մի՛ թողցէ զայրն. * զի սուրբ է այրն ան-
հաւատ կնաւն, եւ սուրբ է կինն անհա-
ւատ արամբն. ապա թէ ոչ՝ որդիքն ձեր
15 պիղծ են. բայց այժմ սուրբ են։ * Ա-
պա եթէ անհաւատն մեկնեսցի, մեկ-

նեսցի. զի ոչի՛նչ հարկ 'ի վերայ կայ եղ_
բօրն կմ՟ քեռն՝ յայնպիսի իրս. զի 'ի խա_
ղաղութի կոչեաց զմեզ ա՟ծ։ * Զի՞ գի_ 16
տես կին դու եթէ զայրն քո ապրեցուս
ցես. կամ զի գիտես այր դու՝ եթէ զկին
քո ապրեցուսցես։ * Եթէ ոչ՝ իւրաքանչիւր 17
ումեք ո՟պ և բաժանեաց տ՟ր, զիւրաքան
չիւրոք ո՟պ և կոչեաց ա՟ծ՝ այն՟պ գնասցէ.
և այս՟պ ը՟ ա՟մ եկեղեցիս պատուէր տամ։
* Թլփատեալ ոք կոչեցաւ՝ մի՛ ցանկասցի 18
անթլփատութե. յանթլփատութե ոք
կոչեցաւ՝ մի՛ թլփատեսցի. * զի թլփա 19
տութի ոչի՛նչ է՝ և անթլփատութի ոչի՛նչ.
այլ պահպանութի ա՟յ պատուիրանացն։
* Բայց իւրաքանչիւրոք յոր կոչումն կո_ 20
չեցաւ՝ 'ի նմին կացցէ։ * Ծառայ կոչե_ 21
ցար՝ մի՛ փոյթ լիցի քեզ. այլ թէ և կա_
րիցես ազատ լինել՝ քեզ այնպէս լաւ իցէ.
* զի որ 'ի տ՟ր կոչեցեալ է ծառայն՝ ա_ 22
զատ տ՟ն է. նոյնպէս և որ ազատն կոչե
ցեալ է՝ ծառայ ք՟ի է։ * Գնոց գնեցայք՝ 23
մի՛ լինիք ծառայք մարդկան։ * Իւրաքան 24
չիւրոք՝ յո՛ր կոչումն կոչեցաւ՝ եղբարք,
'ի նմին կացցէ առաջի ա՟յ։
Գ.Դ. * Իսկ վասն կուսանաց հրաման ինչ 'ի 25
տ՟նէ ոչ ունիմ. բայց խրատ տամ՝ ո՟պ
ողորմեալ ուրուք 'ի տ՟նէ, հաւատարիմ
լինել։ * Համարիմ՝ թէ այնպէս լաւ ի_ 26
ցէ. բայց վ՟ս վտանգին որ 'ի վ՟րյ կայ՝ բար_
ւոք է մարդոյ՝ թէ այսպէս իցէ։ * Կա_ 27

պեալ ես ՚ի կին, մի՛ խնդրեր արձակել.
արձակեալ ես ՚ի կնոջէ. մի՛ խնդրեր կին։
28 * Ու եթէ ամուսնանայցես՝ ոչ մեղար.
և եթէ ամուսնանայցէ կոյսն՝ ոչ մեղաւ,
բայց նեղութի̃ մարմնոյ ունիցին այնպի
29 սիքն. այլ ես խնայեցի ՚ի ձեզ։ * Բայց
զայս ասեմ եղբարք՝ եթէ ժամանակս
կարճեալ է այսուհետև։ զի որ ունիցին
30 կանայս՝ ոպ̃ թէ չունիցին. * և որ լայ֊
ցեն՝ ոպ̃ թէ ոչ լայցեն. և որ խնդանն՝
ոպ̃ թէ չխնդայցեն. և որ գնեն՝ ոպ̃ թէ
31 չունիցին. * և որ վարեն զաշխարհս՝ ոպ̃
թէ չվայելիցեն, զի անցեալ է վայելչու
32 թի աշխարհիս այսորիկ։ * Այլ կամիմ
զձեզ անհոգս լինել. զի որ անկին է՝
հոգայ զՏն̃, թէ որպէս հաճոյ լիցի Տն̃.
33 * և որ կանամբին է, հոգայ զաշխարհիս՝
34 թէ ոպ̃ հաճոյ լիցի կնոջ իւրում։ * Նու֊
ահա մեկնեալն ՚ի միմեանց առնակինն
և կոյսն. զի կոյսն հոգայ զՏն̃՝ զի իցէ
սբ̃ հոգւով և մարմնով, և առնակինն հո֊
գայ զաշխարհի՝ թէ ոպ̃ հաճոյ լիցի առն
35 իւրում։ * Այլ զայս վս̃ ձերոյ օգտի ա֊
սեմ. ոչ եթէ խայծ ինչ արկանեմ ձեզ,
այլ վս̃ պարկեշտութե̃՝ և հպատակութե̃
Տն̃ առանց զբաղանաց։
36 * Ապա թէ ոք անձն համարեսցի վս̃ Գ.Ջ
կուսին իւրոյ՝ եթէ իցէ ելեալ ի̃ չափ,
և այնպէս ինչ պարտ իցէ լինել. զոր կա֊
մեսցի արասցէ, ոչ մեղանչէ՝ ամուսնաս


ցի։

ցի։ * Իսկ որ հաստատեալ է 'ի մտի իւ 37
րում, և վարանի ինչ ոչ իցէ նմ, իշխանու
թի ունի 'ի վերայ կամաց իւրոց. և զայն
ընտրեաց 'ի մտի իւրում՝ պահել զկոյսն
իւր, բարւոք առնէ։ * Եւ որ ամուսնա 38
ցուցանէ զկոյսն իւր՝ բարւոք առնէ. և
որ ոչ ամուսնացուցանէ՝ լաւ ևս առնէ։
* Կին կապեալ է՝ ցորքան ժամանակս 39
կենդանի է այր նր. ապա եթէ ննջեսցէ
այր նր, ազատ է՝ ում կամիցի ամուսնա
նալ. այլ միայն տէրամբ։ * Բայց երա 40
նելի ևս է՝ թէ այնպէս կացցէ ըստ իմում
խրատու. ես այսպէս համարիմ, եթէ
և յիս իցէ հոգի Այ։

## ԳԼ. Ը.

Այլ վս զոհից կռոցն գիտեմք՝ եթէ ա 1
մենեքին գիտութի ունիմք։ գիտութի
հպարտացուցանէ, այլ սէր շինէ։ * Ե 2
թէ ոք կամիցի գիտել ինչ, չև ևս գիտաց՝
որպէս արժանն էր գիտել։ * Բայց որ 3
սիրէ զԱծ, նա է տեղեկացեալ 'ի նմանէ։
* Այլ վս կերակրոյն զոհելոց՝ գիտեմք 4
եթէ ոչինչ իսկ կուռք են յաշխարհի.
զի չիք ոք Ած բաց 'ի միոյն. * Զի թէ 5
պէտ և իցեն անուանեալ աստուածք՝ ե
թէ յերկինս և եթէ յերկրի. որպէս և
են աստուածք բազումք և տեարք բազումք։
* այլ մեզ մի է Ած հայր՝ յորմէ ամե 6
նայն, և մեք 'ի նա. և մի Տր ՅՍ ՔՍ՝ որով

 ամե

 Վ.Զ.

ամենայն, և մեք նովաւ:
7 *Այլ ոչ յամենեսին գիտութիւն է, ո-
մանք առ խղճի մտաց մինչև ցայժմ ընդ
կռոցն իբրև զզոհեալ ուտեն. և խիղճ
մտացն նոցա՝ քանզի տկար է, պղծի:
8 *Այլ կերակուր զմեզ առաջի այ ոչ կա-
ցուցանէ. ոչ եթէ չուտեմք՝ պակասիմք
ինչ, և ոչ եթէ ուտեմք՝ առաւելումք
9 ինչ: *Նայց զգոյշ լերուք՝ գուցէ իշխա-
նութիւն ձեր այդ՝ գայթագղութիւն լինի-
10 ցի տկարացն: *Եթէ ոք տեսանիցէ ըն-
քեզ՝ որ զգիտութիւն ունիս՝ բազմեալ ՚ի
մեհենի՝ ոչ ապա խիղճ մտաց նորա, որ տկա-
րութիւն զգածեալ է՝ անդրէն շինիցի ու-
11 տել զզոհեալն. *և կորնչիցի տկար եղ-
բայրն ՚ի քում գիտութեանն, վասն որոյ քն
12 մեռաւ: *և այնպէս յանցուցեալ յեղ-
բարս, և զխիղճ մտաց տկարացն զայրա-
13 ցուցեալ, ՚ի քս մեղանչէք: *Վասն որոյ ե-
թէ կերակուր գայթագղեցուցանէ զեղ-
բայրն իմ, ոչ կերայց միս յաւիտեան, զի
մի՛ զեղբայրն իմ գայթագղեցուցից:

## ԳԼ. Թ.

1 Ո՞չ ապաքէն ազատ եմ, ո՞չ ապաքէն ա-
ռաքեալ եմ, ոչ ապաքէն զտր մեր
յսքս աչօք իմովք տեսի, ո՞չ ապաքէն գործ
2 իմ դուք էք ՚ի տր: *Եթէ այլոց
չիցեմ առաքեալ՝ այլ ձեզ եմ. զի
կնիք իսկ առաքելութեան իմոյ դուք էք ՚ի
տր:

տր։ * Իմ պատասխանի ուր զիս հարցա 3
նիցեն՝ այս է։ * Մի թէ ոչ ունիցիմք իշ 4
խանութիւն ուտել և ըմպել։ * Մի՛ թէ ոչ ու 5
նիցիմք իշխանութիւն զքորս կանայս շրջեցու
ցանել ընդ մեզ. որպ և այլ առաքեալքն, և
եղբարքն տն, և կեփաս։ * Եթէ միայն 6
ես և բառնաբաս ոչ ունիցիմք իշխանու
թիւն չգործել ինչ։ * Ո՞ր երբէք զինուո 7
րիցի իւրովք թոշակօք. ո՞ որ տնկիցէ
այգի՝ և ՚ի պտղոյ նր ոչ ուտիցէ. ո՞ որ
արածիցէ խաշն՝ և ՚ի կաթանէ խաշինն
ոչ ուտիցէ։ * Մի թէ ըստ մարդկու թէ՞ 8
խօսիցիմ զայս։ կամ թէ և օրէնքն զայն
ո՞չ ասիցեն։ * Ի մովսէսի իսկ յօրէնսն 9
գրեալ է. ոչ կապեսցես զբերան եզին կա
լոտւոյ։ մի թէ վասն եզանց ինչ փոյթ էր այ։
* Ոչ ապաքէն վն մեր ասէ, քանզի վն 10
մեր գրեցաւ։ զի յուսով պարտի որ սեր
մանէն՝ սերմանել. և որ կալոյն՝ յուսով
վայելել։ * Եթէ մեք ՚ի ձեզ զհոգևորն 11
սերմանեցաք՝ մեծ ի՞նչ է, եթէ ՚ի ձէնջ
զմարմնաւորսդ հնձիցեմք։ * Եթէ այլք 12
ձերով իշխանութբդ վայելեն, ոչ առաւել
ևս մեք։ այլ ոչ ՚ի գործ ինչ արկաք զիշ
խանութիս զայս. բայց ամի համբերեմք.
զի մի՛ խափան ինչ լինիցիմք աւետարա
նին քի։ * Ո՞չ գիտէք եթէ որ ՚ի տա 13
ճարին գործեն, ՚ի տաճարէ անտի ու
տեն. և որ սեղանոյն պաշտօնեայք են,
՚ի սեղանոյ անտի վայելեն։ * Նոյնպէս և 14


տր

Տ̅ր հրաման ետ․ որոց զաւետարանն աւե
տարանեն, յաւետարանէ անտի կեալ։
15 * Բայց ես եւ ոչ զմի ինչ յայսցանէ արկի
'ի գործ, եւ ոչ գրեցի զայդ՝ զի ինձ այն
պէս ինչ լինիցի․ լաւ է ինձ մանաւանդ
մեռանել, եւ ոչ զի զպարծանս իմ ոք ըն
16 դունայն համարիցի․ * Զի եթէ աւետա
րանեմ, ոչ ի՛նչ են ինձ պարծանք, քանզի
հարկ 'ի վ̅ր կայ․ բայց վայ է ինձ, եթէ
17 ոչ աւետարանեմ։ * Եթէ կամաւ զայն
առնեմ, վարձք են ինձ․ եւ եթէ ակա
18 մայ՝ տնտեսութի̅ յանձն է ինձ։ * Իսկ
արդ՝ զի՛նչ վարձք իցեն ինձ, եթէ յաւե
տարանելն ձրի տաց զաւետարանն՝ զի մի՛
զեղծիցիմ ինչ իշխանութե̅ս իմով յաւե
19 տարանին անդ։ * Քանզի ազատ էի յամե̅
եւ ամենեցուն զանձն 'ի ծառայութի̅ կա
20 ցուցի․ զի զբազումս շահեցայց։ * Եղէ
ը̅ հրէայն իբրեւ զհրէայ, զի զհրէայսն
21 շահեցայց։ * Եղէ ը̅ օրինօք իբրեւ զայ
նոսիկ՝ որ ընդ օրինօքն էին․ իբր ոչ եթէ
ը̅ օրինօքն էի, այլ զի որ ը̅ օրինօքն իցեն՝
եւ զն̅ս շահեցայց։ ը̅ անօրէնս եղէ իբրեւ
զանօրէն․ իբր ոչ եթէ անօրէն ինչ էի
ա̅յ, այլ ը̅ օրինօք ք̅ի․ զի շահեցայց զա
22 նօրէնսն։ * Եղէ ը̅ տկարս իբրեւ զտկար՝
զի զտկարսն շահեցայց։ ը̅ ամենայնի ա
մենայն եղէ․ զի թերեւս ապրեցուցից զո
23 մանս։ * Զայս ա̅մ առնեմ վ̅ս աւետա
րանին, զի կցորդ եղէց նմա։

Գ.Կ * Ո՞չ գիտէք՝ եթէ որ յասպարիսին ըն- 24
թանան, ընթանալ ամենեքին ընթա-
նան. բայց մի ոք առնու զյաղթութիւն.
այնպէս ընթացարո՛ւք՝ զի հասանիցէք։
* Եւ ամենայն որ պատերազմի՝ ամենայն ժուժ- 25
կալ լինի. նոքա զի զեղծանելի պսակն
առնուցուն՝ և մեք զանեղծութեան. * Արդ՝ 26
ես իսկ այնպէս ընթանամ, ոչ որպէս յան-
հետս. այնպէս մրցիմ, որպէս ոչ թէ ըզ-
հողմն ինչ կոծելով. * այլ ճնշեմ զմար- 27
մինս իմ և ծառայեցուցանեմ. զի գու-
ցէ որ այլոց քարոզեցի՝ ես ինքնին ան-
պիտան գտանիցիմ։

## ԳԼ. Ժ.

Ո՛չ կամիմ, եթէ տգէտ իցէք եղբարք, 1
զի հարքն մեր ամենեքին ընդ ամպովն
էին. և ամենեքին ընդ ծովն անցին. * և 2
ամենեքին ՚ի Մովսէս մկրտեցան յամպն
և ՚ի ծովն. * և ամենեքին զնոյն հոգևոր 3
կերակուրն կերան. * և ամենեքին զնոյն 4
հոգևոր ըմպելին արբին, զի ըմպէին ՚ի
հոգևոր վիմէն՝ որ երթայր զհետ նոցա. և
վէմն էր ինքն Քրիստոս։ * Այլ ոչ եթէ ընդ բա- 5
զումս ՚ի նոցանէ հաճեցաւ Աստուած. քանզի տա-
պաստ անկան յանապատի անդ։ * Այս 6
օրինակ լինէր վասն մեր. զի մի՛ լի-
նիցուք ցանկացողք չարեաց, որպէս և նոքայն
ցանկացան։ * Եւ մի՛ կռապարիշտք լի- 7
նել՝ որպէս ոմանք ՚ի նոցանէ, որպէս և գրեալ
է.

է. Նստաւ ժողովուրդն ուտել և ըմպել՝
8 և յարեան ՚ի խաղալ։ *Եւ մի՛ պոռն
կեսցուք. ոպ՟ ոմանք ՚ի նոցանէ պոռնկե
ցան, և անկան ՚ի միում աւուր քսան և
9 երեք հազարք։ *Եւ մի՛ փորձեսցուք զՔս՟.
ոպ՟ ոմանք ՚ի նոցանէ փորձեցին, և յօձից
10 անտի սատակեցան։ *Եւ մի՛ տրտնջես
ցուք. ոպ՟ ոմանք ՚ի նոցանէ տրտնջեցին,
11 և կորեան ՚ի սատակչէ անտի։ *Այլ
այն ամ՟ օրինակաւ անցանէր ընդ նոսա.
բայց գրեցաւ վ՟ն մերոյ խրատու, յորս
վախճան յաւիտենիցն եհաս։
12 *Այսուհետև որ համարիցի հաստա Դ.Դ
տուն կալ՝ զգո՛յշ լիցի, գուցէ անկանի
13 ցի։ *Փորձութի՟ ՚ի ձեր վր՟ ոչ է եկեալ
բայց ՚ի մարդկանէ. այլ հաւատարիմ է
ԱԾ՟, որ ոչ արկցէ զձեզ ՚ի փորձութի՟ ա
ռաւել քան զկար ձեր. այլ արասցէ ընդ՟
փորձութեն՟ և զելս զի համբերել կարաս
14 ջիք։ *Վասն որոյ սիրելիք իմ, փախե
15 րուք ՚ի կռապաշտութէ՟։ *Իբրև ընդ՟ իմաս
տունս խօսիմ. ընտրեցէ՛ք ձեզէն՝ զոր ա
16 սեմս։ *Բաժակն օրհնութե՟ զոր օրհնեմք՝
ոչ ապաքէն հաղորդութիւն է արեանն
Քի՟. հացն զոր բեկանեմք՝ ոչ ապաքէն
17 հաղորդութի՟ է մարմնոյն Քի՟։ *Զի մի
հաց՝ մի մարմին եմք բազումքս. զի ամենեքին
18 ՚ի միոջէ հացէ անտի վայելեմք. *Տեսէ՛ք
զԻսրայէլն ըստ մարմնոյ. ոչ ապաքէն՝ որ ուտեն
19 ՚ի զոհիցն՝ հաղորդ են սեղանոյն։ *Իսկ



արդ

արդ զի՞նչ. սակայն, թէ զոհեալն իցէ՞ ինչ.
և կամ թէ կուռքն իսկ իցէ՞ն ինչ: * Այլ 20
զոր զոհեն հեթանոսք, դիւաց՝ և ոչ
այ զոհեն: ոչ կամիմ զձեզ հաղորդս դի-
ւաց լինել. Ոչ կարէք զբաժակն տն
ըմպել՝ և զբաժակն դիւաց. * և ոչ կա- 21
րէք ՚ի սեղանոյ տն վայելել՝ և ՚ի սեղա
նոյ դիւաց: * Եթէ նախանձ ինչ արկա 22
նիցեմք տն. միթէ զօրաւորագո՞յնք իցեմք քան
զնա: * Ամենայն ինչ ինձ մարթ է՝ այլ 23
ոչ ամ ինչ օգուտ է. ամ ինչ ինձ մարթ
է, այլ ոչ ամենայն ինչ շինէ: * մի՛ ոք 24
զանձին և եթ խնդրեսցէ՝ այլ և զընկե
րին: * Ամենայն ինչ որ ՚ի սպանդանոցի 25
վաճառի, կերայ՛ք՝ և մի՛ խարկէք վն խղ
ճի մտաց. * զի տն է երկիր լրիւ իւրով: 26
* Եթէ ոք կոչէ զձեզ յանհաւատից՝ և 27
կամիցիք երթալ. զամ ինչ՝ որ առաջի
դնիցի, կերայ՛ք՝ և մի՛ խարկէք վն խղճի
մտաց: * Ապա եթէ ոք ասասցէ ձեզ՝ 28
թէ այդ զոհեալ է, մի՛ ուտիցէք վն նր՝
որ գուշակն եղև, և վն խղճի մտացն:
* Այլ զխիղճ մտացն ասեմ ոչ զիւրն, 29
այլ զընկերին: իսկ ընդէ՞ր ընաւ ազա
տուիս իմ դատիցի յայլոյ խղճէն մտաց:
* Եթէ ես շնորհօք վայելեմ, ընդէ՞ր 30
հայհոյիցիմ, վասն որոյ ես գոհանամ:
* Արդ՝ եթէ ուտիցէք՝ եթէ ըմպիցէք՝ 31
եթէ զի՞նչ և առնիցէք, զամ ինչ ՚ի փառս
այ արասջի՛ք: * Առանց գայթագղութի 32

 դնե

դնելոյ Հրէից և Հեթանոսաց լինիջի՛ք՝ և
33 եկեղեցւոյն Այ՟. * Որպ՟ և ես ամենևին ա-
մենեցուն հաճոյ լինիմ. ոչ խնդրեմ
զանձին օգուտ, այլ զբազմաց՝ զի ապ-
րեսցին։

## ԳԼ. ԺԱ.

Դ․Ջ

1 Նմանօղք ինձ եղերո՛ւք, որպ՟ և ես Քսի։
2 * Գովեմ զձեզ՝ զի զամ՟ ինչ զիմ յի-
շէք. և որպ՟ աւանդեցի ձեզ՝ զաւանդու-
3 թիւնս ունիցի՛ք։ * Կամիմ զի գիտիցէ՛ք
դուք. եթէ առն ամ՟ի գլուխ Քս է, և
4 գլուխ կնոջ այր՝ և գլուխ Քսի Ած. * Ա-
մենայն այր՝ յորժամ յաղօթս կայցէ՝ կմ՟
մարգարէանայցէ՝ և զգլուխն ծածկեալ
5 ունիցի, յամօթ առնէ զգլուխն իւր. * Եւ
ամ՟ կին՝ յորժամ յաղօթս կայցէ՝ կամ
մարգարէանայցէ բացաւ գլխով՝ յամօթ
առնէ զգլուխն իւր, զի այնպէս համարէ՝
6 թէ գերծեալ իցէ. * Զի եթէ ոչ սքօ-
ղեսցի կին, փոքրեսցէ զհերս իւր. ապա
եթէ անպատեհ է կնոջ փոքրել կմ՟ գեր-
7 ծուլ, սքողեսցի՛։ * Առն մարդոյ չէ՛ պարտ
ծածկել զգլուխ իւր, զի պատկեր և
փառք Այ՟ է. իսկ կին փառք առն իւրոյ
8 է։ * Զի ոչ եթէ այր ՚ի կնոջէ է, այլ
9 կին յառնէ։ * քանզի ոչ իսկ հաստա-
տեցաւ այր վս՟ կնոջ, այլ կին վս՟ առն.
10 * Վասն այնորիկ պարտի կին շուք դնել
11 գլխոյն վս՟ հրեշտակաց։ * Բայց ոչ կին
ա-

առանց առն, և ոչ այր առանց կնոջ 'ի
տր. * Զի որպ կին յառնէ՝ նոյնպէս և 12
այր 'ի կնոջէ, բայց ամ յայ. * Իսկ 13
դուք ձեզէն ածէք զմտաւ. արժան է
կնոջ մերկագլուխ հայցել յաղօթս կալ առա
ջի այ. * Ո՞չ բնութիւն իսկ ուսուցա 14
նէ զձեզ. զի այր եթէ գիսաւոր է՝ անար
գանք են նմ. * բայց կին եթէ գիսաւոր 15
է՝ փառք են նմա. զի գէսք փոխանակ
զգեստու տուեալ են նմա. * Ապա թէ 16
որ կամի հակառակօղ լինել, մեք չու
նիմք այնպիսի սովորութի, և ոչ եկեղե
ԿԶ ցիքն այ.
* Իսկ զայս պատուիրեմ, ոչ ոք թէ գո 17
վիցեմ, զի ոչ 'ի լաւ անդր՝ այլ 'ի վատ
թարն նկրտիք. * Նախ՝ յորժամ 'ի մի 18
վայր ժողովիցիք յեկեղեցին, լսեմ եթէ
հերձուածք գոն 'ի ձեզ. և սակաւ ինչ
հաւատացի. * Քանզի և հերձուածք լի 19
նելոց են 'ի ձեզ. զի որ ընտիրքն իցեն 'ի
ձեզ՝ երևեսցին. * Նաւ արդ՝ 'ի ժողո 20
վելն ձեր 'ի միասին՝ ոչ է տունն տն ձեզ
տեղի հաց ուտելոյ. * Զի իւրաքանչիւր 21
ոք զիւր ընթրիս յառաջանայ ուտել, և
ոմն քաղցեալ՝ և ոմն արբեալ. * Միթէ 22
տունս ոչ ունիցիք ուտելոյ կամ ըմպե
լոյ. եթէ զեկեղեցեաւն այ արհամար
հիցէք, և յամօթ առնէք զչքաւորսն.
զինչ ասացից. գովեցից զձեզ. յայդմ
ոչ գովեմ. * Զի ես ընկալայ 'ի տնէ, 23

զոր և ձեզն աւանդեցի, եթէ տ՟ր յ՟ս ՚ի
գիշերին յորում մատնէր, առ հաց.
24 *գոհացաւ՝ եբեկ և ասէ. (առէք՝ և
կերայք.) այս է մարմին իմ, որ վ՟ն ձեր
(բաշխի). զայս արարէք առ իմոյ յիշա
25 տակի: *Նոյնպէս և զբաժակն յետ ըն_
թրեացն առ և ասէ. այս բաժակ՝ նոր
ուխտ է իմով արեամբ. զայս արարէ՛ք
քանիցս անգամ եթէ ըմպիցէ՛ք՝ առ իմոյ
26 յիշատակի: *Քանիցս անգամ թէ ու_
տիցէք զհացս զայս, և զբաժակս ըմպի
ցէք, զմահն տ՟ն պատմեցէ՛ք, մինչև ե_
27 կեսցէ նա: *Այսուհետև՝ որ ուտիցէ
զհացս, կամ ըմպիցէ զբաժակս տ՟ն ան_
արժանութ՟բ, պարտական եղիցի մարմ_
28 նոյ և արեան տ՟ն: *Փորձեսցէ մարդ
զանձն իւր, և ապա ՚ի հացէ անտի կերի
29 ցէ, և ՚ի բաժակէն արբցէ: *Զի որ ու_
տէ և ըմպէ անարժանութ՟բ՝ դատաստանս
անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խտրէ
30 զմարմինն տ՟ն: *Վ՟ն այնորիկ իսկ են
՚ի ձեզ բ՟զմ հիւանդք և ախտաժէտք. և
շատ եւս այն են, որ և ննջեցեալք իսկ ի_
31 ցեն. *Զի եթէ զանձինս քննէաք՝ ա_
32 պա ոչ դատապարտէաք: *և եթէ դա_
տիմք՝ ՚ի տ՟նէ խրատիմք. զի մի՛ ը՟ն աշխար
33 հի դատապարտեսցուք: *Այսուհետև
եղբարք՝ յորժամ ՚ի մի վայր ժողովիցի՛ք
34 ուտել՝ միմեանց մնասջի՛ք: *Ապա թէ
ոք քաղցեալ իցէ՝ ՚ի տան իւրում կերի_

ցէ.

ցէ. զի մի՛ ի դատապարտութիւն ժողովի-
ցիք։ Իսկ զայլն ինչ յորժամ եկից, յայն
ժամ պատուիրեցից։

## ԳԼ. ԺԲ.

ԵԿ Վասն հոգեւորացն եղբարք՝ ոչ կամիմ 1
եթէ անգէտ իցէք։ * Գիտէք իսկ՝ 2
զի մինչ հեթանոսքն էիք, առ կուռսն
անմռունչս որպէս երթայիք և գայիք։
* Վասն որոյ ցուցանեմ ձեզ. զի ոչ ոք 3
Հոգւովն Աստուծոյ խօսի, և ասիցէ թէ նզովեալ
Յիսուս. և ոչ ոք կարէ ասել՝ Տէր Յիսուս, եթէ
ոչ Հոգւովն սրբով։ * Թէպէտ և բա- 4
ժինք շնորհաց են՝ այլ Հոգին նոյն է։ * Ե- 5
թէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր
նոյն է։ * Եթէ բաժինք յաջողութեանց են՝ 6
այլ Աստուած նոյն է, որ յաջողէ զամենայն յամենայ-
նի։ * Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ 7
է յայտնութիւն Հոգւոյն՝ առ իւրաքանչիւր
օգուտ։ * Ումեմն ի Հոգւոյն տուեալ է 8
բան իմաստութեան. այլում բան գիտու-
թեան ըստ նմին Հոգւոյ. * միւսումն հաւատք 9
նովին Հոգւով. այլում շնորհք բժշկու-
թեանց նովին Հոգւով. * այլում յաջողու- 10
թիւնք զօրութեանց. այլում մարգարէութիւն.
այլում ընտրութիւն հոգւոց. այլում ազգք
լեզուաց. այլում թարգմանութիւն լեզ-
ուաց։ * Այլ զայս ամենայն յաջողէ մի և նոյն 11
Հոգին, և բաժանէ իւրաքանչիւր որպէս
և կամի։

12 * Որպէս մարմին մի է, և անդամս բազումս
ունի․ և ամ՟ ե՟ղմ՟ անդամք մարմնոյն՝ մի
13 մարմին է․ նոյնպէս և քս։ * Քանզի
միով հոգւով մեք ամենեքին ՚ի մի մար_
մին մկրտեցաք․ եթէ հրեայք, եթէ հե_
թանոսք, եթէ ծառայք, եթէ ազատք,
14 ամենեքին զմի հոգի արբաք։ * Քանզի
մարմին ոչ միանդամ է, այլ բազում։
15 * Եթէ ասիցէ ոտն, զի չեմ ձեռն՝ չեմ
՚ի մարմնոյ անտի, ոչ այնու չիցէ ՚ի մար_
16 մնոյ անտի։ * Եւ եթէ ասիցէ ունկն,
վն զի չեմ ակն՝ չեմ ՚ի մարմնոյ անտի,
17 ոչ այնու չիցէ ՚ի մարմնոյ անտի։ * Եթէ
ամենայն մարմին ակն էր՝ ո՞ւր էր ունկն․
և եթէ ամենայն լսելիք էր՝ ո՞ւր էին հո_
18 տոտելիք։ * Բայց արդ՝ ած եդ զան_
դամսն՝ զմի մի իւրաքանչիւր ՚ի նոցանէ
19 ՚ի մարմնին՝ որպէս և կամեցաւ։ * Ապա
թէ էր ամենայն մի անդամ, ո՞ւր էր մար_
20 մին։ * Բայց արդ՝ անդամք բազում
21 են, և մարմին մի։ * Ո՛չ կարէ ակն ասել
ցձեռն, թէ չես ինձ պիտոյ, և կամ դար_
ձեալ գլուխ ցոտս՝ թէ չէ՛ք ինձ պիտոյ։
22 * Այլ առաւել որ թուին անդամք մար_
մնոյն թէ տկարագոյնք իցեն, կարևորք
23 են․ * և որ թուին թէ անարգագոյնք
իցեն մարմնոյն, այնց առաւելագոյն պա_
տիւ առնեմք․ և անօթութք մեր առաւել
24 ևս պարկեշտութի ունին։ * Եւ պարկեշ_
տիցն մերոց չէ ինչ պիտոյ․ քանզի ած խառ_
նեաց

նեաց զմարմինն, և նուաղին առաւել ևս
պատիւ ետ. * զի մի՛ իցեն հերձուածք ՚ի 25
մարմնի անդ, այլ զի նոյնք զմիմեանց
հոգասցեն անդամքն. * Եւ եթէ վշտանայ 26
ինչ մի անդամն, վշտանան ամ̃ անդամքն
ը̃ նմա. և եթէ փառաւորի մի անդամն,
խնդան ամ̃ անդամքն ընդ նմա. * Այլ 27
դուք մարմին քսի էք՝ և անդամք յան—
Կ.Զ դամոց նորա.
* Եւ զորս եդ ած̃ յեկեղեցւոջ՝ այս են. 28
նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգա
րէս, երրորդ զվարդապետս, ապա զզ—
րութիւն, ապա շնորհս բժշկութեանց, օգ—
նութիւն, վարիչս, ազգս լեզուաց, թարգ—
մանութիւն լեզուաց. * Միթէ ամենե— 29
քին առաքեա՞լք իցեն. միթէ ամենեքին
մարգարէ՞ք իցեն. միթէ ամենեքին վար—
դապետ՞ք իցեն. միթէ ամենեքին զօրու—
թի՞ք իցեն. * միթէ ամենեքին շնորհս 30
բժշկութեա՞ն ունիցին. միթէ ամենեքին
՚ի լեզո՞ւս խօսիցին. միթէ ամենեքին
թարգմանիցեն. * Բայց նախանձաւոր 31
լերուք շնորհացն, որ լաւն են. Այլ ես
առաւել ևս ճանապարհ ցուցանեմ ձեզ.

## ԳԼ. ԺԳ.

ԿԷ Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ և ըզ— 1
հրեշտակաց՝ և սէր ոչ ունիցիմ, ե—
ղէ ես իբրև պղինձ որ հնչէ. կամ իբրև
ծնծղայս որ ղօղանջէն. * Եւ եթէ ու— 2

նիցիմ մարգարէութի̃, եւ գիտիցեմ զխոր
հուրդս ամ̃՝ եւ զամ̃ գիտութի̃. եւ եթէ
ունիցիմ զամ̃ հաւատս՝ մինչեւ զլերինս
փոփոխել, եւ սէր ոչ ունիցիմ, ոչինչ
3 եմ։ * Եւ եթէ ջամբիցեմ զամ̃ ինչս
իմ աղքատաց, եւ մատնիցեմ զմարմինս
իմ յայրումն, եւ սէր ոչ ունիցիմ, ոչինչ
4 օգտիմ։ * Սէր երկայնամիտ է՝ քաղցրա
նայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարհա
5 ւաճէ, ոչ հպարտանայ. * ոչ յանդգնի,
ոչ խնդրէ զիւր, ոչ գրգռի, ոչ խորհի
6 զչար. * ոչ խնդայ ը̃ անիրաւութի̃՝ այլ
7 խնդայ ը̃ ստուգութի̃. * ամ̃ տանէ. ամ̃
հաւատայ. ամենեւին յուսայ. ամ̃ համ
8 բերէ։ * Սէր՝ ոչ երբէք անկանի. եթէ
մարգարէութի̃ք են՝ խափանեսցին. եթէ
լեզուք՝ լռեսցեն. եթէ գիտութի̃՝ խափա
9 նեսցի։ * Քանզի փոքր 'ի շատէ գի
տեմք. եւ փոքր 'ի շատէ մարգարէա
10 նամք։ * այլ յորժամ եկեսցէ կատա
րումն, փոքր 'ի շատէս խափանեսցի.
11 * Մինչ տղայն էի՝ իբրեւ զտղայ խօսէի, ԶԿ
իբրեւ զտղայ խորհէի, իբրեւ զտղայ հա
մարէի. այլ յորժամ եղէ այր՝ զտղայու
12 թի̃ն 'ի բաց խափանեցի։ * Այժմ տե
սանեմք իբրեւ ը̃ հայելի օրինակաւ, այլ
յայնժամ դէմ յանդիման. այժմ խե
լամուտ եմ՝ փոքր 'ի շատէ, այլ յայնժամ
գիտացից՝ որպէս եւ նոյն ծանեաւ զիս։
13 * Բայց արդ՝ մնան հաւատք՝ յոյս՝ սէր,

սոքա երեքեան. և մեծ քան զսոսա սէր է։

## ԳԼ. ԺԴ.

Զհետ երթայք սիրոյ, և նախանձա 1
ւորք լերուք հոգևորացն՝ առաւել
զի և դուք մարգարէանայցէք։ * Զի որ 2
խօսի ՚ի լեզուս՝ ոչ ընդ մարդկան խօսի,
այլ ընդ Այ. զի ոչ ոք է որ լսէ, բայց հոգ-
ւով խօսի խորհուրդս։ * Իսկ որ մարգա 3
րէանայն, մարդկան խօսի շինութիւն և
մխիթարութիւն և սփոփութիւն։ * Որ խօսի 4
՚ի լեզուս՝ զանձն իւր շինէ. և որ մար-
գարէանայն՝ զեկեղեցին շինէ։ * Կամիմ 5
զի ամենեքին դուք ՚ի լեզուս խօսիցէք՝
առաւել զի մարգարէանայցէք. զի լաւ
է որ մարգարէանայն՝ քան զայն՝ որ ՚ի
լեզուս խօսիցի. բայց եթէ թարգմանի
Դ.Զ ցէ՝ զի եկեղեցին շինութիւն առնուցու։
* Բայց այժմ եղբարք՝ եթէ եկից առ 6
ձեզ ՚ի լեզուս խօսելով. զինչ օգուտ լի-
նիցիմ ձեզ՝ եթէ ոչ խօսիցիմ, կամ յայտ-
նութեամբ, կամ գիտութեամբ, կամ մարգա
րէութեամբ, կամ վարդապետութեամբ։ * Նոյն- 7
պէս՝ որպէս անշունչքն ձայն տայցեն, ե-
թէ փող և եթէ քնար. զի եթէ ընտ-
րութիւն ինչ բարբառոյն չտանիցեն, զիարդ
ծանիցի փողոյն հարկանել՝ կամ քնա
րին հնչել։ * Քանզի եթէ խառնաձայն 8
արձակիցի փողն, ո՞վ պատրաստեսցի ՚ի
պատերազմ։ * Նոյնպէս և դուք՝ եթէ 9

 լե

լեզուօք ոչ նշանակիցէք զբանն՝ զիա՞րդ-
ճանաչիցին խօսքն. զի լինիցիք այնուհե-
10 տև իբրև ընդ օդս խօսեցեալք: * Զի այն-
չափ ազգք ձայնից են յաշխարհի, և ոչ
11 ինչ անձայն է: * Իսկ արդ՝ եթէ ո՛չ
գիտիցեմ զզօրութիւն ձայնին, լինիցիմ
այնմ, որ խօսիցին ընդ իս՝ խուժ, և նա որ
12 խօսիցին ընդ իս՝ խուժ: * Նոյնպէս և դուք՝
քանզի նախանձորդք էք հոգևորացն, վասն
շինուածոյ եկեղեցւոյն խնդրեք՝ զի ա-
13 ռաւել ևս իցէք: * Վասն որոյ որ խօ-
սին ՚ի լեզուս, աղօթս արասցէ՝ զի և
14 թարգմանիցէ: * Եթէ կամ յաղօթս
լեզուաւ՝ հոգին իմ կայ յաղօթս. այլ
15 միտք իմ անպտուղ են: * Իսկ արդ՝
զի՞նչ իցէ. կացից յաղօթս հոգւով, կա-
ցից յաղօթս և մտօք. սաղմոս ասացից
16 հոգւով, սաղմոս ասացից և մտօք: * Ա-
պա թէ ոչ՝ եթէ օրհնիցես հոգւով, որ
կայցէ ՚ի տեղւոջ տգիտին՝ զիա՞րդ ասի-
ցէ ՚ի քում գոհութեան՝ զամէնն. քանզի
17 զոր ասեսն՝ նա ո՛չ գիտէ: * Զի դու բար-
ւոք գոհանաս, այլ ընկերն ո՛չ շինի:
18 * Գոհանամ զԱյ՝ վն ամենեցուն ձեր՝ ԺԴ
19 առաւել լեզուաւ խօսիմ: * Այլ ՚ի մէջ
եկեղեցւոյ կամիմ բանս հինգ մտօք խօ-
սել՝ զի և զայլս խրատիցեմ, քան բազում
20 բանս լեզուաւ: * Եղբարք մի՛ լինիք տ-
ղայք մտօք, այլ ՚ի չարեաց տղայացա-
21 րուք, և մտօք կատարեալ լինիջիք: * Զի



և

եւ յօրէնսն գրեալ է, եթէ յօտար լե-
զուս՝ եւ ՚ի շրթունս օտարոտիս խօսեցայց
ընդ ժողովրդեանդ ընդ այդմիկ, սա-
կայն եւ ոչ այնպէս լուիցեն ինձ, (ասէ
տր̃): * Ապա ուրեմն լեզուք նշանակի 22
վս̃ են՝ ոչ հաւատացելոց՝ այլ անհաւա
տից. իսկ մարգարէութի՝ ոչ անհաւա
տից՝ այլ հաւատացելոց: * Ապա եթէ 23
գայցէ եկեղեցին ամենայն ՚ի մի վայր, եւ
ամենեքին ՚ի լեզուս խօսիցին, եւ մտա
նիցեն անդր տգէտք կամ անհաւատք.
ոչ ասիցեն՝ եթէ զի՛ մոլէքդ: * Իսկ ե- 24
թէ ամենեքին մարգարէանայցեն, եւ մը
տանիցէ ոք անդր անհաւատ՝ կամ տգէտ,
յանդիմանի յամենեցունց, եւ քննի յա-
մենեցունց. * Եւ գաղտնիք սրտի նորա 25
յայտնի լինին: եւ ապա անկեալ ՚ի վր̃
երեսաց՝ երկիրպագանիցէ այ̃, եւ խոս-
տովան լինիցի՝ թէ արդարեւ ա̃ծ է ՚ի ձեզ:
ՃԳ * Եւ արդ՝ զի՞նչ իցէ եղբարք. յորժամ 26
՚ի մի վայր ժողովիցիք, իւրաքանչիւրոք
՚ի ձէնջ եթէ սաղմոս ունիցի, թէ վար-
դապետութի ունիցի, եթէ յայտնութի
ունիցի, թէ լեզուս ունիցի, եթէ թարգ
մանութի ունիցի, ա̃մ ՚ի շինած լինիցի.
* Եթէ ՚ի լեզուս ոք խօսեսցի՝ երկուք, 27
եւ եթէ եւս աւելի՝ երեք, եւ ապա մի ըստ
միոջէ. եւ մինն թարգմանիցէ: * Ապա 28
եթէ չիցէ՛ ոք որ թարգմանիցէ, լռու
լիցի յեկեղեցւոջն. ը̃ միտս խօսի՝ եւ ընդ

29 ա̄յ խօսեսցի։ * Բայց մարգարէք երկու
կամ երեք խօսեսցին, և այլքն քննեսցեն։
30 Ապա եթէ այլ ումեք որ նստիցին՝
31 յայտնեսցի, առաջինն լռեսցէ։ * Քան-
զի կարող էք ամենեքին մի ը̄ս միոջէ մար-
գարէանալ. զի ամենեքեան ուսանիցին,
32 և ամենեքեան մխիթարեսցին։ * Քան-
զի և հոգիք իսկ մարգարէից՝ մարգա-
33 րէից հնազանդին. * զի ոչ եթէ խռո-
վութե̄ է ա̄ծ՝ այլ խաղաղութե̄, որպէս յա̄մ
34 եկեղեցիս սրբոց։ * Կանայք՝ յա̄մ եկե-
ղեցիս լռութե̄ լիցին. զի ոչ հրամայի նոցա
խօսել՝ այլ հնազանդ լինել. որպէս և օրէնքն
35 իսկ ասեն։ * Ապա եթէ ուսանել ինչ
կամիցին, ՚ի տան զարս իւրեանց հարցա-
նիցեն. քանզի անպատեհ է կնոջ մար-
36 դ̄ս յեկեղեցւոջ խօսել։ * Եթէ ՚ի
ձէնջ բանն ա̄յ ել. և կամ առ ձեզ միայն
37 եհաս։ * Իսկ եթէ ոք համարիցի մար-
գարէ լինել՝ կա̄մ հոգևոր, գիտասցէ՝ զոր
գրեցից առ ձեզ, թէ տ̄ն պատուիրանք
38 են։ * Ապա թէ ոք ագիտանայցէ, ագի-
39 տասցի։ * Այսուհետև եղբարք, նա-
խանձեցարուք մարգարէանալ, և զխօ-
40 սել լեզուօք մի՛ արգելուք։ * Այլ ա̄մ ինչ
ձեր պարկեշտութ̄բ և ըստ կարգի լինիցի։ Կ․Ջ

## ԳԼ․ ԺԵ․

1 Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն
իմ, զոր աւետարանեցի ձեզ. զոր և



ըն-

ընկալարուք, յոր և հաստատեալդ էք·
* որով ապրեցայքն · որով բանիւ աւե 2
տարանեցի ձեզ՝ թէ ունիցիք · բայց է-
թէ ՚ի զուր ինչ հաւատայցէք ։ * Զի ես 3
ձեզ զայն նախ աւանդեցի՝ զոր և ես ըն-
կալայ · թէ և քս̅ մեռաւ վս̅ մեղաց մե-
րոց՝ ը̅ս̅ գրոց · * և զի թաղեցաւ, թէ և 4
յարեաւ յաւուր երրորդի՝ ը̅ս̅ գրոց · * և 5
թէ երևեցաւ կեփայի, և ապա երկոտա
սանիցն · * ապա երևեցաւ աւելի ևս ք̅ 6
զհինգ հարիւր եղբարց միանգամայն ·
յորոց բազումք կան մինչև ցայժմ, և ո-
մանք ննջեցին ։ * և ապա երևեցաւ յա- 7
կոբայ, ապա առաքելոցն ամենեցուն ։
* Յուսկ յետոյ քան զամենեսին իբրև 8
անարգի միոջ՝ երևեցաւ և ինձ ։ * զի ես 9
իսկ եմ տրուպն առաքելոց · որ չե՛մ իսկ
արժանի թէ կոչեցայց առաքեալ · զի հա-
լածեցի զեկեղեցին ա̅յ ։ * Այլ շնորհօքն 10
ա̅յ եմ զինչ և իցեմ · և շնորհք նր̅ որ յիս՝
ընդունայն ինչ ո՛չ եղեն · այլ առաւել
քան զն̅ ամենեսին վաստակեցի · և ո՛չ է-
թէ ես՝ այլ շնորհքն ա̅յ որ ընդ իս ։ * Արդ՝ 11
եթէ ես և եթէ նոքա՝ այսպէս քարոզե
ցաք, և դուք այսպէս հաւատացիք ։ * Ա- 12
պա եթէ քս̅ քարոզի՝ թէ ՚ի մեռելոց յա-
րուցեալ է, զիա՞րդ ասեն ոմանք ՚ի ձէնջ՝
եթէ յարութիւն մեռելոց չի՛ք ։ * Եթէ 13
յարութիւն մեռելոց չի՛ք, ապա և քս̅ չէ՛
յարուցեալ ։ * և եթէ քս̅ չիցէ յարու 14

 ցեալ,

ցեալ, ընդունայն է քարոզութիւն մեր․
15 ընդունայն են և հաւատքն ձեր․ * և գտա-
նիցիմք սուտ վկայք այ, զի վկայեցաք զայ՝
թէ յարոյց զքս․ զոր ոչն արդեօք յարոյց՝
16 թէ մեռեալք ոչ յառնիցեն․ * Իսկ ե-
եթէ մեռեալք ոչ յառնեն՝ ապա և քս չէ
27 յարուցեալ․ * և եթէ քս չիցէ յարու-
ցեալ, ընդունայն են հաւատքն ձեր․ և
18 տակաւին ՚ի նմին մեղս կայցէք․ * Իսկ
արդ՝ որ ննջեցինն ՚ի քս, կորեան ար-
19 դեօք․ * եթէ այսու կենօքս միայն յու-
սացեալ եմք ՚ի քս, ողորմելի եմք քան
զամ մարդիկ․
20 * Բայց արդ՝ քս յարուցեալ է ՚ի մեռե ԶԴ
21 լոց՝ առաջին պտուղ ննջեցելոց․ * քանզի
մարդով եղև մահ, և մարդով յարութի
22 մեռելոց․ * Որպէս ադամաւն ամենեքին
մեռանին․ նոյնպէս և քսիւ ամենեքեան
23 կենդանասցին․ * իւրաքանչիւր յիւրում
կարգի․ նախ քս, և ապա քսեանք ՚ի
24 գալստեանն նր․ * և ապա կատարած․
յորժամ տացէ ՚ի ձեռս զթագաւորութին
այ և հօր․ յորժամ խափանեսցէ զամ
իշխանութիւն և զամ պետութի և զզօրութի․
25 * Զի պարտ է նմա թագաւորել՝ մինչև
դիցէ զամ թշնամիս ՚ի ներքոյ ոտից իւ-
26 րոց․ * յետին թշնամին խափանի՝ մահ․
և զամ ինչ հնազանդ արար ՚ի ներքոյ ո-
27 տից նր․ * Բայց յորժամ ասիցէ․ թէ
հնազանդեալ է նմա ամ, յայտ է՝ թէ

բայց յայտնանէ՝ որ հնազանդեցոյց նմա
զամ. * Ի ժամ յորժամ հնազանդեսցի 28
նմա ամ՝ յայնժամ և ինքն որդի հնա
զանդեսցի այնմ, որ հնազանդեցոյց նմա
զամ. զի եղիցի ած ամ յամի. * Ապա 29
թէ ոչ՝ զինչ գործիցեն որ մկրտիցինն վն
մեռելոց, եթէ արդարև մեռեալք ոչ
յառնիցեն. ընդէր իսկ բնաւ մկրտին վն
նց. * ընդէր և մեք վտանգիմք յամ ժամ, 30
* և հանապազ մեռանիմք. ՚ի պարծանս 31
ձեր եղբարք՝ զոր ունիմ ՚ի քս
յս ՚ի տր մեր. * Եթէ վն մարդոյ ՚ի գա 32
զանամարտի լեալ էի յեփեսոս, զինչ
օգուտ էր ինձ՝ եթէ մեռեալք ոչ յառ
նեն. կերիցուք արբցուք՝ քանզի վաղիւ
մեռանիմք. * Մի խաբիք. ապականեն 33
զբարս քաղցունս բանք չարք.
Ձե * Սթափեցարուք արդարութբ և մի մե 34
ղանչէք. զի զգիտութիւն այ ոչ ունին ո
մանք. առ ամօթս ձեր ասեմ. * Այլ 35
ասիցէ ոք. զիարդ յառնեն մեռեալք՝ կամ
որո՞վ մարմնով գայցեն. * Անմիտ՝ դու 36
զոր սերմանես, ոչ կենդանանայ՝ եթէ
ոչ մեռանիցի. * Եւ զոր սերմանես, 37
ոչ զնոյն մարմին զոր ծնանելոցն իցէ՝ սեր
մանես, այլ հատ մերկ. եթէ ցորենոյ
իցէ՝ և եթէ այլոց սերմանեաց. * և ած 38
տայ նմա մարմին՝ որպէս և կամի. և իւրա
քանչիւր սերմանեացն զիւր մարմին. * Ոչ 39
ամ մարմին նոյն մարմին է, այլ՝ այլ մար
մին

մին է մարդկան , և այլ մարմին անաս֊
նոց , այլ մարմին թռչնոց՝ և այլ մար֊
40 մին ձկանց ։ * Կան մարմինք երկնաւորք՝
և մարմինք երկրաւորք · այլ՝ այլ փառք
երկնաւորացն՝ և այլ փառք երկրաւորաց ։
41 * այլ փառք արեգական , և այլ փառք
լուսնի , և այլ փառք աստեղաց · և աստղ
42 քան զաստղ առաւել է փառօք ։ * Նոյն֊
պէս և յարութիւն մեռելոց · սերմանի ա֊
պականութ̅՝ և յառնէ առանց ապակա֊
43 նութ̅ · * սերմանի անարգութ̅՝ և յառ֊
նէ փառօք · սերմանի տկարութ̅՝ և յառ֊
44 նէ զօրութ̅ · * սերմանի մարմին շնչաւոր՝
և յառնէ մարմին հոգևոր · եթէ գոյ
45 մարմին շնչաւոր , գոյ և հոգևոր ։ * Նո֊
պէս և գրեալ է , եղև մարդն առաջին
Ադամ ի շունչ կենդանի · երկրորդ ա֊
46 դամ ի հոգի կենդանարար ։ * բայց ոչ
նախ հոգևորն · այլ շնչաւորն , և ապա
47 հոգևորն ։ * Առաջին մարդն յերկրէ՝ հո֊
ղեղէն · իսկ երկրորդ մարդն տր̅՝ յերկ֊
48 նից ։ * ոպ̅ հողեղէնն , նոյնպէս և հողե
ղէնքս , և ոպ̅ երկնաւորն՝ նոյնպէս և երկ֊
49 նաւորքն ։ * Եւ որպէս զգեցաք զպատ
կեր հողեղինին · զգեցցուք և զպատկեր
երկնաւորին ։

50 * Բայց զայս ասեմ եղբարք՝ եթէ մար֊
մին և արիւն զարքայութիւն այ̅ ժառան
գել ոչ կարեն · և ոչ ապականութ̅ զա֊
51 նապականութ̅ ժառանգէ ։ * Արդ՝ խոր֊


հուրդ

հուրդ մի ասեմ ձեզ. ամենեքեան ննջես
ցուք, այլ ոչ ամենեքեան նորոգեսցուք։
* Յանկարծակի յական թօթափել՝ ՚ի 52
փող յետին. քանզի փող հարկանի, և
մեռեալք յարիցեն առանց ապականու
թե, և մեք նորոգեսցուք։ * Զի պարտ 53
է ապականութեանս այսմիկ զգենուլ զա-
նապականութի, և մահկանացուիս այս-
միկ զգենուլ զանմահութի։ * Եւ յոր- 54
ժամ մահկանացուս այս զգեցցի զան-
մահութի, և ապականութիս զանապակա
նութի, յայնժամ եղիցի բանն՝ որ գրե
ցաւ. եթէ ընկլաւ մահ ՚ի յաղթութի։
* Ո՞ւր է մահ յաղթութի քո. ո՞ւր դժոխք 55
խայթոց քո։ * Խայթոց մահու մեղք են, 56
և զօրութի մեղաց օրէնք։ * Եւ շնորհք 57
այ՝ որ ետ մեզ զյաղթութի ՚ի ձեռն տն
մերոյ յի քի։
ՃԻ * Այսուհետև եղբարք իմ սիրելիք, 58
հաստատունք եղերուք, անշարժ կացէք,
առաւե՛լ լերուք ՚ի գործս տն յամ ժամ.
գիտասջի՛ք՝ զի վաստակք ձեր ոչ են ընդ-
ունայն առաջի տն։

## ԳԼ. ԺԶ.

Եւ վս հանգանակին որ ՚ի սուրբսն է, որպ 1
պատուիրեցի եկեղեցեացն գա-
ղատացւոց՝ նոյնպէս և դուք արասջի՛ք։
* Ըստ իւրաքանչիւր միաշաբաթուջն իւ- 2
րաքանչիւրոք ՚ի ձէնջ առ ձին իւրում

 գան

3 գանձեսցէ՝ որ ինչ և յաջողեսցի. * Զի
մի՛ յորժամ գայցեմ, յայնժամ հաշիւք
լինիցին. այլ յորժամ եկից՝ զոր միաբան-
գամ ընտրեսցէք թղթովք, զն՟ս առաքե-
4 ցից տանել զշնորհսն ձեր յԵ՟մ. * Ապա
թէ արժան իցէ և ինձ երթալ՝ ը՟ն իս եր-
5 թիցեն. * Իսկ եկից առ ձեզ՝ յորժամ
'ի Մակեդոնիա անցանիցեմ. բայց իբրև
6 շրջեցայց 'ի Մակեդոնիա, * Թէ դէպ
լիցի, առ ձեզ մնացից՝ և կամ ձմերե-
ցից. զի և դուք յուղարկիցէք զիս՝ ուր
7 և երթալոցն եմ։ * Զի ոչ կամիմ զձեզ
այժմ 'ի հարևանցի տեսանել. ակն ու-
նիմ ժամանակ ինչ առնել առ ձեզ, ե-
8 թէ տ՟ր հրամայեսցէ։ * Բայց այժմ լի-
9 նիմ յԵփեսոս մինչև ցպենտեկոստէ. * զի
դուռն բացեալ է ինձ մեծ և կարևոր,
10 և հակառակորդք բ՟զմ են։ * Արդ՝ ե-
թէ եկեսցէ Տիմոթէոս՝ տեսջի՛ք զիարդ-
աներկիւղ լինիցի առ ձեզ. զի զգործ տ՟ն
11 գործէ՝ ո՟պ և ես. * մի՛ ոք զնա անգոս-
նեսցէ. և յուղարկեսջի՛ք զնա խաղաղու-
թ՟բ՝ զի եկեսցէ առ իս. քանզի ակն ու- ԱԶ
նիմ նմա եղբարբք հանդերձ.
12 * Իսկ վ՟ն Ապողոսի եղբօր՝ յոյժ աղաչե-
ցի զնա՝ զի եկեսցէ առ ձեզ եղբարբք
հանդերձ. և արդեօք ոչ էին կամք զի
այժմ եկեսցէ. այլ եկեսցէ յորժամ և
13 պարապեսցէ։ * Հսկեցէ՛ք՝ հաստատուն
կացէք 'ի հաւատս. ժրացարո՛ւք, զօրա



ցա

ցարուք ։ * Ամ ինչ ձեր սիրով լինիցի ։ 14
* Աղաչեմ զձեզ եղբարք՝ գիտէք ըզ 15
տունն Ստեփանեայ և Փորտունատեայ՝
որ են պտուղ Աքայեցւոց, և ՚ի պաշտօն
սրբոց կարգեցին զանձինս ։ * զի և դուք 16
հնազանդ լինիցիք այնպիսեացն. և ամի՝
որ գործակից իցէ և վաստակակից ։ * Ու֊ 17
րախ եղէ ՚ի գալ Ստեփանեայ և Փոր֊
տունատեայ և Աքայիկոսի, զի զձեր պա֊
կասութիւն նոքա լցին. * քանզի հանգու֊ 18
ցին զոգի իմ՝ և զձեր. արդ՝ ծանիջի՛ք
զայնպիսիսն ։ * Ողջոյն տան ձեզ եկե 19
ղեցիքն Ասիացւոյ ։ ողջոյն շատ տան ձեզ
՚ի տր՝ Ակիւղաս, և Պրիսկիղա՝ հան֊
դերձ առտնին եկեղեցեաւն իւրեանց ։
* Ողջոյն տան ձեզ եղբարք ամենեքեան ։ 20
Ողջոյն տուք միմեանց ՚ի համբոյր սըր֊
բութե ։ * Ողջոյնդ այդ՝ իմ ձեռին Պօ֊ 21
ղոսի է ։ * Եթէ ոք ոչ սիրէ զտր յս, ե֊ 22
ղիցի նզովեալ՝ Մարանաթայ ։ * Շնորհք 23
տն մերոյ յսի քսի ընդ ձեզ. * և սէրն իմ 24
ընդ ամենեսին ձեզ ՚ի քս յս. ամէն ։

Առ Կորնթացիս առաջին թուղթն՝ գրեցաւ ՚ի Փիլիպեայ, ՚ի ձեռն Ստեփանեայ և Փորտունատեայ և Աքայիկեայ ։

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ։
### ԳԼ. Ա։

1 ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ ԲԿ
յի՟ս քի՟ կամօքն այ՟, եւ տիմո՟
թէոս եղբայր. եկեղեցւոյ
այ՟ որ է ՚ի կորնթոս՝ սրբովքդ
ամենեքումբք՝ որ են յա՟մ կողմանս ա-
2 քայեցւոց։ * Շնորհք ը՟դ ձեզ եւ խաղա-
ղութի՟ յայ՟ հօրէ մերմէ՝ եւ ՚ի տ՟նէ յի՟է
3 քի՟է։ * Օրհնեալ է ա՟ծ եւ հայր տ՟ն մե-
րոյ յի՟ի քի՟ի. հայր գթութե՟ց, եւ ա՟ծ ա՟մ
4 մխիթարութե՟. * որ մխիթարէն զմեզ
յա՟մ նեղութի՟ս մեր. առ ՚ի կարօղ լի-
նելոյ մեզ մխիթարել զայնոսիկ՝ որ յա՟մ
նեղութի՟ս իցեն, մխիթարութե՟բն՝ որով
5 մեք մխիթարիմք յայ՟։ * Զի որ՟պ առա-
ւելան չարչարանքն քի՟ի ՚ի մեզ. նոյնպ՟ս
եւ ՚ի ձեռն քի՟ի առաւել լիցի եւ մխիթա-
6 րութի՟ն մեր։ * Զի եթէ նեղիմք, վ՟ս
ձերոյ մխիթարութե՟ եւ փրկութե՟, եւ եթէ
մխիթարիմք, վ՟ս ձերոյ մխիթարութե՟ եւ
փրկութե՟, որ յաջողեալն է համբերութե՟


նո-

նոցին չարչարանաց , զոր և մեքն չարչա
րիմք ։ *Եւ յոյսն մեր հաստատուն է վասն 7
ձեր ։ քանզի գիտեմք՝ եթէ ո՛րպ կցորդ եմք
չարչարանացն , նոյնպէս և մխիթարու
թեանն ։ *Քանզի ոչ կամիմ տգէտս լի 8
նել ձեզ եղբարք՝ վն նեղութեն մերոյ ե-
ղելոյ յասիա ։ զի առաւել քան զկար մեր
ծանրացաք , մինչև անյոյս լինելոյ մեզ և
'ի կենաց ։ *Այլ անձամբ յանձինս զվճիռ 9
մահու ընկալաք ։ զի մի' յանձինս ապաս
տանիցիմք՝ այլ յած՝ որ յարուցանէ ըզ
մեռեալս ։ *որ յայնպիսի մահուանէ 10
փրկեաց զմեզ՝ և փրկեսցէ ։ *քանզի յու- 11
սացեալ եմք , եթէ տակաւին փրկեսցէ
օգնականութբ աղօթից ձերոց վն մեր ։
Զի 'ի բազմադէմ շնորհացն՝ որ 'ի մեզ ,
բազմօք յաճախեսցեն գոհութիւնք վն մեր ։
Բ Ի *Քանզի պարծանք մեր այս են ։ վկայ 12
ութի մտաց մերոց ։ զի սրբութբ և սու
գութբ այ , և ոչ մարմնեղէն իմաստութբ ,
այլ շնորհօքն այ շրջեցաք յաշխարհի ։
բայց առաւել ևս առ ձեզ ։ *Քանզի ոչ 13
եթէ այլազգ ինչ գրեմք առ ձեզ , այլ
զոր ընթեռնուցուքն՝ և գիտակ լինիցիք ։
քանզի յուսամ եթէ մինչև 'ի վախճան
գիտիցէք ։ *որպ և խելամուտ եղէք մեզ 14
փոքր 'ի շատէ ։ զի պարծանք ձեր եմք ,
որպ և դուք մեր յաւուրն տն մերոյ յի
քի ։ *Եւ յայս ապաստան կամէի նախ 15
առ ձեզ գալ , զի դուք կրկին շնորհս ըն-

16 գունիջիք • * Եւ ՚ի ձէնջ երթալ ՚ի մակե
դոնիա • եւ դարձեալ ՚ի մակեդոնիայ
գալ առ ձեզ • եւ ՚ի ձէնջ յուղարկել ՚ի
17 հրէաստան ։ * Իսկ եթէ զայս խորհե
ցայ՝ միթէ թեթեւութ՟ ինչ գնացի • եւ
կամ զոր խորհիմն՝ ըստ մարմնոյ ինչ խոր
հիցիմ, այլ զի եղիցի յինէն կողմանէ,
18 այոն՝ այո, եւ ոչն՝ ոչ ։ * Հաւատարիմ է
ած՟, զի բանն մեր որ առ ձեզ եհաս՝ ոչ
19 է այո, եւ ոչ ։ * Քանզի որդին այ՟ յս՟ քս՟,
որ ՚ի ձեզ մեօք քարոզեցաւ, ինեւ եւ սի
ղուանոսիւ եւ տիմոթէիւ, ոչ եղեւ այո եւ
20 ոչ • այլ այոն ՚ի նմին եղեւ ։ * Զի որչափ
աւետիքն այ՟ են՝ ՚ի նմա այոն • վ՟ն որոյ եւ
21 նովին ամէնն մեօք ՚ի փառս այ՟ ։ * Բայց
որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ
22 ՚ի քս՟, եւ որ օծ զմեզ, ած՟ է • * որ եւ կնի
քեաց զմեզ, եւ ետ զառհաւատչեայ հոգ
ւոյն ՚ի սիրտս մեր ։
23 * Բայց ես վկայ զած՟ կոչեմ անձին իմոյ • ԲՋ
զի վասն խնայելոյ ՚ի ձեզ՝ ոչ եւս եկի ՚ի
կորնթոս • զի ոչ եթէ տիրեմք ձեզ հա
ւատովքս՝ այլ գործակից եմք շնորհացդ
ձերոց • քանզի հաւատովք հաստատեալ
կայք ։

## ԳԼ. Բ.

1 Բայց զայս եւեթ ընտրեցի՝ զի մի՛ միւս
անգամ տրտմութ՟ եկից առ ձեզ ։
2 * Զի եթէ ես տրտմեցուցանեմ զձեզ •


եւ

Եւ ո՞վ է՝ որ ուրախ առնիցէ զիս, եթէ ոչ՝
որ տրտմիցին յինէն։ * Եւ զայս իսկ գրե- 3
ցի՝ զի մի՛ յորժամ գայցեմ տրտմութիւն ինչ
կրիցեմ, ուստի արժանն իցէ ինձ ուրախ
լինել. յուսացեալ եմ ՚ի ձեզ ամենեսին,
զի իմ ուրախութիւն՝ ձեր ամենեցուն է։
* Զի ՚ի բազում վշտաց՝ եւ ՚ի նեղութենէ սրտի 4
գրեցի առ ձեզ բազում արտասուօք. ոչ զի
տրտմեսջիք, այլ զի զսէրն իմ գիտաս-
ջիք, զոր ունիմ առաւելապէս առ ձեզ։
* Ապա եթէ ոք տրտմեցոյց՝ ոչ եթէ զիս 5
տրտմեցոյց՝ այլ փոքր ՚ի շատէ, զի մի՛
ծանրացայց ամենեցուն ձեզ։ * Շատ է 6
այնպիսւոյն պատուհասն այն՝ որ ՚ի բազ-
մաց անտի է։ * Այսուհետեւ նմին հա- 7
կառակն՝ մանաւանդ շնորհել ձեզ նմա՝ եւ
մխիթարել. զի մի՛ յառաւել տրտմութենէն
ընկղմեսցի այնպիսին։ * Վասն որոյ աղա- 8
չեմ զձեզ հաստատել ՚ի նա զսէրն։ * Վ͞ն 9
այնորիկ իսկ եւ գրեցի. զի զչափ առից
զձեր՝ եթէ յա͞մի հպատակ իցէք։ * Ո՛ր 10
եթէ ումեք շնորհիցէք՝ եւ ես. քանզի եւ
ես եթէ շնորհեցեմ, զոր ինչ շնորհեցեմ՝
վ͞ն ձեր ՚ի դէմս ք͞սի. * զի մի՛ զրկեսցիմք 11
՚ի սատանայէ. քանզի չեմք ինչ անտեղ-
եակ խորհրդոցն նորա։

Գկ * Այլ իբրեւ հասի ես ՚ի Տրովադա յա- 12
ւետարանն ք͞սի, եւ դուռն բաց էր ինձ
՚ի տ͞ր, * ոչ եւս հանգիստ հոգւոյ ի-
մում. զի ոչ գտի ես անդ զտիտոս զեղ- 13

բայց իմ. այլ հրաժարեալ 'ի նոցանէ՝ գը
14 նացի 'ի Մակեդոնիա ։ * Այլ ա̃յ շնորհք՝
որ յա̃մ հռչակ հարկանէ զմէնջ 'ի քս̃
յս̃ , և զհոտ գիտութեն իւրոյ յայտնի
15 առնէ մեօք յա̃մ տեղիս · * զի հոտ անոյշ
եմք քս̃ի առ ա̃ծ՝ 'ի մէջ փրկելոցն՝ և 'ի
16 մէջ կորուսելոցն · * ոմանց հոտ՝ մահ_
ուանէ 'ի մահ , և ոմանց հոտ՝ կենդանու_
թէ 'ի կեանս · և առ այս ո՛ բաւական ի_
17 ցէ ։ * Քանզի ոչ եմք իբրև զայլսն , որ
վաճառականք լինին բանին ա̃յ · այլ իբրև
'ի հաստատութէ , այլ իբրև յա̃յ առաջի
ա̃յ 'ի քս̃ խօսիմք ։

## ԳԼ. Գ.

1 Սկսանիմք այսուհետև վերստին զան_
ձինս ընծայեցուցանել · թէպէտ և
ոչ պիտոյ իցեն մեզ , որպ ոմանց թուղթք
2 ընծայութե առ ձեզ , կամ 'ի ձէնջ ։ * Այլ
թուղթք մեր դուք էք · գրեալ 'ի սիրտս
մեր , ծանուցեալ և ընթերցեալ յա̃մ
3 մարդկանէ · * յայտնեալք՝ զի էք թուղթք
քս̃ի , պաշտեցեալ 'ի մէնջ · և գրեալ՝
ոչ մրով , այլ հոգւովն ա̃յ կենդանւոյ ·
ոչ 'ի տախտակս քարեղէնս , այլ 'ի տախ_
տակս սրտի մարմնեղէնս ։
4 * Յոյս մի այսպիսի ունիմք 'ի ձեռն քս̃ի Գ.Դ.
5 առ ա̃ծ · * իբր ոչ եթէ անձամբ բաւա_
կան եմք խորհել ինչ իբրև 'ի մէնջ · այլ
6 բաւականութիւն մեր յա̃յ է · * որ և բա_

ւանկանս արար զմեզ՝ պաշտօնեայս նորոց
կտակարանացս՝ ոչ գրով, այլ հոգւով.
զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցու-
ցանէ: * Ապա եթէ պաշտօնն մահու 7
գրով դրոշմեալ ՚ի տախտակս քարեղէ-
նս՝ եղեւ փառօք, զի մի՛ կարասցեն հայել
որդիքն իէլի յերեսն մովսէսի՝ վ̅ն փառաց
երեսաց ն̅ր, որ խափանելոցն էր. * որ- 8
չափ եւս առաւել պաշտօն հոգւոյն եղի-
ցի փառօք: * Ապա եթէ պաշտօն դատա- 9
պարտութե̅ փառօք էր, որչափ եւս առաւել
պաշտօն արդարութե̅ն փառօք: * Քանզի 10
ոչ եթէ փառաւորի փառաւորեալն յայսմ
մասին, վ̅ն առաւելութե̅ փառացն: * Ապա 11
եթէ որ խափանելոցն էր՝ այն փառօք
էր, որչափ եւս առաւել՝ որ կալոցն է՝ փա-
ռօք իցէ: * Արդ՝ զի ունիմք այսպի- 12
սի յոյս, բազում համարձակութե̅ վարես
ցուք. * եւ ոչ որ̅պ մովսէս արկանէր քող 13
՚ի վ̅ր երեսաց իւրոց, վ̅ն չհայելոյ որդ-
ւոցն իէլի ՚ի վախճան խափանելոցն:
* Այլ կուրացան միտք ն̅ց. քանզի մինչեւ 14
ցայսօր ժամու նոյն քող ձգեալ կայ ՚ի վ̅ր ըն-
թերցուածոց հին կտակարանացն. եւ ոչ
վերանայ, զի ք̅իւ խափանելոց է: * Այլ 15
մինչեւ ցայսօր՝ յորժամ ընթեռնուն զմով
սէս, նոյն առագաստ կայ ՚ի վ̅ր սրտից ն̅ց.
* այլ յորժամ դարձցին առ տ̅ր, ապա 16
վերանայցի առագաստն: * Ապա տ̅ր հոգին 17
Վ.Ձ է. ուր հոգի տ̅ն է, անդ ազատութի̅ է:

18 * Բայց մեք ամենեքեան բացաւ երեսօք
զփառսն տն իբրեւ ընդ հայելի տեսեալ,
ի նոյն պատկեր նորոգիմք փառաց ի
փառս, որպ եւ ի տն հոգւոյ։

## ԳԼ․ Դ․

1 Վն այսորիկ ունիմք զպաշտօնս զայս՝
որպ եւ գտաք զողորմութի, եւ ոչ ձանձ-
2 րանամք․ * այլ հրաժարեցաք ի գաղտ-
նեաց ամօթոյն․ զի մի՛ գնասցուք խորա-
մանկութբ, եւ մի՛ նենգեսցուք զբանն այ․
այլ յայտնութբ ճշմարտութեն ընծայե-
ցուսցուք զանձինս մեր առ ամ միտս
3 մարդկան առաջի այ։ * Ապա թէ իցէ
եւ ծածկեալ աւետարանն մեր, ի մէջ
4 կորուսելոցն է ծածկեալ․ * որոց աստ-
ուած աշխարհիս այսորիկ կուրացոյց ըզ-
սիրտս անհաւատիցն, զի մի՛ ծագեսցէ
ի նս լուսաւորութի աւետարանի փա-
ռացն քսի․ որ է պատկեր աներեւութին
5 այ։ * Ոչ եթէ զանձինս քարոզեմք,
այլ զյս քս զտր․ եւ զմեզ ծառայս ձեզ
6 վն քսի։ * Զի ած որ ասաց ի խաւարէ
լոյս ծագել․ որ եւ ծագեաց լոյս ի սիրտս
մեր ի լուսաւորութի գիտութե փառացն
7 այ ի դէմս յսի քսի։ * Այսուհետեւ ու-
նիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս․
զի առաւելութի զօրութեն իցէ յայ, եւ
8 ոչ ի մէնջ։ * Յամենայնի նեղեալք՝
այլ ոչ նուաղեալք․ կարօտեալք՝ այլ
ոչ

ոչ տարակուսեալք * · հալածեալք՝ այլ 9
ոչ լքեալք · չարչարեալք՝ այլ ոչ սատա
կեալք · * յա͞մ ժամ զմահն յ͞ի ՚ի մար 10
մինս մեր կրեսցուք՝ զի և կեանքն յ͞ի ՚ի
մարմինս մեր յայտնեսցին · * Քանզի 11
միշտ մեք՝ որ կենդանիքս եմք , ՚ի մահ
մատնիմք վասն յ͞ի · զի և կեանքն յ͞ի
յայտնի լիցին ՚ի մահկանացու մարմինս
մեր · * Այսուհետև մահ ՚ի մեզ զօրա 12
նայ , և կեանք ՚ի ձեզ : * Արդ՝ ունիմք 13
զնոյն հոգի հաւատոյ · ո͞պ և գրեալ է ·
հաւատացի՝ վ͞ն որոյ և խօսեցայ · և մեք
հաւատամք՝ վասն որոյ և խօսիմք իսկ ·
* Զայս գիտեմք՝ եթէ որ յարոյց զյ͞ն , 14
և զմեզ ͞ը յ͞ի յարուսցէ՝ և յանդիման
կացուսցէ ձեօք հանդերձ · * քանզի ա͞մ 15
ինչ վ͞ն ձեր է · զի շնորհքն յաճախեալք
՚ի բազմաց ՚ի գոհուէ անտի՝ առաւելես
ցին ՚ի փառս ա͞յ · * Վասն որոյ և ոչ ձանձ 16
րանամք · այլ թէպէտ և արտաքին մար
դըս մեր ապականի , այլ ներքին մարդն
մեր նորոգի օր ըստ օրէ : * Զի առ ժա 17
մայն յաճախութ͞ի թեթև նեղութ͞ես մե
րում՝ ՚ի յաւիտենականն առաւելութ͞ի ,
զմեծութիւն փառացն գործէ ՚ի մեզ :
* Քանզի ոչ դիտեմք զերևելիս՝ այլ 18
զաներևոյթսն · զի երևելիքս առ ժամա
նակ մի են , և աներևոյթքն յաւիտենա
կանք :

## Գլ. Ե.

1 Քանզի գիտեմք՝ եթէ երկրաւոր տա-
ճար շինուածոյս մերոյ քակեսցի,
շինած յա̃յ ունիմք՝ տաճար աւանց ձե-
ռագործի, յաւիտենական յերկինս։
2 * Եւ ի̃ այս տաղտկամք. քանզի զբնա-
կութի̃ երկնից փափագեմք զգենուլ.
3 * միայն թէ յորժամ զգենուցումքն՝ ոչ
4 մերկ գտանիցիմք։ * Քանզի որ եմք ընդ
յարկաւս ի̃ այսուիկ՝ տաղտկամք ծան-
րացեալք. զի ոչ կամիմք մերկանալ, այլ
զայն ՚ի վե̃ր այսր զգենուլ. զի ընկղմես-
5 ցի մահկանացուս ՚ի կենաց անտի։ * Իսկ
որ յաջողէն մեզ ՚ի սոյն ա̃ծ է. որ ետ
մեզ զառհաւատչեայ հոգւոյն։
6 * Արդ՝ համարձակիմք յա̃մ ժամ, և
գիտեմք՝ եթէ որչափ յամեմք ՚ի մարմնի
7 աստ՝ օտարանամք ՚ի տ̃նէ. * զի հաւա-
8 տովք գնամք՝ և ոչ կարծեօք։ * Իսկ հա-
մարձակիմք՝ և առաւել ևս հաճեալ եմք
ելանել ՚ի մարմնոյ աստի՝ և մտանել առ
9 ա̃ծ։ * Վասն որոյ և առատանամք. զի
եթէ յամիցեմք՝ և եթէ ելանիցեմք՝ հա-
10 ճոյ և եթ իցեմք նմա։ * Քանզի ամենե-
ցուն մեզ յանդիման լինել կայ առաջի
ատենին քի̃ի. զի ընկալցի իւրաքանչիւր
իւրով մարմնով՝ զոր ինչ գործեաց յա-
11 ռաջ՝ եթէ բարի, և եթէ չար։ * Իսկ
արդ՝ զահ̃ տ̃ն գիտելով չափ, զմարդ-

կան ինչ միտս համարիմք · սակայն առաջի
ա՟յ յայտնեալ եմք · բայց և յուսամ և
՚ի ձեր միտս յայտնի լինել: * Իբր ոչ ե- 12
թէ միւսանգամ զանձինս ինչ ընծայե
ցուցանեմք ձեզ, այլ պատճառս տամք
ձեզ պարծանաց վ՟ն մեր · զի ունիցիք առ
այնոսիկ՝ որ առ աչօք պարծիցին, և ոչ
սրտիւք: * Զի եթէ առանցաք ինչ՝ այն 13
ա՟յ է · և եթէ զգաստանամք՝ այն ձեր է:
* Զի սէրն ք՟ի ստիպէ զմեզ քննել զայս · 14
զի եթէ մին փոխանակ ամենեցուն մե-
ռաւ, ապա ուրեմն ամենեքեան մեռեալ
էին · * և ՚ի վ՟ր ամենեցուն մեռաւ, զի 15
որ կենդանիքն իցեն՝ մի՛ անձանց իցեն
կենդանիք, այլ այնմ՝ որ ՚ի վ՟ր նոցայն
մեռաւ, և յարեաւ: * Այսու հետև մեք 16
ոչ զոք գիտեմք մարմնով · զի թէպէտ և
գիտէաք մարմնով զք՟ս, այլ արդ ոչ ևս
նոյնպէս գիտեմք: * Բայց եթէ ինչ ՚ի 17
ք՟ս նոր արարած իցէ · զի հինն անց, և
արդ նոր եղև ա՟մ: * Այլ ա՟մ ինչ յա՟յ՝ 18
որ հաշտեցոյց զմեզ ը՟ն իւր ՚ի ձեռն ք՟ի ·
Գ.Զ. և ետ մեզ զպաշտօնն հաշտութե:
* Որզի ա՟ծ էր՝ ք՟իւ զաշխարհս հաշ 19
տեցուցանել ընդ իւր, և չհամարել նո՟ց
զմեղս իւրեանց, և եդ ՚ի մեզ զբանն
հաշտութե, * Արդ՝ վ՟ն ք՟ի պատգա 20
մաւորիմք՝ ո՟ց և ա՟յ բարեխօսութ՟բ մերով:
աղաչեմք վ՟ն ք՟ի՝ հաշտեցարուք ը՟ն ա՟յ:
* Զի զայն՝ որ ոչն գիտէր զմեղս, վ՟ն 21


մեր

մեր մեղս արար. զի մեք եղիցուք նովաւ
արդարութիւն այ.

## ԳԼ. Զ.

1 Գործակից եմք ձեր՝ և աղաչեմք. մի՛
ընդունայն զշնորհսն այ ընդունել
2 ձեզ. * զի 'ի ժամանակի ընդունելութե՛
ան, լուայ քեզ, և յաւուր փրկութե
օգնեցի քեզ: Ահաւասիկ ժամանակ է ըն
3 դունելի. ահա օր փրկութե: * Մի՛ և մի՛
իւիք տայցէք պատճառս, զի մի՛ արա
4 տեսցի պաշտօնն. * այլ յամի ընծայե
ցուցէք զանձինս ձեր իբրև զպաշտօնեայս
այ՝ համբերութբ բազմաւ՝ 'ի նեղութիս 'ի
5 վիշտս 'ի չարչարանս, * 'ի գանս 'ի բանտս
'ի խռովութիս յաշխատութիս 'ի հսկմունս 'ի
6 պահս, * 'ի սրբութե 'ի գիտութե յերկայն
մտութե 'ի քաղցրութե՝ 'ի հոգին սբ, 'ի սէր՝
7 առանց կեղծաւորութե, * 'ի բանս ճշմար
տութե, 'ի զօրութե այ. վս զինուն արդա
8 րութե որ է աջմէն և է ահեկէն է. * փա
ռօք և անարգութբ, գովութբ և պարսա
9 ւանօք, իբրև մոլարք՝ և ճշմարիտք. * իբ
րև անծանօթք՝ և ծանուցեալք. իբրև
մահկանացուք՝ և ահաւասիկ կենդանի
եմք, իբրև խրատեալք՝ և ոչ մահապար
10 տեալք. * իբրև տրտմեալք, և հանա
պազ ուրախ եմք. իբրև տնանկք՝ և զբա
զումս մեծացուցանեմք. իբրև ոչինչ ու
11 նիցիմք, և զամենայն ունիմք: * Բերանք


մեր

մեր բացեալ է առ ձեզ՝ կորնթացիք. և
սիրտք մեր ընդարձակեալք. * Ոչ ինչ 12
նեղիք ՚ի մէնջ՝ բայց եթէ ՚ի գութս ձեր
նեղիցիք. * արդ՝ զնոյն հատուցումն իւ- 13
րև ընդ որդեակս ունիմ. ընդարձակեցա
րուք և դուք, * և մի՛ լինիք լծակիցք ան- 14
հաւատից. քանզի զի՞նչ հաղորդութիւն է
արդարութեան ընդ անօրէնութեան. և կամ զի՞նչ
հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի. * Եւ 15
կամ զի՞նչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ բելիա
րայ. կամ զի՞նչ բաժին կայ հաւատա
ցելոյն ընդ անհաւատին. * կամ զի՞նչ 16
նմանութիւն է տաճարի Աստուծոյ մեհենաց. Ա-
պաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք.
որպէս և ասաց Աստուած, թէ բնակեցայց ՚ի նոսա,
և գնացից ՚ի նոսա. և եղէց նոցա Աստուած, և նո-
քա եղիցին իմ ժողովուրդ. * Վասն որոյ 17
ելէք ՚ի միջոյ նոցա և մեկնեցարուք, ասէ
Տէր. և ՚ի պիղծս մի՛ մերձենայք. * և ես 18
ընկալայց զձեզ. և ես եղէց ձեզ ՚ի հայր,
և դուք եղիջիք ինձ յուստերս և ՚ի դըս-
տերս, ասէ Տէր ամենակալ:

## ԳԼ. Է.

Արդ որովհետև զայս աւետիս ունիմք 1
սիրելիք, սրբեսցուք զանձինս մեր
յամենայն պղծութենէ մարմնոյ և հոգւոյ. կա-
տարեսցուք զսրբութիւն ահիւն Աստուծոյ. * Տա- 2
րայք մեզ, զի ոչ ումեք մեղաք, և ոչ
զոք եղծաք, և ոչ զոք զրկեցաք. * Ո՛չ 3
եթէ

եթէ 'ի դատապարտութի՛ ինչ ասեմ. քանզի
յառաջ իսկ ասացի, եթէ 'ի սիրտս մե-
րում կայք՝ 'ի կեալ և 'ի մեռանել ընդ ձեզ։
4 * Բազում համարձակութի՛ է ինձ առ Դկ
ձեզ. բազում պարծանք են ինձ վա՛ ձեր. լի՛
եմ մխիթարութե՛բ. առաւելեալ եմ ու-
5 րախութե՛բ յա՛մ նեղութի՛ս մեր։ * Քանզի
յորժամ հասաք մեք 'ի մակեդոնիա,
և ոչ միով իւիք հանգիստ գտաւ մարմ-
նոյ մերում, այլ յա՛մի նեղեալք. քան-
զի արտաքոյ մարտք՝ և 'ի ներքոյ սրհա
6 ւիրք։ * Այլ որ մխիթարէն զխոնարհս,
մխիթարեաց զմեզ ա՛ծ 'ի գալստեանն
7 տիտոսի։ * ոչ միայն 'ի գալստեան նո՛ր.
այլ և 'ի մխիթարութե՛ն՝ զոր մխիթարե-
ցաւ նա 'ի ձեզ, 'ի պատմել մեզ զանձուկն
ձեր՝ զողբումն ձեր՝ զնախանձն ձեր վասն
իմ, մինչ առաւել ուրախ լինել ինձ։
8 * Զի թէ և տրտմեցուցի զձեզ թղթովն՝
ոչ զղջանամ, թէպէտ և զղջացեալ էի։
քանզի տեսանեմ՝ զի թուղթն այն թէ
և առ ժամանակ մի տրտմեցոյց զձեզ.
9 * արդ ուրախ եմ, ոչ զի տրտմեցէք՝ այլ
զի յապաշխարութի՛ տրտմեցարուք. քանզի
տրտմեցայք ըստ ա՛յ. զի մի՛ իւիք զեր
10 կիցէք 'ի մէնջ։ * Զի որ ըստ ա՛յն տրտ
մութի՛ է, ապաշխարութի՛ 'ի փրկութի՛ առանց
զղջանալոյ գործէ. իսկ աշխարհի տրտ-
11 մութի՛ մահ գործէ։ * Արդ՝ նո՛ն իսկ որ
ըստ ա՛յն տրտմեցարուք, որչափ ինչ փոյթ


գոր-

գործեաց 'ի ձեզ, կամ աղերս կամ սաստ
կամ երկիւղ կամ անձուկ կամ նախանձ
կամ վրէժխնդրութիւն. քանզի յամենայնի ըն-
ծայեցուցիք զանձինս ձեր՝ սուրբ լինել յի-
րի յայդմիկ: * Ապա ուրեմն՝ թէ և գրե 12
ցի ես առ ձեզ, ոչ վասն այնորիկ որ զըր
կեացն, և ոչ վասն այնորիկ որ զրկեցաւն.
այլ վասն յայտնի լինելոյ փութոյն ձերոյ
որ վասն մեր՝ առ ձեզ առաջի Աստուծոյ: * Վասն 13
այնորիկ մխիթարեալ եմք 'ի վերայ մխիթա
րութեան մերոյ. առաւել ևս խնդացաք
'ի վերայ խնդութեան տիտոսի. քանզի հան-
գուցեալ էր հոգի նորա 'ի ձէնջ ամենե-
ցունց: * Զի թէ զինչ և պարծեցայ առ նմա 14
վասն ձեր՝ ոչ ամաչեցի. այլ որպէս զամենայն ճշ-
մարտութեամբ խօսեցաք ընդ ձեզ, նոյնպէս և
պարծանքն մեր առ տիտոսի ճշմարիտ ե-
ղեն: * Եւ գութք նորա առաւել ևս 15
են 'ի ձեզ. յորժամ յիշեցուցանէր մեզ զա-
մենեցուն զձեր հնազանդութիւն, թէ որ-
պէս ահիւ և դողութեամբ ընկալարուք զնա:
* Եւ արդ՝ ուրախ եմ. զի յամենայնի համար 16
ձակ եմ առ ձեզ:

## ԳԼ. Ը.

ԽԲ Յայտնեմ ձեզ եղբարք զշնորհսն Աստուծոյ, 1
որ տուեալ են եկեղեցեացն մակե
դոնացւոց. * զի մեծաւ հանդիսիւ նե- 2
ղութեան առաւելութիւն խնդութեան նոցա, և ծանր
աղքատութիւն նոցա, առաւել եղև 'ի մե-
ծու

3 ծութի՟ առատութե՟ նց՟ · * զի ըստ կարի նց՟
4 վկայեմ, և աւելի քան զկար · * Ինքնա
կամ բ՟զմ աղաչանօք աղաչէին զշնորհսն,
և զհաղորդութի՟ պաշտամանն որ ՚ի ս՟բսն՝
5 տալ ցմեզ ։ * Ո՛չ որչափ ակն ունէաք ,
այլ և զանձինս եւս ետուն , նախ տն՟՝ և
6 ապա մեզ կամօքն այ՟ · * աղաչել զտի-
տոս՝ զի որպ՟ սկսաւն յառաջագոյն, նոյն-
պէս և կատարեսցէ ՚ի ձեզ և զայդ եւս
7 շնորհ ։ * Այլ որպ՟ յամ՟ի առաւել էք հա-
ւատովք՝ և բանիւ և գիտութե՟ և ամ՟
փութով, և որ ՚ի մէնջ ՚ի ձեզ սէրն է, զի
և յայդմ եւս շնորհսի առաւել լինիցիք ։
8 * Ո՛չ որպ՟ հրամանս տալով ասեմ · այլ վս՟
այլոց փութոյ, և վս՟ ձերոյ սիրոյ՝ զմտեր
9 մութի՟ փորձեմ ։ * Քանզի գիտէք ըզ
շնորհսն տն՟ մերոյ յի՟ի քի՟ի · զի վս՟ ձեր
աղքատացաւ՝ որ մեծատունն էր, զի դուք
10 նր՟ աղքատութե՟ն մեծասջիք ։ * Եւ խրատ
մի յայսմիկ տամ · զի այն իսկ օգուտ ձեզ
է · որք ոչ միայն զառնելն՝ այլ և զկամելն
յառաջագոյն սկսայք ՚ի հերուն հետէ ։
11 * Այժմ արդ և զառնելն իսկ կատարե
ցէք · զի որպ՟ յօժարութի՟ն ՚ի կամելն է ,
12 նոյնպէս և առնելն ըստ գոյից ։ * Զի ե-
թէ յօժարութի՟ն առաջի կայ , ըստ գոյից
13 ընդունելի է՝ և ոչ եթէ ըստ չգոյից ։ * Զի
ոչ եթէ այլոց հանգիստ կամիցիմ , և
14 ձեզ նեղութի՟ ։ * Այլ հաւասարութե՟
յայժմու ժամանակիս, ձեր առաւելու-

 թին

թ՟իդ 'ի նց՟ պակասութե՟ն · զի և նց՟ առա
ւելութ՟ին եղիցի 'ի ձերում պակասու
թե՟դ · զի եղիցի հաւասարութ՟ի՝ ոպ՟ և
գրեալ է · * Թէ որ բազումն առ՝ ոչ ա– 15
ռաւելաւ, և որ սակաւն՝ ոչ նուազեցաւ ։
* Բայց շնորհք այ՟՝ որ արկ զնոյն փոյթ 16
վս՟ ձեր 'ի սիրտ տիտոսի · * զի զաղա 17
չանսն ընկալաւ՝ և փութացաւ յօժարա
գոյնս դիմեաց գալ առ ձեզ ։ * Եւ ա– 18
ռաքեցաք ը՟ն նմա զեղբայրն՝ որոյ գոհու
թ՟ին յաւետարանի անդ է ը՟ն ա՟մ եկեղե
ցիս ։ * Եւ ոչ այսչափ միայն, այլ և ձեռ– 19
նադրեալ յեկեղեցեաց անտի, նշդեհա
կից մեր եղև 'ի շնորհս յայսոսիկ՝ որ պաշ
տին 'ի մէնջ 'ի փառս տն՟՝ և 'ի մեր յօ–
ժարութ՟ի ։ * Բայց զայս խորշէաք իսկ՝ 20
թէ գուցէ արատ ոք ինչ դնիցէ 'ի հաս–
տատութ՟եսն յայսմիկ՝ որ պաշտեցաւս 'ի
մէնջ ։ * Քանզի խորհիմք զբարիս՝ ոչ 21
միայն առաջի տն՟, այլ և առաջի մարդ–
կան ։ * Եւ առաքեցաք ը՟ն նս՟ զեղբայրն 22
մեր՝ զոր ընտրեցաք 'ի բազում իրս բազում
անգամ պինդ գտեալ · և առաւել ևս
այժմ պնդագոյն՝ յուսով մեծաւ 'ի ձեզ ·
* Բայց եթէ վասն տիտոսի ինչ բանք 23
են, իմ հաւասար է՝ և ձեր գործակից ·
և եթէ եղբարք մեր, առաքեալք ե–
կեղեցւոյ՝ և փառք քսի ։ * Եւ արդ՝ ըզ 24
հանդէս սիրոյ ձերոյ՝ և զմերոյ պարծա
նացն վասն ձեր, 'ի դէմս ցուցջի՛ք յան–

ԱՌ ԿՈՐՆԹ. ԵՐԿՐՈՐԴ.
դիման ամենայն եկեղեցեաց:

## ԳԼ. Թ.

1 Բայց վ՟ն պաշտամանն որ 'ի սուրբսն է, Դ.Դ.
2 աւելի է ինձ և գրել առ ձեզ: * Զի
գիտեմ զյօժարութի՟ ձեր, զոր վ՟ն ձեր
պարծեցեալ եմ 'ի մէջ Մակեդոնացւոցն, թէ Աքայեցիքն 'ի հերուն հետէ
պատրաստ են. և ձեր նախանձն զբա-
3 զումս յորդորեաց: * Եւ առաքեցաք
զեղբարսն՝ զի մի՛ պարծանքն մեր որ վ՟ն
ձեր՝ ընդունայն լինիցին 'ի մասինդ յայդ-
միկ. այլ ո՟պ ասէի իսկ, պատրաստ
4 գտջիք գտանիջի՛ք. * գուցէ յորժամ
գայցեն ը՟ն մեզ Մակեդոնացիքն՝ և գտա-
նիցեն զձեզ անպատրաստս, և ամաչես-
ցուք մեք. զի մի՛ ասասցուք՝ թէ դուք,
5 'ի մասինդ յայդմիկ պարծանաց: * Արդ՝
կարևոր համարեցայ աղաչել զեղբարս,
զի յառաջագոյն իսկ եկեսցեն առ ձեզ
և յառաջագոյն պատրաստեսցեն զյա-
ռաջագոյն խոստացեալ օրհնութի՟ն ձեր 'ի
պատրաստի ունել. այնպ՟էս իբրև զօրհնութի,
6 և մի՛ իբրև զագահութի: * Քանզի որ
սերմանէ խնայելով՝ խնայելով և հնձեսցէ.
և որ սերմանէ առատութ՟բ՝ առատութ՟բ և
7 հնձեսցէ: * Իւրաքանչիւր ո՟պ և յօժա-
րեսցի ոք սրտիւ, մի՛ առ հարկի և տրտ-
մութե. քանզի զտուրս զուարթ առատս
8 սիրէ ա՟ծ: * Բայց կարող է ա՟ծ զա՟մ շնոր-
հս


Նորհս

նորհս առաւելուլ ՚ի ձեզ. զի յամենայնի
յամ ժամ զամ բաւականութի ընկալեալ՝
առաւելուցուք յամ գործս բարութե,
* որպ և գրեալ է. սփռեաց և ետ տնան 9
կաց. արդարութի նր մնայ յաւիտեան։
Դե * Այլ այն որ պարգևէ սերմն սերմանո 10
ղաց՝ և հաց ՚ի կերակուր, պարգևես
ցէ և բազմացուսցէ զսերմանիս ձեր, և
աճեցուսցէ զարդիւնս արդարութե ձե
րոյ. * յամենայնի մեծացեալք ամ ա 11
ռատութբ՝ որ յօրինէն մեօք գոհութի այ։
* Զի պաշտօն հարկիս այսորիկ՝ ոչ միայն 12
առ ՚ի լնուլ զպակասութի սրբցն է, այլ
և առաւելուլ բազմօք գոհութբ այ.
* Համբաւի պաշտամանս այսորիկ փա 13
ռաւորել զած ՚ի վր հնազանդութե խոս
տովանութե ձերոյ յաւետարանն քի.
և առատութբ հաղորդութեն ՚ի նս՝ և յա
մենեսին. և նք աղօթք վս ձեր. քանզի
անձկացեալ են առ ձեզ վս առաւել շնոր
հացն այ՝ որ ՚ի ձեզ։ * Այլ շնորհք այ 14
՚ի վր անպատում պարգևացն նր։

## Գլ. Ժ.

Այլ ես ինքն պօղոս աղաչեմ զձեզ հե 1
զութբ և հանդարտութբ քի, որ
յանդիման ձեզ՝ խոնարհ տառապեալ մի
եմ ՚ի միջի ձերում. բայց ՚ի հեռուստ
համարձակիմ առ ձեզ։ * Աղաչեմ, զի 2
մի՛ ՚ի մօտոյ և եթ համարձակիցիմ վստա

 հու

հութբ՟ . կամ համարիցիմ յանդգնել ՚ի
վր՟ ոմանց, որ կարծեն զմեզ՝ եթէ ըստ
3 մարմնոյ գնայցեմք: * Զի թէպէտ և
մարմնով գնամք՝ այլ ոչ եթէ ըս՟ մարմ-
4 նոյ զինուորիմք: * Զի զէն զինուորու-
թե՟ մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրա-
ւոր յԱյ՟, առ ՚ի քակելոյ զամուրս, զխոր-
5 հուրդս քակեմք, * և զա՟մ բարձրութի՟
համբարձեալ ՚ի վր՟ գիտութե՟ն Այ՟ . և
գերեմք զա՟մ միտս ՚ի հնազանդութի՟ն Քնի՟.
6 * և ՚ի պատրաստի ունիմք խնդրել զվրէժ
ա՟մ անհնազանդութե՟՝ յորժամ ձեր ևս
հնազանդութի՟դ կատարեսցի:
7 * Ըստ իւրաքանչիւր երեսաց դիտեսջիք. ԴԶ
եթէ ոք վստահ յանձն իցէ Քնի՟ լինել,
զայս խորհեսցի դարձեալ ՚ի միտս իւր,
թէ որպէս նայն Քնի՟ է՝ նոյնպէս և մեք:
8 * Զի թէ առաւել ևս պարծեցայց վ՟ն
իշխանութե՟ս մերոյ՝ զոր ետ մեզ Տր՟ ՚ի շի-
նել՝ և ոչ ՚ի քակել զձեզ, ոչ ինչ ամաչե-
9 ցից: * զի մի՛ թուեցայց իբրև ահ իմն
10 արկանել ձեզ թղթովքս: * Ասիցէք,
թուղթքս ծանունք են և սաստիկք. բայց
տեսիլ մարմնոյ տկար՝ և բանն արհա-
11 մարհեալ: * զայս խորհեսցի այնպիսին,
զի որպիսիք եմք բանիւք թղթոցդ ՚ի հե-
ռուստ, նոյնպիսիք և ՚ի մօտոյ արդեամբք,
12 * Քանզի ոչ իշխեմք կշռել և համաստա-
րել զանձինս մեր ոմանց, որ զանձինս իւր-
եանց ձեզ ընծայեցուցանեն. այլ ան-

 ձամբ

ձամբ յանձինս՝ զանձինս չափեն, և՛ ի
կշռել անձամբ յանձինս՝ ոչ առնուն ՚ի
միտ։ * Այլ մեք ոչ եթէ յանչափս ինչ 13
պարծեսցուք. այլ ըստ չափոյ կանոնին,
զոր բաժանեաց մեզ ած չափով՝ հասա-
նել մինչև առ ձեզ։ * Իբր ոչ եթէ հա- 14
սու ինչ չիցեմք ՚ի ձեզ, և ձգտեցուցանի-
ցեմք զանձինս. քանզի մինչև առ ձեզ
հասաք աւետարանաւն քի։ * Եւ ոչ 15
յանչափս ինչ պարծիմք օտար վաստա-
կօք։ Այլ յոյս մի՛ ունիմք զաճմանն հա-
ւատոց ձերոց՝ այդրէն ՚ի ձեզ մեծանալոյ՝
ըս կանոնիս մերոյ յառաւելուլն. * ՚ի վեր 16
ևս քան զձեզ աւետարանել՝ ոչ օտար կա-
նոնաւ ՚ի պատրաստականս ինչ պարծել։
* Զի որ պարծին՝ ՚ի տր պարծեսցի։ 17
Բկ * Ոչ եթէ որ զանձն իւր ընծայեցու- 18
ցանէ՛նա է ընտրեալ. այլ զոր տրն ըն-
ծայեցուցանէ։

## Գլ. ԺԱ.

Իւ էր եթէ ներէիք փոքր մի և իմում 1
անզգամութեանս. այլ և անսացէք ինձ։
* Նախանձեցուցանեմ զձեզ ՚ի նախանձն 2
այ. զի խօսեցայ զձեզ առն միում, իբ-
րև զկոյս մի սուրբ յանդիմանն կացուցանել
քի։ * Բայց երկնչիմ գուցէ որպէս օձն 3
խաբեաց զեւայ խորամանկութբ իւրով՝
ապականեսցին միտք ձեր ՚ի միամտութենէն
որ ՚ի քս։ * Ոչ եթէ որ գալոցն իցէ՝ 4

այլ Ք͞ս քարոզիցէ՝ զոր մեքն ոչ քարոզէ
ցաք, կամ ոգի օտար առնուցուք՝ զոր ոչ
առէք, կամ աւետարան օտար՝ զոր ոչ ըն
5 կալարուք, բարւոք անսայիք նմա։ * Նայց
ես այսպէս համարիմ, թէ ոչինչ իւիք
պակաս իցեմ քան զլաւ առաքեալսն։
6 * Թէպէտ և տգէտ ես իցեմ բանիւ, այլ
ոչ եթէ գիտութե͞բ․ սակայն յամենայն յայտ
7 նեցաք զամենայնս ամենևին առ ձեզ։ * Եւ
եթէ մեղս ինչ գործեցի՝ զի զանձն խո
նարհեցուցի․ և այն՝ զի դուք բարձրաս
ջիք․ զի ձրի զաւետարանն Ա͞յ աւետա
8 րանեցի ձեզ։ * զայլ եկեղեցիս կողոպ
տեցի առեալ թոշակ ’ի ձեր սպասաւո
9 րութի։ * Եւ յորժամ եկի առ ձեզ․ թէ
պէտ և պակասեաց ինչ, ոչ զոք ’ի ձէնջ
ձանձրացուցի, զի զպակասութիւն իմ լցին
եղբարքն եկեալք ’ի Մակեդոնիացւոց․
և յամենայն առանց ծանրանալոյ ձեզ զանձն
10 իմ պահեցի՝ և պահեցից․ * քանզի գոյ
յիս ճշմարտութիւն Ք͞ի․
Ո՛չ ի պարծանքս այս ոչ արգելցին յինէն ԲԴ
11 ’ի կողմանս Աքայեցւոց։ * Ընդէ՞ր․ իբրու
թէ ոչ սիրիցեմ զձեզ․ զայն Ա͞ծ գիտէ․
12 * զոր առնեմն՝ և արարից, զի հատից
զպատճառս այնոցիկ՝ որ զպատճառսն
կամիցին․ զի որով պարծիցինն, և նոքա
13 իբրև զմեզ գտանիցին։ * Ո՛չ են այնպի
սիքն սուտ առաքեալք, մշակք նենգա
ւորք, կերպարանին ’ի կերպարանս ա

ռաքելոց քնի։ * Եւ չէ՛ ինչ զարմանք. 14
քանզի և ինքն սատանայ կերպարանի՛ ի
հրեշտակ լուսոյ. * և ոչի՛նչ է մեծ՝ թէ 15
և պաշտօնեայք նր կերպարանիցին իբրև
պաշտօնեայք արդարութե. որոց կատա
րածն եղիցի ըստ գործոց իւրեանց։ * Դար 16
ձէլ ասեմ. մի՛ ոք համարեսցի զիս անզգ
գամ. ապա թէ ոչ՝ գոնէ իբրև զանզգամ
ընկալարուք զիս, զի և ես փոքր մի ինչ
պարծեցայց։ * Եւ զոր խօսիմս՝ ոչ եթէ 17
ըստ տն խօսիմ, այլ իբրև անզգամութբ
ըստ կարգի այդց պարծանաց։ * Եւ քանզի 18
բազումք պարծին ըստ մարմնոյ՝ և ես պարծե
ցայց։ * Ա՝տադիւր իմն անսայիք անմը 19
տացն ձերովդ իմաստութբ։ * Քզի ան 20
սայք, եթէ ոք խաբէ զձեզ, եթէ ոք ծա
ռայեցուցանէ, եթէ ոք ուտէ զձեր, ե
թէ ոք առնու ինչ, եթէ ոք հպարտա
նայ, եթէ ոք զձեզ յանդիման հարկա
նէ։ * Ըստ անարգանացդ ասեմ, իբրև 21
թէ մեք տկարացաք արդէօք. յոր ինչ
ոք համարձակիցի, անզգամութբ ասեմ,
համարձակիմ և ես։ * Եբրայեցի՞ք ի 22
ցեն, և ես. իէլացի՞ք իցեն, և ես. զա
ւակ աբրահամու իցեն, և ես. * պաշ 23
տօնեա՞յք քնի իցեն, յանդգնագոյնս ա
սացից՝ թէ առաւել եւս ես, եթէ վաս
տակօք՝ առաւել, եթէ գանիւք՝ եւս ա
ռաւել. եթէ բանտիւ՝ աւելի՛ քան զնս,
եթէ մահուամբք՝ բազում անգամ։ * Ի 24

Հրէից հնգիցս՝ քառասուն միով պակաս
25 առի. * Երիցս ձաղկեցայ. միանգամ
քարկոծ եղէ. երիցս նաւակոծ եղէ. ըզ
տիւ և զգիշեր յանդունդս տառապեցայ.
26 * ՚Ի ճանապարհս բազում անգամ. վտանգս
՚ի գետոց, վտանգս յաւազակաց, վտանգս
յազգէ, վտանգս ՚ի հեթանոսաց, վտանգս
՚ի քաղաքի, վտանգս յանապատի, վտանգս
27 ՚ի ծովու, վտանգս ՚ի սուտ եղբարց. * ՚Ի
ջան՝ և ՚ի վաստակս. ՚ի տքնութիւնս բա
զում անգամ, ՚ի քաղց և ՚ի ծարաւ. ՚ի
պահս բազում անգամ. ՚ի ցուրտ և ՚ի մեր
28 կութեան. * Թող զայլ նեղութիւն. և զի
հանապազ խուժանն ՚ի վր իմ կուտէր՝
29 և հոգք ամ եկեղեցեացն. * Ո՞ հիւան
դանայ՝ և ոչ ես հիւանդանամ. ո՞ գայ
թագղի՝ և ոչ ես տապանամ.
30 * Եթէ պարծել ինչ պարտ իցէ, զտը Բ Օր
31 կարութեն պարծեցայց. * Ած և հայր տն
մերոյ յի քի գիտէ՝ որ է օրհնեալ յա
32 ւիտեանս, զի ոչ ստեմ. * ՚Ի դամասկոս
ազգապետն արետայ արքայի պահէր ըզ
33 քաղաքն դամասկացւոց ունել զիս. * և
ընդ պատուհանն վանդակաւ կախեցայ ընդ
պարիսպն, և փախեայ ՚ի ձեռաց նր.

## ԳԼ. ԺԲ.

1 Արդ՝ պարծել ինչ պարտ իցէ. այլ
օգնէ ինչ ոչ. Եկայց եկից ՚ի տեսիլս
2 և ՚ի յայտնութիւն տն. * Գիտեմ այր մի
՚ի

՚ի Քս յառաջ քան զչորեքտասան ամ. ե-
թէ մարմնով՝ ոչ գիտեմ, և եթէ առանց
մարմնոյ՝ ոչ գիտեմ, Ած գիտէ. յափշ-
տակեալ զայնպիսին մինչև յերրորդ եր-
կինս: * Եւ գիտեմ զայնպիսի այր. ե- 3
թէ մարմնով՝ և եթէ առանց մարմնոյ՝
ոչ գիտեմ. Ած գիտէ, * զի յափշտա 4
կեցաւ ՚ի դրախտն. և լուաւ բանս ան-
ճառս, զոր ոչ է պարտ մարդոյ խօսել:
* Վասն այնպիսւոյն պարծեցայց. այլ 5
վն անձին ինչ ոչ պարծեցայց. բայց ե-
թէ ՚ի տկարութիւնս: * Զի եթէ և կամի 6
ցիմ պարծել՝ ոչ եղէց անզգամ, քանզի
զարդարն ասեմ. այլ խնայեմ, գուցէ
ոք համարիցի ինչ յիս աւելի՝ քան զոր
տեսանիցէ յիս՝ կամ լսիցէ յինէն: * Եւ զի 7
մի՛ առաւելութն յայտնութեացն հպարտա
ցայց, տուաւ ինձ խայթ մարմնոյ հրեշ
տակ սատանան՝ կռփել զիս. զի մի՛ հպար
տացայց: * Եւ վն այնորիկ երիցս անգամ 8
աղաչեցի զՏր՝ զի ՚ի բաց արասցէ յինէն.
* Եւ ասէ ցիս. շատ են քեզ շնորհք իմ, 9
զի զօրութիւն իմ ՚ի տկարութեան կատարի: և
արդ՝ լաւ ևս լիցի ինձ պարծել ՚ի տկա
րութիւնս, զի բնակեսցէ յիս զօրութիւն Քի:
ԳԴ * Վասն որոյ հաճեալ եմ ընդ տկա 10
րութիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս,
ընդ հալածանս, և ընդ նեղութիւնս վասն
Քի. զի յորժամ տկարանամ, յայնժամ
զօրանամ: * Եղէ անզգամ, քզի դուք 11

 ստի

ստիպեցէք զիս․ զի ինձ պարտ էր՚ի ձէնջ
վկայուել առնուլ՝ թէ ոչինչ պակաս գը
տայ քան զլաւ առաքեալսն․ զի թէպէտ
12 և ես ոչինչ եմ․ * սակայն նշանք առա
քելոյ գործեցան ՚ի ձեզ՝ ա̃մ համբերու
թ̃բ, նշանօք և արուեստիւք և զօրու
13 թ̃բք։ * Ու արդ զի՞նչ իցէ, որո՞վ պա
կաս գտայք քան զայլ եկեղեցիս․ բայց
եթէ այնու զի ես զձեզ ոչ ձանձրացուցի․
14 շնորհեցէք ինձ զվնասդ զայդ։ * Ահա
ւասիկ այս երիցս անգամ պատրաստեալ
եմ գալ առ ձեզ․ և ձեզ բեռն ինչ ոչ
եղէց․ զի ոչ խնդրեմ ինչ զձեր՝ այլ ըզ
ձեզ․ քզի ոչ պարտին որդիք հարց գան
15 ձել՝ այլ հարք որդւոց։ * Բայց ես մտա
դիւրութ̃բ ծախեցից, և ծախեցայց վասն
անձանց ձերոց․ զի թէպէտ և յառաւել
16 սիրոյն զձեզ սակաւ սիրիցեմ։ * Այլ
գրեթէ ես ոչինչ ծանրացայ ձեզ․ այլ
քզի խորագէտ էի, խելօք կալայ զձեզ։
17 * Մի՞ թէ որովք առաքեցի առ ձեզ՝ նո
18 քօք ինչ ագահեցի՞ ՚ի ձէնջ։ * Աղաչե
ցի զտիտոս՝ և առաքեցի ը̃ նմ̃ զեղբայրն,
մի թէ ագահեցա՞ւ ինչ զձեր տիտոս։ ո՞չ
նովին ոգւով գնացաք․ ո՞չ նովին շաւղօք
շրջեցաք։
19 * Դարձեալ համարիցիք՝ եթէ յողջք ան գ․ջ
կեալ ինչ ձեզ աղերսիցե՞մք։ առաջի ա̃յ
՚ի ք̃ս խօսիմք, զի ամենայն ինչ սիրելիք
20 վ̃ն ձերոյ շինութ̃ե է։ * Այլ երկնչիմ,


զու

գուցէ եկեալ՝ ոչ որպէս ես կամիմն գտանի
ցեմ զձեզ. և ես գտանիցիմ ձեզ՝ որպէս և
դուք ոչ կամիցիք. գուցէ դարձեալ՝ հեռ
նախանձ սրտմտութիւնք գրգռութիւնք, չար
խօսութիւնք քսութիւնք, հպարտութիւնք ամբար
տաւանութիւնք խռովութիւնք։ * Գուցէ դար 21
ձեալ յորժամ գայցեմ՝ նկուն ինչ առնի
ցէ զիս Աստուած իմ առ ձեզ. և սուգ առնու
ցում վասն բազմաց յառաջագոյն մեղուցելոց,
և ոչ ապաշխարելոց՝ 'ի վերայ պղծութեան և
պոռնկութեան և գիջութեան՝ զոր գործեցին.

## ԳԼ. ԺԳ.

Այս երիցս անգամ գամ առ ձեզ. զի 1
'ի բերանոյ երկուց և երից վկայից
հաստատեսցի ամենայն բան։ * Յառաջ աս 2
ցի և դարձեալ կանխաւ ասեմ յանդի
ման երկիցս անգամ. և այժմ 'ի բա
ցուստ գրեմ յառաջագոյն յանցուցելոցն՝
և այլոցն ամենեցուն. զի եթէ եկից
դարձեալ՝ ոչ խնայեցից։ * Եթէ զփորձ 3
ինչ խնդրէք զՔրիստոսի, որ ինեւ ընդ ձեզ խօսի.
որ հզօրացեալն է 'ի ձեզ, և ոչ տկարա
ցեալ։ * Զի թէպէտ և խաչեցաւ 'ի 4
մերմէ տկարութենէ, այլ կենդանի է զօրու
թեամբն Աստուծոյ. և մեք թէպէտ և տկարանայ
ցեմք ընդ նորա, այլ կենդանի լինիցուք ընդ նմա
զօրութեամբն Աստուծոյ։
Դ Կ * Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայք 5
'ի նոյն հաւատս. քննեցէք զանձինս, ե
թէ

թէ ոչ գիտէք զանձինս՝ զի քս յս ՚ի ձեզ
6 է․ բայց եթէ անպիտան ինչ իցէք։ * այլ
ակն ունիմ թէ գիտիցէք․ զի մեք ոչ եմք
7 անպիտանք։ * Այլ խնդրեմք յայ՝ զի մի՛
ինչ արասցէ ձեզ չար․ ոչ զի մեք ընտիրք
երեւեսցուք, այլ զի դուք զբարիս գոր-
8 ծիցէք՝ և մեք անպիտանք իցեմք։ * զի
ոչ կարեմք ինչ հակառակ կալ ճշմար-
տութեն․ այլ վերակացու եմք ճշմարտու-
9 թեն։ * Խրախ եմք՝ յորժամ մեք տկա-
րանայցեմք՝ և դուք զօրաւորք իցէք։ըղ-
գոյն իսկ և աղօթս առնեմք զձեր հաս-
10 տատութին։ * Վասն այնորիկ զայս ՚ի
հեռուստ գրեմ․ զի մի՛ յորժամ եկից՝
սաստկութբ վարեցայց՝ ըս իշխանութեան,
զոր ետ ինձ տր ՚ի շինել՝ և ոչ ՚ի քակել։
11 * Այսուհետև եղբարք, ողջ լերուք՝
հաստատուն կացէք՝ մխիթարեցարուք՝
միաբան լերուք՝ խաղաղութի արարէք․
և այ խաղաղութե և սիրոյ եղիցի ընդ ձեզ։
12 * Ողջոյն տուք միմեանց ՚ի համբոյր սըր-
բութե։ ողջոյն տան ձեզ սուրբք ամենայն։
13 * Շնորհք տն մերոյ յսի քսի, և սէրն
այ, և հաղորդութի հոգւոյն սբյ ընդ ձեզ
ամենեսին, ամէն։

Առ Կորնթացիս երկրորդ՝ գրեցաւ ՚ի Փիլիպ-
պեայ, ՚ի ձեռն Տիտոսի և Ղուկայ։

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍՆ.
### ԳԼ. Ա.

ԴԴ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ, 1
ոչ ի մարդկանէ եւ ոչ ի
ձեռն մարդոյ, այլ ի ձեռն
յ՟ի ք՟ի եւ ա՟յ հօր՝ որ յա-
րոյց զնա ի մեռելոց. * եւ որ ընդ իսն են եղ- 2
բարք ամենքին, եկեղեցեացդ գաղատաց-
ւոց. * Շնորհք ը՟ն ձեզ եւ խաղաղութիւն յա՟յ 3
ի հօրէ եւ ի տ՟ն մերմէ յ՟է ք՟է. * որ 4
ետ զանձն իւր վ՟ն մեղաց մերոց, զի զմեզ
փրկեսցէ յայսմ աշխարհէ աստի չարէ, ը՟ս կա-
մաց ա՟յ եւ հօր մերոյ. * որում փառք 5
յաւիտեանս յաւիտենից՝ ամէն. * Զար- 6
մանամ զի այդպէս վաղվաղակի փոխիք
յայնմանէ որ կոչեաց զձեզ ի շնորհս
ք՟ի՝ յայլ աւետարան. * որ ոչ գոյ 7
այլ. բայց եթէ իցեն ոմանք որ խռովե-
ցուցանիցեն զձեզ, եւ կամիցին շրջել զա-
ւետարանն ք՟ի. * Այլ թէ մեք, կամ 8
հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ
աւելի քան զոր աւետարանեցաքն ձեզ,
նզովեալ լիցի. * Ո՟պ յառաջագոյնն ասա 9

 ցաք՝

ցուք՝ և արդ դարձեալ ասեմ, եթէ ոք ա-
ւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առիքն,
10 նզովեալ լիցի: *Արդ՝ մարդկա՞ն հաճոյ լի-
նիցիմ, թէ Այ. կամ խնդրիցեմ մարդկա՞ն
հաճոյ լինել. եթէ տակաւին մարդկան
հաճոյ լինէի, ապա քնի ծառայ ոչ էի:
11 *Ցուցանեմ ձեզ եղբարք զաւետարանն, Դ.Զ
որ աւետարանեցաւ յինէն. զի ոչ է ըստ
12 մարդոյ. *քանզի և ոչ ես ի մարդոյ ա-
ռի, և ոչ ուսայ յումեքէ. այլ ի յայտ-
13 նութենէ յնի քնի: *Քանզի լուեալ իսկ
է ձեր զիմ գնացսն՝ որ երբեմն ի հրէ-
ութեան անդ. զի անչափ հալածէի զեկե-
14 ղեցին Այ, և աւար հարկանէի զնա: *և
յառաջադէմ էի ի հրէութեանն՝ քան զբա-
զում հասակակիցս իմ որ յազգին իմում
էին. առաւել նախանձախնդիր էի իմոց
15 հայրենի աւանդութեացն: *Այլ յոր-
ժամ կամեցաւ Այծ՝ որ որոշեաց զիս յորո-
վայնէ մօր իմոյ, և կոչեաց ի ձեռն շնոր-
16 հաց իւրոց, *յայտնել զորդին իւր ինև.
զի աւետարանեցից զնա ի հեթանոսս.
անդէն վաղվաղակի ոչինչ զգացուցի մար-
17 մնոյ և արեան. *և ոչ ելի յԵմ առ որ
յառաջագոյն քան զիս առաքեալքն էին.
այլ չոգայ յԱրաբիա, և դարձեալ դար-
18 ձայ ի Դամասկոս: *Ապա յետ երից ա-
մաց ելի յԵրուսաղէմ տեսանել զՊետրոս.
և եղէ առ նմա աւուրս հնգետասան:
19 *Զայլ ոք յառաքելոցն անտի ոչ տեսի,

 բայց

բայց միայն զՅակոբոս զեղբայրն Տն։
* Այլ զոր գրեմս առ ձեզ, ահաւասիկ 20
առաջի Այ՝ զի ոչ ստեմ։ * Ապա եկի ՚ի 21
կողմանս ասորւոց եւ կիլիկեցւոց. * Եւ 22
յանծանօթս էի երեսօք եկեղեցեացն՝ որ
՚ի Թլփատութե անուն էին ՚ի Քս։ * Բայց 23
զի լսելով լուեալ էր, թէ որ հալածէրն
զմեզ յայնժամ, այժմ աւետարանէ զհա
ւատսն՝ զոր երբեմն խախտէր։ * Եւ փա 24
ռաւոր առնէին ինեւ զԱծ.

## ԳԼ. Բ.

ԵԿ Ապա յետ ամաց չորեքտասանից միւս 1
անգամ ելի յԵրմ ընդ Բառնաբայ. ա
ռեալ ընդ իս եւ զՏիտոս։ * Եւ ելի ըստ 2
յայտնութեն. եւ զգացուցի նց զաւետա
րանն՝ զոր քարոզէի ՚ի հեթանոսս, առան
ձինն այնոցիկ՝ որ կարծեալքն էին, գու
ցէ ընդունայն ինչ ընթացեալ իցեմ, կամ
ընթանայցեմ։ * Այլ եւ ոչ Տիտոս՝ որ ընդ 3
իս ՚ի հեթանոսաց էր, բռնադատեցաւ
թլփատել. * այլ վս սպրդողաց սուտ եղ 4
բարցն, որք սպրդեցին մտանել դիտել
զազատութին մեր՝ զոր ունիմք ՚ի Քս Յս.
զի զմեզ ծառայեցուսցեն։ * Որոց եւ ոչ առ 5
ժամանակ մի անսացաք հնազանդութեն.
զի ճշմարտութի աւետարանին հաստա
տեսցի առ ձեզ։ * Բայց զկարծելոցն է 6
թէ իցեն ինչ, որպիսի ոք երբեմն էին,
չէ՛ ինչ ինձ փոյթ. քանզի Ած ակն մարդ


կան

կան ոչ առնու. զի ինձ կարծեցեալքն այն-
7 պիսի ինչ ոչ զգացուցին. * Այլ ընդ
հակառակն՝ իբրեւ տեսին թէ հաւատա
ցեալ է ինձ աւետարանն անթլփատութե̃.
8 որպէս պետրոսի ՚ի թլփատութե̃. * զի որ յա-
ջողեացն պետրոսի յառաքելութի̃ թլփա
տութե̃ն, յաջողեաց եւ ինձ ՚ի հեթանոսս.
9 * իբրեւ գիտացին զշնորհսն որ տուեալ
էին ինձ, յակովբոս՝ եւ կեփաս՝ եւ յովհան
նէս, որ կարծեալք սիւնքն էին, ձեռն
ետուն հաւանութե̃ ինձ եւ բառնաբայ. զի
մեք ՚ի հեթանոսս, եւ նքա ՚ի թլփատութե̃ն.
10 * բայց միայն զի զաղքատսն յիշեսցուք.
զոր եւ ես փութացայ զնոյն առնել.
11 * Այլ յորժամ եկն կեփաս յանտիոք, ԵԴ
ընդդէմ դարձայ նորա. քանզի գոգ իբ-
12 րեւ ստգտեալ իսկ էր. * Քանզի մինչ
չեւ եկեալ էին ոմանք առ ՚ի յակովբայ,
ը̅ հեթանոսս ուտէր անխտիր. իսկ իբ-
րեւ եկին, զատանէր եւ որոշէր զանձն,
երկուցեալ յայնցանէ՝ որ ՚ի թլփատութե̃
13 անտի էին. * Նու կեղծաւորեցան ը̅ նմա
եւ այլ հրեայքն. մինչեւ բառնաբաս ան-
դամ խոնարհեցաւ ՚ի նց̅ կեղծաւորու
14 թի̃ն. * Այլ իբրեւ տեսի թէ ոչ ուղիղ
գնան ՚ի ճշմարտութի̃ աւետարանին,
ասեմ ցկեփաս առաջի ամենեցուն, ե-
թէ դու որ հրեայդ ես՝ հեթանոսաբար՝
եւ ոչ հրէաբար կեաս, զիա՞րդ ստիպես
15 հեթանոսաց լինել հրէաբար. * զի մեք


բուն

բուն Հրեայք եմք, եւ ոչ 'ի հեթանոսաց
մեղաւորք։ * Զայս գիտեմք՝ եթէ ոչ 16
արդարանայ մարդ 'ի գործոց օրինաց,
եթէ ոչ՝ 'ի հաւատոցն յսի քսի. եւ մեք
'ի քս յս հաւատացաք, զի արդարասցուք
'ի հաւատոցն քսի, եւ ոչ 'ի գործոց օրի
նաց. զի 'ի գործոց օրինաց ոչ արդարաս
ցի ամենայն մարմին։ * Իսկ եթէ մինչ 17
խնդրիցեմք արդարանալ 'ի քս, եւ գտ
անիցիմք մեղաւորք. ապա ուրեմն՝ քս
մեղաց պաշտօնեայ եղեւ. քաւ լիցի։ * Զի 18
եթէ զոր քակեցին՝ զնոյն միւսանգամ
շինիցեմ. ապա յանցաւոր զանձն իմ եւս
ինձէն երեւեցուցանեմ։ * Զի ես օրի 19
նօք՝ օրինացն մեռայ, զի այ կեցից, եւ ընդ
քսի 'ի խաչ ելից։ * Ապա կենդանի եմ այ 20
սուհետեւ, ոչ ես՝ այլ կենդանի է յիս քս։
ԵԶ Ապա որ այժմս կեամ մարմնով, հաւա
տովք՝ որդւոյն այ կեամ. որ սիրեացն
զիս, եւ մատնեաց զանձն վս իմ։ * Ապա 21
ես ոչ անարգեմ զշնորհսն այ. զի եթէ
յօրինաց անտի էր արդարութիւն, ապա
քս զուր մեռաւ։

## ԳԼ. Գ.

Ո՛վ անմիտ գաղատացիք, ո՛ նախանձ ա 1
րար զձեզ (ոչ հնազանդել ճշմար
տութեան). որոց գրեթէ առաջի աչաց քս
յս գրեցաւ 'ի խաչ ելեալ։ * Զայս մի 2
այն կամիմ ուսանել 'ի ձէնջ. 'ի գործոց

օրինաց զհոգին ընկալարո՞ւք՝ եթէ ՚ի լրոյ
3 հաւատոց։ * Այդչափ անմի՞տ էք․ սկը
սեալ հոգւով՝ և արդ մարմնո՞վ վախճա
4 նի՞ք։ * և այնչափ անցք անցին ընդ ձեզ
5 զո՞ւր՝ եթէ իցէ զուր։ * Իսկ արդ՝ որ
բաշխեաց ՚ի ձեզ զհոգին՝ և յաջողեաց
՚ի ձեզ զզօրութիւն․ ՚ի գործո՞ց օրինաց է՝
6 եթէ ՚ի լրոյ հաւատոց։ * Որպէս աբրահամ
հաւատաց այ՟՝ և համարեցաւ նմ՟ յար
7 դարութի։ * Գիտիցէք արդեօք․ զի որք
՚ի հաւատոց անտի են, նոքա են որդիք
8 աբրահամու։ * Յառաջագոյն գիտէր
գիր, եթէ ՚ի հաւատոց անտի արդարա
ցուցանէ այ՟ զհեթանոսս՝ յառաջագոյն
խոստացաւ աբրահամու, թէ ՚ի քեզ օրհ
9 նեսցին ամենայն ազգք։ * Այսուհետև
որք ՚ի հաւատոց անտի են, օրհնին ընդ
10 հաւատացելոյն աբրահամու։ * Զի որ
միանգամ ՚ի գործոց օրինացն են, ընդ ա
նիծիւք են․ քանզի գրեալ է․ թէ անի
ծեալ ամ՟ մարդ՝ որ ոչ կացցէ յամենայն
գրեալսն ՚ի գիրս օրինաց՝ առնել զամե
11 նայն։ * Զի օրինօքն ոչ ոք արդարանայ
առաջի այ՟, այն յայտ իսկ է․ զի արդարն՝
ասէ ՚ի հաւատոց կեցցէ։ Գ․Ջ
12 * Բայց օրէնքն չեն ՚ի հաւատոց, այլ որ
13 արասցէ զայն՝ կեցցէ ՚ի նոսին։ * Քս՟
գնեաց զմեզ յանիծից օրինացն, եղեալ
վս՟ մեր անէծք․ զի գրեալ է, թէ անի
ծեալ ամ՟, որ կախեալ կայցէ զփայտէ․

* զի 'ի հեթանոսս օրհնութիւն աբրահա 14
մու եղիցի 'ի քն յն · զի մեք զաւետիս հոգ-
ւոյն 'ոյ ընկալցուք հաւատովք։ * Ըստ 15
մարդկութեան ասեմ, եղբարք · ապաքէն
զմարդկան հաստատեալ կտակ ոչ ոք կա-
րէ անարգել · եւ ոչ այլ հրաման 'ի վե
րայ տալ։ * Իսկ աբրահամու խոստա 16
ցան աւետիքն, եւ զաւակի նր · եւ ոչ ասէ
զաւակացդ՝ իբրեւ զբազմաց, այլ իբրեւ
զմիոյ, թէ՝ եւ զաւակի քում, որ է քս։
* Բայց զայս ասեմ, զկտակն յառաջա 17
գոյն հաստատեալ յայ 'ի քս, օրէնքն որ
յետ չորեք հարիւր եւ երեսուն ամի եղան,
ոչ կարեն խախտել առ 'ի խափանելոյ զա-
ւետիսն։ * Զի եթէ յօրինաց անտի է ժա 18
ռանգութիւն, ապա ոչ եւս յաւետեացն։
բայց աբրահամու աւետեօք շնորհեաց
ած։ * Իսկ զի՞նչ իցեն օրէնք։ յանցուա 19
ծոց վն յաւելան, մինչեւ եկեսցէ զաւակն,
որում խոստացեալն էր՝ կարգեալ հրեշ-
տակօք 'ի ձեռն միջնորդի։ * Իսկ միջ 20
նորդ միոյ ուրուք ոչ է՝ բայց ած մի է։
* Իսկ արդ՝ օրէնքն հակառակ ի՞նչ իցեն 21
աւետեացն այ · քաւ լիցի, զի եթէ տը-
ւեալ էին օրէնքն՝ որ կարող էին կենդա-
նի առնել, ապա հաստատ յօրինաց ան-
տի էր արդարութիւն։ * Այլ փակեցին 22
գիրք զամենեսին ընդ մեղօք, զի աւետիքն
'ի հաւատոց անտի յսի քսի հա-
ւատացելոց։ * Մինչչեւ հաւատքն է- 23

 կեալ

կեալ էին՝ ընդ օրինօք փակեալ պահէաք
'ի հանդերձեալ հաւատսն, որ յայտնե
24 լոց էին 'ի մեզ։ * Ապա օրէնքն դաս_
տիարակ եղեն մեզ 'ի քս̃ յս̃, զի 'ի հա_
25 ւատոցն արդարասցուք. * այլ իբրեւ եկին
հաւատքն, ոչ եւս ընդ դաստիարակաւ եմք.
26 * քանզի ամենեքին որդիք ա̃յ էք հաւա
27 տովք 'ի յս̃ քս̃։ * Որք միանգամ 'ի քս̃
մկրտեցարուք, զքս̃ զգեցեալ էք. չի՛ք
28 խտիր, * ոչ հրէի՝ եւ ոչ հեթանոսի, ոչ
ծառայի՝ եւ ոչ ազատի. ոչ արուի՝ եւ ոչ
իգի. զի ամենեքեան դուք մի էք 'ի քս̃
29 յս̃։ * Ապա եթէ դուք քսի էք, ուրեմն
աբրահամու զաւակ էք՝ ըստ աւետեացն
ժառանգք։

## ԳԼ. Դ.

1 Օ այս ասեմ. ցորքան ժամանակս ժա_ Չկ
ռանգն տղայ է՝ չէ՛ ինչ առաւել քան
զծառայն. թէպէտ եւ տէր իցէ ամենե
2 ցուն. * այլ ընդ հազարապետօք է՝ եւ ընդ
գաւառապետօք՝ մինչեւ 'ի ժամանակս
3 կետ հօրն։ * Նոյնպէս եւ մեք մինչ տը_
ղայքն էաք՝ ընդ տարերբք աշխարհիս 'ի
4 ծառայութեան կայաք։ * Այլ իբրեւ եկն
լրումն ժամանակին, առաքեաց ա̃ծ զոր_
դին իւր՝ որ եղեւ 'ի կնոջէ, եւ եմուտ ընդ
5 օրինօք. * զի զնս̃ որ ընդ օրինօքն իցեն,
գնեսցէ. զի մեք զորդեգրութիւն ընկալ
6 ցուք։ * Եւ զի էք դուք որդիք, առա
քեաց

քեւոյ ձեզ զհոգի որդւոյն իւրոյ՚ի սիրտս
մեր՝ որ աղաղակէ աբբա՝ հայր։ * Ապա 7
ուրեմն չես ծառայ, այլ որդի. եթէ
որդի՝ և ժառանգ այ։ * Այլ յայնժամ 8
մինչ ոչն գիտէիք զած՝ ծառայէիք այնո
ցիկ՝ որ ոչն էին՚ի բնէ աստուածք։ * Այլ 9
այժմիկ ծանեայք զած, մանաւանդ թէ
ծանուցայք իսկ յայ, զիարդ դառնայք
միւսանգամ անդրէն ՚ի տարերսն՝ ՚ի տը
կարս և յաղքատս, որոց միւսանգամ
զանձինս ծառայեցուցանել կամիք։
* Զաւուրս խափէք՝ և զամիս և զժա 10
մանակս՝ և զտարիս։ * Երկնչիմ ՚ի ձէնջ, 11
գուցէ թէ ՚ի զուր ինչ վաստակեցի ՚ի
ձեզ։ * Եղերուք իբրև զիս, զանզի և ես 12
իբրև զձեզ էի։ Եղբարք՝ աղաչեմ զձ
ձեզ, չիք ինչ ձեր մեղուցեալ առ իս։
* Գիտէք դուք՝ զի տկարութեամբ մարմնոյ 13
աւետարանեցի ձեզ զառաջինն. և զփոր-
ձանսն որ ՚ի մարմնի իմում էին, * ոչ 14
անարգեցէք՝ և ոչ անգոսնեցէք. այլ իբ-
րև զհրեշտակ այ ընկալայք զիս՝ իբրև
զքս յս։ * Իսկ արդ ուր է երանութիւն 15
ձեր. վկայեմ ձեզ՝ եթէ մար ինչ էր՝
զաչս ձեր հանէիք և տայիք ինձ։ * արդ՝ 16
զի թշնամի իմն եղէ ձեզ, զի զճշմարիտն
խօսեցայ։ * Նախանձեցուցանեն 17
զձեզ ոչ ՚ի բարի. և արգելուլ կամին
զձեզ՝ զի նոցա նախանձաւորք լինիցիք։
* Բայց լաւ է նախանձաւոր լինել ՚ի բա- 18

րիս յա՟մ ժամ, և ոչ միայն յորժամ 'ի
ձերում միջի իցեմ:
19 * Որդեակք իմ, զորս դարձեալ վերս
տին երկնեմ, մինչև նկարեսցի քս՟ 'ի ձեզ:
20 * կամէի այժմ գալ առ ձեզ՝ և փոխել
զբարբառ իմ. զի տարակուսեալ եմ ես
21 վն՟ ձեր: * Ասա՛ք ինչ ինձ՝ որ ը՟ օրինօքն
կամիք լինել, չիցէ ընթերցեալ ձեր զօ
22 րէնս. * զի գրեալ է՝ թէ աբրահամու
երկու որդիք էին, մի յաղախնոյ անտի,
23 և մի յազատէն: * Այլ որ յաղախնոյն
էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր, և որ յազա
24 տէն՝ ըստ աւետեաց. * որ է առակ օրի
նակի: Զի այս ինքն են երկու կտակա
րանք, մի 'ի լեռնէ սինայ 'ի ծառայութի
25 ծնեալ՝ որ է հագար: * քանզի հագարն՝
լեառն սինայ է յարաբիա, հաւասար է
այսմ երուսաղեմի. զի ծառայէ որդւովք
26 իւրովք հանդերձ: * Այլ վերինն երու
սաղէմ ազատ է՝ որ է մայր մեր ամենե
27 ցուն: * զի գրեալ է. ուրախ լեր ամուլ՝
որ ոչ ծնանէիր, գոչեա՛ և աղաղակեա՝
որ ոչդ երկնէիր. զի բ՟զմ են որդիք սկնդ
28 կնդ առաւել քան զարամբւոյն: * Այլ
մեք եղբարք՝ ըստ սահակայ աւետեացն
29 որդիք եմք: * այլ որ՟պ յայնժամ, որ ը՟
մարմնոյն ծնեալ էր՝ հալածէր զայն որ
30 ը՟ հոգւոյն, նոյնպէս և այժմ: * Այլ
զի՞նչ ասէ գիր. 'ի բաց հան զաղախին
և զորդի դորա, զի մի՛ ժառանգեսցէ որ

դի աղախնոյն՝ ը որդւոյն ազատի։ Ապա 31
որոյ եղբարք՝ չեմք որդիք աղախնոյն,
այլ ազատին. ազատութեամբն, որով քս
զմեզ ազատեաց։

## ԳԼ. Ե.

Պինդ կացէք այսուհետեւ, եւ մի՛ միւս 1
անգամ ընդ լծով ծառայութեան մը
տանէք։
* Ահաւասիկ ես պօղոս ասեմ ձեզ. զի 2
եթէ թլփատիք, քս ինչ ձեզ ոչ օգնէ։
* Վկայեմ ամ մարդոյ՝ որ թլփատիցի, 3
թէ պարտական է զամ օրէնսն կատա
րել։ * Խափանեալ էք 'ի քսէ՝ որ օրինօքն 4
արդարանայք. եւ անկեալ էք 'ի շնորհաց
անտի։ * Զի մեք հոգւովն՝ 'ի հաւատոց 5
յուսոյն արդարութե ակն ունիմք։ * Զի 6
'ի քս յս՝ ոչ թլփատութի ինչ կարող է՝ եւ
ոչ անթլփատութի. այլ հաւատք սիրով
յաջողեալք։ * Ընթանայիք, ո՞ 7
կասեցոյց զձեզ ճշմարտութեն չհաւանել։
* Զի այն հրապոյրք՝ ոչ յայնմանէ են՝ որ 8
կոչեացն զձեզ։ * Փոքր մի խմոր զամե 9
նայն զանգուածն խմորէ։ * Այլ ես 10
յուսացեալ եմ 'ի ձեզ տրամբ՝ թէ ոչ
այլազգ ինչ խորհիցիք։ եւ որ խռովեցու
ցանէ զձեզ՝ կրեսցէ դատաստան՝ ո ոք
եւ իցէ։ * Այլ ես եղբարք՝ եթէ թլփա 11
տութի քարոզէի՝ ընդէ՞ր տակաւին հալա
ծիմ։ ապա ուրեմն խափանեալ իցէ գայ-

 Թակ

12 Թագղութիւն խաչին։ * Երանի թէ մօտա
կտուր իսկ լինէին՝ որ զձեզն խռովեցու-
13 ցանեն։ * Զի դուք յազատութիւն կոչեցայ
էք՝ եղբարք, միայն զի ազատութիւն ձեր մի
լինիցի 'ի պատճառս մարմնոյ. այլ սի-
14 րով ծառայեցէք միմեանց։ * Զի ամ
օրէնք 'ի մի բան կատարին. 'ի սիրեսցես
15 զընկեր քո իբրեւ զանձն քո։ * Ապա ե-
թէ զմիմեանս խածատիցէք՝ եւ ուտիցէք.
զգոյշ լերուք՝ գուցէ 'ի միմեանց սատա
կիցիք։
16 * Այսպէս ասեմ. հոգւով գնացէք, ԵԴ
17 եւ զցանկութիւն մարմնոյ մի կատարէք. * Զի
մարմին ցանկայ հակառակ հոգւոյ, եւ
հոգի հակառակ մարմնոյ։ եւ զի սոքա մի-
մեանց հակառակ են. մի՛ զոր կամիցիքն՝
18 զայն առնիցէք։ * Իսկ եթէ հոգւով վա-
19 րիք, ապա չէք ը օրինօք։ * Զի յայտ-
նի են գործք մարմնոյ. այսինքն են՝ շը-
նութիւն, պղծութիւն, գիջութիւն,
20 * կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնա
մութիւն հեռ նախանձ, բարկութիւն, հակա
ռակութիւնք երկպառակութիւնք հերձուածք,
21 * չարակնութիւնք սպանութիւնք, արբեցութիւնք
անառակութիւնք, եւ որ ինչ սոցին նման են։
զոր յառաջագոյն իսկ ասեմ ձեզ, որպէս
կանխաւն ասէի, թէ որ զայսպիսի ինչ
գործեն՝ զարքայութիւն այ ոչ ժառանգեն։
22 * Իսկ պտուղ հոգւոյն այս է. սէր խըն
23 դութիւն խաղաղութիւն երկայնմտութիւն, * քաղց

րութիւն, բարութիւն, հաւատք, հեզութիւն ժուժ-
կալութիւն. զայսպիսեաց աստի օրէնքն չեն
հակառակ։ * Իսկ որ Քրիստոսին են, ըզ 24
մարմինս իւրեանց ՚ի խաչ հանին կա-
րեօքն և ցանկութեամբք հանդերձ։ * Եթէ 25
կեամք հոգւով՝ ընդ հոգւոյն և միաբա-
նեսցուք։ * Մի՛ լինիցուք սնապարծք՝ մի- 26
մեանց ձայն տալոյ, և ընդ միմեանս նա-
խանձելոյ։

## ԳԼ. Զ.

ԷԶ Ե՛ղբարք՝ եթէ յանկարծ ըմբռնեսցի 1
ոք ՚ի ձէնջ յինչ և իցէ յանցանս,
դուք որ հոգևորքդ էք՝ հաստատեցէ՛ք
զայնպիսին հոգւով հեզութեան. զգո՛յշ լի-
նիջիք անձանց՝ զի մի՛ և դուք փորձիցիք։
* Զմիմեանց բեռն բարձէ՛ք, և այնպէս 2
կատարեցէ՛ք զօրէնսն Քրիստոսի։ * Եթէ հա- 3
մարիցի ոք լինել ինչ՝ և չիցէ, զանձն իւր
խաբէ։ * Զգործ իւր կշռեսցէ իւրա- 4
քանչիւրոք, և ապա անձին իւրում միայն
պարծանս տացէ, և մի՛ առ ընկերաւն։
* զի իւրաքանչիւրոք զիւր բեռն բառնա- 5
լոց է։ * Հաղորդութիւն արասցէ աշակերտն 6
վարդապետին՝ յամենայն բարութիւնս։ * Մի՛ 7
խաբիք, Աստուած ոչ արհամարհի։ * զի զոր 8
ինչ սերմանէ մարդ՝ զնոյն և հնձեսցէ.
որ սերմանէ ՚ի մարմին իւր, ՚ի մարմնոյ
անտի հնձեսցէ զապականութիւն. և որ սեր-
մանէ ՚ի Հոգին՝ ՚ի Հոգւոյ անտի հնձես-

9 ցէ զկեանսն յաւիտենից ։ *Բայց զբա
րիս գործել մի՛ ձանձրասցուք, զի 'ի ժա
մանակի իւրում հնձեսցուք առանց լքա
10 նելոյ ։ *Այսուհետեւ մինչդեռ ժամա
նակս 'ի ձեռս է՝ գործեսցուք զբարիս առ
ամենեսեան, մանաւանդ առ ընտանիս
11 հաւատոյ ։ *Տեսէք՝ որպիսի գրով գրե
12 ցի առ ձեզ իմով ձեռամբ ։ *Օ՜ի որ
միանգամ կամին բարեմարդիկ լինել
մարմնով, նք՛ ստիպեն զձեզ թլփատել.
միայն զի մի՛ զխաչին քնի զհետ երթայ
13 ցեն. *Վասնզի որ թլփատեալքն իսկ են,
նոքա զօրէնսն ոչ պահեն. այլ կամին՝ զի
դուք թլփատեսջիք, զի ձերով մարմնովդ
պարծեսցին ։ Պ.Ջ
14 *Բայց ինձ քաւ լիցի պարծել՝ բայց միայն
'ի խաչն տն մերոյ յնի քնի, որով ինձ
աշխարհ 'ի խաչ ելեալ է՝ եւ ես աշխար
15 հի ։ *Օ՜ի ('ի քն յն) ոչ թլփատութիւն
ինչ է՝ եւ ոչ անթլփատութիւն. այլ նոր ա
16 րարած ։ *Եւ որ միանգամ այսմ կա
նոնի միաբան լինին, խաղաղութիւն 'ի վր
նց եւ ողորմութիւն՝ եւ 'ի վր իսրայէլին այ ։
17 *Այսուհետեւ աշխատ ոք զիս մի՛ արաս
ցէ. զի ես զչարչարանսն քնի 'ի մարմնի ի
18 մում կրեմ ։ *Շնորհք տն մերոյ յնի քնի
ընդ ոգւոյդ ձերում եղբարք. ամէն ։

Առ գաղատացիս՝ գրեցաւ 'ի հռոմայ ։

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍՆ։

### ԳԼ. Ա.

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ 1
յսի քսի կամօքն այ, սրբոց որ
են յեփեսոս, եւ հաւատա-
ցելոց ՚ի քս յս։ * Շնորհք 2
ընդ ձեզ եւ խաղաղութիւն յայ հօրէ մեր-
մէ՝ եւ ՚ի տեառնէ յսէ քսէ։ * Օրհնեալ է 3
այ եւ հայր տն մերոյ յսի քսի, որ օրհ-
նեաց զմեզ ամ հոգեւոր օրհնութբ յերկ-
նաւորս ՚ի քս։ * որպ ընտրեաց զմեզ նո- 4
վաւ յառաջ քան զլինելն աշխարհի, լի-
նել մեզ սուրբս եւ անարատս առաջի նր
սիրով։ * Յառաջագոյն սահմանեաց ըզ 5
մեզ յորդեգրութիւն ՚ի ձեռն յսի քսի ՚ի
նոյն, ըստ հաճութեան կամաց իւրոց, * ՚ի 6
գովեստ փառաց շնորհաց իւրոց, որով
զուարճացոյց զմեզ սիրելեաւն։ * Որով 7
ունիմք զփրկութիւն ՚ի ձեռն արեան նր,
զթողութիւն մեղաց՝ ըստ մեծութեան շնորհաց
իւրոց։ * որ առաւելաւ ՚ի մեզ ամ իմաս- 8
տութբ եւ գիտութբ։ * Ցոյց մեզ ըզ- 9
խորհուրդս կամաց իւրոց՝ ըստ հաճութեան

իւրում· զոր յառաջագոյն եդ նովաւ,
10 * 'ի տնտեսութիւն լրման ժամանակաց,
բովանդակել զամ քսիւ, որ ինչ յեր-
11 կինս՝ և որ ինչ յերկրի՝ 'ի նմին. * Նովաւ
և վիճակեցաք յառաջագոյն հրաւիր-
եալք՝ ըս յառաջադրութեն այն· որ զամ յօ-
12 ժարէ ըս խորհրդոց կամաց իւրոց· * լի-
նել մեզ 'ի գովեստ փառաց նր յառաջա-
13 գոյն յուսացելոցս 'ի քս։ * Նովաւ և դուք
իբրև լուաք զբանն ճշմարտութե, զա-
ւետարանն փրկութե ձերոյ, որով և հա-
ւատացեալ կնքեցայք հոգւոյն սբյ աւե-
14 տեաց։ * որ է առ հաւատչեայ ժառան-
գութե մերոյ 'ի փրկութիւն նուաճութե, 'ի
գովեստ փառաց նորա։
15 * Վասն այնորիկ և ես իբրև լուայ զհա- ԲԺԴ
ւատսն զձեր՝ որ 'ի տր յս, և զսէրն որ ը
16 ամ սուրբս, * ոչ դադարեմ 'ի գոհանա-
17 լոյ վս ձեր՝ յիշել զձեզ յաղօթս. * զի
ած տն մերոյ յսի քսի հայրն փառաց՝ տա-
ցէ ձեզ զհոգին իմաստութե և յայտնու-
18 թե՝ գիտութն իւրով. * լուսաւոր առ-
նել զաչս սրտից՝ առ 'ի գիտելոյ մեզ՝
զի՞նչ է յոյս կոչման նորա, և զի՞նչ մե-
ծութիւն փառաց ժառանգութե նորա 'ի
19 սուրբս. * և զի՞նչ է առաւելութի մեծու-
թե զօրութե նր 'ի մեզ հաւատացեալս. ըս
20 յաջողութե կարողութե զօրութե իւրոյ, * զոր
յաջողեաց 'ի քս. զի յարոյց զնա 'ի մեռե-
լոց. և նստոյց ը աջմէ իւրմէ յերկնա-



ւորս,

ւորս, * 'ի վ՟ր ա՟մ իշխանութե՟՝ և պետու 21
թե՟ և զօրութե՟ և տէրութե՟՝ և ա՟մ ան_
ուան անուանելոյ, ոչ միայն յաշխարհիս
յայսմիկ՝ այլ և 'ի հանդերձելումն: * Եւ 22
զա՟մ ինչ հնազանդ արար 'ի ներքոյ ոտից
ն՟ր: և զնա ետ գլուխ 'ի վերայ ա՟մ իրիք
եկեղեցւոյ, * որ է մարմին ն՟ր, լրումն՝ 23
որ զա՟մ յամենայնի լնու:

## ԳԼ. Բ.

Եւ դուք որ մեռեալն էիք 'ի մեղս ձեր 1
և յանցանս, * յորս երբեմն գնայիք 2
ըստ յաւիտենի աշխարհիս այսորիկ՝ ըստ
իշխանին իշխանութե՟ օդոյս այսոց, որ
այժմս ընդ մտեալ է յորդիսն ապստամ_
բութեան. * յորս և մեք ամենեքեան 3
շրջէաք երբեմն 'ի ցանկութիս մարմնոյ
մերոյ, և առնէաք զկամս մարմնոյ՝ և ըղ_
մտաց, և էաք արդարև որդիք բարկու_
թե՟ իբրև այլքն:

Բ.Զ * Այլ ա՟ծ որ մեծն է ողորմութե՟՝ վ՟ն բ՟ղմ 4
սիրոյն իւրոյ՝ զոր սիրեաց զմեզ. * մինչ 5
դեռ մեռեալն էաք 'ի մեղս մեր, կեն_
դանիս արար զմեզ 'ի ք՟ս. քանզի շնորհօք
ապրեցաք. * ը՟ն նմին յարոյց, և ը՟ն նմին 6
նստոյց յերկնաւորս 'ի ք՟ս յ՟ս: * Զի ցուց 7
ցէ 'ի յաւիտեանսն որ գալոցն են՝ զառա
ւել մեծութի՟ շնորհացն իւրոց՝ քաղցրու_
թե՟ 'ի մեզ 'ի ք՟ս յ՟ս: * Զի շնորհօք ն՟ր 8
էք փրկեալք 'ի ձեռն հաւատոցն: և այս

 ոչ

9 ոչ 'ի ձէնջ, այլ այ պարգեւ է. * ոչ 'ի գոր_
10 ծոց, զի մի' որ պարծեսցի: * Զ ի նր արա
րածք եմք՝ հաստատեալք քսիւ յսիւ 'ի
գործս բարութե, յորս յառաջագոյն պատ_
րաստեաց ած. զի 'ի նոյնս գնասցուք:
11 * Վ ասն որոյ եւ դուք յիշեցէք՝ զի երբեմն հե
թանոսք էիք մարմնով. որ կոչեցեալն էն
անթլփատութի՝ յանուանեալ թլփատու
12 թե անտի մարմնու որ ձեռագործն. * զի
էիք 'ի ժամանակին յայնմիկ առանց քսի,
(եւ օտարացեալ էիք յաւաքինութեէն իղի,)
եւ տարագիրք յուխտից աւետեացն, եւ
յոյս ինչ ոչ ունէիք՝ եւ անած էիք յաշ
13 խարհի: * Իսկ այժմիկ 'ի ձեռն յսի քսի,
դուք՝ որ երբեմն հեռաւորքն էիք՝ մեր_
14 ձաւորք եղերուք արեամբն քսի: * Զ ի
նա է խաղաղութի մեր՝ որ արար զերկո
սեան մի. եւ զմիջնորմն ցանկոյն քակեաց՝
15 զթշնամութի 'ի մարմնի իւրում. * եւ զօ
րէնս պատուիրանացն հրամանօքն խա_
փանեաց. զի զերկոսին հաստատեսցէ
ինքեամբ 'ի մի նոր մարդ, եւ արասցէ խա_
16 ղաղութի. * եւ հաշտեցուսցէ զերկոսին
միով մարմնով ընդ այ՝ խաչիւն իւրով, քան_
զի սպան զթշնամութի յանձին իւրում.
17 * Եւ եկն աւետարանեաց խաղաղութի
ձեզ հեռաւորաց՝ եւ խաղաղութի մեր_
18 ձաւորաց. * զի նովաւ ունիմք զմուտ
ճութի երկոքին միով հոգւով առ հայր:
19 * Ապա այսուհետեւ ոչ էք օտարք եւ պան_

 դու_

դուխտք, այլ քաղաքակիցք սրբց և ըն-
տանիք այ. * շինեալք 'ի վր հիման ա- 20
ռաքելոց և մարգարէից. որոյ է գլուխ
անկեանն քս յս. * յորում ամ շինուածն 21
յօդեալ և պատրաստեալ՝ աճէ 'ի տաճար
սուրբ տրամբ: * Յորում և դուք ընդ նմին 22
շինիք 'ի բնակութի այ հոգւով:

ՂԶ

## ԳԼ. Գ.

Վասն այնորիկ ես պօղոս կապեալ յսի 1
քսի վն ձեր հեթանոսաց: * Թերևս 2
լուեալ իցէ ձեր զտնտեսութի շնորհացն
այ, որ տուեալ են ինձ 'ի ձեզ: * Զի ըստ 3
յայտնութեն ցուցաւ ինձ խորհուրդն.
որպէս յառաջագոյն գրեցի առ ձեզ սակա
ւուք. * առ 'ի կարօղ լինելոյ ընթեռնուլ՝ 4
և 'ի միտ առնուլ զիմաստութին զիմ 'ի
խորհրդեանն քսի: * Զի այլոց ազգաց 5
ոչ ցուցաւ որդւոց մարդկան. որպէս այժմ
յայտնեցաւ սրբոց իւրոց առաքելոց և
մարգարէից՝ հոգւովն. * լինել հեթա 6
նոսաց ժառանգակիցս՝ և մարմնակիցս,
և հաղորդս աւետեացն 'ի քս յս՝ աւետա
րանաւն, * որոյ եղէ ես սպասաւոր ըստ 7
պարգևաց շնորհացն այ՝ որ տուան ինձ
ըստ յաջողութե զօրութե նր: * Ինձ որ ար 8
րուպս եմ ամ սրբց՝ տուան շնորհքս այս,
'ի հեթանոսս աւետարանել զանքննին
մեծութին քսի. * և լուսաւոր առնել զա- 9
մենեսին, թէ զինչ է տնտեսութի խորհր

 դոյն

դոյն, որ ծածկեալ էր յամ յաւիտենից
10 առ այ՝ որ զամ ինչ արար։ * Զի յայտ-
նեսցի արդ իշխանութեց և պետութեց՝ որ
յերկինս են ՚ի ձեռն եկեղեցւոյ՝ բազմա
11 պատիկ իմաստութին այ· * ըստ յառաջա
դրութե յաւիտենիցն՝ զոր արար ՚ի ձեռն
12 տն մերոյ յսի քսի։ * Որով ունիմք զհա
մարձակութի և զմերձաւորութի յուսով ՚ի
13 ձեռն հաւատոց նր։ * Վասն որոյ աղա
չեմ մի՛ ձանձրանալ ՚ի նեղութես մերում,
14 որ վն ձեր է· որ է փառք ձեր։ * Վասն
այսորիկ դնեմ ծունր առ հայր տն մերոյ
15 յսի քսի· * ուստի ամ նահապետութի
16 յերկինս և յերկրի անուանի· * զի տա-
ցէ ձեզ ըստ մեծութե փառաց իւրոց, հաս-
տատել զօրութբ ՚ի ձեռն հոգւոյն իւրոյ
17 ՚ի ներքին մարդն· * բնակել քսի հաւա
տովք ՚ի սիրտս ձեր· սիրով արմատաց-
18 եալք։ * զի կարող լինիջիք հասանել ընդ
ամ սրբս, զինչ է լայնութի, և երկայնու
19 թի, և բարձրութի, և խորութի· * Ճա-
նաչել զառաւելութի գիտութե սիրոյն
20 քսի· զի լցջիք ամ լրութբն այ։ * Այլ
այնմ որ կարողն է առաւել քան զամ ինչ
առնել յաճախութբ, քան զոր խնդրեմքն
և իմանամք· ըստ զօրութեն որ յաջողեալն
21 է ՚ի մեզ։ * Նմա փառք յեկեղեցւոջ,
և ՚ի քս յս, յամ ազգս յաւիտենից յա-
ւիտեանս· ամէն։

## ԳԼ. Դ.

Որդ՝ աղաչեմ զձեզ ես որ կապեալս 1
եմ ՚ի տէր. արժանի գնալ կոչմանն,
յոր կոչեցարուք. * ամենայն խոնարհութեամբ՝ և 2
հեզութեամբ, և երկայնմտութեամբ՝ անսալ մի-
միանց սիրով: * Փութալ պահել զմիա 3
բանութիւն հոգւոյն յօղ ի խաղաղութեան.
* Մի մարմին՝ և մի Հոգի. որպէս և կոչե 4
ցարուք, ՚ի մի յոյս կոչման ձերոյ: * Մի 5
Տէր, մի հաւատ, մի մկրտութիւն: * մի 6
Աստուած, և Հայր ամենեցուն, որ ՚ի վերայ ամենի
և ընդ ամենեսին՝ և յամենեսին ՚ի մեզ:
* Իւրաքանչիւր ումեք ՚ի մէնջ տը- 7
ւեալ են շնորհք ըստ չափոյ պարգևացն
Քրիստոսի: * Վասն որոյ և ասէ. ել ՚ի բարձ- 8
րունս՝ գերեաց զգերութիւն, և ետ պար-
գևս մարդկան: * Իսկ ելն, զի՞նչ է, ե- 9
թէ ոչ՝ զի էջ նախ ՚ի ստորինս կողմանս երկ-
րի: * Որ էջն, նոյն է՝ և որ ելն ՚ի վերոյ 10
քան զամենայն երկինս. զի լցցէ զամենայն: * Եւ 11
Նա ետ զոմանս առաքեալս, զոմանս մար-
գարէս, զոմանս աւետարանիչս, զոմանս
հովիւս և վարդապետս, * առ ՚ի հաս- 12
տատութիւն սրբոց, ՚ի գործ պաշտաման, ՚ի
շինուած մարմնոյն Քրիստոսի: * մինչև հաս- 13
ցուք ամենեքեան ՚ի մի միաբանութիւն հա-
ւատոց և գիտութեան որդւոյն Աստուծոյ. յայր կա
տարեալ ՚ի չափ հասակի կատարմանն
Քրիստոսի: * Զի մի յայսմհետէ լիցուք տղայք 14

 խռով

խռովեալք՝ և տատանեալք յամ՟ հողմոց
վարդապետութե՟, խաբէութ՟ մարդկան.
խորամանկութ՟ ՚ի խաբէութ՟ մոլորութե՟։
15 Այլ ճշմարտեալք սիրով՝ աճեցուսցուք
16 ՚ի նա զամ՟, որ է գլուխն քս՟. * ուստի ամ՟
մարմինն յօդեալ և պատշաճեալ ամ՟
խաղալեօք տարբերութե՟՝ ըստ ազդեցութե՟՝
չափով ըստ իւրաքանչիւր մասին՝ զաճումն
մարմնոյ գործէ՝ ՚ի շինած անձին իւրոյ
17 սիրով։ * Արդ՝ զայս ասեմ. և ուխտեմ
՚ի տր՟. մի՛ ևս ձեզ գնոյն օրինակ գնալ,
որպ՟ և այլ հեթանոսք գնան՝ ունայնութ՟
18 մտաց իւրեանց։ * որոց խաւարեալ են
միտք իւրեանց, և օտարացեալ են ՚ի
կենաց անտի այ՟՝ վս՟ տգիտութեն՝ որ է ՚ի
19 նս՟՝ վս՟ կուրութե՟ սրտից իւրեանց։ * Որք
զանձանց իւրեանց զյոյսն հատին, և
մատնեցին զանձինս գիջութե՟, ՚ի գործս
20 ամ՟ պղծութե՟ ագահութ՟։ * Այլ դուք
21 ոչ այսպէս ուսարուք զքս՟. * Թէպէտ և
լուարուք զնմանէ՝ և նովաւ ուսայք՝ որպ՟
22 է ճշմարտութին յսի. * ՚ի բաց մերկանալ
՚ի ձէնջ ըստ առաջին գնացիցն զմարդն
հին՝ զապականեալն ցանկութ՟ք խաբէու
23 թեն։ * Եւ նորոգել հոգւովն մտաց ձե
24 րոց, * և զգենուլ զնոր մարդն՝ որ ըստ
այ՟ն հաստատեալ է՝ արդարութ՟ և սուր
25 բութ՟ ճշմարտութեն. * Վասն որոյ ՚ի բաց
ընկեցէք զստութ՟. խօսեցարուք զճշմար
տութ՟ իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում.

զի եմք միմեանց անդամք ։ * Բարկա- 26
նայք՝ և մի՛ մեղանչէք · արեգակն 'ի վ̃ր
բարկութե̃ ձերոյ մի՛ մտցէ ։ * Եւ մի՛ տայք 27
տեղի սատանայի ։ * Որ գողանայրն, մի՛ 28
և ս գողասցի , այլ մանաւանդ վաստա-
կեսցէ՝ գործել ձեռօք իւրովք զբարիս ·
զի բաւական իցէ տալ ուում պիտոյ իցէ ։
* Ամենայն բան տգեղ 'ի բերանոյ ձեր- 29
մէ մի՛ ելցէ · այլ որ ինչ բարին է 'ի շի-
նած պիտոյից , զի տացէ շնորհս այնոցիկ
որ լսե̃ն ։ * Եւ մի՛ տրտմեցուցանէք զ 30
Հոգին Ս̃բ Ա̃յ , որով կնքեցարուք յաւ-
ուրն փրկութե̃ ։ * Ամենայն դառնութի̃ 31
և բարկութի̃ , և սրտմտութի̃ , և աղա-
ղակ՝ և հայհոյութիւն բարձցի 'ի ձէնջ
ամենայն չարութե̃ն հանդերձ ։ * Լե- 32
րուք ընդ միմեանս քաղցունք՝ գթածք ·
շնորհել միմեանց · որպէս և Ա̃ծ Ք̃իւ
շնորհեաց մեզ ։

## ԳԼ. Ե.

Եղերուք նմանօղք Ա̃յ , իբրև որդիք սի- 1
րելիք ։ * և գնացէք սիրով՝ ո̃պ և 2
Ք̃ս սիրեաց զմեզ , և մատնեաց զանձն իւր
վ̃ն մեր՝ պատարագ և զենումն Ա̃յ 'ի հոտ
անուշից ։ * Այլ պոռնկութի̃ , և ա̃մ 3
պղծութի̃ , կամ ագահութի̃ , և անուա-
նեսցի մի՛ 'ի միջի ձերում · ո̃պ և վայել է
ս̃բց ։ * և զազրութի̃՝ կամ խօսք յիմա 4
րութե̃ , կամ խեղկատակութի̃՝ որ ոչ վայել
է ։

5 է. այլ մանաւանդ գոհութի՟ւ։ * Զայս
տեղեկացեալ գիտասջի՛ք. թէ ա՟մ պոռ-
նիկ՝ կամ պիղծ՝ կամ ագահ, որ է կռա
պաշտ՝ ոչ ունի ժառանգութի՟ն յարքայ
6 ութե՟ն ք՟րի եւ ա՟յ։ * Մի՛ ոք զձեզ խա-
բեսցէ բանիւք սնոտեօք. զի վ՟ն այսո
րիկ իսկ գայ բարկութի՟ն ա՟յ ՚ի վ՟ր որդ-
7 ւոցն անհաւանութե՟ն։ * Մի՛ այսուհետեւ
8 լինիք բաժանորդք ն՟ց։ * Զի էիք թէպէտ
եւ երբեմն էիք խաւար, արդ լոյս էք ՚ի
9 տ՟ր. իբրեւ զորդիս լուսոյ գնացէ՛ք. * զի
պտուղ լուսոյ ա՟մ բարութե՟բ է՝ եւ արդա
10 րութե՟բ եւ ճշմարտութե՟բ։ * Փորձեցէ՛ք զի՛նչ
11 է հաճոյ տ՟ն. * եւ մի՛ կցորդ լինիք ան-
պտղութե՟ն գործոցն խաւարի՝ այլ մանա
12 ւանդ յանդիմանեցէ՛ք։ * Զի որ ՚ի ծա
ծուկ ինչ գործի ՚ի ն՟ց՝ զայն եւ խօսել
13 աղտեղի է։ * Բայց ամենայն ինչ յան-
դիմանեալ ՚ի լուսոյ՝ յայտնի լինի. զի ա-
14 մենայն ինչ որ յայտնի է՝ լոյս է։ * Վ՟ն
որոյ եւ ասէ. արի՛ որ ննջեսդ, եւ կանգ-
նեա՛ց ՚ի մեռելոց՝ եւ լուսատու լիցի
քեզ ք՟ս։
15 * Զգուշջի՛ք ո՟րպ ճշմարտիւ գնայցէք, մի՛ Թ.Կ
16 իբրեւ անիմաստք, * այլ իբրեւ իմաս-
տունք. գնեցէ՛ք զժամանակս՝ զի աւ-
17 ուրքս չարութե՟ն են։ * Վասն այնորիկ մի՛
լինիք անմիտք, այլ իմացարո՛ւք զի՛նչ
18 կամք են տ՟ն։ * Եւ մի՛ արբենայք գի-
նւով, յորում ղեղխութի՟ն է. այլ մանաւանդ

լցարուք հոգւով. * խօսել 'ի միտս ձեր 19
սաղմոսիւք, և օրհնութիւք՝ և երգովք հո-
գևորօք. երգել և սաղմոս ասել 'ի սիր-
տըս ձեր տն. * Գոհացարուք յամ ժամ 20
'ի վր ամի, յանուն տն մերոյ յսի քսի՝
հօրն և այ. * Հնազանդ լերուք միմեանց 21
երկիւղիւն քսի. * Կանայք՝ իւրեանց ա- 22
րանց հնազանդ լիցին իբրև տն. * զի այր 23
է գլուխ կնոջ. որպէս և քս գլուխ է եկե-
ղեցւոյ. և ինքն է փրկիչ մարմնոյ. * Այլ 24
որպ եկեղեցին հնազանդ լինի քսի. նոյն-
պէս և կանայք իւրեանց արանց յամի.
* Արք՝ սիրեցէք զկանայս ձեր. որպ և 25
քս սիրեաց զեկեղեցի. և զանձն իւր
մատնեաց վս նր. * զի զնա սրբեսցէ սըր- 26
բութբ աւազանին բանիւ. * զի կացուսցէ 27
ինքն իւր յանդիման փառաւոր զեկեղե-
ցի, զի մի' ունիցի ինչ արատ՝ կամ աղտե-
ղութի, կմ այլ ինչ յայնպիսեաց. այլ զի ի-
ցէ սուրբ և անարատ. * Նոյնպ պարտին 28
արք սիրել զիւրեանց կանայս իբրև զիւ-
րեանց մարմինս. որ սիրէ զկին իւր,
զանձն իւր սիրէ. * Ոչ ոք երբէք ա- 29
տեաց զանձն իւր, այլ սնուցանէ, և
դարմանէ զնա. որպէս և քս զեկեղեցի.
* զի անդամք եմք մարմնոյ նր, 'ի մարմ- 30
նոյ նր և յոսկերաց նր. * Ան այսորիկ 31
թողցէ այր զհայր և զմայր իւր, և եր-
թիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին եր-
կոքին 'ի մարմին մի. * Խորհուրդս այս՝ 32

ծ է, բայց ես ասեմ ի քս եւ յեկեղե
33 ցի: * Բայց եւ դուք նոյնպէս մի ըստ միո
ջէ. զի իւրաքանչիւրոք զիւր կին այնպէս
սիրեսցէ՝ իբրեւ զիւր անձն. եւ կին երկիցէ
չիցի յառնէ իւրմէ:

## ԳԼ. Զ.

1 Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձե Թ.Ե.
2 րոց ի տր. զի այն է արժանն: * Պատ
ուեա զհայր քո եւ զմայր, որ է առաջին
3 պատուիրան յաւետեաւն. * զի քեզ բարի
եղիցի, եւ երկայնակեաց լինիցիս ի վերայ
4 երկրի: * Հարք՝ մի՛ զայրացուցանէք զոր
դիս ձեր, այլ սնուցանիջիք զնս խրատու
5 եւ ուսմամբ տն: * Ծառայք՝ հնազանդ
լերուք տերանց ձերոց մարմնաւորաց,
ահիւ եւ դողութեամբ եւ միամտութեամբ սր
6 տից ձերոց, որպ եւ քսի: * Մի՛ առ ակա
նէ ծառայել իբրեւ մարդահաճոյք. այլ
իբրեւ ծառայք քսի առնել զկամս այ,
7 * սրտի մտօք ծառայել իբրեւ տն, եւ մի՛
8 իբրեւ մարդկան: * գիտասջիք՝ թէ իւրա
քանչիւր ոք որ ինչ առնէ զբարիս, զն
նոյն ընդունի եւ ի տնէ՝ եթէ ծառայ եւ
9 եթէ ազատ: * Եւ դուք տեարք՝ զնոյն
առնիջիք առ նս. ներելով առնել զսպա
ռնալիս. գիտասջիք թէ եւ նց եւ ձեր
տր գոյ յերկինս. եւ ակնառութիւն ոչ գոյ
առաջի նորա: Վ.Զ
10 * Այսուհետեւ զօրացարուք տերամբ, եւ

կարողութե զօրութե նր. * Եւ զգեցարուք 11
զսպառազինութին այ. զի կարող լինի-
ջիք կալ ընդդէմ հնարից սատանայի.
* Զի ոչ է մեզ պատերազմ ը մարմնոյ 12
եւ ը արեան. այլ ը իշխանութիս, եւ ը
պետութիս, եւ ընդ աշխարհակալս խա-
ւարիս այսորիկ՝ ընդ այսս չարութե՝ որ
'ի ներքոյ երկնից.
Թ. Զ. * Վասն այսորիկ առէք զսպառազինու- 13
թիւնն այ. զի կարող լինիցիք 'ի դիմի
հարկանել չարին յաւուրն չարութե.
* Եւ իբրեւ զամենայն ինչ կատարիցէք, 14
հաստատուն կացէք. զատեղի կալջիք պըն-
դեալ զմէջս ձեր ճշմարտութբ. եւ զգե-
ցեալ զզրահսն արդարութե. * Եւ ագու- 15
ցեալ զոտս պատրաստութբ աւետարա-
նին խաղաղութեն. * Եւ 'ի վերայ ամե- 16
նայնի առէք զվահանն հաւատոյ. որով
կարող լինիջիք զամենայն նետս մոլախ
չարին շիջուցանել. * Եւ առէք զսաղա- 17
ւարտն փրկութե, եւ զսուսեր Հոգւոյն՝
որ է բանն այ. * ամենայն աղօթիւք եւ 18
խնդրուածովք՝ աղօթս առնել յամե-
նայն ժամանակի Հոգւով. եւ'ի նոյն տք-
նիջիք ամենայն ժուժկալութբ՝ եւ խըն-
դրուածովք՝ վասն ամենայն սրբոց, * Եւ 19
վասն իմ. զի ինձ տացի բան 'ի բանալ
բերանոյ իմոյ, համարձակութբ ցու-
ցանել զխորհուրդ աւետարանին. * Վա 20
որոյ պատգամաւորիմ կապանօքս. զի նո-
վին

վին համարձակեցայց , որպէս և պարտ
21 իցէ ինձ խօսել։* Բայց զի գիտիցէք և
դուք զինէն, զինչ գործիցեմ. զամենայն
ինչ ցուցցէ ձեզ տիւքիկոս սիրելի եղ
բայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ ՚ի Տր,
22 * զոր առաքեցի առ ձեզ դմին իրի . զի
գիտասջիք դուք զմէնջ , և մխիթարես
23 ցէ զսիրտս ձեր։ * Խաղաղութի ընդ
եղբարս, և սէր հաւատովք հանդերձ
24 յԱյ՚ի Հօրէ՝ և՚ի Տնէ յսէ քսէ։* Շնորհք
ընդ ամենեսին՝ որք սիրեն զՏր մեր յս
քս անեղծութբ. ամէն։

Առ Եփեսացիս՝ գրեցաւ ՚ի Հռովմ ՚ի ձեռն
տիւքիկոսի։

# ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

## ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍՆ.

### ԳԼ. Ա.

ծկ ՊՕՂՈՍ ԵՒ ՏԻՄՈ- 1
թէոս ծառայք յս՛ի քս՛ի՝ ամ՛
սրբոց ՚ի քս՛ յս՛, որ են ՚ի
կողմանս փիլիպեցւոց, ե-
պիսկոպոսակցօք և սարկաւագօք։ * Շ ը 2
նորհք ը՛ն ձեզ և խաղաղութի՛ յա՛յ հօրէ
մերմէ՝ և ՚ի տ՛նէ յս՛է քս՛է։ * Գոհանամ 3
զա՛յ իմո՛յ ՚ի վ՛ր ամ՛ յիշատակաց ձերոց,
* յամ՛ ժամ յամ՛ խնդրուածս իմ՝ վասն 4
ձեր ամենեցուն առնել աղօթս խնդու-
թե՛, * վասն հաղորդութե՛ ձերոյ ընդ 5
աւետարանին, յօրէ յառաջնմէ մինչև
ցայժմ։ * Ստահեմ յայդ, թէ որ ըս- 6
կսաւ ՚ի ձեզ զգործս բարեաց՝ կատա
րեսցէ մինչև յօրն յս՛ի քս՛ի։ * ո՛պ իրաւ- 7
ի՛սկ թուի ինձ խորհել զայս վ՛ն ձեր ա-
մենեցուն. վ՛ն ունելոյ ինձ զձեզ ՚ի սրտի
՚ի կապանս իմում. և ՚ի պատասխանա-
տուութե՛ իմում, և ՚ի հաստատութե՛ աւե-
տարանին, կցորդս ինձ շնորհաց զձեզ ա-
մենեսին լինել։ * Վկայ է ինձ ա՛ծ, որ՛պ 8
անձ

անձկացեալ եմ առ ձեզ ամենեսին գ-
9 թովքն քսի յսի։ * Եւ զայն աղօթս առ-
նեմ. զի սէրն ձեր եւս քանզեւս առաւել
լիցի ի գիտութեան եւ յամ իմաստութեան.
10 * ընտրել ձեզ զլաւն՝ զի լիջիք հաստա-
տունք՝ եւ առանց գայթագղութեան ի յաւ-
11 ուրն քսի. * լցեալ պտղովք արդարութե
ի ձեռն յսի քսի՝ ի փառս եւ ի գովեստ այ։
12 * Կամիմ թէ գիտիցէք եղբարք. զի որ ԺԴ
ինչ վս իմ էր, եւս քան զեւս ի յառաջա
13 դիմութի աւետարանին եկն, * մինչեւ կա-
պանաց իմոց յայտնի լինել ի քս յամե-
նայն հրապարակին, եւ առ այլս ամենե
14 սին, * եւ առ բազումս եղբարս ի տր. որ
վստահ են կապանօքս իմովք՝ առաւել
եւս համարձակել՝ առանց երկիւղի զբանն
15 այ խօսել։ * Ոմանք առ նախանձու եւ
հակառակութե, եւ ոմանք մտադիւրու-
16 թբ իսկ զքս քարոզեն. * եւ ոմանք ի սի-
րոյ. քանզի գիտեն՝ եթէ ի պատասխա
17 նատուութի աւետարանին կամ։ * եւ ոմանք
առ հեստութե զքս պատմեն, այլ ոչ սր-
բութբ. քանզի համարին նեղութիւն յարու
18 ցանել ի վս կապանաց իմոց. * Բայց
այս զինչ է. ոչ օրինակաւ եւ իցէ, ե-
թէ պատճառանօք՝ եւ եթէ ճշմարտութբ,
քս պատմի. եւ ընդ այս խնդամ, այլ եւ ու-
19 րախ եւս եղէց։ * Գիտեմ եթէ այս
պատհի ինձ ի փրկութի ի ձերոց խնդրուա
ծոց, եւ ի պարգեւաց հոգւոյն յսի քսի։

* ըստ ակնկալութեան եւ յուսոյն իմոյ. զի 20
մի՛ իւիք յամօթ եղէց. այլ ամ͞ համար-
ձակութ͞ ոպ͞ եւ յամ͞ ժամ, եւ այժմ մե-
ծասցի Ք͞ս ՚ի մարմնի իմում, եթէ կե-
նօք՝ եւ եթէ մահու։ * Զի ինձ կեանք 21
Ք͞ս է, եւ մեռանել շահ։ * Ապա եթէ 22
կեանքս մարմնոյ՝ այս ինձ պտուղ գոր-
ծոյ է. եւ զի՛նչ ընտրեցից՝ զայն ոչ գի-
տեմ. * Նեղեալ եմ յերկոցունց՝ զցան 23
կալն, ելանել եւ ը͞ Ք͞սի լինել՝ առաւել
լաւ համարիմ. * Եւ կալ մնալ աստէն ՚ի 24
մարմնի, կարեւոր եւս վ͞ն ձեր։ * Եւ զայս 25
յուսացեալ գիտեմ, եթէ կացից՝ եւ մնա-
ցից ամենեցուն ձեզ, ՚ի ձեր զարգանալ
եւ խրախ լինել ՚ի հաւատս. * զի պար- 26
ծանք ձեր առաւել լիցին ՚ի Ք͞ս Յ͞ս ինեւ ՚ի
Գ.Ձ միւսանգամ գալստեան իմում առ ձեզ։
* Միայն թէ արժանի աւետարանին Ք͞սի 27
գնայցէք. զի եթէ գայցեմ, եւ տեսանի-
ցեմ զձեզ. եւ եթէ հեռի իցեմ, եւ լսի-
ցեմ զձէնջ. զի հաստատուն կայցէք ՚ի
մի հոգի, եւ միով շնչով նահատակիցիք
՚ի հաւատս աւետարանին. * եւ մի՛ զան- 28
գիտիցէք, եւ մի՛ իւիք ՚ի հակառակոր-
դաց անտի, որ է նց͞ հանդէս կորստեան.
եւ ձերոյ փրկութեան. * Եւ այդ՝ յԱյ͞ է, 29
որ ձեզ շնորհեցաւ վ͞ն Ք͞սի, ոչ միայն ՚ի
նա հաւատալ՝ այլ եւ վ͞ն նր͞ չարչարիլ.
* զնոյն պատերազմ ունել զոր յիս տե- 30
սէք, եւ այժմ լսէք յինէն.

## ԳԼ. Բ.

1 Արդ՝ եթէ մխիթարութի ինչ իցէ ՚ի Ք՟ս,
եթէ սփոփութի սիրոյ՝ եթէ հաղոր
դութի հոգւոյ, եթէ գթութի և ողոր
2 մութի. * լցէք զխնդութիս իմ, զնոյն խոր֊
հեսջիք, զնոյն սէր յանձին ունիջիք. հա֊
3 մաշունչք՝ միախորհուրդք: * մի՛ ինչ ըստ
գրգռութե, և մի՛ ինչ ը՟ս սնապարծութե.
այլ խոնարհութե՟բ զմիմեանս լաւ համա
4 րել քան զանձինս: * մի՛ զան֊
ձանց և եթ գիտել՝ այլ իւրաքանչիւրոք
5 զընկերին: * Զայն խորհեսցի իւրա
6 քանչիւրոք ՚ի ձեզ, որ և ՚ի Ք՟ս Յ՟ս. * որ
՚ի կերպարանս Ա՟յ է, ոչինչ յափշտակու
թի համարեցաւ զլինելն հաւասար Ա՟յ.
7 * այլ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս
ծառայի առեալ, ՚ի նմանութի մարդ֊
կան եղեալ՝ և կերպարանօք գտեալ իբ֊
8 րև զմարդ: * խոնարհեցոյց զանձն, լեալ
հնազանդ մահու չափ՝ և մահու խաչի:
9 * Վասն որոյ և Ա՟ծ զնա առաւել բարձ
րացոյց. և շնորհեաց նմա անուն՝ որ ՚ի
10 վե՛ր է քան զա՟մ անուն: * Զի յանուն
Յ՟ի Ք՟ի ա՟մ ծունր կրկնեսցի, երկնա
ւորաց՝ և երկրաւորաց՝ և սանդարամե
11 տականաց: * և ա՟մ լեզու խոստովան
եսցի, թէ Տ՟ր է Յ՟ս Ք՟ս ՚ի փառս Ա՟յ Հօր.
12 * Այսուհետև սիրելիք իմ, որպէս յա՟մ ԺԶ
հնազանդեցարուք, մի՛ միայն ՚ի գալս֊
տեան

տեսան իմում, այլ առաւել ևս այժմ՝
յորժամ հեռի եմ ՚ի ձէնջ, ահիւ և
դողութ͞բ զանձանց փրկուի գործեցէք։
* Զի ա͞ծ է՝ որ յաջողէ ՚ի ձեզ զկամելն 13
և զառնելն վ͞ն հաճութեան։ * Զա͞մ ինչ 14
գործեցէք առանց տրտնջելոյ և բրթմն-
ջելոյ. * զի եղիջիք անբիծք և անարատք՝ 15
որդիք ա͞յ, անմեղք ՚ի մէջ կամակոր և
խեղաթիւր ազգին. յորոց միջի երևի-
ցիք իբրև լուսաւորք յաշխարհի. * ըզ 16
բանն կենաց ունել յանձինս՝ ՚ի պար-
ծանս ինձ յաւուրն ք͞սի. զի ոչ ը͞ն ունայն
ինչ ընթացայ՝ և ոչ ընդունայն վաստա-
կեցի։ * Այլ թէպէտ և նուիրիմ ՚ի 17
վ͞ր պատարագի և պաշտաման հաւատոց
ձերոց, խնդամ և ուրախակից եմ ամե-
նեցուն ձեր. * Նոյնպէս և դուք խնդա 18
ցէք և ուրախակից եղերուք ինձ։ * Բայց 19
յուսամ ՚ի տ͞ր յ͞ս, զտիմոթէոս վաղվա
ղակի արձակել առ ձեզ. զի և ինձ սըր-
տի դիւր լինիցի, յորժամ գիտիցեմ ինչ
զձէնջ։ * Զի ոչ զոք ունիմ համաշունչ՝ 20
եթէ ընտանեբար հոգայցէ վասն ձեր։
* զի ամենեքին զանձանց խնդրեն, և ոչ 21
զյ͞ի ք͞սի։ * Բայց զփորձ նո͞ր գիտէք և 22
դուք. զի իբրև որդի հօր ծառայեաց ը͞ն
իս յաւետարանին։ * Զ͞րդ՝ զսա ակնու- 23
նիմ արձակել՝ ո͞պ նայն հետայն զանձնէ
ստուգեցից. * այլ յուսացեալ եմ ՚ի տ͞ր՝ 24
թէ և ես իսկ ընդ հուպ եկից։ * Բայց 25

լաւ համարեցայ զԵպափրոդիտոս զեղ-
բայրն և զգործակից և զզինուորակից
իմ, զձեր առաքեալ, և զպաշտօնեայ ի-
26 մոց պիտոյից՝ առաքել առ ձեզ։ * Քան-
զի և ինքն իսկ յոյժ անձկացեալ է տե-
սանել զամենեսին զձեզ. և հոգայր, զի
27 ձեր լուեալ էր թէ խօթացաւ։ * Եւ ար-
դարև խօթացաւ մերձ ի մահ, այլ Ած
ողորմեցաւ նմա. ոչ նմա միայն, այլ և
ինձ՝ զի մի՛ տրտմութիւն ի վր տրտմութեան
28 կրեցից։ * Արդ՝ փութապէս յղեցի զնա,
զի տեսեալ զնա միւսանգամ ուրախ լի-
նիցիք. և ես առանց տրտմութեան եղէց։
29 * Ընկալջիք զնա ի Տր ամխնդութբ, և
զայնպիսիսն առ պատուականս ունիջիք.
30 * զի վս գործոյ Տն մինչև ի մահ մեր-
ձեցաւ, դնել գործեալ ոգւովք չափ.
զի լցցէ զձեր պակասութիւն իմոյ սպասա
ւորութեան։ Կ.Զ.

## Գլ. Գ.

1 Այսուհետև եղբարք իմ, ուրախ լե-
րուք ի Տր. զնոյն գրել առ ձեզ՝ ինձ
ոչինչ ծանրագոյն է, և ձեզ կարի զգու-
2 շալի։ * Զգոյշ լերուք ի շանց անտի.
զգոյշ լերուք ի չար մշակաց անտի.
զգոյշ լերուք ի կրճատութենէ անտի։
3 * Զի թլփատութիւն մեք եմք, որ Հոգ-
ւովն Այ պաշտեմք. և պարծիմք ի Քս Յս,
4 և ոչ ի մարմին պաստացեալ եմք։ * Թէ-
պէտ

պէտ և ես իսկ զնոյն վստահութի՛ ունիմ
'ի մարմնի, եթէ ոք համարիցի այլ ազգ-
վստահ լինել 'ի մարմին, առաւել ևս ես.
* Թլփատութե՛ ութօրեայ, յազգէ Իէլի, 5
'ի ցեղէ Բենիամենի. Եբրայեցի յեբ-
րայեցւոց. ըստ օրինացն փարիսեցի. * ըստ 6
նախանձայուզն լինելոյ հալածէի զեկե-
ղեցին. ըստ արդարութե՛ օրինացն լեալ
անարատ: * Այլ որ ինչ ինձ շահ էր, 7
զայն վնաս համարիմ վասն Քի: * այլ 8
և համարիմ իսկ զամենայն վնաս՝ վասն
առաւել գիտութե՛ն յՔի Յի Տն մերոյ:
վասն որոյ զամե՛ զրկեցայ՝ և համարիմ
կղկղանս, զի զՔս շահեցայց. * և գտայց 9
'ի նմա, իբրև ոչ եթէ զիմ ինչ արդարու-
թի՝ որ յօրինաց անտի է՝ ունիցիմ, այլ
զհաւատոցն Քի, որ յԱյ արդարութին
է. * հաւատովք ծանուցանել զնա՝ և զզօ- 10
րութի յարութե՛ նր՝ և զհաղորդութի
չարչարանաց նորա, կերպարանակից լի-
նել մահու նր. * Թէ ոպ հասից 'ի մեռե- 11
լոցն յարութի: * Ոչ եթէ արդէն 12
առեալ իցէ, կամ արդէն կատարեալ ի-
ցեմ. զհետ մտեալ եմ թէ հասից, մա-
նաւանդ թէ ըմբռնեալ իսկ իցեմ 'ի Քսէ
Յսէ: * Եղբարք՝ ես ոչ համարիմ զանձն 13
իմ թէ հասեալ իցեմ. բայց մի ինչ է՝
զի զառ 'ի յետոյսն մոռացեալ է, և 'ի
յառաջադէմսն նկրտեալ եմ: * ուղէ- 14
գեալ՝ ընթանամ 'ի կէտ կոչմանն Այ 'ի

15 քն յս: * Այսուհետև որ միանգամ կա-
տարեալք եք՝ զայս խորհեսցուք. և
եթէ այլ ազգ ինչ խորհիցիք՝ սակայն և
16 զայն ած ձեզ յայտնեսցէ: * Բայց յոր
ժամանեցաքս՝ զնոյն խորհել և միև կա-
17 նոնաւ միաբան լինել: * Նմանօղք ինձ
եղիջիք եղբարք՝ և զգուշասջիք զայնպի-
սիսն որ այնպէս գնայցեն, որպէս ունիք
18 զմեզ ձեզ օրինակ: * Զի բազումք
գնան, զորոց բազում անգամ ասէի ձեզ.
բայց արդ և լալով իսկ ասեմ զթշնամեաց
19 խաչին քի. * որոց կատարածն կորուստ
է. որոց ած որովայնն իւրեանց է, և
փառք ամօթն իւրեանց, որք զերկրաւորս
20 ն եթ խորհին: * Այլ մեր առաքինու-
թիւն յերկինս է, ուստի և փրկչին ակն ու-
21 նիմք՝ տն յի քի. * որ նորոգեսցէ զմար-
մին խոնարհութեան մերոյ՝ կերպարանա-
կից լինել մարմնոյ փառաց իւրոց, ըստ զօ-
րութեանն՝ առ ՚ի կարող լինելոյ հնազան-
դեցուցանել ընդ իւրև զամ:

## ԳԼ. Դ.

1 Այսուհետև եղբարք իմ սիրելիք և
անձկալիք, ուրախութիւն իմ, և
պսակ. այսպէս հաստատուն կացէք ՚ի
2 տր՝ սիրելիք: * Զևոդիա աղաչեմ, և
զսիւնտիքէ աղաչեմ, զնոյն խորհել ՚ի տր:
3 * Այո աղաչեմ և զքեզ՝ մտերիմ իմ և
լծակից, և դու օգնական լինիջիր նոցա՝

որք յաւետարանին նահատակեցան ընդ-
իս կղեմաւ հանդերձ՝ և այլովք գործակ
ցօք իմովք. որոց անուանքն են ՚ի դպրու-
թեն կենաց։ * Ուրախ լերուք ՚ի տ՟ր յամ՟ 4
ժամ. դարձեալ ասեմ՝ ուրախ լերուք.
* Հեզութի՟ ձեր յայտնի լիցի ամ՟ մարդ- 5
կան. տ՟ր մերձ է։ * Մի ինչ հոգայք. 6
այլ ամ՟ աղօթիւք և խնդրուածովք, գո-
հութ՟բ, խնդրուածք ձեր յայտնի լիցին
առ ա՟ծ։ * Եւ խաղաղութին ա՟յ՝ որ ՚ի 7
վեր է քան զամ՟ միտս, պահեսցէ զսիրտս
ձեր և զմիտս ՚ի ք՟ս յ՟ս։
ԵԳ * Այսուհետև եղբարք՝ որ ինչ ճշմար 8
տութ՟ի է՝ որ ինչ պարկեշտութ՟ի, որ ինչ
արդարութ՟ի, որ ինչ սրբութ՟ի, որ ինչ
սիրով, որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ
քաջութ՟ի, որ ինչ գովութ՟ի՝ զայն խոր-
հեջիք. * Զոր ուսարուքն, և ընկալա 9
րուք, և լուայք՝ և տեսէք յիս, զայն ա-
րարէք. և ա՟ծ խաղաղութե եղիցի ընդ
ձեզ։ * Ուրախ եղէ ես ՚ի տ՟ր յոյժ. զի 10
և դուք զմտաւ ածիք հոգալ ինչ վ՟ն իմ,
որպէս և հոգայիքն. բայց բարբարէիք
իմն է։ * Իբր ոչ առ կարօտութե ինչ ա- 11
սեմ. զի ես ուսայ որովք կարեմ բաւա
կան լինել։ * Գիտեմ նուաղել, գիտեմ 12
առաւելուլ, յամ՟ ամենևին խելամուտ
եմ, և յագել՝ և քաղցենալ, և առաւե-
լուլ՝ և նուաղել։ * յամ՟ կարող եմ, այ- 13
նու՝ որ զօրացուցն զիս։ * բայց բարւոք 14
 արար

արարէք՝ զի կցորդ եղերուք ինձ 'ի նե-
15 ղութե̃ս: * Գիտէք և դուք փիլիպեցիք,
զի 'ի սկզբան աւետարանին իբրև ելի
ես 'ի մակեդոնիայ, և ոչ մի եկեղեցի
հաղորդեաց ինձ յաղագս տալոյ և առն
16 լոյ, բայց միայն դուք: * Զի և 'ի թեսա-
ղոնիկէ՝ միանգամ և երկիցս զպէտս իմ
17 ետուք բերել: * Իբր ոչ՝ եթէ խնդրեմ
զտուրսն, այլ խնդրեմ զպտուղն որ յա-
18 ճախէ 'ի բանս ձեր: * Այլ իմ առել զա̃մ,
և առաւելեալ եմ. ընկալայ՝ և լի եմ 'ի
ձեռն եպափրոդիտեայ, որ է 'ի ձէնջ
հոտ անուշից՝ պատարագ ընդունելի՝ հա-
19 ճոյ ա̃յ: * Եւ ա̃ծ իմ լի արասցէ զա̃մ
պէտս ձեր ըստ իւրում մեծութեան՝ փա-
20 ռօք 'ի ք̃ս յ̃ս: * Այլ ա̃յ և հօր մերում
փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:
21 * Ողջոյն տաջիք ա̃մ սրբոց՝ 'ի ք̃ս յ̃ս: * Ող-
22 ջոյն տան ձեզ՝ որ ընդ իս են եղբարք:
23 * Ողջոյն տան ձեզ ա̃մ սուրբք. մանա-
24 ւանդ որ 'ի տանէ կայսեր են: * Շնորհք
տ̃ն յ̃ի ք̃ի ը̃ ոգւոյդ ձերում: ամէն:

Առ փիլիպեցիս՝ գրեցաւ 'ի հռոմէ 'ի ձեռն եպափրոդիտեայ:

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍՆ.
### ԳԼ. Ա.

ՃԲ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ 1
յ՟սի ք՟սի կամօքն ա՟յ, և տի-
մոթէոս եղբայր. * առ կո- 2
ղոսացիս սուրբս և հաւա-
տացեալս եղբարս ՚ի ք՟ս։ * Շնորհք է՟ 3
ձեզ և խաղաղութի՟ յա՟յ հօրէ մերմէ՝ (և
՚ի տ՟նէ յ՟սէ ք՟սէ)։ Գոհանամք զա՟յ և զ-
հօրէ տ՟ն մերոյ յ՟սի ք՟սի, յա՟մ ժամ վ՟ս
ձեր աղօթս առնեմ. * իբրև լուաք զ- 4
հաւատսն ձեր՝ որ ՚ի ք՟ս յ՟ս է՟ր մեր, և զ-
սէրն որ է՟ ամենայն ս՟րբս ունիք. * վասն 5
յուսոյն որ պահի ձեզ յերկինս. զոր-
մէ լուարուք բանիւն ճշմարտութե՟՝ ա-
ւետարանին, * որ եհաս առ ձեզ. որպէս 6
ընդ ամենայն աշխարհ աճէ և պտղաբե-
րէ. որպէս և ՚ի ձերում միջի. յօրէ յոր-
մէ լուարուք՝ և ծանեայք զշնորհսն ա՟յ
ճշմարտութե՟. * որպ՟ և ուսարուք յեպափ- 7
րեայ սիրելւոյ ծառայակցէ մերմէ, որ է
հաւատարիմ վասն ձեր՝ պաշտօնեայ յ՟սի.
* որ և պատմեաց մեզ զձեր սէրն հոգ- 8
ւով։

9 ւով։ * Վասն այնորիկ և մեք յորմէ յոր-
մէ լուաք՝ ոչ դադարեմք վասն ձեր աղօ
թըս առնել՝ և խնդրուածս մատուցա
նել. զի լնուցուք գիտութի կամացն նր՟,
ամենայն իմաստութբ՟ և հոգևոր հան-
10 ճարով. * գնալ ձեզ արժանի տն՟ յամե-
նայն հաճութե, յամենայն գործս բա-
րութեան պտղաբերք և աճեցուցք գի-
11 տութբն այ՟. * ամենայն զօրութբ՟ զօ-
րացեալք ըստ զօրութե փառաց նորա.
յամենայն համբերութիւն և երկայն
մտութի։
12 Ուրախութբ՟ * գոհանալ զայ՟ հօրէ՝ որ ԱԳ
կոչեաց զձեզ 'ի մասն վիճակի սրբոցն
13 'ի լոյս. * որ փրկեաց զմեզ յիշխանութէ
խաւարի, և փոխեաց զմեզ յարքայութի
14 որդւոյն իւրոյ սիրելւոյ. * որով ունիմք
զփրկութի արեամբն նր՟, և զթողութի
15 մեղաց՝ մարմնովն նր՟. * որ է պատկեր ա-
ներևութին այ՟, անդրանիկ ամենայն
16 արարածոց. * Զի նովաւ հաստատեցաւ
ամենայն, որ ինչ յերկինս՝ և որ ինչ յերկ-
րի, որ երևին՝ և որ ոչն երևին. եթէ
աթոռք, եթէ տէրութիւնք, եթէ պետու
թիւնք, եթէ իշխանութիւնք. ամենայն ինչ
17 նովաւ՝ և 'ի նոյն հաստատեցաւ։ * Եւ
նա է յառաջ քան զամենայն, և ամե-
18 նայն ինչ նովաւ եկաց բովանդակ. * Եւ
նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ. որ է
սկիզբն, անդրանիկ 'ի մեռելոց, զի է-

 զի-

ղիցի ինքն յամի յառաջացեալ։ * Զի ՚ի 19
նմա հաճեցաւ ամենայն լրումն ածութեն
բնակել. * և նովաւ հաշտեցուցանել 20
զամենայն ՚ի նոյն։ արար խաղաղութի
արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի՝ և
որ ինչ յերկինս։ * Եւ զձեզ որ երբեմն 21
օտարացեալն էիք, և թշնամիք խորհր-
դովք ՚ի գործսն չարութե. * այժմ ա- 22
ւադիկ հաշտեցոյց անդամովք մարմնոյ
իւրոյ ՚ի ձեռն մահուն իւրոյ, յանդի-
ման կացուցանել զձեզ սրբս՝ և ամբիծս՝
և անարատս առաջի նր. * եթէ կայցէք 23
՚ի հաւատսն արմատացեալք և հաստա-
տեալք. և անշարժք ՚ի յուսոյ աւետա-
րանին՝ զոր լուարուք քարոզելոյ ը ամե-
նայն արարածս ՚ի ներքոյ երկնից. որոյ
եղէ ես պօղոս պաշտօնեայ։
ԼԴ * Եւ արդ՝ ուրախ եմ ՚ի չարչարանս իմ 24
վս ձեր. և լնում զպակասութի նեղութեցն
քսի ՚ի մարմնի իմում վս մարմնոյ նր՝ որ
է եկեղեցի *. որոյ եղէ ես պօղոս պաշ- 25
տօնեայ՝ ը անտեսութենն այ, որ տուեալ
է ինձ ՚ի ձեզ կատարել զբանն այ. * ըզ 26
խորհուրդն՝ որ ծածկեալն էր ՚ի յաւի-
տեանցն և յազգաց. որ այժմ յայտնեցաւ
սրբոց իւրոց։ * Որոց կամեցաւ ած ցու- 27
ցանել, թէ զինչ է մեծութի փառաց
խորհրդոյ նր ՚ի հեթանոսս, որ է քս ՚ի
ձեզ՝ յոյսն փառաց. * զոր մեքն քարո 28
զեմք. և խրատեմք զամ մարդ՝ և ու-

ուսուցանեմք զամենայն մարդ ամենայն
հոգևոր իմաստութբ. զի կացուսցուք
զամենայն մարդ կատարեալ 'ի քս յս.
29 * Յոր և աշխատիմ պատերազմեալ ըստ
յաջողութեն նորա՝ որ յաջողեալ է յիս
զօրութբ։

## ԳԼ. Բ.

1 Կամիմ զի գիտիցէք դուք՝ որպիսի ճգնու
թիւն ունիմ յանձին վն ձեր՝ և վն
լաւոդիկեցւոցն, և որոց չիցէ տեսեալ
2 զերեսս իմ մարմնով։ * Զի մխիթարես
ցին սիրտք նց տեղեկացեալք սիրով. և
յամենայն մեծութիւն լրութեն իմաստու
թեն՝ 'ի գիտութին խորհրդոյն այ (հօր),
3 'ի քս յս. * յորում ամ գանձք իմաստու
4 թեն և գիտութեն ծածկեալ կան. * Եւ
զայս ասեմ, զի մի՛ ոք զձեզ զառանցուս
5 ցէ պատիր բանիւք։ * Զի թէպէտ և
մարմնով հեռի եմ, այլ հոգւով ը ձեզ
եմ. խնդամ՝ իբրև տեսանեմ զկարգն
ձեր՝ և զհաստատութին հաւատոյն ձերոյ
6 որ 'ի քս յս։ * Արդ՝ որպէս ընկալարուք զքս
7 յս զտր, նովին գնասջիք. * արմատա
ցեալք և շինեալք 'ի նա, և հաստատ
եալք 'ի հաւատս, որպէս ուսարուքն՝ ա
ռաւելեալք 'ի նմին գոհութբ։ Վ.Զ
8 * Զգոյշ լերուք՝ մի՛ ոք իցէ որ զձեզ կո
ղոպտիցէ ճարտարմտութբ՝ և սնոտի խա
բէութբ, ըստ մարդկան աւանդութե՝

և ըստ տարերց աշխարհիս՝ և ոչ ըստ յսի
քսի. * զի 'ի նմա բնակէ ամենայն լրումն 9
աստուածութեան մարմնապէս: * Եւ էք դուք 10
նովաւ լցեալք, որ է գլուխ ամենայն իշ
խանութեան և պետութեան: * որով թլփատե 11
ցարուք հաւատովք զանձեռագործ թլ
փատութին 'ի մերկանալ զանդամս մարմ
նոյ թլփատութեամբն քսի: * թաղեալք ընդ 12
նմին 'ի մկրտութեան, որով և ընդ նմին յա
րեայք հաւատովք՝ այ ազդեցութեամբն, որ
յարոյց զնա 'ի մեռելոց: * Եւ զձեզ որ 13
երբեմն մեռեալն էիք 'ի մեղս և յանթլ
փատութեան մարմնոյ ձերոյ, կենդանացոյց
յանձին իւրում. շնորհեաց մեզ զամե
նայն յանցանս մեր. * և ջնջեաց զձեռա 14
գիր մերոյ հակառակութեան հրամանօքն
իւրովք: որ կայր մեզ հակառակ՝ եբարձ
զայն 'ի միջոյ՝ և բևեռեաց ընդ խաչափայ
տին: * Մերկեաց զիշխանութիւս և զպե 15
տութիւս. յայտ յանդիմանն խայտառակեաց
նշաւակել զնս յանձին իւրում՝ 'ի յարութե
իւրում: * Մի ոք այսուհետև զձեզ դա 16
տեսցի՝ ուտելով կամ ըմպելով, կամ մա
սամբք տօնից կամ ամսամտից կամ շաբա
թուց. * որ են ստուերք հանդերձելոցն. 17
այլ մարմինն քսի է: * Մի ոք զձեզ խաբես 18
ցէ, որ կամիցի խոնարհութեամբ և կրօնիւք
հրեշտակաց, զոր չիցէ տեսեալ զրահետ
վարել՝ տարապարտ հպարտացեալ 'ի մտաց
մարմնոյ իւրոյ. * և ոչ ունիցի զգլուխն 19

քս, ուստի ամենայն մարմինն յօդիւք և
խաղալեօք տարաբերեալ և խառնեալ՝
20 աճէ զաճումն այ. * Իսկ եթէ մեռարուք
ընդ քսի ՚ի տարերց աշխարհիս՝ զի՞ եւս իբրեւ
զկենդանիս ասաէն յաշխարհի կրօնաւո
21 րիք. * Մի՛ մերձենար, մի՛ ճաշակեր, մի՛
22 հուպ լինիր. * որ է ամենայն ինչ ՚ի պէտս
ապականութեան, ըստ պատուիրանաց և
23 վարդապետութեան մարդկան. * որ յիմաս
տութիւն իմն համարէ, ինքնակամ կրօ-
նիւք և խոնարհութեամբ՝ և անխայութեամբ
մարմնոյ. և ոչ ՚ի պատիւ ինչ լրութեան
մարմնոյ:

## ԳԼ. Գ.

1 Իսկ եթէ յարերուք ընդ քսի, ապա զվերինն
խնդրեցէք, ուր քսն նստի ընդ աջմէ
2 այ. * զվերինն խորհեցարուք, մի՛ զայս
3 որ յերկրի աստ է: * Քանզի մեռարուք՝
և կեանքն ձեր ծածկեալ են ընդ քսի յայ:
4 * Իսկ յորժամ քս յայտնեսցի՝ կեանքն
ձեր, յայնժամ և դուք ընդ նմա յայտնես
5 ջիք փառօք: * Սպանէք այսուհետև զան-
դամս ձեր զերկրաւորս. ՚ի բաց ընկեցէք
զպոռնկութիւն զպղծութիւն զբիծ զցանկութիւն
չարեաց, և զագահութիւն՝ որ է կռապաշ
6 տութիւն. * վասն որոյ գայ բարկութիւն այ ՚ի
7 վերայ որդւոցն անհաւանութեան. * որովք և
դուք երբեմն գնայիք՝ մինչ կենդանիքն
8 էիք ՚ի նս: * Արդ՝ ՚ի բաց թօթափեցէք
և

եւ դուք զայն ամենայն, զբարկութիւն զսրտմտութիւն
զչարութիւն զհայհոյութիւն, զխեղկատակութիւն
՚ի բերանոյ ձերոց: * Մի՛ ստէք միմեանց. 9
Մերկացարո՛ւք զհին մարդն գործովքն իւ-
րովք. * եւ զգեցարո՛ւք զնորն նորոգեալ 10
՚ի գիտութիւն ըստ պատկերի արարչին իւրոյ.
* ուր ո՛չ է հրեայ՝ եւ ո՛չ հեթանոս, թլ- 11
փատութիւն՝ եւ անթլփատութիւն, խուժ՝
դուժ՝ սկիւթացի՝ ծառայ՝ ազատ. այլ
ամենայն եւ յամենայնի Քրիստոս: * Զգեցա 12
րո՛ւք այսուհետեւ իբրեւ ընտրեալք Աստուծոյ՝
սուրբք եւ սիրեցեալք՝ զգութ ողորմու-
թեան զքաղցրութիւն զխոնարհութիւն զհե-
զութիւն զերկայնմտութիւն, * Ներել միմեանց, 13
շնորհել իւրերաց. եթէ ուրուք զումե-
քէ տրտունջ ինչ իցէ. որպէս Տէր Քրիստոս
շնորհեաց ձեզ՝ նոյնպէս եւ դուք: * Եւ 14
՚ի վերայ այսր ամենայնի զսէրն, որ է զօդ կա-
տարմանն. * եւ խաղաղութիւն Քրիստոսի հաս- 15
տատեսցի ՚ի սիրտս ձեր, յոր եւ կոչեցա
րուքն միով մարմնով:
ԱԵ Եւ գոհացո՛ղք լինիջիք. * զի բանն Քրիստոսի 16
բնակեսցէ ՚ի ձեզ առատապէս. ամենայն ի-
մաստութեամբ ուսուցանել եւ խրատել զմի-
միանս. սաղմոսիւք եւ օրհնութեամբք եւ եր-
գովք հոգեւորօք՝ եւ շնորհօք օրհնել ՚ի
սիրտս ձեր զԱստուած: * Եւ զամենայն զոր եւ առ- 17
նիցէք բանիւք եւ արդեամբք, զամենայն
յանուն Տեառն Յիսուսի արասջի՛ք: գոհացո՛ղք
լինիջիք զԱստուծոյ եւ զՀօրէ նորա: * Կանայք՝ 18
հնա

հնազանդ լերուք արանց ձերոց, որպէս և
19 վայել է ՚ի տր։ * Արք սիրեցէք զկանայս
20 ձեր, և մի՛ դառնացուցանէք զնս։ * Որ-
դիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց յա-
մենայնի՝ զի այն է հաճոյ առաջի տն։
21 * Հարք՝ մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր,
22 զի մի՛ տրտմեսցին։ * Ծառայք՝ հնա-
զանդ լերուք տերանց ձերոց յամն․ մի՛
առ ականէ ծառայուԹբ՝ իբրև մարդահա-
ճոյք, այլ միամտուԹբ սրտի երկնչել ՚ի
23 տնէ։ * Զոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք
գործեսջի՛ք իբրև տն, և ոչ իբրև մարդ-
24 կան․ * գիտասջի՛ք՝ զի ՚ի տնէ առնուցուք
զհատուցումն ժառանգուԹն ձերոյ․ զի
25 տն Քսի ծառայէք։ * Իսկ ապիրատն ըն-
կալցի զր իւրում ապիրատուԹն․ զի չի՛ք
ակնառուԹի առաջի այ։

## ԳԼ․ Դ․

1 Տեարք՝ զիրաւունս և զհաւասարուԹի
ծառայից ձերոց շնորհեցէք․ գիտաս-
2 ջի՛ք՝ զի և ձեր տր գոյ յերկինս։ * Աղօ-
Թից ստէ՛պ կացէք․ տքնել ՚ի նմին գո-
3 հուԹբ․ * Աղօթս արարէք միանգամայն
և վն մեր, զի այ բացցէ մեզ դուռն
բանին՝ խօսել զխորհուրդն Քսի, վասն
4 որոյ և կապեալս կամ․ * զի յայտնի ա-
րարից զնա որպէս արժան իցէ ինձ խօսել։
5 * Իմաստութբ գնասջի՛ք առ արտաքինսն,
6 գնոյ առեալ զժամանակս․ * և բանն ձեր ԱՁ



յամ

յա̃մ ժամ ի շնորհս ա̃ծ իբրև աղիւ
համեմեալ լիցի, գիտել ո̃պ արժան ի֊
ցէ ձեզ իւրաքանչիւրումեք տալ պա֊
տասխանի։ * Իսկ որ ինչ զինէն իցէ՝ 7
ցուցցէ ձեզ զա̃մ տիւքիկոս սիրելի եղ֊
բայր՝ և հաւատարիմ պաշտօնեայ՝ և ծա֊
ռայակից՚ի տ̃ր. * զոր առաքեցի առ ձեզ 8
դմին իրի, զի գիտասջիք վասն մեր. և
մխիթարեսցէ զսիրտս ձեր. * ոնեսիմու 9
հանդերձ եղբարբ հաւատարմաւ և սի֊
րելեաւ՝ որ է ՚ի ձէնջ. զա̃մ ինչ ցուցցեն
ձեզ՝ որ ինչ աստ է։ * Ողջոյն տայ ձեզ 10
արիստարքոս գերեկից իմ, և մարկոս եղ֊
բօրորդի բառնաբայ. վասն որոյ առէք
պատուէր՝ եթէ եկեսցէ առ ձեզ ընկալ֊
ջիք զնա. * և յիսուս՝ որ անուանեալն 11
է յուստոս, որք են ՚ի թլփատութ̃ենէ անտի։
զի դոքա միայն գործակից եղեն ինձ յար֊
քայութ̃են ա̃յ, որք և եղեն իսկ ինձ մխի֊
թարութ̃ի։ * Ողջոյն տայ ձեզ եպափրաս՝ 12
որ ՚ի ձէնջ ծառայ ք̃սի յ̃սի է. յամենայն
ժամ պատերազմեալ վ̃ն ձեր յաղօթս,
զի կայցէք կատարեալք և լցեալք յա̃մ
կամս ա̃յ։ * Վկայեմ նմա, զի բազում 13
աշխատութ̃ի ունի վասն ձեր, և վ̃ն լաւո֊
դիկեցւոցն, և վասն այնոցիկ՝ որ յերա
պօղիսն են։ * Ողջոյն տայ ձեզ ղուկաս 14
բժիշկ և սիրելի, և դեմաս. * Ողջոյն 15
տաջիք եղբարցն՝ որ են ՚ի լաւոդիկիա և
նիմփեայ, և որ առ տնին եկեղեցին է նո֊
րա։

16 լաւ։ * Եւ յորժամ ընթեռնուցու առ
ձեզ թուղթդ՝ արասջի՛ք զի եւ՚ի Լաւոդի
կեցւոց եկեղեցւոջն ընթերցցի. եւ զառ
՚ի Լաւոդիկեցւոցն՝ զի եւ դուք ընթեռ
17 նուցուք։ * Եւ ասասջի՛ք ցԱրքիպպոս.
զգո՛յշ լեր սպասաւորութեանդ՝ զոր ընկա
լար ՚ի Տէր, զի զայդ կատարեսցես։
18 * Ողջոյն ձեռամբ իմով Պօղոսի է. յո՛ւշ
լիցին ձեզ կապանք իմ։ Շնորհք ընդ
ձեզ։ ամէն։

Առ կողոսացիս՝ գրեցաւ ՚ի հռոմայ ՚ի ձեռն
տիւքիկոսի եւ ոնեսիմեայ։

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ
## ԱՌԱՋԻՆ.

### ԳԼ. Ա.

ԲԿ ՊՕՂՈՍ ԵՒ ՍԻՂՈՒԱ- 1
նոս եւ տիմոթէոս՝ եկեղեց-
ւոյդ թեսաղոնիկեցւոց յա՟ծ
հայր մեր եւ 'ի տ՟ր յ՟ս ք՟ս։
* Շնորհք ը՟ ձեզ եւ խաղաղութի։ Գո- 2
հանամք զա՟յ յա՟մ ժամ վասն ձեր ամե-
նեցուն՝ յիշատակ առնել յաղօթս մեր
անդադար. * յիշել զձեր գործն հաւա- 3
տոց՝ եւ զվաստակ սիրոյ՝ եւ զհամբերութ՟ի
յուսոյ տ՟ն մերոյ յ՟ի. ք՟ի՝ առաջի ա՟յ եւ
հօր մերոյ։ * Գիտեմք եղբարք սիրեցե՟լք 4
յա՟յ՝ զընտրութիւն ձեր. * զի աւետարանն 5
մեր ոչ եղեւ առ ձեզ միայն բանիւ, այլ
եւ զօրութ՟բ՝ եւ հոգւովն սրբով՝ եւ լրութ՟բ
բազմաւ. որ՟պ եւ գիտէք իսկ՝ թէ որպի-
սիք եղեաք 'ի միջի ձերում վասն ձեր։
* Եւ դուք նմանեալք մեզ՝ եւ տ՟ն. ընկա- 6
լեալք զբանն 'ի բազում նեղութեան՝ խըն-
դութ՟բ հոգւոյն ս՟բյ. * լինել ձեզ օրի- 7
նակ ա՟մ հաւատացելոց, որ են 'ի մակե-

 դով

8 դոնիա՝ և յաքայիա։ * Զի 'ի ձէնջ
հնչեաց բանն տ̃յ. ոչ միայն 'ի մակեդոն
նիա և յաքայիա, այլ յա̃մ տեղիս հա֊
ւատքն ձեր որ առ ա̃ծ են՝ սփռեցան.
զի այսուհետև ոչինչ է պիտոյ մեզ և
9 խօսել ինչ։ * Զի նոքին իսկ պատմեն
վ̃ս մեր, թէ որպէս եղև մեզ մուտ առ
ձեզ. և ո̃պ դարձայք առ ա̃ծ 'ի կռոց ան֊
տի, ծառայել ա̃յ կենդանւոյ և ճշմար
10 տի. * և ակն ունել որդւոյ ն̃ր յերկնից,
զոր յարոյցն 'ի մեռելոց զյ̃ս՝ որ փրկելոցն
է զմեզ 'ի բարկութենէ անտի որ գալոցն է.

## ԳԼ. Բ.

1 Դուք ինքնին գիտէք եղբարք զմուտն Բ Դ
մեր առ ձեզ. զի ոչ ընդունայն ինչ
2 եղև. * այլ յառաջագոյն չարչարեալք և
թշնամանեալք, ո̃պ և դուք իսկ գիտէք.
'ի մէջ փիլիպեցւոց համարձակեցաք ա̃յ
մերով պատմել ձեզ զաւետարանն ա̃յ
3 մեծաւ պատերազմաւ։ * Զի մխիթա
րութ̃ն մեր ոչ 'ի մոլորութ̃ենէ է՝ և ոչ 'ի պղծ
4 ութ̃ե՝ և ոչ նենգութ̃բ. * այլ ո̃պ ընտրեցաք
յա̃յ հաւատարիմ լինել աւետարանին,
նոյնպ̃ս և խօսիմք. ոչ իբրև մարդկան հա֊
ճոյ լինել՝ այլ ա̃յ որ քննէն զսիրտս մեր։
5 * Զի ոչ երբէք բանիւք ողոքանաց ե֊
ղեաք առ ձեզ, ո̃պ և դուք իսկ գիտէք.
և ոչ 'ի պատճառս ագահութ̃, ո̃պ և ա̃ծ
6 վկայէ. * և ոչ խնդրեցաք փառս 'ի մարդ֊
կա

կամք, ոչ ՚ի ձէնջ և ոչ յայլոց։ * Կարող 7
էաք իբրև քնի առաքեալս ծանրանալ,
այլ եղեաք հեզք ՚ի մէջ ձերում. որպէս
դայեակ մի՛ որ սնուցանիցէ մանկունս.
* Նոյնպէս և մեք գթայաք ՚ի ձեզ. հա 8
ճոյ լինէր մեզ տալ ձեզ ոչ միայն զաւե
տարանն այ, այլ և զանձինս մեր. քանզի
սիրելիք մեր եղերուք. * Յիշէք եղբարք 9
զվաստակն մեր և զջան. զի զցայգ և զզ
ցերեկ գործէաք վասն չծանրանալոյ ու
մեք ՚ի ձէնջ. և քարոզէաք ձեզ զաւե
տարանն այ։ * Դուք ինքնին վկայէք՝ և 10
ած, որպ սրբութբ և արդարութբ և անբ
ծութբ՝ ձեզ հաւատացելոցդ եղեաք. * որպ 11
և գիտէք իսկ. զի զիւրաքանչիւրոք ՚ի
ձէնջ՝ իբրև հայր զորդիս՝ * մխիթարէաք 12
և սփոփէաք. և դնէաք վկայութի գնալ
ձեզ արժանապէս այ, որ կոչեացն զձեզ
ՂԶ յիւր արքայութին և ՚ի փառս։
* Վն այնորիկ և մեք գոհանամք զայ ան 13
պակաս՝ զի առել զլուր բանին այ առ ՚ի
մէնջ՝ ընկալարուք, ոչ իբրև զբան մարդ
կան, այլ որպ ճշմարտիւ զբան այ. որ և
յաջողել իսկ է ՚ի ձեզ հաւատացելոցդ։
* Զի դուք նմանօղք եղերուք եղբարք՝ 14
եկեղեցեացն այ՝ որ են ՚ի հրէաստանի ՚ի
քս յս. զի զնոյն չարչարանս չարչարեցայք
և դուք ՚ի ձերոց ազգականաց, որպ և նո
քայն ՚ի հրէից. * որք և զտրն յս սպանին՝ 15
և զմարգարէսն, և զմեզ հալածեցին, և

այ՟ յաչաց եղեն ․ և ամ՟ մարդկան հակա
16 ռակ եղեն ․ * և արգելուլն զմեզ խօսել
հեթանոսաց՝ զի ապրեսցին ․ զի կատա
րեսցեն զմեղս իւրեանց յամ՟ ժամ ․ բ՟ց
հասեալ է 'ի վերայ նոցա բարկութիւն
մինչև իսպառ ։
17 * Այլ մեք եղբարք՝ թէպէտ և որբ մնա ԲՁ
ցաք 'ի ձէնջ առ ժամանակ մի, երեսօք՝
և ոչ սրտիւք ․ առաւել ևս փութացաք
տեսանել զերեսս ձեր մեծաւ ցանկութբ՟ ։
18 * Վասն այսորիկ կամեցայ գալ առ ձեզ
ես Պօղոս՝ միանգամ և երկիցս, և խա
19 փանեաց զմեզ սատանայ ։ * Քանզի ո՞վ է
մեր յոյս կամ խնդութի՟ կամ պսակ պարծա
նաց մերոց, եթէ ոչ դուք 'ի տր՟ առաջի
20 տն՟ մերոյ յի՟ի ք՟ի 'ի նորա գալստեանն ․
* զի դուք էք փառք մեր և խնդութի՟ ։

ԳԼ․ Գ․

1 Վ՟ն որոյ ոչ ևս ունիմք ժոյժ, զի բար
ւոք թուեցաւ մեզ միայն մնալ յա
2 թէնս ։ * Եւ առաքեցաք զտիմոթէոս
զեղբայր մեր և զգործակից աւետարա
նին՝ այ՟ և հօրն քի՟ի, հաստատել զձեզ՝
և մխիթարել վս՟ հաւատոյն ձերոյ ։ ԳՁ
3 * Զի մի՛ ոք տագնապեսցի 'ի նեղութիս յայսո
սիկ ․ քանզի դուք ինքնին իսկ գիտէք,
4 զի 'ի սոյն կամք ։ * Քանզի մինչ առ
ձեզն իսկ էաք՝ յառաջագոյն ասէաք ձեզ,
թէ նեղութիք հասանելոց են 'ի վերայ
մեր ․

մեր. որպէս և եղև իսկ՝ և գիտացիք.
*Վասն այնորիկ և ես զի ոչ ևս ունէի 5
ժոյժ՝ առաքեցի գիտել զհաւատսն ձեր.
գուցէ արդեօք փորձեաց և զձեզ փորձիչն,
և ընդունայն լինիցի ջանն մեր: *Բայց 6
արդ՝ իբրև եկն Տիմոթէոս 'ի ձէնջ առ
մեզ, և ետ մեզ զաւետիս հաւատոցն ձե-
րոց և զսիրոյ, զի ունիք 'ի մտի զյիշա-
տակս մեր բարեաց յամենայն ժամ. ցանկա-
ցեալ էք տեսանել զմեզ՝ որպէս և մեք զձեզ.
*Վասն այնորիկ մխիթարեցաք 'ի ձեզ եղ- 7
բարք՝ 'ի վերայ ամենայն վշտաց և նեղութեանց
ձերոց՝ 'ի ձեռն հաւատոցն ձերոց. *զի 8
այժմ կենդանի եմք՝ եթէ դուք հաստա-
տուն կայցէք 'ի Տէր: *Զի՞նչ կարեմք 9
գոհութիւն մատուցանել Աստուծոյ վասն ձեր, 'ի
վերայ ամենայն խնդութեան, զոր խըն-
դամք վասն ձեր առաջի Աստուծոյ մերոյ. *զցայգ 10
և զցերեկ առաւել ևս աղաչեմք՝ տեսա-
նել զերեսս ձեր, և հաստատել զպակա-
սութիւն հաւատոցն ձերոց: *Այլ ինքն 11
Աստուած և հայր մեր՝ և Տէր մեր Յիսուս Քրիստոս՝ ուղղես-
ցէ զճանապարհս մեր առ ձեզ: *Իսկ ըզ 12
ձեզ ինքն Տէր բազմապատիկս և առաւելս
արասցէ սիրով ընդ միմեանս և առ ամե-
նեսին՝ որպէս և մեք 'ի ձեզ. *հաստա 13
տել զսիրտս ձեր անարատս 'ի սրբութիւն
առաջի Աստուծոյ և հօր մերոյ՝ 'ի գալըս-
տեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հանդերձ ա-
մենայն սրբովք իւրովք:

## ԳԼ. Դ.

ԴԿ

1 Այսուհետեւ եղբարք՝ աղաչեմք զձեզ՝
և մխիթարեմք 'ի ք՟ն յ՟ն. զի որպ՟ ըն-
կալարուք 'ի մէնջ, թէ որպէս պարտ է-
ցէ ձեզ գնալ՝ և հաճոյ լինել ա՟յ. որպ՟ և
գնայքդ իսկ, զի ևս քան զևս յաւելու-
2 ցուք 'ի նոյն։ * Զի գիտէք՝ թէ որպիսի
3 պատուիրանս տուաք ձեզ 'ի տ՟ր յ՟ն։ * Զի
այս են կամք ա՟յ, սրբութի՟ ձեր. 'ի բաց
4 լինել ձեզ 'ի պոռնկութե՟. * գիտել իւ-
րաքանչիւրումեք 'ի ձէնջ զիւր աման
5 ստանալ սրբութ՟բ և պատուով. * մի՛ 'ի
ցաւս ցանկութե՟ որպէս և այլ հեթա
6 նոսք՝ որ ոչ գիտեն զա՟ծ։ * Մի՛ զանցա
նել և զրկել յիրիդ յայդմիկ զեղբայր
իւր. քանզի վրէժխնդիր է տ՟ր 'ի վ՟ր ամե՟
այդորիկ. որպէս յառաջագոյն ասացաք
7 ձեզ, և եդաք վկայութի՟։ * Քանզի ոչ կո-
չեաց զմեզ ա՟ծ 'ի պղծութի՟՝ այլ 'ի սրբու
8 թի՟։ * Այսուհետեւ որ անարգէ, ոչ
զմարդ անարգէ, այլ զա՟ծ՝ որ և ետ ըզ
9 հոգին ի՟ւր 'ի ձեզ։ * Այլ վ՟ս եղբայր-
սիրութե՟՝ չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ.
զի դուք ինքնին իսկ ա՟ծուսոյցք էք առ-
10 'ի զմիմեանս սիրելոյ։ * քանզի և առնէք
իսկ զգոյն յա՟մ եղբարս որ են յա՟մ կող
մանս մակեդոնացւոց։ Աղաչեմք զձեզ
եղբարք՝ առաւել ևս առաւելուլ և ա-
11 ռատանալ. հանդարտել, * և գործել



զիւ

զիւրաքանչիւր · եւ գործել ձեռօք ձե-
րովք, որպէս եւ պատուիրեցաք ձեզ, զի
գնայցէք պարկեշտութեամբ առ արտա
քինսն՝ եւ մի՛ ինչ կարօտեալ իցէք։
* Ո՛չ կամիմ եղբարք՝ եթէ տգէտք իցէք 12
վասն ննջեցելոցն · զի մի՛ տրտմիցիք որպ̃
եւ այլքն՝ որոց ոչ գոյ յոյս։ * Եթէ հաւ- 13
ատամք՝ եթէ յս̃ մեռաւ եւ յարեաւ ·
նոյնպէս եւ ա̃ծ զննջեցեալսն ՚ի ձեռն յս̃ի
Գ.Զ. ածցէ ընդ նմա։
* Զայս զայս ասեմք տն̃ բանիւ, եթէ մեք 14
որ կենդանիքս եմք մնացեալք՝ ՚ի գալս-
տեանն տն̃ ոչ ժամանեմք ննջեցելոցն։
* Զի ինքնին տր̃ հրամանաւ, ՚ի ձայն 15
հրեշտակապետի եւ ՚ի փող այ̃ իջանէ յերկ
նից։ եւ մեռեալք ՚ի քս̃ յարիցեն յառա
ջագոյն։ * Ապա եւ մեք որ կենդանիքս 16
մնացեալ իցեմք՝ նոքօք հանդերձ յափշ-
տակեսցուք ամպովք ը̃ առաջ տն̃ յօդս։
եւ այնպէս յա̃մ ժամ ընդ տն̃ լինիցիմք։
* Այսուհետեւ մխիթարեցէ՛ք զմիմեանս 17
բանիւքս այսոքիւք։

## ԳԼ. Ե.

ԳՏ Այլ վս̃ ժամուց եւ ժամանակաց եղ- 1
բարք՝ չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ։
* զի դուք ինքնին իսկ ստոյգ գիտէք, 2
թէ օրն տն̃ իբրեւ գող գիշերի՝ այնպէս
հասանէ։ * Յորժամ ասիցեն թէ խա- 3
ղաղութի̃ եւ շինութի̃ է, յայնժամ յան-

 կար

կարծակի հասցէ նոցա սատակումն՝ որպէս և
4 երկն յղւոյ, և մի՛ ապրեսցին։ * Այլ դուք
եղբարք ոչ էք ՚ի խաւարի, թէ օրն ձեր
5 իբրև զգող ՚ի վ՛ր հասանիցէ․ * զի ամե֊
նեքին դուք որդիք լուսոյ էք՝ և որդիք
տուընջեան․ չե՛մք գիշերոյ՝ չե՛մք խաւա
6 րի։ * ապա մի՛ զքնով անկանիցիմք՝ որպէս և
այլքն, այլ արթունք և զուարթունք եղի
7 ցուք․ * Զի որ ննջենն՝ գիշերի ննջեն,
8 և որ արբենանն՝ գիշերի արբենան․ * այլ
մեք զի տուընջեան եմք, արթունք եղի
ցուք, և զգեցցուք զզրահն հաւատոյ և
զսիրոյ, և դիցուք զսաղաւարտն յուսոյն
9 փրկութե։ * Զի ոչ եդ զմեզ ած ՚ի բար֊
կութի, այլ ՚ի փրկութի կենդանութե ՚ի
10 ձեռն տն մերոյ յի̃ի քի̃ի․ * որ մեռաւ
վասն մեր․ զի եթէ արթունք իցեմք՝ և
եթէ ննջիցեմք, նովաւ հանդերձ կեց֊
11 ցուք։ * Վասն որոյ մխիթարեցէ՛ք զմի֊
մեանս, և շինեցէ՛ք զիրեարս՝ որպէս և
առնէք իսկ։
12 * Աղաչեմք զձեզ եղբարք՝ ճանաչել ըզ Գ.Ջ
վաստակաւորս և զվերակացուս ձեր ՚ի
13 տր, և զխրատիչս ձեր։ * և համարեցա
րուք զնս արժանիս առաւել սիրոյ՝ վասն
գործոյ նց․ խաղաղութի արարէք ը̃ մի֊
14 մեանս։ * Աղաչեմք զձեզ եղբարք՝ խրա
տեցէ՛ք զստահակս, մխիթարեցէք զկար
ճամիտս, պաստպարան լերուք տկարաց,
երկայնամիտ լերուք առ ամենեսեան։

* Զգո՛յշ լերուք՝ գուցէ ոք չարի չար 15
հատուցանիցէ. այլ յա̅մ ժամ զբարեաց
զհետ երթա՛յք առ միմեանս և առ ամե-
նեսեան։ * Յամենայն ժամ ուրա՛խ լե- 16
րուք։ * անդադար աղօ՛թս արարէք։ * յա- 17
մենայնի գոհացարո՛ւք. զի այս են կամք 28
ա̅յ ք̅նի յ̅նի ՚ի ձեզ։ * Զհոգին մի՛ շէ- 19
ջուցանէք։ * զմարգարէութի̅ս մի՛ արհա 20
մարհէք։ * Զամենայն ինչ փորձեցէ՛ք, 21
զբարին ընկալարո՛ւք։ * յամենայն իրաց 22
չարաց ՚ի բա՛ց կացէք։ * Նա ինքն ա̅ծ 23
խաղաղութե̅ սուրբ արասցէ զձեզ համօ
րէնս. և բովանդակ ձեր ոգի և շունչ և
մարմին՝ անարատ ՚ի գալուստն տ̅ն մե-
րոյ յ̅սի ք̅նի պահեսցի։ * Հաւատարիմ 24
է՝ որ կոչեաց զձեզ, որ և արասցէ զնոյն։
* Ե՛ղբարք՝ աղօ՛թս արարէք և ՚ի մեր վե- 25
րայ։ * Ողջո՛յն տայջիք եղբարց ամենե 26
ցուն ՚ի համբոյր սրբութե̅։ * Երդմնեցու 27
ցանեմ զձեզ ՚ի տ̅ր՝ ընթեռնուլ զթուղ
թդ առաջի ամենայն եղբարց սրբոց։
* Շնորհք տ̅ն մերոյ յ̅սի ք̅նի ը̅ ձեզ։ 28
ամէն։

Առ Թեսաղոնիկեցիս առաջին Թուղթ՝
գրեցաւ յԱթենայ։

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍՆ ԵՐԿՐՈՐԴ։

## ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ ԵՒ ՍԻՂՈՒԱ- ԴԿ
նոս եւ Տիմոթէոս՝ եկե-
ղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց՝
յԱ՟ծ Հայր մեր եւ ՚ի Տ՟ր Յ՟ս
2 Ք՟ս։ * Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութ՟ի
յԱ՟յ Հօրէ մերմէ, եւ ՚ի Տ՟նէ Յ՟սէ Ք՟սէ։
3 * Գոհանալ պարտիմք զԱ՟յ յա՟մ ժամ
վասն ձեր եղբարք՝ ո՟պ եւ արժան իսկ է.
զի եւս քան զեւս ա՟ճ՟է հաւատքն ձեր,
եւ յաճախէ սէր իւրաքանչիւր ամենեցուն
4 ձեր առ միմեանս։ * Որպէս եւ մեզ ձեօք
պարծել յեկեղեցիսն Ա՟յ՝ վ՟ս համբերու-
թ՟ե ձերոյ եւ հաւատոյ՝ յա՟մ հալածանս
ձեր եւ ՚ի նեղութ՟իս, որում դուքն համբե-
5 րէք. * յօրինակ արդար դատաստանին
Ա՟յ. արժանի լինել ձեզ արքայութ՟ե՟ն Ա՟յ,
6 վասն որոյ եւ զչարչարութ՟իդ կրէք. * Եթէ
արդար է առաջի Ա՟յ՝ հատուցանել նեղ-
7 չացն ձերոց նեղութ՟ի. * եւ ձեզ նեղելոցդ
հանգիստ ը՟ն մեզ ՚ի յայտնութեան Տ՟ն մե-

ըդ յսի, յերկնից հրեշտակօք զօրութե
իւրոյ. * 'ի բոց հրոյ տանուլ զվրէժս 8
յայնցանէ՝ որք ոչ ճանաչեն զած, եւ որ
ոչ հնազանդին աւետարանին տն մերոյ
յսի (քսի). * որք տայցեն վրէժս 'ի սա 9
տակումն յաւիտենից՝ յերեսաց տն՝ եւ 'ի
փառաց զօրութե նր։ * յորժամ գայցէ 10
փառաւոր լինել 'ի մէջ սրբոց իւրոց, եւ
սքանչելի 'ի մէջ ամենայն հաւատացե
լոց. զի հաւատարիմ եղեւ վկայութիւն
մեր 'ի վր ձեր յաւուր յայնմիկ։ * Վասն որոյ եւ 11
աղօթս առնեմք վս ձեր ամենայն ժամ,
զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն ձե
րում ած (մեր՝) մինչեւ լցցէ զամ հաճութի
բարութե, եւ զգործս հաւատոյն զօրու
թբ. * զի փառաւոր լիցի անուն տն մե 12
րոյ յսի քսի 'ի ձեզ՝ եւ դուք 'ի նմա, ըստ
շնորհացն այ մերոյ եւ տն յսի քսի։

## ԳԼ. Բ.

Դ.Դ Աղաչեմ զձեզ եղբարք՝ վս գալստեանն 1
տն մերոյ յսի քսի, եւ մերոյ ժողո
վելոյն առ նա. * մի՛ վաղվաղակի խռո 2
վել ձեզ 'ի մտաց՝ եւ մի՛ զարհուրել, մի՛
հոգւով եւ մի՛ բանիւ եւ մի՛ թղթովք՝ իբ
րեւ թէ 'ի մէնջ. որպ թէ եկեալ հասեալ
իցէ օրն տն։ * Մի՛ ոք զձեզ խաբեսցէ՝ 3
եւ մի՛ իւիք իրօք. զի եթէ ոչ նախ եկես
ցէ ապստամբութիւն, եւ յայտնեսցի մար
դըն անօրէնութե՝ որդին կորստեան,

 * հա

4 * Հակառակորդն հպարտացեալ 'ի վերայ
ամենայնի, որ անուանեալ իցէ ա՟ծ, կ՟մ
պաշտօն. մինչեւ նստել նմա 'ի տաճարին
ա՟յ, եւ ցուցանել զանձն՝ թէ ա՟ծ իցէ։
5 *Ո՞չ յիշէք՝ զի մինչ առ ձեզն իսկ էի՝ ա-
6 սէի զայս։ *Եւ արդ դուք ինքնին գի-
տէք զայն՝ որ ունին յայտնել ն՟մ յիւրում
7 ժամանակի։ *Զի խորհուրդն անօրէ-
նութ՟ե արդէն իսկ զօրանայ. բայց յայն
ժամ մինչ 'ի միջոյ բարձցի՝ որ այժմն ու-
8 նի։ *Եւ ապա յայտնեսցի անօրէնն.
զոր տ՟ր յ՟ս սատակեսցէ հոգւով բերանոյ
իւրոյ, եւ խափանեսցէ յայտնութ՟բ գալըս-
9 տեանն իւրոյ։ *Որոյ գալուստն ըստ ազ-
դեցութ՟ե սատանայի է, ամենայն զօրու-
թ՟բ եւ նշանօք եւ արուեստիւք ստովք,
10 *եւ ամենայն պատրանօք անիրաւութ՟ե
'ի վ՟ր կորուսելոցն. փոխանակ զի զսէրն
ճշմարտութ՟ե ոչ ընկալան՝ զի ապրեսցին,
եւ վասն այնորիկ առաքեսցէ ն՟ց ա՟ծ ազ-
դեցութ՟ի մոլորութ՟ե՝ հաւատալ ն՟ց ստու-
11 թեանն։ *Զի դատապարտեսցին ամենե-
քեան՝ որ ոչ հաւատացին ճշմարտութ՟ե,
12 այլ հաճեցան ը՟ անօրէնութիւն։ *Իսկ
մեք պարտիմք գոհանալ զա՟յ յամենայն
ժամ վ՟ս ձեր եղբարք սիրեցեալք 'ի տ՟նէ.
զի ընտրեաց զձեզ ա՟ծ խնդրանէ 'ի փըր-
կութ՟ի՝ սրբութ՟բ հոգւոյն՝ եւ հաւատովքն
13 ճշմարտութ՟ե. *յոր եւ կոչեաց զձեզ աւե-
տարանաւն մերով 'ի փրկութ՟ի փառացն
տ՟ն

տն մերոյ յի.քի. * Այսուհետեւ եղ 14
բարք հաստատուն կացէք՝ եւ պինդ կա
լարուք զաւանդութիւն՝ զոր ուսարուք,
եթէ բանիւ եւ եթէ թղթով մերով.
* Այլ ինքն տր մեր յս.քս եւ ած եւ հայր 15
մեր, որ սիրեաց զմեզ՝ եւ ետ մեզ մխի
թարութի յաւիտենից՝ եւ յոյս բարեաց
շնորհօք, * մխիթարեսցէ զսիրտս ձեր՝ եւ 16
հաստատեսցէ յամ բանս եւ 'ի գործս
բարութե.

## ԳԼ. Գ.

Դ.Ձ Այսուհետեւ եղբարք՝ աղօթս արարէք 1
'ի վր մեր, զի բանն տն ընթանայ
ցէ. եւ փառաւոր լինիցի յամ տեղիս՝ ոպ
եւ առ ձեզդ. * զի ապրեսցուք յանօրի 2
նաց եւ յանզգամաց մարդոց. զի ոչ ամե
նեցուն են հաւատք. * Այլ հաւատա 3
րիմ է տր, որ եւ հաստատեսցէ զձեզ՝ եւ
պահեսցէ 'ի չարէ անտի. * վստահ եմք 4
'ի ձեզ տրամբ, թէ զոր պատուիրեցաք
ձեզ, եւ առնէք՝ եւ առնիցէք. * այլ տր 5
ուղղեսցէ զսիրտս ձեր 'ի սէրն այ՝ եւ 'ի
համբերութին քի. * Պատուիրեմ ձեզ 6
եղբարք յանուն տն մերոյ յի.քի, խոր
շել ձեզ յամ եղբօրէ՝ որ ստահակն գը
նայցէ. եւ ոչ ըստ աւանդութեն՝ զոր ըն
կալարուք 'ի մէնջ. * Զի դուք ինքնին 7
գիտէք՝ թէ որպէս պարտ է ձեզ նմանել
մեզ. եւ ոչ երբէք ստահակեցաք առ ձեզ.

 * Եւ

8 * և ոչ ձրի զուրուք հաց կերաք, այլ ջա-
նիւ և վաստակով զգիշեր և զցերեկ գոր-
ծէաք՝ վն չծանրանալոյ ումեք ՚ի ձէնջ·
9 * Ոչ եթէ չունէաք իշխանութի· այլ զի
զանձինս օրինակ արասցուք ձեզ՝ նմա-
10 նօղս լինել մեզ· * Քանզի մինչ դեռ
առ ձեզն էաք՝ զայս պատուիրէաք
ձեզ, թէ որ ոչն կամիցի գործել՝ և կե-
11 րիցէ մի՛· * Լուեալ զոմանց ՚ի ձէնջ՝
թէ ստահակութբ գնան· գործ ինչ ոչ
գործեն, այլ յուլացեալ՝ հետաքրքիր
12 շրջին· * Այնպիսեացն պատուէր տամք՝
և աղաչեմք ՚ի տր յս քս, զի հանդար-
տութբ գործեսցեն՝ և զիւրեանց հաց կե-
13 րիցեն· * Այլ դուք եղբարք՝ մի՛ ձանձ-
14 րանայք զբարիս գործել· * Ապա եթէ ոչ
ոք հնազանդեսցի բանիս մերում թըղ-
թովս այդուիկ, դուք նշանակեսջի՛ք զդ-
նա, և մի՛ խառնակեսջիք ը նմա՝ զի պատ-
15 կառեսցէ· * բայց մի՛ իբրև զթշնամի հա-
մարիջիք՝ այլ խրատեսջի՛ք իբրև զեղ-
16 բայր· * Ինքն տր խաղաղութե տա-
ցէ ձեզ խաղաղութի յամ ժամ յամ իրս·
17 Տր ը ամենեսին ը ձեզ· * Ողջոյնս իմոյ
ձեռին պօղոսի է, որ է նշանակ· յամ
18 թուղթս այսպէս գրեմ· * Շնորհք տն
մերոյ յի քսի ը ամենեսին ձեզ· ամէն·

Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ՝ գրեցաւ յաթե-
նայ·

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ.

## ԳԼ. Ա.

Ակ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ 1
յի՟ի քի՟ի ը՟ հրամանի փրկ-
չին մերոյ այ՟՝ եւ քի՟ի յի՟ի յու-
սոյն մերոյ. * Տիմոթեայ 2
որդւոյ սիրելւոյ հաւատովք. շնորհք ը-
ղորմութի՟ խաղաղութի՟ յայ՟ հօրէ եւ 'ի տե՟նէ
մերմէ յի՟է քի՟է: * Որպէս աղաչեցի ըզ 3
քեզ կալ յեփեսոս՝ մինչ երթային 'ի
մակեդովնիա. զի պատուէր տացես ո-
մանց չլինել օտարուսմունս, * եւ չհայել 4
յառասպելս եւ 'ի տոհմաթիւս անչափս.
որ մանաւանդ խնդիրս յուզեն, եւ ոչ
զտնտեսութի՟ այ՟ հաւատովք: * Բանզի 5
գլուխ պատուիրանին սէր է, 'ի սր՟բ սըր-
տէ՝ եւ 'ի մտաց բարեաց՝ եւ յանկեղծա-
ւոր հաւատոց. * յորոց ոմանք վրիպե- 6
ցան խոտորեալք յունայնութի՟ բանից.
* Կամին լինել վարդապետք օրինաց. ին- 7
քեանք ոչ իմանան զինչ խօսին՝ եւ ոչ վա՟
որոց պնդէին են. * Գիտեմք՝ եթէ բար- 8
ւոք են օրէնք՝ եթէ ոք զնո՟ օրինօքն կը-
րես

9 ըեսցէ ։ * Բայց զայս գիտասցէ, զի ՚ի վր
արդարոյ օրէնք ոչ կան, այլ ՚ի վր անօ-
րինաց եւ անհնազանդից՝ ամբարշտաց եւ
մեղաւորաց՝ անսրբոց եւ պղծոց, զհայր
եւ զմայր անարգողաց, մարդասպանաց,
10 * պոռնկաց արուագիտաց՝ մարդելու-
զաց ստոց ստերդմնեաց ։ եւ եթէ այլ ինչ
իցէ հակառակ ողջամիտ վարդապետու-
11 թեան ։ * որ ըստ աւետարանի փառաց երա
նելոյն այ է, որում եղէ ես հաւատա
րիմ ։ Վ Ձ
12 * Շնորհ ունիմ յայնմիկ որ զօրացոյցն
զիս ՚ի քս յս ՚ի տր մեր ։ զի հաւատարիմ
համարեցաւ կարգել ՚ի սպասաւորութի ։
13 * որ յառաջագոյն հայհոյիչն էի եւ հա-
լածիչ եւ թշնամանիչ ։ այլ գտի ողոր-
մութի, զի զայն յանգիտութե եւ յանհա
14 ւատութե գործէի ։ * եւ առաւել եղեն շը-
նորհք տն մերոյ հաւատովքն եւ սիրով
15 որ ՚ի քս յս ։ * Հաւատարիմ է բանս՝ եւ
ամ ընդունելութե արժանի է ։ զի քս
յս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս, ո-
16 րոց գլուխն ես եմ ։ * Այլ վս այնորիկ
գտի ողորմութի, զի նախ յիս ցուցց յս քս
զամ երկայնմտութի՝ յօրինակ այնոցիկ
որ հաւատալոցն իցեն ՚ի նա՝ ՚ի կեանսն
17 յաւիտենից ։ * Այլ թագաւորին յա-
ւիտենից՝ անեղծի եւ աներեւութի, միոյն
այ՝ փառք եւ պատիւ յաւիտեանս յաւի
18 տենից ։ ամէն ։ * Զայս պատուէրս ա-
ւան

ւանդեմ քեզ որդեակ իմ Տիմոթէոս,
ըստ կանխելոց 'ի քեզ մարգարէութեանց.
զի դու զինուորեսցիս նոքօք զգեղեցիկ զի-
նուորութիւն. * ունիցիս հաւատս բարիովք 19
մտօք, զոր ոմանց մերժեալ յանձանց
խորեանց՝ նաւաբեկեցան 'ի հաւատոյ.
* որոց սակի են Հիմենոս՝ եւ Աղեքսանդ- 20
րոս, զորս մատնեցի սատանայի, զի խրա-
տեսցին չհայհոյել։

## ԳԼ. Բ.

Եւ արդ՝ աղաչեմ նախ քան զամենայն, առ- 1
նել աղօթս՝ խնդրուածս՝ պաղա-
տանս՝ գոհութիւնս վասն ամենայն մարդկան.
* մանաւանդ վասն թագաւորաց եւ ամենայն 2
իշխանաց. զի խաղաղութեամբ եւ հանդար-
տութեամբ վարեսցուք զկեանս մեր, ամենայն
աստուածպաշտութեամբ եւ սրբութեամբ. * Զի այն է 3
բարի եւ ընդունելի առաջի Փրկչին մե-
րոյ Աստուծոյ. * որ զամենայն մարդիկ կամի զի կեց- 4
ցեն՝ եւ 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն.
* Զի մի է Աստուած, եւ մի միջնորդ Աստուծոյ եւ 5
մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս. * որ ետ զանձն 6
փրկանս ընդ ամենեցուն՝ վկայութիւն ժամա-
նակաց իւրոց. * յոր եդայ ես քարոզ եւ 7
առաքեալ. ճշմարիտ ասեմ 'ի Քրիստոս՝ եւ ոչ
ստեմ, եղէ վարդապետ հեթանոսաց հա-
ւատովք եւ ճշմարտութեամբ.
ԸԴ * Կամիմ զի արք կայցեն յաղօթս յամենայն 8
տեղիս. բառնայցեն զսուրբ ձեռս 'ի վեր ա-


ռանց

9 առանց բարկութեան և երկմտութեան։ * Նոյնպէս
և կանայք ՚ի զարդ խոնարհութեան՝ ամօ-
թութեամբ և զգաստութեամբ զարդարել զան-
ձինս. մի՛ ՚ի հիւսս ոսկեմանս ընդ երու-
զեալս մարգարտով, կամ ՚ի հանդերձս
10 պաճուճեալս. * այլ որպէս վայելէ կանանց՝
զաստուածպաշտութիւն յանձնառելոց գործովք
11 բարեաց։ * Կին մարդ ցածութեամբ ուսցի
12 ամենայն հնազանդութեամբ։ * Եւ ուսուցանել
կնոջ մարդոյ ոչ հրամայեմ, և ոչ ձո-
խաբան լինել քան զայր մարդ. այլ ՚ի
13 լռութեան կալ։ * Զի Ադամ նախ ստեղ-
14 ծաւ՝ և ապա Եւայ։ * Եւ Ադամ ոչ
պատրեցաւ՝ այլ կինն պատրեցաւ և յան-
15 ցեաւ. * բայց կեցցէ վասն որդեծնու-
թեանն՝ եթէ կացցեն ՚ի հաւատս և ՚ի
սէր և ՚ի սրբութիւն պարկեշտութեամբ.

## ԳԼ. Գ.

1 Հաւատարիմ է բանս. եթէ որ եպիս-
կոպոսութեան ցանկայ՝ բարւոյ գործոյ
2 ցանկայ։ * Պարտ է եպիսկոպոսին անա-
րատ լինել, միոյ կնոջ այր, հեզ՝ ցած՝
3 պարկեշտ՝ հիւրասէր՝ ուսուցիչ. * մի՛
թշնամանօղ, մի՛ հարկանօղ, այլ հան-
դարտ. մի՛ կռուօղ, մի՛ արծաթասէր.
4 * զի իւրում տանն իսկ բարւոք վերակա-
ցու լեալ իցէ. որդեակս ունիցի, որ ՚ի
ամենայն հնազանդութեան կայցեն ամենայն պարկեշտութեամբ։
5 * Ապա եթէ որ իւրում տանն վերակա-



ցու

ցու չգիտիցէ լինել, զիա՞րդ եկեղեցւոյ
ա̄յ խնամակալ լինիցի։ * Մի՛ մատաղա 6
տունկ, զի մի՛ հպարտացեալ ՚ի դատաս
տանս սատանայի անկանիցի։ * Նա 7
պարտ է նմա վկայութիւն բարի և յարտաք
նոցն ունել. զի մի՛ ՚ի նախատինս անկա
նիցի՝ և յորոգայթս սատանայի։ * Նոյն 8
պէս և զսարկաւագունս պարկեշտս. մի՛
երկբանս, մի՛ գինեսէրս, մի՛ զօշաքաղս.
* այլ ունիցին զխորհուրդ հաւատոցն 9
սուրբ մտօք։ * Ինքեանք նախ փորձես 10
ցին, և ապա ՚ի պաշտօնն մատիցեն, զի
անարատք իցեն։ * Նոյնպէս և կանայք 11
նոցա պարկեշտք. մի՛ չարախօսք, հեզք՝ հա
ւատարիմք յամենայնի։ * Սարկաւագք լինի 12
ցին միոյ կնոջ արք. որք որդւոց իւրեանց
բարւոք վերակացու լեալ իցեն, և տանց
իւրեանց. * զի որ բարւոքն պաշտիցեն, 13
աստիճան բարի անձանց իւրեանց շահին,
և բազում համարձակութիւն ՚ի հաւատսն՝
Գ.Ջ որ ՚ի ք̄ս յ̄ս։
* Զայս գրեմ առ քեզ, զի ակնունիմ 14
՚ի մօտոյ գալ։ * Ապա թէ յամեցից՝ զի 15
գիտասցես, թէ որպէս պարտ իցէ քեզ
՚ի տան ա̄յ շրջել. որ է եկեղեցի ա̄յ կեն
դանւոյ, սիւն և հաստատութիւն ճշմար
տութեան. * Եւ յայտնի իսկ մեծ է խոր 16
հուրդն ա̄ծպաշտութեան. որ երևեցաւ մարմ
նով՝ արդարացաւ հոգւով՝ յայտնեցաւ
հրեշտակաց՝ քարոզեցաւ ՚ի հեթանոսս՝

ԱՌ ՏԻՄՈԹ · ԱՌԱՋԻՆ·
հաւատարիմ եղև յաշխարհի՝ և վերա-
ցաւ փառօք։

## ԳԼ. Դ.

1 Այլ Հոգին յայտնապէս ասէ. թէ
'ի ժամանակս յետինս՝ քակեսցին ո-
մանք 'ի հաւատոցն. և հայեսցին յայս
մոլորութե, և 'ի վարդապետութիս դիւաց,
2 * կեղծաւորութբ ստաբանաց, խարեալք
3 իւրեանց խղճիւն մտաց. * որ արգելու-
ցուն յամուսնանալոյ, և մեկնիցեն 'ի կե-
րակրոց՝ զոր ած հաստատեաց 'ի վայե-
լել հաւատացելոց, և որք հասեալ իցեն
4 'ի ճշմարտութեն նր։ * Զի ամ արա-
րածք այ՝ բարի են, և չիք ինչ խոտան.
5 մանաւանդ որ գոհութբ ընդունիցին. * զի
6 սրբի բանիւն այ՝ և աղօթիւք։ * Զայս
խրատ տուեալ եղբարց, բարւոք պաշ-
տօնեայ լինիցիս քնի յնի, սնանիցիս բա-
նիւք հաւատոց, և բարւոք վարդապե-
7 տութեն՝ զորոյ զհետ իսկ եղեր։ * Այլ
'ի պիղծ բանից՝ և յառասպելաց պառա-
ւանց հրաժարեսջիր։ Այլ կրթեա
8 զանձն քո յածպաշտութի. * զի մարմնոյ
կրթութի առ սակաւ ինչ օգտակար է.
իսկ ածպաշտութի առ ամ ինչ օգտակար
է. և զաւետիս կենաց ունի՝ զարդիս և
9 զհանդերձելոցն։ * Հաւատարիմ է բա-
10 նս և ամ ընդունելութե արժանի է։ * զի
'ի սոյն իսկ վաստակեմք՝ և նախատինս
յանձն

յանձն առնումք. զի յուսացեալ եմք
յԱծ կենդանի, որ է փրկիչ ամ մարդ-
կան, մանաւանդ հաւատացելոց։ * Պա- 11
տուէ՛ր տաջիր զայդ՝ և ուսուցանիջի՛ր.
* զի մի՛ ոք զքո մանկութիւնդ արհամար 12
հիցէ.

ԲԿ Այլ օրինակ լինիջիր հաւատացելոց՝
բանիւք՝ գնացիւք՝ սիրով հաւատովք սըր
բութբ. * Մինչև գամ ես, մի՛տ դիր ըն- 13
թերցուածոց մխիթարութե՝ վարդապե
տութե։ * Մի՛ անփոյթ առներ զշնոր 14
հացդ՝ որ ՚ի քեզ են, որ տուաւ քեզ
մարգարէութբ ՚ի ձեռնադրութե երիցուն։
* Զայդ խորհեաց՝ և ՚ի դոյն կանխեա 15
ջիր. զի քո յառաջադիմութիւնդ ամենե-
ցուն յայտնի լիցի։ * Զգոյշ լինիջիր ան- 16
ձին և վարդապետութեդ՝ և ՚ի դմին յա-
մեսջիր։ զայդ եթէ առնիցես՝ և զանձն
ապրեցուսցես, և զայնոսիկ՝ որ քեզն լը
սիցեն։

## ԳԼ. Ե.

Զծերն մի՛ պատուհասեսցես, այլ մխի 1
թարեսջի՛ր իբրև զհայր, զերիտա
սարդս իբրև զեղբարս, * զպառաւունս 2
իբրև զմարս, զմանկամարդս իբրև ըզ
քորս՝ ամենայն սրբութբ. * Զայրիս պա- 3
տուեա՛, որ ստոյգ այրիքն իցեն. * Ապա 4
թէ ոք այրի՝ որդիս և թոռունս ունիցի,
ուսանիցին նախ իւրեանց տանց բարէ



առ

տանել՝ և զփոխարէնս հատուցանել ծը
նողացն . զի այն է բարի՝ և ընդունելի
5 առաջի այ՟ : * Իսկ որ ճշմարիտն այրին
իցէ . և մենացեալ յուսացեալ յա՟ծ , և
կանխեալ յաղօթս և ՚ի խնդրուածս ըզ
6 ցայգ և զցերեկ : * Իսկ գիրգ այրին՝ կեն
7 դանւոյն մեռեալ է . * զայս պատուի
8 րեա՝ զի անարատք իցեն : * Իսկ եթէ ոք
իւրոց՝ և մանաւանդ ընտանեացն խնամ
ոչ տանիցի , ՚ի հաւատոցն ուրացեալ է՝
9 և չար ևս քան զանհաւատսն է : * Այրի
ըն՟ այրիս անուանեսցի , որ չիցէ պակաս
՚ի վաթսնամենից , միոյ առն կին լեալ .
10 * և ՚ի գործս բարիս վկայեալ , եթէ ման
կունս սնուցեալ իցէ , եթէ զհիւրս ըն
կալեալ իցէ , եթէ զսրբոց զոտս լուա
ցեալ իցէ , եթէ նեղելոց բաւական լեալ
իցէ , եթէ զա՟մ գործոց բարեաց զհետ
11 երթեալ իցէ : * Այլ ՚ի մանկամարդաց
այրեացն հրաժարեա՛ , զի յորժամ խայ
12 տան զք՟նիւ՝ ամուսնանալ կամին . * Իսկ
զդատաստանս ընդունին , զի զառաջին
13 հաւատսն արհամարհեցին : * Նա՝ և ան
գամայն և դատարկանձունք ուսանին՝
շրջողք տանէ ՚ի տուն . և ոչ միայն դա
տարկք , այլ և փաղփուք և հետաքըր
14 քիրք . և խօսին՝ որ ինչ ոչ է պարտ : * Կա
միմ զմանկամարդացդ ամուսնանալ , որ
դիս ծնանել , անարատս լինել , և մի՛ ինչ
պատճառս տալ հակառակորդին ՚ի հայ

հոյուԷ աղագս ։ * զի արդէն իսկ ոմանք 15
խոտորեցան զկնի սատանայի ։ * Եթէ 16
որ հաւատացեալ՝ այրիս ունիցի՝ բաւա
կան լիցի նոցա , և մի՛ ծանրասցի եկե_
ղեցւոյն · զի ճշմարիտ այրեացն բաւա_
կան լինիցի ։

ԲԴ * Որ բարւոք վերակացու լինին երիցունք 17
կրկին պատուոյ արժանի եղիցին · մանա
ւանդ որ աշխատիցին բանիւ և վարդա_
պետութ͞բ ։ * քանզի ասէ գիր · մի՛ կա_ 18
պեսցես զցուլ եզին կալոտւոյ · և ար_
ժանի է մշակն վարձու իւրոյ ։ * Զերի_ 19
ցու չարախօսութ͞ի մի՛ ընդունիցիս · բայց
եթէ երկուք՝ և երիւք վկայիւք ։ * Իսկ 20
որ մեղանչենն՝ առաջի ամենեցուն յան_
դիմանեա , զի և այլքն երկիցեն ։ * Վկայ 21
ունի դնեմ առաջի ա͞յ և յ͞սի ք͞սի՝ և ընտ_
րելոց հրեշտակաց , զի զայդ պահեսցես
առանց մոտահածութ͞ե · մի՛ ինչ առնել ա_
չառանօք ։ * Ձեռս վաղվաղակի յուրուք 22
վ͞ր մի՛ դնիցես , և մի՛ կցորդ լինիցիս մե_
ղաց օտարաց · զանձն քո սուրբ պահես
ջի՛ր ։ * Այսուհետև մի՛ ջուր և եթ ըմ_ 23
պիցես՝ այլ սակաւիկ մի և գինի խառ_
նեսջի՛ր վ͞ս ստամոքսի և ստէպ հիւան_
դուԷց ։ * Են մարդք՝ որոց մեղքն յայտնի 24
են՝ և յառաջագոյն հասեալ՝ ի դատաս_
տան , և են՝ որոց զկնի երթան ։ * Նոյնպ͞ս 25
և բարի գործքն յայտնի են · և որ այլ
ազգ ես ինչ իցեն՝ թաքչել ոչ կարեն ։

## ԳԼ. Զ.

1 Որ միանգամ ընդ լծով ծառայութեան իցեն,
զիւրաքանչիւր տեարս պատուոյ ար-
ժանի համարեսցին. զի մի՛ անունն Այ
2 և վարդապետութիւն հայհոյեսցի: * Իսկ
որ հաւատացեալ տեարս ունիցին՝ մի՛ ար-
համարհեսցեն, զի եղբարք են. այլ ա-
ռաւել ծառայեսցեն՝ զի հաւատացեալք
են և սիրելիք. որք զբարերարութ յան-
ձինս ունիցին: զայս ուսուցանիջիր՝ և
3 մխիթարեսջի՛ր: * Իսկ եթէ ոք այլազգ-
ինչ ուսուցանիցէ, և ոչ անսայցէ ողջ-
մտութեան բանի Տն մերոյ Յի Քի, և ըստ
4 Ածպաշտութե վարդապետութեանն. * այն-
պիսին հպարտացեալ է, և ոչինչ ոչ գի-
տէ. այլ տառապի 'ի խնդիրս և 'ի բանս
հակառակութե. ուստի լինին նախանձ
5 հեռ հայհոյութի կարծիք չարեաց, * խառ-
դախութիւնք ապականելոց մտաց մարդ-
կան՝ և օտարացելոց 'ի ճշմարտութէ ան-
տի, որ շահավաճառ համարին զԱծպաշ-
տութիւն. բայց դու մերժեսջի՛ր յայն-
պիսեաց:
6 * Բայց շահավաճառ մեծ Ածպաշտութի ԲԶ
7 է՝ բաւականութե հանդերձ: * զի ոչ բե-
րաք ինչ յաշխարհս՝ և ոչ տանել ինչ
8 կարասցուք. * այլ ունիմք կերակուր և
9 հանդերձս, և այնու շատասցուք: * Իսկ
որք կամին մեծանալ՝ անկանին 'ի փոր-


ձու-

ձութի եւ յորոգայթ, ՚ի բազում ցան-
կութիւնս անմիտս եւ վնասակարս. որք ընկղ-
մեն զմարդիկ ՚ի սատակումն եւ ՚ի կո-
րուստ: * Զի արմատ ամենայն չարեաց ար- 10
ծաթսիրութիւն է. որում ոմանք ցանկա-
ցեալ՝ մոլորեցան ՚ի հաւատոցն, եւ զան-
ձինս արկին ՚ի բազում ցաւովք: * Այլ 11
դու ով մարդ ա՟յ՝ փախիր յայնցանէ, եւ
երթ զհետ արդարութեան զա՟ծպաշտութեան
զհաւատոյ զսիրոյ զհամբերութեան զհե-
զութեան: * Ճգնեա՛ց զբարւոք մարտն 12
հաւատոյ, եւ բուռն հար զկենացն յա-
ւիտենականաց՝ յոր կոչեցարն, եւ դա-
ւանեցեր զբարւոք դաւանութիւն առաջի
բազում վկայից: * Պատուիրեմ քեզ ա- 13
ռաջի ա՟յ՝ որ կենդանի առնէ զամենայն,
եւ յ՟ի ք՟ի՝ որ վկայեաց առաջի պոնտաց
ւոյ պիղատոսի զբարւոք դաւանութիւն.
* պահել քեզ զպատուիրանն անբիծ՝ 14
անարատ, մինչեւ ՚ի յայտնութի տ՟ն մերոյ
յ՟ի ք՟ի. * զոր յիւր ժամանակս ցուցցէ 15
երանելին եւ միայն Հզօր, Թագաւոր
թագաւորաց եւ տ՟ր տերանց. * որ միայն 16
ունի զանմահութի՝ բնակեալ ՚ի լոյս ան-
մատոյց. զոր ոչ ոք ետես ՚ի մարդկանէ՝
եւ ոչ տեսանել կարօղ է. որում պատիւ
եւ զօրութի յաւիտեանս, ամէն: * Մե- 17
ծատանց՝ որ են յայսմ աշխարհի՝ պատ-
ուէր տացես մի՛ հպարտանալ եւ մի՛ յու-
սալ ՚ի մեծութի անստոյգ, այլ յա՟ծ որ

տալ մեզ զամ առատապէս 'ի վայելել.
18 զբարիս գործել, մեծանալ գործովք
բարութ, առատս սիրուն հաղորդս լի-
19 նել. գանձել անձանց հիմն բարի 'ի
հանդերձեալսն. զի բուռն հարկան կենաց
20 ճշմարիտ կենացն. Ով Տիմոթէէ՝
պահեա զաւանդն՝ խոտորեալ 'ի պղծոց
և 'ի նորաձայն բանից և 'ի հակառակու-
21 թէ և 'ի մտացանուն գիտութենէ. զոր
ոմանց յանձն առեալ՝ վրիպեցան 'ի հա-
ւատոց անտի: Շնորհք ընդ քեզ: ամէն.

Առ Տիմոթէոս առաջին թուղթ գրեցաւ 'ի
Լաւոդիկեայ, որ է մայր քաղաքաց Պակատիա-
նացւոց:

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ.

### ԳԼ. Ա.

գ.կ ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼ 1
յ՟սի ք՟սի կամօքն ա՟յ, ըստ
աւետեաց կենացն՝ որ ’ի ք՟ս
յ՟ս. * Տիմոթեայ որդւոյ 2
սիրելւոյ՝ շնորհք ողորմութի՟ եւ խաղա-
ղու՟թի յ՟այ հօրէ՝ եւ ’ի ք՟սէ յ՟սէ տ՟նէ մեր-
մէ։ * Շնորհ ունիմ ա՟յ՝ զոր պաշտեմն 3
’ի նախնեաց՝ մտօք սրբովք, իբրեւ զի ան-
պակաս ունիմ զքէն յիշատակ յաղօթս
իմ. զցայգ եւ զցերեկ. * ցանկացեալ եմ 4
տեսանել զքեզ, յիշատակեալ զարտա
սուսն քո՝ զի լցայց ուրախութե՟բ. * Ըղ 5
մտաւ ածեալ զանխիղճ հաւատսն՝ որ
են ’ի քեզ. որ յառաջագոյն բնակեցաւ
’ի հանի քում լաւոդեայ, եւ ’ի մօր քում
եւնիկեայ. հաստատեալ եմ թէ եւ ’ի
քեզ է։ * Վ՟ա յիշեցուցանեմ քեզ ար- 6
ծարծել զշնորհսն ա՟յ՝ որ են ’ի քեզ ’ի
ձեռնադրութենէ իմմէ։ * Զի ոչ ետ մեզ 7
ա՟ծ հոգի վհատութե՟, այլ զօրութե՟ եւ սի-
րոյ՝ եւ զգաստութե՟. * Մի այսուհետեւ 8
ամօթ

ամօթ համարիցիս զվկայութիւն տն մերոյ՝
և մի՛ զիս զկապեալ նր, այլ կցո՛րդ լեր
չարչարանաց աւետարանին՝ ըստ զօրութեան
9 այ։ * Որ փրկեաց զմեզ, և կոչեաց ՚ի
կոչումն սուրբ ոչ ըստ գործոց մերոց՝ այլ
ըստ խորհուրդ յառաջադրութեան և շնորհաց,
որ տուեալ մեզ ՚ի քս յս յառաջ քան զժա
մանակս յաւիտենից։ ԳԴ
10 * Բայց յայտնեցաւ այժմիկ յերևել
փրկչին մերոյ յսի քսի. որ խափանեաց
զմահ՝ և լուսաւոր արար զկեանս և զա_
11 նեղծութիւն ՚ի ձեռն աւետարանին. * որոյ
եդայ ես քարոզ և առաքեալ՝ և վարդա
12 պետ հեթանոսաց։ * Վասն որոյ և զայս
չարչարանս կրեմ, այլ ոչինչ ամօթ հա_
մարիմ. քանզի գիտեմ՝ յո՛ հաւատա
ցեալն եմ. և հաստատեալ եմ, թէ կա_
րօղ է զաւանդն իմ պահել յօրն յայն։
13 * Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն,
զորս յինէն լուար՝ հաւատովք և սիրով
14 որ ՚ի քս յս։ * Զբարւոք աւանդն պա_
հեսջի՛ր՝ ՚ի ձեռն հոգւոյն սբյ ՚ի մեզ բնա_
15 կելոյ։ * Զայս գիտասջի՛ր՝ զի մեկնե_
ցան ՚ի մէնջ ամենեքեան որ էին յասիա,
որոց ասկի են փիգեղոս և հերմոգենէս։
16 * Տացէ տր ողորմութիւն տանն ոնէսիփո
րայ. զի բզմանգամ հանգոյց զիս, և ըզ
կապանս իմ ոչ ամօթ համարեցաւ. * այլ
17 իբրև եկն ՚ի հռոմ, պնդագոյնս խնդ_
18 րեաց զիս՝ և եգիտ։ * Տացէ նմա տր՝ ողոր



մութ

մուծ գտանել ՚ի տեառնէ յաւուրն յայնմիկ. և որչափ ինչ միանգամ յԵփեսոս սպաս կալաւ ինձ, զայն դու լաւագոյնս գիտես.

## ԳԼ. Բ.

Արդ դու որդեակ իմ, զօրացիր շնորհ- 1
օքն որ ՚ի Քրիստոս Յիսուս. * Եւ զոր լուար 2
յինէն բազում վկայիւք՝ զայն աւանդեա
ցես հաւատարիմ մարդոց՝ որք բաւա-
կան իցեն և զայլս ուսուցանել.
ԳՁ * Աշխատեաց ընդ իս իբրև զբարի զինուոր 3
Քրիստոսի Յիսուսի. * Ոչ ոք զինուորեալ առնէ զ 4
կեանս աշխարհիս պատարագս, եթէ զօրա
վարին հաճոյ լինիցի. * Եւ եթէ մարտնչիցի 5
ոք իցէ, ոչ պսակի՝ եթէ ոչ ըստ օրինին
մարտիցէ. * Իսկ հողագործին աշխատե 6
լոյ պարտ է նախ ՚ի պտղոյն վայելել. * Իմա 7
ցիր զինչ ասեմ, տացէ քեզ Տէր իմաստութիւն
յամենայնի. * Յիշեա զՔրիստոս Յիսուս յարուցեալ ՚ի մե- 8
ռելոց ՚ի զաւակէ Դաւթի՝ ըստ աւետարա-
նիս իմում. * յորում չարչարիմ կապանօք 9
չափ իբրև զչարագործ. այլ բանն Աստուծոյ ոչ
եթէ կապեալ իցէ. * Վասն այնորիկ ամե- 10
նայն համբերեմ վասն ընտրելոցն, զի և նոքա փրկու-
թեան հասանիցեն որ ՚ի Քրիստոս Յիսուս երկնաւոր
փառօքն հանդերձ. * Հաւատարիմ է 11
բանս. զի եթէ ընդ նմա մեռաք՝ ընդ նմին և
կեցցուք. * Եւ եթէ համբերեմք, ընդ նմին և 12
թագաւորեսցուք. և եթէ ուրանամք՝ և նա
ուրանայ զմեզ. * Եւ եթէ չհաւատամք, 13



Նա

Նա հաւատարիմ մնայ, ուրանալ զանձն
14 իւր ոչ կարէ։ * Զայս յուշ արասջիր վկայ
ունել եղել առաջի այ. մի բանակռուել լի-
նել, յոչինչ պէտս ՚ի կործանումն լսողաց։
15 * Փութասջի՛ր զանձն քո ընտիր կացու- ԿԻՐ
ցանել առաջի այ, մշակ առանց ամօթոյ.
ուղիղ համառօտել զբանն ճշմարտութե։
16 * Բայց ՚ի պղծոց և ՚ի սնոտի խօսից մեր-
ժեսջի՛ր. զի առաւել յառաջ գայցեն
17 յամբարշտութիս. * և բանք նց իբրև ըղ-
քաղցկեղ ճարակ գտանեն. որոց սակի են
18 հիմենոս՝ և փիղետոս. * որք վրիպեցան
՚ի ճշմարտութէ, և ասեն՝ եթէ յարութի
մեռելոց արդէն իսկ եղեալ է. և կործա-
19 նեն զհաւատս ոմանց։ * Բայց հաստա-
տուն հիմն այ կայ՝ և ունի զկնիքս զայս, ե-
թէ ծանեաւ տր զայնոսիկ՝ որ իւրն են.
և ՚ի բաց լիցի յանիրաւութէ ամ որ ան-
20 ուանէ զանուն տն։ * Բայց ՚ի տան մե-
ծի ոչ միայն են անօթք ոսկեղէնք և ար-
ծաթեղէնք, այլ և փայտեղէնք և խեցե-
ղէնք. են՝ որ ՚ի պատուի են, և են որ յա-
21 նարգութե։ * Արդ եթէ ոք սրբեսցէ զանձն
իւր յայնպիսեաց անտի, եղիցի անօթ
պատուականն՝ սրբեալ և պիտանի տն իւ-
րում՝ յամ գործս բարութե պատրաստել։
22 * Բայց յերիտասարդական ցանկութեց
փախի՛ր. և երթ զհետ արդարութե՝ զհա-
ւատոց զսիրոյ զխաղաղութե զսրբութե, ընդ
այնոսիկ՝ որ կարդան զանուն տն սուրբ

սրտիւք։ * Այլ ՚ի յիմար և յանխրատ 23
խնդրոց հրաժարեա՛․ գիտասջի՛ր՝ թէ ան-
տի ծնանին կռիւք։ * Բայց ծառայի Տն 24
ոչ է պարտ կռուել, այլ հեզ լինել առ
ամենեսին՝ ուսուցիչ անոխակալ․ * հանդարտ 25
ութբ խրատել զհկռկօղսն․ թերևս տա-
ցէ նց ած ապաշխարութի ՚ի գիտութի ճըշ-
մարտութե․ * և սթափեսցին յորոգայթից 26
սատանայի, որսացեալք ՚ի նմէ ՚ի նր կամս։

## ԳԼ․ Գ․

ԿԻՐ Զայս գիտասջիր՝ եթէ յաւուրս յե- 1
տինս եկեսցեն ժամանակք չարք․
* զի եղիցին մարդիկ անձնասէրք արծա 2
թասէրք հպարտք ամբարտաւանք հայ-
հոյիչք՝ անհաւանք ծնողաց, անշնորհք ան-
սուրբք, * աննուէրք անգութք բանսար 3
կուք անժուժք վէսք անբարեսէրք, * մատ- 4
նիչք յանդգնուք ամբարհաւանք, ցան-
կասէրք մանաւանդ՝ քան ածասէրք․ * որ 5
ունիցին զկերպարանս ածպաշտութե, և
՚ի զօրութենէ անտի նր ուրացեալ իցեն․ և
խորշեսջի՛ր ՚ի նոցանէ, * Քանզի ՚ի նոցա 6
նէ են՝ որ մտանեն տանէ ՚ի տուն, և գե-
րեն զկանայս շեղջակուտեալս մեղօք վա-
րեալս ՚ի պէսպէս ցանկութիս․ * որ յամ 7
ժամ ուսանին, և երբեք ՚ի գիտութի ճըշ-
մարտութե ոչ հասանեն։ * Այլ ոպ յանէսն 8
և յամբրէս հակառակ կացին մովսէսի․
նոյնպ և սոքա հակառակ կան ճշմարտու-
թեն․

թեն · մարդք ապականեալք մտօք՝ ան֊
9 պիտանիք ՚ի հաւատս : * Այլ ոչ երբէք
գայցեն յառաջ ՚ի լաւ անդր · քանզի ան֊
մտութի՟ սց՟ յայտնի լինիցի ամենեցուն,
որպէս և նոցայն իսկ եղև :
10 * Այլ դու զհետ եկիր վարդապետութե՟
իմոյ՝ առաջնորդութե՟ յօժարութե՟ հաւա֊
տոց՝ երկայնմտութե՟ սիրոյ համբերութե՟,
11 * հալածանաց չարչարանաց · որպիսիք
եղեն ինձ յանտիոք և յիկոնիոն և ՚ի
լիւստրիս, որպիսի հալածանաց համբե֊
12 րի · և յամե՟ փրկեաց զիս տր՟ : * և ամ՟ին՝
որ կամիցին ածպաշտութե՟ կեալ ՚ի քս՟ յս՟,
13 ՚ի հալածանս կացցեն : * Այլ մարդք
չարք և կախարդք յառաջ եկեսցեն ՚ի չար
անդր · մոլորեալք՝ և մոլորեցուցանիցեն :
14 * Այլ դու հաստատուն կաց յոր ուսարդ,
և հաւատարիմ եղեր · գիտես ուստի ու֊
15 սար · * զի ՚ի մանկութե՟ զգիրս սբ՟ս գիտես,
որ կարող են իմաստուն առնել զքեզ ՚ի
փրկութի՟՝ ՚ի ձեռն հաւատոցն որ ՚ի քս՟ յս՟ :
16 * Ամենայն գիրք ածաշունչք և օգտա Գ·Հ
կարք, ՚ի վարդապետութի՟ են՝ և յանդիմա֊
նութի՟ և յուղղութի՟ և ՚ի խրատ արդարութե՟ ·
17 * զի կատարեալ իցէ մարդն այ՟ յամենայն
գործս բարութե՟ հաստատեալ :

## ԳԼ· Դ:

1 Ոյս վկայութի՟ դնեմ առաջի այ՟՝ և յս՟ի
քս՟ի, որ դատելոց է զկենդանիս և
զմե

զմեռեալս՝ ՚ի յայտնութեան իւրում եւ յար-
քայութեան. * Եւ դու քարոզեա զբանն, հաս 2
՚ի վր ժամու եւ տարաժամու, յանդիմա
նեա սաստեա մխիթարեա ամ երկայն-
մտութբ եւ վարդապետութբ։ * Քանզի ե- 3
կեսցէ ժամանակ՝ զի ողջմտութեան վարդա
պետութեանն ոչ անսայցեն. այլ ըստ իւրաքան
չիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վար-
դապետս՝ քորամարմաջելոյ լսելեաց իւ-
րեանց. * Եւ ՚ի ճշմարտութենէ անտի դար- 4
ձուցանիցեն զլսելիս՝ եւ յառասպելս հոր-
դանեսցին։ * Այլ դու զուարթ կաց 5
յամէնի, ճգնեաց, զգործս աւետարանչի
գործեա. զպաշտօնդ քո կատարեալ կալ։
* Զի ես այսուհետեւ նուիրեալ եմ, եւ 6
ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ։ * Զբա 7
րեաւք պատերազմ պատերազմեցայ,
զընթացսն կատարեցի, զհաւատսն պա-
հեցի. * Այսուհետեւ կայ մնայ ինձ ար- 8
դարութեան պսակն, զոր հատուսցէ ինձ տր
յաւուր յայնմիկ արդարն դատաւոր. ոչ
միայն ինձ, այլ եւ ամենեցուն՝ որ սիրե-
ցին զյայտնութիւն նորա։
ՉԲ Փութասջի՛ր գալ առ իս վաղվաղակի. 9
* Զի Դեմաս եթող զիս՝ եւ սիրեաց զաշ-
խարհս, եւ գնաց ՚ի Թեսաղոնիկէ. * Կրեսկէս՝ 10
՚ի Գաղղիա, Տիտոս ՚ի Դաղմատիա. * Ղու- 11
կաս միայն է ընդ իս։ Զմարկոս առեալ ընդ
քեզ ածիցես զի է ինձ պիտանի ՚ի պաշտօ
ւութի. * Զտիւքիկոս առաքեցի յԵփե- 12
սոս

13 սոս։ * Զփիլոնն թողի 'ի տրովադայ առ
կարպոսի. յորժամ գայցես՝ բերջի՛ր և զգ
14 իրսն, մանաւանդ զմատեանսն։ * Աղէք
սանդրոս (դարբին) բազում չարչարանս ե
ցոյց ինձ. հատուսցէ նմա տէր ըստ գործս նր.
15 * յորմէ և դու անձնապահ լինիջի՛ր. զի
16 շատ հակառ. եկաց բանից մերոց։ * Յառա
ջնում ատենին ոչ ոք ինձ 'ի թիկունս
եկաց, այլ ամենեքին թողին զիս. մի՛ համա
17 րեսցի նոցա այն։ * Այլ տէր օգնեաց ինձ, և
զօրացոյց զիս, զի ինև քարոզութիւն հաս
տատեսցի, և լուիցեն ամ հեթանոսք.
և ապրեցայ ես 'ի բերանոյ առիւծուն։
18 * Փրկեսցէ զիս տէր յամ գործոց չարաց,
և զերծուսցէ զիս յարքայութի իւր՝ որ յեր
կինս է. որում փառք յաւիտեանս յաւի
19 տենից. ամէն։ * Ողջոյն տաջիր պրիսկեայ
20 և ակիւղայ՝ և ոնեսիփորայ տանն։ * Երա
ստոս մնաց 'ի կորնթոս. զտրոփիմոս
21 թողի 'ի մելիտոս հիւանդագին։ * Փու
թա՛ջի՛ր յառաջ քան զձմեռն գալ։ Ողջոյն
տան քեզ եւբուղոս և պուդէս և լինոս և
22 կղօդիա՝ և եղբարք ամենեքեան։ * Տէր յս քս
ընդ հոգւոյդ քում։ Շնորհք ընդ քեզ։ ամէն,

Առ Տիմոթէոս երկրորդ թուղթն, որ էր եփե
սացւոց եկեղեցւոյն եպիսկոպոս առաջին ձեռ
նադրեալ. գրեցաւ 'ի հռովմէ՝ յորժամ երկ
րորդ անգամ եկաց յատենին պօղոս առաջի
ներոնի կայսեր հռոմայ։

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ՏԻՏՈՍ.
### ԳԼ. Ա.

ՊՕՂՈՍ ԾԱՌԱՅ 1
Ա՟յ եւ առաքեալ յ՟ի ք՟ի ,
ըստ հաւատոց ընտրելոցն
Ա՟յ , եւ ՚ի գիտութի՟ ճշմար-
տութե՟ն՝ որ է՟ ա՟ծպաշտութե՟ն
է . * յուսով կենացն յաւիտե՟նից , զոր խոս 2
տացաւ անսուտն ա՟ծ յառաջ քան զժա
մանակս յաւիտե՟նից . * բայց յայտնեաց 3
իւրովք ժամանակօք զբանն իւր քարոզու
թե՟բ , որոյ եղէ ես հաւատարիմ ըստ
հրամանի փրկչին մերոյ Ա՟յ . * Տիտոսի 4
որդւոյ սիրելւոյ ըստ հասարակաց հա-
ւատոց , շնորհք՝ եւ խաղաղութի՟ յԱ՟յ հօրէ՝
եւ ՚ի տ՟նէ յ՟է ք՟է փրկչէ մերմէ . * Վ՟ն 5
այնորիկ իսկ թողի զքեզ ՚ի Կրետէ , զի
որ ինչ միանգամ պակաս իցէ՝ ուղղես-
ցես , եւ կացուսցես ըստ քաղաքաց երի-
ցունս , ո՟պ եւ ես քեզ պատուիրեցի . * Ե- 6
թէ ոք անարատ իցէ , միոյ կնոջ այր , որ-
դեակս ունիցի հաւատացեալս՝ եւ ոչ
յամբաստանութի՟ անառակութե՟ն , կամ


ան

7 անհնազանդս · Զի պարտ է եպիսկո-
պոսին անարատ լինել՝ իբր Այ տնտեսի ·
մի՛ յանդուգն, մի՛ բարկացող, մի թըշ-
նամանող, մի՛ հարկանող, մի՛ զօշաքաղ ·
8 * այլ՝ հիւրասէր, բարեսէր, զգած, ար-
9 դար, սուրբ, ժուժկալ · * վերակացու-
լինել հաւատարիմ բանին վարդապե-
տութե, զի կարող իցէ եւ մխիթարել ողջ
մտութբ վարդապետութեն, եւ զհակա
10 ռակորդսն կշտամբել ։ * Քանզի բա-
զում են անհնազանդք՝ զրաբանօսք եւ
մտախաբք · մանաւանդ որ ՚ի թլփա-
11 տութենէ անտի են · * զորս պարտ է ընդերա
նել · որք զամ տունս կործանեն, եւ ու-
սուցանեն զոր չէ՛ պարտ՝ վն զօշաքաղուէ ։
12 * Ասաց ոմն ՚ի նոցանէ՝ իւրեանց իսկ
մարգարէ, կրետացիք հանապազասուտք,
13 չարագազանք դատարկապորտք ։ * Եւ ըս-
տոյգ է վկայութիւնս այս ։ վասն որոյ կշտ
ամբեսցես զնոսա խստագոյնս, զի ա-
14 ռողջասցին ՚ի հաւատս · * եւ մի՛ հայեսս-
ցին ՚ի հրէական առասպելս, եւ ՚ի պա-
տուէրս մարդկան դառնալոց ՚ի ճշ-
15 մարտութենէ · * Ամ ինչ սուրբ է սրբոց,
բայց պղծոց եւ անհաւատից՝ ոչ ինչ է
սուրբ · այլ պղծեալ են միտք եւ խղ-
16 ճմտանք նց · * խոստանին գիտել զԱծ,
եւ գործովք իւրեանց ուրանան · պղծեալք
եւ անհաւանք՝ եւ յամ գործս բարեաց
անպիտանք ։

## ԳԼ. Բ.

Այլ դու խօսեաց որ ինչ վայել է ողջա 1
միտ վարդապետութեա՟ն։ * Ծերոց 2
զգաստս լինել, պարկեշտս՝ ցածունս,
ողջամիտս ՚ի հաւատս ՚ի սէր ՚ի համբե
րութե՟ ՚ի ժուժկալութե՟։ * Պառաւանց 3
նոյնպէս ՚ի զգաստութե՟՝ ՚ի սուրբ վայել
չութե՟, մի՛ բանսարկուս՝ մի՛ գինեմոլս,
այլ բարւոք խրատս. * զի զգաստացուցա 4
նիցեն զմանկամարդսն՝ այրասէրս լինել՝
որդեսէրս, * ցածունս սուրբս անարատս 5
բարեգործս, հնազանդս իւրեանց ա-
րանց. զի մի՛ բանն ա՟յ եւ վարդապետու
թիւն հայհոյեսցի։ * Զերիտասարդս 6
նոյնպէս աղաչեսջի՛ր՝ ցածունս լինել,
* ամենեցուն զանձն օրինակ կացուցա 7
նել՝ գործոց բարութե՟, վարդապետութե՟
զանեղծութի՟ ունել, զբարութի՟, զպարկեշ
տութի՟, * զբանն ողջմտութե՟, անպարսաւ 8
լինել. զի որ հակառակորդն իցէ՝ յամօթ
լիցի, եւ մի՛ ինչ ունիցի ասել զմէնջ չա-
րութի՟։ * Զծառայս՝ իւրեանց տերանց 9
հնազանդ լինել՝ եւ հաճոյս յա՟մի. մի՛ հա-
կառակօղս, * մի՛ հատուս. այլ զա՟մ հա- 10
ւատս ցուցանել բարութե՟, զի զվրդպտութի՟
Գ.Զ փրկչին մերոյ ա՟յ զարդարեսցեն յա՟մի։
* Յայտնեցաւ շնորհք ա՟յ փրկիչ 11
ա՟մ մարդկան. * որ խրատէ զմեզ՝ զի ու- 12
րացցուք զամպարշտութիւն եւ զաշխար

հական ցանկութիւնս. զգաստութեամբ եւ արդա
րութեամբ եւ աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխար
13 հի. * Եւ ակնկալցուք երանելի յուսոյն՝
եւ յայտնութեան փառաց մեծին Աստուծոյ՝ եւ փրկ
14 չին մերոյ Յիսուսի Քրիստոսի. * որ ետ զանձն վասն
մեր, զի փրկեսցէ զմեզ յամենայն անօրէնու
թենէ, եւ սրբեսցէ իւր ժողովուրդ սեպ
հական՝ նախանձաւոր գործոց բարեաց.
15 * Զայդ խօսեաց՝ եւ մխիթարեա եւ յան
դիմանեա ամենայն հրամանաւ. զի մի՛ ոք իցէ
որ զքեզ արհամարհիցէ.

## ԳԼ. Գ.

1 Յուշ արասջիր նոցա, իշխանութեանց եւ
պետութեանց հնազանդ լինել՝ եւ հպա
տակ կալ. եւ ամենայն գործոց բարեաց պատ
2 րաստ գտանել. * մի՛ զոք հայհոյել՝ ան
կռիւս լինել՝ հեզս, զամենայն ցածութիւն առա
3 ջի ամենայն մարդկան ցուցանել. * Զի էաք
երբեմն եւ մեք անմիտք անհաւանք՝ մո
լորեալք՝ ծառայեալք ցանկութեանց եւ պէս
պէս անառակութեանց. չարութեամբ՝ եւ նախան
ձու շրջէաք, ատեցեալք՝ եւ զմիմեանս ա
4 տեաք. * Իսկ յորժամ քաղցրութիւն եւ մար
դասիրութիւն փրկչին մերոյ Աստուծոյ յայտնեցաւ,
5 * ոչ ՚ի գործոց արդարութեան զոր արարաք
մեք, այլ ըստ իւրում ողորմութեանն ապրե
ցոյց զմեզ ՚ի ձեռն աւազանին միւսան
գամ ծննդեան, եւ նորոգութեամբ Հոգւոյն
6 Սրբոյ. * զոր եհեղ ՚ի մեզ առատութեամբ, ՚ի
ձեռն

ձեռն Յիսի Քի փրկչին մերոյ. * զի արդա 7
րացեալք շնորհօքն՝ եղիցուք ժառանգա
ւորք յուսով կենացն յաւիտենականաց.
* Հաւատարիմ է բանս, և ՚ի սոյն կամիմ 8
զքեզ հաստատուն լինել, զի փոյթ արաս
ցեն գործոց բարեաց վերակացու լինել՝
հաւատացեալքն յԱծ, զի այն է բարի և
օգտակար մարդկան. * Եւ զյիմարութե 9
խնդիրս՝ և զտոհմաթիւս, և զհեռս՝ և զօ-
րինական կռիւսն ՚ի բաց մերժեսջիր. զի
անօգուտք են՝ և ունայնք. * Զայրն հեր- 10
ձուածող է՝ յետ միանգամ և երկիցս խրա
տելոյ՝ հրաժարեսջի՛ր. * գիտասջի՛ր՝ զի 11
թիւրեալ է այնպիսին, և մեղանչէ՝ ան-
ձամբ զանձն դատապարտեալ. * Եւ յոր- 12
ժամ յղեցից առ քեզ զԱրտեմայ կմ զՏի-
ւքիկոս, փութասջի՛ր գալ առ իս ՚ի Նի-
կոպօլիս. զի անդ եդի ՚ի միտ ձմերել.
* Եւ զԶենոն զօրինական դպիր՝ և զԱպո 13
ղոս՝ փութով արձակեսջի՛ր, զի մի՛ ինչ պա-
կասիցէ նց. * Ուսցին և մերքն եւս՝ բար- 14
եաց գործոց վերակացու լինել ՚ի պէտս
կարևորս. զի մի՛ անպտուղք լինիցին. * Ող 15
ջոյն տան քեզ՝ որ ընդ իս են ամենեքին.
Ողջոյն տուր սիրելեաց մերոց հաւատովք.
Շնորհք ընդ ձեզ ամենեսին. ամէն.

Առ Տիտոս Կրետացւոց եկեղեցւոյն առաջին
ձեռնադրեալ եպիսկոպոս, գրեցաւ ՚ի Նիկոպօլիսէ
Մակեդոնացւոց.

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ՓԻԼԻՄՈՆ.

### ԳԼ. Ա.

1 ՊՕՂՈՍ ԿԱՊԵԱԼ
յսի քսի, և տիմոթէոս եղ-
բայր. փիլիմոնի սիրելւոյ՝
2 և գործակցի մերոյ, * և
ապփեայ քեռ, և աքիպպեայ զինուո-
րակցի մերոյ՝ և տանն եկեղեցւոյդ.
3 * Շնորհք ընդ ձեզ և խաղաղութի յայ
4 Հօրէ մերմէ՝ և՚ի տնէ յսէ քսէ։ * Գոհ-
անամ զայ իմոյ յամ ժամ, յիշատա-
5 կեալ յաղօթս իմ վսն քո, * իբրև լսեմ
զքո հաւատսն և զսէր, զոր ունիս առ տր
6 յս՝ և առ ամ սուրբս։ * Ոի հաղոր-
դութի հաւատոցն քոց ազդոյ լինիցի՝ գի-
տութբ ամ բարութե, որ ՚ի ձեզ է ՚ի քս
7 յս։ * Խնդութի յոյժ ընկալայ՝ և մխի-
թարութի ՚ի վր սիրոյն քո. զի գութք
8 սրբոց քև հանգուցեալ են եղբայր։ * Վս
որոյ բազում համարձակութի ունիմ ՚ի քս
9 հրաման տալ քեզ զարժանն։ * Վասն
սիրոյ՝ մանաւանդ թէ աղաչեմ իսկ այն-
պիսի

պէսի լինել՝ որպէս և պօղոս ծերացեալ,
արդ և կապեալ ևս յի̄ քի̄։ * Աղաչեմ 10
զքեզ վ̄ն որդւոյ իմոյ՝ զոր ծնայ 'ի կա-
պանս իմ, զոնեսիմոս. * որ երբեմն ան- 11
պիտան էր քեզ. բայց արդ քեզ և ինձ
պիտանի. * զոր յղեցի առ քեզ։ և դու 12
զդա՛ ընկալջիր՝ այսինքն է՝ զիմ աղիս։
* Զոր կամէի առ իս արգելուլ, զի ը̄ն 13
քո ունիցի ինձ սպաս 'ի կապանս աւետա-
րանին։ * Բայց առանց քո կամաց ոչինչ 14
կամեցայ առնել, զի մի՛ բարիքդ քո 'ի
հարկէ լինիցին՝ այլ կամաւ։ * Եւ թեր- 15
ևս վ̄ն այնորիկ մեկնեցաւ առ ժամա-
նակ մի, զի յաւիտեան ունիցիս զդա.
* մի՛ ևս իբրև զծառայ՝ այլ 'ի վեր քան 16
զծառայ, իբրև զեղբայր սիրելի. եթէ
ինձ այսչափ ո՛րչափ ևս առաւել քեզ մարմ-
նով՝ և տ̄րամբ։ * Եթէ զիս քեզ հա- 17
ղորդ համարիցիս, ընկա՛լ զդա իբրև զիս.
* Եւ եթէ յանցուցեալ ինչ իցէ՝ կամ 18
պարտիցի, զայն ինձ համարեա՛ց։ * Ես 19
պօղոս գրեցի իմով ձեռամբ. ես հա-
տուցից, զի մի՛ ասիցեմ քեզ՝ թէ և դու
զանձն քո ինձ պարտիս։ * Այո եղբայր՝ 20
ես քո փոխանակ եղէց 'ի տ̄ր. հանգո՛
զաղիս իմ 'ի ք̄ս։ * Յուսացեալ 'ի հ̄նա 21
զանդութի̄ւ քո՝ գրեցի առ քեզ. քանզի
գիտեմ թէ առաւել ևս քան զոր ասեմդ՝
առնիցես։ * Միանգամայն և պատրաս 22
տեսջի՛ր ինձ վանս. քանզի յուսամ եթէ

23 աղօթիւք ձերովք շնորհեցայց ձեզ։ * Ող-
ջոյն տայ քեզ եպափրաս գերեկից իմ՝ ի
24 ք͞ս յ͞ս։ * և մարկոս, և արիստարքոս,
և դեմաս, և ղուկաս՝ գործակիցք իմ։
25 * Շնորհք տ͞ն մերոյ յ͞ի ք͞ի ը͞ն հոգւոյդ
ձերում։ ամէն։

Առ փիլիմոնն և առ ապփիա տեարս ոնեսիմոսի.
և առ արքիպպոս աշխատակից հովուապետ եկե-
ղեցւոյն, գրեցաւ ի հռոմէ ի ձեռն ոնեսիմոսի
ծառայի։

# ԹՈՒՂԹ
# ՊՕՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ.

### ԳԼ. Ա.

եկ ԲԱԶՈՒՄ ՄԱ- 1
սամբք եւ բազում օրինա-
կօք կանխաւ խօսեցաւ ած
ընդ հարսն մեր մարգա-
րէիւք. *'Ի վախճան աւուրցս 2
այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն՝ զոր
եդ ժառանգ ամի. որով եւ զյաւիտեանսն
արար. * Որ է լոյս փառաց՝ եւ նկարագիր 3
էութեան նր. որ կրէ զամ բանիւ զօրութեան
իւրոյ. սրբութիւն մեղաց մերոց արարեալ՝
նստաւ ընդ աջմէ մեծութեանն 'ի բարձունս.
* Այնչափ առաւել եղեալ քան զհրեշ- 4
տակս, որչափ լաւ եւս քան զնոսա անուան
ժառանգեաց. * Քանզի ցո՞ երբեք ա- 5
սաց 'ի հրեշտակաց, որդի իմ ես դու՝ ես
այսօր ծնայ զքեզ. եւ դարձեալ՝ թէ ես
եղէց նմա 'ի հայր, եւ նա եղիցի ինձ յոր-
դի. * Այլ յորժամ միւսանգամ մուծ- 6
ցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ. եր-
կիր պագցեն նմա ամ հրեշտակք այ.
* Այլ առ հրեշտակսն ասէ. ո արար ըզ 7

հրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս
8 իւր բոց հրոյ. * Իսկ ցՈրդին ասէ. Ա-
թոռ քո Ած յաւիտեանս յաւիտենից.
գաւազան ուղղութեան՝ գաւազան արքայ
9 ութեան քո։ * Սիրեցեր զարդարութիւն և
ատեցեր զանօրէնութիւն. վա այսորիկ օծ ըզ
քեզ Ած Ած քո իւղով ուրախութեան՝ առա
10 ւել քան զընկերս քո։ * Եւ դու Տր ի սկզ
բանէ զերկիր հաստատեցեր. և գործք
11 ձեռաց քոց երկինք են։ * Նոքա կորըն
չին՝ և դու կաս և մնաս. ամենեքեան
12 իբրև զձորձս մաշեսցին, * և իբրև զվե-
րարկուս գալարեսցես զնոսա իբրև ըզ
հանդերձ, և գալարեսցին. բայց դու
նոյն իսկ ես՝ և ամք քո ոչ պակասեն։
13 * Յո՞ երբեք ասաց ՚ի հրեշտակաց. Նիստ
ը̅ աջմէ իմմէ՝ մինչև եդից զթշնամիս քո
14 պատուանդան ոտից քոց։ * Ո՞չ ապաքէն
ամենեքեան հոգիք են հարկաւորք՝ որ
առաքին ՚ի սպասաւորութիւն վա այնոցիկ
որ ժառանգելոցն են զփրկութիւն։

## ԳԼ. Բ.

1 Վան այնորիկ պարտ է մեզ առաւել ԵԴ
ևս ունկնդիր լինել բանիցն ասա
2 ցելոց՝ զի մի՝ երբեք նուաղեսցուք։ * Զի
եթէ որ ՚ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ
բանն՝ հաստատուն եղև, և ամ յանցա
նութիւն և անհնազանդութիւն ընկալաւ
3 զպատիժ պատուհասի. * մեք զիարդ
ապ

ապրեսցուք հեղգացեալք յայնպիսի փըր
կութենէ, որ սկիզբն առ խօսելոյ ՚ի Տ՟նէ.
և ՚ի ձեռն այնոցիկ որ լուանն՝ ՚ի մեզ
հաստատեցաւ. * Վկայեալ յԱ՟յ նշանօք 4
և արուեստիւք և պէսպէս զօրութ՟բք, և
մասամբք հոգւոյն ս՟բյ ը՟ իւրոց կամաց։
* Զի ոչ եթէ հրեշտակաց հնազանդե 5
ցոյց զհանդերձեալ աշխարհն, վ՟ն որոյ
մեքս խօսիմք։ * Այլ վկայեաց ոք ուրեք՝ և 6
ասէ. Զի՞նչ է մարդ՝ եթէ յիշեսցես զնա,
կամ որդի մարդոյ՝ թէ այց արասցես նմա։
* Փոքր մի խոնարհ արարեր զնա քան 7
զհրեշտակս. փառօք և պատուով պսա
կեցեր զնա՝ և կացուցեր զնա ՚ի վ՟ր ձե
ռակերտաց քոց։ * Զամենայն ինչ հնա 8
զանդ արարեր ՚ի ներքոյ ոտից ն՟ր. Արդ՝
՚ի հնազանդեցուցանել զամ՟, ոչինչ ե
թող անհնազանդ ՚ի նմանէ. բայց այժմ
ոչ ևս տեսանեմք հնազանդեալ նմա զամ՟։
* Այլ զփոքր մի խոնարհեալ քան ըզ 9
հրեշտակս տեսանեմք զՅ՟ս՝ վ՟ն չարչարա
նաց մահուն. փառօք և պատուով պսա
կեալ. զի շնորհօքն Ա՟յ վ՟ն ամենեցուն
զմահ ճաշակեսցէ։ * Զի վայելէր իսկ 10
նմա, վ՟ն որոյ ամ՟՝ և որով ամ՟, բազում
որդիս ՚ի փառս ածել՝ և զառաջնորդ
Պ.Զ. փրկութեն ն՟ց չարչարանօք կատարել։
* Զի որ սրբէն և որ սրբին՝ ՚ի միոջէ 11
էին ամենեքին, վ՟ն որոյ ոչ ամօթ հա
մարի եղբարս անուանել զն՟ս, և ասէ.

12 * Պատմեցից զանուն քո եղբարց իմոց.
13 'ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ: * Եւ
դարձեալ՝ թէ ես եղէց յուսացեալ 'ի
նա: և դարձեալ. ահաւասիկ ես և ման_
14 կունք իմ, զոր ետ ինձ ած: * Արդ՝ ո_
րովհետև մանկունք հաղորդեցան ա_
րեան և մարմնոյ, և ինքն իսկ մերձա_
ւորութբ կցորդ եղև նոցունց. զի մահուն
իւրով խափանեսցէ զայն, որ զիշխանու
թին մահուն ունէր, այսինքն է՝ զսատա
15 նայ. * և ապրեցուսցէ զայնոսիկ, որ մա_
հուն երկիւղիւ հանապազ կէին վտա_
16 րանդեալք 'ի ծառայութի. * Քանզի ոչ
երբէք զհրեշտակաց բուռն հարկանէ.
այլ զզաւակէն աբրահամու բուռն հար_
17 կանէ: * Վասն որոյ իսկ էր նմա ա_
մենայնիւ եղբարց նմանել. զի ողորմած
լինիցի, և հաւատարիմ քահանայապետ
յածակյս կողմանէ անտի, առ 'ի քա_
18 ւելոյ զմեղս ժողովրդեանն: * Զի որով
ինքն չարչարեցաւ զփորձ առեալ, կա_
րող է և փորձանաւորացն օգնական լի_
նել:

## Գլ. Գ.

1 Վասն եղբարք սուրբք՝ երկնաւոր կոչ_
մանն բաժանորդք, նայեցարուք ընդ_
առաքեալն և ընդ քահանայապետ խոս_
2 տովանութե մերոյ յս քս. * որ հաւա_
տարիմ է արարչին իւրոյ՝ ոգ և մովսէս
յամ

յա՟մ ՚ի տան նորա ։ * Օ՛ր առաւել ևս 3
փառաց քան զՄովսէս արժանի եղև ․ որ-
չափ առաւել պատիւ ունիցի ք՟ զտունն՝
տանն առնելի ։ * զի ա՟մ տուն կազմի , 4
յումեքէ կազմի ․ իսկ որ զա՟մ արար , ա՟ծ
է ։ * Մովսէս հաւատարիմ է յա՟մ տան 5
նորա իբրև ծառայ՝ առ ՚ի վկայութե՟
բանիցն ասացելոց ․ * Այլ ք՟ս իբրև որ- 6
դի ՚ի վերայ տան իւրոյ ․ որոյ տունն մեք
իսկ եմք ․ միայն թէ զհամարձակութի՟
և զպարծանս յուսոյն մինչև ՚ի վախճան
հաստատուն ունիցիմք ։ * Վ՟ն որոյ 7
այսպէս ասէ հոգին ս՟բ ․ այսօր եթէ ձայ-
նի նորա լուիցէք , * մի՛ խստացուցանէք 8
զսիրտս ձեր իբրև ՚ի դառնութե՟ն յաւուրն
փորձութե՟ն յանապատի ․ * ուր փորձեցին 9
զիս հարքն ձեր ․ քննեցին զիս՝ և տեսին
զգործս իմ զքառասուն ամ ․ * վ՟ն որոյ 10
տաղտկացայ ազգաւն այնուիկ , և ա-
սացի ․ միշտ մոլորեալ ե՟ն սրտիւք ․ և նո-
քա ոչ ծանեան զճանապարհս իմ ․ * որ- 11
պէս երդուա՛յ ՚ի բարկութե՟ իմում՝ թէ
մտցե՟ն ՚ի հանգիստ իմ ։
ԵՋ * Տեսէ՛ք եղբարք՝ գուցէ երբէք լինիցի 12
յումեք ՚ի ձէնջ սիրտ չար անհաւատու-
թե՟՝ ապստամբ լինել յա՟յ կենդանւոյ ։
* Այլ մխիթարեցէ՛ք զմիմեանս զօրհա- 13
նապազ՝ մինչդեռ այսօրդ անուանի կայ ․
զի մի՛ ոք խստասցի ՚ի ձէնջ ՚ի խաբէութե՟
մեղաց ։ * Քանզի բաժանորդք եղեաք 14
ք՟սի ․

քնի · միայն թէ զսկիզբն հաստատութեան
15 մինչև ցվախճան պինդ կալցուք։ * Յա_
սելն, այսօր եթէ ձայնի նորա լուիջիք՝
մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր իբրև ՚ի
16 դառնութեան։ * Քանզի ոմանք լուան՝
և դառնացուցին, այլ ո՛չ ամենեքեան՝
որ ելեալ էին յեգիպտոսէ ՚ի ձեռն Մով
17 սէսի։ * Յումս տաղտկացաւ զքառա
սուն ամն · ո՛չ ապաքէն ՚ի յանցուցելոցն ·
որոց ոսկերքն անկան յանապատի անդ։
18 * Ո՞ւմ երդուաւ չմտանել ՚ի հանգիստն
19 իւր, եթէ ոչ անհաւատիցն · * և տե_
սանեմք՝ զի ո՛չ կարացին մտանել վասն
անհաւատութեան։

## ԳԼ · Դ ·

1 Երկիցուք այսուհետև, գուցէ ՚ի թո_
ղուլ զաւետիսն՝ ՚ի մտանելոյ ՚ի հան_
գիստն նր՝ գտանիցի ոք ՚ի ձէնջ նուա
2 զեալ։ * Քանզի եմք աւետարանեալք
ոպ և նոքայն · այլ նց ո՛չ ինչ օգնեաց լուր
բանին, չամոքելոցն ՚ի միաբանութի
3 հաւատոց։ * Այլ մտանեմք ՚ի հան_
գիստն, որք հաւատացաքս · որպէս և
ասացն՝ թէ որպէս երդուայ ՚ի բարկու
թեն իմում, թէ մտցեն ՚ի հանգիստ իմ ·
թէպէտ և արդիւնքն ՚ի սկզբանէ աշխարհ
4 հի լեալ էին։ * Քանզի ասէ ուրեք վն
աւուրն եօթներորդի այսպէս · և հան_
գեաւ ած յաւուրն եօթներորդի յամե_
նայն

նայն գործոց իւրոց: * Եւ աստ դար_ 5
ձեալ ասէ՝ Թէ մտցեն ՚ի հանգիստ իմ:
* Եւ արդ՝ քանզի արդելան ոմանք մը_ 6
տանել ՚ի նա, և որք յառաջագոյն ա_
ւետարանեալն էին՝ չմտին վն անհաւա_
տութեն • * դարձեալ այլ օր սահմանէ՝ 7
զայս օրն ՚ի դաւթի, և ասէ՝ յետ այն_
չափ ժամանակաց, ոպ յառաջագոյնն ա_
սաց, այսօր եթէ ձայնի նր լուիջիք՝ մի՛
խստացուցանէք զսիրտս ձեր: * Զի ե_ 8
թէ զնն յեսուայ հանգուցեալ էր, ապա
վն այլոյ աւուր ոչ խօսէր յետ այնորիկ:
* Արդ ուրեմն նուազեալ է շաբաթութե 9
ժողովրդեանն այ: * Զի որ եմուտ ՚ի 10
հանգիստ նր, և նա հանգեաւ յիւրոց

Ղ.Դ գործոց անտի • ոպ և այ յիւրայոցն:
* Փութասցուք այսուհետև մտանել 11
յայն հանգիստ • զի մի՛ ոք ընդ նովին օ_
րինակաւ անհաւատութեն անկանիցի •
* Կենդանի է բանն այ՝ և ազ_ 12
դօղ՝ և հատու քան զամ սուր երկսայ_
րի, և անցանէ մինչև ցորոշումն շնչոյ՝ և
ոգւոյ՝ և յօդից՝ և ուղղոց • և քննիչ է
մտաց՝ և խորհրդոց սրտից • * Եւ չիք 13
արարած աներևոյթ յերեսաց նր • այլ
ամ մերկապարանոց կայ առաջի ա_
չաց նր՝ զորմէ մեր բանքս են: * Ունիմք 14
այսուհետև քահանայապետ մեծ անցեալ
ընդ երկինս, զյս զորդին այ • պինդ կալ_
ցուք զխոստովանութիւնն: * Քանզի ոչ 15
եթէ

եթէ ունիմք քահանայապետ՝ որ չիցէ
կարող չարչարանէից լինել տկարութե մե-
րոյ · այլ փորձ է ամենայնիւ ըստ նմա-
նութե առանց մեղաց ։
16 * Մատիցուք այսուհետև համարձակու- ԶԿ
թբ առաջի աթոռոյ շնորհացն նր · զի
ընկալցուք ողորմութի՝ և գտցուք շը-
նորհս ՚ի դէպ ժամանակի օգնականութե ։

## ԳԼ. Ե։

1 Զի ամ քահանայապետ ՚ի մարդկանէ
առեալ՝ վս մարդկան կայ յածա-
կղս կողմն անդր · զի մատուցէ պատա
2 րագս և զոհս վասն մեղաց ։ * Զափով
չարչարանէից կարող է լինել տգիտաց և
մոլորելոց · քանզի և ինքն իսկ տկարութբ
3 զգածեալ է ։ * Եւ վասն այնորիկ հարկ է
որպ վս ժողովրդեանն, նոյնպէս և ընդ ան-
ձին մատուցանել պատարագս վս մե-
4 ղաց ։ * Եւ ոչ եթէ անձամբ ոք առնու
պատիւ · այլ կոչեցեալն յայ՝ որպ և ա-
5 հարոն ։ * Նոյնպէս և քս ոչ եթէ ան-
ձին ինչ շուք եդ լինել քահանայապետ ·
այլ որ խօսեցաւն ընդ նմա՝ թէ որդի իմ
6 ես դու՝ ես այսօր ծնայ զքեզ ։ * Որպ և ՚ի
միւսումն ասէ · դու ես քահանայ յաւի
7 տեան ըստ կարգին մելքիսեդեկի ։ * Որ
յաւուրս մարմնոյ իւրոյ՝ աղօթս և պա-
ղատանս առ այն, որ կարողն էր ապրե
ցուցանել զնա (՚ի մահուանէ) , ուժգին


գոչ

գոչմամբ և արտասուօք մատուցանէր.
և լսելի լինէր առ լաւութեն. * Թէպէտ 8
և որդի էր՝ ուսաւ 'ի չարչարանաց անտի
զհնազանդութի. * Եւ իբրև կատարե 9
ցաւ՝ եղև ամ հնազանդելոց իւրոց պատ-
ճառք փրկութեն յաւիտենից. * Եւ ա- 10
նուանեցաւ յայ քահանայապետ յաւի-
տենից ըստ կարգին մելքիսեդեկի.
ՁԴ * Վասն որոյ բազում են մեր բանք, և 11
դժուարապատումն 'ի մեկնել. քանզի խու-
թմիրք եղերուք լսելեօք. * Փոխանակ 12
զի պարտ էր ձեզ լինել վարդապետս վս
ժամանակին. դարձեալ պիտոյ է ձեզ
ուսանել՝ թէ զինչ են նշանագիրք իսկզ-
բան բանիցն այ. և եղերուք կարօտք կա-
թին՝ և ոչ հաստատուն կերակրոյ. * Զի 13
ամ որ կաթնկեր է՝ տգէտ է բանին ար-
դարութե, քանզի տղայ է. * Այլ կատա 14
րելոցն է հաստատուն կերակուր. որոց՝
վասն 'ի չափն հասանելոյ՝ ճաշակելիքն
կիրթ են ընտրութե բարւոյ և չարի.

## ԳԼ. Զ.

Վասն որոյ թողեալ զբան սկզբանն 1
քսի, 'ի կատարումն եկեսցուք. մի՛
միւսանգամ արկանել հիմն ապաշխա-
րութե՝ 'ի մեռելոտի գործոց անտի, և
հաւատոցն որ յած, * և մկրտութեցն 2
վարդապետութե, և ձեռնադրութե ձե-
ռաց, և յարութե մեռելոց, և դատաստա


նին

նին յաւիտենից։ * Եւ զայդ արդ՝ արասցուք
4 զայն, եթէ ած հրամայեսցէ։ * Քան-
զի անհնար է միանգամ լուսաւորելոցն, որ
ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն, եւ
5 հաղորդք եղեն Հոգւոյն սրբոյ, * եւ զգե-
ղեցիկ բանին այ ճաշակս ճաշակեցին, եւ
6 զզօրութիւնս հանդերձելոյ աշխարհին, * եւ
կործանեցին, միւսանգամ նորոգել յա-
պաշխարութիւն. եւ վերստին ի խաչ հա-
նել անձանց զորդին այ, եւ դարձեալ
7 խայտառակել։ * Քանզի երկիր՝ որ ըմ-
պիցէ զանձրեւ բազում անգամ եկեալ
ի վր նր, եւ ծնանիցի արդիւնս շայեկանս
նց՝ վն որոց գործեցին, ընդունի զօրհ-
8 նութի յայ։ * Իսկ որ բերէ զփուշ եւ զտա-
տասկ, անպիտան է՝ եւ մերձ յանէծս.
եւ վախճան նորա յայրումն։
9 * Բայց հաստատեալ եմք վն ձեր սիրե- ՁԶ
լիք՝ ի լաւ անդր, եւ որ լինի փրկութե։
10 զի թէպէտ եւ այսպէս խօսիմք. * ոչ ե-
թէ անիրաւ ինչ է ած՝ մոռանալ զ-
գործս ձեր եւ զսէրն՝ զոր ցուցէք յանուն
նր. զի պաշտեցիք զսուրբս՝ եւ պաշտէք։
11 * Եւ մեք ըղձանամք՝ զի իւրաքանչիւր
ոք ի ձէնջ զնոյն փոյթ ցուցանիցէ ի
հաստատութի յուսոյն՝ մինչեւ ցվախճան.
12 * զի մի հեղգք լինիցիք։ Այլ նմա-
նօղք եղերուք այնոցիկ՝ որ հաւատովք
եւ երկայնմտութեամբ ժառանգեցին զաւե-
13 տիսն։ * Զի Աբրահամու խոստացեալ
զա

զաւետիսն այ, քանզի յայլ ոք ՚ի մեծ ոչ
գոյր երդնուլ* յանձն իւր երդուաւ՝ և 14
ասէ. այո՛, օրհնելով օրհնեցից զքեզ, և
բազմացուցանելով բազմացուցից զքեզ։
* և այնպէս երկայնամիտ եղեալ՝ եհաս 15
աւետեացն։ * Ապաքէն մարդիկ՝ որ ինչ 16
՚ի վեր է քան զինքեանս՝ յայն երդնուն.
և ամ հակառակութե նց վճիռ առ ՚ի
հաստատութի՝ երդումն է։ * Որով ա- 17
ռաւել ևս կամեցեալ այ ցուցանել ժա-
ռանգաւորաց աւետեացն զհաստատու-
թի խորհրդոյն իւրոյ, միջնորդեաց եր-
դմամբ։ * Զի երկու անփոփոխելի իրօքն՝ 18
որովք անհնարին իցէ ստել այ, հաս-
տատուն մխիթարութի ունիցիմք. որք
ապաւինեալ եղեաք բուռն հարկանել ըզ
հանդերձեալ յուսոյն. * զոր իբրև զխա 19
րիսխ հաստատուն և անշարժ ունիցիմք
անձանց մերոց. որ և մտանիցէ ՚ի ներքին
կողմն վարագուրին, * ուր կարապետն 20
մեր յս եմուտ վն մեր, ըս կարգին մել-
քիսեդեկի՝ եղև քահանայապետ յաւի-
տենից։

## ԳԼ. Է.

Քանզի այս մելքիսեդեկ՝ թագաւոր 1
էր սաղիմայ. քահանայ այ բար-
ձրելոյ, որ ել ընդ առաջ աբրահամու՝
յորժամ դարձեալ գայր ՚ի կոտորածէ
թագաւորացն՝ և օրհնեաց զնա. * որում 2
և

և տասանորդս յամէ ետ աբրահամ·
նախ թարգմանի թագաւոր արդարութե,
ապա թագաւոր սաղեմայ՝ որ է թագա
3 ւոր խաղաղութե· * անհայր՝ անմայր՝
չհամարեալ յազգս, որոյ ոչ սկիզբն ա_
ւուրց և ոչ կատարած կենաց· նմանեալ_
որդւոյ այ՝ կայ մնայ քահանայ մշտնջե
4 նաւոր: * Արդ՝ տեսէք որպիսի ոք էր սա,
որում և աբրահամ տասանորդս ետ յա_
5 ւարէ անտի՝ նահապետն: * և որք յորդ_
ւոցն ղևեայ զքահանայութիւն առնուն,
պատուէր ունին տասանորդել զժող_
ժողովուրդն ըստ օրինացն· այսինքն է՝ զեղ_
բարս իւրեանց· թէպէտ և ելեալ իցեն
6 յերանացն աբրահամու: * Իսկ չհամա
րեալն յազգս 'ի նոցանէ՝ տասանորդեաց
զաբրահամ· և զնա՝ որոյ զաւետիսն ըն_
7 կալեալ էր, օրհնեաց: * Զի առանց
ամ հակառակութե, նուաստն 'ի լաւէ
8 անտի օրհնեսցի: * Եւ աստ մարդք մահ_
կանացուք տասանորդս առնուն· բայց
անդ վկայեցաւ՝ թէ կենդանի է: և ոպ
9 բանից կարգ է ասել· * թէ աբրահամաւ
և ղևի իսկ՝ որ զտասանորդսն առնոյր,
10 տասանորդեցաւ: * Զի դեռևս յերանս
հօր իւրոյ էր՝ յորժամ ը առաջ եղև նմ
մելքիսեդեկ:
11 * Իսկ արդ՝ եթէ կատարումն 'ի ձեռն էկ
ղևտացւոց քահանայութեան էր, քանզի
ժողովուրդն յայն օրէնս գրեցաւ· զի՞նչ
պէ

պիտոյ էր ըստ կարգին Մելքիսեդեկի այ-
լում քահանայի յառնել, և ոչ ասել՝
թէ ըստ կարգին Ահարոնի։ * Վասն 'ի 12
փոփոխել քահանայութեան, հարկ էր և
օրինացն փոփոխումն լինել։ * Զի զորմէ 13
այսպէսն ասէ՝ յայլմէ ազգէ կալաւ հա-
ղորդութիւն, յորմէ ոչոք երբէք եղև հա-
ղորդ սեղանոյն։ * Քանզի յայտ իսկ է, 14
թէ յազգէ Յուդայ ծագեաց Տէր մեր.
յորմէ ազգէ վասն քահանայից Մովսէս ինչ
ոչ ճառեաց։ * Եւ ևս առաւել յայտ է՝ 15
թէ ըստ նմանութեան Մելքիսեդեկի յառնե-
լոց է այլ քահանայ. * որ ոչ ըստ մարմնա- 16
ւոր պատուիրանին եղև, այլ ըստ զօրութեան
կենացն անվախճանից։ * Քանզի վկայե- 17
ցաւ, թէ դու ես քահանայ յաւիտեան
ըստ կարգին Մելքիսեդեկի. * Արհամար- 18
հութիւն լինէր առաջին պատուիրանին՝
վասն նորին տկարութեան և անշահութեան. * Քանզի 19
ոչինչ կատարումն գործեցին օրէնքն, և
մուտ ազնուական յուսոյն՝ որով մերձե-
նամք առ Աստուած։ * Եւ այնչափ, զի ոչ ա- 20
ռանց երդման. զի են ոմանք՝ որ առանց
երդման են կացեալ քահանայք։ * Բայց 21
սա երդմամբ 'ի ձեռն այնորիկ՝ որ ասացն
'ի նա. երդուաւ Տէր՝ և ոչ ևս զղջասցի,
դու ես քահանայ յաւիտեան։ * Եւ այն- 22
չափ լաւագոյն ուխտի եղև երաշխաւոր
Յիսուս. * Եւ բազումք են կացեալ քահա- 23
նայք՝ վասն մահու արգել լինելոյ 'ի մշտն-

24 ցենաւորել։ * Իսկ սա վն յաւիտեան
կալոյ՝ առանց անցանելոյ ունի զքահա
25 նայութիւն։ * Ուստի և կենդանի առնել
համօրէն կարող է զմատուցեալս նովաւ
առ ած. քանզի միշտ կենդանի է՝ լինել
բարեխօս վասն նոցա։
26 * Զի այսպիսի իսկ և վայել էր մեզ քա-
հանայապետ, սբ անմեղ անարատ՝ զա-
տեալ ՚ի մեղաւորաց, և բարձրացեալ քան
27 զերկինս. * որում ոչ հանապազ հարկ
է ոպ այլոց քահանայապետացն, նախ վն
իւրեանց մեղացն պատարագս մատու-
ցանել՝ և ապա վն ժողովրդեանն. իսկ
սա զայն միանգամայն կատարեաց, զի
28 զանձն իւր մատոյց պատարագ։ * Օրէն
քըն զմարդիկ կացուցանեն քահանայա
պետս զգաձեալս տկարութբ. իսկ բանն
երդմանն յետ օրինացն՝ զորդի, որ յաւի-
տեան կատարեալ է։

## ԳԼ. Ժ.

1 Եւ բանից գլուխ խօսիցս՝ այնպիսի ու-
նիմք քահանայապետ, որ նստաւ
ընդ աջմէ մեծութեան աթոռոյն յերկինս,
2 * սրբութեցն պաշտօնեայ՝ և խորանին
ճշմարտութե, զոր տրն կանգնեաց՝ և
3 ոչ մարդ։ * Զի ամ քահանայապետ վն
մատուցանելոյ զոհս և զպատարագս կայ.
ուստի հարկ է և նմա ունել ինչ՝ զոր մա-
4 տուցանիցէ։ * Զի եթէ էր յերկրի,
թէր

Թերեւս չէ՛ր իսկ քահանայ. զի գոյին՝ որ
մատուցանէին ըստ օրինացն պատարագ.
* որք առակաւ եւ օրինակաւ պաշտէին 5
երկնաւորացն. որպէս եւ հրամայեցաւ Մովսէ-
սի՝ յորժամ գործելոց էր զխորանն ժամուն.
տեսջի՛ր՝ ասէ, արասցես զամ ըստ օրինա-
կին՝ որ ցուցաւ քեզ 'ի լերինն: * Բայց 6
արդ՝ առաւելագոյն եւս պաշտաման եհաս
յս, որչափ լաւագոյն եւս ուխտի է միջ-
նորդ՝ որ յառաւել աւետիսն օրինադրե-
ցաւ: * Զի եթէ առաջինն անարատ էր, 7
ապա երկրորդին տեղի ոչ խնդրէր: * Նա 8
աւանիկ բամբասէ զնս՝ եւ ասէ. աւասիկ
աւուրք եկեսցեն՝ ասէ տր, եւ կա-
տարեցից 'ի վր տանն իէլի եւ 'ի վր տանն
յուդայ ուխտ նոր. * ոչ ըստ ուխտին՝ զոր 9
եդի ընդ հարս նց՝ յաւուր յորում առի 'ի
ձեռն՝ հանել զնս յերկրէն եգիպտացւոց.
եւ զի նոքա ոչ կացին յուխտին իմում, եւ
ես անփոյթ արարի զնոցանէ՝ ասէ տր ա-
մենակալ: * Այլ այս է ուխտն՝ զոր է- 10
դից տանն իէլի յետ աւուրցն այնոցիկ՝ ա-
սէ տր. տաց զօրէնս իմ 'ի միտս նց՝ եւ 'ի
սիրտս նց գրեցից զնս. եւ եղէց նց այ,
եւ նոքա եղիցին ինձ 'ի ժողովուրդ: * Եւ 11
ոչ եւս ուսուցանիցեն իւրաքանչիւր զքա-
ղաքակից իւր, եւ իւրաքանչիւր զեղբայր
իւր, եւ ասիցեն թէ ծանիր զտր. զի ա-
մենեքին ծանիցեն զիս 'ի փոքրկանց մին-
չեւ 'ի մեծամեծս նց: * Զի քաւիչ եղէց 12

անիրաւութեանց նց. եւ զմեղս նց՝ եւ զանօ
13 րէնութիս այլ ոչ եւս յիշեցից։ * Արդ՝ ա-
սելովն նոր, հնացոյց զառաջինն. եւ որ
հնանայն եւ ծերանայ՝ մերձ է յապակա-
նութիւն։ ՎԶ

## ԳԼ. Թ.

1 Ունէր ուրեմն եւ առաջինն իրաւունս
պաշտաման յայնժամ՝ զաշխարհական
2 սրբութին։ * Զի խորանն առաջին հան-
դերձեցաւ այսպէս. յորում աշտանակն
եւ սեղանն եւ հացն նուիրաց՝ որ սրբութին
3 կոչէր։ * Իսկ յետ երկրորդ վարագուրին
խորանն՝ որ կոչէր սրբութի սրբութեանց.
4 * յորում կայր բուրվառն ոսկի, եւ տապանակն
կտակարանաց պատեալ ներքոյ եւ արտա-
քոյ ոսկւով. յորում սափորն ոսկի լի մա-
նանայիւ, եւ գաւազանն Ահարոնի՝ որ
ծաղկեցաւ, եւ տախտակք կտակարանացն.
5 * եւ ՚ի վերայ նր քերովբէքն փառաց՝ որ
հովանի ունէին ՚ի վերայ քաւութեանն. վն
6 որոյ ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ։ * Իսկ
այն ամ իրքն այնպէս հանդերձեալ կայր,
յառաջին խորանն յամ ժամ մտանէին
քահանայք զպաշտամունսն կատարել.
7 * բայց յերկրորդն միանգամ ՚ի տար-
ւոջն քահանայապետն. եւ զայն ոչ ա-
ռանց արեան, զոր մատուցանէ վն իւր
եւ վասն ժողովրդեանն անգիտութե։
8 * Զայս ցուցեալ Հոգւոյն սրբ՝ մինչեւ

յայտնեալ էր ճանապարհն սրբութեանցն.
քանզի դեռ առաջին խորանն ունէր ըղ
հաստատութիւն. * որ է առակ ժամանա 9
կին, որ առաջի կայր. յորում պատա-
րագք և զոհք մատչէին, որք ոչ կա-
րէին ըստ միտս կատարել զպաշտամունսն.
բայց միայն կերակրովք և ըմպելեօք, * և 10
պէսպէս մկրտութեամբք՝ մարմնոյ արդարու-
թիւքն. որ մինչև 'ի ժամանակս ուղղու-
թեան 'ի վերայ կային: * Իսկ Քրիստոս եկեալ քա- 11
հանայապետ հանդերձելոցն բարեաց՝
մեծաւն և կատարելագունիւն՝ և անձեռագործ
խորանաւ, այսինքն է՝ որ ոչ յայսց արա
րածոց, և ոչ արեամբ նոխազաց և զուա- 12
րակաց. այլ իւրով արեամբն եմուտ
միանգամ 'ի սրբութիւն՝ յաւիտենական
գտեալ զփրկութիւն: * Զի եթէ արիւն 13
ցլուցն և նոխազաց՝ և մոխիր երինջոցն
ցանեալ՝ զպղծեալսն սրբէր առ 'ի մար-
մնոյ սրբութիւն. * ո՞րչափ ևս առաւել ա- 14
րիւնն Քրիստոսի, որ 'ի ձեռն հոգւոյն յաւիտե
նականի մատոյց զանձն անարատ պատա
րագ Աստուծոյ, սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց 'ի
մեռելոտի գործոց անտի՝ պաշտել զԱստուած
կենդանի: * Եւ վասն այնորիկ նորոյ ուխ- 15
տին է միջնորդ. զի յորժամ մահ լինիցի՝
'ի փրկութիւն վասն առաջին ուխտին յանցա
նաց, զաւետիս առցեն հրաւիրեալքն 'ի
ժառանգութիւն յաւիտենից: * Քանզի ուր 16
կտակ է, հարկ է զմահ 'ի մէջ բերել

17 զկտակագրին։ * Զի կտակ յետ մահու
հաստատուն է․ ապա թէ ոչ՝ զիա՞րդ
իցէ հաստատուն, մինչ կտակագիրն կեն_
18 դանի է։ * Ուստի և ոչ առաջինն առանց
19 արեան նորոգեր։ * Քանզի իբրև պատ_
մեցաւ ամ պատուիրանք օրինացն ՚ի մով_
սեսէ՝ ժողովրդեանն, առեալ զարիւն
ցլուցն և նոխազացն, ջրով և բրդով՝
կարմրով և զոպայիւ, զկտակարանօքն
իսկ և զամ ժողովրդեամբքն սրսկեաց,
20 * և ասէ․ այս է արիւն կտակին՝ զոր պա_
21 տուիրեաց ձեզ ած։ * Եւ զխորանն
և զամենայն կահիւ սպասուն նոյնպէս
22 սրսկեաց զարիւնն։ * Եւ գրեթէ ամ
ինչ արեամբն սրբէր ըստ օրինացն․ և ա_
_ռանց հեղման արեան չլինէր թողութի։
23 * Արդ հարկ էր օրինաւորացն այնպի_
սեօքն սրբել․ և բուն իսկ երկնաւորացն՝
առաւել ևս պատարագօք քան զնոյնս․
24 * Զի ոչ եթէ ՚ի ձեռագործ սրբութիւն
եմուտ քս յօրինակս ճշմարտութեն․ այլ
՚ի բուն իսկ յերկինս, յանդիման լինել
25 երեսացն այ վս մեր։ * Ոչ զի բազմա_
գամ մատուցանիցէ զանձն պատարագ՝
ոչ քահանայապետն, որ մտանէր ՚ի սրբ
բութի սրբութեցն ամի ամի արեամբքն օտա
26 րաւ․ * ապա թէ ոչ՝ պարտ էր նմա բազմ
անգամ չարչարել ի սկզբանէ աշխարհի,
բայց արդ սակայն միանգամ ՚ի կատա
րած յաւիտեանց՝ յանարգութե մեղաց
ի

իւրով պատարագաւն յայտնեալ է։ * Եւ 27
զոր օրինակ կայ մնայ մարդկան միան-
գամ մեռանել՝ և յետ այնորիկ դատաս-
տան. * Նոյնպ՟ և քս՟ միանգամ մատուցեալ 28
պատարագ առ 'ի բառնալոյ զմեղս բազ-
մաց. իսկ յերկրորդումն առանց մեղաց
յայտնեսցի այնոցիկ, որ ակն ունիցին
նմա հաւատովք 'ի փրկութիւն։

## Գլ. Ժ.

Բ
Վասնզի զստուեր հանդերձելոց բա- 1
րեացն ունէրն օրէնքն, և ոչ զնոյն
կերպարանս իրացն. ամի ամի զնոյն պատա
րագս մատուցանեն ցանգ, որք ոչ են կա-
րօղ զմատուցեալսն կատարել. * ապա թէ 2
ոչ՝ դադարէին 'ի մատուցանելոյ, վ՟ն և
ոչ մի ինչ այնուհետև խիղճ մեղաց ունե-
լոյ պաշտօնէիցն միանգամ սրբեցելոցն.
* այլ անդէն 'ի նմին 'ի յիշատակս մե- 3
ղացն կայրն ամի ամի. * Վասնզի ոչ կա- 4
րէր արիւն նոխազացն և ցլուց բառնալ
զմեղս։ * Վասն որոյ 'ի մտանել իւրում 5
յաշխարհ՝ ասէ. զզոհս և զպատարագս
ոչ կամեցար, բայց մարմին հաստատե-
ցեր ինձ. * զողջակէզս և զվ՟ն մեղացն 6
ոչ հաճեցար։ * Յայնժամ ասացի թէ 7
ահաւասիկ եկի. 'ի ճառս գրոց գրեալ
է վասն իմ, առնել զկամս քո ած՟.
* Վերագոյնն ասէ, թէ զզոհս՝ և ընդ- 8
պատարագս՝ և զողջակէզս՝ և զվ՟ն մե-
ղացն

ղացն ոչ հաճեցար, և ոչ կամեցար՝ որք
9 ըստ օրինացն մատչէին։ * Ապա ասէ՝
ահաւասիկ գամ առնել զկամս քո ա̃ծ։
մերժէ զառաջինն՝ զի զերկրորդն հաս-
10 տատեսցէ. * որով կամօք և մեք սըր-
բեցաք՝ ’ի ձեռն պատարագի մարմնոյն
11 յ̃ի ք̃ի միանգամ։ * Եւ ամենայն քա-
հանայապետ կայ հանապազորդ ’ի պաշ-
տաման, և զնոյն պատարագս մատուցա-
նէ բազմանգամ, որք ոչ երբէք կարող են
12 բառնալ զմեղս. * Իսկ սա զմին վ̃ն մեղաց
մատոյց պատարագ. և մշտնջենաւոր
13 նստաւ ընդ աջմէ ա̃յ։ * և այսուհետև
ակն ունի՝ մինչև դիցին թշնամիք իւր ’ի
14 ներքոյ ոտից իւրոց. * քանզի միով պա-
տարագաւ կատարեաց զսրբեալսն ’ի
15 մշտնջենաւորս։ * Այլ վկայէ մեզ և
հոգին ս̃բ՝ յետ ասելոյն յառաջագոյն.
16 * եթէ այս է ուխտն՝ զոր եդից ը̃ն հարս
ն̃ց յետ աւուրցն այնոցիկ, ասէ տ̃ր. տաց
զօրէնս իմ ’ի սիրտս ն̃ց, և ’ի խորհուրդս
17 ն̃ց գրեցից զն̃ս. * Ապա ասէ՝ թէ զմեղս
ն̃ց և զանօրէնութիւս ն̃ց այլ ոչ ևս յիշե-
18 ցից. * Իսկ ուր թողութիւն է, ոչ ևս պի-
տոյ է վ̃ն մեղաց պատարագ. ԻԶ
19 * Ունիմք այսուհետև եղբարք՝ համար-
ձակութիւն ’ի մուտս սրբութեցն արեամբն
20 յ̃ի. * զոր նորոգեաց մեզ ճանապարհ
նորոգ և կենդանի ’ի ձեռն վարագուրին,
21 այսինքն է՝ մարմնոյ իւրոյ. * և քահանայ
մեծ

մեծ 'ի վերայ տանն այ ․ * մատիցուք 22
ճշմարիտ սրտիւք՝ լրութբ հաւատոց , ըս
րսկեալ զսիրտս 'ի խղճէ չարեաց՝ և մ
կրտեալ զմարմին 'ի ջուրս սրբութե ։
* Պինդ կալցուք զխոստովանութի ան 23
շարժ յուսոյն , զի հաւատարիմ է որ խոս
տացաւն ։ * Եւ զգուշասցուք միմեանց 24
յորդորմամբք սիրոյ և գործոց բարեաց ․
* և մի' թողցուք զժողովս միմեանց , որպ 25
և սովոր են ոմանք ․ այլ մխիթարեսցուք ,
և այնչափ ևս առաւել՝ որչափ տեսանի
ցէք զօրն մերձեալ ։ * Զի կամակար մեղօք 26
եթէ յանցանիցեմք յետ ընդունելութե
գիտութե ճշմարտութեն՝ այնուհետև ոչ ևս
այլոյ է վն մեղաց պատարագ ․ * այլ 27
ահեղ ակնկալութի դատաստանին , և
նախանձ հրոյն՝ որ ուտիցէ զհակառա
կորդսն ։ * Արհամարհեալ ուրուք զօ 28
րէնսն մովսէսի , առանց ողորմութեց՝
առ երկուք կմ երիւք վկայիւք մեռանէր ․
* Իսկ ո՞րչափ սաստիկ պատժոց արժանի 29
համարիցիք զայն , որ զորդին այ առ ոտն
եհար ․ և զարիւն նորոյ ուխտին խառ
նակ համարեցաւ՝ որով և սրբեցաւն ․ և
զհոգին շնորհաց թշնամանեաց ։ * Զի 30
գիտեմք զայն՝ որ ասացն ․ իմ են վրէժ
խնդրութիւնք , և ես հատուցից՝ ասէ տր ․
և դարձեալ թէ՝ դատի տր զժողովուրդ
իւր ։ * Ահ մեծ է անկանել 'ի ձեռս այ 31
կենդանւոյ ։

 * Արդ՝

32 *Արդ՝ յիշեցէք զաւուրսն զառաջինս. 
յորս լուսաւորեալք բզմ ճգանց և չար-
33 չարանաց համբերեցէք. *մերթ ’ի նախա-
տինս և ’ի նեղութիւնս խայտառակեալք,
մերթ կցորդք այնպիսեաց վաստակաւո-
34 րացն լինել։ *Քանզի և ընդ կապեալս
չարչարեցարուք, և զյափշտակութիւն ըն-
չից ձերոց խնդութբ ընկալարուք. քանզի
գիտէիք թէ լաւագոյն ևս ստացուած
ունիք անձանց յերկինս՝ ուր կանն և
35 մնան։ *Արդ մի՛ մերժէք ’ի ձէնջ զհա-
մարձակութիւն ձեր, յորում կայ մեծաց
36 վարձուց հատուցումն։ *Պիտոյ է ձեզ
համբերութիւն. զի զկամս այ արարեալ՝
37 հասջիք աւետեացն։ *Զի փոքր մի ևս
ևս քան որչափ՝ որ գալոցն իցէ՝ եկեսցէ,
38 և ոչ յամեսցէ։ *Զի արդարն իմ ’ի
հաւատոց կեցցէ. և եթէ յերկմիտս ոք
իցէ, ոչ հաճեսցի ընդ նա անձն իմ։
39 *Բայց մեք ոչ եթէ երկմտութբ եմք ’ի
կորուստ. այլ հաւատովք ’ի փրկութիւն
հոգւոց։

## ԳԼ. ԺԱ.

1 Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ՝ յուսա-
ցելոց իրաց հաստատութիւն, և յան-
2 դիմանութիւն՝ որոց ոչն երևին։ *Զի նովաւ
3 վկայեցան առաջինքն. *Հաւատովք
իմանամք հաստատեալ զյաւիտեանսն
բանիւն այ, յաներևութից զերևելիսս
եղ.

եղեալ։ * Հաւատովք լաւ պատարագս 4
Հաբէլ քան զԿայէն մատուցանէր այ՟, ո-
րով վկայեցաւ իսկ արդար լինել. զի 'ի
վերայ պատարագացն եղև նմա վկայու-
թիւն այ՟. զի թէպէտ և մեռաւ 'ի նմին, սա-
կայն տակաւին խօսի։ * Հաւատովք Ե- 5
նովք փոխեցաւ՝ զի մի՛ զմահ ճաշակես-
ցէ. և ոչ ուրեք գտանէր, քանզի փոխեաց
զնա ա՟ծ. և յառաջ քան զփոխելն նորա՝
վկայեցաւ հաճոյ լինել այ՟։ * Այլ ա- 6
ռանց հաւատոյ անհնար է հաճոյ լինել.
այլ հաւատալ արժան է այնմ որ մերձե-
նայ առ ա՟ծ՝ թէ է՛ ա՟ծ. և որ խնդրեն
զնա՝ լինի պարգևատու, * Հաւատովք 7
առեալ հրաման Նոյի՝ վա՟ չև ևս երևե-
լեացն՝ զահի հարեալ կազմէր զտապանն
'ի փրկութի՟ տան իւրոյ, որով դատեցաւ
զաշխարհ. և հաւատոյն արդարութե՟
եղև ժառանգաւոր։ * Հաւատովք՝ որ 8
աբրահամն կոչեցաւ՝ ունկնդիր եղև ելա-
նել 'ի տեղին, զոր առնլոց էր 'ի ժառան-
գութի՟. ել գնաց՝ և ոչ գիտէր յո՛ւր եր-
թիցէ։ * Հաւատովք պանդխտեցաւ 9
յերկրին աւետեաց իբրև յօտարութե՟.
խորանօք բնակեաց սահակաւ և յակով-
բաւ հանդերձ՝ ժառանգակցօք նոցին ա-
ւետեաց։ * քանզի ակն ունէր հիմամբք 10
հաստատելոյ քաղաքին, որոյ ճարտա-
րապետ և արարիչ ա՟ծ է։ * Հաւատովք 11
և ինքն սառա՝ որ ամուլն էր, զօրութիւն

առն

առնլոյ զսերմն որդեծնութեն՝ ընդունէր,
և 'ի տարաժամ հասակի ծնանէր. քանզի
հաւատարիմ համարեցաւ զայն՝ որ խոս_
12 տացաւն: * Վասն որոյ և 'ի միոջէն ծնա_
նէին, և այն 'ի յանցեալ ժամանակի,
իբրև զաստեղս երկնից բազմութբ, և
իբրև զաւազ առ ափն ծովու առանց թը
13 ւոյ: * Ի սա հաւատոց մեռան ամենե
քին սոքա ; և չև և՛ս ընկալեալ զաւետի
սըն. այլ 'ի հեռուստ տեսին զնս՝ և ցըն_
ծացան, և խոստովան եղեն՝ եթէ օ_
14 տարք և պանդուխտք են յերկրի: * Ո՛ր
ոյք զայնպիսին խօսին, յայտ առնեն՝
15 եթէ գաւառ իմն խնդրեն: * Զի եթէ
զայն յիշէին՝ ուստի ելինն, գոյր ժամա
16 նակ դառնալոյ անդրէն: * Նա աւանիկ
ազնուականի իմն ցանկացեալ են, այս_
ինքն է՝ երկնաւորին. վասն որոյ ոչ ա_
մօթ համարի ած՝ կոչել նց ած. քանզի
17 պատրաստեաց նոցա քաղաք: * Հաւա
տովք մատոյց աբրահամ 'ի փորձութն
իւրում զիսահակ պատարագ. և զմիա
մօրն մատուցանէր, որոյ զաւետիսն ըն_
18 կալեալ էր. * որում ասացաւն, թէ
19 սահակաւ կոչեսցի քեզ զաւակ. * եդ
'ի մտի իւրում թէ և 'ի մեռելոց կարօղ
է յարուցանել ած. ուստի և յառակս
20 ընկալաւ զնա: * Հաւատովք՝ վն հան_
դերձելոց իրաց օրհնեաց իսահակ զյա
21 կոբ և զեսաւ: * Հաւատովք յակովբ
'ի

՚ի մեռանել իւրում, զիւրաքանչիւրոք
յորդւոցն յովսեփու օրհնեաց, եւ երկիր
եպագ ՚ի ծայր գաւազանի իւրոյ։ * Հա- 22
ւատովք յովսէփ ՚ի վախճանել իւրում
յիշեաց զելս որդւոցն իսրայէլի, եւ վ̃ն
ոսկերաց իւրոց պատուիրեաց։ * Հա- 23
ւատովք՝ զմովսէս իբրեւ ծնաւ, թաքու-
ցաւ ամիս երիս ՚ի հարց իւրոց. քանզի
տեսին կայտառ զմանուկն, եւ ոչ զան-
գիտեցին ՚ի հրամանէ թագաւորին.
* Հաւատովք մովսէս իբրեւ աճեաց՝ ու- 24
րացաւ կոչել որդի դստերն փարաւոնի.
* լաւ համարեցաւ չարչարել ը̃ն ժողովր 25
դեանն ա̃յ, քան առժամանակ մի վայե
լել ՚ի մեղս։ * Կարեւոր համարեցաւ ըզ 29
նախատինս ք̃ի, քան զմեծութի̃ գան-
ձուցն եգիպտացւոց. զի հայեցեալ ակն
ունէր վարձուցն հատուցման։ * Հաւա 27
տովք թողոյր զերկիրն եգիպտացւոց, եւ
ոչ երկնչէր ՚ի ցասմանէ թագաւորին.
զի զաներեւոյթն իբրեւ զտեսեալ համ-
բերութ̃ համարեցաւ։ * Հաւատովք ա- 28
րար զզատիկն եւ զհեղումն արեանն. զի
մի՛ սատակիչ անդրանկացն մերձեսցէ
՚ի նո̃. * Հաւատովք անցին ընդ ծովն 29
կարմիր՝ իբրեւ ը̃ն ցամաք երկիր. զորոյ
զփորձ առեալ եգիպտացւոցն՝ ընկղմե
ցան։ * Հաւատովք պարիսպքն երիքովի 30
անկան, շուրջ եկեալ զնոքօք զեօթն օր։
* Հաւատովք ռախաբ պոռնիկ ոչ կորեաւ 31

ընդ անհաւատսն , որոյ ընկալեալ էր
32 զլրտեսսն խաղաղութ̃բ ։ * Եւ արդ՝
զինչ ևս ասացից . զի չէ՛ բաւական ժա-
մանակս պատմելոյ վասն Գեդէովնի Բա-
րակայ Սամփսովնի Յեփթայեայ՝ Դաւթի
33 և Սամուէլի և այլոց մարգարէիցն . * որք
հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս .
գործեցին զարդարութիւն . հասին աւե-
34 տեաց . խցին զբերանս առիւծուց . * շի-
ջուցին զզօրութիւն հրոյ . ապրեցան ՚ի բե-
րանոյ սրոյ . զօրացան ՚ի տկարութ̃է .
եղեն զօրաւորք ՚ի պատերազմի . առին
35 զբանակս օտարաց ։ * Ընկալան կանայք
՚ի յարութ̃է զմեռեալս իւրեանց . կէսք
կոշկոճեցան՝ և ոչ ևս ընկալեալ զփրկու-
թ̃ի , զի լաւագոյն յարութ̃են հասանի-
36 ցեն ։ * Եւ կէսք զտանջանաց և զգանից
զփորձ առին , զկապանաց և զբանտից ։
37 * Քարկոծեցան , սղոցեցան , փորձե-
ցան . սպանմամբ սրոյ մեռան . շրջեցան
լեաշկ մաշկօք՝ և մորթովք այծենեօք .
կարօտեալք , նեղեալք , չարչարեալք .
38 * զորս ոչ արժէ աշխարհս . յանապատս
մոլորեալք՝ և ՚ի լերինս՝ և յայրս՝ և ՚ի
39 փապարս երկրի ։ * Եւ սոքա ամենեքին
վկայեալք ՚ի հաւատոցն , ոչ ևս ընկա-
40 լան զաւետիսն ։ * Այ̃ վ̃ս մեր լաւագոյն
համարեալ , զի մի՛ առանց մեր կատա-
րեսցին ։

## ԳԼ. ԺԲ.

Այսուհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ 1
զմեօք մածեալ ունիմք զբազմութիւն
վկայից, զհպարտութիւն զամենայն ՚ի բաց ըն-
կեսցուք՝ եւ զմեղս կարեւորս. համբերու-
թեամբ ընթասցուք ՚ի պատերազմ՝ որ ա-
ռաջի կայ մեզ։ * Հայեսցուք ՚ի զօրագլ- 2
ուխն հաւատոց՝ եւ ՚ի կատարիչն Յիսուս. որ
փոխանակ ուրախութեանն՝ որ նմա առաջի
կայր, յանձն առ զխաչն, արհամար-
հեաց զամօթ, նստաւ ընդ աջմէ աթոռոյն
Աստուծոյ։ * Արդ՝ ածէք զմտաւ, որ զայսպի- 3
սի համբերութիւն ՚ի մեղաւորաց հակառա
կութենէ անտի կրեաց. զի մի՛ աշխատ լինի
ցիք անձամբք ձերովք՝ եւ լքանիցիք։ * Ոչ ե- 4
ւս արեամբ չափ պատերազմեալք՝ հա-
կառակ կացէք մեղացն. * եւ մոռացա 5
րուք զմխիթարութիւնն, որ ընդ ձեզ իբրեւ
ընդ որդեակս խօսի.
Գ Որդեակ իմ՝ մի՛ լքանիր ՚ի խրատու Տեառն.
եւ մի՛ վհատիցիս՝ յանդիմանեալ ՚ի նմա-
նէ։ * Զի զոր սիրէ Տէր՝ խրատէ, տան- 6
ջէ զամենայն որդի՝ զոր ընդունի։ * ՚Ի խրա 7
տու համբերութեան կայք, իբրեւ յորդիս
մատուցեալ է ՚ի ձեզ Աստուած. ո՞ր որդի է՝
զոր ոչ խրատիցէ հայր։ * Ապա եթէ ա- 8
ռանց խրատու լինիցիք, որում ամենեքին
բաժանորդք եղեն. ապա խորդք իցէք՝
եւ ոչ որդիք։ * Ապա եթէ ՚ի մարմնա- 9
ւոր

ւոր հարցն մերոց՝ զոր ունէաք խրատիչս՝
պատկառէաք, ո՛րչափ ևս առաւել հնա-
զանդեսցուք Հօրն հոգւոց՝ և կեցցուք։
10 * Զի նոքա առ սակաւ ժամանակս ըստ
կամաց իւրեանց խրատէին. իսկ նա վասն
օգտի, առ 'ի ընդունելոյ զսրբութիւն նորա։
11 * Ամենայն խրատ առ ժամանակն ոչ
ուրախութեան թուի՝ այլ տրտմութեան. բայց
յետոյ պտուղ խաղաղութեան նովաւ կրթե-
12 լոցն հատուցանէ յարդարութեան։ * Վասն
որոյ զձեռս լքեալս՝ և զծունկս կթոտս
13 հաստատեցէք. * և շաւիղս ուղի՛ղս ա-
րարէք ոտից ձերոց. զի մի՛ որ կաղն իցէ՝
գլորեսցի, այլ մանաւանդ բժշկեսցի։
14 * Զխաղաղութեան զհետ երթայք ընդ ամե-
նեսին՝ և զսրբութեան. առանց որոյ ոչ ոք
15 տեսանիցէ զՏէր։ * Զգոյշ լերուք՝ գու-
ցէ ոք յետնեալ գտանիցի 'ի շնորհացն
Այ։ Մի՛ ոք արմատ դառնութեան 'ի վեր
երևեալ նեղիցէ, և նովաւ բազումք պղծի-
16 ցին։ * Մի՛ ոք պոռնիկ և պիղծ իբրև
զԵսաւ. որ ընդ միոյ կերակրոյ զանդրան-
17 կութիւն վաճառեաց։ * գիտէք՝ զի թէ-
պէտ և յետոյ կամեցաւ ժառանգել զօրհ-
նութիւնն, խոտան գտաւ, զի ապաշխարու-
թեան տեղի ոչ եգիտ. թէպէտ և արտասու-
օք խնդրեաց զնա։

18 * Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօ- Դ.
շափելի, որ հրոյն վառեալ էր՝ և միգով
և մառախղով և խաւարաւ և մրրկաւ.



* ուր

* ուր փողն հնչէր և բարբառ պատգա_ 19
մացն . ուստի՝ որք լուանն՝ հրաժարեցին,
զի մի՛ կրկնեսցի առ նս բանն : * Քանզի 20
ոչ հանդուրժէին հրամանին . թէպէտ
և գազան մերձենայր ՚ի լեառն՝ քարկոծ
լինէր : * Եւ այնպէս ահագին էր տե_ 21
սիլն , զի և Մովսէս ասէր , եթէ զահի
հարեալ եմ և դողամ : * Այլ մատու_ 22
ցեալ էք ՚ի սիովն լեառն և ՚ի քաղաք այ
կենդանւոյ՝ յէեմ յերկինս , և ՚ի բիւ_
րաւոր բանակս հրեշտակաց , * և յեկե 23
ղեցիս անդրանկաց գրելոց յերկինս , և
առ դատաւորն ամենեցուն ած , և յո_
գիս արդարոց կատարելոց . * և ՚ի նորոց 24
կտակարանաց միջնորդն յս , և ՚ի հե_
ղումն արեան նր՝ որ առաւել խօսի քան
զհաբելին :
* Զգոյշ լերուք գուցէ հրաժարիցէք 25
յայնմանէ՝ որ խօսեցաւն . զի եթէ նո_
քա ոչ կարացին զերծանել հրաժարեալք
յայնմանէ՝ որ յերկրին հրաման տայր .
որչափ ևս առաւել մեք , եթէ յերկնա_
ւորէն թիկունս դարձուցանիցեմք : * Ո_ 26
րոյ ձայնն զերկիր շարժեաց յայնժամ .
և այժմ խոստացեալ է՝ և ասէ . միւսան_
գամ շարժեցից ոչ միայն զերկիր՝ այլ և
զերկինս : * Այլ միւսանգամն յայտ 27
առնէ զշարժելոցն իբրև զեղելոց փո_
փոխումն , զի հաստատունն կացցեն ան_
շարժքն : * Վն որոյ թագաւորութեան ան_ 28

շարժ ընկալեալ, պինդ կալցուք զշնորհսն,
որով պաշտեմք զԱծ հաճութեամբ՝ ահիւ և
29 դողութեամբ. *քանզի Ած մեր հուր ծա-
խիչ է.

## ԳԼ. ԺԳ.

1 Եղբայրասիրութիւն հաստատեսցի առ
2 ձեզ. *Օտարասիրութիւն մի՛ մոռա-
նայք. զի այնու ոմանք յանգէտս ընկա
3 լան զհրեշտակս. *Յիշեցէք զկա-
պեալսն՝ որպէս թէ դուք ընդ նոսին կապեալ է-
ցէք. և զչարչարեալսն, որպէս և դուք իսկ
4 մարմնաւոր էք. *Պատուական է ամուս
նութիւն ամենեքին՝ և սուրբ անկողինք.
բայց զշունս և զպոռնիկս դատի Ած.
5 *Նիստք անարծաթասէրք լինիցին, բա-
ւական համարել որչափ ինչ ՚ի ձեռս է-
ցէ. քանզի ինքն իսկ ասաց. ոչ թողից
6 զքեզ՝ և ոչ ընդ վայր հարից. *որպէս համար
ձակ լիցուք ասել. Տր է իմ օգնական,
և ես ոչ երկեայց, զի՛ արասցէ ինձ մարդ.
7 *Յիշեցէ՛ք զառաջնորդս ձեր որ խօսե
ցան ձեզ զբանն այ. հայեցեալք յելս գնա
ցից նց՝ նմանօղք եղերուք հաւատոցն.
8 *Յս քս երէկ և այսօր, նոյն և յաւի
9 տեանս. *Յուսմունս պէսպէս և յօ-
տարաձայնս մի՛ դանդաղիք. զի լաւ է շը-
նորհօք հաստատել զսիրտս՝ և ոչ կերակ
րովք. որովք ոչի՛նչ օգտեցան՝ որ այն-
պէս գնացին.

*Ու

Է

* Ունիմք մեք սեղան, ուստի ոչ ունին 10
իշխանութի ճաշակել, որք պաշտոնն ըզ
պաշտօն խորանին: * Զի որոց անասնոց 11
մատչէր արիւնն ՚ի սրբութիւն վս մեղաց
՚ի ձեռն քահանայապետին, նոցուն մար-
մինքն այրէին արտաքոյ բանակին: * Վս 12
որոյ և յս՝ զի սրբեսցէ իւրով արեամբն
զժողովուրդն, արտաքոյ դրանն չարչա-
րեցաւ: * Արդ՝ եկայք ելցուք առ նա 13
արտաքոյ բանակին, առեալ յանձն ըզ
նախատինս նր: * Քանզի ոչ եթէ ու- 14
նիմք քաղաք՝ որ աստէն մնալոց իցէ, այլ
զհանդերձեալսն խնդրեմք: * Արդ՝ ՚ի 15
ձեռն նորա մատուսցուք պատարագ օրհ-
նութե յամ ժամ այ· այսինքն է՝ զպտ
տուղ շրթանց խոստովանելոց յանուն նո-
րա: * Զբարերարութի և զհաղորդութի 16
մի՛ մոռանայք, զի ընդ այնպիսի պատարագս
հաճի այ: * Ունկնդիր լերուք առաջ- 17
նորդաց ձերոց, և հպատակ կացէք նց·
զի նոքա տքնին վս ոգւոց ձերոց՝ որպս թէ
համարս տալոց իցեն ընդ ձեր· զի խնդու-
թբ արասցեն զայն՝ և մի՛ յոգւոց հանե-
լով· զի այն ոչ յօգուտ ձեր է:

ԿԻՐ

* Աղօթս արարէք վս մեր· զի հաստա- 18
տեալ գիտեմք եթէ բարւոք միտս ու-
նիմք· յամի կամիմք բարւոք գնացս ցու-
ցանել: * Եւ առաւել աղաչեմ՝ զի զայն 19
առնիցէք, զի վաղագոյն պատսպարեցայց
ձեզ: * Եւ այ խաղաղութե՝ որ եհան ՚ի 20
մե

մեռելոց զհովիւն հօտից զմեծն արեամբ
յաւիտենական ուխտին զՏէր մեր Յս,
21 * հաստատեսցէ զձեզ 'ի գործս բարու-
թեան՝ առնել զկամս նորա. և արասցէ 'ի
մեզ զհաճոյսն առաջի իւր 'ի ձեռն Յսի
Քսի. որում փառք յաւիտեանս. ամէն.
22 * Աղաչեմ զձեզ եղբարք՝ անսալ բանիս
մխիթարութեան. քանզի սակաւուք գրեցի
23 ձեզ. * Եւ ծանիջիք զեղբայրն մեր զՏի-
մոթէոս զարձակեալն առ ձեզ. Ընդ ո-
րում, եթէ վաղագոյն գայցէ՝ տեսից զ-
24 ձեզ. * Ողջոյն տաջիք ամենայն առաջ-
նորդաց ձերոց, և ամենայն սրբոց. Ող-
ջոյն տան ձեզ՝ որ 'ի կողմանս Իտալա-
25 ցւոց են. * Շնորհք ընդ ամենեսին ձեզ.
ամէն.

Առ Եբրայեցիս՝ գրեցաւ յԻտալիոյ 'ի ձեռն Տի-
մոթէոսի.

# ԹՈՒՂԹ
## ԿԱԹՈՂԻԿԷԱՅՑ
## ՅԱԿՈԲԱՅ ԱՌԱՔԵԼՈՅ
### ԳԼ. Ա.

ՅԱԿՈԲ ԱՍՏՈՒ 1
ծոյ և տն̃ յսի̃ քսի̃ ծառայ. եր-
կոտասան ազգացդ որ'ի սփիւռս
էք՝ ողջոյն: * Ամենայն ուրա 2
խութիւն արժանի համարեսջիք եղբարք,
յորժամ 'ի պէսպէս փորձութիւնս 'ի մէջ
անկանիցիք. * Գիտասջի՛ք զի հանդէս 3
ձերոյ հաւատոցն յօրինեալ գործէ զհ-
համբերութիւն: * Իսկ համբերութիւն գործ 4
կատարեալ ունիցի, զի իցէք ողջանդամք
և կատարեալք, և ոչ իւիք նուազեալք.
* Ապա թէ ոք 'ի ձէնջ իցէ նուազեալ 5
յիմաստութենէ, խնդրեսցէ յԱյ, որ տայն
ամի առատապէս՝ և ոչ նախատէ. և տա-
ցի նմա: * Այլ խնդրեսցէ հաւատովք՝ 6
և մի՛ երկմտեսցէ. զի որ երկմիտն է՝ նը-
ման է հողմակոծեալ և տատանեալ ա-
լեաց ծովու: * Մի՛ ակնկալցի մարդն 7
այն առնուլ ինչ յԱյ. * զի այր երկմիտ՝ 8
առանց հաստատութեան է յամ ճանապարհս
իւր.

9 իւր ։ * Պարծեսցի եղբայր խոնարհ ՚ի
10 բարձրութ իւր, * և որ մեծատունն իցէ
՚ի խոնարհութ իւր . քանզի իբրև զծա
11 ղիկ խոտոյ անցցէ . * զի ծագեաց արև
հանդերձ խորշակաւ՝ և ցամաքեցոյց ըզ
խոտն, և թօթափեցաւ ծաղիկն նր, և
կորեաւ վայելչութի երեսաց նր . նոյն
պէս և մեծատունն հանդերձ շահիւքն
12 իւրովք թարշամեսցի ։ * Երանի է այր
որ համբերիցէ փորձանաց . զի եթէ ըն
տիր ևս գտանիցի, առցէ զպսակն կե
նաց՝ զոր խոստացաւ սիրելեաց իւրոց ։
13 * Մի ոք որ ՚ի փորձութե իցէ, ասիցէ՝
թէ յայ փորձիմ . զի ած անփորձ է չա
14 րեաց . փորձէ նա և ոչ զոք . * իւրաքան
չիւրոք փորձի առ յիւրոցն ցանկութեց
15 ձգեալ և պատրեալ ։ * Ապա այնուհե
տև ցանկութին յղացեալ՝ զմեղս ծնանի .
16 և մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին ։ * Մի
17 խաբիք եղբարք իմ սիրելիք . * զի ամ
տուրք բարիք՝ և ամ պարգևք կատա
րեալք ՚ի վերուստ են իջեալ առ ՚ի հօրէն
լուսոյ . յորում չիք փոփոխումն՝ և կամ
18 շրջելոյ ստուեր ։ * Կամեցեալ ծնաւ ըզ
մեզ բանիւ ճշմարտութեն՝ լինել մեզ
19 պտուղ ինչ ստացուածոց նորա ։ * Գի
տասջիք եղբարք իմ սիրելիք ։ Եղիցի
ամ մարդ արագ առ ՚ի լսել, և ծանր առ
՚ի խօսել , և ծանր առ ՚ի բարկանալ .
20 Ի բարկութի մարդոյ զարդարութի այ
ոչ

ԱԵ

ոչ գործէ։ * Որով 'ի բաց թօթափեալ 21
զամենայն աղտեղութիւն և զյաւելուած չա-
րեաց, հեզութեամբ ընդունիջի՛ք զբանն ըն-
դաբոյս. որ կարողն է կեցուցանել զո-
գիս ձեր։ * Լինիջի՛ք առնելք բանին, և 22
մի՛ լսելիք միայն համարեսջիք զանձինս։
* Զի եթէ որ լսօղ միայն իցէ բանին՝ և 23
ոչ առնելի, նման է նա մարդոյ՝ որ դը-
շուցեալ հայիցի ընդ երեսս իւր՝ որ ծնա-
նիցն 'ի հայելւոջ. * զի հայեցեալ ետես 24
զինքն՝ և զանց արար, և անդէն մոռա-
ցաւ թէ որպիսի ոք էր։ * Իսկ որ յա- 25
ռեալ 'ի կատարեալ օրէնս ազատութեան
հայեցի՝ և 'ի նմին կացցէ, ոչ եղև նա լը-
սօղ մոռացութեան՝ այլ առնելի գործոյն. նա՝
յառնելն իւրում լիցի երանելի։ * Եւ- 26
թէ ոք կամիցի կրօնաւոր լինել՝ և ոչ
սանձահարիցէ զլեզու իւր՝ այլ զբաղե-
ցուցանիցէ զսիրտն իւր, այնպիսւոյն վայ
րապար է կրօնաւորութիւն։ * Կրօնաւո 27
րութի սուրբ և անարատ՝ առ 'ի յԱյ և 'ի
Հօրէ՝ այս է, այցելու լինել որբոց և այ-
րեաց 'ի նեղութեան իւրեանց, անարատ
պահել զանձն յաշխարհէ։

## ԳԼ. Բ.

Ա.Զ Եղբարք իմ, մի՛ աչառութեամբ ունիցիք ըզ- 1
հաւատսն Տն մերոյ յԻ քի, որ Տրն
է փառաց։ * Եթէ մտանիցէ 'ի ժողով 2
վուրդ ձեր այր՝ որ ունիցի մատանի ոսկի
և

և հանդերձս պայծառս, մտանիցէ անդր
և աղքատ ոք՝ ՚ի հանդերձս աղտեղիս,
3 * հայիցիք ընդ այն՝ որ ունիցի զհան-
դերձսն պայծառս, և ասիցէք՝ եթէ դու
նիստ աստ պատուով. և զաղքատն ասի
ցէք՝ եթէ յոտն կաց դու այդր, կամ թէ՝
եկ նիստ առ պատուանդանիս իմում.
4 * Ո՞չ խղճիցէք յանձինս՝ և լինիցիք դա-
5 տաւորք չարեացն խորհրդոց. * Լուա
րուք ինձ եղբարք իմ սիրելիք, ո՞չ ապա
քէն ած ընտրեաց զաղքատս աշխարհիս,
որ են մեծատունք հաւատովք, և ժա-
ռանգաւորք արքայութեան՝ զոր խոստա
6 ցաւ սիրելեաց իւրոց. * և դուք անար
գէք զաղքատս. Ո՞չ մեծատունքն յաղ
թահարեն զձեզ՝ և նոքա քարշեն զձեզ
7 ՚ի դատաստան. * ո՞չ նոքա հայհոյեն
զբարւոք անունն՝ որ կոչեցեալ է ՚ի վեր
8 ձեր. * Ապա թէ զօրէնսն կատարիցէք
զարքունականս ըստ գրոց, եթէ սիրեսցես
զընկեր քո իբրև զանձն քո, բարւոք առ-
9 նէք. * Իսկ եթէ աչառիցէք, մեղս գոր-
ծէք՝ յանդիմանեալք յօրինացն իբրև օ-
10 րինազանցք. * Որ ոք զամ օրէնսն պա-
հիցէ, և միով իւիք ինչ գթիցէ, եղև
11 ամ օրինացն պարտապան. * Զի որ ա-
սացն՝ թէ մի՛ սպանանիցես, ասաց թէ և
մի՛ շնայցես. զի եթէ սպանանիցես ո՛չ՝
բայց շնայցես, եղեր յանցաւոր օրինացն.
12 * Այնպէս խօսեցարուք՝ և այնպէս ա-



րա-

րարէք, որպէս զի ազատութեան օրինօքն իցէք
դատելոց: * Զի անողորմ դատաստան 13
լինելոց է այնմ, որ ոչ առնիցէ զողոր-
մութիւն. քանզի բարձրագլուխ պարծի ո-
ղորմութիւն առ դատաստանաւն:
ԸԵ * Զի՞նչ օգուտ իցէ եղբարք իմ, եթէ 14
ասիցէ ոք հաւատս ունել՝ եւ գործս ոչ
ունիցի. միթէ կարիցէ՞ն հաւատքն ապ-
րեցուցանել զնա: * Իսկ եթէ եղբայր ոք 15
կամ քոյր՝ իցեն մերկ կամ կարօտեալ ա-
ւուրն կերակրոյ, * ասիցէ ոք ի ձէնջ ցնո 16
սա. երթա՛յք խաղաղութեամբ, ջեռուրուք եւ
յագեցարուք. եւ տայցէք ոչ նոցա զպէտս
մարմնոյն, զի՞նչ օգուտ իցէ: * Այնպէս 17
եւ հաւատք եթէ գործս ոչ ունիցին, մե-
ռեալ են առանձինն: * Այլ թերեւս ա- 18
սիցէ ոք. եթէ դու հաւատս ունիս՝ եւ
ես գործս ունիմ. ցոյց ինձ զհաւատսն
քո առանց գործոց, եւ ես ցուցից քեզ ի
գործոցն իմոց զհաւատս: * Դու հա- 19
ւատաս՝ զի մի է Աստուած, բարւոք առնես.
եւ դեւք հաւատան՝ եւ սարսին: * Կամի՞ս 20
գիտել ով մարդ սնոտի, զի հաւատք ա-
ռանց գործոց դատարկ են: * Աբրահամ 21
հայր մեր ոչ ապաքէն ի գործոց արդա-
րացաւ՝ հանեալ ի սեղան զորդին իւր զԻ-
սահակ պատարագ: * Տեսանե՞ս՝ զի հա- 22
ւատքն եղեն գործակից գործոց նորա. եւ
ի գործոց անտի հաւատքն կատարեցան:
* Եւ կատարեցաւ գիրն՝ որ ասէ. հա 23
ւա

հաւատաց աբրահամ յա͞ծ, և համարեցաւ
նմա յարդարութի. և կոչեցաւ բարեկամ
24 ա͞յ: * Տեսանէ՞ք՝ զի 'ի գործոց արդարա
նայ մարդ՝ և ոչ 'ի հաւատոց միայն:
25 * Այնպէս և ռախաբ պոռնիկն ոչ ապա-
քէն 'ի գործոց արդարացաւ, ընկալեալ
զլրտեսսն՝ և ը͞ն այլ ճանապարհ արձա-
26 կեաց: * Որպէս մարմինն առանց
հոգւոյ մեռեալ է, այնպէս և հաւատք
առանց գործոց մեռեալ են:

## Գլ. Գ.

1 Մի՛ բազում վարդապետք լինել եղ- ԲԿ
բարք իմ, գիտասջի՛ք՝ զի մեծ դա-
2 տաստան ընդունելոց եմք. * Զի բազում
ինչ յանցանեմք ամենեքեան: Եթէ
ոք բանիւ ոչ յանցանիցէ՝ նա է մարդ
կատարեալ, որ կարօղ է սանձահարել
3 զա͞մ մարմին իւր: * Տես զի ձիոց սանձս
'ի բերան դնեմք՝ առ անսալոյ նց մեզ, և
4 զա͞մ մարմինս նց նուաճեմք: * Ահա
սիկ և նաւք որչափ մեծ են, և 'ի սաս-
տիկ հողմոց վարին. և փոքր թիովն շըր
ջին՝ յոր կոյս և միտք ուղղչին կամիցին:
5 * Այնպէս և լեզու փոքր ինչ անդամ
է՝ և մեծամեծս բարբառի. ահա և սա-
կաւ ինչ հուր զորչափ անտառս հրդե
6 հէ. * Եւ լեզու հուր՝ զարդ անիրաւ
ութե, լեզու հաստատեալ է յանդամս
մեր, որ զա͞մ մարմինն ապականէ, և
վա

վառէ հրով զանիւ ծննդեան, և բորբո
քեալ տոչորի 'ի գեհենէ։ * Ամենայն 7
բնութի գազանաց՝ և թռչնոց և սողնոց՝
և որ 'ի ծովու են, հնազանդեալ է՝ և
հնազանդի մարդկեղէն բնութեան։ * Բայց 8
զլեզու մարդկան ոչ ոք կարէ հնազան_
դել՝ չար և զանկարգ՝ և լի թունոք
մահաբերիւ։ * Նովաւ օրհնեմք զՏէրն 9
և զՀայր, և նովաւ անիծանեմք զմար_
դիկ որ ըստ նմանութեան Այ արարան։ * 'Ի 10
նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք և ա_
նէծք։ ոչ է պարտ եղբարք իմ՝ այսմ
այսպէս լինել։ * Միթէ աղբիւր ան_ 11
դաւոյն 'ի միոյ ակնէն բղխիցէ՞ քաղցր
և դառն։ * Միթէ մարթ ինչ իցէ եղ 12
բարք իմ՝ թզենւոյ ձէթ բերել, կամ
որթոյ՝ թուզ, և ոչ աղտաղտին աղւոյ
ջուր քաղցր առնել։
ԲԲ * Ով իցէ իմաստուն և հանճարեղ 'ի 13
ձեզ, ցուսցէ 'ի բարւոք գնացից զգործս
իւր հեզութեամբ իմաստութեան։ * Ապա է_ 14
թէ նախանձ՝ և դառնութի և հակառա
կութի ունիցիք 'ի սիրտս ձեր, մի պարծիք
սուտ առնել զճշմարտութիւն։ * Ոչ է 15
իմաստութիւս այս իջեալ 'ի վերուստ, այլ
երկրաւոր՝ շնչաւոր՝ և դիւական։ * զի 16
ուր հեռ և նախանձ, անդ է անկարգու
թի՝ և ամ իրք չարք։ * Իսկ վերին է_ 17
մաստութիւն, նախ զի սուրբ է՝ ապա խա_
ղաղարար, հեզ՝ դիւրահաւան՝ լի ողոր
մու

մութե՛ եւ պտղովք բարեաց, անխիղճ,
18 առանց կեղծաւորութեան։ * Պտուղ ար-
դարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝
որ առնեն զխաղաղութիւն։

## ԳԼ. Դ.

1 Ուստի՞ պատերազմունք՝ եւ ուստի՞ կռ-
ուիք ՚ի ձեզ. ո՞չ յայսպիսի ցանկու-
թեանց ձերոց՝ որ զօրացեալ են յանդամս
2 ձեր։ * Ցանկանայք՝ եւ ո՛չ ունիք. սպա-
նանէք եւ նախանձիք՝ եւ ո՛չ կարէք հաս-
նել. պատերազմիք կռուիք՝ եւ ո՛չ ունիք,
3 վ՟ն զի ո՛չ խնդրէք։ * Խնդրէք՝ եւ ո՛չ առ-
նուք, վասն զի չարաչար խնդրէք. զի
անդ էն ՚ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք։
4 * Շնացողք՝ ո՞չ գիտէք՝ զի սէր աշխար-
հիս այսորիկ թշնամութիւն է առ ա՟ծ. զի
որ ոք կամիցի սիրել զաշխարհ՝ թշնամի
5 առնէ զանձն իւր ա՟յ։ * Կամ թէ վայ-
րապար համարիցիք՝ զոր ասէ գիրն. առ
նախանձ ինչ՝ տրուփ փափագէ հոգին՝ որ
6 բնակեաց ՚ի մեզ, * տայ զառաւել շը-
նորհս, վ՟ն որոյ ասէ. ա՟ծ ամբարտա-
ւանից հակառակ կայ, տայ շնորհս խո-
նարհաց։
7 * Հնազանդեցարո՛ւք այսուհետեւ ա՟յ, եւ ԲԳ
կացէ՛ք հակառակ չարախօսին. եւ լիցի
8 փախստական առ ՚ի ձէնջ։ * Մերձեցա-
րո՛ւք առ ա՟ծ՝ եւ մերձեսցի առ ձեզ։ Սըր-
բեցէ՛ք զձեռս մեղաւորք, եւ ուղի՛ղ ա-
րա

սրբեցէք զսիրտս՝ երկմիտք։ * Տառապե- 9
ցարո՛ւք՝ սգացարո՛ւք և լացէ՛ք։ Ծաղր ձեր
՚ի սուգ դարձցի, և ուրախութի՛ ձեր ՚ի
տրտմութի՛։ * Խոնարհեցարո՛ւք առաջի 10
ա՛ն՝ և բարձրացուսցէ զձեզ։ * Մի՛ բամ_ 11
բասէք զմիմեանս եղբարք։ որ բամբա_
սէ զեղբայր՝ կամ դատի զեղբայր իւր,
զօրէնսն բամբասէ՝ և զօրէնսն դատի։
Իսկ եթէ զօրէնսն դատիցիս՝ ոչ առնելի
օրինացն ես՝ այլ դատաւոր։ * Մի՛ է օ_ 12
րէնսդիր և դատաւոր՝ որ կարօղն է փրկ
կել և կորուսանել։ * դու ո՞ ես՝ որ դա_ 13
տիս զընկերն։ Ահաւասիկ են, որ ա_
սեն։ այսօր՝ և վաղի՛ն երթիցուք յայս ա_
նուն քաղաք, եղիցուք անդ տարի մի,
վաճառեսցուք՝ և շահեսցուք։ * որք ոչ 14
գիտէք զվաղի՛ն, * ո՞րպիսի ինչ են 15
կեանք ձեր։ զի իբրև զմրրիկ էք, որ առ
սակաւ մի երևեալ՝ և ապա ապականեալ,
փոխանակ զի ասէիք՝ եթէ տէր կամեսցի՝
և կեցցուք, արասցուք զայս ինչ՝ կամ
զայն։ * Իսկ արդ՝ պարծիք յամբարտա 16
ւանութե̃ ձերում։ ա̃մ ինչ այսպիսի, պար_
ծանք չարութե̃ են։ * Որք գիտիցէ զբա 17
րին՝ և ոչ առնիցէ, մեղք են նմա։

## ԳԼ. Ե.

ԲԴ Արդ՝ այսուհետև մեծատունք լացէ՛ք և 1
ողբացէ՛ք ՚ի վ̃ր թշուառութեցն, որ
գալոց են ՚ի վ̃ր ձեր։ * Զի մեծութի̃ 2
ձեր

ձեր յոչինչ է, եւ հանդերձք ձեր կերա-
3 կուր ցեցոյ ։ * Արծաթ ձեր եւ ոսկի ժան-
գահար, եւ ժանգ նոցա լիցի ձեզ ՚ի վկայ-
ութիւն, եւ կերիցէ զմարմինս ձեր ։ իբրեւ
4 զհուր գանձեցէք աւուրցն յետնոց ։ * Ա-
հաւասիկ վարձք մշակացն՝ որ գործեցին
զանդս ձեր առ ձեզ են. զրկեալն ՚ի ձէնջ
աղաղակէ, եւ բողոք հնձողացն եհաս
5 յականջս Տն զօրութեց ։ * Փափկացայք
՚ի վր երկրի՝ եւ զբօսայք. սնուցէք զսիր-
6 տս ձեր իբրեւ աւուր սպանման ։ * Օ ըր-
կեցիք սպանիք զարդարն, որ ոչ կայր ձեզ
7 հակառակ ։ * Երկայնամիտ լերուք եղ-
բարք իմ մինչեւ ՚ի գալուստն Տն. ահա
մշակ երկայնամտեալ սպասէ պատուա-
կան պտղոյն երկրի, մինչեւ առցէ զկա-
8 նուխ եւ զանագան ։ * Երկայնամտեցէք
եւ դուք, եւ հաստատեցէք զսիրտս ձեր.
9 զի գալուստն Տն մերձեալ է ։ * Մի՛ տրտ-
մեցուցանէք զմիմեանս եղբարք, զի մի՛
դատիցիք. ահաւասիկ դատաւորն առ-
10 դուրս կայ ։ * Օրինակ առէք եղբարք՝
չարչարանաց եւ երկայնմտութե զմարգա-
11 րէսն, որ խօսեցան յանուն Տն ։ * Ահա-
ւասիկ երանեմք համբերողաց. զհամ-
բերութի Յոբայ լուարուք՝ եւ զկատա-
րումն Տն տեսէք. զի բազմագութ է Տր
եւ ողորմած ։
12 * Յառաջ քան զամենայն եղբարք իմ, մի՛
երդնուցուք՝ մի՛ յերկինս՝ մի՛ յերկիր՝ մի՛

յայլ ինչ երդումն, այլ եղիցի ձեր այոն
այո, և ոչն՝ ոչ. զի մի՛ ՚ի կեղծաւորութ
ինչ անկանիցիք։ * Նեղանայցէ ոք ՚ի 13
ձէնջ, յաղօթս կացցէ. բերկրեսցի ոք,
սաղմո՛ս ասասցէ։ * Հիւանդանայցէ ոք 14
՚ի ձէնջ՝ կոչեսցէ զերիցունս եկեղեցւոյն՝
և արասցեն ՚ի վր նր աղօթս, օծցեն իւ-
ղով յանուն տն. * և աղօթքն հաւա- 15
տովք փրկեսցեն զաշխատեալն, և յա-
րուսցէ զնա տր. և եթէ մեղս ինչ իցէ
գործեալ՝ թողցի նմա։ * Խոստովան ե- 16
ղերուք միմեանց զմեղս, և աղօ՛թս արա
րէք ՚ի վր միմեանց՝ որպ զի բժշկեսջիք.
քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդա-
րոց յօգնականութի. * Եղիա մարդ էր 17
իբրև զմեզ չարչարելի. և յաղօթս ե-
կաց՝ և ոչ տեղաց յերկիր զերիս ամս և
զվեց ամիս։ * Եւ դարձեալ եկաց յա- 18
ղօթս՝ և ետուն երկինք զանձրև՝ և բու-
սոյց երկիր զպտուղ իւր։ * Եղբա՛րք իմ, 19
եթէ ոք ՚ի ձէնջ մոլորիցի ՚ի ճշմարտութ
ճանապարհէն՝ և դարձուցէ ոք զնա.
* գիտասցէ՛, զի որ դարձուցէ զմեղա- 20
ւորն ՚ի մոլորութե ճանապարհէն իւրմէ,
փրկեսցէ զոգի իւր ՚ի մահուանէ՝ և ծած-
կեսցէ զբազմութի մեղաց.

# ԹՈՒՂԹ
## ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
# ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌԱՋԻՆ.
## ԳԼ. Ա.

1 ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼ
Յիսուսի Քրիստոսի, ընտրելոց նժդե-
հից, որ 'ի սփիւռս պոնտաց-
ւոց գաղատացւոց եւ կա-
պադովկեցւոց եւ ասիացւոց եւ բիւթանա
2 ցւոց, * ըստ կանխագիտութեան Աստուծոյ Հօր.
սրբութեամբ հոգւոյն, 'ի հնազանդութիւն
եւ 'ի հեղումն արեանն Յիսուսի Քրիստոսի. շնորհք
3 ընդ ձեզ եւ խաղաղութիւն բազմասցի։ * Օրհ-
նեալ է Աստուած եւ հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ
զմեզ վերստին 'ի յոյսն կենդանի. 'ի
ձեռն յարութեան Յիսուսի Քրիստոսի 'ի մեռելոց,
4 * յանեղծ եւ յանարատ եւ յանթառամ
ժառանգութիւն որ պահեալ է յերկինս
5 'ի ձեզ. * որ զօրութեամբն Աստուծոյ պահեալ էք
հաւատովք 'ի պատրաստեալ փրկութիւն,
6 յայտնեալ 'ի յետին ժամանակս. * Ո-
րով ուրախ լինիջիք՝ որ այժմ սակաւ ին

ինչ ը̄ պատշաճի խրատու տրտմեալ էք ՚ի
պէսպէս փորձութիւնս։ * Զի հանդէս ձե- 7
րոյ հաւատոցն առաւել քան զոսկի կոր-
ստական պատուական է. որ հրով փոր-
ձեալ գտու ՚ի գովութի̃ և ՚ի փառս, և
՚ի պատիւ ՚ի յայտնութե̃ն յ̃ի ք̃ի։ * Զոր 8
ոչն տեսէք՝ և սիրեցէք. ը̄ որ այժմ ոչ
հայեցեալք՝ բայց հաւատացէք. և ու-
րախ էք անձառ և փառաւորեալ խնդու-
թե̃ն. * ընկալեալ զկատարումն հաւա- 9
տոցն ձերոյ զոգւոյն փրկութի̃։ * Վասն 10
որոյ փրկութե̃ խնդրեցին և քննեցին մար-
գարէքն. որք վ̃ն որոյ ՚ի ձեզ լինելոց էին
շնորհքն՝ մարգարէանային. * քննէին 11
յորում և յորպիսի ժամանակի գուշա-
կէր ՚ի նո̃ հոգին ք̃ի. որ նախ զչարչա-
րանացն ք̃ի վկայէր՝ և յետ այնորիկ՝ ըզ-
փառացն. * Որոց և յայտնեցաւ իսկ. զի 12
ոչ եթէ անձանց, այլ մեզ մատակարարք
լինէին նոցին. որք այժմ պատմեցան
այնոքիւք, որ աւետարանեցինն ձեզ հո-
գւովն սրբով, որ առաքէլն յերկնից.
զոր ցանկային տեսանել գոնեայ ընդ ա-
ղօտ հրեշտակք.
ԲԷ * Որով պնդեալ զմէջս մտաց ձերոց՝ զը- 13
ուարթացեալք բովանդակ սպասեցէ՛ք
հասելոցն ձեզ շնորհաց ՚ի յայտնութեն
յ̃ի ք̃ի, * իբրև զորդիս հնազանդու- 14
թե̃. մի՛ կերպարանեալք առաջին ձերովք
անգիտութեն ցանկութե̃ք. * այլ ըստ 15
որյն

բոյն որ կոչեաց զձեզ՝ եւ դուք սուրբք
16 յամ գնացս ձեր լինիջիք։ * Վասն որոյ
գրեալ է, եթէ եղերուք սուրբք զի ես սբ
17 եմ։ * Եւ եթէ հայր կոչիցէք զայն, որ
առանց աչառութեան դատի ըստ իւրաքան
չիւր գործոց. ապա երկիւղիւ զձերոյն
պանդխտութեան ժամանակս գնասջիք։
18 * Գիտասջիք, զի ոչ ապականացու ար-
ծաթեղինօք՝ եւ ոսկեղինօք փրկեցա-
րուք ՚ի ձերոց ունայնութե հայրենաւանդ
19 գնացիցն. * այլ պատուական արեամբն
քի, իբրեւ անբիծ եւ անարատ գառին։
20 * Որ յառաջագոյն ծանօթն էր՝ նախ քան զլի-
նելն աշխարհի. եւ երեւեցաւ ՚ի վախ-
21 ճան ժամանակաց վս ձեր. * Որք նովաւ
հաւատացէք յած՝ որ յարոյց զնա ՚ի մե-
ռելոց, եւ ետ նմա փառս. զի հաւատքն
22 ձեր եւ յոյս իցեն յած։ * Զանձինս ձեր
սրբել հնազանդութեամբ ճշմարտութեան,
յեղբայրսիրութե առանց կեղծաւորու-
թե, ՚ի սուրբ սրտէ սիրել սիրովն զմի-
23 մեանս։ * Ծնեալք վերստին ոչ յապա-
կանութե սերմանէն. այլ յանապականա-
ցուէն, կենդանի եւ մշտնջենաւոր բա-
24 նիւն այ։ * Զանզի ամ մարմին իբրեւ
զխոտ է. եւ ամ փառք մարդոյ իբրեւ ըզ
ծաղիկ խոտոյ. խոտն ցամաքեցաւ՝ եւ
25 ծաղիկն թօթափեցաւ. * Եւ բանն տն մնայ
յաւիտեան. այս ինքն է բանն, որ ՚ի ձեզ
աւետարանեցաւ։

## ՊԵՏ. Ա.

ԳԿ Ի բաց թօթափել այսուհետև զամ 1
չարութի՝ և զամ նենգութի և զըղ-
կեղծաւորութիս և զնախանձ, և զամ
չարախօսութի. * Իբրև զարդի ծնեալ 2
մանկունս խօսունս. և անխարդախ կա-
թինն փափաքիցեք, զի նովաւ աճիցեք
ի փրկութի. * Եթէ ճաշակիցեք՝ զի 3
քաղցր է տր. * Առ որ մատուցեալ ի 4
վէմն կենդանի, որ թէպէտ ի մարդկա
նէ անարգեալ. այլ առ ի այ ընտրեալ
և պատուական է. * և դուք իբրև զվէմս 5
կենդանիս շինիք տաճար հոգևոր յանա-
րատ քահանայութի, մատուցանել զհո-
գևորն պատարագս՝ հաճոյս այ, ի ձեռն
յի քի. * Վասնզի կայ խօսք ի գիր, թէ 6
Ահաւասիկ դնեմ ի սիովն վէմ ընտիր՝
գլուխ անկեան պատուական, և որ ի
նա հաւատասցէ՝ մի՛ ամաչեսցէ. * Ձեզ 7
այսուհետև հաւատացելոց է վէմ պա-
տուական. իսկ անհաւատից, վէմ զոր
անարգեցին շինօղքն, նա եղև գլուխ ան-
կեան. * և վէմ գլորման և վէմ գայ- 8
թագղութե, որ գայթագղին ապստամ
բեալք ի բանէն՝ յոր և եդանն. * Այլ 9
դուք ազգ էք ընտիր, թագաւորութի,
քահանայութի. ազգ սուրբ, ժողովուրդ
սեպհական. ոպ զի զձեր առաքինութիս
նուիրիցեք այնմ, որ զձեզ ի խաւարէն

10 կոչեաց յիւր սքանչելի լոյսն։ * Որք եր-
բեմն ոչ ժողովուրդ՝ բայց արդ ժողովուրդ
Աստուծոյ · որք ոչ ողորմեալք՝ այժմ ողորմութի
11 գտեալք։ * Սիրելիք՝ աղաչեմ, իբրեւ զը-
պանդուխտս եւ զնժդեհս ՚ի բաց մեր-
ժել ՚ի մարմնաւոր ցանկութեանց, որ զի-
12 նուորին ընդդէմ ոգւոց · * զվարս ձեր
՚ի մէջ հեթանոսաց պարկեշտս ցուցա-
նել · զի որով բամբասիցեն զձեզ իբրեւ
զչարագործս՝ ՚ի բարւոք գործոցն ձերոց
դիտեալ՝ փառաւոր առնիցեն զԱստուած յա-
ւուրն այցելութեան։

ԳԲ

13 * Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն
ստեղծուածոյ վասն Տեառն · եթէ թագաւո
14 րի՝ իբրեւ առաւելումեք, * եթէ դա-
տաւորաց՝ իբրեւ ՚ի նմանէ առաքելոց ՚ի
վրէժխնդրութիւն չարագործաց՝ եւ ՚ի գո-
15 վութիւն բարեգործացն։ * Զի այսպէս են
կամք Աստուծոյ, բարեգործացն պապանձեցու-
ցանել զանգգամ մարդոյ զանգիտութիւն։
16 * Իբրեւ զազատս լինել՝ եւ մի՛ իբրեւ պատ
րուակ չարութեան ունել զազատութիւն · այլ
17 իբրեւ Աստուծոյ ծառայք։ * Զամենեսեան պա-
տուեցէք · զեղբայրսիրութիւն սիրեցէք ·
յԱստուծոյ երկերուք · զթագաւորս պատուե-
18 ցէք։ * Ծառայք հնազանդ լինել յամենայն
երկիւղի տերանց, ոչ միայն բարերա-
19 րացն եւ հեզոց՝ այլ եւ կամակորացն։ * Զի
այս շնորհք յԱստուծոյ են, եթէ բարւոք ինչ
միտք տանիցի ոք վշտաց յանիրաւի։

* Քանզի զի՞նչ երախտիք իցեն, եթէ 20
յորժամ մեղանչիցէք՝ տանջիցիք, և համ-
բերիցէք. այլ թէ բարիս գործիցէք՝ չար-
չարիցիք՝ և համբերիցէք, այն շնորհք
յայ̃ են։ * Քանզի ՚ի դոյն իսկ կոչեցա- 21
րուք. զի և Քս̃ վս̃ ձեր մեռաւ, և ձեզ
եթող օրինակ՝ զի զհետ երթայցէք հե-
տոց նր̃. * որ ոչ արար մեղս, և ոչ գտաւ 22
նենգութի̃ ՚ի բերան նր̃. * որ բամբասեալ՝ 23
և ոչ փոխարէն բամբասէր. չարչարեալ՝
և ոչ պահէր սպառնալիս. բայց իրա-
ւամբք մատնէր դատաւորին։ * որ զմեր 24
մեղս իւրով մարմնովն վերացոյց ՚ի խա-
չափայտն. զի լիցուք զերծեալք ՚ի մեղաց
անտի, և իցեմք արդարութե̃ն կենակիցք.
որոյ վիրօքն բժշկեցայք։ * Քանզի էիք 25
իբրև զոչխարս մոլորեալս. այլ այժմ
դարձարուք առ հովիւն և տեսուչ ոգ-
ւոց ձերոց.

## ԳԼ. Գ.

Գ.Գ. Այնպէս և կանայք հնազանդ լինել ա- 1
րանց իւրեանց. զի եթէ իցեն նոքա
ապստամբք ՚ի բանէ անտի յաղագս կա-
նանց գնացից, և առանց բանին իսկ շա-
հեսցին, * դիտել երկիւղիւ զձեր պար- 2
կեշտ գնացս։ * Որոց լինիցի ոչ արտա- 3
քուստ հիւսիւք և ոսկեհուռ ծամակա-
լօք՝ կամ պաճուճեալ զգեստուք զարդ.
* այլ ծածուկ սրտին մարդն. անեղծու- 4

թբ̃

Թէ հեզութեան և հանդարտութեան հոգւոյն,
5 որ է առաջի այ բազմապատիկ։ * Քան-
զի այսպէս երբեմն և կանայք՝ որ յու-
սացեալ էին յած՝ զարդարէին զանձինս
6 հնազանդել իւրեանց արանց։ * Որպէս և
Սառայ՝ զի հնազանդ էր Աբրահամու,
և տէր իւր կոչէր զնա․ որոյ եղերուք
դուք որդիք․ բարեգործք էին, և ոչ
կասկածէին՝ և ոչ 'ի միոջէ իմիք երկիւղէ։
7 * Այնպէս և արք իմաստութբ բնակես-
ջիք ընդ նս․ իբրև տկար անօթոյ առն-
ջիք պատիւ կանանց՝ իբրև ժառանգակ-
ցաց շնորհացն կենաց․ զի մի՛ խափան լի-
8 նիցին աղօթիցն ձերոց։ * Իսկ գլուխ ա-
մենայնի, զի համամիտք իցէք՝ համակա-
րեք եղբայրասէրք՝ ազնուագութք խո-
9 նարհք։ * Մի՛ չար փոխանակ չարի հա-
տուցանել, կամ բամբասանս ընդ բամբա-
սանաց․ այլ զոր ին հակառակն՝ օրհնել,
զի յայս իսկ կոչեցարուք՝ զի զօրհնութի
ժառանգիցէք։
10 * Զի որ կամիցի զկեանս սիրել՝ և տե- ԳԻ
սանել զաւուրս բարութե, լռեցուսցէ
զլեզու իւր 'ի չարութէ, և շրթունս
11 իւր 'ի չխօսելոյ զնենգութի։ * Խոտորես-
ցի 'ի չարէ, և արասցէ զբարի․ խնդ-
րեսցէ զխաղաղութի, և երթիցէ զհետ
12 նր։ * Զի աչք տն 'ի վերայ արդարոց,
և ականջք նր յաղօթս նց․ երեսք տն 'ի
13 վր չարագործաց։ * Իսկ ո՞վ իցէ որ չարչա-


րիցէ

րիցէ զձեզ, եթէ դուք բարւոյն նախան
ձաւորք լինիցիք. * Այլ թէ և չարչարի 14
ցիք ևս յաղագս արդարութեան, երանելի
էք, բայց յերկիւղէ նոցա մի՛ երկնչիցիք և
մի՛ խռովեսջիք. * Այլ զՏ՛ր զնոյն զՔս՝ 15
սուրբ առնիջիք 'ի սիրտս ձեր. Պատ
րաստ իցէք տալ պատասխանի ամ՛ի որ
խնդրիցէ զբանն. որ է վ՛ն յուսոյն ձե
րոյ. * Այլ հեզութե՛ և երկիւղիւ ու 16
նիցիք բարս քաղցունս. զի որով չարա
խօսիցեն զձէնջ՝ յամօթ լիցին՝ որք բամ
բասեն զձեր բարւոք գնացս 'ի Քս. * Օգ 17
տա է բարեգործաց, եթէ կամիցին ըստ
այ կամացն չարչարիլ՝ քան չարագործացն.
* Զի և Քս միանգամ վ՛ն մեղաց 'ի վերայ 18
ձեր մեռաւ, արդարն 'ի վ՛ր անարդարաց.
զի զձեզ մերձեցուսցէ առ այ. Թէպէտ
և մեռաւ մարմնով, այլ կենդանի է հո
գւով. * Որով և ոգւոցն՝ որ էին 'ի բան 19
տին, երթեալ քարոզեաց՝ * երբեմն ապս 20
տամբելոցն, յորժամ ներէր նոցա այ եր
կայնմտութիւն յաւուրս Նոյի, յորս տա
պանն կազմէր. յոր նաւաղունք՝ այսինքն
ոգիք իբրև ութ ապրեցան 'ի ջրոյն.
* Որ և զձեզ ըստ նմին օրինակի կեցուս 21
ցէ մկրտութիւն. ոչ զմարմնոյ աղտն 'ի
բաց ընկենլով, այլ զբարւոք մտացն
հանդէս առ այ 'ի ձեռն յարութեանն յի
քսի. * որ է ընդ աջմէ այ երթեալ յեր 22
կինս, 'ի հնազանդել նմա հրեշտակաց
և

և իշխանութեանց և զօրութեանց ·

## ԳԼ · Դ ·

1 Քրիստոսի չարչարելոյն մարմնով վասն մեր, և ԳԵ
դուք 'ի նոյն միտս վառեցարուք. զի
որ չարչարի մարմնով՝ դադարէ 'ի մեղաց.
2 * զի մի՛ ևս ըստ մարդկան ցանկութեց՝ այլ ըստ
կամացն Աստուծոյ կեցցէ զայլ ևս ժամանակն.
3 * Բաւական է անցեալ ժամա_
նակն լինելոյ կամացն հեթանոսաց, որք
գնային գիջութիւնք՝ ցանկութիւնք գինե_
հարութիւնք անառակութիւնք արբեցութիւնք՝
4 անօրէն կռապաշտութիւնք. * Որով օտա_
րացեալք ոչ ընդ ձեզ վարելն 'ի նոյն անկար_
5 գութեն զեղխութեն, և հայհոյեն. * Որ
տայցեն պատասխանի այնմ, որ 'ի պատ_
րաստին ունի դատել զկենդանիս և զմե_
6 ռեալս. * Օի 'ի սոյն իսկ և մեռելոց
խոստացեալ է, զի դատեսցին ըստ մարդ_
կան մարմնով՝ և կենդանի լինիցին ըստ
7 Աստուծոյ հոգւով. * Ամենեցուն վախճան մեր_
ձեալ է. զգաստացարուք այսուհետև՝ և
8 լերուք զուարթունք յաղօթս. * Նախ
քան զամենայն սէր սէրս ունել ընդ միմեանս.
զի սէր ծածկէ զբազմութիւն մեղաց.
9 * Օտարասէրք լինել ընդ միմեանս ա_
10 ռանց տրտնջելոյ. * Իւրաքանչիւրոք որպէս
և ընկալաւ շնորհս ինչ՝ 'ի միմեանս ըդ_
նոյն մատակարարել, իբրև զբարւոք
հազարապետս պէսպէս շնորհացն Աստուծոյ.



* Եթ

11 *Եթէ ոք խօսեսցի՝ իբրեւ զայ պատգա-
մըս. եթէ ոք մատակարարիցէ՝ իբրեւ ՚ի
զօրութենէ՝ զոր շնորհէ ած. զի յամի փա-
ռաւորեսցի ած ՚ի ձեռն յի քի, որում
փառք եւ զօրութիւն յաւիտեանս ամէն։
Գ. Ջ 12 *Սիրելիք՝ մի՛ օտարոտի համարել զե-
ռանդն ինչ՝ որ ՚ի փորձութեն ձեզ լինիցի,
որպէս թէ օտար ինչ իրք ձեզ դիպիցին։
23 *այլ իբրեւ հաղորդեալք քի չարչարա-
նացն՝ ուրախ լինիջիք, զի եւ ՚ի յայտնու-
թեն փառաց նորա ցնծացեալք բերկրես-
14 ջիք։ *Իսկ եթէ նախատիցիք եւ վն ա-
նուանն քի, երանելի էք. զի փառացն
եւ զօրութեն անուն է, եւ այ հոգին ՚ի վր
15 ձեր հանգուցեալ է։ *Մի՛ ոք ՚ի ձէնջ
չարչարեսցի իբրեւ զսպանող, կամ իբրեւ
զգող, կամ իբրեւ պչարագործ, կամ իբ-
16 րեւ զօտարատեսուչ։ *Ապա եթէ իբրեւ
զքրիստոնեայ՝ մի՛ ինչ ամաչեսցէ. այլ
փառաւոր արասցէ զած անուամբս այ-
17 սուիկ։ *Զի ժամանակ է սկիզբն լինե-
լոյ դատաստանին ՚ի տանէն այ. զի ե-
թէ նախ ՚ի մէնջ. իսկ զինչ կատարած
այնոցիկ իցէ՝ որ ոչ հաւանեցան այ աւե-
18 տարանին։ *Իսկ եթէ արդարն հազիւ
կեցցէ, իսկ ամբարիշտն եւ մեղաւորն ուր
19 գտանիցի։ *Որպէս զի որ չարչարիցին
ըստ այ կամացն, հաւատարիմ հաստ-
չին աւանդեսցեն զիւրեանց ոգիս բարե-
րարութբք։

## ԳԼ · Ե ·

1 Երիցանս այսուհետեւ աղաչեմ՝ իբ- Գ Է
րեւ երիցակից՝ եւ վկայ չարչարա-
նացն քի, որ եւ հանդերձեալ փառացն
2 յայտնելոց հաղորդ. * արածեցէ՛ք՝ որ ՚ի
ձեզ հօտդ է այ. վերակացու լինել՝ մի՛
իբրեւ ակամայ՝ այլ կամաւ ըստ այ. մի՛ զօ-
3 շաքաղութբ, այլ յօժարութբ. * մի՛ իբրեւ
տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ
4 հօտին. * Եւ ի յերեւել հովուապետին՝
ընդունիջիք զանթառամ փառացն պը-
5 սակ. * Նոյնպէս եւ երիտասարդք հնա-
զանդ լերուք ծերոց. Ամենեքեան ընդ
միմեանս զխոնարհութի ունիցիք. զի ած
ամբարտաւանից հակառակ կայ, այլ
6 շնորհս խոնարհաց. * Խոնարհեցարուք
ընդ հզօր ձեռամբն այ. զի զձեզ բարձ-
7 րացուսցէ ՚ի ժամանակի. * Զամենայն
հոգս ձեր ընկեցէ՛ք ՚ի նա, զի նա է՝ որ
հոգայ վասն ձեր.
8 * Արթուն լերուք՝ հսկեցէ՛ք, զի ոսոխն Դ Կ
ձեր սատանայ իբրեւ զառիւծ գոչէ, շրջի
9 եւ խնդրէ՝ թէ զո՛ կլանիցէ. * Որում ՚ի
դիմի հարկանիցիք հաստատեալք հաւա-
տովք. գիտասջիք զնոյն անցս չարչարա-
նաց եղբայրութե ձերոյ՝ յաշխարհի յան-
10 ձինս կատարել. * Իսկ ած ամենայն շնոր-
հաց՝ որ կոչեաց զձեզ յիւր ՚ի յաւիտե-
նական փառսն քի յի, որում փոքր

մի եղերուք չարչարակիցք, նա կազդու-
րեսցէ կարողացուսցէ հաստահիմն ա-
րասցէ։ * Նմա իշխանութիւն և փառք յա- 11
ւիտեանս (. ամէն)։ * Ի ձեռն սիղուանիա 12
նոսի հաւատարիմ եղբօր, ոպ̃ կարծեմ՝
փոքր ՚ի շատէ գրեցի առ ձեզ մխիթարել.
և ՚ի վր̃ սորին վկայել. զի և այս ճշմա
րիտ շնորհք այ̃ են՝ յոր հաստատեալ կայ
ցէք։ * Ողջոյն տայ ձեզ՝ որ ՚ի բաբելոն 13
ընտրելակից եկեղեցին է. և մարկոս
որդի իմ։ * Ողջոյն տաջիք միմեանց ՚ի 14
համբոյր սրբութեան։ Խաղաղութիւն
ընդ ձեզ ամենեսին, որ էք ՚ի քս̃ յս̃.
ամէն։

# ԹՈՒՂԹ ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿՐՈՐԴ։

## ԳԼ. Ա.

ԴԲ

1 ՍԻՄՈՎՆ ՊԵՏՐՈՍ
ծառայ և առաքեալ յիսի
քսի, որոց համագնապա
տիւ մեզ հասեալ էք հա-
ւատոց յարդարութին այ
2 մերոյ և փրկչին յիսի քսի։ * Շնորհք ընդ
ձեզ՝ և խաղաղութին բազմասցի՝ գիտութեն
3 այ և յիսի քսի տն մերոյ։ * Որպէս ամենայն
մեզ՝ իւրոյ ածեղէն զօրութեն առ ՚ի կենաց
և յածպաշտութի շնորհեալ. ՚ի ձեռն
գիտութեն այնորիկ, որ կոչեաց զմեզ
4 յիւր ՚ի փառսն և ՚ի վայելչութի։ * Որով
մեծամեծքն և պատուականն աւետիք
պարգևեալ են մեզ. զի նոքիմբք ածե-
ղէն բնութեն լինիցիք հաղորդակիցք,
փախուցեալք ՚ի ցանկութեց աշխարհիս
5 և յապականութեց։ * Իսկ սմին այսմիկ
զամ փոյթ ՚ի մէջ առեալ՝ ձերովք հա-
ւատովքն մատակարարեսջի՛ք զառաքի-
նութի, և առաքինութեն զգիտութի, * և

* և գիտութեն զժուժկալութի, և ժուժ- 6
կալութեն զհամբերութի, և համբե-
րութեն զածպաշտութիւն, * և ածա 7
պաշտութեն զեղբայրսիրութի, և եղ-
բայրսիրութեն զսէր։ * Զայսոսիկ ձեր 8
յանձին կալեալ՝ և ՚ի սոյն յաճախեալ,
ոչ դատարկս և անպտուղս զձեզ հաս-
տատիցեն ՚ի տն մերոյ յսի քսի գիտու-
թին։ * Իսկ յոր ոչն իցեն սոքա մերձ, 9
կոյր է և զաչացու. ՚ի մոռացօնս դար-
ձուցեալ զսրբութի առաջնոց իւրոցն յան-
ցանաց։ * Սան որոյ եղբարք՝ առաւել 10
փութասջիք՝ զի բարեացն գործովք հաս-
տատուն զձեր կոչումն և զընտրութի
պահիցէք. Զայս արարեալ՝ ոչ երբէք
յանցանիցէք. * զի այսպէս առատապէս 11
շնորհեսցի ձեզ մուտ ՚ի յաւիտենական
արքայութի տն մերոյ և փրկչին յսի քսի.
Դ.Գ * Սորով պատրաստ իցեմ միշտ ձեզ յիշե 12
ցուցանել վասն սոցին առաւել եւս գի-
տակացն և հաստատելոցն՝ եկեալ հա-
սեալ ճշմարտութենն։ * Քանզի իրա- 13
ւունս համարիմ մինչդեռ եմ ՚ի մարմնի
աստ՝ զարթուցանել զձեզ յիշատակօք.
* Գիտեմ թէ վաղվաղակի է լինելոց 14
մերկանալ յինէն մարմնոյս. որպէս և
տր մեր յս քս եցոյց ինձ։ * Նաև փութամ 15
ջեպիմ միշտ զձեզ յորդորել. զի և յետ
իմոյ ելանելոյ յաշխարհէս՝ առնիցէք զմի
շատակս այսոցիկ։ * Քանզի ոչ եթէ 16

պաճուճեալ իմն առասպելաց զհետ եր-
թեալ ցուցաք ձեզ զՏն մերոյ յսի քսի
զզօրութիւն և զգալուստն · այլ մերձ
եղեալ ականատեսք նորա մեծութեն ։
17 * Քանզի առեալ յԱյ և 'ի Հօրէ ըզ
փառս և զպատիւ · եկեալ յայնպիսի
բարբառոյ՝ 'ի մեծ վայելչութե փառաց
անտի · եթէ դա՛ է որդի իմ սիրելի՝ ը̄
18 որ ես հաճեցայ ։ * Եւ զայս բարբառ-
մեք իսկ լուաք · եկեալ յերկնից՝ որ ընդ-
19 նմա իսկ էաք 'ի սբ լերինն ։ * Եւ ու-
նիմք հաստատագոյն զբանն մարգարէա-
կան · որում եթէ անսայցէք՝ բարւո՛ք առ-
նէք · իբրև ճրագի որ տայցէ լոյս 'ի խա-
ւարչային տեղւոջ, մինչև տիւն լուսաւո-
րեսցէ, և արուսեակն ծագեսցէ 'ի սիրտս
ձեր ։
20 * Բայց նախ այսմ գիտա՛կ լինիջիք · զի ա Դ·Դ·
ամ մարգարէութի իւրոց գրոց լուծումն
21 ոչ ունի ։ * Քանզի ոչ եթէ ըստ կամաց
մարդկան տուաւ մարգարէութի երբէք,
այլ 'ի հոգւոյն սբյ կրեալք՝ խօսեցան
մարդիկ յԱյ ·

## Գլ · Բ ·

1 Եղեն և սուտ մարգարէք 'ի ժողովըր-
դեանն՝ որպէս և այժմ 'ի ձեզ լինի-
ցին սուտ վարդապետք · որք սպրդեսցեն
մուծանեն հերձուածս կորստեան · և
զՏէրն որ գնեաց զնս ուրացեալ՝ ածեն 'ի վր

'ի վր անձանց զարագահաս կորուստ.
* Եւ բազումք անկեալ երթիցեն զհետ 2
նոցա անառակութեցն. վասն որոյ ճըշ-
մարտութեն ճանապարհ հայհոյեսցի. * Եւ 3
ագահութբ մտացածին բանիւք առնի-
ցեն զձեզ վաճառանդի. որոց դատաս-
տանն 'ի բնէ ոչ դատարկանայ, և կո-
րուստն նոցա ոչ նիրհեսցէ. * Զի եթէ 4
'ի հրեշտակսն յանցուցելոց Ած ոչ խնայ-
եաց, այլ խաւարին կապանօք արկեալ
'ի տարտարոսն՝ ետ պահել 'ի դատաս-
տան. * Եւ ոչ 'ի սկզբանն աշխարհի 5
խնայեաց. բայց զութերորդն զնոյ՝ զար-
դարութեն քարոզ պահեաց 'ի ջրհեղե
ղէ աշխարհի՝ ամբարշտելոցն ածեալ.
* Եւ զքաղաքս Սոդոմացւոց և Գոմո 6
րացւոց դարձուցեալ յաճիւն՝ դատեցաւ,
օրինակ առ յապա ամբարշտելոցն կա-
ցուցանէր. * Եւ զարդարն Ղովտ ձանձ 7
րացեալ յանկարգ գիջութեն գնացից
փրկեաց. * քանզի տեսանատես և ական 8
ջալուր արդարն բնակեալ 'ի մէջ նոցա,
օր ըստ օրէ զիւր սուրբ ոգիսն նոցա ա-
նօրէն գնացիւքն տանջէր.
ԳԵ * Գիտէ Տր զածապաշտս փրկել 'ի փոր 9
ձուէ, և զանիրաւս պահել 'ի տանջանս
աւուրն դատաստանի. * մանաւանդ՝ որ 10
զհետ մարմնոյ պղծալից ցանկութեց իցեն
երթեալ. արհամարհօղք տէրութեն՝ ժը-
պիրհք յանդգունք՝ չզանգիտեն զփառս

11 հայհոյել։ * Ուր հրեշտակք զօրութեամբ և
կարողութեամբ քան զնոսա մեծամեծք՝ չա֊
ծեն զնոքօք ՚ի Տեառնէ զհայհոյութեան դա֊
12 տաստան։ * Այլ սոքա իբրև զանխօս
անասունս ըստ բնածին բարուցն յեղ֊
ծումն և յապականութիւն՝ որոց չեն գի֊
տակ, հայհոյեն յապականութեան իւրեանց,
13 և ապականեսցին՝ * տանջեալք ՚ի վար֊
ձուց անիրաւութեան. որ ցանկութիւն զաւուրն
փափկութիւն համարին. բծականք արատա֊
ւորք՝ փափկացեալք ՚ի պատիրս իւրեանց.
14 լեալ ձեզ խրախճանակիցք։ * Աչս ու֊
նին հանգոյն պոռնկաց՝ անդադարս ՚ի
մեղաց, պատրեն զանձինս յողդողդաց.
որ ունին սիրտ հարեալ զագահութեամբ,
15 մանկունք անիծից։ * Թողեալ զուղղորդ
ճանապարհն՝ մոլորեցան. զհետ երթեալ
ճանապարհին Բաղաամայ Բեովրեան՝
16 զվարձս անիրաւութեան սիրեցին. * որ կշ֊
տամբեանս իւրոյ անօրէնութեան ստացաւ
զէշն անխօսուն, մարդկեղէն բարբա֊
ռովն բարբառեալ՝ արգել զմարգարէին
17 զանօրէնութիւն։ * Այսպիսիքն են աղ֊
բիւրք անջրդիք՝ և մէգք վարեալք ՚ի մը֊
րրկէ. որոց աղջամուղջք խաւարին յա֊
18 ւիտեան պահեալ կան։ * Քանզի մեծա
բանս սնոտեաց բարբառեալ՝ պատրեն
գիջութեամբք ցանկութեամբք մարմնոյ զայնո֊
սիկ որ սակաւն փախչիցին յայնցանէ՝ որ
19 ՚ի մոլորութեան շրջիցին։ * Նոցա ազատութ֊
խոս

խաւարանան, և ինքեանք ապականութեան
ծառայք են. զի որով իւիք յաղթիցի ոք,
նորին և ծառայէ։ * Զի եթէ փախու- 20
ցեալք ՚ի պղծութեանց աշխարհի գիտութբ
տն մերոյ և փրկչին յսի քսի, և դարձեալ
ընդ նոյնս շաղեալք պարտիցին՝ եղև նոցա
վախճանն չար քան զառաջինն։ * Զի 21
լաւ էր նոցա՝ եթէ բնաւ իսկ չէր ծանու-
ցեալ զարդարութեան ճանապարհ, քան՝
զի ծանեան՝ և յետս կացին ՚ի սբ պա-
տուիրանէն՝ որ նոցա աւանդեցաւ։ * Ե- 22
կեալ ՚ի դէպ նոցա ճշմարիտ առակին
զգօնութե, եթէ շուն դառնայ անդրէն
՚ի փսխած իւր, և խոզ լուացեալ՝ ընդ-
տիղմ թաւալեալ։

## ԳԼ. Գ.

ԴՋ Զայս ձեզ սիրելիք՝ երկրորդ թուղթ 1
գրեմ. որով զարթուցից ՚ի յիշա-
տակ զհաստատուն միտս ձեր. * յիշել 2
զյառաջագոյն ասացեալ պատգամս ՚ի
սբց մարգարէից և յառաքելոցն ձերոց,
զպատուիրս տն և փրկչին. * Բայց զայս 3
նախ գիտասջիք, զի յաւուրս յետինս ե-
կեսցեն արհամարհօղք՝ այպանօղք, որ
ըստ իւրեանց ցանկութեանց գնայցեն. * և 4
ասիցեն՝ ուր են աւետիք գալստեան նո-
րա. զի յորմէ հետէ հարքն ննջեցին՝ ա-
մենայն ինչ նոյնպէս կայ մնայ իսկզբա-
նէ արարածոց. * Եւ զայն մոռացեալ 5
իցէ

իցէ նոցա որ զայսն կամին. եթէ երկինք
էին ի սկզբանէ՝ և երկիր ՚ի ջրոց, և
6 ջրովք հաստատեալ բանիւն այ. * վասն
որոյ երբեմն աշխարհն ջրհեղեղաւ ապա-
7 կանեալ կորեաւ: * Իսկ այժմ երկինք և
երկիր նովին բանիւ գանձեալ են, հրոյ
պահեալք յօրն դատաստանի՝ և կորըս-
8 տեան ամբարշտաց մարդկան: * Իսկ այս
և մի՛ լիցի ՚ի ձէնջ ծածկեալ սիրելիք,
զի մի օր առ Տն իբրև զհազար ամ է, և հա-
9 զար ամ իբրև զմի օր: * Ո՛չ յամեցուս
ցէ Տր զաւետիսն՝ որպէս ոմանք յամր հա-
մարին, այլ երկայնամիտ լինի առ ձեզ.
քանզի ոչ կամի՝ եթէ ոք կորիցէ, այլ
զամենեցուն հասանել յապաշխարու-
թիւն:
10 * Այլ եկեսցէ օր Տն իբրև զգող. յո- ԴԷ
րում երկինք տագնապաւ անցցեն, և
բնութիւնք հրով կիզեալ լուծցին, և եր-
11 կիր՝ և որ ՚ի նմ գործք գտանիցին: * Իսկ
՚ի լուծանել այսպէս այսր ամի, որպիսի
ինչ պարտ իցէ ձեզ գտանել. այլ սուրբ
12 և աստուածպաշտ կարգաւ ակնունել, * և
փութալ հասանել գալստեան աւուրն
Տն. յորում երկինք հրայրեացք լուծա-
նիցին, և բնութիւնք հրդեհեալ հալիցին:
13 * Նորոյ երկնից՝ և նորոյ երկրի ըստ աւե-
տեացն հայեցեալ սպասիցեմք, յորս ար-
14 դարութիւն բնակէ: * Վասն որոյ սիրե-
լիք՝ այսոցիկ սպասեալ, փոյթ յանձին
ու-

ունիցիք՝ անբիծք և անարատք գտանել
նմա 'ի խաղաղութի · * և զտն երկայն 15
մտութիւն՝ փրկութի համարիջիք ։ Որ
օրինակ և սիրելի եղբայրն մեր պօղոս՝ ըս
շնորհելոյ իմաստութեանն նմա յայ՝ գրեաց
ձեզ · * ոպ և յամենայն իւր թուղթսն 16
խօսի վասն այսորիկ · յորս գտանի ինչ
ինչ դժուարիմաց, զոր անուսմունքն և
յողդողդքն կամակորեն · որպէս և զա-
մենայն իւր գիրս առ իւրեանց անձանց
կորուստ ։ * Դուք այսուհետև սիրելիք՝ 17
իբրև զկանխագէտս զգուշասջիք, զի մի
անառակ մոլորութեն զգածեալք՝ ան-
կանիցիք յաստեաց հաստատութենէ ։ * Ա- 18
ճեցէք շնորհօք և գիտութեն տն մերոյ
և փրկչին յի քի ։ Նմա փառք՝ և այժմ,
և յօրն յաւիտենից · ամէն ։

# ԹՈՒՂԹ
## ԿԱԹՈՂԻԿԵԱՅ
# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԱՌԱՋԻՆ.
## ԳԼ. Ա.

1 ՈՐ ԷՐՆ ԻՍԿԶԲԱՆԷ, եգ
զորմէ լուաքն՝ որում ակնա
տեսն իսկ եղեաք. ը̅ն̅դ որ
հայեցաքն, եւ ձեռք մեր շօ-
2 շափեցին ՚ի վերայ բանին կենաց. * Եւ
կեանքն յայտնեցան, եւ տեսաք՝ եւ վը
կայեմք եւ պատմեմք ձեզ զյաւիտենա-
կան կենացն, որ էր առ Հօր՝ եւ երեւե-
3 ցաւ մեզ. * Զոր տեսաքն եւ լուաք՝ պատ
մեմք եւ ձեզ, զի եւ դուք հաղորդութի
ւնիցիք ը̅ն̅դ մեզ. եւ մեր հաղորդութի̅ն
իցէ ը̅ն̅դ Հօր՝ եւ ը̅ն̅դ որդւոյ իւրում յ̅ի ք̅ի.
4 * Եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախու
5 թիւն կատարեալ լիցի. * Եւ այս է ա-
ւետիքն՝ զոր լուաք առ ՚ի նմանէ՝ եւ պատ-
մեմք ձեզ. զի ա̅ծ լոյս է, եւ խաւար ՚ի
6 նմա չի՛ք եւ ոչ մի. * Եթէ ասիցեմք՝ է-
թէ հաղորդութի̅ ունիմք ը̅ն̅դ նմա՝ եւ ՚ի
խաւարի շրջիցիմք, ստեմք՝ եւ ոչ առնեմք
զճշ

զճշմարտութիւն։ *Իսկ եթէ ի լոյս գ- 7
նայցեմք՝ որպէս եւ նա լոյս է, հաղորդութի-
ւնիմք ընդ միմեանս. եւ արիւնն յսի որդ-
ւոյ նր սրբէ զմեզ յամ մեղաց։ *Իսկ եթէ 8
ասիցեմք՝ եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք,
զանձինս խաբեմք. եւ ճշմարտութիւն ՚ի
մեզ ոչ գոյ։ *Ապա եթէ խոստովան 9
լինիցիմք զմեղս մեր, հաւատարիմ է նա՝
եւ արդար առ ՚ի թողուլ մեզ զմեղս մեր,
եւ սրբել զմեզ յամ անիրաւութենէ։ *Իսկ 10
եթէ ասիցեմք՝ եթէ ոչ՚ինչ մեղաք, սուտ
առնեմք զնա. եւ բան նր ոչ է ՚ի մեզ։

## ԳԼ. Բ.

ԵԲ Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ՝ զի մի՛ 1
մեղիջէք. եւ եթէ մեղիցէ ոք, ու-
նիմք բարեխօս առ հծ զյսքս՝ զարդարն
եւ զանարատ։ *Եւ նա է քաւութիւն մե- 2
ղաց մերոց. եւ ոչ եթէ մերոց միայն՝
այլ եւ ամ աշխարհի։ *Եւ յայսմիկ գի- 3
տեմք՝ եթէ ծանեաք զնա, եթէ զպատ-
ուիրանս նր պահիցեմք։ *Որ ասիցէ՝ ե- 4
թէ ծանեայ զնա, եւ զպատուիրանս նր
ոչ պահիցէ, սուտ է՝ եւ ճշմարտութիւն ՚ի
նմա ոչ գոյ։ *Իսկ որ պահիցէ զբան նո- 5
րա, արդարեւ ՚ի նմա կատարեալ է սէրն
այ։ Այսուիկ ճանաչեմք՝ եթէ ՚ի նմա
եմք։ *Որ ասիցէ ՚ի նմա բնակել, այն- 6
պէս պարտի գնալ՝ որպէս եւ նայն գնաց։
ԵԳ *Սիրելիք ոչ եթէ նոր ինչ պատուիրան 7
գրեմ

գրեմ ձեզ, այլ զհին պատուիրանն՝ զոր
ի սկզբանէ ունէիք. և հին պատուիրանն՝
8 բանն է զոր լուարուք. * Դարձեալ նոր
պատուիրան գրեմ ձեզ՝ որ է ճշմարիտ
՚ի նմա՝ և ՚ի ձեզ. զի խաւարն անցանէ,
9 և լոյսն ճշմարիտ արդէն լոյս երևի. * Որ
ասէ եթէ ՚ի լոյսն իցէ՝ և զեղբայր իւր
ատիցէ, սուտ է՝ և ՚ի խաւարի է տակա
10 ւին. * Որ սիրէ զեղբայր իւր, ՚ի լոյս բը
նակէ՝ և գայթագղութիւն ՚ի նմա չի՛ք.
11 * Իսկ որ ատեայ զեղբայր իւր՝ ՚ի խաւա
րի է, և ը̅ խաւար շրջի. և ոչ գիտէ յո՛
երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նո
12 րա. * Գրեմ ձեզ որդեակք՝ զի թողեալ
են ձեզ մեղքն ձեր վ̅ն անուան նորա.
13 * Գրեմ ձեզ հա՛րք՝ զի ծանեայք դուք
զայն՝ որ ի սկզբանէն է. Գրեմ ձեզ երի
տասարդք՝ զի յաղթեցիք դուք չարին.
14 * Գրեցի ձեզ մանկունք՝ զի ծանեայք
դուք զհայրն. Գրեցի ձեզ հա՛րք՝ զի ծա
նեայք դուք զայն որ ի սկզբանէն է. Գրե
ցի ձեզ երիտասարդք՝ զի էք դուք հզօ
րացեալք՝ և բանն ա̅յ ՚ի ձեզ բնակէ, և
15 յաղթեցիք դուք չարին. * Մի՛ սիրէք
զաշխարհ՝ և մի՛ որ ինչ յաշխարհի է.
16 * Եթէ որ սիրէ զաշխարհ, ոչ է ՚ի նմա
սէր հօր. զի ա̅մ որ ինչ յաշխարհի է՝
ցանկութիւն է մարմնոյ, և ցանկութիւն ա
չաց, և ամբարտաւանութիւն աստի կե
նացս. որ ոչ է առ ՚ի հօրէ՝ այլ յաշխար
հէ

հէ աստի է։ * Եւ աշխարհս անցանէ՝ և 17
ցանկութիւն նր՟. իսկ որ առնէ զկամս այ՟՝
մնայ յաւիտեան։
ԵԴ * Որդեակք յետին ժամանակ է, և ոպ՟ 18
լուարուք՝ եթէ նեռն գալոց է, և ար-
դէն իսկ նեռինք բազումք եղեալ են, ո-
րով մարթեմք իմանալ՝ եթէ յետին ժա-
մանակ է։ * Ի մէնջ ելին, այլ ոչ 19
էին ի մէնջ. զի եթէ ի մէնջ էին՝ ապա
առ մեզ մնային. այլ զի յայտնի լինի-
ցին՝ եթէ ոչ էին ամենեքին նքա՟ ի մէնջ։
* Եւ դուք օծութիւն ունիք առ ի սրբոյն, 20
և գիտէք ամենեքին։ * Ոչ գրեցի ձեզ՝ 21
եթէ ոչ գիտէք զճշմարտութիւն, այլ թէ
գիտէք զնա. և թէ՝ զի ամ՟ սուտ ոչ է
ի ճշմարտութենէ անտի։ * Իսկ ո՞ իցէ սուտ, 22
եթէ ոչ՝ որ ուրանայ եթէ յս՟ չէ քս՟։ նա
իսկ է նեռն, որ ուրանայ զհայր և զոր-
դի։ * Ամենայն որ ուրանայ զորդի, և 23
ոչ զհայր ընդունի. իսկ որ խոստովանի
զորդի, նա և զհայր ընդունի։ * Դուք՝ 24
զոր լուարուքն իսկզբանէ՝ ի ձեզ բնա-
կեսցէ. զի եթէ ի ձեզ բնակեսցէ՝ զոր
իսկզբանէ լուարուք, և դուք յորդի և
ի հայր բնակեսջիք։ * Եւ այս են աւե 25
տիքն՝ զոր աւետարանեաց նա մեզ՝ զկ-
եանս յաւիտենականս։
ԵԵ * Զայս գրեցի ձեզ, զի մի՛ ոք զձեզ մո- 26
լորեցուցանէ։ * Եւ դուք օծութիւն 27
զոր ընկալարուք ի նմանէ՝ բնակեսցէ ի

 ձեզ.

ձեզ. և չէ ինչ պիտոյ՝ թէ ոք զձեզ ու-
սուսցէ, այլ որպ զի նր օծութիւն ուսու-
ցանիցէ զձեզ վն ամի. և ճշմարիտ է՝ և
չէ սուտ. և որպէս ուսոյցն զձեզ, կայք ՚ի
28 նմա։ * Եւ այժմ որդեակք՝ կացէք ՚ի
նմին. զի եթէ յայտնեսցի, ունիցիմք հա-
մարձակութի, և մի՛ ամաչեսցուք ՚ի նմա
29 նէ ՚ի գալստեանն նր։ * Ոչ եթէ գի-
տիցէք՝ եթէ արդար է նա, իմասջի՛ք՝ ե-
թէ ամն որ առնէ զարդարութի՝ առ ՚ի
նմանէ է ծնեալ։

## ԳԼ. Գ.

1 Տեսէ՛ք՝ որպիսի սէր շնորհեաց մեզ
Հայր, զի որդիք այ կոչեսցուք և եմք։
վասն այսորիկ աշխարհ ոչ ճանաչէ զմեզ՝
քանզի ոչ ծանեաւ զնա։
2 * Սիրելի՛ք՝ այժմ որդիք այ եմք, և չև ե՛ւս Եջ
է յայտ՝ եթէ զինչ լինելոց իցեմք. գի-
տեմք՝ զի յորժամ նա յայտնեսցի՝ նման
նմա լինելոց եմք, զի տեսանելոց եմք զնա
3 որպէս և էն։ * Եւ ամն որ ունի զայս յոյս
յանձին՝ սրբէ զանձն իւր՝ որպ և նայն սբ
4 է։ * Ամենայն որ զմեղս գործէ, նա՝ և
զանօրէնութի առնէ, և ինքն իսկ մեղքն
5 անօրէնութի է։ * Եւ գիտեմք՝ զի նա
յայն սակս յայտնեցաւ՝ զի զմեղս բարձ-
6 ցէ, և ՚ի նմա մեղք ոչ են. * Ամենայն որ
՚ի նմա է հաստատեալ՝ ոչ մեղանչէ. և
ամն որ մեղանչէ, ոչ ետես զնա՝ և ոչ ծա-
նեաւ

Նեաւ զնա։ * Մանկունք՝ մի՛ ոք զձեզ 7
խաբեսցէ. որ առնէ զարդարութիւն, ար-
դար է՝ ոպ՟ և նայն արդար է։ * Եւ որ 8
առնէ զմեղս՝ 'ի սատանայէ է, զի իսկըզ-
բանէ սատանայ մեղանչէ. վն՟ այսորիկ
յայտնեցաւ որդին այ՟՝ զի լուծցէ զգործս
սատանայի։ * Ամենայն որ յայ՟ է ծըն- 9
եալ՝ մեղս ոչ առնէ, զի սերմն նր՟ 'ի նմա
մնայ. և ոչ կարէ մեղանչել, զի յայ՟ է
ծնեալ։ * Այսուիկ յայտնի են 'ի մի- 10
ԵԸ մեանց որդիք այ՟՝ և որդիք սատանայի։
Ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝ չէ
նա յայ՟, և որ ոչ սիրէ զեղբայր իւր. * զի 11
այս է պատուիրանն՝ զոր լուարուք ի սկ-
զբանէ՝ զի սիրեսցուք զմիմեանս։ * Ո՛չ 12
որպէս կայէնն 'ի չարէ անտի էր՝ և սպան
զեղբայրն իւր, և յո՞ր սակս սպան զնա.
զի իւր գործքն չար էին, և եղբօրն բա-
րիք։ * Եւ մի՛ ինչ զարմանայք եղբարք, 13
եթէ աշխարհ զձեզ ատեայ։ * Մեք գի- 14
տեմք՝ զի փոխեցաք 'ի մահուանէ 'ի կեա-
նըս, քանզի սիրեմք զեղբարս. իսկ որ
ոչն սիրէ, անդէն 'ի մահուն մնայ։ * Ա- 15
մենայն որ ատեայ զեղբայր իւր՝ մար-
դասպան է. և գիտէք՝ զի ամ՟ մարդաս-
պան ոչ ունի կեանս յաւիտենականս յան-
ձին հաստատեալ։ * Այսուիկ գիտա- 16
ցաք զսէրն (այ՟). զի նա զանձն իւր եդ վն՟
մեր. և մեք վն՟ եղբարց մերոց պարտիմք
դնել զանձինս։ * Որ ունիցի զկեանս ինչ 17

զաշխարհիս՝ և տեսանիցէ զեղբայր իւր
կարօտեալ ինչ իք՝ և փակիցէ զգութս իւր
առ 'ի նմանէ, զիա՞րդ սէրն ա̃յ 'ի նմա
իցէ բնակեալ։ ջկ
18 * Որդեակք՝ մի՛ բանիւք և լեզուաւք սիրես
ցուք, այլ արդեամբք և ճշմարտութբ̃։
19 * Եւ այսու̂իկ լիցուք ծանուցեալք՝ եթէ
'ի ճշմարտութենէ անտի իցեմք. և առաջի
նորա արասցուք հանդէս սրտից մերոց.
20 Եթէ պարսաւանիցեն զմեզ սիրտք մեր՝
այլ ա̃ծ մեծ է քան զսիրտս մեր՝ և գիտէ
21 զա̃մ։ * Սիրելիք՝ եթէ սիրտք մեր զմեզ
ոչ պարսաւանիցեն, համարձակութի̃ ու-
22 նիմք առ ա̃ծ. * և զոր ինչ հայցեմք առ-
նումք 'ի նմանէ. զի զպատուիրանս նր̃
պահեմք, և զհաճոյս առաջի նորա առ-
23 նեմք։ * Եւ այս է պատուիրան նր̃, զի
հաւատասցուք յանուն որդւոյ նորա յի̃ի
քի̃ի, և սիրեսցուք զմիմեանս, որպ̃ և ետ
24 մեզ պատուէր։ * Եւ որ պահէ զպատ-
ուիրանս նր̃, 'ի նմա է հաստատեալ՝ և նա
'ի սմա. և յայսմանէ գիտեմք եթէ բնա-
կէ 'ի մեզ 'ի հոգւոյ անտի՝ զոր ետ մեզ։

## ԳԼ. Դ.

1 Սիրելիք՝ մի՛ ա̃մ հոգւոյ հաւատայք, ջբ
այլ ընտրեցէ՛ք զհոգիսն՝ եթէ յա̃յ
իցեն. զի բազում սուտ մարգարէք ելեալ
2 են յաշխարհ։ * և մեք այսուիկ ճանա-
չեմք զհոգին ա̃յ։ Ամենայն հոգի՝ որ
խոստ

խոստովանի զյս՟ քս՟ մարմնով եկեալ, յայ՟
է նա. * Եւ ամ՟ հոգի՝ որ ոչ խոստովանի 3
զյս՟ մարմնով եկեալ, չէ՛ նա յայ՟. եւ այս
նեռինն է, զորմէ լուարուք՝ եթէ գալոց
է, եւ արդէն իսկ յաշխարհի է։ * Դուք 4
յայ՟ էք որդեակք, եւ յաղթեցէք նոցա. զի
մեծ է որ ՚ի ձեզդ է՝ քան զայն որ յաշ
խարհին է։ * Նոքա յաշխարհէ են, վս՟ 5
այնորիկ յաշխարհէ խօսին, եւ աշխարհ
լսէ նց՟։ * Մեք յայ՟ եմք, որ զած՟ ճանա 6
չէ՝ լսէ մեզ, եւ որ չէ՛ յայ՟՝ ոչ լսէ մեզ։
այսուիկ ճանաչեմք զհոգին ճշմարտու
թե՟ն եւ զհոգին խաբէութե՟ն։
ԶԳ * Սիրելիք՝ սիրեսցուք զմիմեանս, զի սէր 7
յայ՟ է. եւ ամ՟ որ սիրէ՝ յայ՟ է ծնեալ՝ եւ
ճանաչէ զած՟։ * Եւ որ ոչն սիրէ՝ ոչ ճանա 8
չէ զած՟, զի ած՟ սէր է։ * Եւ զի յայսմ 9
երեւեցաւ սէրն այ՟ ՚ի մեզ, զի զորդին իւր
միածին առաքեաց յաշխարհ, զի եղի
ցուք նովաւ կենդանիք։ * Յայսմ է սէրն. 10
ոչ զի մեք սիրեցաք զած՟՝ այլ զի նա սի
րեաց զմեզ, եւ առաքեաց զորդին իւր ՚ի
քաւութի՟ մեղաց մերոց։ * Սիրելիք՝ եթէ 11
ած՟ այնպէս սիրեաց զմեզ, ապա եւ մեք
պարտիմք զմիմեանս սիրել։
ԶԴ * Զած՟ ուրուք երբէք չի՛ք տեսեալ. Ե 12
թէ սիրեսցուք զմիմեանս՝ ած՟ ՚ի մեզ
բնակէ, եւ սէր նորա ՚ի մեզ կատարեալ
է. * Այսուիկ գիտեմք, եթէ մեք ՚ի 13
նմա բնակեալ եմք՝ ՚ի նա ՚ի մեզ, զի ՚ի



Հո

14 Հոգւոյն իւրմէ ետ մեզ։ * Եւ մեք տե-
սաք՝ և վկայեմք զի հայր առաքեաց զոր-
15 դին իւր փրկիչ աշխարհի։ * Որ ոք խոս-
տովանեսցի՝ եթէ Յս է որդի Այ, Ած ՚ի
16 նմա բնակէ՝ և նա յԱծ։ * Եւ մեք հա-
ւատացաք, և ծանեաք զսէրն Այ՝ զոր ու-
նի առ մեզ։ Ած սէր է, և որ կայ ՚ի սէրն՝
բնակեալ է յԱծ, և Ած ՚ի նմա բնակէ։
17 * Յայսմիկ կատարեալ է սէրն նր ՚ի մեզ.
զի համարձակութիւն ունիցիմք յաւուրն
դատաստանի։ զի որպ և նայն է՝ նոյնպէս
18 և մեք եմք յաշխարհի յայսմիկ։ * Եր-
կիւղ ոչ գոյ ՚ի սէր, այլ սէրն կատարեալ
՚ի բաց մերժէ զերկիւղն. զի երկիւղ ընդ
տանջանօք է. իսկ որ երկնչին, չէ կա-
19 տարեալ ՚ի սէրն։ * Մեք սիրեսցուք զԱծ,
20 վն զի նա նախ սիրեաց զմեզ։ * Եթէ ոք
ասիցէ՝ եթէ սիրեմ զԱծ, և զեղբայր
իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղ-
բայր իւր՝ զոր տեսանէ, զԱծ զոր ոչն ե-
21 տես՝ զիարդ կարիցէ սիրել։ * Եւ զայս
պատուէր ունիմք առ ՚ի նմանէ, զի որ
սիրէ զԱծ՝ սիրէ նա և զեղբայր իւր։

## ԳԼ· Ե·

1 Ամենայն որ հաւատայ՝ եթէ Յս է Քս, ՁՁ
յԱյ ծնեալ է. և ամենայն որ սիրէ
զծնօղն, սիրէ և զծնեալն ՚ի նմանէ։
2 * Յայսուիկ ճանաչեմք՝ եթէ սիրեմք զոր-
դիսն Այ, յորժամ զԱծ սիրեսցուք՝ և զպա

պատուիրանս ն̃ր պահեսցուք։ *Վասնզի 3
այս է սէրն ա̃յ, եթէ զպատուիրանս ն̃ր
պահեսցուք. եւ պատուիրանք ն̃ր չեն ինչ
ծանունք։ *Զի ա̃մ որ յա̃յ ծնեալ է՝ 4
յաղթէ աշխարհի. եւ այս է յաղթութիւն՝
որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր։
*Իսկ ո՞վ իցէ՝ որ յաղթիցէ աշխարհի. ե- 5
թէ ոչ որ հաւատայցէ՝ եթէ յ̃ս է որդի
ա̃յ։ *Սա է՝ որ եկն ջրով եւ հոգւով եւ ա- 6
րեամբ, յ̃ս ք̃ս. ոչ ջրով միայն, այլ եւ ա-
րեամբ եւ ջրով. եւ հոգին է՝ որ վկայէ,
զի հոգին իսկ է ճշմարտութիւն։ (*Զի 7
երեք են որ վկայեն յերկինս. հայր,
բանն, եւ հոգին ս̃բ. եւ երեքեանս մի են։
*Եւ երեք են որ վկայեն յերկրի. հոգի, 8
ջուր, եւ արիւն. եւ երեքեանն մի են։)
*Իսկ եթէ զմարդկան ինչ վկայութիւն ունի 9
ցիմք՝ ապաքէն ա̃յ վկայութիւն մեծ իցէ։
Այս է վկայութիւն ա̃յ, զի վկայեաց 'ի
վ̃ր որդւոյն իւրոյ։ *Որ հաւատայ յոր- 10
դին ա̃յ, ունի յանձին զվկայութիւս զայս.
որ ոչ հաւատայ որդւոյ ա̃յ, սուտ առնէ
զնա. քանզի ոչ հաւատայ վկայութեան՝
զոր վկայեաց ա̃ծ 'ի վ̃ր որդւոյն իւրոյ։
*Իսկ այս իսկ է վկայութիւն, զի կեանս 11
յաւիտենականս ետ մեզ ա̃ծ. եւ այս են
կեանք՝ որ յորդին ն̃ր են։ *Որ ընդունի 12
զորդին, ընդունի եւ զկեանս. եւ որ ոչ
ընդունի զորդին ա̃յ, եւ ոչ զկեանս ըն-
դունի։

13 * Զայս գրեցի ձեզ՝ զի գիտասջիք եթէ ՋԵ
կեանս յաւիտենականս ունիք. և զի հա-
14 ւատայցէք յանուն որդւոյն այ. * Եւ
այս է համարձակութիւն զոր ունիմք մեք
առ նա, զի զոր ինչ հայցեսցուք ըստ կա-
15 մաց նորա, լսէ մեզ։ * Եւ եթէ գիտի-
ցեմք՝ եթէ լսէ հայցուածոցն մերոց. ա-
պա գիտեմք՝ եթէ առնումք զհայցու-
16 ածսն՝ զոր հայցեմք առ ՚ի նմանէ։ * Ե-
թէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ
մեղս՝ որ ոչ առ ՚ի մահ, խնդրեսցէ՝ և
տացէ նմա կեանս՝ մեղուցելոյն ոչ առ
՚ի մահ. են մեղք՝ որ մահու չափ են, ոչ
վասն այնորիկ ասեմ եթէ խնդրեսցես։
17 * Ամենայն անիրաւութի՝ մեղք են. և
18 են մեղք՝ որ մահու չափ են։ * Գիտեմք
եթէ ամենայն որ յայ է ծնեալ՝ ոչ մե-
ղանչէ. այլ որ յայն է ծնեալ՝ պահէ
զանձն, և չարն առ նա ոչ մերձենայ։
19 * Գիտեմք եթէ յայ եմք, և աշխարհ ա-
20 մենայն ՚ի չարի կայ։ * Եւ գիտեմք՝ ե-
թէ որդին այ եկն, և ետ մեզ միտս. զի
ծանիցուք զճշմարիտն. և եմք ՚ի ճշմար
տին որդւոյ նր յսի քսի. զի նա է ճշմա
21 րիտ այծ՝ և կեանք յաւիտենական։ * Ո-
րդեակք՝ պահեցէք զանձինս ՚ի կռապաշ
տութէ։

# ԹՈՒՂԹ
## ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԵՐԿՐՈՐԴ։

ԷԿ ՅԵՐԻՑՈՒԷ ԱՌ 1
ընտրեալ կիւրիա, եւ առ որ-
դեակս իւր զոր ես սիրեմ
ճշմարտութեամբ. եւ ոչ եթէ ես
միայն, այլ եւ ամենեքեան ոյք գիտակ
են ճշմարտութեան. * Վասն որոյ ճշմարտու- 2
թեան՝ որ ՚ի մեզ հաստատեալ է, զի եւ
ընդ ձեզ իցէ. եւ դուք յաւիտենից ընդ
մեզ իցէք. * Շնորհք՝ ողորմութիւն խա- 3
ղաղութիւն յԱստուծոյ ՚ի հօրէ, եւ ՚ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ
որդւոյն հօր՝ ճշմարտութեամբ եւ սիրով ե-
ղիցին ընդ ձեզ. * Ուրախ եղէ յոյժ, զի 4
գտի յորդեկացդ քոց՝ որ գնան ճշմար-
տութեամբ, ըստ պատուիրանին զոր առաք
՚ի հօրէ. * Եւ այժմ աղաչեմ զքեզ կիւ- 5
րիա. իբրեւ ոչ եթէ նոր ինչ պատուիրան
գրեմ քեզ, այլ զոր ի սկզբանէն ունէաք,
զի սիրեսցուք զմիմեանս. * Եւ այս է 6
սէրն, զի գնասցուք ըստ պատուիրանաց
նորա. եւ այս է պատուիրանն, զի որպէս
լուարուքն ի սկզբանէ՝ ըստ նմին գնաս-

7 ջի՛ք։ * Զի բազում մոլորեցուցիչք ելին
յաշխարհ. որ ոք ոչ խոստովանի զՅս՟ Քս՟
եկեալ մարմնով, նա մոլորեցուցիչ է՝ և
նեռն։
8 * Զգոյշ լինիջիք անձանց՝ զի մի՛ կորու֊ ԻԲ
սանիցէք՝ զոր վաստակեցէքն, այլ զի առ֊
9 նուցուք բովանդակ զվարձս։ * Ամենայն
որ յանցանէ՝ և ոչ կայ 'ի վարդապետու֊
թեան Քսի, զԱծ ոչ ճանաչէ. որ կայ 'ի
վարդապետութեան, նա՝ և զորդի և ըզ
10 Հայր ընդունի։ * Եթէ ոք գայցէ առ
ձեզ՝ և զվարդապետութիւն զայս ոչ ունի֊
ցի, մի՛ ընդունիցիք զնա 'ի տուն, և մի՛
11 ողջոյն տայցէք նմա։ * Զի որ ասասցէ
նմա ողջոյն՝ կցորդ լիցի չարեաց գործոց
12 նորա։ * Բազում ինչ ունէի գրել առ
ձեզ՝ այլ ոչ կամեցայ քարտիսիւ և դեղով
գրել. զի ակն ունիմ ինձէն իսկ գալ առ
ձեզ, և բերան 'ի բերան խօսել. զի ու֊
13 րախութիւն մեր լիցի կատարեալ։ * Ող֊
ջոյն տան քեզ որդիք քեռ քո ընտրելոյ։

Շնորհք ընդ ձեզ։

# ԹՈՒՂԹ
## ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅ
## ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
## ԵՐԿՐՈՐԴ.

ԵԴ ՅԵՐԻՑՈՒՆ. ԱՌ 1
գայիոս սիրելի. զոր՝ ես սի-
րեմ՝ ճշմարտութբ։ * Սիրե- 2
լի՝ վասն ամենայն իրաց քոյ
յաջողութեն եւ առողջութն աղօթս առ-
նեմ. որպէս է իսկ յաջողութի անձինդ
քո։ * Յոյժ ուրախ եղէ 'ի գալ եղբարց՝ 3
և լինել վկայ քոյդ ճշմարտութեդ, որ-
պէս գնաս դու ճշմարտութբ։ * Մեծ 4
ես ինչ ուրախութի քան զայս ոչ ունիմ,
զի լսեմ եթէ իմ որդեակքն ճշմարտու-
թբ գնան։ * Սիրելի՝ հաւատարիմ գոր- 5
ծես զայդ, զոր եթէ առնիցես առ եղ-
բարս՝ զդոյն եւ առ օտարս. * որք վկայե- 6
ցին զքո սիրոյդ առաջի եկեղեցւոյ. որոց
բարիս արարեալ յուղարկես արժանիս
այ։ * Զի վասն անուանն ելին, եւ ոչ- 7
ինչ յումեքէ առնուն զհեթանոսակա-
նացն։ * Մեք այսուհետեւ պարտիմք ըն- 8
դունել զայնպիսիսն, զի գործակիցք լի-
ցուք ճշմարտութեն։

9 * Գրեցի ինչ եկեղեցւոյն · այլ որ յա-
ռաջագահն 'ի նոցանէ է՝ Դիոտրեփէս ,
10 ոչ ընդունի զմեզ։ * Վասն այսորիկ ե-
թէ եկից՝ յիշեցուցից զգործս նորա՝ զոր
առնէ , բանիւք չարեօք շատախօսութե̄
առնէ զմեզ աշխատ։ և ոչ այսոքիւք շա-
տացեալ , ոչ ինքն ընդունի զեղբարս ,
և զայնոսիկ որ ընդունելինն , արգելու ·
11 նաև յեկեղեցւոյ եւս հանէ։ * Սիրելի՝
մի՛ լինիցիս նմանող չարի՝ այլ բարւոյ ·
զի որ զբարիս առնէ՝ յա՜յ է · և որ զչա-
րիս գործէ՝ նա ոչ ետես երբէք զա՜ծ։
12 Դեմետրեայ վկայեալ է յամենե-
ցունց , և յեկեղեցւոյն՝ և 'ի ճշմարտու-
թե̄ , և մեք վկայեմք · և դու գիտես՝ զի
13 ճշմարիտ է մեր վկայութիւն։ * Բազում
ինչ ունէի գրել քեզ · այլ ոչ կամիմ քար-
14 տիսիւ՜ և դեղով գրել · * զի ակնունիմ
'ի մօտոյ իսկ տեսանել զքեզ , և բերան
15 'ի բերան խօսել։ * Խաղաղութիւն ընդ
քեզ։ Ողջոյն տան քեզ սիրելիք։ Ողջոյն
տաջիր սիրելեաց մերոց իւրաքանչիւր
յանուանէ։

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՂԻԿԵԱՅ
# ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԷԵ

ՅՈՒԴԱՅ ՅԻՍՈՒՍԻ 1
քՍի ծառայ, եւ եղբայր՝ յա-
կոբայ. հեթանոսաց՝ որ յԱյ
Հօրէ էք սիրեցեալք, եւ յՍի
քՍի պահեալք եւ ընտրեալք։ * Ողորմու- 2
թի ձեզ՝ եւ խաղաղութի եւ սէր բազմաս-
ցի։ * Սիրելիք՝ զամ փոյթ յանձին կա- 3
լեալ գրել ձեզ վասն մերոյ հասարակաց
փրկութե, հարկ յանձին կալայ գրել
ձեզ եւ աղաչել՝ զի ձգնիցիք 'ի վերայ հա-
ւատոցն, որ միանգամ աւանդեցաւ
սրբոց։ * Վ՚անզի սպրդեցին մտին ո- 4
մանք, որ յառաջագոյն իսկ կատարեալ
էին 'ի սոյն դատաստան. ամբարիշտք,
որ զԱյ մերոյ շնորհսն դարձուցին յան-
կարգութի. եւ զմի միայն իշխանն՝ եւ զՏէր
մեր յՍ քՍ ուրացեալք։ * Յիշեցուցա- 5
նել ձեզ այսուհետեւ կամիմ իսկ՝ որ գի-
տէքդ զամենայն. զի Տր միանգամընդ
ժողովուրդն փրկեաց յեգիպտոսէ. երկ-
րորդ անգամ զանհաւատսն կորոյս։ * Եւ 6

զհրեշտակս՝ որ ոչ պահեցին զիւրեանց
իշխանութիւն, այլ թողին զիւրեանց բը-
նակութիւն, ՚ի դատաստանս մեծի աւ-
ուրն՝ մշտնջենաւոր կապանօք պահեաց
7 ՚ի խաւարի. * Որպէս Սոդոմ և Գոմոր,
և որ շուրջ զնոքօք քաղաքքն, որ ըստ
նմին օրինակի պոռնկեցան զհետ ընկե-
րաց մարմնոց, կան առաջի օրինակ զյաւ-
իտենական հրոյն ընկալեալ զդատաս-
8 տան. * Սա նմին օրինակի և սոքա իբ-
րև քնով դանդաչեալք՝ զմարմին պըղ-
ծեն, զտէրութիւն քամահեն՝ զփառս հայ-
9 հոյեն. * Իսկ Միքայէլ հրեշտակապետ՝
յորժամ բանսարկուն սատանայի վիճեալ
տայր պատասխանի վն Մովսիսեան մարմ-
նոյն, ոչ ժպրհեցաւ հայհոյութեան դա-
տաստանին համարձակել. այլ ասէ, սաս-
10 տեսցէ ՚ի քեզ Տր. * Իսկ սոքա զոր ինչ
ոչն իմանան՝ հայհոյեն. և զայլն ևս՝ զոր
բնութբ իբրև զանխօս անասունս գի-
11 տեն, ՚ի նոսին ապականեսցին. * Վայ
է նոցա, զի ընդ ճանապարհն Կայենի գը-
նացին, և ըստ մոլորութեան Բաղաամայ
զեղխեցան զհետ վարձուց, և ընդ հակա-
ռակութեան Կորխայ կորեան.
12 * Սոքա են ատեցեալք շողմոգք՝ երթեալ
զհետ ցանկութեանց իւրեանց. ՚ի սէրս իւ-
րեանց խարդախութբ, լինին ընդ ձեզ ու-
րախակիցք. աներկիւղ զանձինս ձարա-
կեն. ամպք անջրդիք հողմակոծեալք,

Ծառք պտղակորոյսք անպտուղք կրկնա
մեռք՝ խլեալք արմատաքի ։ * Անստա 13
ալիք ծովու, որ միշտ փրփրեն զիւրեանց
զանձանց զամօթ ։ աստեղք մոլարք, ո-
րոց վիճ խաւարին յաւիտենից պահեալ
է ։ * Մարգարէացաւ վասն նց և եօթ- 14
ներորդն յԱդամայ Ենովք՝ և ասէ ։ Ահա
ւասիկ եկն Տր բիւրովք սրբովք հրեշտա
կօք, * առնել դատաստան ընդ ամենայ 15
նի, և յանդիմանել զամենայն ամբա-
րիշտս վասն գործոց իւրեանց՝ զոր ամ-
բարշտեցին ։ և վն ամենայն խիստ բա-
նից, զոր խօսեցան զնմանէ մեղաւորք և
ամբարիշտք ։ * Սոքա են տրտնջօղք և 16
շոգմոգք, երթեալք ըստ իւրեանց անձանց
ցանկութեանց ։ և բերանք նոցա զամբար
տաւանս բարբառին ։ առնուն ակն երե-
սաց վասն օգտի ։
ԵԲ * Բայց դուք սիրելիք՝ յիշեցէք զկան- 17
խասաց բանս զառաքելոցն տն մերոյ յսի
քսի ։ * զի ասէին ձեզ, եթէ 'ի յետին 18
ժամանակս եղիցին մարդք արհամար-
հօղք, երթեալք ըստ իւրեանց ամբարշ
տութեանցն ցանկութեանց ։ * Սոքա են նշա 19
ւակեալք շնչաւորք, որ զհոգին ոչ ունի-
ցին ։ * Այլ մեք սիրելիք՝ եղիցուք շի- 20
նել զանձինս սրբութբն հաւատոց 'ի հո-
գին սբ ։ կացցուք յաղօթս, * պահել 21
զանձինս սիրովն այ ։ ակնունել ողորմու-
թեանն տն մերոյ յսի քսի 'ի կեանս

22 յաւիտենականս։ * Եւ ոմանց գատա-
23 պարտելոց լինիջի՛ք կշտամբիչք, * և զո-
մանս ապրեցուցանիջի՛ք՝ յափշտակեալ
՚ի հրոյ։ և ոմանց ողորմեսջի՛ք երկիւղիւ
ատել, և զպատմուճանն որ ՚ի մարմ-
24 նոյն իցէ աղտեղեալ։ * Եւ այնմ, որ
կարօղն է պահել զձեզ անարատս և ան-
բիծս, հաստատել առաջի փառաց փա-
25 ռացն աներկեան ցնծութեամբ։ * միոյն այ
փրկչին մերոյ յսի քսի տն մերոյ՝ փառք
մեծութի զօրութի և իշխանութի՝ յառաջ
քան զամ յաւիտեանս, և այժմ և յա-
մենայն յաւիտեանս. ամէն։

# ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
# ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ
# ԵՒ
# ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՒԵՏԱՐԱՆՉԻ

## ԳԼ. Ա.

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ 1
յի՟ի քի՟ի, 'ի ձեռն որոյ ետ ա՟ծ
ցուցանել ծառայից իւրոց՝ որ
ինչ լինելոց է վաղվաղակի. և
նշանակեաց առաքելով 'ի ձեռն հրեշտա
կի իւրոյ, առ ծառայ իւր յովհաննէս։
* Որ վկայեաց զվկայութի բանին ա՟յ, և ըզ 2
վկայութի յի՟ի քի՟ի՝ զոր ետես. և որ էր՝ և որ
լինելոցն էր յետ այնորիկ։ * Երանի՝ որ 3
կարդասցէ կամ լուիցէ զբանս մարգա
րէութեանս, և պահեսցէ զոր 'ի սմա գրեալ
է. զի ժամանակս մերձեալ է։
* 'Ի յովհաննէ առ եօթն եկեղեցիս՝ որ 4
են յասիայ, շնորհք ը՟ն ձեզ և խաղաղութի
յա՟յ՝ յէէն՝ և որ էն՝ և որ գալոցն է, և
յեօթն զօրութեանց հոգւոյն՝ որ է առաջի
աթոռոյն իւրոյ. * Եւ 'ի յի՟է քի՟է հաւատա 5
րիմ վկայէն, որ է անդրանիկ 'ի մեռելոց,
և իշխան թագաւորութեանց երկրի. որ սի

րեաց զմեզ, եւ ելոյծ զկապանս մեղաց
6 մերոց արեամբն իւրով. * Եւ արար զմեզ
թագաւորս եւ քահանայս այ՟ եւ հօր իւ-
րոյ. որում փառք եւ զօրութի՟ն՝ այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։
7 * Ահաւասիկ գալոց է ը՟ն ամպս. եւ տես-
ցեն զնա ամ՟ն աչք, եւ տեսցեն զնա ծագք
երկրի, եւ որք խոցեցին զնա ամ՟քեան յերկ-
րի, եւ կոծեսցին ՚ի վ՟ր ն՟ր. այո՝ ամէն։
8 * Ես եմ այբ եւ ես եմ քէ, ասէ տ՟ր ա՟ծ,
որ էն՝ եւ որ է՝ եւ որ գալոցն է՝ ամենակալ։
9 * Ես յովհաննէս եղբայր ձեր եւ հ՟որա-
կից նեղութե՟ն՝ եւ արքայութե՟ն՝ եւ համբերութե՟ն
որ ՚ի ք՟ս յ՟ս. եղէ ես ՚ի կղզւոջն որ անուա-
նեալ կոչի պատմոս՝ վ՟ս բանին եւ վ՟ս վկայ-
10 ութե՟ն յ՟ի ք՟սի։ * Եւ եղէ յիս հոգի ՚ի
կիւրակէի աւուր, եւ լուայ զձայն զհետ
իմ զմեծ իբրեւ զձայն փողոյ, որ ասէր
ցիս. Ես եմ ալփա՝ եւ ով. առաջին եւ վեր-
11 ջին. * զոր տեսանես՝ գրեա՛ ՚ի գիրս, եւ
տո՛ւր առ եօթն եկեղեցիս՝ որ յե-
փեսոս, եւ ՚ի զմիւռնիա՝ ՚ի պերգամոն, եւ
՚ի թիւատիրա, եւ ՚ի սարդիկէ, եւ ՚ի փի-
12 ղադեղփեա, եւ ՚ի լաւոդիկեա։ * Եւ
դարձայ տեսանել զձայնն՝ որ խօսէր ցիս.
եւ ՚ի դառնալն իմում տեսի եօթն ճրա-
13 գարան ոսկի։ * Եւ ՚ի մէջ եօթն ճրա-
գարանացն նման որդւոյ մարդոյ, զգե-
ցեալ պատմուճան պճղնաւոր, եւ գօտեւո-
14 րեալ առ ստեամբքն գօտի ոսկեղէն. * Եւ

գլուխ

գլուխ նր եւ հերքն իբրեւ զասր սպիտակ՝
եւ որպէս զձիւն. եւ աչք նր որպէս բոց հրոյ. * եւ 15
ոտք նր նմանեալ պղնձոյ ծխելոյ ՚ի մէջ
հնոցի հրաշէկ. եւ ձայն նր իբրեւ զձայն
ջուրց բազմաց. * Եւ ունէր յաջոյ ձե_ 16
ռինն իւրում աստեղս եօթն, եւ ՚ի բերա
նոյ նր ելանէր սուր երկբերանեան. եւ ե_
րեսք նր իբրեւ զարեգակն ճառագայթել
երեւէին. * Եւ իբրեւ տեսի զնա՝ անկայ 17
առ ոտս նր իբրեւ զմեռեալ. եւ եդ ՚ի վե
րայ իմ զաջ իւր՝ եւ ասէ ցիս. մի՛ երկնչիր, ես
եմ առաջին, եւ ես եմ յետին. * եւ ես 18
եմ կեանք՝ եւ ես նոյն որ մեռայ, եւ եմ
կենդանի այժմ եւ միշտ եւ յաւիտեանս
յաւիտենից. ամէն. եւ ունիմ զփականս
մահու եւ դժոխոց. * Գրեա՛ զոր տեսա 19
նես՝ որ էն, եւ որ յապա՝ եւ որ հանդերձ
եալ է լինել այս. * զխորհուրդ եօթն աս_ 20
տեղացդ՝ զոր տեսեր յաջոյ իմում զեօթն
ճրագարանս ոսկիս. եօթն աստեղքն՝
հրեշտակք եօթն եկեղեցեացն են, եւ ճր
ագարանքն եօթն՝ եօթն եկեղեցիքն են.

## ԳԼ. Բ.

Առ հրեշտակ եփեսացւոց եկեղեցւոյն 1
գրեա. այսպէս ասէ կալօղն՝ որ ունի
զաստեղս եօթն յաջում ձեռին իւրում, եւ
շրջի ՚ի մէջ եօթն աշտանակի ոսկւոյ.
* Գիտեմ զգործս քո եւ զվաստակս քո եւ 2
զհամբերութիւն քո. եւ զի ոչ բառնաս ըզ-

չարս, և փորձեցեր՝ որ ասեն զինքեանս ա-
ռաքեալս՝ և ոչ են, և հեբրայեցիս՝ և սը-
3 տեն ։ *Եւ համբերեցեր և վշտացար
4 վն անուան իմոյ՝ և աշխատեցար ։ *Այլ
ասեմ առ քեզ, զի զսէրն քո զառաջին
5 թողեր ։ *Յիշեա այժմ ուստի անկարն՝
և ապաշխարեա, և զառաջին գործսն քո
արա ։ ապա թէ ոչ՝ գամ ես վաղվաղակի,
և շարժեցից զաշտանակս քո 'ի տեղւոջէ
6 իւրմէ՝ եթէ ոչ ապաշխարեսցես ։ *Բայց
զայս արա՝ զի ատեցես զգործսն Նիկո
7 ղայոսի, զոր ես ատեամ ։ *Որ ունի ա-
կանջս լսելոյ, լուիցէ զինչ ասէ հոգին
սբ առ եկեղեցիս ։ որ յաղթէ, տաց նմա
ուտել 'ի փայտէն կենաց՝ որ է 'ի մէջ
8 դրախտին այ ։ *Եւ առ հրեշտակ զմիւռ
նացւոց եկեղեցւոյն գրեա ։ այսպէս ասէ
առաջինն և անվախճանն, որ եղև մե-
9 ռեալ՝ և կենդանացաւ ։ *Գիտեմ զգործս
քո՝ և զնեղութիւն և զաղքատութիւն, այլ
աղքատութիւն քո մեծութիւն եղիցի ։ և ըզ
հայհոյութիւն՝ որ ասէին զինքեանս հը
րէայս գոլ՝ և չէին ինչ, այլ ժողով սա-
10 տանայի ։ *Մի երկնչիր՝ վասն որոյ կա-
միս չարչարիլ ։ ահա հանդերձէ բանսար
կուն արկանել 'ի ձէնջ 'ի բանտ, զի փոր-
ձիցիք, և ունիք նեղութիւն աւուրս տասն ։
Լեր հաւատարիմ մինչև 'ի մահ, և տաց
11 քեզ զպսակն կենաց ։ *Որ ունի ականջս
լսելոյ՝ լուիցէ զինչ հոգին սբ ասէ առ ե-

եկեղեցիս․ որ յաղթէ, ոչ անիրաւի յերկ-
րորդ մահուանէն ։ * Եւ առ հրեշտակն՝ 12
որ 'ի պերգամոն եկեղեցւոյն, գրեա՛․ այս-
պէս ասէ՝ որ ունի զսուրն երկսայրի սր-
բեալ ։ * Գիտեմ զգործս քո՝ և զի բնակեալ 13
ես ուր աթոռն է սատանայի․ և ունիս
զանուն իմ, և ոչ ուրացար զհաւատս իմ
յաւուր յորում անթիպաս վկայն իմ հա-
ւատարիմ եղև․ զի վկայ է իմ հաւատա
րիմ ամ̃ հաւատացելոցն՝ որ սպանաւ 'ի ձէնջ,
որ կայք՝ ուր սատանայ է բնակեալ ։
* Այլ ունիմ առ քեզ սակաւ․ զի կայ 14
առ քեզ վարդապետութիւն բաղաամու՝ որ ու-
սոյց զբաղակ դնել գայթագղութիւն առա-
ջի որդւոցն ի̃լի, ուտել նզ̃ զոհեալ՝ և պո-
ռնկել ։ * այսպ̃ս և դու ունիս զվարդապե 15
տութիւն նիկողայեցւոց՝ զոր ես ատեամ ։
* Արդ՝ ապաշխարեա՛, ապա թէ ոչ՝ գամ 16
վաղվաղակի․ և պատերազմեցայց ը̃ նո̃
սրով բերանոյ իմոյ ։ * Որ ունիցի ականջս 17
լսել՝ լուիցէ զինչ հոգին ասէ առ եկեղե
ցիս․ որ յաղթէ՝ տաց նմ̃ ուտել 'ի մանա
նայէն թաքուցելոյ, և տաց նմա զգիրն
սրբութէ․ և գրեալ անուն նոր 'ի գիրն, զոր
ոչոք գիտէ՝ բայց միայն որ առնուն ։ * Եւ 18
առ հրեշտակն որ 'ի թիւատիրոյ եկեղեցւոյն՝
գրեա՛․ այսպէս ասէ որդին այ̃, որոյ աչք
իւր են իբրև զբոց հրոյ, և ոտք նր̃ նման
պղնձի ծխելոյ ։ * Գիտեմ զգործս քո՝ և զսէր 19
և զհաւատ՝ և զպաշտօն քո համբերութե̃ ․

 զի

զի ե̃զմէ վաստակ քո վերջինն ք̃ զառա
20 ջինն։ * Այլ ասեմ առ քեզ ե̃զմ· զի թո_
ղեր զկինն զյեզաբել․ որ ասէր զինքն
մարգարէ, և ուսուցանէր մոլորուի՝ ըզ
ծառայս իմ՝ պոռնկել և ուտել զզոհէլ·
21 * Եւ ետու նմ̃ ժամանակ ապաշխարել
զպոռնկութին իւրեանց՝ և ոչ ապաշխարե
22 ցին։ * Ահաւասիկ ես արկանեմ զնա ՚ի
հին, և զգործակիցս իւր ը̃ որս շնացաւ՝
՚ի նեղութիս մեծամեծս․ եթէ ոչ ապաշ_
23 խարեսցեն ՚ի գործոց իւրեանց։ * Եւ
զորդիս նր̃ սպանից մահուամբ․ և ծա_
նիցեն ա̃մ եկեղեցիք՝ թէ ես եմ որ յան_
դիմանեմ զերիկամունս և զսիրտս․ և
տամ ձեզ իւրաքանչիւր ըստ գործոց իւ_
24 րեանց։ * Այլ ձեզ ասեմ որք ՚ի թիւա
տիր էք, և ոչ ունիք զվարդապետութին
զայս․ որ ոչ ծանեայք զխորս սատանայի՝
զոր խօսին․ ոչ արկից զձեօք ծանրութի։
25 * այլ զոր ունիք, պահեցէ՛ք՝ մինչև ես
26 գամ։ * Եւ որ յաղթէ՝ և պահէ զգործս
իմ մինչև ցվախճան, տաց նմա իշխանութի
27 ՚ի վր̃ ազգաց։ * և հովուեսցէ զն̃ս գա_
ւազանաւ երկաթեաւ․ և իբրև զանօթ
28 բրուտի փշրեսցէ զն̃ս։ * Որպ̃ և ես ընկալայ
՚ի հօրէ իմմէ, և տաց նմ̃ զաստղն առա
29 ւօտուն։ * Որ ունի ականջս լսելոյ՝ լուի
ցէ զինչ հոգին ասէ առ եկեղեցիս։

Եւ առ հրեշտակ սարդիկացւոց եկեղեց 1
ւոյն գրեա. այսպէս ասէ՝ որ ունի
զեօթն հոգիսն այ՝ և զեօթն աստեղս. գի
տեմ զգործս քո՝ զի անուն կենդանւոյ ու
նիս՝ և մեռեալ ես: * Եղիր արթուն՝ և հաս 2
տատեա զայսուհետև՝ զի հանդերձեալ ես
մեռանել. քանզի ոչ գտի զգործս քո կա
տարեալ առաջի այ. * Արդ եղբ յիշեա զթէ 3
որպէս լուար, և պահեա և ապաշխարեա.
ապա թէ ոչ զուարթանաս՝ գամ որպէս գող.
և ոչ ոք իմանայ զգալուստ իմ առ քեզ.
* Ունիս սակաւ մի զանուն սարդիկացւո 4
ցըն, որք ոչ աղտեղացուցին զհանդերձս
իւրեանց. և շրջին ընդ իս սպիտակս՝ որում
արժանի եղեն: * Որ յաղթէ՝ այսպէս ըզ 5
գեցցի սպիտակս, և ոչ ջնջեցից զանուն նր
ի դպրութենէն կենաց. և խոստովանեցայց
զանուն նր առաջի հօր իմոյ՝ և առաջի հր
րեշտակաց: * Որ ունի ականջս լսելոյ՝ լը 6
ւիցէ զինչ ասէ հոգին առ եկեղեցիս: * Եւ 7
առ հրեշտակն փիլադելփեաց եկեղեցւոյն
գրեա. այսպէս ասէ սուրբն ճշմարիտն, որ ու
նի զփականս դաւթի. բանայ՝ և ոչ ոք է
որ փակէ, և փակէ՝ և ոչ ոք է որ բանայ.
* Գիտեմ զգործս քո. ահա եդի առաջի քո 8
դուռն բացեալ, զոր ոչ ոք կարէ փակել.
զի սակաւիկ ունիս զօրութի, և պահեցեր
զբանս իմ, և ոչ ուրացար զանուն իմ: * Ա 9

 հա

հաւասիկ ես տամ քեզ զժողովն սատա-
նայի, որք ասեն զինքեանս հրէայս գոլ՝
և ոչ են, այլ ստեն. արարից զնոսա՝ զի ե-
կեսցեն՝ և երկիրպագցեն առաջի ոտից
10 քոց, և ծանիցեն զի ես սիրեցի զքեզ։* Զի
պահեցեր զբան համբերութեան իմոյ, և ես
պահեցից զքեզ ՚ի ժամ փորձութեան քո. որ
հանդերձեալ է գալ յա՟մ տիեզերս փոր-
11 ձել զա՟մ բնակեալս յերեսս երկրի։* Ահա
գամ վաղվաղակի, կա՛լ զոր ունիս՝ զի
12 մի՛ ոք առցէ զպսակ քո։* Որ յաղթէ՝ ա-
րարից զնա սիւն տաճարի այ՟ իմոյ, և ար-
տաքս այլ մի՛ ևս ելցէ. և գրեցից ՚ի վ՟ր
նր՟ զանուն այ՟ իմոյ, և զանուն քաղաքի
այ՟ իմոյ՝ զնորն եէ՟մի, որ իջանելոց է յերկ-
13 նից այ՟ իմոյ. և անուն նորա նոր։* Որ ու-
նի ականջս՝ լուիցէ զինչ ասէ հոգին առ
14 եկեղեցիս։* Եւ առ հրեշտակն լաւոդի-
կեայ եկղ՟ցւոյն գրեա՛. այսպ՟ս ասէ ամէնն
վկայն հաւատարիմ և ճշմարիտ, սկիզբն
15 սկզբան արարածոց այ՟։* Գիտեմ զգործս
քո՝ զի ոչ ցուրտ ես՝ և ոչ ջերմ. պարտ էր
16 քեզ ցուրտ լինել՝ և կամ ջերմ։* Այլ դու
գաղջ ես՝ և ոչ ջերմ և ոչ ցուրտ, հան-
17 դերձեալ ես փսխել ՚ի բերանոյ իմմէ։* Զի
ասես. մեծատուն էի՝ և մեծացայ, և ոչ
ինչ կարօտ եմ. և ոչ գիտես՝ եթէ դու
ես ողորմելի և հեզգ և աղքատ՝ մերկ և
18 կոյր։* Արդ՝ ես խորհրդակից եղէց քեզ,
առ գնեա՛ յինէն ոսկի փորձեալ ՚ի հրոյ՝ զի
մե-

մեծասցիս, և հանդերձս սպիտակս՝ զի ըզ
գեցցիս, զի մի՛ երևեսցի անվայելչութիւն մեր-
կութեան քո. և դիր դեղ յաչս քո՝ զի տեսցես.
* Ես՝ զոր սիրեմ, յանդիմանեմ և խրա 19
տեմ. նախանձեա՛ այժմ, և ապաշխարեա՛.
* Ահաւասիկ կամ ես առ դուրս և բախեմ. 20
եթէ ոք լուիցէ ձայնի իմում՝ և բանայցէ
զդրունսն, մտից առ նա՝ և ընթրիս ա-
րարից առ նա, և նա ընդ իս. * Որ յաղթէ՝ 21
տաց նմա նստել ընդ իս յաթոռ իմ, որպէս և
ես յաղթեցի՝ և նստայ յաթոռ հօր իմոյ.
* Որ ունիցի ականջս՝ լուիցէ՛ զինչ ասէ 22
հոգին առ եկեղեցիս.

## ԳԼ. Դ.

Եւ յետ այսր ամենայնի տեսի՝ և ահա դրունք 1
երկնից բացեալ էին, և ձայն փողոյն
առաջնոյ զոր լուայ՝ խօսէր ընդ իս և ասէր.
Ել այսր՝ և ցուցից քեզ՝ զինչ լինելոց է յա-
ռաջ ժամուս. * Եւ ժամանեալ յիս հոգի, և 2
տեսի աթոռ մի՝ զի կայր յերկինս. * և 3
՚ի վերայ աթոռոյն նստէր նման տեսլեան
ականց յասպիսոյ և սարդիոնի. * և քհ̃նյք 4
շուրջ զաթոռովն նմանք տեսլեան զմրխ-
տի և շուրջ զաթոռովն աթոռք քսան և
չորք՝ և ՚ի վերայ աթոռոցն նստէին քսան և
չորք երիցունք՝ զգեցեալ հանդերձս սպի-
տակս, և ՚ի գլուխս իւրեանց պսակս ոս-
կիս. * Եւ յաթոռոյ անտի ելանէին փայ- 5
լատակմունք և ձայնք և որոտմունք. և
եօթն

եօթն ղամբարք հրոյ բորբոքելոյ առաջի
6 աթոռոյն, որ են եօթն հոգիքն այ̃։ * Եւ
էր առաջի աթոռոյն ծով ապակեղէն՝ նը
ման աղխտակուռ սառին, և 'ի մէջ աթո֊
ռոյն չորք կենդանիք՝ և լի էին աչօք ա֊
7 ռաջոյ և յետոյ։ * Եւ էր կենդանին ա֊
ռաջին նման առիւծու, և երկ̃դ կենդա
նին նման զուարակի, և եր̃րդ կենդանին
ունէր երեսս մարդոյ, և չր̃դ կենդանին
8 նման արծուոյ թռուցելոյ։ * Եւ չորից
կենդանեացն էին միոյ միոյ 'ի նոցանէ վեց
թևք, շուրջանակի և 'ի ներքոյ լի էին ա֊
չօք, ոչ հանգչէին՝ ոչ զտիւ և ոչ զգիշեր՝
ասելով․ ս̃բ ս̃բ ս̃բ տ̃ր ա̃ծ ամենակալ՝ որ
9 էն և ես, և որ գալոց ես։ * Եւ յորժամ
տային կենդանիքն փառս և պատիւ և գո
հութի նստելոյն 'ի վ̃ր աթոռոյն՝ կենդան
10 ւոյն յաւիտեանս յաւիտենից, (* անկա
նէին քսան և չորք երիցունքն առաջի նս֊
տելոյն յաթոռն, և երկիր պագանէին
կենդանւոյն յաւիտեանս յաւիտենից․) և
դնէին զպսակս իւրեանց առաջի աթո֊
11 ռոյն ասելով, * արժանի ես տ̃ր ա̃ծ մեր
նք՝ առնուլ փառս և պատիւ և զօրութի,
զի դու ստեղծեր զա̃մ․ և 'ի կամըն քո
ստեղծան՝ և կան հաստատուն։

## ԳԼ․ Ե․

1 Եւ տեսի 'ի ձեռս աջոյ՝ որ նստէր 'ի վ̃ր
աթոռոյն՝ գիրք գրեալ ներքոյ և ար֊

տաք

տաքոյ, և կնքել եօթն կնքով։ * Եւ տե- 2
սի հրեշտակ մի զօրաւոր՝ զի քարոզէր ՚ի
ձայն մեծ. ո՞ է արժանի բանալ զգիրսդ՝
և լուծանել զկնիքս նր։ * Եւ ոչ ոք կարէր՝ 3
ո՛չ ՚ի յերկինս և ոչ յերկրի և ոչ ՚ի ներ-
քոյ երկրի՝ բանալ զգիրսն, զի ոչ տեսին
զնա։ * Եւ ես լայի ուժգին՝ զի ոչ ոք գը- 4
տաւ արժանի բանալ զգիրքն և հայել ՚ի
նա։ * Եւ մի յերիցանցն ասէ ցիս. մի՛ 5
լար, ահաւասիկ յաղթեաց առիւծն յազ-
գէն յուդայ յարմատոյն դաւթի՝ բանալ
զգիրքն՝ և լուծանել զեօթն կնիքսն նր։
* Եւ տեսի ՚ի մէջ աթոռոյն և ՚ի մէջ չո- 6
րից կենդանեացն՝ և ՚ի մէջ երիցանցն
գառն կայր զենեալ, որ ունէր եօթն եղ-
ջիւրս՝ և աչս եօթն, որ են եօթն հոգիք
այ՝ որ են առաքեալ ը ամ երկիր։ * Եւ 7
եկն ընկալաւ յաջոյ ձեռանէ նր՝ որ նս-
տէր ՚ի վր աթոռոյն։ * Եւ յորժամ առ- 8
գին, չորք կենդանիքն և քսան և չորք
երիցունքն անկանէին առաջի գառինն.
և ունէին իւրաքանչիւր քնար՝ և բուր-
վառ ոսկի լի խնկով, որ է աղօթք սրբց։
* Եւ օրհնէին երգս նորս և ասէին. ար- 9
ժանի ես առնուլ զգիրդ՝ և բանալ զկը-
նիքս դորա, զի զենար՝ և գնեցեր զմեզ
այ արեամբդ քով՝ յամ ազգաց և ՚ի լե-
զուաց և ՚ի ժողովոց հեթանոսաց։ * Եւ 10
արարեր զսոսա այ մերոյ թագաւորս և
քահանայս՝ թագաւորել ՚ի վր երկրի.
* Եւ

11 * Եւ տեսի, և լուայ զձայն հրեշտակաց
բազմաց՝ որք կային շուրջ զաթոռովն և
զչորիւք կենդանեօքն և զքահանայիւքն.
և էր թիւն նց՝ բիւրք բիւրոց՝ և հազարք
12 հազարաց. * Ասէին ձայնիւ մեծաւ. Ար-
ժան է գառնդ զենել առնուլ զմեծութի
և զիմաստութի և զզօրութի և զպատիւ և
13 զփառս և զօրհնութի. * Եւ ամ՛ արարածք՝
որ են յերկինս և յերկրի և ՚ի ծովու և որ
՚ի նս՝ լուայ զի ասէին. որ նստի յաթոռն՝
և գառնն օրհնեալ բարձրացեալ և փառա-
14 ւորեալ յաւիտեանս յաւիտենից. * Եւ
չորք կենդանիքն ասէին, ամէն. և երի-
ցունքն անկանէին առաջի նր և երկիր-
պագանէին.

## ԳԼ. Զ.

1 Եւ տեսի զի եբաց զմին ՚ի կնքոցն, և
լուայ ՚ի միոյ ՚ի չորից կենդանեացն
իբրև զձայն որոտման՝ զի ասէր՝ թէ գամ.
2 * և տեսի՝ և ահա ձի սպիտակ, և որ հե-
ծեալն էր ՚ի նմա՝ ունէր աղեղն. և տուաւ
նմա պսակ, և եկն յաղթօղն՝ զի յաղթես-
3 ցէ. * Եւ յորժամ եբաց զկնիքն երկրդ,
լուայ յերկրորդ կենդանւոյն՝ զի ասէր,
4 գամ. * և ել այլ ձի կարմիր. և որ հե-
ծեալն էր ՚ի վր նր՝ տուաւ նմա առնուլ
զխաղաղութի յերկրէ, զի զմիմեանս զեն-
5 ցեն. և տուաւ նմա սուր մի մեծ. * Եւ
յորժամ եբաց զկնիքն երրդ, լուայ յեր-

բորդ կենդանւոյն՝ զի ասէր՝ թէ գամ. և
տեսի՝ և ահա ձի սեաւ, և որ նստեալն էր
՚ի վ՟ր ն՟ր՝ ունէր կշիռս ՚ի ձեռին իւրում:
* Եւ լուայ ձայն ՚ի միջոյ չորից կենդա 6
նեացն. կապիճ մի ցորեան՝ դենարի միոջ,
և երեք կապիճ գարի՝ դենարի միոջ. և
ձէթ և գինի մի՛ մնասեսցես: * Եւ յոր- 7
ժամ եբաց զկնիքն չ՟րդ, լուայ ձայն ՚ի
չ՟րդ կենդանւոյն՝ զի ասէր՝ թէ գամ: * և 8
տեսի՝ և ահա ձի շլոուս, և որ նստէրն ՚ի
վ՟ր՝ ունէր զմահ, և դժոխք երթային ըղ-
հետ ն՟ր. և տուաւ նմա իշխանութի չոր-
րորդ մասին աշխարհի՝ սատակել սրով և
սովով և մահուամբ՝ և գազանօք երկրի.
* Եւ յորժամ եբաց զկնիքն հինգերորդ՝ 9
տեսի ՚ի ներքոյ սեղանոյն զհոգիս ամ՟
մարդկան զենեալ վ՟ն բանին այ՟՝ և վ՟ն վը-
կայութե ն՟ր զոր ունէին: * որք ասէին ՚ի 10
ձայն մեծ. մինչև յե՞րբ տ՟ր ս՟ր և ճշմա-
րիտ՝ ոչ դատիս, և խնդրես զվրէժ արեան
մերոյ ՚ի բնակչաց երկրի: * Եւ տուաւ 11
ն՟ց արկանելիս սպիտակս, և ասացաւ ն՟ց
զի հանգիցեն փոքր մի ժամանակ, մինչև
լցցին ծառայակիցք ն՟ց և եղբարք ն՟ց որք
հանդերձեալ են կատարիլ իբրև զն՟ա:
* Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն վեցե- 12
րորդ՝ եղև շարժումն մեծ, և արեգակն
եղև սեաւ իբրև զկապերտ այծեայ, և
լուսինն բոլորովին եղև արիւն: * և աս- 13
տեղք երկնից թօթափեցան ՚ի յերկիր,

որպէս տերև թզենւոյ զի ուժգին շարժիցի
14 'ի հողմոյ. * Եւ երկին իբրև զմագա_
ղաթեայ գիրս գալարեր. և ամ լերինք
և կղզիք 'ի տեղւոյ իւրեանց շարժեցան.
15 * Եւ թագաւորք երկրի և իշխանք՝ հա_
զարապետք և մեծամեծք և զօրաւորք՝
և ամ ծառայք և ամ ազատք թաքուցին
զինքեանս յայրս և 'ի ծերպս վիմաց.
16 * Եւ ասէին լերանց՝ թէ անկերուք 'ի վր
մեր, և ցբլուրս՝ թէ ծածկեցէք զմեզ.
17 * զի եկն օր մեծ բարկութե նր. և ով կա_
րէ կալ առաջի նորա.

## ԳԼ. Է.

1 Եւ յետ այնորիկ տեսի չորս հրեշտակս՝
զի կային 'ի չորս անկիւնս երկրի. և
ունէին զչորս հողմս երկրի՝ զի մի շնչեսցէ
հողմ 'ի վր երկրի, և մի 'ի ծովու՝ և մի 'ի
2 ծառս. * Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի ել
յարևելից, և ունէր զկնիք այ կենդանւոյ,
և աղաղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս
հրեշտակսն՝ որոց տուեալ էր իշխանութի ա_
3 պականել զերկիր և զծով. * և ասէր. մի'
վնասէք երկրի՝ մի' ծովու՝ մի' ծառոց, դա_
դարեցէք մինչև կնքեսցուք զծառայս այ ի_
4 մոյ 'ի ճակատս նց. * Եւ լուայ զթիւ կնք_
քելոցն՝ հարիւր քառասուն և չորք հազար
5 կնքեալք յազգէ որդւոցն իլի. * Յազգէն
յուդայ՝ երկոտասան հազար կնքեալ.
Յազգէն ռուբէնի՝ երկոտասան հազար

կնքեալ։ Յազգէն գադայ՝ երկոտասան
հազար կնքեալ։ * Յազգէն ասերայ՝ եր- 6
կոտասան հազար կնքեալ։ Յազգէն Նեփ-
թաղիմայ՝ երկոտասան հազար կնքեալ։
Յազգէն մանասէի՝ երկոտասան հազար
կնքեալ։ * Յազգէն շմաւոնի՝ երկոտա 7
սան հազար կնքեալ։ Յազգէն ղեւեայ՝ եր-
կոտասան հազար կնքեալ։ Յազգէն իսա-
քարայ՝ երկոտ̃ան հազար կնքեալ։ * Յազ- 8
գէն զաբուղոնի՝ երկոտ̃ան հազար կըն-
քեալ։ Յազգէն յովսեփայ՝ երկոտասան
հազար կնքեալ։ Յազգէն բենիամենի՝ եր-
կոտասան հազար կնքեալ։ * Եւ յետ այսո 9
րիկ տեսի՝ և ահա ժողովուրդ բ̃զմ որոց
ոչ գոյր թիւ, յամ̃ հեթանոսաց և յամ̃
ազգաց և յամ̃ լեզուաց և յամ̃ ժ̃ղվրդոց,
որք կային առաջի աթոռոյն և առաջի գա-
ռինն՝ արկեալ զիւրեամբք հանդերձս ըս-
պիտակս, և արմաւենիս՚ի ձեռս իւրեանց։
* աղաղակէին ՚ի ձայն մեծ՝ և ասէին։ 10
փրկութի̃ այ̃ մերոյ՝ որ նստի՚ի վ̃ր աթոռոյն,
և գառինն։ * Եւ ամ̃ հրեշտակք կային 11
շուրջ զաթոռովն և զերիցամբքն և զչո-
րիւք կենդանեօքն, և անկանէին յերեսս
առաջի աթոռոյն՝ և երկիրպագանէին այ̃,
* ասելով։ ամէն։ օրհնութի̃ և փառք և ի- 12
մաստութի̃ և գոհութի̃ և պատիւ և զօրութի̃
և շնորհք ամ̃ն այ̃ մերոյ՝ յաւիտեանս յաւի-
տենից։ ամէն։ * Եւ ասէ ցիս մի յերիցանց 13
անտի։ սոքա որ զգեցեալս են զհանդերձս

 սպի

14 սպիտակս՝ ո՞յք են՝ և կամ ուստի՞ գան. * Եւ
ասացի ցնա. տ՟ր՝ դու գիտես, և ասէ ցիս.
դ՟ք են՝ որ գան ՚ի վշտաց մեծաց, և լուա
ցին զպատմուճանս իւրեանց՝ և սպիտակա-
15 ցուցին արեամբ գառինն. * վ՟ն այնորիկ
են առաջի աթոռոյն ա՟յ՝ և պաշտեն զնա
զտիւ և զգիշեր ՚ի տաճարի ն՟ր. և որ նստի
16 ՚ի վ՟ր աթոռոյն՝ բնակեալ է ՚ի ն՟ս. * ոչ
քաղցիցեն և ոչ ծարաւիցեն, և ոչ՛ք մե-
17 ղիցէ ն՟ց՝ ոչ արեգակն և ոչ տօթ. * Եւ
գառնն ՚ի մէջ աթոռոյն իւրոյ հով-
ուեսցէ զն՟ս, և առաջնորդեսցէ ն՟ց ՚ի կե-
նաց աղբիւր ջրոյ կենդանւոյ. քանզի ե-
հան ա՟ծ զա՟մ արտօսր յերեսաց ն՟ց.

## ԳԼ. Ը.

1 Եւ յորժամ եբաց զկնիքն եօթներորդ՝
եղև լռութիւն յերկինս՝ ո՟պ կէս ժամու.
2 * և տեսի հրեշտակս եօթն, որ առաջի
ա՟յ կային. և տուաւ նոցա եօթն փողս.
3 * Եւ այլ հրեշտակ եկն եկաց առ սեղանն,
և ունէր խնկանոց ոսկի. և տուաւ նմա
խունկ բ՟զմ, զի մատուսցէ զաղօթս ա՟մ
սրբոց ՚ի վ՟ր ոսկեղէն սեղանոյ առաջի ա-
4 թոռոյն. * և ել ծուխ խնկոցն աղօթք
ս՟բցն ՚ի ձեռաց հրեշտակացն առաջի ա՟յ.
5 * Եւ ելից հրեշտակն զխնկանոցն ՚ի հրոյ
սեղանոյն՝ և արկ զնա յերկիր. և եղև
որոտումն և ձայնք և փայլատակումն և
6 շարժումն. * Եւ եօթն հրեշտակքն



որ

որ ունէին եօթն փողս՝ պատրաստեցին
զինքեանս առ ՚ի հարկանել։ * Եւ առա 7
ջին հրեշտակն եհար զփողն, և եղև կար_
կուտ և հուր և արիւն խառնեալ, և ան_
կաւ յերկիր, և զերրորդ մասն երկրի այ_
րեաց, և զերրորդ մասն ծառոց այրեաց, և
զա̃մ դալար խոտոյ այրեաց։ * Եւ երկրդ 8
հրեշտակն փողեաց, և իբրև զլեառն մի
մեծ հրդեհեալ անկաւ ՚ի ծով, և եղև
եր̃դ մասն ծովու արիւն. * և սատակե 9
ցաւ եր̃դ մասն ղուղակաց, և որ ունէր
շունչ կենդանի՝ ապականեցաւ. (և եր̃դ
մասն նաւուց ընկղմեցաւ։) * Եւ եր̃դ 10
հրեշտակն փողեաց, և անկաւ յերկնից
աստղ մի մեծ՝ բորբոքե̃լ իբրև զղամբար,
և անկաւ յերրորդ մասն գետոց և աղբե
րաց. * և էր անուն աստեղն դառնութի. 11
և բազումք մեռան ՚ի դառնութե̃ ջուրցն։
* Եւ չորրորդ հրեշտակն փողեաց, և 12
վիրաւորեր երրորդ մասն արեգական՝ և
երրորդ մասն լուսնի՝ և երրորդ մասն
աստեղաց. և խաւարեր երրորդ մասն
նոցա, և երրորդ մասն գիշերոյ նոյնպէս։
* Եւ տեսի՝ և լուայ ձայն հրեշտակի 13
թռուցելոյ ՚ի մէջ երկնից՝ զի ասէր ՚ի
ձայն մեծ, վա՛յ վա՛յ վա՛յ՝ որ բնակեալ են
յերկրի. յորժամ լինիցի ձայն երից ևս
փողոց, զոր կամիցին հրեշտակքն հար_
կանել։

## Գլ. Թ.

1 Եւ հինգերորդ հրեշտակին փողէր. և տե-
սի զի աստղ մի անկաւ յերկնից, և
2 տուաւ նմա բանալի գբոյն անդնդոց. * և
ելանէր ծուխ ՚ի գբոյն որպ զծուխ հնոցի
մեծի. և խաւարեցաւ արեգակն և օդք:
3 * Եւ ՚ի գբոյն ելանէր մարախ ՚ի յերկիր.
և տուաւ նց իշխանութի իբրև զխայթոցս
4 կարճի. * և ասացաւ նց՝ զի մի՛ մեղիցեն
խոտոյ երկրի և մի՛ ամ ծառոց, բայց
միայն մարդոյ երկրայնոյ, որ ոչ ունիցին
5 զկնիք ՚ի վր ճակատու իւրեանց: * Եւ
տուաւ նց հրաման՝ զի մի՛ սպանանիցեն
զնս, այլ չարչարեսցեն զնս ամիսս հինգ.
և չարչարանք նց իբրև զխայթոցս կարճի՝
6 որ հարկանիցէ զմարդ: * Եւ յաւուրսն
յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ՝ և
մի՛ գտցեն. և ցանկան մեռանել՝ և փա-
7 խիցէ ՚ի նոցանէ մահ: * Եւ նմանութի
մարախոյն, նմանութի ձիոյ պատրաստելոյ
՚ի պատերազմ. և ՚ի վր գլխոց նց իբրև ըզ-
պսակ՝ նմանեալ ոսկւոյ. և երեսք նց իբրև
8 զերեսս մարդոյ. * և հերք նոցա իբրև ըզ-
հերս կնոջ. և ատամունք նոցա իբրև զա-
9 ռիւծու: * Եւ ունէին զրահս իբրև ըզ-
զրահս երկաթի. և ձայն թևոց նց իբրև
զձայն կառավար ձիոց բազմաց՝ որ արշա-
10 ւեն ՚ի պատերազմ: * և ունէին ագիս ըստ
նմանութե կարճի. և խայթոց յագիս նց.



և

և ունէին իշխանութի չարչարել զմարդիկ
ամիս հինգ ։ * և ունէին թգւոր ՚ի վր իւ֊ 11
րեանց զհրեշտակն դժոխոց ․ և անուն նր
եբրայեցերէն՝ աղբադոն, որ կոչի ՚ի հայ
բարբառ՝ կորուսող ։ * Ահաւասիկ վայ մի 12
էանց, և վայք երկու գալոց են ։ * Եւ վե֊ 13
ցերորդ հրեշտակն հարկանէր զփողն ․ և
լուայ ձայն ՚ի չորից կճղակածացն՝ որ էին
առաջի սեղանոյն այ ․ * զի ասէր ցհրեշ 14
տակն վեցերորդ՝ որ ունէր զփողն ․ լոյծ
զչորս հրեշտակսն զկապեալս ՚ի վր գե֊
տոյն եփրատայ ։ * Եւ լուծան չորս հրեշ 15
տակքն՝ պատրաստեալք ՚ի ժամ և յօր և
յամիս և ՚ի տարի, զի սպանցեն զերրորդ֊
մասն մարդկան ։ * և համարք հեծելոց 16
զօրաց նց՝ բիւր բիւրուց՝ և հազարք՝ հա֊
զարաց՝ լուայ զթիւ նց ․ * Եւ տեսի ձիս 17
՚ի տեսլեանն, և հեծեալս ՚ի նս՝ որք ու֊
նէին զրահս հրեղէնս, և յակնթենս հրդ֊
դեհինս ծծմբով ․ և գլուխք ձիոցն իբրև
զգլուխս առիւծուց ․ և ՚ի բերանոյ նց
հուր ելանէր՝ և ծուխ և ծծումբ ․ * Եւ 18
՚ի հարուածոցս յայսցանէ մեռաւ երրորդ֊
մասն մարդկան՝ ՚ի հրոյն և ՚ի ծխոյն և ՚ի
ծծմբոյն, որ ելանէր ՚ի բերանոյ նց ։ * զի 19
իշխանութի ՚ի բերանս է նց՝ և յագիս նց ․
և ագիք նց նմանութի օձի ․ և ունէին գլ֊
ուխս՝ որով սատակէին զանիրաւս ։ * Եւ 20
այլք ՚ի մարդկանէ որ ոչ մեռան ՚ի հար֊
ուածոցս յայսցանէ, ոչ ապաշխարեցին և


ոչ

ոչ դարձան ՚ի գործոց ձեռաց իւրեանց,
յերկրպագութենէ դիւաց եւ կռոց յոսկեղի-
նաց եւ յարծաթեղինաց՝ եւ ՚ի պղնձոյ եւ ՚ի
քարէ եւ ՚ի փայտէ, որք ոչ տեսանել կարեն
21 եւ ոչ լսել եւ ոչ գնալ. * եւ ոչ ապաշխարե-
ցին ՚ի մարդասպանութենէ՝ եւ ՚ի դեղատուութենէ,
եւ ՚ի պոռնկութենէ եւ ՚ի գողութենէ իւրեանց.

## ԳԼ. Ժ.

1 Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր՝ զի իջա-
նէր յերկնից, եւ զգեցեալ էր ամպ՝ եւ
ծիածան ՚ի գլուխ նորա. եւ երեսք նորա իբրեւ
2 զարեգակն, եւ ոտք նորա որպէս սիւնք հրոյ. * Եւ
ունէր ՚ի ձեռին իւրում գրքոյկ մի բացեալ.
եւ եդ զոտն իւր զաջ ՚ի վերայ ծովուն, եւ զձախն
3 ՚ի վերայ երկրի. * եւ աղաղակեաց ՚ի ձայն
մեծ՝ գոչեաց իբրեւ զառիւծ. եւ յորժամ
աղաղակեաց՝ խօսեցան եօթն որոտմունք
4 զիւրեանց ձայնս. * Եւ յորժամ խօսե-
ցան եօթն որոտմունքն՝ կամէի գրել. եւ
լուայ ձայն յերկնից՝ զի ասէր, կնքեա զոր
խօսեցան եօթն որոտմունքն՝ եւ մի՛ գրեր.
5 * Եւ հրեշտակն զոր տեսի, որ եդ զոտն
իւր ՚ի վերայ ծովու եւ զմիւսն ՚ի ցամաքի,
6 համբարձ զձեռն իւր զաջ յերկինս. * եւ
երդուաւ ՚ի կենդանին յաւիտենից՝ որ
հաստատեաց զերկինս՝ եւ որ ՚ի նմա, եւ զեր-
կիր եւ որ ՚ի նմա. զի ոչ եւս կայ այլ ժամ.
7 * այլ յաւուրս ձայնի եօթներորդ հրեշ-
տակին՝ յորժամ հարցէ զփողն, կատա-


րես

բեսցի խորհուրդն այ՝ որ աւետարանեցաւ
'ի ձեռն ծառայից իւրոց մարգարէից։ * Եւ 8
ձայնն զոր լուայ յերկնից՝ դարձեալ խօսե
ցաւ ընդ իս՝ և ասէ. երթ առ զգրքոյկն՝ զոր
ունի հրեշտակն բացեալ 'ի ձեռին իւրում,
և կայ 'ի վերայ ծովու և ցամաքի. * Եւ ես 9
երթեալ առ հրեշտակն՝ խնդրեցի 'ի նմա
նէ. և ասէ ցիս, առ զսա՝ և կեր զդա,
և դառնասցի յորովայն քո. այլ 'ի բերան
քո է քաղցր իբրև զմեղր։ * Եւ առի զգր 10
կոյսն բացեալ 'ի հրեշտակէն՝ և կերայ զնա.
և էր 'ի բերան իմ որպէս մեղր. և յորժամ
կերայ, դառնացաւ յորովայն իմ։ * Եւ 11
ասէ ցիս. հասանէ քեզ դարձեալ մար
գարէանալ 'ի ժողովուրդս՝ և 'ի հեթա
նոսս և 'ի լեզուս և 'ի թագաւորս երկրի։

## ԳԼ. ԺԱ.

Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազա 1
նի. և կայր հրեշտակն՝ և ասէր ցիս.
արի և չափեա զտաճարն այ և զսեղանն՝
և զերկրպագուսն որ 'ի նմա։ Եւ զգաւի 2
թն որ արտաքոյ տաճարին՝ թող զնա՝ և
մի՛ չափեր. զի տուեալ է զնա հեթանոսաց։
և զքաղաքն սբ կոխեսցեն ամիսս քառա
սուն և երկուս։ * Եւ տաց երկուց վկայից 3
իմոց՝ և մարգարէասցեն աւուրս հազար
երկերիւր և վաթսուն՝ զգեցեալ քուրձս։
* Սոքա են երկու ձիթենիքն՝ և երկու 4
ճրագք, որ կան առաջի այ յերկրի։ * և 5

ոյք կամիցին վնասել նց, հուր ելցէ ՚ի բե-
րանոյ նց՝ և կերիցէ զթշնամիս նց. և ոյք
կամիցին մեղանչել նց՝ այսպէս սատակես-
6 ցին: * Սոքա ունին իշխանութի փակել
զերկինս՝ զի մի՛ անձրեւեսցէ զաւուրս մար-
գարէութե նց. և ունին իշխանութի ՚ի վր
ջուրց՝ դարձուցանել զնս յարիւն, և հար-
կանել զերկիր ըստ հաճոյածս՝ քանիցս
7 անգամ և կամիցին: * Եւ յորժամ կատա-
րեսցեն զաւուրս վկայութե իւրեանց,
յայնժամ գազանն որ ելանէ յանդնդոց՝
տացէ ընդ նս պատերազմ, և յաղթեսցէ նց և
8 սպանցէ զնս: * Եւ դի նց անկեալ կայցէ
՚ի մէջ հրապարակաց քաղաքին նց մեծի,
որ անուանեալ կոչի ըստ հոգւոյն՝ սոդոմ և
եգիպտոս. ուր և տրն նոցա խաչեցաւ:
9 * Եւ տեսցեն զնս ամ ցեղք և ժողովուրդք՝
և ամ լեզուք և հեթանոսք, զի դի նց
անկեալ կայցէ զերիս աւուրս և կէս. և
ոչ տացեն թողուլ ՚ի գերեզմանս զոսկերս
10 նց: * Եւ որ բնակեալ են յերկրի՝ ուրախ
լինին և խնդան ՚ի վր նց, մինչև ընծայս
և պատարագս տանել միմեանց. վն զի
սոքա երկոքին մարգարէքս չարչարեցին
11 զբնակիչս երկրի: * Եւ յետ երից աւուրց
և կիսոյ՝ հոգի կենդանի յայ մտցէ ՚ի նս
և յարիցեն կացցեն ՚ի վր ոտից իւրեանց.
և ահ և երկիւղ մեծ անկաւ ՚ի վր ամենե-
12 ցուն՝ որ տեսանէին զնս: * Եւ լուայ ըզ-
ձայն մեծ՝ որ ասէր ցնս. վերացիք ելէ՛ք
աստ.

աստ. և վերացան ելին յերկինս ամպովք.
և տեսին զնս թշնամիք իւրեանց. * Եւ 'ի 13
ժամուն յայնմիկ շարժումն մեծ եղև, և
տասներորդ մասն քաղաքին ընկղմեցաւ,
և մեռան 'ի շարժմանէն արք եօթն հա-
զար. և յետ այնորիկ ահ մեծ եղև յամե-
նեսեան, և փառս տային այ երկնաւորի.
* Ահաւասիկ վայն երկրդ էանց, և վայն 14
երրդ գալոց է վաղվաղակի։ * Եւ յորժամ 15
եօթներորդ հրեշտակն հարկանէր զփո-
ղն, եղև ձայն յերկինս՝ և ասէ. եղև թա-
գաւորութի ամ ափեղերաց տն մերոյ՝ և
յսի քսի իւրոյ. և թագաւորեսցէ 'ի վր
ամս յաւիտեանս յաւիտենից։ * Եւ քսան 16
և չորս երիցունքն՝ որ նստէին յաթոռս
իւրեանց առաջի այ, անկանէին 'ի վերե-
րեսս իւրեանց՝ և երկիրպագանէին այն
այ. և ասէին. * Գոհանամք զքէն տր ած 17
ամենակալ, որ էն և ես՝ և առեր զզօրութի
քո մեծ, և թագաւորեցեր։ * Եւ հեթա 18
նոսք բարկացան, և եկն բարկութի քո, և
ժամանակ մեռելոց՝ զի դատեսցին. և
տաս վարձս ծառայից քոց մարգարէից,
և սրբոց երկիւղածաց անուան քո՝ փո-
քունց և մեծամեծաց, և ապականես զա-
պականիչս երկրի։ * Եւ բացաւ տաճարն 19
այ որ յերկինս, և երևեցաւ տապանակն
այ՝ 'ի տաճարին իւր. և եղեն փայլատակ-
մունք և ձայնք և որոտմունք և շարժումն,
և կարկուտ մեծամեծ։

ԳԼ. ԺԲ.

1 Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին
մի արկեալ զիւրեւ զարեգակն, եւ լու-
սին ՚ի ներքոյ ոտից նր. եւ ՚ի վր գլխոյ նր
2 պսակ աստեղեայ յերկոտասանից. * եւ էր
յղի. եւ ճչէր յերկնելն, եւ բազում վշտօք
3 մերձ էր ՚ի ծնանել: * Եւ երեւեցաւ այլ
նշան յերկինս՝ եւ ահաւասիկ վիշապ մի մեծ
հրեղէն, որոյ էին գլուխք եօթն՝ եւ եղ-
ջիւրք տասն. եւ ՚ի վր գլխոյ նորա եօթն
4 խոյրք. * եւ տուտն նր քարշէր զերրորդ-
մասն աստեղաց երկնից, եւ արկ զնս յեր-
կիր. եւ վիշապն կայր առաջի կնոջն՝ որ
հանդերձեալ էր ծնանել, զի յորժամ ծնցի
5 կինն զորդի իւր՝ կլցէ զնա վիշապն: * Եւ
ծնաւ կինն արու՝ որ հանդերձեալ է հով-
ուել զամ հեթանոս գաւազանաւ եր-
կաթեաւ. եւ յափշտակեցաւ որդի նր առ
6 ած, եւ առ աթոռ նր: * Եւ կինն փա-
խեաւ յանապատ՝ ուր էր տեղի նմա պատ-
րաստեալ յայ, զի կերակրեսցի անդ աւուրս
7 հազար երկերիւր եւ վաթսուն: * Եւ եղեւ
պտրզմ յերկինս, միքայել եւ հրեշտակք
իւր կռուէին ընդ վիշապին. եւ վիշապն պա-
8 տերազմէր զօրօք իւրովք. * եւ ոչ կարացին
կալ ընդդէմ, եւ տեղի ոչ գտաւ նց յերկինս:
9 * Եւ անկաւ վիշապն մեծ՝ օձն առաջին,
որ անուանեալ կոչի բէեղզեբուղ եւ սատա-
նայ, որ մոլորեցոյց զամ տիեզերս երկրի.
10 եւ հրեշտակք նր ընդ նմա անկան: * Եւ լու



ձայ

ւայ ձայն մեծ յերկնից՝ որ ասէր․ արդ ե-
ղև զօրութի՟ և փրկութի՟ և արքայութի՟ այ՟ մե-
րոյ, և իշխանութի՟ օծելոյ ն՟ր․ զի անկաւ
չարախօսն եղբարց մերոց, որ չարախօսէր
զնոցանէ առաջի այ՟ զտիւ և զգիշեր։* Եւ 11
նք՟ յաղթեցին նմա արեամբ գառինն, և
բանիւ վկայութե՟ ն՟ր․ և ոչ հաճեցան ընդ
վիշապն մինչև ՚ի մահ։ * Վ՟ա այսորիկ ու- 12
րախ լերուք երկինք՝ և ա՟մ որ բնակեալ են
՚ի նմա։ Վայ երկրի և ծովու՝ զի անկաւ
բանսարկուն առ ձեզ, որ ունի զցասումն
մ՟ծ․ և կացցէ առ սակաւ մի ժամս։ * Եւ 13
յորժամ ետես վիշապն թէ անկաւ յեր-
կիր, զհետ եղև կնոջն՝ որ ծնաւ զմանու-
կըն արուն։* Եւ տուաւ կնոջն երկու թևք 14
արծուոյ մեծի՝ զի թռիցէ յանապատ ՚ի
տեղի իւր․ ուր կերակրէր անդ ժամանակ
և ժամս և կէս ժամի՝ յերեսաց օձին։* Եւ 15
եհեղ օձն ՚ի բերանոյ իւրմէ զհետ կնոջն
ջուր՝ զի ընկղմեսցէ զնա։ * Եւ օգնեաց 16
երկիր կնոջն, և եբաց երկիր զբերան իւր
և եկուլ զջուրն՝ զոր եհեղ վիշապն ՚ի բե-
րանոյ իւրմէ։ * Եւ ցասեաւ վիշապն ը՟ն 17
կնոջն, և գնաց պատերազմել ը՟ն այլ զա-
ւակս ն՟ր՝ որք պահէին զպատուիրանս այ՟,
և ունէին զվկայութի՟ն յ՟սի։ * Եւ կայ ՚ի 18
վ՟ր աւազոյ ծովու։

## ԳԼ․ ԺԳ․

Եւ տեսի զի ելանէր ՚ի ծովէն գազան, 1
և ունէր գլուխս եօթն՝ և եղջիւրս
տասն

տասն, և 'ի վր եղջերաց նր տասն խոյր,
2 և 'ի վր գլխոյ նր անուն հայհոյութե: * Եւ
գազանն զոր տեսի՝ նման ընձու, և ոտք
նր իբրև զարջոյ, և բերան նր ոպ զառիւ-
ծու. և ետ նմ վիշապն զզօրութի իւր՝ և զա-
3 թոռ իւր և զիշխանութի մեծ: * Եւ մի 'ի
գլխոց նր վիրաւորեալ էր 'ի մահ. և վէր
մահուան նր ողջանայր: * Եւ զարմացաւ
ամ երկիր զհետ գազանն, զի ետ նմ վիշապն
4 զթագաւորութի իւր: * և երկիր պագին
վիշապին՝ որ ետ զիշխանութին գազանին, և
ասէին. ո՞վ իցէ նման գազանիս. կմ ո՞վ
5 կարիցէ պատերազմել ը դա: * Եւ տու
աւ նմ բերան խօսել՝ զմեծամեծս, և ըղ
հայհոյութի. և տուաւ նմա իշխանութի զա-
6 միս քառասուն և երկու: * Եւ եբաց ըղ
բերան իւր հայհոյութբ առ ած, և հայ
հոյեաց զանուն նր՝ և զխորանն նորա, և
7 զերկնայինն խորանն: * (Եւ տուաւ նմ իշ
խանութի առնել պտրզմ ը նըս՝ և յաղ
թել նոցա.) և տուաւ նմ իշխանութի 'ի վր
ամ ազգաց և լեզուաց և ժողովրդոց.
8 *զի երկրպագեսցեն նմա ամ որ բնակեալ
են ը երեսս երկրի. որոց ոչ են գրեալ ա-
նուանք նց 'ի դպրութի կենաց գառինն
9 զենլոյ իսկզբանէ աշխարհի: * Եթէ ունիցի
10 ականջս լսելոյ՝ լուիցէ, * Ոյ են ոմանք՝
որք 'ի գերութե վարեսցին, և են ոմանք՝ որ
սրով մեռցին, և են ոմանք՝ որ անձամբ
զանձինս սպանանեն: աստ է համբերութի
11 և հաւատ սրբց: * Եւ տեսի այլ գազան՝

զի ելանէր յերկրէ, և ունէր եղջիւրս եր-
կու նման գառինն. և խօսէր իբրև զվի-
շապն: * Եւ զիշխանութի զամ զառաջնոյ 12
գազանին գործէր առաջի նր. և առնէր
զերկիր և զամ՝ բնակիչս նորա՝ զի երկիր
պագանիցեն գազանին առաջնոյ՝ մինչև
ողջացի վէր մահու նր. * Եւ առնէր 13
նշանս բազումս, և տայր հրոյ իջանել
յերկնից յերկիր՝ առաջի մարդկան: * և 14
մոլորեցուցանէր զորս բնակեալ են յեր-
կիր՝ նշանօքն որ տուեալ են ՚ի ձեռս նր՝
առնել առաջի գազանին. ասէն ցնա
բնակչացն երկրի. առնել զպատկեր գազա
նին, որ ՚ի վիրաց սրոյն եկեաց: * Եւ 15
տուաւ նմա իշխանութի, զի տացէ հո-
գի պատկերի գազանին, և զի խօսեսցի
պատկերն. և երկիրպագցեն նմա ամ
բնակիչք երկրի. և որ ոչ պագցէ երկիր
պատկերի գազանին, սպանցէ զնա: Եւ
արասցէ զամ՝ փոքունս և զմեծամեծս
և զմեծատունս և զազատս և զաղքատս
և զծառայս, զի տացէ նոցա դրոշմ յաջու
ձեռին՝ և ՚ի վր ճակատու նց: * Եւ ոչ 16
ոք կարասցէ գնել և վաճառել՝ եթէ ոչ
ունիցի զդրոշմ գրոյն՝ և զանուն գազա
նին և զթիւ անուան նորա: * Աստ է ի- 17
մաստութի. որ ունի միտս՝ համարեսցի
զթիւ գազանին. թիւ եղեալն մարդոյ,
և թիւ անուան նր է այս. վեց հարիւր
վաթսուն և վեց.

## ԳԼ. ԺԴ.

1 Եւ տեսի՝ եւ ահա գառն կայր 'ի վ՛ր լե_
րինն սիովնի. եւ ը՛ նմա հարիւր քա_
ռասուն եւ չորս հազարք, որ ունէին զա_
նուն ն՛ր՝ եւ անուն հօր ն՛ր գրեալ 'ի վ՛ր ճա_
2 կատուց ն՛ց։ * Եւ լուայ ձայն յերկնից՝ ո՛պ
զձայն ջուրց բազմաց՝ եւ ձայն որոտման
մեծի. եւ լուայ իբրեւ զձայն զքնարերգաց,
3 զի հարկանէին զքնարս իւրեանց։ * Եւ
երգէին զերգս նորս առաջի աթոռոյն՝ եւ
առաջի չորից կենդանեացն՝ եւ առաջի ե_
րիցանցն. եւ ոչ ոք կարէ ուսանել զերգս նոցա՝
բայց միայն հարիւր քառասուն եւ չորս հա_
4 զարքն, որք գնեալ են յերկրէ։ * Սո՛ են՝
որք ը՛ կանանց ոչ խառնակեցան, եւ են
կուսանք. ն՛ք զհետ երթան գառինն՝ ուր
եւ երթիցէ. սոքա գնեցան 'ի մարդկանէ
5 առաջի ա՛յ եւ գառինն։ * Եւ 'ի բերան նոցա ոչ
6 գտաւ սուտ՝ զի անբիծք են։ * Եւ տեսի
այլ հրեշտակ թռուցեալ 'ի մէջ երկնից. եւ
ունէր աւետիս յաւիտենական՝ աւետա
րանել ա՛մ ազգաց եւ լեզուաց՝ որ բնակեալ
7 են յերկրի։ * Եւ ասէր 'ի ձայն մեծ. երկե
րուք յա՛յ՝ եւ տուք փառս ն՛մ, զի եկն ժամ
դատաստանի նորա. եւ երկի՛ր պագէք արարչին
երկնի եւ երկրի եւ ծովու եւ աղբերց ջուրց։
8 * Եւ այլ հրեշտակ երկրորդ գայր զհետ ն՛ր
եւ ասէր. անկաւ անկաւ Բաբելոն մեծն՝
'ի գինւոյ արբեցուցանէ՝ 'ի ցասմանէ՝ 'ի պոռ
նկութե՛ իւրմէ՝ որ արբեցոյց զա՛մ հեթա_



Նոսա։

նոսա։ * Եւ այլ հրեշտակ երրորդ գայր ընդ 9
հետ նոցա՝ և ՚ի ձայն մեծ ասէր. ով որ երկիր
պագանիցէ գազանին և պատկերի նորա՝ և կամ
զդրոշմ նորա նշանի առ ՚ի ճակատ իւր՝ և կամ
՚ի վերայ աջոյ ձեռին իւրոյ, * այնպիսին արբ- 10
ցէ ՚ի բաժակէ ցասմանն այ՝ արկելոյ յա-
նապակէ բարկութեան բաժակին. և տան-
ջեսցի հրով և ծծմբով առաջի այ և գա-
ռինն։ * Եւ ծուխ նոցա ելցէ յաւիտեանս 11
յաւիտենից. և ոչ ունին հանգիստ՝ որք
երկրպագին գազանին ՚ի տուէ և ՚ի գի-
շերի. և որք երկիր պագին պատկերին, և
առին զդրոշմ և զանուն նորա։ * Եւ համբե- 12
րութի սրբոց աստ է. այս որք պահեն զպա-
տուիրանս այ, և զհաւատս յի։ * Եւ լու- 13
այ ձայն յերկնից՝ որ ասէր ցիս. գրեա, ե-
րանի մեռելոցն՝ որք ՚ի տր ննջեցին այժ-
միկ վաղվաղակի՝ զայս ասէ հոգին. զի հան-
գեան յաշխատութե իւրեանց. բայց միայն
գործք իւրեանց չոգան զհետ նոցա։ * Եւ 14
տեսի՝ և ահա ամպ սպիտակ, և ՚ի վերայ ամ-
պոյն նստէր նման որդւոյ մարդոյ, և ՚ի
գլուխ իւր պսակ ոսկի, և ՚ի ձեռին իւ-
րում ունէր գերանդի սուր։ * Եւ այլ հր- 15
րեշտակ ելանէր յերկնից, աղաղակէր ՚ի
ձայն մեծ՝ և ասէր. որ նստիդ ՚ի վերայ ամ-
պոյդ՝ առաքեա զգերանդիդ քո՝ և հնձեա,
զի եկն ժամ հնձոց, և հասեալ են հունձք
երկրի։ (* Եւ արկ՝ որ նստէր ՚ի վերայ ամ- 16
պոյն՝ զգերանդին իւր յերկիր, և հնձէր
զամ բնակիչս երկրի։) * Եւ այլ հրեշտակ 17

ելանէր 'ի տաճարէն՝ որ յերկինս, և ունէր
18 և սա գերանդի սրեալ: * Եւ այլ հրեշտակ
ելանէր 'ի սեղանոյն՝ որ ունէր իշխանութի
'ի վ̄ր հրոյ, և աղաղակեաց 'ի ձայն մեծ
առ հրեշտակն՝ որ ունէր զգերանդին սը
րեալ՝ և ասէր. կթեա՛ զողկոյզս այգւոյ
19 երկրէ, զի հասեալ է խաղողդ 'ի դմա: * Եւ
արկ հրեշտակն զգերանդի իւր յերկիր, և
կթէր զխաղող ն̄ր, և արկանէր 'ի հնձանն
20 ա̄յ 'ի մեծ: * Եւ կոխեցաւ հնձանն ար
տաքոյ քաղաքին, և ելանէր 'ի հնձանէն
արիւն մինչև 'ի սանձս ձիոյն. և երկայնու
թի ն̄ր հազար և վեց հարիւր ասպարէզ:

ԳԼ. ԺԵ.

1 Եւ տեսի այլ նշան (յերկինս) մեծ և
սքանչելի. հրեշտակս եօթն՝ որք ու
նէին եօթն վէրս զկնի. զի նոքօք կատա
2 րէր բարկութի ա̄յ: * Եւ տեսի ոպ̄ ծով ա
պակեղէն խառնեալ հրով. և որք յաղթե
ցին գազանին՝ և թուոյ անուան ն̄ր՝ և
պատկերի ն̄ր՝ և դրոշմի ն̄ր, նոքա կային 'ի
վ̄ր ծովուն ապակեղինի. և ունէին զքնարս
3 ա̄յ: * Եւ երգէին զերգս մովսէսի ծառայի
ա̄յ, և զերգս գառինն՝ ասելով. Թէ մե
ծամեծ և սքանչելի են գործք քո՝ տ̄ր ա̄ծ
ամենակալ, արդար՝ և ճշմարիտ են ճա
նապարհք քո՝ թագաւոր ա̄մ հեթանոսաց:
4 Եւ ո՞վ ոք ոչ երկիցէ՝ և փառաւորեսցէ
զա̄ր անուն քո. զի դու միայն ս̄բ, և ար
ժանի երկրպագելոյ. զի ա̄մ հեթանոսք

եկեսցեն և երկիրպագցեն առաջի քո զի՝
յորժամ արդարութիւնք քո յայտնեցան։ * Եւ 5
յետ այսորիկ տեսի՝ և բացաւ տաճարն
խորանին վկայութեան՝ որ էր ՚ի յերկինս. * Եւ 6
ելանէին եօթն հրեշտակք որք ունէին
եօթն հարուածս, և զգեցեալ էին ՚ի տաճա
րին կտաւս մաքուրս՝ և պայծառս. և գօ-
տևորեալ էին առ ստեամբք իւրեանց գօ-
տիս ոսկեղէնս. * Եւ ՚ի չորից կենդա 7
նեացն տուաւ եօթն հրեշտակացն՝ եօթն
սկաւառակս լի ցասմամբն այ կենդանւ-
ւոյն յաւիտեանս յաւիտենից։ * Եւ լցաւ 8
տաճարն ծխով փառացն այ՝ և զօրութեն
նր. և ոչ ոք կարէր մտանել ՚ի տաճարն՝
մինչև կատարեսցին եօթն հարուածքն
յեօթն հրեշտակացն.

## Գլ. ԺԶ.

Եւ լուայ ձայն մեծ ՚ի տաճարէն՝ զի ա- 1
սէր ցեօթն հրեշտակսն, երթայք հե-
ղէք զեօթն սկաւառակդ ցասմանն այ
յերկիր։ * Եւ գնաց առաջինն հրեշտակն՝ 2
և եհեղ զսկաւառակ իւր յերկիր. և եղև
հարուածք չարաչար ՚ի վր մարդկան, որ
ունէին զդրոշմ գազանին, և երկիր պա-
գին պատկերի նր։ * Եւ երկրդ հրեշտակն 3
եհեղ զսկաւառակ իւր ՚ի ծով, և դարձան
ջուրքն յարիւն մեռելոյ. և ամ շունչ կեն-
դանի որ էր ՚ի ծովու՝ սատակեցաւ։ * Եւ 4
երրդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր ՚ի
գետս և յաղբերս ջուրց. և եղև արիւն.
 * Եւ

5 * Եւ լուայ ՚ի հրեշտակէն՝ զի ասէր. ար-
դար ես՝ որ էնն և էր, և սուրբդ՚ի գործս քո՝
6 զի այսպէս դատեցար։ * Վն զի արիւն սրբց՝
և զարիւն մարգարէիցն հեղին ամպա-
րիշտք. վն այնորիկ արիւն ետ ըմպել նց ըս
7 արժանւոյն։ * Եւ լուայ ՚ի սեղանոյ անտի
զի ասէր. այո՛ տր ած ամենակալ, արդար
8 և ճշմարիտ են դատաստանք քո։ * Եւ
չորրորդ հրեշտակն եհեղ ՚ի սկաւառակէ
9 իւրմէ ՚ի վր արեգական։ * և տուաւ նմ
խորշակահար առնել զմարդիկ հրով. և
տապացան մարդիկ՚ի տապ մծ, և հայհոյե
ցին զանծ՝ որ ունի իշխանութի ՚ի վր հարուա
ծոցս այսոցիկ. և ոչ ապաշխարեցին՚ի փառ
19 ս նմ։ * Եւ հինգերորդ հրեշտակն եհեղ
՚ի սկաւառակէ իւրմէ՚ի վր աթոռոյ գազա
նին, և եղև թագաւորութի նր խաւարեալ.
և ծամէին զլեզուս իւրեանց յախտէ ցա
11 ւոցն, * և հայհոյեցին զանծ երկնից՚ի ցաւոց
իւրեանց՝ և յախտէ դառնութեն, և ոչ ապաշ
12 խարեցին ՚ի գործոց իւրեանց։ * Եւ վե-
ցերորդ հրեշտակն եհեղ՚ի սկաւառակէ իւր-
մէ՚ի վր գետոյն մեծի եփրատայ, և ցամա
քեցան ջուրք նր՝ զի պատրաստեսցի ճանա
13 պարհ թգւորի ելիցն արևու։ * Եւ տեսի՝
զի ելանէր՚ի բերանոյ վիշապին՝ և՚ի բերանոյ
գազանին՝ և՚ի բերանոյ սուտ մարգարէին՝
14 ոգիք երեք անսուրբք իբրև զգորտս։ * Քզի
նք են ոգիք դիւականք, որք առնեին նշ-
նշանս՝ և երթային առ թգւորս ամ երկրի՝


ժո

ժողովել զնոսա ՚ի պատերազմ յօրն մեծ Այ ամե-
նակալի. Զի այսպէս ասաց Տր. * Ահա 15
գամ իբրև զգող, երանի որ հսկէ ար-
թուն, և պահեսցէ զհանդերձս ի-
րեանց. զի մի՛ մերկ շրջեսցին, և երևես-
ցին ամօթանք իւրեանց. * և ժողովեցին 16
զնոսա ՚ի տեղի մի, որ կոչի եբրայեցերէն՝
արմագեդոն. * Եւ եօթներորդ հրեշտակն 17
եհեղ ՚ի սկաւառակէ իւրմէ ՚ի վր օդոյ.
և ել ձայն մեծ յերկնից՝ և յաթոռոյն՝ ա-
սելով. եղև. * Եւ եղեն փայլատակմունք 18
և ձայնք և որոտմունք. և եղև շարժումն
մեծ՝ որպիսի չէ՛ր եղեալ իսկզբանէ՝ յորմէ հե-
տէ եղև մարդ ՚ի վր երկրի՝ այնպիսի շար-
ժումն մեծ. * Եւ եղև քաղաքն մեծ յե- 19
րիս մասն, և քաղաքք ազգացն անկան. և
բաբելոն մեծ յիշեցաւ առաջի Այ, տալ նմ
զբաժակն գինւոյ ցասման բարկութե նր.
* Եւ ամ կղզիք փախեան, և լերինք ՚ի մի- 20
ջոյ բարձան. * և կարկուտ մեծ իբրև կշ- 21
իռ տաղանդոյ միոյ իջանէր յերկնից ՚ի վր
մարդկան. և հայհոյեցին մարդիկ զԱծ
յերկինս՝ վն հարուածոյ կարկտին, զի
մեծ էր հարուածն և սաստիկ.

## ԳԼ. ԺԷ.

Եւ եկն մի ՚ի յեօթն հրեշտակացն՝ որք 1
ունէին զեօթն սկաւառակսն. խօ-
սեցաւ ընդ իս՝ և ասէ. Եկ այսր և ցուցից
քեզ զդատաստան մեծ պոռնկին՝ որ նստի ՚ի
վր ջուրց բազմաց. * ընդ որում պոռնկեցան 2

Թզուրք երկրի՝ և արբեցան բնակիչք եր-
կրի ՚ի գինւոյ արբեցուե պոռնկուե նր:
3 * Եւ տար տարաւ զիս յանապատ հոգւովն.
և տեսի կին մի՝ զի նստէր ՚ի վր կարմիր
գազանի, և լի էր անուամբ հայհոյութե. և
գազանն զոր տեսի՝ ունէր գլուխս եօթն
4 և եղջիւրս տասն: * Եւ կինն զգեցեալ էր
ծիրանիս և կարմիրս, և զարդարեալ ոսկւով
և մարգարտով և ականեօք պատուականօք,
ունելով բաժակ ոսկի ՚ի ձեռին իւրում, և
լի էր գարշելի և անմաքուր պոռնկութե:
5 * և ՚ի ճակատն նր գրեալ անուն՝ խորհրդով.
մեծն բաբելոն՝ մայր պոռնկաց և գարշե
6 լեաց երկրի: * Եւ տեսի զկինն արբեցեալ
յարենէ սրբց՝ և յարենէ ամ վկայիցն. և
զարմացայ՝ տեսեալ զնա՝ զարմացումն մեծ:
7 * Եւ ասէ ցիս հրեշտակն. ընդէ՞ր զարմա
ցար, ես ասացից քեզ զխորհուրդ կնոջն, և
զգազանին որ բարձեալ ունի զնա, որ ունի
8 զեօթն գլուխն՝ և զտասն եղջիւր: * Եւ
գազանդ զոր տեսեր՝ որ էր, և չէր, և հան-
դերձեալ է ելանել ՚ի դժոխոց՝ և ՚ի կորուստ
երթալ. և զարմասցին ամենեքեան՝ որ բնա
կեալ են ՚ի վր երկրի. որոց ոչ էր գրեալ ան-
ուանք նց ՚ի գիր կենաց իսկզբանէ աշխար
հի. զոր տեսանէին զգզն, զի էր՝ և չէ, և
9 մերձ է: * Աստ է իմաստութի՝ որ ունի միտս:
և եօթն գլուխն՝ եօթն լերինք են, ուր կինն
նստեալ էր ՚ի վր նոցա. և նոքին թզուրք են
10 եօթն. և թզուրք եօթն գոլով. * հինգն
ան

անկանի, և մին եկաց, և միւսն ոչ է եկեալ.
Եւ յորժամ գայ՝ սակաւիկ մի ժամանակ ունի.
* Եւ գազանն՝ որ էր՝ և չէ՝ և նա ութերորդ 11
է. և է յեօթանց անտի, և ՚ի կորուստ եր_
թալոց է. * Եւ տասն եղջիւրն՝ զոր տե_ 12
սեր՝ տասն թագաւորք են. որոց չև ևս է ա_
ռեալ զթագաւորութի, այլ սանուն՝ և կան
իշխանք ՚ի մի ժամ. և առնուն նք զիշխա
նութի ընդ գազանին: * Սոքա մի կամս ունին, 13
և զզօրութի և զիշխանութի գազանին տան:
* և գառինն պատերազմին. և գառնն 14
յաղթէ նց. զի տէր է նց, և թագաւոր թագա
ւորաց. և ոյք ընդ նմա՝ կոչեցեալք են, ընտ_
րեալք և հաւատացեալք: * Եւ ասաց ցիս. և 15
զջուրսն զոր տեսեր ուր նստէր պոռնիկն,
ժողովուրդք են, և բազմութիք և ազգ և լե_
զուք: * Եւ տասն եղջիւրքն՝ զոր տեսեր 16
գազանին, նոքա ատեսցեն զպոռնիկն՝ և ա_
ւերեսցեն զնա, և զմարմին նր կերիցեն՝ և
այրեսցեն զնա հրով. * քանզի ած եդ ՚ի 17
սիրտս նց առ ՚ի լինել նց մի կամս, և տալ
զթագաւորութի գազանին՝ մինչև կատա
րեսցի բանն այյ. * Եւ կինն զոր տեսեր՝ է 18
քաղաքն մեծ, որ ունի զթագաւորութի ՚ի
վր թագաւորաց երկրի.

ԳԼ. ԺԸ.

Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ ի_ 1
ջեալ յերկնից՝ որ ունէր իշխանութի
մեծ, և երկիր լուսաւորեցաւ ՚ի փառաց նր.
* և աղաղակեաց ՚ի ձայն մեծ՝ ասելով. 2
ան

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ.

անկաւ բաբելոն մեծն, որ եղեւ էր բնա-
կութի դիւաց՝ և արգել ամենայն այսոց պղծոց,
և բանտ պահպանութե ամենայն ոգւոց անսուր-
3 բից՝ և ատեցելոց: * զի գի՛ ի բարկութե-
գինւոյ պոռնկութե նորա արբին ամենայն ազգք և
թագաւորք երկրի՝ որ ընդ նմա պոռնկեցան. և
վաճառականք երկրի՝ ի նորա զօրութենէ յօրա-
4 նալոյ մեծացան: * Եւ լուայ ձայն յերկ-
նից՝ զի ասէր. Ելէք ի միջոյ դորա ժողովուրդ-
ք իմ, զի մի՛ հաղորդ լինիցիք մեղաց դորա, և մի՛
5 զհարուածս դորա ընդունիցիք. * զի հասին
կցեցան մեղք դորա մինչև յերկինս. և յի-
6 շեաց Աստուած զամբարշտութիւնս դորա: * և հատու-
ցանէ դմա որպէս և հատոյց նա, և աւելցէ
դա երկպատիկ ըստ գործոց իւրոց, և զբա-
ժակն որով խառնեաց՝ խառնեցէք դմա
7 կրկին: * Որչափ փառաւորեաց զինքն և
խայտաց, այնչափ հատուցէք դմա սուգ. զի
ի սրտի իւրում ասէր՝ թէ յամ ժամ նըս-
տայց ես թագուհի՝ և այրի ոչ եւս եղէց:
8 * Վասն այնորիկ ի միում աւուր եկեսցեն ի
վերայ դորա հարուածք՝ մահ և սուգ և սով, և
ի հուր այրեսցի. զի հզօր է Տէր Աստուած՝ որ
9 դատեցաւն զդա: * և լայցեն՝ և կոծես-
ցեն ի վերայ դորա թագաւորք երկրի, որք ընդ դմա
պոռնկեցան և խաղացին. և հեծեծեսցեն՝
յորժամ տեսցեն զծուխ կիզման տանջա-
10 նաց դորա: * ի հեռաստանէ կայցեն վասն եր-
կիւղի տանջանաց դորա՝ և ասասցեն. վա՜յ
քաղաքիդ մեծ Բաբելոնի. քաղաքդ հը-
զօր, զի ի միում ժամու եկին հասին դա-

տատանաւք քո։ * Եւ վաճառականք երկրի 11
ողբասցեն և սգասցեն'ի վ՟ր քո՟ զի բեռն նց՟
ոչ ոք գնէ։ * և շահք որ'ի քէն'ոչ ևս լից՝ 12
ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուակա
նաց՝ և մարգարտոյ և բեհեզոյ և ծիրանւոյ և
ոսկեթելի և որդան, և ամ՟ փայտ խնկոյ՝ և
ամ՟ անօթ փղոսկրեայ, և ամ՟ անօթ'ի փայ
տէ պատուականէ և'ի պղնձոյ և յերկաթոյ
և'ի կճոյ։ * և կինամոմոն և ամ՟ խունկ և 13
իւղ և կնդրուկ, և գինի և ձէթ և նաշիհ և
ցորեան, և ստացուածք ամ՟ արջառ և ոչ-
խար։ և երիվարաց և կառաց՝ որ վայելէ
մարմնոց և ոգւոց մարդկան։ * և ամ՟ ցան 14
կութի անձին քո գնաց'ի քէն, և ամ՟ լուսա
փայլ վայելչութիւն պարարտն և գէրն և սպի
տակն գնաց'ի քէն, և ոչ ևս գտցես զայդ։
* Եւ ամ՟ շահավաճառք այսոքիւք մեծա 15
ցեալք՝'ի քէն'ի բաց կացցեն վ՟ս երկիւղի
տանջանաց քոց լալով և սուգ առնլով։ * Եւ 16
ասասցեն։ վայ վայ քաղաք մեծ։ որ զգե-
ցեալ էիր բեհեզս և ծիրանիս և որդան և
ոսկեզօծս՝ և քարինս պատուականս՝ և
մարգրիտս։ * զի'ի միում ժամու ապակա 17
նեցաւ այսչափ մեծութի քո։ և ամ՟ նաւա
վար՝ և ամ՟ որ'ի տեղիս տեղիս նաւէն, և
նաւաստիք և որք միանգամ ուռկնու գոր-
ծեն՝'ի հեռաստանէ կայցեն լալով, * և 18
աղաղակեսցեն՝ տեսանելով զծուխ կիզ-
ման նր՟։ ասելով։ ո՞ նման է քղ՟քիս այսմիկ
մեծի։ * Եւ արկցեն հող'ի վ՟ր գլխոց իւ- 19
 րեանց՝

րեանց՝ և գուժալով ձայնիւ մեծաւ՝ լա
լով և սգալով ասասցեն․ վա՜յ վա՜յ քաղաք
մեծ, որով ամենեքեան մեծացան այսր՝ որք ու-
նէաք գնաւս՝ի ծովս՝ի պատուականութե
քո․ զի՝ ի միում ժամու ապականեալ կոր-
20 ծանեցար։ * Ուրախ լերուք 'ի վր նր եր-
կինք՝ և սրբ առաքեալք և մրգրէք․ զի դա-
տեցաւած զդատաստան ձեր 'ի դմանէ։
21 * Եւ առ հրեշտակն հզօր՝ քար մի իբրև
զերկան մեծ, և ընկէց 'ի ծով՝ ասելով․
այսպէս յարձակմամբ անկցի բաբելոն քղք
22 մեծ, և այլ ոչ ևս գտցի։ * և ձայն քնա
րերգաց և երաժշտականաց՝ արուեստա
կանաց՝ և փողահարաց՝ և թմբկի, այլ
23 ոչ ևս լուիցի 'ի քեզ։ * և լոյս ճրագի և
ձայն երկանի՝ այլ ոչ ևս երևեսցի 'ի քեզ,
և ձայն փեսայի և ձայն հարսին այլ ոչ ևս
լուիցի 'ի քեզ․ և ոչ վաճառականք քո՝
փառաւորք և մեծամեծք երկրի, որ զուար
ճացեալ էին 'ի քեզ․ վն զի կախարդութ
դեղատուութե քո մոլորեցան ամ ազգք։
24 * Եւ 'ի քեզ ամ արիւն մրգրէից և սրց գը
տաւ, և ամ զբելոց յերկրին կենդանեաց։

### Գլ․ ԺԹ․

1 Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազ
մութե յերկինս ասելով․ ալէլուիա,
փրկութ և փառք և պատիւ և զօրութ այ
2 մերում․ * զի ճշմարիտ և արդար են դա-
տաստանք նորա․ զի դատեաց զպոռնիկն
մեծ 'ի պոռնկութե իւրում, և խնդրեաց

զվրէժ արեան ծառայից իւրոց՚ի ձեռաց
նորա։ * Եւ կրկին անգամ օրհնեցին՝ և ասա 3
ցին, ալէլուիա. և ծուխ նորա ելանէր յա
ւիտեանս յաւիտենից։ * Եւ անկան քսան 4
և չորք երիցունքն՝ և չորք կենդանիքն, և
երկրպագեցին այ՝ որ նստէրն յաթոռ փառաց,
ասելով, ամէն՝ ալէլուիա։ * Եւ ձայն յա 5
թոռոյն ելանէր՝ ասելով. օրհնեցէք զած
մեր ամ ծառայք նորա, և որք երկնչիք՚ի նմա
նէ՝ փոքունք և մեծամեծք։ * Եւ լուայ 6
ձայն բազմութե մեծի՝ իբրև զձայն ջուրց
բազմաց, և իբրև զձայն հզօր որոտման, ա
սելով դարձեալ. ալէլուիա, զի թագաւորեաց
տր այծ մեր ամենակալ։ * Խնդամք՝ ( և 7
ցնծամք ) և տամք փառս նմա, զի եկն հար
սանիք գառինն։ և կինն հարսն նորա պատրաս
տեաց զինքն, * և տուաւ նմա զգենուլ բե 8
հեզս սպիտակս սուրբս և լուսափայլս. որ է
բեհեզն արդարութի սրբոցն։ * Եւ մի յերի 9
ցանցն ասէր ցիս. գրեա զայդ, երանելիք
են անքեան՝ որ կոչեցեալ են յընթրիս հար
սանեաց գառինն։ * Եւ ես անկեալ առա 10
ջի ոտից նորա, երկիրպագի նմա. և ասէ ցիս.
անսա՝ մի՛ անկանիր առաջի իմ, զի և ես
ծառայակից քո եմ, և եղբարց քոց՝ որք
ունին զվկայութին յի քսի. այն այ միայն
երկրպագեա. քանզի հաստատութի յի է
տեսիլդ, և հոգի մարգարէութեդ. զի վը
կայութի յի է հոգւովն սրբով, որ՚ի մար
գարէսն էր։ * Եւ տեսի զերկինս բացեալ, 11
և

և ահա ձի սպիտակ. և որ հեծեալն էր 'ի
նմա՝ հաւատարիմ և ճշմարիտ, և արդա-
12 րութեամբ դատի՝ և պատերազմի: * և աչք նորա
բոց հրոյ, և 'ի վերայ գլխոյ նորա պսակս բազումս.
և ունէր անուն գրեալ, զոր ոչ ոք գիտէ՝
13 բայց միայն ինքն: * և արկեալ զիւրեաւ
հանդերձ ներկեալ արեամբ. և կոչէր ան-
14 ուն նորա բան Աստուծոյ: * և զօրավարք երկնից՝
և զօրք երկնից զհետ երթային նորա ձիովք
(սպիտակօք), զգեցեալ բեհեզս սուրբս և
15 սպիտակս: * Եւ 'ի բերանոյ նորա ելանէր
սուր սրեալ, զի նովաւ հարցէ զազգս. և նա
հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ.
և նա կոխեսցէ զհնձան գինւոյ՝ ցասման
16 բարկութեան Աստուծոյ ամենակալի. * և ունէր 'ի
վերայ պատմուճանի իւրոյ, և 'ի վերայ անդա-
մոց իւրոց գիր գրեալ. Թագաւոր թագաւորաց,
17 և Տէր տերանց: * Եւ տեսի այլ հրեշտակ՝
որ կայր 'ի վերայ արեգական, զի աղաղա-
կեաց 'ի ձայն մեծ առ ամենայն հաւուց թռուցե-
լոց ընդ մէջ երկնից՝ ասելով. Եկա՛յք ժողո-
18 վեցարո՛ւք յընթրիս մեծին Աստուծոյ. * և կե-
րիջիք զմարմինս թագաւորաց, (և զմարմինս
հզօրաց,) և զմարմինս երիվարաց՝ և ամենայն
հեծելոց 'ի նոսա, և զմարմինս ազատաց և
19 ծառայից՝ մեծի և փոքու: * Եւ տեսի
զգազանն՝ և զթագաւորս երկրի՝ և զզօրս նոցա
ժողովեալս առնել պատերազմ ընդ այնմ, որ
հեծեալն էր 'ի ձին սպիտակ՝ և ընդ զօրս նորա.
20 Եւ ըմբռնեցաւ գազանն, և որ ընդ նմա
սուտ մարգարէն՝ որ առնէր զնշանսն առաջի

նր̃ , և զորս մոլորեցոյց . և ետ առնուլ
զդրոշմ գազանին՝ և զերկրպագուս պատ֊
կերի նր̃ . և կենդանւոյն արկին զնս̃ 'ի
լիճ հրոյ այրեցելոյ ծծմբով։ * Եւ այլքն 21
մեռան 'ի սրոյ հեծելոյն 'ի վր̃ ձիոյն , յո֊
րոյ բերանոյ ելանէր սուրն . և ամ̃ թռու֊
չունք յագեցան 'ի մարմնոց նց̃ ։

## Գլ . Ի .

Եւ տեսի այլ հրեշտակ զի իջանէր յերկ֊ 1
նից , և ունէր զփականս դժոխոց , և
շղթայս մեծ 'ի ձեռին իւրում . * և ըմ֊ 2
բռնեաց զվիշապն՝ (զօձն) զառաջին , որ
է բանսարկուն և սատանայ , և կապեաց
զնա հազար ամ , * և արկ զնա յանդունդս 3
դժոխոց , և փակեաց և կնքեաց զնա՝ զի
այլ մի՛ ևս մոլորեցուսցէ զազգս , մինչև
կատարեսցի հազար ամն . և յետ այնորիկ
պարտ է լուծանել նմա սակաւ մի ժամ .
* Եւ տեսի աթոռս , և նստան 'ի վր̃ նց̃ . 4
և դատաստան տուաւ նց̃ , ընտրել զհո֊
գիս չարչարելոցն վս̃ վկայութեանն Յս̃ի՝ և վս̃
բանին Ած̃յ . և զորս ոչ երկրպագին գա֊
զանին , և ոչ առին զդրոշմ նր̃ 'ի ճակատս
իւրեանց՝ և ոչ 'ի վերայ աջոյ ձեռին իւ֊
րեանց . և կեցին՝ և թագաւորեցին ը̃ Ք̃ի
հազար ամ . * Եւ յետ այսորիկ 'ի մեռե֊ 5
լոց ոչ ոք եկաց , մինչև 'ի կատարել հա֊
զար ամին . այս է յարութիւն առաջին . * Ե֊ 6
րանի որոց , որք ունին բաժին 'ի յարու֊
թեանն առաջնում , 'ի վր̃ նց̃ երկրորդ մահն

ոչ ունի իշխանութի. այլ եղիցին քահանայք
այ՝ եւ ոծն յծիքնի, եւ թագաւորեսցեն ը նմա
7 հազար ամ։ * Եւ յետ հազար ամին լուծ-
ցէ զսատանայ՝ եւ հանցէ ՚ի բանտէ անտի.
ելցէ եւ մոլորեցուսցէ զազգս ոմ չորս
կողմանս երկրի. եւ զԳոգ եւ զՄագոգ առ-
ցէ ՚ի ձեռս՝ ժողովել նոքօք զամ զօրս ՚ի
պատերազմ. որոց թիւ նց իբրեւ զաւազ
8 ծովու. * եւ ելցեն ՚ի լայնութի երկրի, եւ
պատեսցեն շուրջ զբանակս սրբցն, եւ զզ-
9 քաղաքն սիրելւոյ։ * Եւ իջցէ հուր յերկ-
նից առ՚ի յայ՝ եւ կերիցէ զնս եւ զզօրագ-
լուխն նց զսատանայ՝ որ մոլորեցոյց զնս.
եւ արկցէ զնս ՚ի ծովն հրոյ եւ ծծմբոյ,
10 ուր էր գազանն՝ * եւ սուտ մարգարէն. եւ
11 չարչարեսցին զտիւ եւ զգիշեր. * Եւ տե-
սի աթոռ սպիտակ մեծ. եւ ՚ի վր նր նս-
տեալ՝ յորոյ երեսացն երկնչէին եւ փախ-
չէին երկինք եւ երկիր, եւ տեղի ոչ գտաւ
12 նց. * Եւ տեսի զմեռեալս մեծամեծս եւ
զփոքունս, որ կային առաջի աթոռոյն.
եւ գրեանք բանային. եւ այլ գիրք բացաւ
կենաց, եւ դատեցան մեռեալք ՚ի գրելոցն՝
13 ը գործոց իւրեանց։ * Եւ ետ ծով զմե-
ռեալս իւր, եւ մահ եւ դժոխք զիւրեանց
մեռեալս. եւ դատեցան իւրաքանչիւր ը
14 գործոց իւրեանց։ * Մահ՝ եւ դժոխք մատ-
նեցան ՚ի լիճ հրոյն։ (այս է մահն երկ-
15 րորդ։) * եւ որ ոչ ոք գտաւ ՚ի գիրն կե-
նաց գրեալ՝ արկաւ ՚ի լիճ հրոյն.

## ԳԼ· ԻԱ·

Եւ տեսի երկին նոր՝ և երկիր նոր· քանզի 1
առաջինն երկինք և երկիր անցին · և
ծով ոչ գոյր· * և զքաղաքն սուրբ զնորն Եմ 2
տեսի՝ զի իջանէր յԱյ՝ և յերկնից ՚ զարդա
րեալ և պատրաստեալ որպէս հարսն առն իւրոյ ՚
* Եւ լուայ ձայն յերկնից՝ որ ասէր · ա- 3
հաւասիկ խորանն Այ ՚ի մէջ մարդկան ՚ և
բնակեսցէ ընդ նս · և նք ժողովուրդք նմա · և
սա ած նց ։ * և ջնջեսցէ զամ արտասուս յա- 4
չաց նց · և մահ ոչ ևս գոյ ՚ ոչ սուգ՝ և ոչ
աղաղակ ՚ ոչ ցաւք՝ և ոչ աշխատանք ոչ ևս
գոյ ՚ զի առաջինն անցին ։ * Եւ ասաց ցիս՝ 5
որ նստէր ՚ի վր աթոռոյն · ահաւասիկ
առնեմ զամ նոր · և ասէ ցիս՝ գրեա · այս
բանք ճշմրտ և հաւատարիմք ։ * Եւ ասէ 6
ցիս · եղև՝ ես եմ ալփա և ով ՚ սկիզբն և կա
տարած · ես ծարաւելոցն տաց յաղբերէ
ջրոյ կենաց ձրի · * Որ յաղթէ ՚ ժառան 7
գեսցէ զայս ամ · և ես եղէց նց ած ՚ և նք
եղիցին ինձ որդիք · * և ծուլացն և անհա 8
ւատից՝ սպանողաց և պոռնկաց՝ և կախար
դաց և կռապաշտից՝ և դեղատուաց ՚ և ամ
ստոց՝ ամպարշտաց · որոց բաժինն իւրեանց
՚ի լճին այրեցելոյ հրով և ծծմբով · որ է
մահն երկրորդ ։ * Եւ եկն առ իս մի յեօթն 9
հրեշտակացն ՚ որք ունէին զեօթն սկա-
ւառակսն լցեալս եօթն վախճանաւ կատա
րածովք · խօսեցաւ ընդ իս և ասէ · եկ՝ ցուցից
քեզ զհարսն և զկին գառինն · * Եւ առ 10

 տաւ

տարաւ զիս 'ի լեառն մի բարձր և մեծ՝
հոգւովն, և եցոյց ինձ զքղքն մեծ և սբ՝
11 եղմ. զի իջեալ էր յերկնից առ 'ի յայ, * և
ունէր զփառս այ. և էր 'ի նմա լուսաւորու
թի, նմանէլ ակնանց պատուականաց՝ քար
12 յասպիս սառնատեսակ և կենդանի։ * և
էին պարիսպք նր մեծ և բարձր, և ունէր
դրունս երկոտասան. և յերկոտասան դրունսն
երկոտասան հրեշտակս, և անուանք իւրա-
քանչիւրոցն 'ի վր դրանցն գրեալ էին՝ ժբ
13 երկոտասան ցեղիցն իէլի։ * Յարևելից կող-
մանէ դրունք երեք, և 'ի հիւսիսոյ կող-
մանէ դրունք երեք, և 'ի հարաւոյ կող-
մանէ դրունք երեք, և յարևմտից կող-
14 մանէ դրունք երեք։ * Եւ պարիսպ քղքին
ունէր հիմունս երկոտասան, և 'ի նս եր-
կոտասան անուանք երկոտասան առքելոց գա-
15 ռինն. * Եւ որ խօսէրն ընդ իս, ունէր ե-
ղէգն ոսկի 'ի ձեռին իւրում, զի չափեսցէ
զքղքն՝ և զդրունս նր՝ և զպարիսպս նր.
16 * Եւ էր քղքն քառակուսի. և որչափ եր-
կայնութի նր՝ նոյնչափ և լայնութի՝ և բարձ-
րութի՝ հաւասար։ և էր չափ երկայնութե
նր երկոտասան հազար ասպարէզս. և լայ-
նութի նր և բարձրութի միաչափ՝ կիվօս.
17 * Եւ չափեաց զպարիսպն նր հարիւր և
քառասուն և չորս ասպարէզս. չափ մար-
18 դյ՝ որ է հրեշտակի. * և էր շինուած
պարսպաց քղքին յասպիս. և քղքն էր ոս-
կի մաքուր՝ նման սբ և սպիտակ ապակ-
19 ւոյ. * Եւ հիմունք քղքին յամ ականց

պատուականաց․ հիմն առաջին պար-
պին յասպիս, երկրդն շափիղա, երրորդն
պղնձագոյն, չորրդն զմրուխտ, * հինգե- 20
րորդն եղնգնաքար, վեցերրդն սարդիոն․
եօթներրդն ոսկեքար, ութերրդն բիւրեղ,
իններրդն տպազիոն, տասներրդն քրիսոպ-
րասոս, մետասանն յակինթ, երկոտասանն
ամեթուիս։ * Եւ էին երկոտասան դրունք 21
յերկոտասան մարգարտաց՝ միաձև, և իւրա-
քանչիւրոցն դրունք՝ էին մի մի դուռն՝ 'ի
միոյ միոյ մրգրտէ․ և ըն արձակուն քղքին
ոսկի մաքուր՝ ոպս զապակի պայծառ։ * Եւ 2
տաճար ոչ տեսի 'ի նմա, քանզի տր ած ամե-
նակալ տաճար է 'ի նմա՝ և գառնն․ * Եւ 2
քաղաքին չէին պէտք արեգական և լուս-
նի, զի լուսաւորեսցեն զնա․ քանզի փառքն
այ լուսաւորէին զնա յամժամ․ և ճրագ
'ի նմա գառնն․ * Եւ գնասցեն հեթանոսք 2
'ի լոյս նր․ և թագաւորք երկրի լուսազ-
գեաց լինէին 'ի փառաց նր։ * Եւ դր 2
րունք նր ոչ փակէին 'ի տուէ և 'ի գիշե-
րի, այլ բաց կային հանապազորդ․ և գի-
շեր ոչ ևս լինէր 'ի նմա․ * այլ փառք և 2
պատիւ ազգաց․ * և ոչ մտցէ անդ ամ 2
չարակամ՝ և պիղծ և սուտ, բայց միայն
որ գրեալ են 'ի դպրութ կենաց գառինն․

## ԳԼ․ ԻԲ․

Եւ եցոյց ինձ մաքուր գետ կենդանի
ջրոյ՝ սառնատեսակ, որ ելանէր յա-
թոռոյն այ և գառինն․ * Եւ գնայր 'ի

մէջ հրապարակաց քաղաքին. եւ եզերբ
գետոյն աստի եւ անտի ծառ կենաց՝ որ
բերէր պտուղս երկոտասան. ըստ միոյ միոյ ամ-
սոյ տայրն զպտուղս իւրեանց. եւ տերեւ
3 ծառոյն էր բժշկութիւն հեթանոսաց: * Եւ
նզովք անդ ոչ եւս էին. եւ աթոռն այ եւ
գառին նորա էր ՚ի նմա. եւ ծառայք նորա պաշ-
4 տէին զնա. * եւ տեսանէին զերեսս նորա.
5 եւ անուն նորա գրեալ էր ՚ի ճակատս նոցա. * եւ
գիշեր ոչ անդ, եւ չէր ինչ անդ պէտք ճը-
րագի եւ լուսոյ արեգական. վզի զի տէր
այ լուսաւորէր զնոսա. եւ թագաւորեսցեն յա-
6 ւիտեանս յաւիտենից: * Եւ ասէ ցիս.
այս բանք հաւատարիմ են եւ ճշմարիտ. եւ տէր
այ մարգարէից սրբոց՝ առաքեաց զհրեշտակ
իւր՝ ծառայից իւրում ցուցանել՝ զոր լինե-
7 լոց է վաղվաղակի. ( * ահա գամ վաղվա-
ղակի. ) երանի՝ որ պահէ զբանս մարգարէու-
8 թեան զայս. * Եւ ես յովհաննէս լուայ՝ եւ
տեսի զայս ամ. եւ յորժամ լուայ եւ տեսի,
անկայ՝ եւ երկիր պագի հրեշտակին՝ որ
9 ցուցանէր ինձ զայս ամ: * Եւ ասէ ցիս. մի՛
անկանիր առաջի իմ՝ եւ երկիր պագաներ.
քանզի եւ ես ծառայակից քո եմ եւ եղբարց
քոց՝ որ պահեսցեն զբանս մարգարէութեան
10 գրոյս այսորիկ. այ երկիր պագ: * Եւ ասէ
ցիս դարձեալ. մի՛ կնքեր զբանս մարգարէական
11 գրոցս այսմիկ. քանզի ժամս մերձ է: * Որ
ամպարշտելոցն է՝ ամպարշտեսցի, եւ որ
աղտեղանալոցն է՝ աղտեղասցի, եւ որ ար-
դարանալոցն է՝ արդարասցի, եւ որ սրբե-

լոցն է՝ սրբեսցի։ * Ահա գամ վաղվաղա 12
կի՝ և վարձք իմ ընդ իս, հատուցանել իւրա
քանչիւր ըստ գործս իւրեանց։ * Ես եմ ալ 13
փայ և ով, սկիզբն և կատարած, առաջին
և վերջին։ * Երանելիք են՝ որ պահեն ըզ 14
պատուիրանս նորա․ նոքա ունիցին իշխանութի
ունել 'ի փայտէն կենաց՝ և մտանել ընդ
դրունս քաղաքին։ * Այլ ելցեն արտաքս՝ 15
շունք և դեղատուք և սպանողք և կռա
պաշտք, և ամենեքեան որ սիրեն զստութի։ * Ես 16
յիսուս առաքեցի զհրեշտակ իմ վկայել զայս
ձեզ եկեղեցեացդ․ ես արմատ և սեռ 'ի դաւ
թայ, և աստղ պայծառ առաւօտին։ * Եւ 17
հոգի, և փեսայն՝ որ գալոցն եմ․ և որ
լսէ՝ ասասցէ թէ եկ, և որ ծարաւի իցէ՝
եկեսցէ, և որ ոք կամի առնուլ զջուրն
կենաց ձրի։ * Վկայեմ և ես ամենայնի՝ որ լսէ 18
զբանս մարգարէութեան գրոցս այսմիկ․ թէ
ոք յաւելցէ 'ի սա, յաւելցէ Աստուած 'ի վերայ
նորա զեօթն հարուածսն՝ գրեալս 'ի գիրս
յայս։ * Եւ եթէ ոք պակասեցուսցէ 'ի 19
բանից մարգարէութեան գրոցս այսմիկ՝ պակա
սեցուսցէ և հատցէ Աստուած զբաժին նորա 'ի
ծառոյն կենաց՝ և 'ի քաղաքէն սրբոյ՝ որ գրեալ
է 'ի գիրս յայս։ * Ասաց՝ որ վկայեացն 20
զայս․ գամ ես վաղվաղակի․ ամէն։ Եկն
տէր յիսուս քրիստոս։ Շնորհք Տեառն մերոյ յիսուսի քրիստոսի 'ի
վերայ ամենայն սրբոց։ Ամէն։

ՎԱԽՃԱՆ։